Ugo Pratt

Աստվածաշունչ

Նոր կտակարան ժամանակակից-12 հայերենով,

Զ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ— 1982

891.54
S-83

ԳՄԴ 84 7
Զ 834

Կազմեցին և ծանոթագրեցին՝
Լ. ԶՈՐՅԱՆ և Կ. ԶՈՐՅԱՆ

Խմբագրական կոլեգիա՝
Ս. ԱՂԱԲԱԲՅԱՆ
Վ. ԲԱԼԱՅԱՆ
Գ. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
Ս. ԽԱՆԶԱԴՅԱՆ
Գ. ՀԱՅՐՅԱՆ
Մ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հատորի խմբագիր՝
Ս. ԱՂԱԲԱԲՅԱՆ

203 168
SU0087635

Զորյան Ստ.

Զ 834 Երկերի ժողովածու 12 հատորով (կազմ. և ծանոթագր. Լ. Զորյան և Կ. Զորյան; Խմբ. կոլեգիա՝ Ս. Աղաբաբյան և ուրիշ.)— Հ. 7 (հատորի խմբ.՝ Ս. Աղաբաբյան) Եր., Սովետ. գրող, 1982. 560 էջ։

Ստ. Զորյանի տասներկուհատորյակի յոթերորդ հատորում զետեղված է հեղինակի պատմական եռապատումի առաջին գիրքը՝ «Հայոց բերդը» վեպը։

Զ $\frac{4702080200\ (779)}{705\ (01)\ 82}$ 82 «S»

ԳՄԴ 84 7
Ap2

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԱՂԱԲԱԲՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
SARKIS AND MARIE IZMIRLIAN'S LIBRARY OF YEREVAN STATE UNIVERSITY

© «Սովետական գրող» հրատարակչություն, կազմելու, ծանոթագրությունների և ձևավորման համար, 1982

Дыра в небе

Пьер Бордаж

ՄԱՄՆԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ ՄՈՒՍՉԻՆ

Սկսենք, որտեղից արժանի է սկսել պատմությունն այն քաղաքի, որի կառուցումն այնքան հուզում ու խոսվք բերեց մեր Աշխարհին Հայոց։

Արևոտ կեսօր էր։

Երասխաձորը թնդում էր գարնան աղմուկով. հորդացած Արաքսը մի տեղ եռում էր ժայռերեն հունի մեջ սեղմված, և ալիքներն ասես խեղդում էին միմյանց գազանների մոլուցքով. մի այլ տեղ սուրում էր տենդագին խշշոցով. ափամոտ եղեգնուտներն ու մարգերը լիքն էին բազմատեսակ հավքերով. ճիչ, կռինչ, ճռվող ու գեղգեղանք խառնվել էին իրար. և տարբեր այդ ձայներից օդը զրնգում էր ձորում... թվում էր երգում է յուրաքանչյուր թուփ ու ծառ ջրերի հետ միասին։

Հորդացած գետի աջ ափով, հոսանքին հակառակ, ձորընթաց նեղ ճանապարհով գնում էին հինգ հեծվոր՝ մի իշխան իր չորս թիկնապահներով։ Առջևից իշխանը՝ կապտորակ նժույգի վրա, հետևից՝ թիկնապահները հարգալիր հեռավորությամբ։ Սրանք երիտասարդներ էին՝ կորովի վզերով, խուզարկու աչքերով, ու բոլորը զինված՝ ոմանք սրերով, ոմանք նետ-աղեղով ու նիզակով։ Ձիերը վարելով տիրոջ հետևից՝ նրանք երբեմն խոսակցում էին, երբեմն ծիծաղում, բայց այնպես չափավոր ու զգույշ, որպեսզի տերը չլսի, որովհետև նկատում էին, որ նա մտահոգ է այսօր և անգամ տխուր, ինչ անսովոր, արտակարգ բան էր նրանց համար։

Այդ իշխանը Գարեղենից տեր Սահակն էր, որի հարուստ կալվածները տարածվում էին Արշարունիքից մինչև Բասեն՝

բարեբեր հողերով ու մեծ շենքերով։ Սակայն նա հայտնի էր ոչ այնքան իր կալվածներով, որքան իր մշտազվարթ բնույթով ու կենցաղով. նշանավոր տոներին, երբեմն էլ ոչ տոներին, տարեկան մի քանի անգամ, նա ունենում էր մեծ խրնջույքներ, որոնց, նրա հատուկ հրավերով, մասնակցում էին շատ նախարարներ՝ հարևան և հեռու գավառներից։ Եվ նրա այդ խնջույքները տևում էին օրեր, երբեմն շաբաթներ՝ կերուխումով ու որսով, որ կատարվում էին նրա անտառներում ու սարերում...

Այսօր սակայն այդ զվարթ մարդը մտահոգ էր։ Նրա կալվածի հարևանը՝ իշխան Ներսեհ Կամսարականը, սուրհանդակի միջոցով հրավիրել էր նրան «գալ անհապաղ», և այժմ Սահակ իշխանը գնում էր ու մտածում, թե ի՞նչ է նշանակում այդ օտարոտի հրավերը, որ նման էր հրամանի. «գալ անհապա՜ղ»... Ճշմարիտ է, իշխան Կամսարականը մեծ է, ազդեցիկ, տեր է ամուր բերդերի, սակայն ինչո՞ւ է հրավիրում այդպես չոր բառերով, դժգո՞հ է իրենից, թե... և Սահակ իշխանը, խորհելով այդ բառերի վրա, անում էր զանազան ենթադրություններ։

Խորհում էր Սահակ իշխանը երկար և ոչինչ կռահել չէր կարողանում։ Միայն թռչունների գեղընթաց չուն էր, որ նրան թվում էր բարեգուշակ, ուստի և առանձնապես չէր տարվում մռայլ մտքերով։

Նա հագել էր նախարարական իր սև կապան և մեջքը պնդել կամարով, որից կախված էր նրա կարճ սուրը ձախ կողքին. ոտքերին դեղնավուն մույկեր էին, որոնց ճտքերը հասնում էին մինչև ծնկները, իսկ գլխին դրել էր սրածայր գդակ, որ կարված էր գառան սևագանգուր մորթուց։ Նա միջին տարիքի տղամարդ էր՝ տակավին թուխ մազերով. մորուքի մեջ միայն երևում էին մի քանի արծաթ թելեր, որոնք սակայն ավելի էին ընդգծում նրա մազերի սևությունը, որ փայլում էր սաթի պես։

Բավական ժամանակ այդպես մենակ առաջ ընկած գնալով՝ նա ձին կանգնեցրեց մեկեն՝ աջ կողմից եկող ճանապարհի հեռվում նկատելով հնձյալների մի խումբ, որ սրընթաց, նժույգների ամբողջ թափով գալիս էին դեպ իրեն։

Սահակ իշխանը ակամա նայեց ետ՝ իր թիկնապահներին

և ապա զննական հայացքն ուղղեց եկողների կողմը. ովքե՞ր են և ո՞ւր են շտապում այսպես սրարշավ. վտանգավոր մարդիկ չե՞ն արդյոք... Մինչ այդ թիկնապահները, մոտենալով, նույնպես կանգնեցրին իրենց ձիերը. նրանց աչքերում նույնպես կարդացվում էին իրենց տիրոջն զբաղեցնող մտքերը, ուստի և նրանց ձեռքերը բնազդաբար գնացին դեպի զենքերը։

Եվս մի քանի վայրկյան՝ հեծվորները մոտեցան, բոլորի առջևից մի ամրակազմ տղամարդ՝ նույնպես կապա հագած և գանգուր գդակ դրած։

— Ա՜, բարեողջո՜ւյն, տեր Վանանդա, բարեողջո՜ւյն,— բացականչեց Սահակ իշխանը, ուրախությունից ձին խթանելով։— Բարեողջո՜ւյն...

— Բարի հանդիպում, Սահակ իշխան, բարի տեսություն,— և եկվորը ձեռը, նախ հարգանքով սրտին դնելով, նժույգի վրայից մեկնեց Գաբեղենից տիրոջը, որ փոքր-ինչ տարիքով էր իրենից։ Եվ երբ բարեել էր ակնածանքով՝ հետաքրքրվեց.— Սակայն առա՞ջ բարի, Սահակ իշխան։

— Տեր Կամսարականի ամրոցը։

— Ուղեկից ենք ուրեմն,— ուրախացավ նորեկը։— Ես նույնպես այնտեղ. հատուկ հրավեր ունեմ Կամսարականաց նահապետից։

— Ինչպիսի՞ հրավեր,— հետաքրքրվեց Սահակ իշխանն ակամա։

— Որ այսօր իսկ լինեմ իր ամրոցում։

— Հրավեր, որ նման է հրամանի. «գալ անհապաղ»... այնպե՞ս է։

— Ճիշտ այդպես, Սահակ իշխան։ Այդ իսկ բառերով է գրված և իմ հրավերս։

— Եվ սակայն չի՞ ասված ինչո՞ւ համար և ի՞նչ նպատակով է հրավիրում մեզ Կամսարականաց տերը...

— Ո՛չ, իշխան, ոչ մի այլ բառ։

— Հույժ զարմանալի է,— և Սահակ իշխանը քմծիծաղ տարուբերեց գլուխը։— Գնանք այնուամենայնիվ և տեսնենք պատիվ է սպասում մեզ, թե պատիժ։ Խիստ է հրավերը՝ արքունի հրամանի նման...

Վանանդի տերը Սահակ իշխանի խոսքի մեջ դժգոհու-

թյուն նկատելով, որ իրեն կանչել են այդպես արքունի հրամանի ձևով, հետաքրքրվեց հանկարծ.

— Իսկ դու, իշխան, երբևէ եղե՞լ ես արքայի մոտ։

— Արքայի՞ մո՞տ... Երբեք,— և Սահակ իշխանը գլուխը շարժեց բացասաբար։— Չեմ եղած, սիրելիդ իմ, և չանացել եմ հանապազ հեռու մնալ արքայից և արքունիքից։

— Եվ ինչո՞ւ, եթե իրավունք կտաս հարցնելու։

Սահակ իշխանը ձին կանգնեցրեց։

— Հարցնում ես՝ ինչո՞ւ։ Ամենքին ոչ, բայց քեզ, որպես բարեկամի, կարող եմ ասել։ Չեմ եղել և չեմ լինելու, վասնզի թագավորին մոտիկ՝ կնշանակե մահին մոտիկ... Եթե թագավորն ինքը չսպանի քեզ, թագավորի թշնամիները կսպանեն։ Ահա ինչո՛ւ... Ո՛չ, բարեկամս, հեռու մնանք այդպիսի կապերից ու կապանքներից։ Աստված մեզ տվել է կալված, ծառաներ, ապրենք և վայելենք... Կապերը արքունիքի հետ թերևս պատվաբեր են, բայց վտանգաշատ։ Ո՛չ, իշխան, լինենք ազատ և հանգիստ. կյանքը հավիտյան չէ տրված մեզ. որ տանենք նեռենք վտանգների մեջ։

— Ճշմարիտ է, յուրաքանչյուր ոք պետք է պաշտպանի իր անձը, իշխան, բայց կապերը անհրաժեշտ են։ Իսկ մերձավորությունը արքային և արքունիքին՝ բերում է միշտ և՛ փառք, և՛ պատիվ։

— Ծուխ ու մոխիր։ Ամենը չարժի ուրախ մի երգ և կթողա մի գինի։ Իսկ մահը մոռանալու համար՝ խմիր աստվածների ըմպելին, երգիր և ուրախ արա ամենքին։

Նա լռեց մի փոքր, ապա ավելացրեց.

— Կապերը, թերևս, անհրաժեշտ են, այո, բայց երբ այդ կապերը դառնում են կապանքներ՝ ծա՞նր է։

— Հուսամ՝ այս նոր հրավերը ծանր չի լինելու,— խոսքը փոխեց Վանանդի տերը։

— Իցե և հրավեր է գարնան,— ժպտաց Սահակ իշխանը։— Գուցե՞և իշխան Կամսարականը խրախճան է տալու մեզ։

Եվ երկուսն էլ ժպտացին բազմախորհուրդ ու խթանեցին նժույգները՝ շուտ տեղ հասնելու։ Նրանց թիկնապահները իրար խառնվելով հետևեցին նրանց՝ նույն ընդունված հարգալիր հեռավորությունը պահած։

Ճանապարհը դարձյալ գնում էր Երասխաձորով, ուր մերթ բարձր ժայռերից ջրեր էին գահավիժում Արաքսը՝ ահագին աղմուկով. մերթ քարայծեր էին մագլցում այդ ժայռերն ի վեր, կամ ժայռերի կրծքին բուսած մենավոր ծառերը անվերջ դողում էին ջրերի հոսքից, ինչպես քամուց։ Իսկ ներքևում երբեմն վարազներ էին երևում և հապճեպ թաքնվում շամբուտներում... Բայց և այնպես ոչինչ չէր խանգարում հորդացած Արաքսի հևագին ընթացքը, և թռչունների լուն, որ զույգերով կամ երամներ կապած թևածում էին ձորից վեր՝ գարնան ջինջ օդում։

* * *

Կամսարականի դղյակը հեռու չէր. նա գտնվում էր մի գեղադիր և անմատչելի վայրում։ Այնտեղ, ուր Արաքս և Ախուրյան գետերը խառնվում են իրար և կազմում փարթամ բուսականությամբ հարուստ ու պտղաբեր այգիների մի հարթ թերակղզի, այդտեղ էր գտնվում Հայոց Աշխարհի այդ անվանի, մեծազգեցիկ նախարարներից մեկի՝ Ներսեհ իշխանի ապարանքը, որ հիմնադրել էր նրանց տոհմի առաջին նահապետը և վերաշինել էին հետագա սերունդները՝ իրենց պահանջի ու ճաշակի համեմատ։ Դա մի երկհարկանի քարաշեն կառուցվածք էր թերակղզու կենտրոնում՝ բարձրության վրա։ Շենքը իր չորս կողմը ուներ մեծ ու փոքր նեղ լուսամուտներ և քարե պատշգամներ, որոնց վրա տոն օրերին կախում էին դրոշներ ու գորգեր։ Երկու կամարակապ մուտքերի վերևը քանդակված էր Կամսարականների տոհմանիշը՝ վիզը լարած մի ցուլ, որ ասես պատրաստվում է մեկին հարվածելու։

Ապարանքի շուրջբոլորը քարե հաստաբեստ բարձր պարիսպ էր՝ աշտարակներով և երկաթյա դռներով, որոնց ճակատները նույնպես զարդարված էին տերերի տոհմանիշով։ Աշտարակներում և առանձնապես պարսպադռների գլխին բարձրացող բուրգերի վրա գիշեր-ցերեկ հսկում էին պահակներ՝ հագուստները գոտեպնդած, ոտներին՝ մինչև ծունկները պատիճներ և տեգերով ու նետ-աղեղներով զինված։ Պարսպադռներից մինչև ապարանքի մուտքերը գնում էին սալարկած լայն ուղիներ, իսկ պարսպի ներսը մնացած ամբողջ

տարածությունը ծածկված էր պտղածառերով, խաղողի որթերով և ծաղկող թփերով, որ այժմ դարնան արևի տակ փթթել էին վարար փարթամությամբ։ Ապարանքը, շինված լինելով երկու գետերի արանքում, շրջապատված էր ջրերի աղմուկով, շառաչաձայն մի աղմուկ, որ չէր դադարում զար ու գիշեր, ինչ նորեկ մարդու համար անսովոր էր անչափ, անգամ խլացուցիչ։ Ջրերի այդ անդուլ խշշանքին ընտելանալու համար պետք էր ապրել այնտեղ գեթ մի շաբաթ և թերևս ավելի, բայց թերակղզու բնակիչները դա չէին զգում բնավ։

Շենքն ուներ մի քանի հարկաբաժին և բազմաթիվ սենյակներ ու մեծ սրահներ՝ խորաքանդակ խոյակներ ունեցող սյուներով. պատերին ու հատակներին կային մեծագին գորգեր, որոնք տարածվում էին պատից պատ՝ սրահների լայնքով ու երկայնքով։ Իսկ պատնկախ գորգերի վրա, գրեթե բոլոր սրահներում, կախված էին հին ու նոր զենքեր. պատյանով և առանց պատյանի մերկ սրեր, դաշույններ, աշտեներ ու պես-պես տեգեր, աղեղներ և անպայման եղջերուի, վարազի գլուխներ, որ իշխում էին զենքերի վրա։

Այդ ապարանքում բնակվում էին Կամսարական հինգ եղբայրները միասին, և օրը երեք-չորս անգամ սեղան էին նստում իրենց կանանցով, զավակներով ու հարսներով մի սրահում, որ քսան կանգուն երկարություն ուներ և մեջը երկշարք սյուներ։ Սեղանին ոչ ոք իրավունք չուներ խոսելու, բացի տոհմի նահապետից և նրա տիկնոջից։ Եվ ամեն օր գրեթե նրանց սեղանին մասնակից էին լինում շատ հյուրեր հեռու հարազատներից կամ հարևան նախարարություններից, որովհետև Կամսարականները խնամական կապերի մեջ էին նախարարական նշանավոր շատ տների հետ, անգամ հարևան ազգերի՝ վրաց և աղվան մեծ տոհմերի հետ։ Առհասարակ Կամսարականները առաջնակարգ տեղ էին գրավում հայոց նախարարների մեջ ոչ միայն իրենց հարուստ կալվածներով, որ Շիրակից տարածվում էին մինչև Արշարունիք և Սուրմարի և ավելի դենը, այլև իրենց քաջությամբ, մանավանդ իրենց Արտագերս և Կապույտ բերդերով, որոնց նմանը չուներ և ոչ մի հայ նախարար, անգամ ինքը թագավորը...

Ահավասիկ այս իսկ բերդերից սկսվեց ամեն ինչ... Բայց այդ մասին հետո։

Իշխան Ներսեհ Կամսարականը, որ այժմ տոհմի նահապետն էր, միայն ինքը ուներ յոթ որդի և երեք ամուսնացած դուստր։ Տղաները բոլորը նման էին հորը՝ բարձրահասակ ու թիկնեղ, իրենց տոհմին հատուկ անուններով՝ Արշավիր, Հրահատ, Գազավոն... և այլն։ Որդիները, սրանց հետ և նրանց հորեղբոր որդիները, տան նահապետի կարգադրությամբ, մշտապես, որպես ավանդական կարգ, մարզվում էին զենքի գործածության, և այդ վարժությունը չէր կատարվում միայն որսագնացությամբ, այլև ամենօրյա զբաղումով, երբեմն հայրերի ներկայությամբ, հատուկ մի զինավարժի ղեկավարությամբ։

Այո, որպես խոշոր բերդերի տեր, Կամսարականները մեծ խնամք էին տանում թե՛ բերդապահների և թե՛ իրենց իսկ զինական կրթության վրա, և իզուր չէր, որ նրանք ունեին ռազմունակ նախարարների համբավ։ Ինքը Ներսեհ իշխանը, ասում էին, ձուն դնում է իր որդիներից մեկի գլխին և թռցնում նետով։ Ճշմարիտ է, հեթանոսական ժամանակի սովորություն էր, որ բոլոր նախարարական տները պահում էին մեծ խմբերով աղավնիներ՝ սրբերին զոհաբերելու համար, բայց Կամսարականները իրենց աղավնիները պահում էին նաև իրենց երիտասարդների ռազմական ուսումնառության համար, նշան էին բռնում թռած աղավնուն և արձակում նետը։

— Ով նետով ցած բերի աղավնին՝ նա կլինի նետաձիգ անվրեպ,— խրախուսում էր վարժեցնողը։

Այսօր էլ, երբ գարնան կեսօրյա արևը հաճելի ջերմությամբ ողողել էր Կամսարականների ապարանքը, նրա ծառաստանը և բարձր, ամրակուռ պարիսպներն իրենց աշտարակներով և առհասարակ այգիներն ու հեռուն գտնվող անտառը, ապարանքի պատանիները խմբերով ճերմակ աղավնիներ էին թռցնում և նետեր արձակում նրանց վրա... Երբ ձյունաճերմակ հեզ թռչունը քնքուշ թևաբախումներով բարձրանում էր բավական՝ պատանիները աղեղները լարած նշան էին բռնում նրան և միանգամից հինգ-վեց նետ ուղարկում հետևից... և ում նետը ցած էր բերում նրան՝ վարժեցնողը մոտենում էր զոհունակ և ձեռքը զարկում նրա

թիկունքին, որպես խրախույսի նշան։ Ինչպե՞ս էր նկատում այդ՝ դա արդեն նրա սրատեսությանն էր վերաբերում։

Մինչ պատանիներն ու երիտասարդները տարված էին այս խաղով՝ տոհմի նահապետ Ներսեհ իշխանը ծանրաքայլ երթևեկում էր մեծ սրահում. երթևեկում էր խոշոր ձեռքերը ետևը դրած և, ժամանակ առ ժամանակ կանգ առնելով, մռայլ նայում էր լուսամուտից դուրս, կամ, սրահից ելնելով քարե պատշգամը, մերթ դիտում էր պարսպադուռը, մերթ աղավնիներին նշանող պատանիներին... Որքան էլ աղավնիներով նետավարժությունը ամենօրյա երևույթ էր դղյակի բակում՝ այնուամենայնիվ իշխանն այսօր տհաճությամբ էր նայում այդ խաղին. թվում էր տղաների կանչերը անախորժ էին նրան, որովհետև նայում էր հոնքերը կիտած, աչքերը բացխփելով ու կրկին մտնում սրահը։ Ի դեպ. Կամսարականի անունը թեև Ներսեհ էր, բայց շատերն ասում էին Նարսեհ, ավելի մոտիկները՝ Նար իշխան։

Նար իշխանը հիսունն անց տղամարդ էր՝ բարձրահասակ, տակավին ձիգ ու պինդ կազմվածքով։ Չնայած տարիքին՝ մազերի մեջ չկար և ոչ մի ճերմակ թել։ Մորուքը կարճ էր, բեղերը հաստ ու երկար. խոսելիս, թվում էր, բառերը դիպչում են բեղերին և նա, դրա համար կարծես, շուտ-շուտ ետ էր տանում դրանք, ուղղում, որ պառկեն իրենց տեղերում, բայց նրանք գալարուկների պես նորից ընդունում էին իրենց նախկին դիրքը և ավելի մռայլում իշխանի տեսքը։

Վերջերս, պետք է ասել, նա ոչ միայն մռայլ էր, այլև զայրացած. ամսից ավելի նա յուրայիններով հետ չէր խոսում գրեթե. մենակ ելնում էր զբոսանքի կամ առանձնանում իր սրահում և խորհում, խորհում...

Թե ի՞նչ էր խորհում՝ ոչ ոք չէր կարող իմանալ, վանզի իշխանը սովորություն չուներ իր խոհերը հաղորդելու հարազատներին՝ եղբայրներին, որդիներին, կնոջը։ Սակայն մի քանի օր առաջ, երբ նրանք իշխանի մի սուրհանդակից իմացան, որ նա հրավերներ է ուղարկել հարևան նախարարներին, կռահեցին, որ ուրեմն լուրջ հոգսեր են զբաղեցնում Նար իշխանին։ Իսկ թե ինչ հոգսեր՝ դարձյալ չիմացան, որովհետև սուրհանդակն ինքը չգիտեր։ Ուստի և, երբ նախարար-

ներն սկսեցին գալ, իշխանուհին ուզեց իմանալ նրանց գալու նպատակը։

— Ինչո՞ւ կգան, իշխան։

Նար իշխանը պատասխանեց միայն.

— Գալիս են իմ հրավերովս։

Ու պատասխանը եղավ այնպիսի եղանակով, որ իշխանուհին հրաժարվեց նոր հարցումից և միայն փութաց կարգադրություններ անելու։

Հրավիրված նախարարներից առայժմ եկել էին չորսհինգը՝ ոմանք իրենց որդիներով, ոմանք թիկնապահներով, ինչպես Պապակ Պալուտին, ինչպես Վարձա Ապահունին, ինչպես Անգեղ տան հանգուցյալ նահապետի որդին՝ Սուրակ իշխանիկը, որ հազիվ 22—23 տարեկան պատանի էր, բայց հոր մահից հետո նա էր մնացել հոր կալվածների միակ տերը։ Սրանք բոլորն այժմ, ճանապարհի հոգնությունից հետո, հանգստանում էին ապարանքի հյուրասրահներում։

Չնայած եկել էր այդքան մարդ, բայց Նար իշխանը անհանգիստ էր դարձյալ. նա անհամբեր սպասում էր մյուս հրավիրյալներին. կժամանե՞ն արդյոք, թե ոչ... Այս էր պատճառը, որ սրահում քայլելով, շուտ-շուտ նայում էր դեպի պարսպադռան աշտարակը, թե պահակը ճերմակ լաթ չի՞ ճոճում արդյոք, մի բան, որ վաղուց ընդունված կարգ էր։ Աշտարակի պահակը, եկող նկատելով, կամ սուլեր պիտի հատուկ սուլիչով և, կամ, բակի կողմը ճերմակ կտավ ճոճելով իմացներ, թե ամբոցը մարդ է գալիս (հյուր կամ օտար), և տան սպասավորների մի խումբ անմիջապես նետվում էր դեպի պարսպադուռը՝ եկողին դիմավորելու կամ նրա ո՛վ լինելը պարզելու։ Եթե եկողը լինում էր սպասվող հյուր՝ դիմավորելու էին գնում իշխանի եղբայրները կամ իր և նրանց որդիները, նայած եկողի կարգին ու աստիճանին։

Բայց կեսօրն անցել էր արդեն՝ նոր եկողներ չէին երևում. մի՞թե այլևս չեն գալու,— սրտնեղում էր Նար իշխանը և, վերջապես, երրորդ անգամ պատշգամ դուրս գալով, նա նկատեց ճերմակ քաթանի ճոճում, որի վրա բակում գտնվող սպասավորները և զինախաղով զբաղված պատանիներից մի քանիսը գնացին դեպի պարսպադուռը։ Իշխանը պատշգամում լարված հետևեց՝ տեսնելու, թե ո՞վ է լինելու... Ու ոչ

թե վայրկյաններ, այլ բավական ժամանակ անցավ, մինչև որ պարսպամուտքից սև նժույգի վրա ներս մտավ եկվորը՝ աջ և ձախ կողմը հեծյալ երիտասարդներ ու թիկնապահներ, որոնց շրջապատել էին իշխանի սպասավորներն ու որդիները։

— Վահևունյա՜ց տերը,— բացականչեց Նար իշխանը և պատշգամից արագ, ներքին քարե աստիճաններով իջնելով, դուրս եկավ բակը։ Մյուսների համար նա չէր իջել, բայց այժմ ոչ միայն իջավ, այլև ձեռքերը տարածելով գնաց հյուրին ընդառաջ։

— Վահե իշխա՜ն,— Կամսարականը գրկելով, ողջագուրեց ձիուց իջնող տարեց հյուրին, որ կեռ քիթ ուներ, դուրս ընկած աչքեր և բարակ վիզ, որոնցով հիշեցնում էր պառավ անգղի։— Ուրախ եմ անչափ, որ ժամանեցիր... և զավակներովդ հանդերձ...

Նար իշխանը գրկեց և հերթով համբուրեց նաև Վահևունի սեպուհներին, որ տարիքն առած երիտասարդներ էին՝ զարմանալի նման իրար և իրենց հորը՝ կեռ քթեր, դուրս ընկած գորտային աչքեր և բարակ վզեր։ Ինչպես հոր, այնպես էլ նրանց դեմքերը թեթևակի այրվել էին արևից ու քամուց։

— Ուրախ եմ, այո, որ ժամանեցիր,— կրկնեց Նար իշխանը՝ նորից Վահևունյաց նահապետին մոտենալով։

— Եթե հրավերդ չլիներ անգամ, իշխան,— խոսեց ծեր Վահևունին մի ձայնով, որ լիովին համապատասխանում էր նրա արտաքինին՝ կռինչով,— ինքս պիտի գայի։

— Կլիներ, իշխան, առավել հաճելի։

— Պիտի գայի Թագավորի նոր հրովարտակի մասին իմ վիշտը և դժգոհությունը հայտնելու։ Մեր բողոքը, մեր նամակը հավանաբար համարել է առ ոչինչ և շարունակում է իրենը։

— Կխորհենք, տեր Վահևունի, կխորհենք։

— Կարո՞ղ ենք սակայն զսպել նորան և նորա միտումները չար,— տնքաց Վահևունին։— Վերջին այս հրովարտակից նորից քանիսը իմ ծառաներից փախան այդ անիծյալ ավանը...

— Կխորհենք, տեր Վահևունի, կխորհենք,— կրկնեց Կամ-

սարականը գրեթե ուրախ, որ ծերունին զայրանում է թագավորի դեմ։

Հազիվ էին ներս տարել Վահունի իշխանին իր որդիների հետ, երբ Կամսարականի սպասավորներն ու որդիները նորից նետվեցին դեպի պարսպադուռը. պահակը կրկին ճոճում էր ճերմակ լաթը։

Այս անգամ պարսպադռնից տեգավոր թիկնապահներով բակը մտան երկու հաղթամարմին հեծյալներ՝ գորշ թիկնոցներով։ Դրանք Համունի եղբայրներն էին՝ մեկն ալեխառն, մյուսը՝ թուխ մորուքով. մեծը Կամսարականի քեռայրն էր՝ քրոջ ամուսինը։ Սա, նժույգից իջնելով, մտերմաբար, իբրև յուրայինի, բարևեց Նար իշխանին, ապա նրա եղբայրներին ու նրանց զավակներին։

— Հուսամ քաջառո՞ղջ են ամենքը,— հարցրեց նա մի ձայնով, որի մեջ կար մտերմական և ընտանեկան շեշտ։

— Գոհությո՛ւն,— ասաց Նար իշխանը և հարցրեց իր հերթին։— Ինչպե՞ս են զավակներդ, քույրս։— Ապա, քեռայրի պատասխանը տակավին չլսած, մոտեցավ փեսայի եղբորը և բարևեց նրան։— Շնորհ արա, իշխան։ Դու մեր տանը կարծյոք առաջին անգամ ես լինում։

— Հրամանքդ, իշխան,— խպնելով ասաց երիտասարդ Համունին։— Սակայն վտանգավոր գետ ունեք, իշխան։ Կատաղի՛... Կամուրջը խախտել է արդեն։

Նա խոսում էր Ախուրյանի մասին, որ սրընթաց գալիս էր վերևից, թափով դարկում փայտե կամուրջին և գնում թրի պես մխրճվում Արաքսի կուրծքը։

Երրորդ եկողը եղավ Բասենի իշխան Մանեճը՝ մի կորովի տղամարդ, որ արծաթ գոտուց կախել էր արծաթապատյան թուր։ Նրա թիկնապահները նույնպես զինված էին միայն թրերով և ունեին միատեսակ թուխ անհանգիստ նժույգներ, որոնց աչքերից աստղեր էին թափվում ասես։

Նոր էին տեղավորել դրանց, երբ եկան վերջին հյուրերը՝ Գաբեղենից տեր Սահակը և Վանանդա տեր Զաքարեն... Եկողները բոլորն էլ թիկնապահներով էին կամ մեկ-երկու հարազատի հետ, ինչպես ընդունված էր հեռու տեղ հյուր գնալիս։ Եվ որովհետև ամենքն էլ հոգնած էին երկար ճանապարհ կտրելուց, ուստի, նրանց ընդունելով, առաջնորդում էին յու-

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY LIBRARY

բաքանչյուրին իրեն հատկացված հյուրասարահը, որ լվացվեն, հագուստ փոխեն և հանգիստ առնեն։

Չնայած տասի չափ նախարարներ էին ժամանել արդեն, բայց և այնպես Նար իշխանը տակավին սպասում էր մեկին, և ավելի անհամբեր, քան մինչև այժմ. թվում էր այդ մեկը նրա համար առավել էր, քան բոլորը միասին։ Նորից, նույն մեծ սրահում երթևեկելով, նա անվերջ նայում էր դեպի պարբսպադուռը և, ոչ մի նշան չտեսնելով այնտեղ, գլուխը տարուբերում էր մասայլ և շշնջում։

— Մի՞թե չի ստացել հրավերս, թե ստացել է... մոռացե՞լ է, որ պիտի գար այսօր... Նա այր է ճշտապահ, սակայն... ուշացումը անշուշտ կունենա մի պատճառ...

Մինչև իրիկնաժամ, մինչև մութն ընկնելը Կամսարականն սպասում էր նրան՝ այն մեկին և ամեն վայրկյան նրան թվում էր, թե ահա աշտարակից նշան կտեսնի կամ սուլոց կլսի... Բայց երբ մութն ընկավ՝ նա կարծես հուսահատվեց. անխոս նստեց իր գորգապատ ընդարձակ գահավորակին՝ պատին ամրացված զենքերի և եղջերուի գլխի ներքո։ Առժամ նստելով այդպես անխոս՝ նա մեկեն ծափ զարկեց։ Կից սենյակից ներս մտավ նրա սենեկապետը՝ ձեռքերը կրծքին դրած մի երիտասարդ։

— Հայտնիր հյուրերին,— ասաց Կամսարականը, առանց դիրքը փոխելու,— որ սպասում եմ իրենց. թող շնորհ բերեն։

Երիտասարդը խոնարհումով դուրս գնաց և... շատ չանցած, իրար հետևից ներս մտան հյուրերը՝ արդեն ճանապարհի վերնազգեստները փոխած, լվացված ու սանրված, բայց անզեն. բութ մատներին ոսկե խոշոր կնքամատանիներ, որոնց վրա փորագրված էին նրանց նախարարական տոհմանիշները, որով և կնքում էին կարևոր գրություններ։

Հյուրերի մուտքը տեսնելով՝ Կամսարականը ելավ տեղից և գլուխ իջեցրեց ընդհանուր։

— Կրկին բարի գալուստ, տեր նախարարներ,— ասաց նա հյուրընկալի պատշաճ եղանակով։— Իմ հարկը համարեցեք ձերը և հաճեցեք նստել։

Երեց հյուրերը տեղ բռնեցին գահավորակների ու բարձերի վրա, երիտասարդները՝ եռոտանիների. մեծերն սկսեցին հետաքրքրվել միմյանց առողջությամբ, երիտասարդները,

պատշաճը պահած, թե՛ լսում էին նրանց և թե՛ դիտում մերթ իրար, մերթ տանտիրոջը, մերթ նրա սրահի կահերն ու զարդերը։ Եվ երբ թեթևակի դիտել էին ամեն ինչ, սկսեցին հետևել ավագների զրույցին, որը դառնում էր առայժմ ճանապարհի տպավորությունների շուրջը։

Փոխադարձ հարց ու պատասխանը և թեթև զրույցը շարունակվում էր, երբ իրար հետևից ներս եկան, նախ, առջևից, ապարանքի տիրուհին՝ Կամսարականաց տիկինը, ապա Կամսարական եղբայրների կանայք և դուստրերը՝ հյուրերին, ընդունված կարգով, բարի գալուստ ասելու։ Հյուրերի գալու առթիվ նրանք հագել էին գույնզգույն մետաքս ու կերպաս հագուստներ՝ արծաթ, ոսկի կոճակներով, ճարմանդներով, իսկ ճակատներն ու պարանոցները զարդարել էին մարգարտյա և սաթյա շարերով։ Այդ բոլորից զատ, տիրուհին իր մուգ կապույտ մետաքս հագուստի վրա, մսեղ ուսերին կրում էր բյուզանդական վառ գույնի ծոպավոր մի շալ, մատներին՝ մեծաքար մատանիներ։ Ավելի վաղ հագնված էին նրա հարսները և ամուսնացած աղջիկները՝ Մարիամը, Մարթան և Մագթաղինեն։ Ներս մտնելով՝ նրանք հերթով մոտեցան յուրաքանչյուր հյուրի և, խոնարհում անելով, բարևեցին անխոս... Դա մի մունջ արարողություն էր և թվում էր հնօրյա մի ծես։ Իսկ երբ այդ ամենը վերջացավ, տանտիրուհին, սրահի մեջտեղը կանգնելով, ձեռը պարզեց դեպի դուռը.

— Հարգո հյուրերիս խնդրում եմ ճաշակել մեր սեղանից։

— Սիրով, իշխանուհի. քո խնդրանքը հրաման է մեզ համար,— ասաց ավագ Համունին՝ Կամսարականի քեռայրը, որ զուրկ չէր զվարճախոսելու շնորհից։

— Հաճո է հրավերդ, մեծ տիրուհի,— հաճոյախոսեց նաև ծեր Վահևունին իր կոնչուն ձայնով։

Եվ բոլորը ելան ու հերթով, ավագության կարգ պահելով, անցան կից սրահը, ուր հատակին փռված գորգի վրա, նրանից կես կանգուն բարձր երկար սեղան էր բացված, երկու կողմը բարձեր շարած։ Սեղանը ծածկված էր առատ ուտելիքներով, որոնց մեջ նախ երևում էին խորոված ամբողջ գառներ։ Նար իշխանը, որպես տանտեր, բազմեց սեղանի գլխին՝ կապան հագած ու գլուխը բաց, իսկ հյուրերը տեղավորվեցին դարձյալ ավագության կարգով։ Հազիվ նստել էին՝

ներս մտավ խոպան մորուքով մի քահանա և, առանց խոսքի, սկսեց սեղանն օրհնել՝ շուրթերը միայն շարժելով և ձեռքով ուտելիքները խաչակնքելով։ Վերջացնելով՝ ինքն ևս նստեց մի ազատ բարձի, և հացկերույթն սկսվեց։

Մինչ հյուրերը կարճ խոսքեր փոխանակելով ուտում էին և ըմպում, Կամսարականը պահպանում էր արտաքին պատշաճից կարգը՝ հյուրընկալ-տանտիրոջ բարեհամբույր դեմք, բայց ներքուստ նա տխուր էր դարձյալ և դժգոհ։ Բանն այն էր, որ նա հրավիրել էր նաև Վասպուրականի տեր Մերուժան Արծրունի իշխանին, բայց նա չկար... չեկավ։ Այնինչ Կամսարականը նրան սպասում էր բոլորից շուտ, ինչպես և պայմանավորվել էին։

Այս մասին նա տակավին չէր հայտնել ոչ ոքի և տակավին հույս ուներ, թե կգա, եթե ոչ հիմա, գեթ գիշերը կամ առավոտյան, և այնժամ կսկսեն իշխանաժողովը։ Բայց օրը մթնեց՝ նա դարձյալ չեկավ... Ի՞նչը կարող էր խանգարել Մերուժանին գալու... Դժբախտ մի պատահա՞ր, թե... եթե ի վիճակի չէր գալու, համենայն դեպս կարող էր լուր հղել այդ մասին։ Մի երկու օրվա ճանապարհ է ընդամենը... Այս մտքերով տարված՝ Կամսարականը գրեթե չէր մասնակցում հացկերույթին, այլ միայն կրկնում էր մեքենաբար.

— Ճաշակեցեք, խնդրում եմ, և զգացեք, ինչպես ձեր հարկի տակ։

Սովորաբար հրավերքի ճաշերը Կամսարականի տանը լինում էին նվագով, բայց այս անգամ, երբ տան տիրուհին հիշեց նվագի մասին՝ իշխանը ձեռքը թափ տվեց միայն. «Ուրախ հրավեր չէ»... Բայց հյուրերը առանց նվագի ու խնդրանքի էլ ճաշակում էին, քանի որ երկար ճանապարհը բացել էր բոլորի ախորժակը. մսի պատառների վրա խմում էին գավաթներով գինի և շարունակում ուտել կրկնապատկված ախորժակով։

Սակայն, որքան էլ այդ զբաղումով տարված, նրանց յուրաքանչյուրի գլխում մի հարց էր դառնում, թե արդյոք ինչո՞ւ է հրավիրել իրենց Կամսարականաց տերը։ Այս մասին էր մտածում շարունակ գոնե Գաբեղենից Սահակ իշխանը և, երբեմնակի նայելով Կամսարականի մտահոգ ճակատին, ցանկանում էր ասես կռահել այդ։

Բայց Կամսարականի ճակատի մռայլից դժվար էր հասկանալ մի բան. թվում էր ուշքը այլ տեղ էր, ականջը դրսի ձայնների, կամ խորհում էր ինքն իր մեջ։ Ու այդպես էլ մնաց երկար, մինչև այն պահը, երբ զգուշավոր քայլերով ներս մտավ երիտասարդ սենեկապետը և կռացավ նրա ականջին.

— Վասպուրականից սուրհանդակ, տեր,— շշնջաց նա։

— Սուրհանդա՞կ... Կանչի՛ր,— ասաց Կամսարականը և, թափով ելնելով, անցավ իր առանձնարանը։ Փոքր անց ներս մտավ կարճ մորուքով գլխաբաց մի երիտասարդ՝ ոտքերին երկար մույկեր։ Ներս մտնելով՝ նա գոտեպնդած բաճկոնի գրպանից հանեց գլանած մի նամակ և խոնարհումով մեկնեց իշխանին։

Կամսարականը, նամակը բացելով, կարդաց մտասույզ։ Ընթերցելով մինչև վերջը՝ նա գոհունակ ոլորեց այն և, սենեկապետին պատվիրելով կերակրել սուրհանդակին, ինքը պայծառացած գնաց մասնակցելու հացկերույթին, որ տակավին շարունակում էր գինիներով ու զվարթ զրույցով։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Երբ հացկերույթն ավարտվեց և մասնակի զրույցներ սկսվեցին սեղանի շուրջը, Գաբեղենից Սահակ իշխանը, նայելով Կամսարականին, շարունակ մտածում էր, թե ինչո՞ւ նա չի հայտնում իր հրավերի նպատակը, ինչի՞ է սպասում արդյոք։

— Սեպուհները կարող են գնալ զբոսնելու կամ զվարճանալու, իսկ մենք՝ երեցներս, կմնանք զրուցելու,— խոսեց վերջապես Նար իշխանը, երբ նկատեց, որ հյուրերից շատերը իրեն են նայում սպասողական։

Երիտասարդները հասկացան իշխանի միտքը և անմիջապես վեր կացան աշխույժ խմբերով դուրս գնալու և միմյանց ավելի ծանոթանալու։ Անգեղա իշխանիկը նույնպես ելավ գնալու. Կամսարականն այդ նկատելով, ձեռը բարձրացրեց.

— Դու մնացիր, իշխանիկ, իբրև... Անգեղա տեր։

Երիտասարդ իշխանը, որ թուխ գանգուր մազեր ուներ և սև թավիշի նման փոքրիկ, փափուկ մորուք, համակերպեց և նորից գրավեց իր տեղը։ Երբ երիտասարդները բոլորովին դուրս եկան ճաշասրահից, մնացող իշխանները տանտիրոջ հրավերով անցան նրա առանձնարանը, որ նույնպես զարդարված էր գորգերով, զենքի տեսակներով ու որսի կենդանիների գլուխներով։ Դրանց կենտրոնում իշխում էր եղջերուի մի խոշոր գլուխ, որի տարածուն եղջյուրների ճյուղերից կախված էին երկու լայնալիճ աղեղ, պատյանով մի սուր, իսկ նետերով լի փայտե փորագիր կապարճները շարված էին դրանց տակ գամերից կախած։

Երբ նախարար հյուրերը, թվով ինը-տասը հոգի, եկան նստեցին այդ սրահի գահավորակների ու բարձերի վրա՝ Կամսարականը ձեռքը, ընդունված կարգով, ճակատին մոտեցնելով՝ նախ շնորհակալություն հայտնեց, որ չմերժեցին իր հրավերը և ժամանեցին փութով, ապա ավելացրեց, որ ինքը նրանց կանչել է հույժ կարևոր մի խնդրի վրա միասնաբար խորհելու։

— Սակայն, տիարք,— շարունակեց նա ընդհանուր մի հայացք գցելով հյուրերի վրա, —զգուշացնելու եմ նախապես, որ մեր զրույցը պիտի մնա գաղտնածածուկ։— Նա նորից հապաղեց մի վայրկյան, թավ հոնքերի տակից նայելով։— Ամենքդ կռահում եք անշուշտ հրավերիս նպատակը. Արշակ թագավորի հրովարտակը անտարակույս ծանոթ է բոլորիդ և գուշակում եք հավանաբար, թե ի՞նչ նոր աղետ է բերելու մեզ, ուստի և կամեցա, որ խորհենք մեր անելիքը...

Հյուրերը լարվեցին. ոմանք նշանակալից նայեցին իրար, ապա՝ Կամսարականին, իսկ ծեր Վահևունին կռնչաց բարձրաձայն.

— Պիտի խորհել, այո... Իր գահակալության առաջին իսկ օրից Արշակը արքա չեղավ մեզ, այլ պատուհաս։

— Այո, պատուհա՞ս,— կրկնեց Կամսարականը և, շարունակելով իր խոսքը՝ հիշեցրեց, թե ինչպես Արշակը իր թագավորության առաջին տարում մարդ պահանջեց արքունի զորքի համար՝ հայոց նախարարները համաձայնեցին, որ չվիրավորեն նոր թագավորին։ Այնուհետև նա պահանջեց, որ

յուրաքանչյուր նախարար ներկայացնի իր մարդոց և անասունների քանակը... Թեև այդպիսի բան չէր արել և ոչ մի արքա, սակայն նախարարները այդ ևս կատարեցին անտրտունջ։

— Ապա,— Կամսարականի ձայնը դողաց և խստացավ,— Արշակ թագավորը, խախտելով ավանդական ամեն կարգ ու օրենք, պահանջեց, որ ես իմ Արտագերս և Կապույտ բերդերը հանձնեմ իրեն... Ես այդ չկատարեցի հարկավ։ Այդ գիտեք ամենքդ։ Չհանձնեցի, վասնզի չէի կարող մերկանալ իմ զենքերից... Չէի կարող զրկել ինձ ինքզինքս պաշտպանելու միջոցներից։

Կամսարականը թեև հուզված, բայց դիտմամբ խոսում էր ձայնն իջեցնելով, որպեսզի իրեն լսեն ուշադիր։ Խոսում էր և միաժամանակ աչքի տակով նայում, թե ի՞նչ տպավորություն է թողնում իր խոսքը։ Նկատելով լսում են կլանված՝ նա հիշեցրեց թագավորի նոր հրովարտակը, որ արձակել էր մի ամիս առաջ՝ իր հիմնած քաղաքի համար մարդաժողով անելու... Չնայած իրենք զգուշացրին Արշակին հատուկ մի նամակով՝ ետ վերցնել իր հրովարտակը, բայց նա թողեց անուշադիր։

— Այդ ամենը հավանաբար քիչ համարելով՝ իր վերջին հրովարտակով կատարում է ավելի վրդովիչ գործ,— Կամսարականը թափով շտկվեց իր բարձի վրա։— Նա սուտ արտոնություններով մեր ծառաներին հրապուրում է իր քաղաքը... Արդ, տեր նախարարներ, թողնե՞նք, որ նա գայթակղի մեր ծառաներին, թե՞ դիմենք արգելող միջոցների... Ես բնավ չեմ կարծում, թե Արշակը կամենում է վրեժխնդիր լինել միայն ինձնից՝ բերդերս իրեն չհանձնելու համար։ Ո՛չ. ես այնպես եմ կարծում, որ նա ցանկանում է խլել մեզնից՝ ամենքիցս, մեր ունեցվածքը և դարձնել իր սեփականությունը։

— Այո, հնոց խոսք է. իշխանությունը հարբեցնում է,— չհամբերեց ծեր Վահունին՝ անգոյային աչքերը շողացնելով։— Արշակը ջանում է ոչ միայն տկարացնել մեզ, այլև՝ կործանել իսպառ...

— Այլ ինչ կարելի է սպասել մի թագավորից, որ կույր հորը վտարեց Կավաշ և դատապարտեց ճգնակեցության,— միջամտեց Բասենի նախարար Մանեճը։

— Այո, տեր նախարարներ,— հոնքերը կիտեց Կամսարականը, որ հյուրերից ոմանք ընդմիջելով թույլ չեն տալիս շարունակելու։— Արշակը կամենում է լինել միահեծան։ Ես իրաղեկ եմ, որ նա հար և հանապազ մի միտք է կրկնում, թե պետք է «ամրացնել Աշխարհը Հայոց»... Ամրացնե՞լ... սակայն ինչո՞ւ մեր բերդերով, մեր ծառաներով... Թո՛ղ ամրացնի իր մարդերով... Ու կրկնում է անվերջ, թե «Շապուհը թշնամի է»... Այո, նա թշնամի է իրեն՝ Արշակունիներին։ Շապուհը մեզ չի անի ոչինչ, եթե հնազանդենք... Իսկ Արշա՞կը... թեև հնազանդ ենք առաջին օրից, բայց շարունակ ջանում է վնասել մեզ, ստորացնել մեզ...

— Հարկավ, առավել լավ է Շապուհը. նա չի խլի մեզնից ոչ մեր ծառաները և ոչ իրավունքները,— բացականչեց Կամսարականի քեռայր Համունի Դավիթ իշխանը։

— Վասնզի մեր արքայի գլխով մեծություններ են անցնում,— չարախնդաց դարձյալ Վահնունյաց նահապետը։— Տավակին ոչինչ չարած երկրի համար՝ խորհում է անմահություն։ Կամենում է քաղաք շինել մեր ծառաների ձեռքով և իր անունը դրոշմել վրան։

Կամսարականը թեև դժգոհ էր, որ ընդմիջում են իրեն, բայց իբրև հյուրընկալ տանտեր, հարմար չհամարեց որևէ ձևով ընդհատել նրանց, այլ միայն ուզեց իմանալ, թե շա՞տ ծառաներ են հեռացել նրանց տիրույթներից, և առաջինը դիմեց Վահնունուն։

— Այո, տեր Կամսարական,— գլուխը շարժեց ծերունին դառնացած։— Յուրաքանչյուր օր լուր եմ առնում, թե այս և այն շենից, թագավորի հրովարտակից գայթակղված, փախել է հինգ մարդ, տասը մարդ, չնայած տարաձայնել եմ, թե փախուստի փորձ կատարողը կպատժվի խստիվ՝ ծեծով, բանտարկությամբ։

— Նույնն արել եմ ես, տեր Վահնունի,— խոսեց Բասենի Մանեճ իշխանը մի թանձրաթավ ձայնով, որ միանգամայն համապատասխանում էր նրա լեցուն, մսեղ կազմվածքին։— Արել՝ եմ. սակայն հեռանում են գիշերանց, անհայտ ճանապարհներով, անտառներով... Իսկ երբ պատահաբար կալանում են դրանց և բերում ինձ, անիծյալներն խսպառ ուրանում են, թե փախչելու ցանկություն են ունեցել։ Սակայն երբ

դոցա շոշափում են գավազանով՝ նոր միայն խոստովանում են, որ խաբվել են արքայի հրամանից և...

Կամսարականը գլուխը տարուբերեց մռայլվելով։

— Ահավասիկ, տեր նախարարներ, ինքս նույնպես, որքան հասու եմ լինում, Արշակ թագավորն ինքն է խախտում կարգը Հայոց Աշխարհի...

— Ճշմարիտ է, իշխան, ճշմարիտ է, թագավորն ինքը, ինքը՛,— կրկնեցին մի քանի ձայներ միասին։— Թագավորն անտեսում է մեզ և խախտում ավանդական օրենքները սուրբ։

— Մեր նախահայրերը չէ՞ որ Արտաշեսի և Տրդատի օրոք եղել են ազատ, չեն նեղվել երբեք...

— Եվ մեր ծառաներին նոքա չեն խլել մեզնից։ Իսկ սա՞... իր հրովարտակով...

— Դա հրովարտակ չէ,— նորից խոսեց Կամսարականի քեռայր Համունի Դավիթ իշխանը,— դա չարության հայտարար է։ Արշակը դրանով խռովեց, գայթակղեց մտքերը։ Թվում է ինձ, թե բոլոր իմ ծառաներս պատրաստվում են հեռանալ, փախչել ծածուկ։ Ես ամենքին կասկածում եմ։

— Իսկ ես, տիարք,— նորից միջամտեց Բասենի Մանեճը,— ես մինչև իսկ երկյուղ ունեմ, որ իմ մարդերը սպանեն ինձ, որպեսզի իրենց փախուստն արգելող չլինի։

Կամսարականը նորից դառնացած շարժեց գլուխը.

— Ահավասիկ վիճակ, որ ստեղծել է թագավորը հայոց,— բացականչեց նա հեգնոտ։— Եվ պիտի թո՞ւյլ տանք, որ շարունակվի այս...

Լռություն իջավ մի վայրկյան. թվում էր՝ յուրաքանչյուրը որոնում է մի ելք, մի միջոց... Եվ այդ լռությունը խզեց դարձյալ ծեր Վահևունին.

— Ի՞նչ կարելի է անել սակայն, տեր Կամսարական։

— Ահա այդ իսկ նպատակով հրավիրել եմ ձեզ, տեր նախարարներ, որպեսզի խորհենք միասնաբար մեր անելիքը։ Խոսեք համարձակ և վստահ։

Վանանդի իշխան Զաքարեն կոկորդը մաքրեց խոսելու համար։

— Ես խորհել եմ, իշխան,— ասաց նա։— Առավել բնական և օրինական կլիներ, եթե ինքներս հսկեինք մեր մարդոց և չթողնեինք...

— Իսկ ինչպե՞ս չթողնենք,— թավաձայնեց Բասենի տերը։— Ինչպե՞ս հսկենք, երբ նոքա գնում են գիշերները, ծածուկ ուղիներով, և ոչ թե իրենց կացարաններից, այլ պարզապես դաշտից, սարից, աշխատանքի վայրից։ Ես, ահավասիկ, կարգել էի պահակներ, որ հեռացողին կալանեն և բերեն ինձ։ Եվ սակայն...— ու Մանեճը կանգ առավ գլուխը տխրորեն շարժելով։

— Եվ սակա՞յն,— հարցրեց Վանանդի տեր Զաքարեն։

—Սակայն պահակներն իրենք հեռացել էին հետները,— պատասխանեց Մանեճը հին զայրույթից հևալով։

— Ուրեմն պահակները պիտի լինեն վստահելի,— վրա բերավ նույն Զաքարեն։— Եվ կամ՝ փախչել փորձողին պետք է պատժել այնպես, որ լինի խրատ այլոց, որպեսզի չհամարձակվեն այսուհետև... Պատժել խստիվ։

— Ես այդպես էլ անում եմ, իշխան,— տնքաց Մանեճը։— Չի օգնում սակայն։ Շարունակում են փախչել։

— Թե դա ևս չի օգնում, հարկ է ուրեմն դիմել խստագույն միջոցի,— ձեռքը բռունցք շինած խոսեց Դավիթ Համունի իշխանը։

Մինչ ամենքը, խոսելով և խոսակցությանը միջամտելով, հուզվում էին, տաքանում, Գաբեղենից իշխան Սահակը մտածում էր. «Ինչո՞ւ են բորբոքվում, տեր աստված... Մի՞թե արժե այդքան հուզվել մի քանի ծառայի, մի քանի շինականի համար և գժտվել թագավորի հետ»։ Նկատելով, որ հուզումը կարող է ծավալվել, նա խոսելու իրավունք խնդրեց և ասաց.

— Տեր Կամսարական, թերևս գրենք մի նոր նամակ և կրկին խնդրենք, որ արքան խաշար հանի արքունի շեներից. չէ՞ իր շեները ավելի մեծաթիվ են, քան մերը։— Այստեղ Սահակ իշխանը շուրջը նայեց՝ տեսնելու և ստուգելու, թե ինչպես է ընդունվում իր առաջարկը, որ ըստ այնմ շարունակի կամ ընդհատի։ Բայց նա ասելիքը չէր ավարտել տակավին, երբ ավագ Համունին շտկվեց բարձի վրա և ձեռքը բարձրացրեց։

— Դու ասում ես, իշխան,— դարձավ նա Գաբեղենից Սահակին,— «թերևս գրենք նոր նամակ»։ Ապարդյո՛ւն ջանք։ Պարզ չէ՞ միթե, որ նամակը չունի զորություն։ Քանզի Արշակը արհամարհեց մեր վերջին նամակը, արձակելով իր վերջին հրովարտակը գայթակղիչ, ուստի և նոր նամակ գրելու կարի-

քը չեմ տեսնում... Դիմե՛լ պետք է առավել զորավոր միջոցի, որպեսզի սանձահարենք Արշակին։

Նրա կրքոտ խոսքը հաճելի եղավ ոմանց, նաև Կամսարականին, որ սակայն հարցրեց աչքերը կծկելով.

— Իսկ ո՞րն է քո զորավոր միջոցը, տեր Համունի։

— Այն,— վրա բերավ Համունին անմիջապես, կարծես այդ հարցին սպասելով,— ա՛յն, որ մեզ հարկ է միաբանել և ցույց տալ Արշակին ու աշխարհին, որ մեր նախնիների արյունը չի սառել մեր սրտում, որ մենք կարող ենք պաշտպանել մեր իրավունքները զինու զորությամբ։ Հասել է, այո, արիության ժամը, տեր նախարարներ... Մեր ծառաներին թագավորին զիջելու փոխարեն՝ ինքներս կազմենք մեր զորքը, և դա կլինի մեր փրկությունը։ Եթե յուրաքանչյուրս ունենանք երեք-չորս հարյուր այրուձի՝ այնժամ, վստահ եմ, համարձակ կպաշտպանենք մեր իրավունքը, մեր պատիվը նախարարական և մեր ինչքը...

Հավաքվածները, բացառությամբ մեկ-երկուսի, թեև ինքնավստահ էին, հանդուգն, բայց միաժամանակ և մռայլ, որովհետև նրանց գոռոզության տակ թաքնված էին ծածուկ երկյուղներ։ Եվ ահա, երբ Համունու խոսքից հետո լռություն իջավ, ոմանք թերահավատ, ոմանք կասկածով հարցրին, թե կարո՞ղ են արդյոք հաջողել այդպես. չէ՞ որ թագավորը բանակ ունի, նախարարների մեծ մասը տակավին համակիր է նրան. իսկ իրենք սակավ են, ուստի և չեն կարող ելանել թագավորի դեմ։

— Մենք սակավ չենք բնավ,— բարձի վրա վեր թռավ Համունին, որ ինչպես երևում է, սովոր չէր առարկության։— Ոչ, սակավ չենք։ Նախարարաց մեծ մասը հույժ դժգոհ է Արշակից։ Եթե ամենքս՝ Հայոց Աշխարհի բոլոր նախարարներս, լինենք համախոհ ու համախորհուրդ, այնժամ թագավորը կլինի անզոր...

Գաբեղենից Սահակ իշխանը, որ սկզբից ձանձրանում էր սկսված զրույցից, ասված ծանր խոսքերից, համարելով դրանք մարդու հանգիստը խռովող պարագա, մանավանդ ճաշից հետո, այժմ տհաճություն էր զգում Համունու խոսքերից։ Նա այն կարծիքին էր, որ իշխանությունը հոգս է, ընդհարումը գլխացավանք ու անհանգստություն։ Ի՜նչ կարիք

հուզվելու։ Թող փախչեն ևս մի քանի ծառա, արժե՞ դրա համար գժտվել թագավորի հետ։ Թող Արշակ թագավորը հոգա երկրի համար, իսկ իրենք ապրեն ուրախության, զվարճության մեջ, երկրորդ անգամ աշխարհ չե՞ն գալու... Այս իսկ պատճառով Համունու առաջարկը նրան թվաց անհեթեթ, և նա նորից միջամտեց տարակուսով.

— Որքան էլ, տեր Համունի, նախարարները կամենան զորք կազմել, միևնույն է, այդ զինյալ ուժը չի գերազանցի արքունի բանակին։ Բախումի դեպքում մենք չենք հաղթի, եթե մեզ օգնության չգան ուրիշ նախարարներ, զորեղ նախարարներ։ Կա՞ այդպիսի հույս։

Այս ասելով՝ Սահակ իշխանը կարծում էր կզգաստացնի բորբոքված նախարարներին. կզգան, որ ամենը, ինչ ասում են, ապարդյուն է և ավելորդ, ուստի և կհրաժարվեն զորք կազմելու մտքից։ Բայց որքան անսպասելի էր նրա հարցը, նույնքան անսպասելի եղավ պատասխանը։

— Կա՛, տեր Գաբեղենից, կա՛,— ասաց Կամսարականը ընդհանուր վարանքը տեսնելով։

Վարանած դեմքերը մեկեն աշխուժացան հետաքրքրությունից, ու միաժամանակ լսվեցին մի քանի ձայներ.

— Եվ ո՞րն է այդ հույսը...

— Ո՞վ է այդ...

Ու բոլորի հետաքրքիր հայացքները կախվեցին Նար իշխանի շուրթերից։

— Վասպուրականի տեր Մերուժանը,— հանդարտ ու ծանրաշեշտ ասաց Կամսարականը։ Նա, ըստ երևույթին, չէր ցանկանա առայժմ հիշել այդ անունը, բայց երբ պահանջեցին հարցումներով՝ չուզեց թաքցնել, մանավանդ որ դա անհրաժեշտ էր նկատվող տարակույսները փարատելու և թերահավատներին ոգի ներշնչելու համար։

— Բայց կա՞ երաշխիք, որ նա անվարան համակիր լինի մեր ձեռնարկության,— հետաքրքրվեց ծեր Վահևունին։

— Երաշխի՞ք,— բառը երկարաձգեց Նար իշխանը և գրպանից հանեց քիչ առաջ սուրհանդակի բերած նամակը ու, բարձր բռնելով, ասաց,— Արծրունյաց տերը նույնպես հրավիրված էր, սակայն ժամանել չկարողացավ արգելառիթ պատճառով և ահավասիկ գրել է իր գիրը համախոհության։

Ու այս բավական եղավ։ Իշխանները մեկեն ոգի առան և սկսեցին խոսել իրար հետևից՝ այժմ առավել վստահ, քան առաջ։

— Եթե Մերուժանը համախոհ է... պարզ է...

— Հարկավ, Արծրունյաց տերը ազդեցիկ է. ունի շատ ավելի մարդեր, քան ամենքս միասին։

— Նաև մեծ համարում Տիգրոնում. վտանգի ժամին կանի անհրաժեշտը։ Ուստի և կարելի է լինել վստահ...

Զրուցով տարված նախարարները չէին նկատել, որ մութն արդեն մտել է ներս և իրար լավ չեն տեսնում. այդ զգացին այնժամ, երբ սպասավորները բերին երկու վառած եռաստեղ աշտանակներ և դրին զրուցողների շրջանի մեջտեղը։ Եվ լույսն աշխուժացրեց զրույցը։

Խոսում էին դարձյալ իրար ընդմիջելով, կարծես իրար սիրտ տալով, ու ոչ միայն խոսքով, այլև սրտով ուրախացան, որ Վասպուրականի մեծազդեցիկ տերը իրենց հետ է. այդ պարագային կարող են արդեն թույլ չտալ Արշակ թագավորին՝ իր ցանկացածը կատարելու։ Միայն Գաբեղենից Սահակն ուրախ չեղավ, որ գործն այդ ընթացքն ստացավ. այսուհետ ուրեմն կխանգարվի հանգիստ կյանքը և չեն կարող այլևս ուրախանալ անհոգ որսագնացություն և զվարճություններ կազմակերպելով... Որքան էլ անհաճո էր դա Սահակ իշխանին, բայց նա բարվոք համարեց լռել։ Նրա կյանքի կանոնն էր. այնտեղ, ուր չես կարող համոզել խոսքով, լռիր խոհեմության ոսկով...

Սակայն նրա փոխարեն խոսեց ուրիշը։

Երբ ամենքը խանդավառ էին Մերուժանի նամակի հայտնությամբ՝ Անգեղաց երիտասարդ իշխանը, որ նստած էր անկյունում մի բարձի և ոչ մի բառով չէր մասնակցում մեծերի զրույցին, հանկարծ խոսելու իրավունք խնդրեց.

— Խոսիր, իշխանիկ,— ասաց Կամսարականը սիրալիր։

— Ամենեն առաջ, տեր Կամսարական, կցանկանայի, որ պարզես ինձ, թե ի՞նչ է արքայի նպատակը, երբ պահանջում է քերդեր, պահանջում է մարդեր իր բանակը զորացնելու և քաղաքը կառուցելու համար։

Կամսարականը քմծիծաղ նայեց նախ հյուրերին, ապա ներողամիտ ժպիտով՝ երիտասարդ իշխանին։ Սկսելով իր

խոսքը՝ նա համոզված էր, թե ամենքը լիովին կըմբռնեն իրեն, սակայն պարզվում էր ահա, որ իշխանիկը չէր ըմբռնել, ուստի երիտասարդի հարցումին պատասխանեց հարցով.

— Ինքդ, իշխանիկ, ի՞նչ նպատակ ես տեսնում թագավորի վարմունքների մեջ։

Երիտասարդը շառագունեց. թվաց հարցումն անսպասելի էր, և նա վարանեց. բայց փոքր հապաղումից հետո ասաց.

— Ես, տեր Կամսարական, իշխանաց ժողովում լինում եմ առաջին անգամ. սակայն թե՛ այստեղ, թե՛ դուրսը, լսելով արքայի մտադրությանց մասին, խորհում եմ, թե առավել բարվոք չէ՞ր լինի թագավորի դեմ միաբանելու փոխարեն միաբանենք թագավորի հետ, և այդպես կլինենք առավել ապահով, քանզի միաբանելով նորան՝ հնար կտանք արքային մեծ բանակ պահելու և թշնամիներին դիմադրավելու։ Այդ պարագային, խորհում եմ, արքայի համար բնավ շահավետ չէր լինի կտրել իրեն օգնող ձեռքը, տկարացնել մեզ... Թվում է ինձ, որ արքայի նպատակը Հայոց Աշխարհի զորացումն է...

Այս անգամ Կամսարականը նայեց նրան հոնքերի տակից. երիտասարդի խոսքն այնքան անսպասելի և տհաճ էր նրան, որ մեկ կամեցավ կշտամբելով ընդհատել, բայց, իբրև հյուրընկալ, և թե նրա տրամադրությունը պարզելու համար, ջանաց լսել մինչև վերջը։ Նա մինչև իսկ մտածեց, թե եկել է գուցե թագավորի բարեկամներից ներշնչված... համենայն դեպս բարվոք համարեց լռել և լսել, իսկ երբ նա ավարտեց՝ չուզեց խիստ լինել, նկատեց միայն խրատական եղանակով.

— Երիտասա՛րդ ես, իշխանիկ, և տակավին անհաղորդ արքայի շար մտադրությանց։ Ուստի և սխալվում ես, կարծելով, որ եթե միաբանենք և օգնենք թագավորին՝ նա կպաշտպանի մեզ։ Բնավ։ Նա առավել մեծ եռանդով կավերի մեզ և կդարձնի ամենքիս իր ծառաները և կհրամայի՝ ի՛նչ կամենա... Ո՛չ, իշխանիկ, հակառակը. մեր իրավունքները, մեր տիրույթներն ու ինչքը պաշտպանելու համար մենք պիտի միաբանենք Արշակ թագավորի դեմ, նրա հրամանների ու հրովարտակների դեմ, որպեսզի չդառնանք կամավոր ստրուկներ։ Թագավորը կամենում է սեփականել միայն մեր հո-

գերը, մեր բերդերը, մեր մարդերը, իսկ մեր կարիքը — .. զգում։ Նա խորհում է, իշխանիկ, թե որքան քիչ նախարար՝ այնքան լավ. բյուրապատիկ լավ. վասնզի այդպիսով դյուրին կլինի իշխել և հրամայել...

Իշխանիկը ուշադիր լսում էր Նար իշխանին և սպասում, որ նա վերջացնի. թվում էր նորից խոսելու ցանկություն ուներ—այնպես անհանգիստ էր. ուստի, երբ Կամսարականն ավարտեց իր ասելիքը, նա հարցրեց.

— Դու ասում ես, իշխան, թագավորը մեր կարիքը չի զգա, բայց մի՞թե թագավորը կարիք չունի զորավարների, պաշտոնատարների... և մենք կլինենք ահա...

Կամսարականը քմծիծաղ ընդհատեց նրան, գլուխը տարուբերելով.

— Օ, երիտասա՛րդ, երիտասա՛րդ, որ անունդ է անփորձություն,— ասաց նա մեղմաձայն։— Եվ մի՞թե իրոք հաճո կլինի քեզ, իշխանիկ, կորցնել կյանքդ անկախ և դառնալ թագավորի սոսկ ծառա, թեկուզ զորավարի պաշտոնով։ Եվ, վերջապես, Արշակն ունի իր սիրած նախարարները՝ Մամիկոնյանք, Գնունիք, Բագրատունիք և այլք։ Նոցա է տալիս Արշակը թե՛ պաշտոական և թե՛ զորական պաշտոնները, իսկ քեզ, իշխանիկ սիրելի, նա չի տա և ոչինչ։ Իմ տոհմը ահավասիկ, որ Գահնամակում գրավում է տասներկուերորդ տեղը, Արշակը անտեսում է ինձ։ Արքային հարկավոր են միայն շողոքորթներ։

— Ճշմարի՛տ է, տեր Կամսարական, ճշմարի՛տ է,— հավանություն տվեցին ծեր Վահևունին և Դավիթ Համունին միաձայն, ակնհայտ ընդգծելով իրենց դժգոհությունը երիտասարդից։ Նույնպիսի դժկամություն երևում էր և մյուս նախարարների դեմքին, բացի Սահակ իշխանից, որը յուրաքանչյուր խիստ ելույթից հետո մտածում էր, թե արդյոք լավ չէ՞ր լինի թագավորի պահանջը կատարեին—տային նրան քաղաքի շինության համար մարդիկ և ապրեին հանգիստ։ Բայց իր մտքերը չէր ուզում հայտնել՝ հակաճառություն լսելու անախորժությունից խուսափելու համար։ Մինչդեռ Անգեղա իշխանիկը չկամեցավ տեղի տալ. չգիտես հակառակելու ավյո՞ւնը, թե իր համոզումը հայտնելու ցանկությունը՝ դրդում էին նրան խոսել։

— Ես այնուամենայնիվ, տեր Կամսարական,— նորից խոսելու իրավունք խնդրեց նա,— երկար խորհելով խորհում եմ, որ մենք՝ ամենքս չենք կորցնի ոչինչ, եթե հակառակ չգնանք արքայի կամքին, հետևաբար և, նա չի խլի մեր ինչքն ու իրավունքը։ Հակառակ դեպքում՝ այո...

— Իշխանիկ սիրելի, դու, իբրև պատանյակ, տակավին հասու չես, թե որքա՜ն սնափառ են արքաները։ Միահեծան լինելու համար, իրենց մտադրությունը իրագործելու համար նոքա սպանում են անգամ իրենց իսկ հարազատին, ինչպես և վարվեց Արշակը իր եղբորորդի Գնելի հետ։

— Սակայն դա թյուրիմացություն է, իշխան։ Ասում են, որ դավը նյութել էր արքայազն Տիրիթը։

— Իսկ թագուհու թունավորումը նույնպես Տիրի՞թն էր դավել, —զայրացած կոնչաց ծեր Վահևունին՝ նստած տեղից բարձրացնելով իր ոսկրոտ ձեռքը, որի մատները նման էին թռչնի վեր պարզած մագիլների։

Երիտասարդ իշխանը տարակուսով նայեց բարկացած ծերունուն։

— Որքա՞ն ճշմարիտ է, որ արքան է թունավորել։

Ավագ Համունին վշտացած գլուխն օրորեց իր բարձին նստած։

— Մի՞թե հայտնի չէ քեզ, իշխանիկ, որ Արշակը Փառանձեմին սեփականելու համար սպանեց արքայազն Գնելին և ապա մահադեղ տվեց իր Օլիմպիային,— ասաց Համունին գրեթե զայրացած։— Այնուհետև. Գնելից հետո սպանեց Տիրիթին, որ մեղքը դնի նորա վրա և թաքցնի հետքը իր արարքի։

— Սպանեց նաև Վարդ Մամիկոնյանին, որ չխոսի իր հանցավոր սիրո գաղտնիքներից,— նկատեց Բասենի Մանեճը թանձրաշունչ հնքով։

— Ոճրածին մարդ և ո՛չ թագավոր,— բացականչեց Վահևունին։

Ուրիշ երկուսը ձայնակցեցին նրան։

Ու մի քանի վայրկյան նրանք, իրար ընդմիջելով, խոսեցին բարկացած։ Իշխանիկը նրանց լսում էր շառագունած. նա լսել էր, որ այդ ամենը զրպարտություն է՝ թագավորի թշնա-

Մինչերից հորինված, բայց չէր կամենում խոսել այդ մասին՝ նախարարներին չգրգռելու համար։ Այլ միայն նկատեց.

— Բայց որքա՞ն ճշմարիտ է այդ ամենը։

Կամսարականը նորից տարուբերեց գլուխը.

— Ախ, երիտասարդությո՛ւն, երիտասարդությո՛ւն. միշտ դյուրահավատ և լավատես։ Երբ քո տարիքին էի, իշխանիկ, ես նույնպես կարծում էի, թե թագավորները սուրբ են. բայց տարիքիս հետ համոզվեցի, և բազում փաստերով, որ արքաները ոչ միայն սուրբ չեն, այլ ոճրագործ են հաճախ։ Կարող են նոքա ամենքիս զոհել իրենց իշխանության ու փառքի համար, առավել ևս՝ Արշակը։

— Բայց, տեր Կամսարական,— չհամբերեց իշխանիկը,— չէ՞ որ թագավորը ցանկանում է հզորացնել մեր աշխարհը, որպեսզի ամենքս ապրենք ապահով։ Նա ջանում է ամրացնել սահմանները, զորացնել բանակը։

— Այդ անում է, իշխանիկ, ի՞նչ իշխանության համար,— ասաց Կամսարականը բեղերը կրծելով, ինչ անում էր նա հուզված պահերին,— անում է ի՞նչ փառքի համար և մեզ ամենիս ի՞նչ ստրուկը դարձնելու համար։ Միայն ի՞նչ համար, բայց ոչ երբեք մեզ համար։ Այդ Արշակավանը մի խաբեություն է։ Դա կառուցում է մեզ կողոպտելու համար։

Անգեղա երիտասարդ տերը նորից շառագունեց.

— Իսկ քաղաքը, տեր Կամսարական, մի՞թե քաղաքը ևս կառուցում է իր համար։ Չէ՞ ամենքը կարող են ապրել այնտեղ։

Հյուրերը, որ մինչև այդ վրդով զարմանքով էին նայում երիտասարդին և ակներև համակիր չէին նրան, իշխանիկի վերջին խոսքի վրա դարձյալ միջամտեցին խոսակցության, առանձնապես ավագ Համունին և ծեր Վահունին։ Առաջինը նկատեց, որ կառուցվող քաղաքը բացարձակ վնասում է իրենց, որ Արշակը սուտ խոստումներով տանում է իրենց ծառաներին, ապա մեղմաբար կշտամբեց երիտասարդին, որ նրա հանգուցյալ հայրը քաջ ըմբռնում էր արքայի ձգտումները և լիովին համամիտ էր իրենց, սակայն ինչո՞ւ ինքը խորհում է ներհակ... Իսկ ծեր Վահունին, իրեն զսպելով, հարցում արավ միայն.

— Այժմ, իշխանիկ, եթե թագավորը քեզնից պահանջի կարգից դուրս մարդեր, ծառաներ՝ չե՞ս մերժի։

— Բնավ, եթե մեր ապահովության, Հայոց Աշխարհի ապահովության համար է, տեր Վահանի։ Ես արդեն իսկ տվել եմ հիսուն մարդ...

Լռություն իջավ, որ տևեց մի քանի րոպե, երիտասարդի կողքին նստող Բասենի տեր Մանեճը ծանրաշունչ հնքով ելավ տեղից և, ճակատը սրբելով, նստեց հեռու մի բարձի։ Նույնպես վարվեց և կրտսեր Համունին, որ լսում էր միայն և ոչ մի բառով չէր միջամտում զրույցին։ Իշխանիկը մնաց մենակ և առանձնացած և այնուհետև ամենքը կարծես խուսափում էին նրան նայելուց։ Ի՞նչ անձնապաստան և հանդուգն երիտասարդ,— ասես խորհում էր յուրաքանչյուրը։ Իսկ Կամսարականը մտածում էր, թե ով է արդյոք երիտասարդին ներշնչել այդ մտքերը, և իշխանիկի ներկայությունը նրան թվաց վտանգավոր... Ի՞նչ պետք էր անել. հակաճառե՞լ նրան, թե արհամարհել նրա մտքերը։ Հակաճառելով, միևնույն է, չէր կարելի խելամիտ դարձնել նրան, արհամարհել՝ նույնպես չէր կարելի։ Եվ Կամսարականը բարվոք համարեց հայտարարել.

— Այսքանս բավ համարենք, տիարք, և ավարտենք, մանավանդ գիշեր է արդեն։

— Ճշմարիտ է, տեր Կամսարական, ուշ է իրոք, բայց պետք է գանք մի համախոհության,— խոսեց Վանանդի տեր Զաքարին, որ մինչ այդ լուռ էր։— Ես հարկ չեմ տեսնում առայժմ դիմել ծայրահեղությանց. բարվոք է խոսել Ներսես քահանայապետի հետ. թող նա լինի միջնորդ և պարզի թագավորին, թե իր քամահրող և թշնամական վերաբերումը առ մեզ կունենա ծանր հետևանքներ, եթե շարունակվի հարկավ...

— Ես համամիտ եմ Վանանդի տիրոջը,— ասաց Բասենի Մանեճը։— Վաղաժամ է խոսել ապստամբության մասին. մանավանդ անպատրաստ ենք, և ոչ բոլոր նախարարներն են այստեղ։ Հարկ է, որ նախ քահանայապետը համոզի արքային, որպեսզի նա խաղաղությամբ ետ առնի իր հրովարտակը։ Եթե թագավորը չհոժարի, այնժամ մենք ազատ ենք պաշտպանել մեր իրավունքը։

— Սակայն քահանայապետը հանձն կառնի՞ խոսել արքայի հետ,— կասկած հայտնեց Վահևունին։ —Չէ՞որ նա, որքան իրազեկ եմ, չի դնում արքունիք։

— Այո, ճշմարիտ է, տեր Վահևունի,— ասաց Կամսարականը։— Վեհը վշտացած է Արշակից, որ նա կնության է առել իր եղբորորդու՝ արքայազն Գնելի կնոջը, սակայն նա է Հայոց Աշխարհի վեհագույն դատավորը։ Ուստի պարտավոր է... Եթե անհրաժեշտ է խոսել արքայի հետ, այդ միայն նա կարող է անել։

— Թող լինի այդպես, լինի այդպես,— կրկնեցին մի քանի ձայներ։— Դիմենք Ներսեսին. եթե հրաժարի՝ այնժամ կխորհենք մեր անելիքը։

Երբ մեծ մասը հավանեց այդ առաջարկը, խնդրեցին, որ Նար իշխանն ինքը խոսի վեհի հետ, և որքան շուտ՝ այնքան լավ։

— Բարի,— համաձայնեց Կամսարականը։— Փորձենք և այդ...

Երբ իշխանները միմյանց «գիշեր բարի» մաղթելով գնացին իրենց հյուրասրահները հանգիստ առնելու, Համունի ավագը բռնեց Կամսարականի թևը և շշնջաց.

— Այդ Անգեղա իշխանիկը չի՞ վնասի մեզ... եթե հեռանա։

— Կխորհենք անհրաժեշտը,— հոնքերն իրար բերեց Նար իշխանը։

Մի քանի ժամ հետո, երբ հյուրերին հրավիրեցին ընթրիքի, և ամենքը նորից գնացին նույն ճաշասրահը, Անգեղաց իշխանիկը մտավ Կամսարականի առանձնարանը և հայտնեց, թե ինքը կամենում է մեկնել իր ոստանը, եկել է հրաժեշտ առնելու... Բայց տանտերը բռնեց նրա ձեռքը և՝

— Ոչ, իշխանիկ,— ասաց,— ես քեզ թույլ չեմ տա մեկնել այս տարաժամին, թեկուզև քաջ թիկնապահներով։ Սիրում եմ, որ հյուրերս գիշերեն իմ հարկի տակ և մեկնեն լույսով։

Հնար չկար հրաժարվելու։ Որքան էլ տհաճ էր այդ իշխանիկի համար, այնուամենայնիվ նա հարկադրվեց ընթրել ամենքի հետ՝ առանց մի բառ փոխանակելու. և այդպես էլ

անխոս, ընթրիքից հետո գնաց քնելու։ Բայց ննջել չկարողացավ իսպառ, հիշելով, թե ինչպես ընդունվեց իր հակառակությունը և ինչպես ամենքը հոնքերի տակից էին նայում իրեն...

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Այդ գիշեր քնել չկարողացավ նաև իշխան Կամսարականը. նա շարունակ մտածում էր Անգեղաց իշխանիկի մասին, նրա խոսքերի մասին. որտեղի՞ց էին երիտասարդին այդ մտքերը. մի՞թե նրա մարդիկ չեն փախչում Արշակի նոր քաղաքը, թե՞ չի ըմբռնում թագավորի հրովարտակի աղետավոր հետևանքը... Եվ արդյոք ճի՞շտ են նրա խոսքերը, թե ինքնակամ ծառաներ է ուղարկել այդ քաղաքում աշխատելու... Ի՞նչ էր նշանակում այդ... Մի՞թե կան նախարարներ, որ այդպես են մտածում...

Դառնացած խորհում էր Կամսարականը և չէր կարողանում քնել. նրան զայրացնում էին անտարբեր նախարարները, որ քիչ էին հուզվում թագավորի արարքներից։ Ինչ վերաբերում է իրեն՝ Կամսարականին, նա ամենը չասաց ժողովում, անչափ հուզված էր թագավորի հրովարտակից։ Բավական չէր անցածը, Արշակ թագավորը նորից արտոնության խոստումներով մարդիկ էր գրավում դեպի իր քաղաքը։ Ի՞նչ էր կամենում այդ անհանգիստ մարդը. ինչո՞ւ էր արհամարհում նախարարներին և նրանց սեփականությունը... Վաղուց նար իշխանին տհաճ էր, որ Արշակ թագավորը արքունիքում բարձր դիրք ու պաշտոններ էր տալիս Մամիկոնյաններին, Գնունիներին և մյուս, անգամ երկրորդական նախարարներին— իրեն՝ ոչ... ընդհանրապես Արշակի վերաբերումը, պահանջներն ու հրովարտակները տհաճ էին Կամսարականին։ Ավելին. նրան թվում էր, թե դա ուղղված է հատկապես իր դեմ, իր համախոհների դեմ... Թե ի՞նչ էր Արշակ թագավորի բուն նպատակը՝ Կամսարականը չէր կարողանում հասու լինել, բայց ենթադրում էր, որ ամենն արվում է չար դիտավորությամբ, իրեն և իր բարեկամներին վնասելու համար... Թագավորի վերջին հրովարտակը նրան թվում էր ավելի գայթակղիչ, քան նախորդները... և դա հաստատվեց տխուր փաս-

տերով... Նար իշխանը, Թագավորի հրովարտակի սոթիվ, մի տասն օր առաջ կանչեց Արշարունիքի և Սուրմարիի իր վերակացուներին և հարցրեց, թե կարո՞ղ են ասել՝ իր ծառաներից (շինական թե ռամիկ) քանի՞սն են հեռացել կամ փախել Թագավորի խոստումներով հրապուրված։ Թեպետև լսել էր, որ եղել են փախչողներ մյուս նախարարների կալվածներից, բայց երբ իմացավ, որ իր ծառաներից հեռացել են մոտ երկու հարյուր հոգի, նա ոտքը զարկեց հատակին և պոռաց.

— Եվ դուք Թույլատո՞ւ եղաք... անզգամներ...

Վերակացուները գունատվեցին և միայն կարողացան ասել.

— Նրանք, տեր, փախել են գաղտագողի։

Իշխանը նայեց նրանց խստահայաց, նայեց ոտից գլուխ և գոռաց.

— Դո՜ւրս, ապիկարներ...

Վերակացուները ոչ Թե դուրս ելան, այլ երկուսը միասին մեկեն ծունկի եկան իշխանի առաջ։ Բայց Կամսարականը այս անգամ ոչ Թե խոսեց նրանց հետ, այլ յուրաքանչյուրին մի աքացի տալով՝ ինքը դուրս եկավ սրահից, հրամայելով.

— Ամենը կհանձնեք նոր վերակացուի... Դուք այլևս չի՛ք։

Նոր նշանակված վերակացուները նույնպես չկարողացան անել այն, ինչ ցանկանում էր իշխանը. նա լուրեր էր առնում դարձյալ, Թե շինականները նորից լքում են իր կալվածները և խմբերով անցնում Կոգովիտ՝ Արշակի նոր քաղաքը կամ Ալանը, ինչպես կոչում էին ոմանք։

Նկատ առնելով այս ամենը՝ իշխանը հատուկ սուրհանդակների միջոցով իր ամրոցն էր հրավիրել համախոհ նախարարներին՝ Թագավորի վերջին հրովարտակի վրա խորհելու. և դիտավորյալ չէր հայտնել հրավիրելու նպատակը, որովհետև կամենում էր նախ իմանալ, Թե ի՛նչ է կատարվում նրանց կալվածներում, ի՛նչ են խորհում նրանք, ասա, Թե ի՛նչ կարելի է նախաձեռնել Թագավորի դեմ... Եվ այժմ ահա պարզվեց, որ ամենրի կալվածից էլ շինականներ են փախչում այդ «անիծյալ քաղաքը», ու բոլորը դժգոհ են Թագավորից, բայց Անդեղա իշխանիկը...

Ա՜հ, այդ իշխանիկը...

Երկար խորհելով՝ Նար իշխանը գտնում էր, որ երբեմն-

սարդի մտքերը ոչ միայն տհաս են, այլև վտանգավոր. ուստի և զգում էր, որ հրավիրել էր նրան.. Բայց միևնույն ժամանակ արդարացնում էր իրեն, թե, անծանոթ լինելով նրան, առաջուց չէր կարող իմանալ, որ նա օտարոտի մտքերի տեր է և ոչ մի բանով չի հիշեցնում հորը՝ հանդուցյալ Արտենին, որը չէր համակրում Արշակին։

Մտածում էր իշխանը դառնացած և շուտ-շուտ կրկնում.

— Վիժո՛ւկ և ոչ թե իշխան։

Մյուս կողմից Կամսարականին անհանգստացնում էր մի տագնապալի միտք, թե ի՞նչ աղետավոր բան կլինի, եթե այդ իշխանիկը իրենց՝ համախոհ նախարարների, այս հանդիպումն ու գրույցը հասցնի թագավորին։ Եվ դա նրան թվում էր ո՛չ անհավանական և ո՛չ անսպասելի. չէ՞ որ երիտասարդները միշտ երազում են ունենալ և՛ դիրք, և՛ անուն, և խտիր չեն դնում միջոցների մեջ դրանց հասնելու։ Այս իշխանիկն էլ ահա, մտածում էր Նար իշխանը, կցանկանա հաճոյանալ Արշակին՝ նրա արքունիքում կամ բանակում պաշտոն ունենալու համար... Եվ նա կանի ամեն բան, եթե չկանխես... Ո՛չ, չպետք է թույլ տալ այդ։ Երբե՛ք...

Բավական միջոց խորհելուց հետո Նար իշխանը քնեց վերջապես և առավոտը արթնացավ սովորականից շուտ, որ հյուրերի հետ լինի... և հազիվ հագնվել էր՝ հայտնեցին, թե Անդեղաց իշխանիկը նրա տեսությունն է խնդրում։

— Հրավիրի՛ր,— կարգադրեց նա սենեկապետին, կանգնելով սենյակի մեջտեղը՝ մոայլ դեմքին մեղմ արտահայտություն տված։

Ներս մտավ իշխանիկը ճանապարհորդական թիկնոցով, թուրը մեջքին կապած։

— Ներիր, տեր իշխան, անժամանակ այցս,— ասաց նա շառագունելով,— Եկա մեկնելուց առաջ հրաժեշտ առնելու։

Կամսարականը, իր պինդ ձեռքով նրա աջը բռնելով բարեմաղթեց, որ նա հոր նման խիզախ լինի, որ չմոռանա հարևանությունը, և լինի հավատարիմ, ինչպես հավատարիմ էր հանդուցյալ հայրը, և շուտ-շուտ այցելի իրեն։ Ապա հայտնեց, թե ինքը գտա ապահով ուղեկիցներ, չի թողնի մենակ մեկնելու։ Երիտասարդը փորձեց հրաժարվել, ասելով, թե ինքը թիկնապահներ ունի և թե իր կալվածը շատ հեռու չէ։

— Ոչ, ոչ, իշխանիկ։ Հյուրասիրության կարգը պահանջում է, որ թիկնապահները ճանապարհեն իմ հյուրին։

— Շնորհակալություն, իշխան. դուք շատ բարի եք։ Սակայն ճանապարհս ապահով է և ըստ ամենայնի անվտանգ։

— Ոչ, իշխանիկ, հյուրերիս ճանապարհում են իմ թիկնապահները։

Եվ երբ երիտասարդը, հրաժեշտ առնելով, դուրս գնաց, Կամսարականը թիկնապահներից երկուսին կանչեց իր առանձնարանը և կարգադրեց, որ Անգեղաց իշխանիկին ուղեկցեն մինչև նրա կալվածի սահմանը... ապա՝ ինչ-որ շշնջաց։

— Հրամանքդ, տեր,— և թիկնապահները՝ երկու թիկնեղ երիտասարդ, թափով գլուխ իջեցնելով, դուրս եկան Անգեղաց տան ժառանգին, տիրոջ պատվերի համաձայն, ուղեկցելու։

Այդ և հետևյալ օրը մեկնեցին նաև մյուս հյուրերը։

Սովորաբար նախարար կամ սեպուհ հյուրերը Կամսարականի ապարանքում մնում էին մի քանի օր, որովհետև տանտերը չէր թողնում՝ հյուրասիրության կարգը լրիվ չկատարած. բայց այս անգամ հանգամանքներն այլ էին. հյուրերը պետք է մեկնեին, և շտապ, քանի որ ոչ միայն ժառաները, այլև երբեմն շինականներն ու ռամիկները լքում էին իրենց բնակավայրը և փախչում Արշակի ավանը, ուստի պետք էր գնալ որքան կարելի է շուտ և հսկողություն սահմանել՝ խափանելու ամեն տեսակ փախուստ ու խմորում, մինչև որ քահանայապետը կխոսեր արքայի հետ և կհամոզեր վերացնել գայթակղիչ հրովարտակը։ Նախաճաշելով հետզհետե մեկնեցին Վանանդի իշխան Զաքարեն և Գաբեղենից տեր Սահակը իրենց թիկնապահներով, երկուսը միասին, որովհետև սրանց ճանապարհը նորից պիտի անցներ Երասխաձորով։ Մյուսները գնացին այլ ճանապարհներով. Պապակ Պալունին և Վահեունին իրենց սեպուհներով ճանապարհ ընկան կեսօրին, Բասենի Մանեճը և Վարձա Ապահունին՝ փոքր հետո։ Իսկ ամենից վերջը մեկնեցին Համունի եղբայրները՝ Դավիթ և Դանիել իշխանները։

Սկզբում Կամսարականը սրանց, որպես մերձավորների, ճանապարհ դրեց մինչև պարսպաղուռը։ Ու հենց այդտեղ էլ կանգնեցրեց քեռայրին և ասաց.

— Ես, Դավիթ, կցանկանայի, որ դու ես ընկերանաս ինձ՝ Վեհի մոտ գնալու։ Չէի ցանկա լինել մենակ։ Գնանք միասին։

— Սիրով։

— Գնա ուրեմն և կարգի դիր գործերդ. մանավանդ սահմանիր խիստ հսկողություն, որպեսզի չինի նոր փախչող։ Իսկ ես կգամ երեք օրից, և կճանապարհվենք։

— Բարի։ Իմ միակ հոգսը նույնպես այն է, որ հավատարիմ մարդերից խստագույն հսկողություն կարգեմ, որպեսզի այսուհետև մեկը չկարենա փախչել։ Իսկ եթե նկատեն փախչող մեկին՝ գանահարեն այնպես, որ յուրաքանչյուր ծառա սարսափի փախուստի մտքից։

— Իրավացի ես,— գլխի ծանր շարժումով հավանություն տվեց Կամսարականը։— Պետք է ահ ազդել, որ չհամարձակվեն... Պարտ է այնպես անել, որ մինչև մեր վերադարձը չինի և ոչ մի փախուստ։

— Լիահույս եմ և վստահ,— ասաց Համունի Դավիթը։— Երեք օրից կսպասեմ քեզ։

— Այո, երեք օրից։

— Բարի է, Նար իշխան,— և ավագ Համունին, հեծնելով նժույգը, կռացավ և նորից խոսեց կիսաձայն.— սակայն ինձ և ամենքիս մտահոգում է Անգեղաց իշխանիկը։ Գնա հանկարծ և...

— Եղիր անհոգ։ Նա կդառնա անվտանգ,— Կամսարականը հանգստացնող մի շարժում արավ, որից Համունին թեև չհասկացավ ոչինչ, բայց գլխով արավ։

— Խաղաղություն,— ասաց Դավիթը որպես հրաժեշտի խոսք և մտրակը բարձրացրեց, որից նրա կարմիր նժույգը վեր առավ առաջին ոտները և մեկեն պարսպադռնից սուրաց դուրս։ Նրան հետևեցին Դանիել եղբայրը և տեգավոր չորս Բիկնապահները՝ սկզբում միատեսակ քայլքով, ապա ավելի ու ավելի արագընթաց։ Ու մի վայրկյան հետո, Ախուրյանի խախտված կամուրջն անցնելով, բռնեցին իրենց տիրույթի ճանապարհը։

Մի ժամի չափ նրանք գնում էին՝ ավագ եղբայրն առաջ ընկած, կրտսերը նրա հետևից, իսկ Բիկնապահները բայլա-

կան ետ։ Հետո եղբայրները հավասարվեցին, ավելի ճիշտ՝ մեծը ձին կանգնեցրեց, որ կրտսերը մոտենա, և սկսեցին զրուցել։

— Ինձ այնպես է թվում,— սկսեց ավագը,— թե այդ Անգեղա իշխանիկը վնասելու է մեզ և մեր գործը։ Վատ մի նախազգացում է ծանրացած սրտիս։ Ինչպե՞ս է զգուշավոր Նար իշխանը հրավիրել այդ անփորձ պատանուն, առանց նրա մտքերը ստուգելու։

— Իսկ ի՞նչ կարող է անել այդ իշխանիկը,— հարցրեց կրտսերը։

— Ամեն ինչ։ Բավական է մեր խորհրդաժողովի խոսքերը հասցնի արքունիք, և Արշակը դաժան դատաստան կտեսնի... Ավա՜ղ, երիցս ավաղ... Նար իշխանը, որ զգույշ է միշտ, այս անգամ գործեց մեծ սխալ, հրավիրելով խնկմիտ մեկին, որ հանդգնեց ներհակել մեզ, չհամաձայնել մեզ։ Ճշմարիտ է ասում Նար իշխանը. վիժո՛ւկ և ոչ թե իշխան։

— Մոռացիր, եղբայր իմ, և վանիր մտքերդ տխուր,— ասաց կրտսերը։— Լավագույնս է՝ ինքներս միջոցներ խորհենք, որ մեր դրան մարդիկ և շինականները չփախչեն...

Խոսելով հասան մի ճամփաբաժանի, ուր մի փոքր արահետ թեքվում-մտնում էր անտառ։ Ավագ եղբայրը ձին թեքեց դեպի այդ արահետը։ Զարմանալի սովորություն ուներ Դավիթ իշխանը. տուն դառնալիս, որտեղից էլ լիներ, միշտ շտապում էր և սիրում էր վերադառնալ կարճ ճանապարհով. այս անգամ էլ ընտրեց անտառի արահետը։ Սկզբում եղբայրներն իրենց նժույգները վարում էին իրար կողքի, հանդարտ քայլքով. ու երկու ժամից ավելի գնում էին զրուցելով։ Հետո, երբ մտան անտառ, ճանապարհը նեղացավ, դարձավ շավիղ։ Եվ նրանք ստիպվեցին, այդ շավիղը բռնած, գնալ նորից իրար հետևից։ Իսկ շավիղը մերթ նեղանում էր, մերթ լայնանում... Ծառերի արանքով գնալով՝ նա կամ դուրս էր գալիս մի փոքրիկ արևողող բացատ, կամ սեղմվում էր թփերով ու ծառերով, և այդ ժամանակ ծառերի ճղները դիպչում էին հեծվորների գլխին, ուսերին, ու անտառի համատարած լռության մեջ լսվում էին միայն նրանց նժույգների փափուկ ոտնատրոփը ու դրանց արձագանքը հեռվում։

Օրը պարզ էր. ամպի կտոր անգամ չէր երևում երկնքում.

հեռաճաշյա արևը շոայլորեն ոսկեվորել էր ծառերի կատարները, բացատների թփերն ու կանաչը. և չգիտես դրանի՞ց էր արդյոք, գարնան նորաբաց տերևների՞ց, թե ծաղիկներից՝ անտառը լցված էր բուրմունքներով, որ հաճելիորեն ուռցնում էր մարդու կուրծքը և թեթևացնում շնչառությունը։ Հեծվորներն այժմ գնում էին անխոս, ասես այդ բուրմունքով հարբած. ձիերն անգամ փնչացնում էին հաճույքով և քայլում թարմացած։

Մի տեղ, երբ արահետը ծառերի արանքից անսպասելի դուրս եկավ մի փոքր, երեք նիզակաչափ բացատ՝ առջևից գնացող Դավիթ Համունու նժույգը վրնջաց հանկարծ։ Իշխանը, փորձով իմանալով, որ ձին վրնջում է մի բան զգալիս կամ նկատելիս, շուրջը նայեց՝ տեսնելու ինչ կա։ Ու նայելով առաջ՝ տեսավ շինական մի կին ու մի մարդ, որ ինչ-որ կապոցներ շալակած գնում էին մի փոքրիկ տղայի հետ, որը քայլում էր նրանց առջևից։ Այդ նկատելով՝ Դավիթ իշխանը ձին խթանեց ինքնաբեր և առաջ անցավ։ Նրան հետևեց եղբայրը։

Ձիերի ոտնաձայնից շինականն ու կինը կանգ առան և ետ նայեցին վախեցած, ապա գրեթե ցատկելով հեռացան շավղից, որ ճանապարհ տան ձիավորներին։

— Այս առա՞ջ բարի,— մոտենալով և նժույգը կանգնեցնելով՝ հեգնոտ ասաց ավագ Համունին, միաժամանակ ուշադիր ղննելով նրանց։

Շինականները, անակնկալի՞ց թե ամաչելուց, չկարողացան իսկույն պատասխանել. առաջինը կինն սթափվեց և ասաց.

— Ուխտի, տեր, ուխտի կերթանք...

Համունին նորից զննաբար նայեց նրանց ոտից գլուխ, նայեց նրանց շալակի կապոցներին և հարցրեց դարձյալ հեգնոտ.

— Ուխտի՞... Բայց ինչո՞ւ հին հագուստների կապոցով։

Այս անգամ պատասխանեց շինականն ինքը.

— Ճանապարհին, գիշերը հագնելու համար,— ասաց նա խեղճ, բառերը հատ-հատ արտաբերելով։

— Այդպե՞ս,— երկարեց Համունին մտածումների մեջ։— Իսկ ո՞վ է քո տերը։

— Իշխան Կամսարականը։

— Իշխան Կամսարակա՜նը,— նորից բառերը ձգեց նա։— Ինչպես տեսնում եմ՝ դու ճշմարիտ չես խոսում, մա՛րդ։

— Ինչո՞ւ, տեր։ Ընտանիքով կերթամ Վարդիկ-Հայր՝ ուխտի։

Այս անգամ Համունին նշանակալից նայեց կրտսեր եղբորը և գլուխն օրորեց։

— Ոչ, մարդ, դու ճշմարիտ չես խոսում,— ասաց նա դիտավորյալ մեղմ և կարծես անտարբեր։— Ես գիտեմ՝ դու գնում ես Արշակավան։ Եթե այդպես է՝ կարող ես գնալ. այնտեղ կյանքը դյուրին է, գիտեմ։

Շինականի և նրա կնոջ սառած, մաշված դեմքերին գոհունակություն երևաց։ Եվ մարդն ասաց ներողամտություն հայցող ձայնով.

— Այո, տեր, կուզեմ գնամ...

Համունու դեմքը մթնեց մեկեն։

— Կուզես գնա՛ս... Ստամբա՛կ,— պոռաց նա անսպասելի և մտրակը բարձրացրեց։— Վերադարձիր անմիջապես քո շենը, սինլքո՛ր։

Շինականը բեռը գցեց գետին և ծունկի եկավ, իսկ նրա կինը վախից բռնեց տղայի ձեռը և շալակի կապոցով նստեց կանաչների վրա։

— Ներիր, տեր, գթա և մի դարձուր... Երկու օր ճանապարհ ենք կտրել...

Մինչ այդ մոտեցան թիկնապահները և ձիերը կանգնեցրին հետաքրքրված։

— Փախչում է Արշակավան և ասում է, թե գնում է Վարդիկ-Հայր՝ ուխտի...

Համունին այս խոսքերն ասում էր կարծես նրա համար, որ թիկնապահները նույնպես իմանան, թե ինչ մարդ է շինականը։ Ու այդ ասելով՝ նա մտրակը իջեցրեց ծունկի եկած շինականի թիկունքին։— Ե՛լ և իսկույն դարձիր քո շենը, ապա ոչ, ինքս կտեսնեմ քո դատաստանը։

— Ներիր, ողորմիր, տեր,— խնդրեց շինականը առանց տեղից ելնելու։

— «Ողորմի՛ր»,— հեգնեց իշխանը։— Դուք արժանի չեք

բնավ ողորմության, երբ փախչում եք այդպես... Ձեզ պետք է պատժել ոչ միայն մտրակով, այլ մահով անխնա։

— Տեր իմ,— ճչաց հանկարծ շինականի կինը և, շալակի կապոցը թողնելով, չոքեչոք սողաց դեպի իշխանը։— Գթա՛։

— Ձայնդ, անառակ,— և իշխանը մտրակը օդի մեջ շրրխկացնելով, դարձավ թիկնապահներից երկուսին։— Սեթ, և դու՝ Հաբեթ, այս ապիրատին ու իր կնոջը,— նա մտրակը մեկնեց դեպի ամուսինները, —տարեք և հանձնեք իշխան Կամսարականին, նաև ասացեք, որ կալանել եմ ես.. Տարե՛ք, երբ չի կամենում վերադառնալ ինքը։

Այս լսելով՝ շինականը վեր թռավ տեղից։

— Ներիր, տեր, կերթամ ինքս,— և նա ետ գնալու քայլ արավ ինքնաբեր։

Բայց իշխանը չլսեց նրան և կրկին հրամայեց, որ թիկնապահները կատարեն իր կարգադրությունը, և նրանք, կապոցներն ամուսինների շալակը տալով, տարան նրանց ետ՝ եկած ճանապարհով։ Կինը և փոքրիկ տղան, որոնց աչքերում մահու սարսափ կար, լալիս էին. իսկ մարդը, չկարողանալով մի խոսք ասել, տնքում էր զուսպ և գդակով սրբում ճակատի, երեսի քրտինքը։

Երբ մի քանի քայլ հեռացան նրանք՝ Դավիթ իշխանը, նորից «սինլրորներ» բացականչելով՝ հայհոյեց և աղմուկով թքեց նրանց հետևից, որից հետո եղբայրները շարունակեցին ճանապարհը մյուս երկու թիկնապահի ուղեկցությամբ։ Ջնայած բարկացած՝ նրանք այնուամենայնիվ գոհ էին, որ առաջին իսկ օրը հաջողվեց ի կատար ածել խորհրդաժողովի պատվերը՝ հսկել, որ ծառաները չփախչեն։

— Հուսամ, որ Նար իշխանը դժգոհ չի մնա մեզնից,— խոսեց Համունի կրտսերը առժամ լռությունից հետո, երբ նորից մտել էին անտառը և բռնել նույն արահետը, որին այժմ հովանավորում էին բարձր, թանձրատերև ծառեր։

Երիտասարդ Համունին խոսում էր մի եղանակով, որ ասես նպատակ ուներ հուզված եղբորը հանգստացնելու։

Բայց ավագ Համունին դեռ տարբացած էր։ Ավելին. նա բորբոքված էր։

— Իշխանաժողովում այնքան խոսեցինք փախուստների մասին, որ ես այժմ թիկնապահներիս անգամ չեմ հավա-

տում,— ասաց նա մոայլած։— Կտանե՞ն արդյոք Կամսարուկանի ապարանքը, թե իրենք ևս կփախչեն դոցա հետ միասին։

— Իրավացի ես, իշխան եղբայր,— նորից հանգստացնող եղանակով խոսեց Դանիել իշխանը։— Սուտը և խարդավանքը բույն է դրել ամենքի մեջ. վստահել դժվարին է իրոք։ Երբ արքան ինքը իրավունք է տալիս ծառաներին՝ դառնալ տիրադրուժ, չի մնում այլևս ոչ մի հավատ։ Սակայն քո կասկածը, եղբայր իմ, իզուր է մեր թիկնապահների մասին։ Նոքա, վստահ եմ, չեն փախչի։ Չէ՞ որ նոցա վիճակը բարվոք է։

Ավագ Համունին միառժամ լուռ էր. հետո շարունակեց ավելի դառնացած.

— Արքա՜ն... նորից մի բորբոքիր ինձ։ Արքա, որ գողանում է իր նախարարների ծառաներին...— Նա տնքաց։— Արքա՜, որ ոչ միայն անափառ է, այլև անբարո... Վա՜յ մեզ, եթե մի փրկություն չլինի, եթե մի մահ տարաժամ չտանի դորան...

Այս խոսքի հետ ավագ Համունին խթանեց նժույգը, որը մեկեն ոստնելով առաջ ընկավ. կրտսերը հետևեց եղբորը, իսկ երկու թիկնապահը մնացին փոքր-ինչ ետ։

Ու այդպես գնացին նրանք երկար՝ իրարից հեռու և անխոս։ Անտառը շարունակվում էր և հետզհետե խտանում. ծառերը պատնեշում էին ճանապարհի երկու կողմը։ Արևը գնալով թեքվում էր դեպի մայրամուտ, և անտառը լցվում էր մի տեսակ կիսամութով, որ ասես բարձրանում էր գետնից, ու այդ իրիկնամութի մեջ արահետը թվում էր ավելի նեղ, իսկ երբեմն չէր էլ երևում կանաչների մեջ. ձիերը միայն բնազդով գտնում էին այն և գնում անսխալ, չփոխելով իրենց ընթացքը։ Վերևից ինչ-որ թռչուններ էին անցնում խմբերով, որ թվում էր գնում են գիշերելու, իսկ ագռավների մի խումբ երբեմնակի կռինչով շտապում էր առաջ, երևի նույնպես ապաստանելու վերահաս գիշերից վախեցած։ Բայց անտառը հանդարտ էր և անշարժ։ Տեղ-տեղ միայն տերևները խաղում էին անձայն, ասես ծածուկ մի հրճվանքով։

Ավագ Համունին բավական տեղ գնալով մենակ՝ նժույգը կանգնեցրեց հանկարծ և գլուխը թեք նայեց՝ մի դիրքով, երբ մարդ կամենում է լավ լսել մի բան կամ լսածը ստուգել։

— Ի՞նչ է,— հարցրեց կրտսերը մոտենալով։

— Դու շարժում չլսեցի՞ր,— հարցրեց ավագը զգույշ, ձայնը իջեցնելով գրեթե շշուկի։

Դանիելը գլուխը տարուբերեց միայն։

— Ունկն դիր հապա, —գլուխը նորից թեքեց ավագը։— Ինձ թվաց, թե մեկը հազաց մոտիկ։

Եվ եղբայրները անշարժացան ձիերի վրա՝ համակ լսողություն դարձած։

— Այո, ինչ-որ խշրտյուն կարծյոք... և մոտիկ,— շշնջաց կրտսերը քիչ հետո, վիզն ավելի ձգելով։

— Ի՞նչ կարող է լինել,— և ավագն ավելի լարվեց՝ ականջներն պարզելու, թե ի՞նչ շարժում է դա։ Բայց ըստ երևույթին պարզել չկարողանալով՝ մատով կանչեց թիկնապահներից մեկին, և երբ նա մոտեցավ, կարգադրեց կիսաձայն.

— Գնա, Մեսրոպ, այս ուղղությամբ և տես ի՞նչ կա անտառում. մա՞րդ է, ո՞րս, ու վերադարձիր արագ։

Եվ որովհետև ծառերը խիտ էին և դյուրին չէր գնալ հեծյալ, թիկնապահը ձիուց իջնելով իրեն նետեց ճախակողմը տարածվող անտառը՝ կատվային զգույշ ու ճկուն շարժումներով։ Համունի եղբայրները, նրանց հետ և մյուս թիկնապահը, որ բռնել էր ընկերոջ ձիու սանձը, մնացին լարված կանգնած։ Միառժամ լսվում էր հեռացող թիկնապահի ոտնաձայնը, այսինքն՝ գետին ընկած չոր ոստերի կոտրվելու ձայն. հետո ամեն ինչ լռեց, անգամ տերևները դադարեցրին ասես իրենց սոսավյունը... Բայց ահա կրկին կոտրվող ոստերի ձայն ու... փոքր անց երևաց թիկնապահը։

— Ի՞նչ էր,— անհամբեր առաջ թեքվեց ավագ Համունին։

— Մի խումբ մարդիկ՝ շինականներ իրենց կանանց հետ։

— Եվ ի՞նչ են անում այնտեղ։

— Նստած են փոքրիկ բացում։

— Ուղևորնե՞ր են, ի՞նչ։

— Հասու չեղա, տեր։ Նայեցի հեռվից և դարձա։

Համունի ավագը մտածեց մի վայրկյան, ապա հետաքրքրքրվեց.

— Հեռո՞ւ են...

— Ոչ, տեր, հազիվ մի երկու հարյուր կանգուն։

— Պետք է տեսնել։ Գնա՛նք։

Եվ Դավիթ իշխանը ձին քշեց առաջ, իսկ կրտսերը, երևի

Հեշտ քայլելու համար, հապճեպ իջավ ձիուց, սանձը տվեց մյուս թիկնապահին, որ պահում էր ընկերոջ ձին, և հետևեց եղբորը, ու երկուսը միասին առաջ գնացին թիկնապահ Մեսրոպի առաջնորդությամբ։ Ճանապարհը, ճշմարիտ է, հաճելի չէր—ծառերի կախված ճղները դիպչում էին նրանց երեսին, գլխին, բռնում էին հագուստներից, մանավանդ ձիավոր Դավիթ իշխանի, բայց հետաքրքրությունն ավելի մեծ էր՝ տեսնել ի՞նչ մարդիկ են այդտեղ նստածները... Եվ իրոք. մի երկու հարյուր քայլ գնալով՝ Համունի եղբայրներն իրենց թիկնապահի հետ միասին նկատեցին ծառերի տակ, կանաչների վրա նստոտած շինականների նմանող մարդիկ, կանայք՝ ինչ-որ կապոցներով ու թեթև բեռներով։ Նկատեցին նաև ութ-ինը տարեկան մի տղա, որ խոտի ցողունը բերանը դրած, փորձում էր սուլել։ Նաև երեխան գրկած մի կին և ճերմակամորուս մի ծերունի։ Դրանցից մի քանիսը, երևի ոտնաձայն լսելով, վեր էին կացել և նայում էին եկողների ուղղությամբ. ակներև էր, որ նրանք հետաքրքրված էին, անգամ լարված... Բայց լուռ էին և ունեին սպասողական տեսք։

Մոտենալով՝ ավագ Համունին նախ ձին կանգնեցրեց մի վայրկյան ու զննաբար նայեց նրանց, ապա առաջացավ և հետաքրքրվեց.

— Ո՞վ եք։

— Շինականներ...

— Եվ ո՞ւր եք գնում։

— Մենք, տեր, գնում ենք Վարդիկ-Հայր՝ ուխտի,— բոլորի փոխարեն պատասխանեց կանաչներին նստած ճերմակմորուս ծերունին՝ ոտքի կանգնելով ու գլխարկը վերցնելով, ինչպես կարգն էր իշխանի հետ խոսելիս։

«Դարձյալ ուխտի»,— մտածեց Համունին, և դա կասկածի մեջ գցեց նրան. թվաց պայմանավորված խոսք։

— Իսկ ո՞վ է ձեր տերը։ Ո՞ւմ ծառաներն եք,— հետաքրքրվեց նա։

Հարցումները մի վայրկյան կարծես վարանքի մեջ դրին հավաքվածներին, թվում էր մտածում են՝ հայտնե՞ն, թե ոչ...

Այդպես զդաց Դավիթ իշխանը և ասաց անհամբեր.

— Լռո՞ւմ եք... Հասկանալի է։ Եթե չեք հայտնում ձեր

տիրոջ անունը, ուրեմն փախստական եք։ Այո՞,— շարունակեց նա դյուրագրգիռ և, այլևս պատասխանի չսպասելով, մտրակը բարձրացրեց։— Հասկանալի է. դուք փախչում եք Արշակավան։

— Ո՛չ, տեր, մենք գնում ենք ուխտի,— ասաց նորից ծերունին։

Իսկ մի տարիքով կին, սովոր լինելով իշխան մարդկանց հետ խոսել կանգնած, նույնպես վեր կացավ և չգիտես վախից, թե շփոթված վրա բերավ.

— Այդպես է, տեր. միայն թե...

Նրա փեշերը ձգեցին կողքի կանայք և տղամարդկանցից մեկը, և նա լռեց շփոթված... Համունի իշխանը նկատեց այդ և գլուխն օրորեց.

— Դուք ճշմարիտ չեք խոսում։ Դուք գնում եք Արշակավան,— ասաց նա կտրուկ։— Դժգո՞հ եք ձեր տիրոջից։

Նրան ոչ ոք չպատասխանեց, բայց այս անգամ բոլորը ոտի կանգնեցին՝ կանայք մոտեցան իրենց մարդկանց, իսկ մի դեռատի աղջիկ փարվեց քիչ առաջ խոսող պառավին և նայեց մեկուսի կանգնած մի երիտասարդի, որը հոնքերի տակից, շուրթերը սեղմած նայում էր ձիավոր իշխանին։

— Կարծում եք այդ Արշակավանում դուք կլինեք ազա՞տ։ Խաբվում եք,— շարունակեց Համունին ոտներն անհանգիստ դոփող ձիու վրա։ —Թագավորը ծանր աշխատանքով տանջելու է ձեզ չարաչար։

Մարդիկ դարձյալ չպատասխանեցին. ոմանց աչքերում վախ կար և տարակույս։ Այդպես էին մանավանդ կանայք և ութ տարեկան տղան։ Իսկ մեկուսի կանգնած երիտասարդը, որ հոնքերի տակից նայում էր իրենց հանդիմանող իշխանին, հանկարծ առաջ եկավ շառագունած։

— Մենք քո ծառաները չենք, իշխան,— ասաց նա մի տնսակ դուսպ, հեքը պահած։— Ի՞նչ ես կամենում մեզնից...

— Այո, մենք քո ծառաները չենք,— կրկնեց ծերունին մեղմաբար, կամենալով կարծես հանգստացնել և հեռացնել բարկացած իշխանին։

Բայց, հանգստանալու փոխարեն, Համունին մտրակը բարձրացրեց։

— Լռի՛ր, պառավ շուն։ Ես գիտեմ ո՛վ եք դուք։ Կամ-

սարական իշխանի ծառաներն եք և անշուշտ նրան կողոպտել ու փախչում եք ձեզ փրկելու։ Վերադարձեք, սինլքորներ, և անմիջապես,— հրամայեց նա ու, թիկնապահին դառնալով, կարգադրեց.— ժողովիր սորանց և տար։

Թիկնապահը, որ ձեռքին միայն նիզակ ուներ, մոտեցավ խմբված կանանց ու տղամարդկանց և պահանջեց, որ կապոցները վերցնեն և շարժվեն։ Բայց ոչ ոք չշարժվեց։ Այդ ժամանակ թիկնապահը մոտեցավ ծերունուն և նրա մոտ կանգնած խեթ նայող երիտասարդին, որպեսզի նրանք շարժվեն և մյուսներին օրինակ տան։ Ու իր խոսքի հետ թիկնապահը ձգեց երիտասարդի թևը։

— Հեռու,— գոռաց երիտասարդը թիկնապահին հրելով։

Այդ տեսնելով՝ Համունին մոայլվեց ավելի։ Նա սովոր էր, որ իր խոսքը լսեն և հնազանդեն անխոս, և ահա մեկը համարձակվում է... և նա անմիջապես ձին շրջեց դեպի երիտասարդը ու մտրակը բարձրացրեց։

— Սինլքո՛ր...

Երբ իշխանի մտրակը շաչելով զարկեց երիտասարդի ուսին ու մեջքին, կանայք, որ չորսն էին, ճչացին մեկեն, իսկ տղամարդիկ քնազդաբա՞ր, թե օգնելու համար գնացին դեպի երիտասարդը։ Բայց մինչ նրանք կմոտենային կամ կանեին մի բան՝ դաղված երիտասարդը, որ ցլապինդ տղա էր խոշոր, թուխ աչքերով, մի ոստյունով բռնեց իշխանի մտրակը և ատամները սեղմած քաշեց դեպ իրեն։

Դա ավելի գայրացրեց Համունի իշխանին. նա թափով ձգեց մտրակը՝ նրա ծայրը երիտասարդի ձեռքից ազատելու, բայց տեսնելով նա չի թողնում, գոռաց.

— Թո՛ղ, ապիրա՛ծ, և դարձի՛ր անմիջապես։ Նույնպես և դուք,— հրամայեց նա մյուսներին։

— Շարժվեցե՛ք,— արձագանքի պես կրկնեցին կրտսեր Համունին և թիկնապահը։

Բայց ոչ ոք չլսեց նրանց, որովհետև նայողներ էին լինում, իսկ տղամարդիկ դառնում էին երիտասարդի շուրջը. չդիտես նրա՞ համար, որ չհակառակի իշխանին ու քաց թողնի մտրակը. թե՞ նրա համար, ոչ ոք չի հեռը։ Այնինչ ավագ Համունին սաստիկ գայրացել էր արդեն երիտասարդի հանդգնությունից։ Համոզվելով, որ նա չի թողնում մտրակը՝

իշխանը ձին քշեց երիտասարդի վրա, կամենալով ասես կենդանու ոտներով տրորել նրան, բայց տղան, ոչ ոք չիմացավ ինչպես, մի ակնթարթում ուժգնապես ձգեց-խլեց իշխանի մտրակը և զարկեց այն ձիու գլխին։ Ու նժույգը դրանից այնպես ծառս եղավ ետին ոտքերի վրա, որ քիչ մնաց տապալեր տիրոջը։ Եվ Համունին անշուշտ կտապալվեր գետին, եթե իսկույն չգրկեր ձիու պարանոցը։ Բայց երբ կենդանին շտկվեց, նա, վտանգն անցած համարելով, գոռաց կոկորդի ամբողջ ուժով.

— Կալանե՛լ ստամբակին և կապել։

Թիկնապահը, նրա հետ և Համունի կրտսերը, որ գունատվել էր եղբոր ընկնելու երկյուղից, միասին թափով, գրեթե վրեժխնդիր ցասումով նետվեցին դեպի երիտասարդը՝ չգիտես նրան իսկապես կալանելո՞ւ, թե մտրակը նրա ձեռից առնելու համար։ Բայց երիտասարդը, որ ստացած հարվածից նույնպես գրգռված էր, մտրակով արգելեց նրանց իրեն մոտենալ։

— Հեռո՛ւ։ Չմոտենա՛լ։ Կզարկե՛մ,— կրկնում էր նա և մտրակը շաչյունով տարուբերում առջևը։

— Թո՛ղ, Թորգոմ, թո՛ղ,— ճչում էր խմբի մեջ եղած պառավ կինը. իսկ մի ուրիշ դեռատի կին թե աղջիկ և երկու տղամարդ նույնպես թե՛ խոսքով, թե՛ ձեռքով խնդրում էին, որ զգույշ լինի, որ մտրակով չխփի իշխան մարդկանց։

Բայց հուզված մարդիկ կարո՞ղ են զգույշ լինել։ Այդպես էլ Թորգոմ երիտասարդը. ինքնապաշտպանության համար տարուբերվող մտրակը դիպավ Համունի կրտսերի ձեռքերին... և դա բավական եղավ. սկսվեց այնուհետև մի տարօրինակ իրարանցում, գրոհ. Համունի եղբայրները իրենց թիկնապահի հետ միասին, երիտասարդին շրջապատելով, կամենում էին ձերբակալել նրան, բայց տղան պաշտպանվում էր շարունակ մտրակը փոքրիկ բացատում տարուբերելով իր առջևն ու իր շուրջը։ Իսկ նրա հարազատներից թե բարեկամներից մեկ-երկուսը ետ էին քաշում նիզակավոր թիկնապահին, չհամարձակվելով մոտենալ իշխաններին, որոնց մեկն արդեն ձիավոր էր՝ մոտենալ անկարելի էր։ Ու միաժամ նրանք դառնում էին այդպես՝ ամենք զայրալից խոսքերով, ոմանք վախեցած, աղաչական բացականչերով. բայց քիչ հետո, երբ

Թիկնապահը ետ դառնալով հրեց թե խփեց իր թևքը քաշող ծերունուն, և սա ընկավ գետին— այդ ժամանակ կատարվեց անսպասելի բան. ծերունու մոտիկները՝ վայ կանչեցին և մի երկուսը, գետնից չոր ճղափայտեր վերցնելով, հարձակվեցին Թիկնապահին խփելու...

Այդ տեսնելով՝ Համունի Դավիթը նժույգով ծառացավ փայտավորվածների առաջ։ Բայց դա չզսպեց նրանց. ընդհակառակը, կռիվը տաքացավ ավելի։ Թիկնապահը, մի կողմից՝ ստացած հարվածներից գայրացած, մյուս կողմից՝ տերերից խրախուսված, գուցեև ինքնապաշտպանության բնազդից մղված, սկսեց նիզակի կոթով խփել աջ ու ձախ՝ թե՛ մարդկանց, թե՛ կանանց։ Սրանք պատասխանում էին նույնպես փայտերով և ոչ պակաս գայրացած, և Թիկնապահը պարզապես նեղվում էր... Բայց իշխան տերերը դարձյալ խրախուսում էին նրան՝ առանց մոտենալու. «Զա՛րկ, զա՛րկ»... Սակայն երբ Թիկնապահը նեղն ընկավ և իշխան Համունուն էլ չթողին իր նժույգով առաջ գնալու՝ նրան օգնելու համար, իշխանը մեկեն սուրը հանեց պատյանից և առաջ խոյացավ.

— Սինլքորնե՛ր շնաբերան...

Սուրը տեսնելով՝ կանայք ետ քաշվեցին և վախվորած խմբվեցին իրենց կապոցների մոտ, դրանց հետ և ինը տարեկան տղան, բայց մյուսները, որոնց ոգևորում էր Թորգոմ անունով երիտասարդը, պատրաստվեցին փայտերով պաշտպանվելու և այնժամ ահա, երբ իշխանը սուրը ճոճելով գնաց դեպի նրանց, Թորգոմը ձեռի երկար ձողը բռնեց սրի դեմ, ապա, նկատելով իշխանը կամենում է հարվածել, նշան բռնեց նրա մերկ սուրը՝ խփելու և գցելու, բայց... ձողը, շեղելով սրի հարվածը, թափով իջավ ավագ Համունու գլխին ու... նախ ընկավ իշխանի մորթե գդակը, ապա և սուրը, իսկ ինքը իշխանը հանկարծ շրջվեց ու կախվեց ձիուց...

Սա եղավ այնքան արագ և անսպասելի, որ բոլորը ցնցվեցին ու մնացին սառած։ Դա ըստ երևույթին անսպասելի էր և ձիու համար. հեծվորի անկումն զգալով՝ նա վիզը թեքեց, ասես ընկնողին նայելու, և փախավ ծառերի միջով... Այդ տեսնելով Թիկնապահը նույնպես վազեց. նրան հետևեց և մյուս իշխանը։

Շինական տղամարդիկ, այս տեսնելով, կանգ առան շնչաշ զուսպ, իսկ Թորգոմն ուզեց վազել կարծես, բայց պառավը ձայն տվեց ահաբեկ.

— Թո՛ղ, Թորգոմ, արյունի տեր մի՛ լինի...

Թորգոմը կանգ առավ, և երբ նա ետ եկավ, խմբի մյուս անդամները՝ տղամարդիկ, կանայք խուճապով հավաքեցին ինչ ունեին և կապոցները շալակած, երեխան գրկած պատրաստվեցին հեռանալու, վախենալով, թե ընկած, գուցեև ուշակորույս իշխանը կելնի հիմա և կգա վրեժխնդիր լինելու... Մինչ մեծերն զբաղված էին այդ հոգսով, ինը տարեկան փոքրիկ տղան վազեց վերցրեց իշխանի ընկած թուրը կանաչների միջից.

— Թող, Հուսիկ, պետք չէ նզովված բանը,— պոռաց մայրը վախեցած։

Տղան սակայն չթողեց։

— Չէ՞ կգան նորից կվերցնեն մեզ զարկելու,— ասաց։

— Բե՛ր, բեր, տղա, հարկավոր կլինի,— ասաց Թորգոմը տակավին հուզված ձայնով, և փոքրիկ տղան, դրանից խրախուսված, քարշ տվեց մերկ թուրը նրա դաստակից բռնած։

Երբ վերջապես շարժվեցին բացատից, նրանք քայլեցին արագ, հևալով, շտապելուց առաջ կռացած. ու առժամ մեկը չէր արտասանում մի բառ։ Բավական տեղ գնալուց հետո, վերջապես, երիտասարդ Թորգոմն ասաց.

— Պետք էր ամենքին սատակել, որ լուր չտանեն և հետապնդում չուղարկեն։

— Պետք չէ, զավակս,— հևաց ծերունին։— Պետք չէ։ Ամենը իմ պատճառով եղավ։ Պետք չէ՛...— Նա լռեց մի փոքր և տպա ասաց խզված.— Որ եղավ այդպես, հեռանանք շուտ, այլապես կգան և ամենքիս կսատակեն անիրավները...

Ու բոլորը ահաբեկ արագացրին քայլերը։

Գնում էին անտառի խիտ ծառերի միջով, իրար հետևից և անխոս. հուզված էին, և այնքան, որ չէին նկատում, թե Հուսիկը մնացել է բոլորի վերջում և հանդիստ քարշ է տալիս մերկ սուրը, որը մերթ խրվում էր կանաչների մեջ, մերթ շողում արծաթ փայլով...

Վախը մեծ զգացում է. նա երբեմն անդամալույծ է անում մարդուն, բայց հաճախ մղում է հնարագիտության ու խիզախության։

Այսպես կատարվեց և անտառի մարդկանց հետ։ Սկզբում, տեսնելով իշխաններին՝ զինված թիկնապահներով, նրանք ընդարմացան վախից, սակայն զգալով իսկույն իրենց կյանքին սպառնացող վտանգը, այն, որ եկողները կամենում են կալանել իրենց և ետ ուղարկել, ոգի առան, և երբ ընկավ հարձակվողներից մեկը, իսկ մյուսները փախան, խումբն շտապեց հեռանալ բացատից այնպիսի արագությամբ, որ անսպասելի էր հոգնած մարդկանցից։

Օրը մթնում էր, անտառը խոժոռում էր և մռայլվում. բարձրացած քամին տարուբերում էր ծառերը, նրանց ճղները զարկվում էին իրար ու խշշում մերթ մեղմ՝ սարսուռով, մերթ բարձր՝ տագնապահար, անտառը լցնելով բազմաձայն ժխորով։

Եվ այժմ փախստական մարդկանց այդ խումբը հետզհետե խորանում էր անտառում, ձգտելով, որքան կարելի է հեռանալ այնտեղից, ուր երևացին իշխաններն իրենց թիկնապահներով։ Ու որքան առաջ էին գնում՝ անտառն ավելի էր խտանում ու մթնում քայլելը դառնում էր դժվարին։ Մի կողմից՝ խանգարում էին բեռները, կապոցները, որ դեմ էին առնում ծառերին, ճղներին, մյուս կողմից՝ թփերը, մացառներն էին կտրում ճանապարհը։

Իշխանին զարկող երիտասարդը, որին Թորգոմ էին ասում, ծերունուն տանում էր թևանցուկ արած և շուտ-շուտ ետ էր նայում տեսնելու, թե խմբի մարդիկ բոլո՞րը գալիս են, ետ մնացող չկա՞։ Երբեմն էլ դառնում-խրախուսում էր մորը և նրա հետ եկող աղջկան, որ ծերունու դուստրն էր։

— Արի՛, մարե... Զգո՛ւյշ, Մինա, այստեղ փշոտ թփեր կան։

Անտառում չէր երևում ոչ մի արահետ և ոչ մի կածան, դա կարծես մարդու երես չտեսած անկոխ անտառ էր, և փախչողներին թվում էր, թե առաջին ոտքն իրենք են դնում, ու երբ չոր ճղները երբեմն ճարճատյունով կոտրվում էին

ոտքերի տակ, նրանք ահից կանգ էին առնում, չիմանալով ինչ անել. առա՞ջ գնալ, թե սպասել... Եվ մի պահ կանգ առնելուց հետո նորից էին շարունակում իրենց երթը։

Բայց քանի մթնում էր, քայլելն այնքան դառնում էր ծանր. ծառերն առջևում երևում էին պատի պես. չէր նկատվում ոչ լույս, ոչ հորիզոն. երբեմն միայն ծառերից վեր երևում էր կապույտ, մթնակապույտ երկնքի մի շերտ և խսկույն չքանում։ Բայց պետք էր գնալ, և գնում էին... Գնում էին, չիմանալով ո՞ւր են գնում, ինչի կհանդիպեն և ո՞ւր դուրս կգան. արդյոք նորից ետ չէի՞ն դառնա նույն բացատը, որտեղից ճանապարհ ընկան կամ չե՞ն հանդիպի այն մարդկանց, որ փախան-գնացին գուցե հետապնդողներ բերելու... Ինչ էլ լիներ սակայն՝ ավելի լավ էր քայլել, քան կանգնել։ Ու քայլում էին ճիգով, քրտնամխած, երբ մեկը կամ մյուսը պատահաբար սայթաքում էր ընկնում, իսկույն վեր էր կենում արագ ու նորից շարունակում անհայտ, անորոշ ուղին։ Եվ առջևից գնացողները հաճախ կանչում էին զգույշ.

— Եկե՛ք... Այսպես եկեք...

Հետևից գնացողները պատասխանում էին.

— Գալիս ենք...

Իսկ պառավը մորմոքում էր շարունակ ինքն իրեն, երբեմն և լսելի ձայնով։

— Թորգո՜մս... Ջո՛ւր մեղապարտ դարձավ... Եթե մեր հարևանն ու իր կինը ետ չմնային՝ մենք իշխան մարդոց չէինք հանդիպի ու կռիվ չէր լինի... Բայց տեսնես ի՞նչ եղան, ո՞ւր մնացին ողորմելիք...

—Այո, այո,— հաստատում էր նրա կողքին քայլող աղջիկը։— Երբ ետ մնացին, հայրս, իմ պապն ասաց. «Ետ մնալը վատ է, կուշանաք, փորձանքի կհանդիպեք»։ Այդպես էլ եղավ, մարե։

— Բայց ի՞նչ եղան անբախտները,— շարունակեց պառավը փոքր հետո։— Մոլորեցի՞ն, մեզ կորցրի՞ն, ուրիշ մի ճանապարհո՞վ գնացին, թե նորից իշխանների հանդիպան ու նրանց ձեռքն ընկան...

— Հիմա մտածելով ի՞նչ կարող ենք անել, մարե,— ասաց աղջիկը։— Նրանց գտնել կարո՞ղ ենք։

Մյուսները չէին խոսում։ Փոքր երեխա ունեցող կինը ջա-

նում էր, որ ծծկերը ձայն չհանի, ու քայլում էր ստինքը նրան տված, մարդու հետևից, որը գնում էր թուրը քարշ տվող տղայի ձեռքը բռնած։ Մյուս ջահել կինը և մարդը քայլում էին սրանց հետքով և ոչ մի բառ չէին արտաբերում... Ներունին էր միայն, որ ժամանակ առ ժամանակ ասում էր կիսաձայն, ասես ինքն իրեն.

— Վատ եղավ, որ հանդիպեցինք անիրավներին... Այո։ Բայց լավ եղավ, որ ընկավ և ձին փախցրեց... Հիմա կհետևվե՞ն մեզ. կհասնե՞ն...

— Եթե արագ քայլե՛նք, չեն հասնի։ Երբե՛ք... անտառը խիտ է. ձիերը հեծվորներով այս անտառում չեն շարժվի,— պատասխանում էր ծերունուն՝ նրա թևը բռնած Թորգոմը։

Ու նրանց զրույցին, իբրև արձագանք կարծես, պառավն ասում էր շուտ-շուտ.

— Աճապարե՛նք... աճապարե՛նք...

Բոլորն էլ զգում էին, որ կատարվածը լավ բան չէր, ուստի պետք էր զգույշ լինել և որ միայն հեռանալը կփրկի իրենց, ու քայլում էին, որքան կարող էին արագ. քայլում էին արդեն ոմանք իրար թև ու փեշ բռնած. մի կենդանի շղթա կազմած, որովհետև այնպես էր մթնել, որ իրար չէին տեսնում. գնում էին կույրերի նման։ Թեպետև քայլելը թվում էր դիրկությունն, կանգնելը՝ մահ, բայց մի երկու տեղ այնուամենայնիվ կանգ առան ակամա՝ շունչ առնելու, բեռները շտկելու և լսելու, թե հետապնդում չկա՞ արդյոք։

Մութի մեջ ոչինչ չէր երևում, շուրջը ծառերի սնապանգված շարժուն պատերն էին. սկսվել էր գարնան մի զով քամի, որ թեթևակի օրորում էր ծառերը՝ տերևների մերթ մեղմ, մերթ ծավալուն շրշյունով. բայց փախչողները, չնայած տաքացած ու քրտնած, քամու զովությունը համարյա չէին զգում։

Քամու հնչից բացի, անտառում լսվում էին ինչ-որ մրնչյուն, թռչնային մի ճիչ կամ թեթև թևաբախում, ու նորից ամեն ինչ լռում էր և միայն ծառերի շրշյունն էր լեցնում միջոցն ու գիշերը։ Ոչ մի ոտնաձայն. մարդկային ոչ մի կանչ, ոչ մի վրնջյուն։ Բայց դա չէր հանգստացնում նրանց. հետապնդողը մի՞թե ձայն կհանի։ Ոչ. նա կմոտենա գաղտա-

գողի, անձայն, աննկատ, որ ապահով հասնի իր նպատակին։

— Կարո՞ղ է պատահել, որ շրջապատեն անտառը,— ասաց կանանցից մեկը շշուկով, որպեսզի չարթնացնի գրկին քնած մանկանը, և մի ձայնով, որի մեջ ոչ այնքան հարցում կար, որքան վախ։

— Դա հնար չէ,— պատասխանեց ըստ երևույթին նրա ամուսինը նույնպես շշուկով, բայց ակներև կնոջ վախը փարատելու համար։— Թագավորի զորքն էլ չի կարող անտառը շրջապատել։

— Բայց այդ իշխանները, ո՞վ գիտի, ինչքա՞ն հեռու են ապրում,— վերջապես խոսեց մյուս տղամարդը։— Մինչև գնա՞ն, մինչև մարդիկ բերե՞ն... Մութը նրանց էլ չի թողնի շարժվել... իսկ մինչև նրանց գալը՝ մենք կլինենք հեռու։

Երևում էր, որ բոլորի զգայարաններն այնքան էին սրված, որ ամենամեղմ շշունջն անգամ լսում էին և արձագանքում։

— Բայց չէ՞ որ գիտեն ո՛ւր ենք գնում. ճանապարհը կբռնեն,— շշնջաց նորից երեխան գրկած կինը ի պատասխան։

— Այդ չի լինի. նրանք մեզնից շուտ չեն հասնի,— լսվեց Թորդոմի ձայնը։

— Աստված հասնի մեզ,— բարեմաղթեց ծերունին։

Կանայք հառաչեցին։

Ու նորից գնում էին անխոս, երբեմն միայն նայելով երկրնքին, ուր այժմ ծառերի միջով մեկ-մեկ երևում էին մանր ու մեծ աստղեր, որ ցոլում էին հեռու՝ հանգարտ թարթող աչքերի նման։ Գիշերվա մթնում միակ բանը այդ աստղերն էին, որ կարծես ինչ-որ հույս էին ներշնչում նրանց։

Մութը գնալով թանձրանում էր, դրա հետ խորանում էր և լռությունը, որը երբեմն խախտվում էր ինչ-որ անսպասելի մի բանով։ Մի տեղ նրանք լսեցին ճյուղեր կոտրվելու ձայն ու կանգ առան սառած։ Ականջ դրեց յուրաքանչյուրն իր տեղում անշարժացած։

— Անասուն էր,— ասաց ծերունին։— Գնանք։

Ոմանք չհավատացին, բայց կասկած հայտնելու ժամանակ չէր։ Ու քայլեցին իծաշարուկ, թանձրացող մութի մեջ։

Այսպես անցան բավական տեղ, երբ Մինան շշնջաց հանկարծ.

— Մարե, մեռելը կարո՞ղ է զարթնել։

Այս խոսքերից պառավը սարսուռ զգաց, բայց ասաց.

— Չէ, աղջիկս, չէ։ Մեռելը բնավ չի զարթնի։ Բնա՛վ... Իսկ հարցնում ես ինչո՞ւ։

— Ինձի կթվա, մարե, զարկված իշխանը զարթել-գալիս է մեր հետևից։

— Չէ, աղջիկս, մեռելը չի զարթնի,— կրկնեց պառավը, թեև շշուկով, բայց հաստատ շեշտով։

— Բայց նա մեռա՞վ, մարե։

— Մեռա՛վ, մեռա՛վ, աղջիկս։ Դրա մասին մի՛ մտածիր։ Գնանք։ Լուսը կբացվի շուտով ու... ամեն ինչ կանցնի։

Մինան ավելի պինդ գրկեց պառավի թևը, և նրանք ճիգ տրին քայլել ավելի արագ՝ առջևից գնացողներից ետ չմնալու համար։ Պառավը թեև սիրտ տվեց Մինային, բայց աղջկա վախն անցավ իրեն. ի՞նչ իմանաս, գուցեև իրոք այդ իշխանը չմեռավ, այլ մնաց ուշագնաց և հիմա զարթնած հետևում է իրենց։

— Էհ, գնանք, աղջիկս, էլ ետ մի նայի,— ասաց նա։— Ձո հայրն ու Թորգոմը գնում են առաջ։ Հասնենք...

Ու ժամեր քայլեցին այսպես։ Նրանց աչքերը ցավում էին, ձեռքերը ծանրացել էին, բայց ոչ ոք, թվում էր, չէր մտածում դադարելու մասին։ Միայն փոքրիկ ութ տարեկան տղան էր՝ Հուսիկը, որ չդիմացավ. միառժամ քայլեց արծաթագույն թուրը քարշ տալով, հետո կախվեց հոր փեշերից. «Ես քնել եմ ուզում, պապո»... Եվ երբ հայրը, այդ խոսքերը մի քանի անգամ կրկնվելուց հետո, շալակեց նրան, Հուսիկը խընդրեց.

— Սուրս չկորցնես, պապո...

Հայրը խոստացավ, և նա քնեց։

Այնուհետև Հուսիկի հայրը, որի անունը Վարդան էր, քայլում էր բեռների տակ կռացած, տղան շալակին, նրա սուրը գավազան շինած։ Նա ճիգ էր թափում ետ չմնալ առջևից գնացող Թորգոմից ու նրա բարեկամ ծերունուց։

Մյուսներն անում էին նույնը. ետ չմնալ և աչքից չկորցնել առջևից գնացողներին։

Որքան գնացին՝ անհայտ է. մի տեղ հանկարծ ծերունին կանգ առավ և ասաց ուրախ.

— Լույսը շուտով կբացվի։

— Ինչի՞ց իմացար, հայրիկ,— հարցրեց Թորգոմը։

— Ծառերն արթնացան, թռչունները ձայն տվին...

Եվ իրոք, շատ չանցած մութը կարծես պարզվեց մի փոքր։ Ինչպես պղտոր ջուրն է սկսում պարզվել և ծառերը, որ առաջ երևում էին միաձույլ զանգվածի պես, սկսեցին զատվել. երևացին բներ, ճյուղեր. իսկ վերևում աստղերը գունատվում էին, և երկինքը դառնում էր բաց մոխրագույն։ Լսվեցին մեծ թռչունների հատուկենտ կանչ ու կռինչ և փոքրերի ծլվլոց։ Մի փոքր էլ... և առավոտը բացվեց արագ, ինչպես այդ լինում է գարնանը։

Լույսն ուրախացրեց ճամփորդներին. մոռացնել տալով գիշերվա տագնապը։ Ուրախացան, որ կարող են ազատ քայլել և տեսնել, թե ինչ տեղով են գնում։ Չէին մոռանում իհարկե իրենց վիճակը, բայց լուսաբացը նոր եռանդ տվեց նրանց հոգնած ոտներին։ Իսկ քիչ հետո, երբ դուրս եկան մի փոքրիկ բացատ, իրար նայեցին վշտախառն զարմանքով, բոլորի հագուստները պատառոտվել էին և ծվեններով կախվել՝ ճրդներին, թփերին ընկնելուց. նրանց ձեռքերը, երեսները կանաչել էին, աղտոտվել... Տեսնելով բացատի դուրեկան կանաչը՝ յուրաքանչյուրը կարոտով կուզեր ընկնել այդ խոտերի վրա և քնե՛լ, քնե՛լ... գոնե մի փոքր հանգիստ առնել։ Բայց վախը նորից մտրակում էր նրանց։ Կանայք, որ ավելի էին հոգնած, անգամ նրանք շտապում էին շուտ հեռանալ այդ բաց տեղից, որ չնկատվեն։ Եվ առհասարակ մի տիրական միտք մղում էր նրանց գնալ, հեռանալ, դուրս գալ վտանգի սահմաններից... Բայց թե ո՞րն էր վտանգի սահմանը՝ պարզ չէր տակավին. գուցեև անցել էին՝ չգիտեին։ Չգիտեին և այն՝ դեպ Արշակավա՞ն են գնում, թե շեղվել են նրա ուղղությունից։ Նույնիսկ չէին կարող որոշել՝ առա՞ջ են գնում, թե ետ—անտառն այնքան մեծ էր և անծանոթ։ Այդ էր պատճառը, որ բացատն անցնելուց հետո Թորգոմն առաջարկեց.

— Դուք հանգիստ առեք, ես նայեմ՝ որտե՞ղ ենք։

— Վա՛յ, Թորգոմս, հեռու չգնաս,— անհանգստացավ պառավը։

— Հեռու չէ. ծառը բարձրանամ՝ պարզեմ։

— Ջուր մի բարձրանա,— ասաց ծերունին,— հիմա արևը կելնի՝ կպարզենք։ Արշակի քաղաքը պիտի լինի արևելքում։

Ծերունու խոսքը հանգստացրեց բոլորին։ Շուտով հասնելով թավուտ մի տեղ, նստեցին, արևի ելքին սպասելու։ Եվ այդ ժամանակ ահա, երբ Վարդանը զգուշությամբ շալակից իջեցնում էր որդուն, Հուսիկը զարթնեց և նրա առաջին քնաթաթախ խոսքն եղավ. «Սուրս ո՞ւր է, պապո»։ «Այստեղ է»,— ասաց հայրը և, նրան հանգստացնելու համար, ցույց տվեց մերկ սուրը։ Երեխան նայեց դրան մի ակնթարթ և աչքերը փակեց նորից։ Տղամարդիկ տեղավորվեցին ուղղակի գետնին, չնայած խոնավ էր և թաց, կանայք՝ հագուստների կապոցների վրա, իսկ Թորգոմն ու Մինան՝ փոթորկից տապալված մի ծառի բնի։

Անտառում լռություն էր դարձյալ. գիշերվա քամին ընկել էր. ծառերը կանգնած էին անշարժ՝ կատարները վեր պարզած. թռչուններն անձայն թևածում էին նրանց գագաթներից վեր, և բոլորը, ծառ ու թռչուն, կարծես սպասում էին արևին... Որքա՞ն սպասեցին՝ դժվար է ասել, բայց ծերունին, որ նստած տեղից երբեմն նայում էր վեր, հանկարծ բացականչեց կիսով շափ ելնելով.

— Արևը,— ու ձեռքը պարզեց երկինք, ցույց տալով ծառերի կատարները, ապա գոհությամբ խաչակնքեց երեսը։

Բոլորը, նրա խոսքի վրա, մեկեն վեր թռան տեղներից և նայեցին վեր, նրա ցույց տված ուղղությամբ. ծառերի կանաչ կատարներն իրոք փայլում էին արևի առաջին ճառագայթներից. տերևները ցնծում, ժպտում էին կենդանի արարածների պես։

— Թե որքան ենք շեղվել՝ ասել չեմ կարող, բայց հիմա լիքի գնանք դեպի արևը,— ասաց ծերունին, մեջքի գոտին սկսելով ու մաշված ողորկ ցուպը վերցնելով։— Գնանք. հետո կասեմ որտե՛ղ ենք, ինչպե՛ս պիտի գնանք։ Հիշում եմ՝ անտառը վերջանում է քարոտ սարի մոտ։ Սա դեռ Կամսարական իշխանի անտառն է։ Երիտասարդ ժամանակս մի անգամ ինձ բերին այստեղ փայտ կտրելու։ Քարոտ սարը բարձրանանք՝ փրկված ենք։

— Բայց ո՞ւր է սարը,— հարցրեց մեկը։

— Հիմա տեսնենք,— պատասխանեց ծերունին։

— Ուրեմն սարից հետո կլինի՞ թագավորի քաղաքը,— հետաքրքրվեց Թորգոմի մայրը առանձին մի հույսով։

— Էլ դենը գնացած չեմ,— ասաց ծերունին— Բայց գնանք...

Երբ շարժվեցին ճանապարհը շարունակելու, ամենքը հիմա ավելի հոգնած էին զգում, քան գիշերը քայլելիս, յուրաքանչյուրն զգում էր, որ իր մարմնի բոլոր անդամները նվում են, տնքում. բայց այն հանգամանքը, որ չէին շնչվել և ճանապարհը գտան համարյա, կարծես մոռացնել տվեց հոգնածությունը։

Բայց երբ օրը պայծառացավ և արևը երևաց իր ամբողջ փայլով, նրանք մոռացան նաև երկյուղը և մի երկու տեղ, ընկած ծառերի հանդիպելով, նստեցին հանգստանալու. միայն Թորգոմի մայրն էր, որ շտապեցնում էր դարձյալ.

— Ելեք, ելեք։ Նստելու ժամանակ չէ։

Եվ քայլեցին նորից, քայլեցին դեպի այն սարը, որ փրկություն էր բերելու իրենց։

Միայն կեսօրին, առջևից գնացող Թորգոմը ծառերի միջից նկատեց մի սարագագաթ և հարցրեց ծերունուն.

— Սա՞ է, հայրիկ, ասածդ սարը,— մատնացույց արավ նա երևացող գագաթը։

Ծերուկը ձեռը դրեց ճակատին և նայեց ուշադիր։

— Դա՛է, դա է,— խաչակնքեց նա երեսը։— Դա է։ Բարձրանանք՝ փրկված ենք։

Շտապեցին ուրախացած։ Սարը մերթ երևում էր ծառերի արանքից, որպես փրկության հույս և գրավիչ հանգրվան, մերթ՝ ծածկվում էր, աներևութանում, ինչպես խաբուսիկ տեսիլ։

— Անտառը վերջանում է...

Իրոք, նրանք մոտենում էին անտառի եզրին։ Թորգոմը, որ դնում էր առջևից, բոլորից շուտ հասավ նրա պռնկին։ Բայց հասնելուն պես մնաց արձանացած. հանկարծ լսեց ձիերի ոտնատրոփ և, քիչ հետո, այն բաց տեղով (որն անտառը բաժանում էր սարից) անցան տասի չափ ձիավորներ...

Թորգոմը գունատված ետ նայեց և, ձեռը բերանին տանելով, նշան արավ յուրայիններին, որ կանգ առնեն և ձայն չհանեն։

Իշխանաժողովի երրորդ օրը Կամսարականի ապարանքում խաղաղություն էր, եթե նկատի չառնենք ջրերի հեռվից եկող անլռելի շառաչը, ինչ բնակիչներին թվում էր անդորրության օրոր, և բակի ծառաստանի երբեմնակի սոսավը, որ առաջանում էր ասես ջրերի հոսքից։

Պայծառ կեսօր էր։ Իշխան Կամսարականը, իր սովորության համեմատ, միայն կապայով և գլխաբաց, զբոսնում էր տան առջևը տարածվող ծառաստանի իր սիրած, աչքից հեռու անկյունում, ուր ծառերն ավելի խիտ էին և սաղարթավետ։ Դատելով դեմքից ու քայլվածքից՝ նա թվում էր գոհունակ տրամադրության մեջ. չնայած միաժողովից անցել էր երկու օր, իսկ հյուրերի մեկնումից՝ մեկ օր, այնուամենայնիվ Նար իշխանը գտնվում էր տակավին բարեկամների հայտնած մտքերի տպավորության տակ։ Գոհ էր, որ հրավիրել էր նրանց և սթափեցրել. ցավում էր, որ Մերուժանը չեկավ։ Բայց Կամսարականին ուրախացնում էր նախարար հյուրերի այն որոշումը, թե կհսկեն և չեն թողնի, որ իրենց ծառաները գնան թագավորի կոչին՝ փախչեն նոր շինվող քաղաքը... և դրա անմիջական արդյունքն ու ապացույցը նրան թվում էր այն, որ իր քեռայրը՝ Համունի Դավիթ իշխանը և նրա եղբայր Դանիելը փախուստի ճանապարհից ետ էին դարձրել իր ծառաներից երկուսին՝ շինական ամուսիններին իրենց փոքրիկ տղայի հետ միասին։

Եվ ահա, ծառերի ստվերում քայլելով, Նար իշխանը զայրույթով մտածում էր դրանց պատժելու մասին։ Սակայն նրան նորից զարմացնում էր այն, որ Անգեղ տան հանգուցյալ նահապետի որդին անսպասելի դիրք ընդունեց և հայտնեց այնքան վտանգավոր մտքեր... Բայց իշխանը վստահ էր, որ նա այսուհետև վտանգ չի ներկայացնի։ Ի միջի այլոց, նա սպասում էր, որ թիկնապահները հիմա ուրախ լուր կբերեն, թե իշխանիկն արդեն դարձել է անվտանգ... Եվ ինքն, այս ուրախ լուրն առնելուց հետո, կճանապարհվի Համունու մոտ, կհանգստացնի նրան, որ քեռայրն ավելորդ մտահոգություն և երկյուղ չունենա։ Մտածում էր նաև, տեղ հասնելուն պես, շնորհակալություն հայտնել քեռայրին՝ փախստականներին

ետ ուղարկելու համար... Այժմ այդ իշխանիկի մասին չարժեր իսկ խորհել... Ու դրա փոխարեն իշխանը մեծ գոհունակությամբ մտածում էր, որ Վասպուրականի տեր Մերուժանը, Հայոց Աշխարհի ամենահզոր նախարարը, համախոհություն է հայտնում իրենց, և ուրեմն Արշակ Թագավորը չէր հասնի իր նպատակին։ Մյուս կողմից Կամսարականը դարձյալ խորհում էր ավելի այն մասին, թե ինչպիսի՞ պատիժ տա փախուստի ճանապարհից բերված իր շինականներին. կարգադրի նրանց գանահարե՞լ այստեղ, իր աչքի առջև, ապարանքի բակո՞ւմ, թե այն շենում, որտեղից փախել են...

Եվ նրան թվում էր, թե վերջին միջոցը կլինի առավել օգտակար. դա կլինի ի խրատ այլոց... Սակայն ինչո՞ւ միայն իրենց շենում,— մտածում էր,— թերևս ավելի լավ է, եթե տանեն դրանց շրջեն մի քանի շենում և ամեն տեղ գանահարեն ժողովրդյան առաջ։ Եվ դա երկյուղ կազդի ամենքին...

Իշխանն առանձնապես գոհ էր, որ այդ փախչողներին կպատժի իր մեկնելուց առաջ, և այդ պատիժը սարսափ կտարածի այնպես, որ ոչ ոք այլևս չի համարձակվի փախչելու փորձ իսկ անել...

«Այո, այդ պատիժը կլինի իրոք ի խրատ այլոց,— կրկնեց իշխանը ինքն իրեն, ձեռքը բռունցք շինելով։— Տալ պիտի այնպիսի պատիժ, որ ամենքը հավիտյան մոռանան փախուստի միտքը։ Ամե՛նքը»...

Այս խոհերի մեջ էր Նար իշխանը, երբ լսեց ծանոթ մի ձայն, որ հարցնում էր. «ո՞ւր է տեր իշխանը»... Լսեց և այն, թե ինչպես սպասավորներից մեկն ասաց. «այնտեղ է»։ Իշխանը հասկացավ, որ ցույց են տալիս իր տեղը։

Ու փոքր անց նրա առջև հայտնվեց մեկն իր այն երկու թիկնապահներից, որ գնացել էր Անգեղաց իշխանիկին ճանապարհելու։

— Վերադարձա՞ք,— հարցրեց իշխանը կանգ առնելով, երբ նա տակավին քսան քայլ հեռու էր։

— Այո, տեր, բայց...— և թիկնապահը լռեց։

Նրա ձայնը վարանոտ էր և ընկճված. իշխանին թվաց նույնիսկ, թե նա խոսում է մեղավորի ձայնով։ Այդ նկատելով՝ Կամսարականը հոնքերը խոժոռեց և աչքերը հառեց նրա երեսը։

Երիտասարդը, խոսքը շարունակելու փոխարեն, գլուխը կախեց։

— Խոսիր։ Ինչո՞ւ այլագունած ես, և ինչո՞ւ մենակ։

— Տեր իմ,— տղայի ձայնը բեկվեց և շուրթերը դողացին։— Ես իշխանիկին ուղևորեցի մինչև իր կալվածի սահմանը, իսկ Մաղաքեն, որ, կանխավ արված պայմանի համաձայն, թաքնվել էր անտառում, մի նետ արձակեց իշխանիկի վրա, բայց...

— Բա՞յց,— իշխանը այս անգամ հայացքը բևեռեց երիտասարդի աչքերի մեջ։

— Բայց նրա նետը վրիպեց...

— Վրիպե՞ց... Չէ՞ր կարող երկրորդը։

— Ոչ, տեր իմ. քանզի իշխանիկը իսկույն նկատեց նրան ծառերի մեջ ու հարձակվեց թիկնապահներով... Ես փութացի օգնության։ Բայց... նոքա շատվոր էին, հինգ հոգի, մենք՝ երկուս... Իշխանիկը զարկեց Մաղաքեին...

Տղան նորից լռեց գլուխը կախելով։

— Խոսի՛ր։ Այնուհետև...

— Այնուհետև, տեր, Մաղաքեն վիրավորվեց, ընկավ... Նրա երիվարը փախավ... Նոքա հետապնդեցին ինձ...

Իշխանի դեմքը մռայլվեց։

— Լռի՛ր, ապիկար։ Դուք արժանի չեք իմ թիկնապահը լինելու։ Հեռացի՛ր։

Եվ Կամսարականը մեծ բարկությամբ թքեց նրա հետևից ու սկսեց գնալ-գալ ձեռքերը տրորելով, ապա գլուխն օրորելով նստեց, ոչ թե նստեց, այլ կարծես ընկավ ծառերի տակ դրված կոճղին, որ նստարանի տեղ էր ծառայում նրան։ Իշխանիկը ազատվե՞լ է և հեռացել անվնաս... Առավել վատ եղավ... Առաջ գուցեև լռեր, իշխանաժողովի զրույցը պահեր իր մեջ. իսկ ա՞յժմ... այժմ բնավ չի լռի։ Նա կերթա անշուշտ և ամենը կհայտնի թագավորի՛ն, ամենքի՛ն... աշխարհին, որ Կամսարականի ապարանքում եղավ իշխանաժողով և... Այո, նա ազատվեց։ Ի՞նչ դժբախտություն...

Կամսարականը երբեք չէր սպասում, թե իր հմուտ համարված թիկնապահները անճարակ գտնվեին այսպես։ Ի՞նչ պետք էր անել այժմ վտանգը կանխելու համար... Պետք է, քանի շուտ է, խորհել անհրաժեշտը։

— Այո, քանի շուտ է,— կրկնեց նա տեղից ելնելով և տարտամ քայլերով գնաց դեպի ապարանքը, որպեսզի իր առանձնարանում խորհի անելիքը... Թերևս լավ կլիներ ծպտյալ մեկին ուղարկեր Անգեղաց դղյակը,— մտածում էր նա այնքան խորասուզված, որ շուրջը ոչինչ չէր տեսնում։

Սակայն հաղիվ մոտեցել էր ապարանքի մուտքին, պարբսպի դարպասից սրընթաց ներս մտավ մի հեծվոր և, նժույգը զսպելով, թռավ ցած, ապա, դեռ իշխանին չմոտեցած, պոռաց հևասպառ.

— Դժբախտություն՛ն, տեր Կամսարական։

Իշխանը կանգ առավ, մտածելով, որ դա նույնպես պիտի հայտնի նույն չար գույժը, և սպասողական նայեց եկողին։ Բայց եկողն անմիջապես չկարողացավ խոսել. շփոթությունից նա, պատշաճի հակառակ, մոտեցավ մտրակը ձեռին և, խոնարհում անելով, մնաց կարկամած։

Կամսարականը ճանաչեց իր քեռայր Դավիթ Համունու թիկնապահին և զարմացած նեղսրտեց նրա լռությունից։

— Խոսիր, վերջապես,— բարկացավ նա հոնքերն իրար բերելով։— Ի՞նչ դժբախտություն։

— Իմ տիրոջը սպանեցին, իշխան,— հևաց երիտասարդը։

— Քո տիրո՞ջը, Դավիթ իշխանի՞ն... Ինչպե՞ս, ե՞րբ...

— Առաջին օրը, տեր, այստեղից մեկնելիս։

— Այստեղից մեկնելի՞ս. ճանապարհի՞ն... և որտե՞ղ, ո՞վ սպանեց։

Իշխանի ձայնի մեջ որոտի նախանշաններ էին զգացվում։ Իսկ գուժկան սուրհանդակը, չգիտես ինչու, հապաղում էր, բայց վերջապես իրեն հավաքեց և ասաց քաշվելով.

— Քո շինականները, տեր։

— Ի՞մ... Իմ շինականնե՞րը,— և Կամսարականի դեմքի մկանները խաղացին։

— Այո, տեր։ Խմբով փախչում էին նոր քաղաքը, Դավիթ իշխանը հրամայեց ետ դառնալ...

Եվ գուժկանն արագ, կցկտուր, տակավին հևալով պատմեց դեպքը մի բեկված ձայնով ու տեսքով, որից զգացվում էր, թե նա իրոք ականատես է եղել դեպքին, պատմեց կարևոր-անկարևոր մանրուքներ իրար խառնած։

Այս պատումը լսելիս Նար իշխանի կուրծքը նեղվում էր

կարծես. նա հևում էր և նրա խոշոր աչքերը ուռչում էին՝ ասես ակնակապիճներից դուրս գալու, իսկ ձեռքերն ակամա բռունցք էին դառնում. թվում էր՝ նա զսպում է իրեն, որ չապտակի դիմացինին... Բայց երբ բոթաբերն ավարտեց իր պատմությունը, նա հևաց նորից.

— Ստահակները հարձակվեցին, և դուք չկարողացա՞ք պաշտպանել, օգնել նորան։

— Ոչ, տեր, պաշտպանել անկարելի էր. նրանք շատվոր էին՝ տասը հոգու չափ, իսկ մենք՝ երկուս։

Իշխանը ներքին շուրթը դրեց ատամի տակ և սևեռուն նայեց գետնին։ Նրա մտքով կասկածներ էին անցնում, թե իր վերակացուները երևի ճիշտ չեն հաղորդում փախչողների թիվը, վախենալով, որ ինքը կպատժի իրենց. բայց ահավասիկ մի օրվա մեջ քանի՞սն են փախել...

— Սակայն ստո՞ւյգ է, որ դոքա եղել են իմ շինականները,— քիչ հետո հարցրեց նա, գլուխը մեկեն բարձրացնելով։

— Իրենք հայտնեցին, տեր։

— Եվ ի՞նչ եղան. ո՞ւր գնացին։

— Փախան երևի Արշակավան։ Նրանք կապոցներով էին և երեխաներով։

Կամսարականը, գլուխը կախ, լռեց մի պահ, ապա երկու քայլ անելով գոռաց մեկեն.

— Նժույգս... Սինլքորնե՞ր... Թո՛ղ պատրաստվեն թիկնապահները և զենք առնեն։

Հրամայեց, խոշոր աչքերը ոլորեց մի քանի անգամ և, այլևս ոչ ոքի չնայելով, սկսեց ինքն իրեն խոսելով շրջել տան առաջ։

— Անիծյա՛լ Արշակունի... այլասերեց ժողովրդյան և դարձրեց տիրաննենգ ու տիրասպան։ Մոլի խառնակիչ, մայրդասպա՛ն և ոչ թագավոր...

Նրա ճակատի և պարանոցի երակները լարվել էին և լցվել արյունով. աչքերը, թվում էր դարձյալ, ուզում էին դուրս թռչել ակնակապիճներից։ Միևնույն օրը, միևնույն ժամին երկու բոթ... այսպիսի բան երբեք չէր պատահել նրան... Եվ Կամսարականն ինքն իր մեջ խոսելով քայլում էր ետ ու առաջ, մինչև որ, նրա արտակարգ հրամանը լսելով, հավաքվեցին տնեցիները՝ տիկինը, որդիները, եղբայրները, սպասավորնե-

ը... Ոչ ոք չէր համարձակվում հարցնել, թե ի՞նչ է պատահել. սպասում էին, որ հայտնի ինքը։ Բայց քանի որ նա լռում էր, Կամսարականաց տիկինը համբերություն չունեցավ.

— Նոր ի՞նչ է պատահել, իշխան։

Կամսարականը չպատասխանեց. նա փնչացնում էր և գլուխը տարուբերում շարունակ։

— Նորից փախչողնե՞ր,— հետաքրքրվեց լեցուն իշխանուհին։— Դա նորություն չէ և ոչ մեծ աղետ։ Թող փախչեն ևս մի քանի հոգի... արժե՞ խոսել դրա համար...

— Միայն փախչող չէ, իշխանուհի,— կանգ առավ վերջապես Կամսարականը։— Թագավորը, թագավորը գայթակղեց ժողովրդյան այնպես, որ ստրուկներն այժմ սուր են բարձրացնում տերերի վրա. ահա՛ պատահածը...

— Ի՞նչ սուր, իշխան,— գունատվեց Կամսարականաց տիկինը։

Եվ երբ ամուսինը հայտնեց Դավիթ իշխանի սպանությունը և այն, թե այդ սպանությունը կատարել են իրենց փախստական շինականները, տիկինը ձեռքերը խփեց ծունկներին։

— Բաբելական կրա՛կը նոցա գլխին։ Ամո՛թ Արշակ թագավորին...

Ամուսիններին հարցուպատասխանից բակում խմբված սեպուհներն ու սպասավորները իմացան արդեն ինչ է կատարվել, իսկ նրանք, որ գնացին իշխանի հրամանը կատարելու, փոքր անց բերին նրա սև, փայլուն մազերով նժույգը, որի ոտների ծայրերը, սմբակներից վերև, ճերմակ էր։ Ըստ սովորության նրա մեջքին գցել էին կարմիր թաղիքե սթար, վրան՝ փղոսկրով և արծաթով ընդելուզած թամբը, իսկ ցցունքը զարդարել էին ուլունքներով։

— Վերցրեք այդ ամենը,— հրամայեց նա ձիու գեղեցիկ զարդերը մատնանշելով։— Հարսանիք չեմ գնում...

Երբ նրա հրամանը կատարվեց, իշխանը սպասավորների և թիկնապահների օգնությամբ հեծավ նժույգը ու այն ժամանակ, երբ ձին, իր սովորության համեմատ, մի պտույտ կատարեց բակում, իշխանուհին ցանկություն հայտնեց.

— Ինձ ևս տար, իշխան։

— Դու կգաս հետո,— ասաց Նարը մռայլ և, դառնալով եղբայրներին, որդիներին ու սպասավորներին, հրամայեց.

— Հսկողություն սահմանեք շեներում և ճանապարհների վրա. յուրաքանչյուր շենում գանահարեցեք մեկ-երկու մարդ, որ չհամարձակվեն փախչել, իսկ փախուստի ճանապարհից բերածներին գանահարել իրենց շենում։

Վերջին խոսքերը նա ուղղեց իր կառավարչին, ապա ձիու գլուխը շրջեց և արագ դուրս եկավ պարսպադռնից։ Նրան հետևեցին թիկնապահները՝ տասը-տասներկու հոգի և որդիներից երկուսը, բոլորը գոտեպինդ ու սպառազեն։ Նրան միացավ և նոր եկած գուժկանը, ու մի երկու վայրկյան ձիերի ոտնատրոփը պարսպի ներսն ու դուրսը խլացրին ամեն ինչ։

Կամուրջն անցնելուց հետո իշխանը գնում էր առաջ ընկած և մի տեսակ ներհայաց. «Ի՞նչ է Արշակի նպատակը»,— խորհում էր նա թագավորի մասին և գտնում, որ եթե նա՝ թագավորը, դեմ լիներ միայն իրեն՝ ինքը կարող էր դա բացատրել բերդերի մերժումով... Սակայն թագավորի հրովարտակը վերաբերում է բոլոր նախարարների մարդկանց, նա գայթակղում է բոլորի ծառաներին... Եվ Կամսարականը զարմանում էր, որ շատ նախարարներ լռում են ու չեն դրժգոհում։ Մի՞թե նրանց ծառաները չեն փախչում. թե՞ նախարարները վախենում են խոսել այդ մասին։

«Սակայն վախով ապրելն ամոթ է նախարարի համար,— ասաց իշխանը մտքում։— Կամսարականները հար եղել են ինքնիշխան և երբեք չեն ստորացել թագավորների առաջ... Ջեն խոնարհի և Արշակի առաջ... Երբե՞ք»։

Այս խոսքերի հետ նա մտրակեց նժույգը։ Սա թափ առավ և սուրաց առաջ՝ դեպ անտառ։ Իսկ երբ մտան անտառ, իշխանը ձին դանդաղեցրեց, որպեսզի ետ մնացած որդիներն ու թիկնապահները հասնեն իրեն։ Մոտենալով՝ դրանք այնուամենայնիվ որոշ հեռավորության վրա պահեցին իրենց և հետևեցին նրան անխոս, պատկառանքով նայելով տիրոջ թիկունքին։ Իշխանը գնում էր գարձյալ մռայլ մտածումներով։ Նրան թվում էր, թե իր քեռայրի սպանությունն այնքան լուրջ բան է, որ նորից պետք է հրավիրել իշխանաժողով՝ ազգու և խիստ միջոցներ խորհելու համար... Իսկ սպանությունը պարզապես թվում էր նրան ըստ ամենայնի չարագուշակ։ Ծառա-

ները փախչում են՝ տերերին սպանելով։ Վաղը, մյուս օրը դրանք կարող են սպանել և՛ իրեն, և՛ մյուսներին...

Այս ամենի հետ միաժամանակ նար իշխանը մտածում էր, որ քեռայրի հարազատները այդ սպանության համար կարող են մեղադրել և՛ իրեն՝ նրա՛ համար, թե ինչու Դավիթ իշխանին հրավիրեց իշխանաժողովի, և նրա՛ համար, որ նրան սպանողները եղել են իր շինականները, ինչպես հայտնեց թիկնապահը... Կմեղադրեն անշուշտ և ուրիշները՝ առանց պատճառներն ըմբռնելու։ Բայց եթե պատճառները հասկանան, հասու կլինեն նաև, որ մեղավորը ոչ ինքն է և ոչ իր ծառաները, այլ Արշակ թագավորը՝ իր հրովարտակով...

Մտածում էր իշխանը և ժամանակ առ ժամանակ նայում շուրջը՝ անտառի ծառերի խորքը, տեսնելու նոր փախչողներ չե՞ն երևում արդյոք... Ու նրան թվում էր, որ դրանք կարող են լինել մի տասը, հարյուր քայլ դենը, գուցե ավելի հեռվում։ Թվում էր, որ եթե պատահեն՝ պիտի հարձակվի ստահակների վրա և... ընդհարման միջոցին նրանք կարող են սպանել նաև իրեն...

«Բայց այդ կարող են անել և հեռվից, դարանամուտ եղած»,— մտածեց իշխանը, և այս միտքն այնքան հավանական թվաց նրան, որ նա ձին կանգնեցրեց մեկեն և աչքով որոնեց քեռայրի բոթաբեր թիկնապահին։

Գտնելով նրան՝ մատով կանչեց։

— Որտե՞ղ կատարվեց եղեռնագործությունը,— հարցրեց նա, երբ երիտասարդը մոտեցավ ձիով։

— Փոքր այն կողմը, տեր,— բոթաբերը ձեռքը մեկնեց առաջ։

— Ցույց կտաս, երբ հասնենք։

— Հրամանքդ։

Ու նորից առաջ գնացին ձիերի նույն փափուկ ոտնատրոփով, նույն արահետը բռնած, որով անցել էր Դավիթ Համունին երկու օր առաջ։ Գնում էին իրար հետևից, ինչպես ուղտերի քարավանն է գնում շարք կազմած, որովհետև արահետը նեղ էր և երկու կողմը բարձրանում էին հաստաբուն ծառեր։ Որքան էլ փափուկ էր ձիերի քայլքը, այնուամենայնիվ դրա արձագանքը տարածվում էր անտառում՝ աջ և ձախ. թվում էր անտառի խորքերով նույնպես հեծվորներ են անցնում,

երբեմն այդ արձագանքներն այնպես էին խլացնում անտառային մյուս ձայները։

Թերևս այդ էր պատճառը, որ Կամսարականը կարծում էր, թե այսօր նույնպես փախչողներ կլինեն այստեղ. նրանք երևի բանուկ ճանապարհներից խուսափելով թաքնվում են թավուտներում։

Երբ այսպես գնացին բավական և հասան շավղի վրա կռացած մի կաղնի ծառի՝ Համունու թիկնապահը ձին զգուշությամբ մոտեցրեց իշխանին։

— Նրանք այստեղ էին, իշխան,— մատնանիշ արավ նա ճանապարհի աջ կողմը, ուր պատնեշի պես բարձրանում էին տերևախիտ թեղիներ։— Այստեղից լսեցինք նրանց ձայնը և իշխանն ինձ ուղարկեց ստուգելու... Եվ այդտեղ ահա զարկեցին իշխանին։ Կհաճե՞ք տեսնել...

Թեև Նար իշխանը ինքը ցանկություն հայտնեց իմանալ որտեղ է կատարվել սպանությունը, բայց այժմ լսելով երիտասարդի հարցումը՝ չասաց ոչինչ, ծնոտները սեղմեց ավելի և նժույգը շարժեց առաջ։ Մինչև այստեղ իշխանը չէր նկատել արևը, որ փայլում էր երկնքի բարձրից և անտառը, նրա ճառագայթներից ասես խանդավառ, խաղացնում էր իր բյուրավոր տերևները, իսկ թռչունները երգում էին անվերջ... Այդ ամենը իշխանը նկատեց այստեղ միայն և զարմանալի թվաց, թե մարդասպանության այդ վայրում ինչպես էին երգում թռչունները, և ծառերը ինչպես էին հրճվանքով խաղացնում իրենց տերևները...

Նա երեսը շրջեց և խթանեց նժույգը։

Մի երկու ժամից վերջապես դուրս եկան անտառից և դաշտ ընկնելով, արագացրին ձիերի ընթացքը։ Այժմ նրանց առջև ձգվում էր մի լայն ճանապարհ, որ տանում էր Համունիների դղյակը։ Երկու կողմը ալեծածան արոտներ էին և նորածիլ արտեր, և այդ ամենը ողողված էր արևի լույսով ու ջերմությամբ... այնինչ Կամսարականին թվում էր, թե այդտեղ՝ քեռայրի կալվածում, միայն սուգ պիտի լիներ և տխրություն։ Մի փոքր էլ՝ և ահա երևաց Համունիների կալվածատունը, որը, ինչպես կարգն է, շրջապատված էր բարձր պարիսպով։

Պարսպադռանը մոտենալիս Նար իշխանը մոայլվեց ավելի, մտածելով, որ կենդանի, աշխույժ ու կրքոտ Դավիթ Հա-

մունու փոխարեն տեսնելու է մի պառկած դիակ։ Եվ դա այնքան անհեթեթ էր թվում, որ նա չէր հավատում քեռայրի մահվան։ Այս բանում չհամոզեցին նրան անգամ պատերի մոտ խմբված տխուր շինականներն ու ռամիկները, որ հարգանքով, գլուխ իջեցնելով, ճանապարհ տվին նրան։ Բայց երբ պարսպադռնից մտավ բակը՝ նրա առաջ պարզվեց մի մոայլ տեսարան։ Նախարարական տան մուտքի առջև գորգով ծածկած բարձր պատվանդանին դրված էր Դավիթ իշխանի դին՝ վրան ճերմակ կտավ քաշած։ Դիակի գլխավերևը կանգնած էր հանգուցյալի կարմիր ձին՝ վրան սև ծածկոց։ Ձիու սանձը բռնել էր տիրոջ թիկնապահներից մեկը՝ նույնպես սևեր հագած։

Իսկ պատվանդանի շուրջբոլորը շարված էին բարեկամ ու հարևան իշխաններ, սեպուհներ՝ բոլորը գլխաբաց, բոլորը մերկացրած սրերով ու մոայլ դեմքերով։ Ամենքը ակներև զայրացած էին, որ մի ծառա, հասարակ մի շինական հանդգնել է ձեռք բարձրացնել Դավիթ իշխանի վրա... Գուցեև այդ չէին մտածում նրանք, բայց այդպես թվաց Նար իշխանին։ Նախարարների, սեպուհների շուրջը կանգնած էին նաև կանայք, աղջիկներ, երեխաներ... Ահագին մի բազմություն։ Իսկ ավելի առաջ՝ դիակին մոտիկ, նրա աջ ու ձախ կողմը, կանգնել էին երկու խումբ եղերամայրեր՝ մազները ուսերին ու կուրծքներին թափած, և լալիս էին բարձրաձայն ողբով, թվելով ու գովելով մեռած իշխանի բարեմասնությունները՝ երկար հասակը, մեծ խելքը, սև աչքերը և կտրիճ թուրը։ Լալիս էին, հետն էլ ծեծքում կուրծքները և ձեռքները բարձրացնում դեպի վեր՝ դեպ երկինք, չգիտես անիծում էին, թե գութ հայցում։ Երբ եղերամայրերի մի խումբն ավարտեց իր ողբը, կոծել սկսեց մյուս խումբը, դարձյալ թվելով իշխանի քաջարի գործերը, նժույգը և անվախությունը։

Նկատելով Նար իշխանի գալուստը՝ եղերամայրերը, նրանց հետ և մյուս կանայք, ձայները բարձրացրին, և ողբը դարձավ ընդհանուր...

Լացողներին միացավ և Կամսարականի քույրը, որ ոտից գլուխ սևի մեջ էր։ Երբ լացի ալիքը բարձրացավ և ապա, հետզհետե իջնելով հանդարտեց, հանդուցյալի կինը, Նար իշխանի քույր Վահանդուխտը սուգ արավ մենակ։ Լալով՝ նա

հիշեց ամուսնու սերը, քաջությունները և շատ այլ բաներ, ապա դարձավ հենց նոր ձիուց իջած, իր դեմը կանգնած եղբորը.

— Նար եղբայր, Նար եղբայր. իմ արևը խավարեցին քո շինականները... Իմ բազեին սպանեցին քո ծառաները... Իմ աստղը մարեցին քո մարդիկ... Ի՞նչ պատիժ պիտի տաս նոցա, Նար եղբայր, որ զովանա իմ այրվող սիրտը... Նար եղբայր, Նար եղբայր...

Եղերամայրերը ձայնակցեցին նրան, իսկ Նար իշխանը գլուխն իջեցրեց ակամա. նա լսում էր և մտածում, որ ինքը մեղավարտ է այս սպանության մեջ՝ այն չափով, որ եթե քեռայրին չհրավիրեր իր դղյակը, չէր պատահի այս դժբախտությունը... այնուհետև, առանց քրոջ հիշեցումի էլ, ինքը գիտեր արդեն, որ քեռայրին սպանել են իր փախստական շինականները. ու միայն մտածում էր, որ ճշտվեց ճանապարհի իր նախազգացումը, այն, որ իրեն պիտի մեղադրեն այդ սպանության համար։

«Քույրս իրավացի է, որ ամուսնուն սպանել են իմ շինականները՝ իմ իսկ անտառի մեջ, բայց փոխանակ մեղադրելու Արշակ թագավորին, մեղադրում է ինձ»,— խորհում էր Կամսարականը վշտացած, և գտնում էր դարձյալ, որ այդ սպանության մեջ հանցապարտ է միայն Արշակ թագավորը, որ իր հրովարտակով ծառաներին հանում է տերերի դեմ և դարձնում տիրասպան։

Այս ամենը նա մտածում էր միայն, բայց այդ պահին ոչինչ ասել չէր կարող հարկավ, ուստի և գլուխը կախ հևում էր աննկատելի, իսկ դեմքի մկանները խաղում էին տանջալից։

Երբ սուգ անողները հանգստացան մի փոքր՝ Կամսարականը հոնքերի տակից նայող աչքերով որոնեց քեռայրի եղբորը՝ երիտասարդ Դանիել իշխանին ու, տեսնելով նրան մխիթարանքի եկած հարևան նախարարներով շրջապատված, մոտեցավ և, նրա ձեռքը բռնելով, ասաց.

— Գնանք ներս, իշխան։

Երիտասարդը անձայն համաձայնեց, և նրանք գնացին ներս։

Երբ տեղավորվեցին գահավորակներով և մի նգույրով զարդարված փոքրիկ սենյակում, Նար իշխանը, առանց իր

թավ հոնքերը բարձրացնելու, հետաքրքրվեց վշտացած ու պահանջկոտ ձայնով.

— Ինչպե՞ս եղավ, իշխան։ Պատմի՛ր...

Երբ վշտահար Դանիել իշխանը, կարմրելով ու քաշվելով (որ չի կարողացել եղբորը փրկել) պատմեց դեպքը իր մանրամասներով, Կամսարականը գլուխն օրորեց։

— Եվ ինչո՞ւ, իշխան, ինքդ չվերցրիր ընկած սուրը և չկոտորեցիր ստահակներին... ինչպե՞ս թույլատու եղար, որ ծառաները հանդգնեն այդչափ։

Երիտասարդ իշխանը գլուխը կախեց թեթև հառաչով։ Իսկ Կամսարականը միառժամ լռեց մռայլ, ապա, գլուխը բարձրացնելով, գրեթե փնչացրեց.

— Այդ ամենը կատարված անցած է արդեն, այժմ ասա ինձ, իշխան, հետապնդում ուղարկե՞լ ես արդյոք։

— Այո, տեր Կամսարական։

— Եվ քանի՞ մարդ։

— Տասը հոգի, իշխան։

— Տասը հոգի՛,— վշտախառն հեգնանքը ծամածռեց նար իշխանի դեմքը։— Որքա՛ն անփորձ ես, Դանիել իշխան, որքա՛ն անփորձ։ Ուղարկիր անմիջապես քո բոլոր մարդոց, ուղարկիր հարյուր, երկու հարյուր հոգի։ Ես նույնպես կուղարկեմ իմ թիկնապահներին։ Թող բռնեն բոլոր ճանապարհները, թող հետախուզեն ամբողջ անտառը,— ասաց նա ձայնը բարձրացնելով և թափով ելավ գահավորակից։— Ա՛խ, եթե հնար լիներ կոտորել և գետին տապալել ողջ անտառը, ի՛մ անտառը՝ միայն թե գտանեին, կալանեին և ետ բերեին այդ ոճրարար ստահակներին։

Երբ իշխանը փնչացնելով ու տնքալով քայլեց բավական՝ մեկեն կանգ առավ և հետաքրքրվեց.

— Իսկ այդ հետապնդողները չե՞ն ուղարկել որևէ լուր։

— Ոչ, իշխան, տակավին ո՛չ մի լուր։

— Չի՞ պատահի արդյոք, որ նրանք ևս փախչեն հանցագործների հետ։

— Ոչ, իշխան, իմ հետախույզները վստահելի են ըստ ամենայնի։

— Վստահելի՛, վստահելի՛,— կրկնեց նա հեգնանքով։— Ցուրաքանչյուրը իր ձեռքով պետք է տեսնի իր դատաստանը,

և անմիջապես։— Նար իշխանը նորից քայլեց ձեռքերը մեջքին։ Քայլում էր վրդով և հետն էլ խոսում։— Եթե կալանեն և բերեն՝ պետք է մահախեղդ անել ամենքին, ամենքի՛ն... Ծառան սպանի իր տիրո՛ջ...

— Եվ այս ամենի պատճառը հայոց արքան է՝ Արշակ Թագավորը,— վերջապես պոռթկաց Կամսարականը։— Արքայի հրովարտակը, թե տերերից դժգոհ յուրաքանչյուր ծառա կարող է գալ և ապաստանել Արշակավան, և դրա համար դատաստան չի լինի... Ո՛չ, կլինի՛,— Կամսարականը թափով բարձրացրեց բռունցքը։— Կլինի՛, և եղեռնագործը մահախեղդ կարվի՝ ի պատիժ իրեն և ի խրատ այլոց...

Նա զայրացած, բայց անխոս քայլեց մի քանի վայրկյան և կանգ առավ նորից։

— Իսկ եթե չգտնեն և չբերեն նոցա,— ասաց նա հոնքերը սեղմելով,— դու, Դանիել սիրելի, գրիր այդ Ավանի շահապ Վարազին, որ սպանողին հանձնի քեզ։ Պահանջիր խրստագույն խոսքերով։ Եվ պահանջիր ձեր կալվածքներից փախած բոլոր ճորտերին ու ծառաներին։ Ամենքի՛ն։ Ինքս նույնպես գրությամբ մի խիստ պահանջելու եմ իմ փախած ծառաներիս։ Ամենքի՛ն...

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Եթե մարդկանց բոլոր սպառնալիքներն իրագործվեն՝ աշխարհում մարդ չի մնա հավանաբար։

Այն օրը, երբ իշխան Կամսարականը մեծ ցասումով կարգադրություն էր անում՝ «գտանել փախստականներին և բերել մահախեղդ անել», նրա կալվածներից հեռացած շինականները, անտառից արդեն դուրս եկած և մի խճոտ սար բարձրացած, տարօրինակ թափոր կազմած գնում էին դեպ արևելք, դեպի նոր քաղաքը։ Գնում էին հոգնած, գրեթե ուժասպառ։ Բայց չնայած դրան, չնայած քարոտ ու փոշոտ ճանապարհին, նրանք ներքուստ ուրախ էին և հանգիստ։ Անցել էին վտանգի սահմանագիծը։

Իսկ մինչ այդ ինչպիսի՞ ծանր ժամեր անցրին հետապընդող հեծյալներին տեսնելուց հետո... Նկատվելու երկյուղից ծվարեցին խիտ ծառերի արանքում, թփերի մեջ ու, համակ

լսողություն դարձած, ականջ դրին ձիերի ոտնատրոփին, որ մերթ լսվում էր մոտիկ, մերթ խլանում կամ կտրվում իսպառ։ «Զգույշ. երեխայի ձայն լսվի՝ կորած ենք»,— երբեմն միայն շշնջում էր պառավը ցամաք շուրթերով կամ այքովհոնքով հասկացնում Թորգոմին, որ առաջ չգնա... Երբ միառժամ ձիու ոտնաձայն, վրնջյուն չլսվեց՝ Թորգոմն զգուշությամբ գնաց դեպի անտառի եզրը, և մացառների մեջ պառկելով, նայեց աջ, ձախ։ Չէր երևում ոչ մարդ, ոչ ձի, ոչ որևէ շունչ-կենդանի։ Դիմացը միայն սարն էր՝ լերկ ու քարակառկառ, շուրջը՝ ամայություն ու լռություն։ Հավաստիանալու համար, որ իրոք չկա ոչ ոք, նա նույն դիրքով սպասեց մի փոքր էլ։ Դարձյալ ոչ մի ձայն։ Այնժամ նա ետ դարձավ զգույշ և շշնջաց.

— Ելեք գնանք, քանի չկան...

Ու վախից քարացած փախստականները ելան և հապշտապ, ինչպես փրկության դուռ գտած, արտորանքով քայլեցին առաջ։ Քայլեցին փրկվելու մտքով այնպես կլանված, որ չիմացան, թե ինչպես դուրս եկան անտառից ու ետ դրին սարի քարքարոտ լանջը։ Լեռը ուղղահայաց էր գրեթե, հեղեղներից հոշոտված և տեղ-տեղ խիճ-ավազով ծածկված։ Թերևս այդ էր պատճառը, որ մերկ էր ամբողջովին. քիչ տեղեր երևում էին միայն կանաչներ ու հին խոտեր. մնացածը խիճ էր, ուստի և ամեն քայլափոխի ահագին մանրաքար էր սահում ցած։

Ու քայլեցին այդպես նորից մի ժամ, երկու ժամ։ Քայլում էին և շուտ-շուտ ահով նայում ետ, տեսնելու հետապնդում չկա՞ արդյոք... Բարեբախտաբար չկար։ Բայց դարնանավերջի տաք արևը, արդեն բավական բարձրացած, այրում էր նրանց գլուխը, մեջքը, քրտինք վազեցնելով նրանց քունքերից ու ճակատներից...

Որքան տևեց ծանր վերելքը՝ նրանք չէին կարող ասել. բայց երբ վերջապես բարձրացան սարի կատարը ու նայեցին անցած ճանապարհին, նկատեցին դժվարությունը և նոր միայն շունչ քաշեցին թեթևացած, և առաջին զգացումը, որ ունեցան՝ փրկության զգացումն էր։ Որքա՜ն երկար ճանապարհ էին անցել... Նայեցին իրենց առջև տարածված անտառին, ուր գեգերել էին երկու օր ու գիշեր, այդ խիտ ու խոր անտառին, որ

փռված էր լեռների մեջ՝ լայն հովտում և, մի կողմով դնում-իջնում էր դեպի Արաքսը, մյուս կողմերով թեթևակի բարձրանում, իսկ տեղ-տեղ մագլցում էր նաև սարերը, և նրա միապաղաղ գարնան կանաչությունը նման էր ծիրուն կանաչ ծովի։

Երբ ամենքը այդ հայեցության մեջ նայում էին անծայր անտառին, ծերունու աղջիկը՝ Մինան, հանկարծ, ձայնը կոկորդում խեղդելով, ճչաց. «Հեծվորնե՞ր...» Բոլորը, մի մարդու պես, իրենց ահավոր հոգնածությունը մոռացած, վեր թռան տեղներից և մեծ զգուշությամբ, որ չնկատվեն, նայեցին ցած։ Եվ իրոք. նիզակավոր ձիավորների մի խումբ, թերևս մի քսան-քսանհինգ հոգի, ցրված անցնում էին անտառի եզերքով և ուշադիր նայում ծառերի խորքը։ Անմիջապես սարի տակ կանգնած էին հինգ հեծվոր, որ նույնպես սպասողական դիրք ունեին։ Թորգոմը ենթադրեց, որ դրանք բոլորը նոր հետախույզներ են, կամենում են քան երևույթին շրջապատել անտառը, որպեսզի կալանեն իրենց...։ Ու այս միտքը Թորգոմի մեջ արթնացրեց վայրույթի մի այնպիսի զգացմունք, որ նա քիչ մնաց վերից քար գլորեր և սատակեր նրանց, բայց ծերունին բռնեց նրա թևը.

— Իզո՛ւր, վտանգ մի՛ կանչիր մեր գլխին, տղա։ Քանի փրկվել ենք՝ գնանք հեռանանք։

Բայց Թորգոմը չլսեց. երիտասարդական տաք արյունը խրատներ չի ընդունում. իր բարկությանը գոհացում տալու համար նա այնուամենայնիվ մի քար գլորեց սարի տակ կանգնած հինգ ձիավորի կողմը, և շարժվեցին, չնայելով այլևս, թե ի՞նչ կանի քարը ներքևում...

Ու քանի ժամ էր արդեն քայլում էին։ Ծերունու ասելով՝ իրենք վաղուց դուրս էին եկել Կամսարականի կալվածներից և մտել էին արքունական հողը, ուստի և նա կարծում էր, թե Արշակի քաղաքը հեռու չպետք է լիներ։

Ճանապարհը ամայի էր, քարքարոտ և անհարթ, մերթ իջնում էր ցած, մերթ բարձրանում բլուրներ. շուրջը չկային ծառեր, թփեր, բայց գարունը ամեն տեղ կանաչներ ու ծաղիկներ էր փռել։ Իսկ մարդ, մարդաստան չէր երևում։ Բավական տեղ գնալով՝ հանդիպեցին վերջապես մի շինականի, որ դուրս եկավ մոտիկ բլուրի ետևից։ Սկզբում գրան ընդունեցին հե-

տախուլդի տեղ և զգուշացան բան ասել, բայց երբ շինականը բարևեց սրտաբաց, Թորգոմը հարցրեց.

— Շինական եղբայր, որտե՞ղ կլինի Թագավորի նոր քաղաքը։

Շինականը, մազախռիվ մեկը, երեսը դարձրեց ետ և մատը մեկնեց առաջ.

— Կերթաք ուղիղ, ապա կծռեք. կերևա մի նոր ճամփա։ Այդ ճամփան բռնած կերթա՛ք... Կերթաք՝ կերևա նոր մի բլուր... Բլուր Թեքվեք՝ կերևա նոր մի ճամփա, հետո քաղաքը...

Թորգոմը Թեպետև չկարողացավ պատկերացնել նրա ասածը, բայց առաջ ընկավ, և խումբը հետևեց նրան՝ ուրախ քայլերով։

Գնալով՝ պատահեցին սայլերի, որ գալիս էին քաղաքից կամ գնում էին քաղաք, և եկողները միշտ դատարկ էին լինում, գնացողները՝ բեռնված. տանում էին գերաններ, նոր կտրած թաց գերաններ, միայն գերաններ... Այնուհետև, որոշ տարածություն անցնելուց հետո, պատահեցին նոր սայլերի, որ քար էին տանում քաղաք։ Եղավ մի պահ, որ փախչողներից ոմանք ցանկացան բեռները դնել այդ սայլերի վրա և քայլել նրանց հետ, բայց սայլերն այնքան դանդաղ էին շարժվում, որ վախեցան ուշ տեղ հասնեն, մանավանդ որ օրը երեկոյանում էր. մութով մտնեին անծանոթ քաղաք՝ կմնային դուրսը։ Ու շտապեցին քաղաք հասնել գոնե արևամուտից առաջ։

Երբ շինականի ասած բլուրն անցան, բացվեց մի հարթ լեռնադաշտ, ուր նրանք ամենից առաջ տեսան ցանքեր, ապա հատ-հատ այծեր, որ արածում էին մեկուսի, և ոչխարներ, որ արածում էին գրեթե իրար կպած։ Քիչ հետո երևացին նաև կովեր... Սրանք արդեն մոտիկ բնակության նշաններ էին։

— Քաղաքն ուրեմն հեռու չէ,— ուրախացավ ծերունին և քիչ հետո տեսնելով կով արածեցնող մի պառավի, հետաքրքրվեց, թե որտե՞ղ է քաղաքը։

Ինչպես քիչ առաջ պատահած շինականը, այնպես էլ այս պառավը ձեռքը մեկնեց առաջ և ծոր տվեց.

— Է՛, ծուխը կտեսնե՞ս... քաղաքի ծուխն է որ կա...

Գնացին աչքերը այդ ծխին հառած։ Եվ քանի առաջ էին

գնում՝ այնքան ավելի շատ էին պատահում այծեր ու կովեր, որ արածում էին մի կնոջ կամ մի երեխայի հսկողությամբ։ Կովերը, մեծ խմբով մարդիկ տեսնելով, բարձրացնում էին ծանր գլուխները և ասես զարմացած նայում անծանոթներին, նրանց բեռներին։ Մի փոքր էլ առաջ գնալով՝ փախստականները նկատեցին տներ՝ իրար կողքի շարված. մի քանիսից ծուխ էր բարձրանում, և ծուխը նրանց թվաց հարազատ ու դրավիչ։

— Քաղա՛քը, քաղա՛քը,— բացականչեցին ոմանք։

Բայց զարմանալի բան. քաղաքը երևաց թե չէ՝ բոլորը մոռացան իրենց հոգնությունը. դրան փոխարինեց հետաքրքրությունը, ագահ հետաքրքրությունը։ Առաջ գնալով՝ նախ լսեցին մարդկային ձայներ, բարձր ձայներ, որ կանչում էին իրար, կարգադրություններ անում. ապա տեսան տներ, որոնց միայն պատերն էին բարձրանում, և տակավին կտուրծածք չունեին, և տներ, որ ծածկում էին. տեսան և նոր սկսած պատեր, որոնց մոտն ու վրան աշխատում էին որմնադիրներ, նրանց օգնում էին այլ մարդիկ, որ քար էին հասցնում, կավ էին շաղախում։ Տեղ-տեղ աշխատում էին և կանայք... Դա, ինչպես երևում է, նոր շինվող թաղ էր։ Եվ հենց այդտեղ, տների արանքում, նրանք տեսան դարձյալ սայլեր, որ մի տեղ եղեգ, մի այլ տեղ քար ու գերաններ էին թափում։

— Սա՞ է ուրեմն նոր քաղաքը,— ասաց ծերունին ինքն իրեն, ասես հիասթափված։ Նա, որ եղել էր հայոց մյուս քաղաքներում, հիշեց, որ դա ընդարձակ չէր Վաղարշապատի պես և ոչ էլ կանաչավետ Արտաշատի նման. տներն էլ մեծ չէին և ապա՝ քաղաքը բաց էր բոլո՞ր կողմերից. չուներ ո՛չ պատ, ո՛չ պարիսպ։ Վերջին պարագան շատ զարմացրեց ծերունուն. թագավորական քաղաքը ինչպե՞ս կարող է լինել անպարիսպ... Հիշելով սակայն, որ դա նոր է կառուցվում, հաշտվեց այդ երևույթի հետ։

Մի փոքր ևս առաջ գնալով՝ նրանք լսեցին մեծաղյա հանդարտ, միօրինակ հնչյուններ, որ համաչափ տարածվում էին օդում։ Մինչև կհարցնեին, թե ի՛նչ է այդ՝ փողոցում երևաց ուղտերի մի քարավան, որ գալիս էր զանգակների ու բոժոժների ծորուն զնգոցով։ Բնակիչներից ոմանք, մանավանդ երե-

խաները, աջ և ձախ կողմից հետևում էին հետաքրքիր, ասես պարզելու համար, թե ո՞ւր է գնում և ի՞նչ է տանում։ Իսկ ուղտերը, այդ ամենին անտարբեր, երկար վզները ծռած, թոչունի աչքերով նայում էին տներից վեր, նայում էին հեռու հորիզոններին և քայլում փափուկ ոտքերով։

Քարավանը տեսնելուն պես փախստականները կանգ առան, և Թորգոմը հարցրեց մի տարեց մարդու, թե ի՞նչ քարավան է դա։ Եվ մարդը պատասխանեց անտարբեր.

— Էհ, քարավան է ըշտա. կուգա՛ մեր քաղաք, կերթա՛...

Այդտեղ պատահեց և մի քահանա, որ երկար խռիվ մորուքով, գավազանը ձեռքին կանգնել նայում էր մի շենքի, որի կտուրը գերան էին բարձրացնում մի խումբ մարդիկ, թոկերը ձգելով։ Թորգոմը մոտեցավ դրան և բարևեց։

— Բարեողջույն, զավակ,— ասաց քահանան պարուրող հայացքը Թորգոմի դեմքին, ասես ուզում էր հասկանալ նրան առանց խոսքի։— Նորե՞կ ես։

— Այո, հայր։ Կուզեի իմանալ՝ ո՞ւր են իջևանում այստեղ նորեկները։

— Իջևանե՞լ,— երկարեց քահանան ծորուն ձայնով։— Նախ պիտի մտնես մատյան, զավակս, ապա իջևանես, և դորա համար պիտի խնդիր անես քաղաքիս շահապ իշխանին, կամ՝ նորա դպիր Երկար Դավիթին։

— Իսկ ո՞ւր է կենում շահապ իշխանը,— շարունակեց Թորգոմը, զատված իր ուղեկիցներից, որ հեռվից լսում էին երկուսի հարց ու պատասխանը։

Քահանան մատը մեկնեց դեպի քաղաքի կենտրոնը։

— Կերթաս հա այնտեղ։ Երկու մեծ տուն կա՝ մեկը՝ սև, ընդարձակ, մյուսը՝ ճերմակքար ու բարձրիկ։ Սևը քաղաքիս իշևանն է, ճերմակը՝ Վարազ իշխանի օթևանը,— ասաց քահանան և հարցրեց իր հերթին,— իսկ դուք թագավորի ծառանե՞ր եք, թե...

— Ծառաներ,— պատասխանեց Թորգոմը անորոշ և, չկամենալով այլևս ժամանակ կորցնել, քայլելու նշան արավ յուրայիններին, և նրանք կապոցներով շարժվեցին առաջ, նույնիսկ սովորականից արագ ու վստահ, որ գտել են վերջապես այն, ինչ փնտրում են։

Հասնելով ճերմակ տանը, որ քարե աստիճաններ ուներ

և երկթեք սալածածկ տանիք, նրանք կանգ առան։ Թորգոմն ուզեց նորից ստուգել, թե իրո՞ք կառավարիչ իշխանի տունն է, ու շուրջը նայեց. փողոցում և փոքրիկ տների բակերում երևում էին հավեր, հորթեր, փռած լաթեր և մի պառավ, որ կերակրում էր թխսկանին իր ճուտերով։

— Մարե, սա՞ է շահապ իշխանի տունը։

— Սա՛ է, տղաս, սա՛ է,— գլխով արավ պառավը։— Բայց հիմա իշխանը...

Թորգոմը չլսեց պառավի խոսքի շարունակությունը, ձեռքի կապոցը տվեց մորը և քայլեց դեպի իշխանի տունը. ուղեկիցները տեղավորվեցին փողոցի եզրին թափած գերանների վրա և սպասեցին, թե ի՛նչ լուր կբերի Թորգոմը։ Իսկ Թորգոմը թեպետ ամաչելով, բայց վստահ գնաց բարձրացավ քարե աստիճաններով և զգուշորեն բախեց դուռը։

Դուրս եկավ մի պատանի ծառա։

— Ի՞նչ կուզես։

Լսելով Թորգոմի ցանկությունը՝ նա, առանց պատասխանելու, ներս գնաց, և քիչ հետո Թորգոմը լսեց. «Դավիթ հայր, նորեկներ»... Դուռը նորից բացվեց և այս անգամ դուրս եկավ սև կապա հագած երկար մազերով ու ծաղկած մորուքով մի մարդ։ Նա սև, կարճատես աչքերը հառեց Թորգոմի երեսը և, Թորգոմը, չգիտես ինչո՞ւ, շփոթվեց նրա այդ հայացքից ու ձգվեց ակամա։

— Նորե՞կ ես,— հարցրեց մարդը երգեցիկ ձայնով։

— Հրամանքդ, իշխան։

Մարդը գլուխը տարուբերեց.

— Ես իշխան չեմ, տղաս։ Ես Դավիթ դպիրն եմ։ Որտեղի՞ց է գալը։

Թորգոմը տատանվեց՝ ճի՞շտ ասի, թե ոչ, և ասաց.

— Արշարունյաց գավառից։ Բայց ես մենակ չեմ, տեր դպիր։

— Հապա քանի՞սն եք։

Երբ Թորգոմը հայտնեց իրենց թիվը, դպիրը հարցրեց.

— Իսկ ո՞ւր են։

Թորգոմը մատնանիշ արավ։

— Բարի է,— ասաց մարդը, գերանների վրա տեղավորվածներին հաշվելուց հետո։— Այժմ եկ ձեզ մուծենք մատյան։

Երբ Թորգոմը հետևեց նրան, մարդը սենյակի պատի խորշից վերցրեց մագաղաթյա մի մեծ մատյան, որի թերթերը այնքան կարծր էին, որ բարակ տախտակների պես բաժանվում էին իրարից։ Նստելով մի եռոտանի կլոր աթոռի՝ դպիրը նախ թելի մի օղակ հանեց գրպանից և անցրեց գլուխը, որ երկար մազերը չկախվեն աչքերի վրա, ապա մատյանը ծունկանը դնելով՝ սկսեց մի առ մի գրել նորեկների անունը, և, յուրաքանչյուր անուն գրելիս՝ հարցնում էր. «ո՞վ է, ծե՞ր է, երիտասարդ, ամուսնացա՞ծ է, երեխա ունի՞»... Պատասխաններ ստանալով՝ գրում էր «երիտասարդ, ամուսնացած»... Երբ հերթը եկավ Թորգոմին և դպիրը լսեց, որ նա ամուսնացած չէ, գլուխը բարձրացրեց.

— Եվ ինչո՞ւ ոչ,— կատակով զարմացավ նա։— Պետք է ամուսնանալ, տղաս, քանզի զուգությունը բարիք է, անզուգությունը չարիք ահավոր... Պիտի ամուսնանալ,— կրկնեց։

— Այո, տեր դպիր, պիտի ամուսնանամ,— հանգստացրեց Թորգոմը նրան քմծիծաղը պահած։— Պիտի ամուսնանամ, եթե տերը հաջողի։

— Կհաջողի, տղաս, կհաջողի։ Քեզ համար կգտնենք մի լավ հարսնացու և մեր քահանան կպսակի քեզ մեր ժամանակավոր եկեղեցում։ Մենք ամուրիներին պսակում ենք, որ կարգով մնան։

— Շնորհակալ եմ, տեր դպիր։

— Եվ ինչո՞ւ,— զարմացավ դպիրը։— Դա մեր կարգն է. արքայից հրաման է։

Թորգոմին տարօրինակ թվաց, որ թագավորն զբաղվում է ամուսնական խնդիրներով, բայց և այնպես դպիրին հանգստացնելու համար ասաց.

— Շնորհակալ եմ, տեր դպիր, ես ունեմ իմ ընտրյալը, և նա այստեղ է։

— Այդպես,— կատակով հիասթափվեց դպիրը՝ խուփվ մոլուքը բռան մեջ հավաքելով։— Հուսամ հյուր կլինեմ հարսանիքիդ։

Թորգոմը չէր հավատում, թե նա կգա իր հարսանիքին, բայց խոստացավ քմծիծաղ.

— Սիրով, տեր դպիր, սիրով։

Երբ հարցումները վերջացան՝ Թորգոմը հետաքրքրվեց.

— Իսկ մեզ տեղ, աշխատանք կլինի՞, տեր դպիր։

Հարցին ուղիղ պատասխանելու փոխարեն՝ դպիրը փակեց մատյանը, մազերն անցրած թելի օղակը հանեց դրեց գրպանը և ասաց.

— Կանչիր ընկերներիդ, գնանք իշխանի մոտ։ Կա՛րգ է։

Երբ փոքր անց Թորգոմը և ընկերները՝ Հովսեփն ու Վարդանը, դպիր Դավիթի առաջնորդությամբ անցան վերին հարկը՝ այնտեղ գնում գալիս էր հիսունի մոտ մի տղամարդ։ Առաջին բանը, որ տեսան ընկերները, նրա սև սուր աչքերն էին և ապա գանգուր մորուքը, որը օղակ-օղակ իջնում էր կրծքին։ Գանգուր էին և սև մազերի ծայրերը, որ հասնում էին կապայի օձիքին, մոխրագույն կապա, որի անբնական երկար թևքերը նա գցել էր ուսերին, ինչ նրան տալիս էր եռանդուն մարդու կեցվածք։ Ոտքերին սև մուչկեր էին, մեջքին կարմիր մետաքս գոտի (իշխանական նշան), որի ծոպավոր ծայրերը կախված էին աջ ազդրին։ Իսկ աջ ձեռքի բութ մատին կար մի ահագին ոսկե մատանի, որի վրա փորագրված էր Գնունիների տոհմանիշը՝ կանգնած եղջերու։ Դա Վարազ Գնունին ինքն էր՝ քաղաքի լիազոր կառավարիչը կամ, ինչպես իրենք էին ասում, շահապը։

Ներս մտնողներին տեսնելով՝ նա կանգ առավ ձեռքերը մեջքին դրած և, աչքերը թեթևակի կծկելով, նախ նայեց զննաբար։

— Որտեղի՞ց է ձեր գալը,— խոսեց նա տիրական խրոխտ ձայնով։

Երբ ընկերները պատասխանեցին ակնածանքով, իշխանը նորից հետաքրքրվեց, թե քանի հոգի՞ են և քանի՞սը ունակ են աշխատելու։

— Երեքը, տեր իշխան,— բոլորի փոխարեն պատասխանեց Թորգոմը։

— Մի՜՞ն,— զարմացավ Գնունին։— Իսկ մյուսնե՞րը։

Իմանալով՝ եկողներից չորսը կանայք են, մեկը՝ ծերունի՝ իշխանը շուրթերը սեղմեց անբավական։

— Այստեղ կանայք ևս կարող են աշխատել,— շեշտեց նա թավ ձայնով։— Դուք երիտասարդ եք, հետևաբար՝ ձեր կանայք, լինելով մանկամարդ, կարող են նույնպես...

Նա լռեց մի վայրկյան, նորից դիտեց առջևը կանգնած երեք առողջ տղամարդկանց և ակներև գոհ մնաց։

— Քաղաքիս պետք են աշխատող բազուկներ՝ և շա՛տ, և լա՛վ... Գնացեք առայժմ օթևան։ Հետո կպարզենք, թե ով ի՞նչ կարող է անել...

Այսպես էր իշխան Գնունու սովորությունը. անձամբ դիտում էր նորեկներին և խոսում հետները՝ պարզելու, թե ով ի՞նչ աշխատանք կարող է կատարել։

Հարց ու փորձը ավարտելուց հետո իշխանը կարգադրեց դպիր Դավիթին, որ Թորգոմին ու ընկերներին տանի նորեկների օթևանը։

— Նաև կասես համբարակապետին, որ տա նոցա անհրաժեշտ պարենը։

Երբ ընկերներն ու դպիրը դուրս գնացին՝ Թորգոմը մնաց կանգնած. նրա դեմքից երևում էր, որ ունի ինչ-որ ասելիք։ Կառավարիչ իշխանը նկատելով, որ նա չգնաց և սպասողական նայում է իրեն, հարցրեց.

— Ունե՞ս ես ինչ ասելու։

— Այո, տեր, եթե իրավունք է։

— Խոսի՛ր։

Եվ Թորգոմն սկսեց մանր պատմել, թե ինչո՞ւ էին ինքնք հեռացել Կամսարականի կալվածից, նրա ծառայությունից։ Բացատրելով իրենց հեռանալու շարժառիթներն ու պատճառները, Թորգոմը հարցրեց, թե այդ չե՞ն համարի հանցանք և իրենց չե՞ն պատժի այդ քայլի համար։

— Ի՞նչ հանցանք, տղաս,— ընդմիջեց իշխանը աչքերը կկոցելով։

Թորգոմը ցանկանում էր պատմել ճանապարհին պատահածը՝ իշխանի սպանությունը անտառում... բայց միտքը փոխեց իսկույն և ասաց միայն.

— Որ փախել ենք...

— Միայն ա՞յդ,— ուսերը վեր քաշեց Գնունին երիտասարդի միամտության վրա։— Դա հանցանք չէ, տղաս. թողել ես փոքր տիրոջդ և եկել ես մեծ տիրոջ մոտ, և ոչ մեկը չունի իրավունք քեզ պատժելու։ Իրազե՞կ ես արքայի հրովարտակին, հասո՞ւ ես նորա խմաստին։

Թորգոմը գլխով արավ։

— Եվ ուրեմն պա՞րզ է քեզ։

— Պարզ է, տեր։ Սակայն կուզեի իմանալ...

Եվ որովհետև Թորգոմը հապաղեց շարունակելու՝ իշխանը շեշտ նայեց նրան։

— Եվ ի՞նչը կուզեիր իմանալ...

— Մի շինական, որ իշխան է սպանել, կարո՞ղ է գալ այստեղ... քաղաք, և դորա համար չե՞ն պատժի նորան կամ... չեն վերադարձնի նախկին տիրոջը։

Կառավարիչ իշխանը աչքերը թարթեց, ապա անխոս սևեռեց Թորգոմի երեսը։

Թորգոմը նրա հայացքի տակ գլուխն իջեցրեց իսկույն, մտածելով, որ իզուր և ավելորդ խոսքեր ասաց և այժմ կառավարիչը կցանկանա իմանալ, թե ո՞վ է այդ շինականը, որ իշխան է սպանել։ Բայց կառավարիչ իշխանը ասաց միայն.

— Սպանությունը բնավ գովելի վարմունք չէ, տղա։ Բնա՛վ։ Իսկ արքայի հրամանն է՝ քաղաքս եկողին չվերադարձնել երբեք, որքան էլ պահանջեն տերերը, որքան էլ լինի նա զանցառու և հանցապարտ... Իսկ այդ շինականի վարմունքը գովելի չէ բնավ։

Թորգոմը կառավարիչ իշխանի մոտից դուրս եկավ անորոշ զգացումներով, ինքն իրենից դժգոհ, որ իզուր խոսք բացեց սպանության մասին... Դուրս գալով՝ միացավ ուղեկիցներին, որ սպասում էին իրեն և հետաքրքիր էին, թե մենակ մնալով ի՞նչ է խոսել նա իշխանի հետ։ Բայց Թորգոմը ոչինչ չասաց։

Դրանից հետո Դավիթ դպիրը առաջնորդեց նրանց այն տունը, որ քաղաքում կոչվում էր օթևան, ուր և առժամապես պետք է ապրեին նրանք։

Դա միհարկանի երկար շենք էր՝ մանր խուցերի բաժանված։ Ներս մտնելով՝ տեսան այնտեղ մեծ թվով մարդիկ, կանայք, որ իրենց նման խայտաբղետ կապոցներով նստել էին հատակին, շարվել պատերի տակ և զրուցում էին հոգնած։

— Նորեկներ են նմանապես,— ասաց դպիրը։— Առժամ ապրում են այստեղ մինչև կունենան սեփական օթևան։ Եկողներն այնքան են, որ հնար չէ բավարարել ամենեցուն,— ձեռները տարածեց դպիրը, կամենալով ցույց տալ շենքի նեղությունը։— Հետո իշխանս կանի անհրաժեշտը...

Դպիր Դավիթը խոսում էր բանիմաց մարդու վստահ շեշտով և ամեն անգամ, իշխանի անունը տալիս, գլուխը խոնարհում էր այնպես, կարծես իշխանը առջևն էր և սա իր պարտքն էր համարում պատիվ տալ նրան։ Չնայած դպիր Դավիթի պարտականությունը նորեկներին մտից մատյանում արձանագրելն էր, բայց նա միաժամանակ կատարում էր նաև կառավարչի ամեն մի հանձնարարություն. տեղավորում էր նորեկներին, լսում էր նրանց ցանկությունները և նրանց կարիքները հայտնում իշխանին։

Երբ Թորգոմն իր ուղեկիցներով տեղավորվեց փոքրիկ կացարաններում, դպիր Դավիթը բռնեց Թորգոմի թևը։

— Սա, տղաս, ինչպես ասացի, ժամանակավոր օթևան է,— ասաց նա մորուքը բռան մեջ հավաքելով։— Նոր տուն, սեփական տուն ունենալու համար պիտի ջանաք ինքներդ։ Եթե արհեստ ունես՝ կաշխատես քո արհեստով. նույնպես ընկերներդ։ Իսկ եթե ոչ մեկդ արհեստ չգիտեք՝ կուղարկեն ձեզ նոր շենքերի վրա աշխատելու։ Աշխատանքին ծայր չկա... Կանայք նույնպես կաշխատեն, եթե կամենան... Երբ նոր տներն ավարտեն՝ ամեն ընտանիք կստանա մի բաժին, մինչև կշինի սեփականը։ Իսկ պարեն կստանաք առայժմ արքունի պահեստից։ Մատենիս մեջ գրում եմ յուրաքանչյուրի ծառայությունը, ուստի և յուրաքանչյուրը կստանա իր արժանին՝ և՛ հող, և՛ տուն... Իշխանը պիտի հոգա ամենը, որ դժգոհ չմնաք...

Խոսեց դպիրը երկար, գծելով լավ հեռանկարներ, իսկ երբ սիտի հեռանար՝ կատակով հիշեցրեց Թորգոմին.

— Չմոռանաս, տղաս, պսակիդ հրավիրես և ինձ...

Երբ դպիրը գնաց և Թորգոմն ուղեկիցների հետ, նեղլիկ կացարաններում տեղավորվելով, պատրաստվում էին քուն մտնել վերջապես հանգստանալու, հանկարծ, առանց զգուշացնելու, ներս մտավ մի վաթսունոց մարդ՝ մոխրագույն մորուքը կրծքին և մի կարճ գավազան ձեռքին։

— Բարյավ, հայրենի զավակներ։ Դուք տիրափախնե՞ր եք, թե արքունի շինականներ,— հարցրեց նա շեմքից առաջ գալով ու մի այնպիսի բամբ ձայնով, որից դժվար էր կռահել՝ հետաքրքրվո՞ւմ է, թե հարցաքննում։

Թորգոմն ու ընկերները նայեցին նրան տարակուսով. լավ չհասկանալով տիրափախ բառը, նրանք այդ բառի մեջ հանդի-

մանության պես մի բան զգացին. բայց և այնպես պետք էր պատասխանել, և Թորգոմը հարցրեց իր հերթին.

— Ի՞նչ ես կամենում, եղբայր։

Մորուքավորը պատասխանելու փոխարեն նորից հարց տվեց.

— Ես հարցնում եմ՝ տիրապա՞խ եք, թե արքունի։

Թորգոմն ու ընկերները հապաղեցին իրենց պատասխանով, կրկին չիմանալով ի՛նչ ասել։ Ուստի մարդը շարունակեց.

— Իսկ ո՞ր կողմից եք գալիս։

Ընկերներն իրար նայեցին։ Ի՞նչ է ուզում այս մարդը։

— Մենք, ասենք՝ Արշարունյաց գավառից,— բոլորի կողմից խոսեց Թորգոմը, դարձյալ խուսափելով ուղիղ պատասխանից։ Նրան թվում էր, թե մարդը բարի նպատակով չի հետաքրքրվում։

— Արշարունյաց գավառի՞ց,— ծոր տվեց մարդը հիասթափված։— Իսկ ես՝ մեղավորս, կարծում էի մեր գավառից։ Կամեցա իմանալ ինչպե՞ս են ապրում մեր շեներում... Դուք ամենքդ ուրեմն Արշարունյաց երկրի՞ց եք։ Բայց չասիք՝ տիրապա՞խ եք, թե... Բնավ մի վախեցեք. մենք այդպես ասում ենք նրանց, ովքեր տերերից փախած գալիս են քաղաքս։— Մորուքավորը լռեց, հերթով նայեց նորեկներին և շարունակեց.— Ձեր տերն ուրեմն իշխան կամսարակա՞նն է, այնպես չէ՞... Այո, այդպես պետք է լինի։ Նա հիմա հեծվորներ է հանել ձեզ բռնելու։ Բայց իզո՛ւր։ Ով հասավ քաղաքս՝ նրան ոչինչ անել չեն կարող։ Ոչի՛նչ։ Զվախենաք բնավ։ Քանի՞ հոգի եք։ Տա՞սը։ Փախել եք արիաբար։ Հիմա նախարարները դաժան ու խիստ են. հետևում են հազար աչքով... Տեսնող եղա՞վ։ Այո՞։ Հետապնդեցի՞ն...

Թորգոմն ուզում էր ասել «այո», բայց զգուշացավ բացվել անծանոթ մարդու առաջ։ Իսկ անծանոթը շարունակեց հետաքրքրվել.

— Այստեղս ի՞նչ եք անելու։

— Ինչ անում են ամենքը,— վրա բերավ Թորգոմի ուղեկից Հովսեփը, որ մինչ այդ լռում էր, չիմանալով ով է խոսակիցը։— Իսկ ի՞նչ կարող ենք անել։

— Ի՞նչ... Այստեղ կարող եք անել ամեն գործ,— անծանոթը բարձրացրեց ու տարածեց ձեռքերը, կամենալով ցույց

տալ աշխատանքի առատություն։— Եթե արհեստ չգիտեք՝ կարող եք աշխատել քարհանքում, եղեգնուտում։ Կարող եք հող փորել, հիմքեր շինել կամ թե սայլով փայտ, քար կրել՝ մինչև մի արհեստ կսովորեք։ Ես, օրինակ,— շարունակեց մարդը տեղավորվելով տախտի վրա,— դարբին եմ, ինձ ասում են դարբին Դավիթ։ Նմանապես տիրապետ եմ։ Մի տարի առաջ, երբ եկա, անում էի ամեն գործ։ Հիմա միայն իմ արհեստս՝ երկաթի գործ։ Բայց կարող եմ պատ շարել և տնեսս ծածկել և հյուսնի գործ կատարել...

— Իսկ դու ո՞ր երկրից ես և ե՞րբ ես փախել,— հետաքրքրվեց Թորգոմի մյուս ընկեր Վարդանը։

— Ասացի չէ՞, եղբայրս, որ փախել եմ մի տարի առաջ Վահեունյաց երկրից,— մորուքը շփեց մարդը։— Երբ արքայի առաջին հրամանն ելավ, ես կնոջս ասացի. «գնանք, Մարիամ»... Մեր տեր Վահե իշխանը մեզ չէր թողնի մի տեղ բնակվենք. կուղարկեր աշխատելու այստեղ, այնտեղ. չունեինք մշտական օթևան, ապրուստ։ Երբ ասացի՝ «գնանք, Մարիամ», կինս ասաց. «էհ, եթե չեն բռնի, չեն տանջի՝ գնա՛նք»... Ու ելանք-եկանք։ Եկանք գողեգող, եկանք սողեսող, մինչև հասանք նոր քաղաք...

Նա, ըստ երևույթին, կամենում էր անել իր փախչելու պատմությունը, երբ ներս մտան ուրիշ մարդիկ. նախ երկու հոգի, ապա երեք. բոլորն էլ տղամարդիկ. ձեռք տալով ողջունեցին Թորգոմին, ընկերներին ու շարվեցին պատի տակ դրված թաիտին, որը ծառայում էր նստարանի տեղ։ Մորուքավորը նրանց տեսնելով լռեց, սպասելով, որ նրանք վերջացնեն իրենց ողջույնները։ Բայց նրանք ևս հետաքրքրվեցին, թե ո՞ր գավառից են եկել, ինչպե՞ս են եկել և հետապնդումի կամ արկածի չե՞ն հանդիպել... Մինչ նորեկները կպատասխանեին, մորուքն անհանգստանում էր, որ իր պատմությունը կիսատ մնաց։ Նոր ներս մտնողները նույնպես հայտնեցին, թե իրենք ևս փախածներ են։ Դրանց մեջ կային և մի քանիսը, որ փախել էին վանական շեներից, և իրենց անվանում էին բորբորիտներ։

— Մենք բորբորիտներ ենք։

Թորգոմը չհասկացավ.

— Ի՞նչ է, դուք հայ չե՞ք։

— Հա՛յ ենք, բայց բորբորիտ։

Ներկաներից մեկը բացատրեց, որ դրանք Քրիստոսի հավատից, եկեղեցուց դժգոհ՝ վանքապատկան գյուղերից մեծ թվով փախել-եկել են քաղաք, բայց լավ են աշխատում։

Այցելուները խոսեցին երկար, այնինչ նորեկների քունը տանում էր սաստիկ. նրանք թե՛ լսում էին և թե՛ ննջում իրար հետևից, ասես մեկը մյուսին օրինակելով։

Վերջապես դարբինը, այդ նկատելով, մեկեն ոտքի կանգնեց։

— Ելե՛ք, ելե՛ք, մոռացանք, որ մարդիկ հոգնած են։

Բոլորը ոտքի կանգնեցին ու «գիշեր բարի» կրկնելով՝ դուրս եկան իրար հետևից։ Ընկերները քաշվեցին իրենց խցերը, իսկ Թորգոմն արթնացրեց մորը, որպեսզի հարմար դիրքով պառկի, և ինքն էլ մեկնվեց վերջապես։

Օրն այնքա՜ն երկար էր թվում նրան, այնքա՜ն շատ էին տպավորությունները։ Որքան էլ ուրախ էր, որ անվնաս հասան քաղաք, բայց նրան մտահոգում էր դարձյալ, թե սպանված իշխանի հարազատները նորից չե՞ն հետապնդի իրեն՝ վրեժխնդիր լինելու և կամ չե՞ն պահանջի...

Մտածելով այս մասին՝ նա իրեն մխիթարում էր, որ դեմքով իրեն կարող են ճանաչել միայն սպանված իշխանի հետ եղած մարդիկ, բայց նրանք երբեք չեն գա այստեղ... Բացի այդ, նրան հանգստացնում էր նաև իշխան Վարազի խոսքը թագավորի հրովարտակի մասին, թե՝ քաղաք եկող յուրաքանչյուր փախստական դառնում է արքայի ծառան և ոչ մի նախարար այլևս իրավունք չունի նրա վրա։

«Այս լավ է»,— ասում էր Թորգոմը մտքում և հիշում իր զրույցը Դավիթ դպիրի հետ, որին հայտնեց, թե ինքը հարստացու ունի և շուտով պիտի ամուսնանա... Եվ դա ճիշտ էր։ Նա իրոք նպատակ ուներ այստեղ ամուսնանալու։ Բայց մինչև այժմ ոչինչ չասվեց այդ մասին, առհասարակ Թորգոմի մասին, որ Կամսարականի ծառայությունից, ավելի շուտ նրա չար կառավարչի երեսից փախել էր այդ իսկ ամուսնության նպատակով։ Ինչ-որ բանի համար կառավարիչը գժտվել էր Թորգոմի հետ ու ամեն կերպ ջանում էր խանգարել, խոչընդոտել նրա պատկը սիրած աղջկա հետ. անգամ շենի տերտերին հրամայել էր՝ չպսակել դրանց... Ուստի և Թորգոմը

համոզել էր իր մորն ու աղջկա հորը (որ մենակ մարդ էր), որպեսզի հեռանան չարակամ կառավարչից և գնան Թագավորի նոր քաղաքը և պսակվեն այնտեղ... Այս իմանալով՝ նրանց միացել էր իրենց հարևանը՝ կնոջ և երեխայի հետ, այն մարդը, որին իշխան Համունին իր թիկնապահներով ուղարկից իշխան Կամսարականին... Հետո ճանապարհին հանդիպել էր ուրիշ նախարարությունից փախած մարդկանց՝ Վարդանին իր կնոջ և ութ տարեկան տղայի հետ և Հովսեփին ու նրա նորատի կնոջը, և մտածել էր, թե դրանց հետ միասին փախչելը հեշտ կլինի ու անվնաս... Նրա համար անհայտ էր, թե ինչպես իշխան մարդիկ վրա հասան անտառում և կռիվ սկսեցին... Այս բոլորն անսպասելի էր նրա համար... Ու ահա, վերջապես, եկել էին Թագավորի նոր քաղաքը, ուր հետաքրքիր շատ բան կար գուցե, բայց ցածրիկ հանրակացարանը, ուր ամեն մի խուցում ապրում էր մի երկու ընտանիք, հաճելի չեղավ Թորգոմին։ Պառկելով՝ նա այժմ մտածում էր, թե ինչպես կարող է պսակվել այստեղ՝ այս շենքում, ուր բոլորն անծանոթ մարդիկ են, նեղվածք... Դեռ փախուստից առաջ և փախուստի ճանապարհին նա այնպես էր պատկերացրել, թե Արշակավան հասնելուն պես իրեն տուն կտան և ինքն ընտանիք կկազմի Մինայի հետ... Բայց այս խցերում, ուր մարդիկ թափված են իրար վրա, ուր ամեն վայրկյան գնացող, եկող... Նորահարսը այս աղմուկի մեջ...

Հիշելով Դավիթ դպիրի խոսքերը, թե եկողներին առժամանակ ներգավորում են խցերում, ապա հող են տալիս՝ սեփական տուն շինելու, և ով կարողանում է՝ կառուցում է, ով ոչ՝ մնում է այս կացարանում...

«Ես կշինեմ իմ տունս,— մտածեց Թորգոմը։— Եվ մինչև չունենամ իմ տունս՝ չեմ ամուսնանա»...

Ու այս մտքով էլ քնեց։

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

Իշխան Կամսարականը քեռայրի թաղումից հետո երեք օր ևս մնաց քրոջ մոտ՝ նրան մխիթարելու, հանգստացնելու և խորհուրդներ տալու համար, նաև նրա համար, որ հանցա-

գործներին հետապնդելու գնացողները այսօր-վաղը կբերեն փախածներին և ինքն անձամբ կտեսնի նրանց դատաստանը։

Բայց հետապնդողները, փախածների փոխարեն, լուր բերին, թե նրանք անցել են արդեն Արշակավան։ Նար իշխանը զայրացավ սաստիկ, հանդիմանեց հետախույզների պետին որպես անկար մարդու և մռայլվեց, որ անհաջողությունները հաջորդում են միմյանց. Անգեղաց իշխանիկը ազատվեց գնաց իր կալվածը, այնտեղից էլ կերթա, երևի, թագավորի մոտ... Իր տիրանենգ ծառաները սպանեցին քեռայր Դավիթին և անպատիժ անցան Արշակավան. կարելի՞ էր հանգիստ մնալ, կարելի՞ էր չվշտանալ և չզայրանա՞լ...

— Սինլքորնե՜ր...

Եվ բարկությունից իշխանը չէր կարողանում նստել մի տեղ. ըստ սովորության ծամում էր բեղերի ծայրերը և գընում-գալիս սենյակում։ Ի՞նչ պետք էր անել. նորի՞ց իշխանաժողով հրավիրել, հայտնե՞լ այս ամենի մասին Վասպուրականի տիրոջը, թե...

Այս ժամանակ էր ահա, որ հիշեց նա իր կարևոր անելիքը և իմանալով, որ Ներսես կաթողիկոսը գտնվում է Գառնի, ճանապարհ ընկավ դեպի այդ լեռնային մենաստանը՝ իշխանաժողովի հանձնարարությունը կատարելու. այսինքն՝ քահանայապետի հետ խոսելու, որ նա իր հեղինակությամբ կարգի հրավիրի Արշակ թագավորին։

«Առավել լավ, որ կաթողիկոսը Գառնի է»,— ասաց նա մտքում և խթանեց իր սև նժույգը։ Եթե Կամսարական իշխանն իմանար, որ կաթողիկոսը մայրաքաղաքումն է՝ Վաղարշապատ, երբեք չէր գնա, որովհետև թագավորն անկասկած կլսեր իր այցը քահանայապետին և դա կդառնար առիթ նոր անախորժության. Արշակը այդ այցը կհամարեր բացարձակ արհամարհանք իր դեմ... Իսկ Կամսարականն առհասարակ չէր ցանկանում լինել Արշակի մայրաքաղաքում մի քանի պատճառով, նախ, որ բերդերի պահանջից հետո խուսափում էր թագավորին հանդիպելուց, երկրորդ՝ չէր գնացել Ոլիմպիա թագուհու թաղմանը։ Իսկ վերջին դեպքն արդեն՝ քեռայրի սպանությունը այնպիսի զգացումներով էր համակել Նար-Իշխանին, որ նա բնավ չէր ցանկանա ոտք դնել Վաղարշապատ։

Ուստի և իմանալով, որ կաթողիկոսը մեկնել է Գառնի՝ ներուսա ուրախացավ և ճանապարհ ընկավ համարձակ։

Նրան հետևեցին երկու որդիները և տասներկու թիկնապահները՝ նժույգներ հեծած, երկարաբուն նիզակները ձեռքներին, աղեղները ուսները գցած։ Թլում էր՝ գնում են արշավանքի և ոչ թե քահանայապետի այցելության։

Ամրոցի բնակիչները, դրանց հետ և Կամսարականի սգավոր քույրը, նրանց «բարի երթ» մաղթելով մտածում էին՝ կհաջողի՞ արդյոք իշխանն իր առաքելության մեջ, կամ ճանապարհին չի՞ պատահի մի նոր դժբախտության...

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Մինչև իշխան Կամսարականը կհասնի Գառնի, պատմենք, թե ի՞նչեր էին անցել-դարձել Հայոց Աշխարհում և ի՞նչ գործեր էր կատարել Արշակ թագավորը, որ Կամսարականն ու նրա բարեկամ նախարարները հուզված էին այդպես՝ սաստկապես։

Օ՜, գործեր շա՜տ էին կատարվել, շա՜տ... Հենց միայն այն, ինչ հիշեցին նախարարներն իրենց միաժողովում՝ Արշակավան քաղաքը, որ կառուցում էր թագավորը... Քաղաքը, որը կարծես ամենից շատ էր վրդովում նրանց, բայց բարկության հուզմունքով ասացին նաև, թե Արշակը թունավորել է իր թագուհուն, սպանել է եղբորորդուն և սեփականել նրա գեղանի կնոջը՝ Փառանձեմին... Ասացին և շատ ուրիշ բաներ...

Եվ այս ամենը պարզելու համար ահա պետք է ետ գառնանք մի տասը-տասնհինգ տարով, որպեսզի հասու լինենք կատարվածին այնպես, ինչպես տեղի է ունեցել ճշմարտապես։

Ուստի սկսենք, որտեղից արժանի է սկսել։

Այսպես. իր թագավորության երկրորդ թե երրորդ տարում Արշակը հիմք գրեց մի քաղաքի, որ տասնհինգ տարի կառուցվում էր ահա Կոգովիտ գավառում, այն իսկ ճանապարհի վրա, որտեղից շարունակ ուղտերի բեռնաբարձ քարավաններ էին գալիս-գնում Բյուզանդիա, իսկ Բյուզանդիայից՝ պարսից, հինդու և չինու աշխարհները, և որտեղից պարսիկները հաճախ ներխուժում էին Հայոց Աշխարհը։ Թե ինչո՞ւ էր թագա-

վորն ընտրել այդ ոչ այնքան ապահով վայրը իր քաղաքի համար՝ շատերը մեկնել չէին կարողանում, իսկ Արշակն ինքը լռում էր, երբ խոսք էր լինում այդ առթիվ. նա չէր բացատրում ոչինչ և տարակույսները մնում էին չփարատված։ Անգամ պալատականների հարցումներին պատասխանում էր, թե «կարի անհրաժեշտ է», որ ավանը լինի այդտեղ... Մյուս կողմից՝ ոչ ոք չէր զգում դրա անհրաժեշտությունը, քանի որ Հայոց Աշխարհն ուներ կարևոր քաղաքներ, ուստի և Արշակի այդ նախաձեռնությունը համարում էին «արքայի քմահաճույքը»... Քաղաքի կառուցմանը դեմ էր նաև Արշակի հույն կինը՝ Օլիմպիա թագուհին. «Կարիք կա՞, բազիլևս, ընկնել հոգսերի մեջ», ասում էր նա հունարեն։ Իսկ Արշակը պատասխանում էր. «Հույժ կարևոր է, բազիլեյա»..... Թագուհին կրկնում էր, որ դա հոգս է ավելորդ։ Արշակը ոչ բացատրում էր դրա կարևորությունը և ոչ առարկում... նա հարգում էր բյուզանդացի կնոջը և չէր կամենում որևէ բանով վշտացնել նրան։

Պետք է ասել և այս, որ՝ քաղաքատեղի ընտրությունը չէր եղել պատահաբար կամ հանկարծակի։ Բոլորովին։ Մի անգամ, իր շրջագայության միջոցին, Արշակը նկատեց, որ Կոգովիտի այդ տարանցիկ ճանապարհի վրա չկա մի փոքրիշատե խոշոր բնակավայր, և մտածեց այդ ամայի վայրը զարդարել մի ավանով... ու նախքան հիմնադրելը մեկ-երկու անգամ գնաց Կոգովիտ և դիտեց-զննեց, թե արդյոք չի՞ սխալվում այդտեղ ավան հիմնելով. արդյոք մոտակայքում կա՞ այն ամենը, ինչ անհրաժեշտ է մի ավան կամ մի քաղաք կառուցելու համար՝ քար, փայտ և այլ նյութեր շինության։ Եվ նա չգոհացավ միայն հարցումներով. անձամբ, շքախմբի անդամների հետ (որոնց մեջ էին առաջին հերթին հաղարապետ Դավիթ Գնունին, Բագրատունի Սմբատ ասպետը և Մամիկոնեից Վարդ իշխանը) գնաց քարհանքները, դիտեց և այդ վայրից ոչ հեռու գտնվող լճակները, որոնք առատ ջրից ու ձկներից բացի, ունեին նաև մեծ տարածություններ բռնող եղեգնուտներ, որոնք ամառը լցվում էին որսի անհամար թռչուններով, իսկ ձմեռը՝ սարերից իջնող որսի կենդանիներով։ Որսից զատ այդ մեծատարած եղեգնուտները բնակիչներին կարող էին տալ և այլ օգուտներ. նրանց եղեգնը, որ մարդու հասակից բարձր էր, ծառայում էր որպես ծածք ու վառելիք,

նթե կոգովիտցիները հնար չէին ունենում գնալ հեռու, այսինքն՝ Բասենի անտառներից շինափայտ և վառելիք բերելու։

Մի քանի օր վրանում գիշերելով, Արշակը ծանոթացավ շրջապատին. տեսավ Թոնդրակ կոչված հրաբխային սարը, որից, բնիկների ասելով, ելնում էր «ծուխ ու մուխ սաստիկ», բայց այլևս չէր պատճառում մի վնաս, քանի որ արտավիժել էր այն, ինչ ունեցել էր ներսում։ Արշակին առանձնապես դուր եկավ Եղջերասարը, որն իր գագաթին ցցած կապտորակ զույգ ժայռերով հիշեցնում էր խրոխտ մի ցուլ, որ խոյացել էր ասես երկնքին հարվածելու։

Ծանոթանալով շրջապատին՝ Արշակը որոշեց և քաղաքի բուն տեղը մի հարթավայրի վրա, որից վեր սառցահամ աղբյուրներ էին բխում, իսկ նրա միջով անցնում էր լճերից եկող գետը, վճիտ մի գետ, որ կոչվում էր Զկնգետ, որովհետև իրոք լի էր ձկներով։ Բայց թագավորի ուղեկիցները՝ հազարապետ Գնունին, Բագրատունի Սմբատը և Մամիկոնյան Վարդ իշխանը գտան, որ դա հարմար վայր չէ քաղաքի, անգամ ավանի համար։

— Եվ ինչո՞ւ,— հետաքրքրվեց Արշակը, ըստ սովորության, աչքերը կկոցած նրանց զննելով, ասես ստուգում էր խոսակիցների անկեղծությունը։

— Վասնզի, արքա,— առաջինը խոսեց հազարապետը,— մոտ է սահմանին և պարսից ճանապարհի վրա։

— Եվ այդ իսկ պատճառով անհրաժեշտ,— վրա բերավ Արշակը։

Մյուսներն այլևս չխոսեցին։

Ու մի քանի օր անց քաղաքը հիմնադրվեց իր՝ Արշակ թագավորի և մի խումբ պալատականների ներկայությամբ. թագավորը առաջինն ինքը մի ոսկեգրամ գցեց փորվպծ հիմքը, որպեսզի այն լինի հաստատուն։ Նույնն արին և պալատականները՝ փոսը նետելով հասարակ դրամներ... Քաղաքի հիմնարկեքին եկել էին մոտակա գյուղերի շինականները՝ իրենց կանանցով, երեխաներով, որոնց ծնողները գրկել էին կամ նստեցրել ուսերին, որպեսզի նրանք ևս կարողանան տեսնել, թե ինչպես է քահանան օրհնում հիմքը։ Շինականներն իսկապես եկել էին ծես ու թագավոր տեսնելու, որին երբեք չէին տեսած, և երբ թագավորը դեղնափայլ ոսկին նետեց նոր քան-

դած փոսը՝ նրանց դեմքին երևաց ահագին զարմանք՝ մի ամբողջ ոսկի գցեց հողի մեջ... Սակայն շինականներն ափսոսացին, որ թագուհին չկար. նրան ևս կարող էին տեսնել։ Եվ դրան փափագում էին հատկապես այն պատճառով, որ լսել էին, թե թագուհին հունաց կայսեր աղջիկն է, գեղեցիկ է, հագնվում է ուրիշ ձևով, խոսում է այլ լեզվով։

Քաղաքը հիմնադրելու օրից թագավորը նրա շինության կառավարիչ կարգեց իշխան Վարազ Գնունուն՝ հազարապետի կրտսեր եղբորը, որ ամեն շաբաթ պարտավոր էր գալ մայրաքաղաք և զեկուցել թագավորին շինարարության ընթացքի մասին։ Եվ եթե նա ուշանում էր ինչ-ինչ պատճառներով, Արշակը հարցումներ էր անում իր կնքապահ և սենեկապետ Վարդ Մամիկոնյանից կամ մյուսներից, թե չի՞ եկել մեկը կառուցվող Ավանից, կամ՝ ի՞նչ լուրեր ունեն Ավանի շինության մասին։ Այսպես էլ ասում էր. «Ի՞նչ լուր Ավանից»...

Ի դեպ. թագավորն ինքը երբեք չէր ասում Արշակավան, այլ պարզապես Ավան։ «Արշակավան» ասում էին պալատականներն ու նախարարները, չգիտես թագավորին հաճոյանալու, թե նրա հետևից նրան հեգնելու համար։

Չնայած քաղաքի հիմնադրելու օրից թագավորի հրամանով Հայոց Աշխարհի շատ մասերից, հատկապես արքունի շեներից, հավաքեցին այդտեղ ամեն կարգի արհեստավոր ու գործավոր, բայց և այնպես քաղաքի շինարարությունը չէր ընթանում այնպես, ինչպես սպասում էր Արշակը. կատարվում էր դանդաղ, քանզի սակավ էին մարդիկ քաղաքի բազմատեսակ աշխատանքները գլուխ բերելու համար։ Այդ իսկ պատճառով Արշակը նկատելով, որ քաղաքի կառուցումը կարող է տևել տարիներ, միտք հղացավ՝ դիմել նախարարներին և խնդրել, որ գործավորներ տան և առհասարակ օգնեն ավանի շինության։ Նախարարները, որ դրա համար հրավիրված էին մեծ մայրաքաղաքը հայոց՝ Վաղարշապատ, խոստացան անել կարելին։ Բայց, վերադառնալով իրենց կալվածները, շատերը չուղարկեցին և ոչ մի մարդ... Անցավ տարուց ավելի և... ոչ մի գործավոր։ Արշակը սպասեց և այլևս չկրկնեց իր խնդրանքը։ Նա չուզեց անգամ հիշեցնել և ոչ էլ դիմել խիստ միջոցների, այլ միայն գրություն հղեց բերդատեր նախարարներին, թե, հանուն երկրի ապահովության, ցանկալի

է համարում, որ «նախարարաց պատկանող բերդերը» լինեն թագավորի տրամադրության տակ, որպեսզի «ի դեպս պատերազմի» ինքը ի վիճակի լինի պաշտպանել երկիրը հայրենի։

«Մարդեր չտվին բանակը զորացնելու, մարդեր չտվին Ավանը շինելու, թերևս բերդերը զիջանեն հանուն հայրենի երկրի ապահովության»,— մտածում էր Արշակը և սպասում։ Անցավ մեկ-երկու ամիս՝ նա սպասում էր և մտածում, թե այս ևս մերժելու դեպքում ի՞նչ պետք է անել, որպեսզի նախարարները ենթարկվեն իրեն...

Նա խորհում էր և սպասում, երբ տեղի ունեցավ, ավելի շուտ՝ հայտնվեց մի դեպք, որ առժամ մոռացնել տվեց նրան թե՛ Ավանը, թե՛ բերդերը։ Դեպք, որին հաջորդեցին ուրիշ նոր դեպքեր և դարձյալ մոռացնել տվին թե՛ Ավանը և թե՛ բերդերը։

Բայց առավել լավ է այդ ամենը պատմագրենք հաջորդաբար, ինչպես տեղի են ունեցել ճշմարտապես։

* * *

Մի առավոտ Արշակը, ըստ սովորության, զլխաբաց ու գոտեպինդ կապայով երթևեկում էր Վաղարշապատի պալատի գահասրահում և ուշադիր լսում զեկույցը իր սենեկապետ ու կնքապահ Վարդ Մամիկոնյանի, որ քառասունն անց միջահասակ տղամարդ էր՝ բոլոր Մամիկոնյանների նման խոյաքիթ ու սրահայաց։ Սա միալար ձայնով, երբեմն միայն այս կամ այն բառը շեշտելով, ձայնի մեջ սակայն պատշաճը պահած, իրար հետևից պատմում էր այն բոլոր լուրերի և գրությանց մասին, ինչ ստացվել էին պալատում։ Թե՛ լուրերը, թե՛ գրությունները սովորական էին· այդ ամենի մեջ արտակարգ ոչինչ չկար.— սահմանների հանգիստ են, հազարապետը լուրեր է առել գավառներից, թե տուրքերը գանձվում են «դժվարավ, քանզի երաշտ է եղել և կարկուտ սաստիկ»... Ապա հետևեցին մանր լուրեր—մի ծառա, տիրոջից դժգոհ, հեծել է նրա նժույգը և փախել քաղաքից, մի աննշան սեպուհ ընդհարվել է հարևանի հետ և սպանել նրա ծառաներից երկուսին, մի այլ նախարար...

Արշակը, այդ մանր լուրերից և կնքապահի միօրինակ ձայ-

նից ձանձրացած, երթևեկը դադարեցրեց և կանգնեց ուղիղ նրա առաջ.

— Իսկ Կամսարականից պատասխան չկա՞ տակավին։

— Ոչ, արքա, տակավին ոչ։

— Եվ ոչ իսկ հայտնի՞ է նրա մտադրությունը։

Կնքապահը վարանեց իսկույն պատասխանել։

— Զրուցում են, արքա,— սկսեց նա հատակին նայելով,— որ նա բնավ չի համաձայնի իր բերդերը զիջանել քեզ, վասնզի, ասել է, թե դրանցով է պահպանում իր մեծ կալվածները և նախարարի իր դիրքը ազդեցիկ։ Ապա ասել է նաև,— և սա պատմել է ականջալուր մարդ,— թե «տկարամիտը միայն իր սուրը կնվիրի հակառակորդին»։

Արշակի սպիտակուցները փայլեցին թուխ դեմքին, մի բան, որ լինում էր նրա բարկության պահերին, եթե անգամ չէր արտասանում մի բառ կամ չէր անում թեկուզ մի շարժում։ Վերջերս, յուրաքանչյուր օր կնքապահ-սենեկապետի զեկույցը լսելիս նա հարցնում էր անխախտ. «Իսկ ի՞նչ լուր Կամսարականից», և սենեկապետը պատասխանում էր. «Տակավին ոչ մի լուր, արքա»... Ու ամեն անգամ Վարդի պատասխանը լսելիս Արշակը մռայլվում էր մտածումների մեջ. բայց այսօր լսածը նրան մռայլեց ավելի։

— Այդպես,— խոսեց նա փոքր լռելուց հետո։— Կամսարականաց տերը կամենում է ուրեմն Հայոց Աշխարհի ամուր բերդերը պահել իր ձեռքին և չհանձնել... քանզի ինձ համարում է հակառակորդ... Կամենում է ուրեմն պաշտպանել իր կալվածները միայն և երկիրը թողնել անպաշտպա՞ն... Սակայն չգիտե՞ միթե, որ ինքը չի կառուցել այդ բերդերը։

— Գիտե, արքա. հարկավ գիտե, որ երանելին Տրդատ արքան է դոքա նվիրաբերել իր նախնիներին, բայց ասել է, որ այդ բերդերը նորոգելու համար իր պապերը ծախսել են լիակշիռ ոսկի։

Արշակը աչքերը կծկեց. նրանց սպիտակուցները չքացան կարծես։

— Այդ ամենից կարելի է մակաբերել ուրեմն, որ նա կցանկանար գուցե վաճառե՞լ ոսկով։

— Ոչ, արքա։ Զրույցի ժամանակ նկատել է անգամ, որ

Եթե բերդաց քարերի կշռով իսկ ոսկի տան՝ այսուամենայնիվ ինքը չէր ցանկանա զրկվել իր տոհմական բերդերից։

— Այդպե՞ս,— փնչացրեց Արշակը և, նորից լռելով, սկսեց երթևեկել մտամփոփ։ Եվ երբ արել էր հինգ-վեց շրջադարձ, նորից կանգ առավ։— Մակաբերում եմ, որ Կամսարական իշխանը իր ապահովությունը համարում է առավե՞լ կարևոր, քան ապահովությունը մեր ողջ աշխարհի... Այո՞... և ինձ համարում է ոչ թե արքա, այլ հակառակորդ,— կրկնեց Արշակը վրդովանքը զսպելով։

Վարդ իշխանը չիմացավ ինչ ասել և նկատեց միայն.

— Կամսարականաց տերը՝ Նար իշխանը, արքա, ունի խոհեմ մարդու համբավ, ուստի դժվարին է ենթադրել, որ նա ունենա նմանօրինակ խոհեր։

— Սակայն նրա վարքից ու խոսքից երևում է այդպես, եթե ոչ ավելին։ Եվ մի՞թե դու չես կամենում դատել բանական։

— Կամենում եմ, արքա, և դատում եմ, որ Նար իշխանը չէր կարող լինել այդքան հանդուգն։

— Այդպես է սակայն. նա չեկավ իմ թագադրության, չպատասխանեց տակավին և իմ վերջին գրության։

— Իրազեկ եղա, որ տկար է եղել, արքա։

— Ոչ, Մամիկոնեից իշխան. նա գոռոզ է, գուցեև Սրհամարհում է ինձ։

— Հավաստել դժվարին է, արքա։

— Այսուամենայնիվ այդ կապացուցի նորա պատասխանը՝ բերդերը զիջանո՞ւմ է, թե ոչ, թեկուզև փոխարենը մեծ կալվածներ ստանալու պայմանով։

Արշակը լռեց մի վայրկյան, ապա, սևամազ գլուխը թափահարելով, ասես ինչ-որ տհաճ մտքեր իրենից վանելու համար հարցրեց.

— Իսկ Ավան մեկնելու համար պատրա՞ստ է ամենը։

— Այո, արքա։ Ես արդեն կարգադիր եմ եղել, որ ամենայն ժամ պատրաստ լինեն հրամանիդ,— ասաց Վարդը և, մի ոտից մյուսին հենվելով, մտախոհ նայեց թագավորին, ասես ինչ-որ հիշելո՞ւ, թե մոռացված մի բան ասելու։

Արշակը, սովոր լինելով նրա հայացքին, հարցրեց.

— Ունե՞ս նոր ասելիք, իշխան։

— Հրամայել ես, արքա. կուզեի հայտնել, որ արքայազն Տիրիթը...

Արշակի աչքերի սպիտակուցները մեծացան և խաղացին թուխ երեսին։

— Արքայազն Տիրի՞թը... Պատահե՞լ է ինչ։

— Հատուկ ոչինչ, արքա,— հանգստացնող եղանակով շեշտեց սենեկապետը։— Կամենում էի ասել, որ նա ժամանել է գիշերս...

Թագավորի աչքերի սպիտակուցները ավելի խաղացին։

— Եվ ո՞վ է թույլատրել նրան մայրաքաղաք գալու։

— Պիտի խոստովանեմ, արքա. եկել է առանց թույլտրվության։

— Ինչպե՞ս... և ինչո՞ւ։

— Եկել է, արքա, հույժ կարևոր մի հայտնությամբ։

— Եվ ի՞նչ է այդ հայտնությունը...

Արշակի ձայնի մեջ կային բարկության բացահայտ շեշտեր։

— Ըստ ամենայնի կարևոր, արքա,— շարունակեց Վարդ իշխանը՝ թագավորի բարկությունից ձայնն իջեցնելով, գաղտնիք հաղորդողի զգուշավորությամբ, թերևս և իր նվիրվածությունը արքայի առաջ ընդգծելու ցանկությամբ։

Սակայն Արշակին հաճո չեղան նրա խոսքի խորհրդավոր եղանակն ու շողոքորթ շեշտը։

— Զրուցիր պարզ և մեկին, իշխան։

— Բարի, արքա,— և Վարդը ինքնաբեր աչը դրավ կրծքին,— քանզի հրամայում ես խոսել մեկին, ասեմ արքա. դավ է նյութվում գահիդ շուրջը։

Լռություն իջավ, որի մեջ թագավորն ու սենեկապետը մի երկու վայրկյան անխոս, անշարժ նայեցին իրար, կարծես միմյանց փորձելու համար։

— Դա՞վ,— երկարեց Արշակը աչքերը կծկելով։— Եվ ո՞վ է նյութում։

— Հարազատներդ, արքա։

Նորից լռություն, նորից Արշակը աչքերը սեղմած նայեց իր սենեկապետին, ասես նրա դեմքին նոր մտքեր կարդալու համար։

— Հարազատնե՞ր...

— Այո, արքա,— և սենեկապետը ակամա նայեց շուրջը։— Արքայազն Գնելը՝ թագազուրկ արքայահոր հետ համախորհուրդ։

Այս անգամ Արշակի աչքերի սպիտակուցները փայլատակեցին, և նա բերանը սեղմեց այնպես, որ ներքին ծնոտի մազերը ցցվեցին։

— Դու, իշխան, այդ կասկածը նույն արքայազն Տիրիթի բերանից հայտնեցիր մի ամիս առաջ և քեզ հրահանգվեց հասու լինել և ստուգել...

— Եվ հետամտեցի, արքա,— ձայնն ավելի իջեցրեց Վարդ իշխանը։— Սակայն, ստույգ ոչինչ գտնելով, նույն արքայազն Տիրիթին խնդրեցի հոգ տանել և, ինչ մի նկատելիս, լուր տալ ինձ՝ քեզ հաղորդելու համար...

— Ե՞վ,— ընդմիջեց Արշակն անհամբեր։

— Եվ ահավասիկ եկել է նա կարևոր հայտնություններով։

Թագավորը նստեց մտածումների մեջ և մորուսով ծնոտը հենեց աջին։

— Գնե՞լը...— խոսեց նա փոքր լռությունից հետո։— Այդ պատանին դավո՞ւմ է իմ դեմ։ Անհասկանալի վարմունք... Չէ՞ որ ես, ամեն օրենք խախտելով, թույլատու եղա, որ նա ապրի Կավաշում՝ կույր, գահազուրկ պապի մոտ... և նա, հազիվ երկու ամիս առաջ պսակվելով, պետք է որ զբաղվեր իր հարսով և շնորհապարտ լիներ ինձ։ Սակայն դա՞վ է նյութում իմ դեմ։

Վարդ իշխանը արձակեց մի հուսահատական հոգոց։

— Մարդը, արքա, որքան կարողացել եմ ճանաչել, լինի ռամիկ թե արքայազն, ապերախտ է միշտ։ Դու որ ի վիճակի չեղար գնալ նրա հարսանիքին, գժգոհ է հավանաբար և... սակայն ո՞վ կարող է իմանալ մարդկային հոգին, նրա ձգտումներն ու նկրտումները։ Փա՜ռք, մեծության երազնե՛ր...

Թագավորը ակնարկով իսկ չանդրադարձավ սենեկապետի խոսքերին։ Նա մտատար նայում էր գահասրահի մոզաիկ հատակին։ Բայց մի քանի վայրկյանից գլուխը բարձրացրեց.

— Իսկ արքայազն Տիրիթը, իշխան, ունի՞ ապացույցներ այդ ամենի համար։ Կարո՞ղ ես հավաստել... Սակայն, սպասիր, իշխան,— տեղից արագ վեր թռավ Արշակը։— Այժմ որտե՞ղ է նա ինքը՝ արքայազն Տիրիթը։

Վարդ իշխանը մեղավորի ձայնով հայտնեց, որ Տիրիթ արքայազնը իջևանել է իր տանը և այժմ գտնվում է այնտեղ։

— Եվ ինչո՞ւ չի եկել ինձ մոտ, երբ... բերել է այդօրինակ լուրեր։

— Նա այդ իսկ ցանկանում է հոգևին, արքա։ Եվ այժմ ունկնդրություն է խնդրում՝ իմ միջոցով։ Եթե կհաճես՝ կարող եմ կանչել անմիջապես։

Թագավորը գլուխը շարժեց իբրև համաձայնության նշան։

— Կանչիր, իշխան։ Կուզեի անձամբ լսել նրան և հասու լինել, թե ի՞նչ է կատարվում Կավաշում։

Վարդ իշխանը ոտի ծայրերի վրա դուրս եկավ փութով՝ չդիտես կարգադրելո՞ւ, որ կանչեն արքայազն Տիրիթին, թե ինքը գնաց նրան բերելու։ Իսկ Արշակն սկսեց երթևեկել գահասրահում մտամփոփ մի տեսքով, ինչ նրա թուխ, մազապարար դեմքին տալիս էր հատուկ մռայլություն. դա թերևս նրանից էր, որ հոնքերը թավամազ էին, իսկ հոնքամիջում կար մշտապես մի խոր կնճիռ։

Արշակը բարձրահասակ էր և թիկնեղ. ոտները երկար էին և բարակ. այդ իսկ պատճառով մարմնի վերին մասն ավելի զարգացած էր թվում, քան մեջքից ներքև։ Սակայն նա ոտքերն այնպես ամուր էր դնում, ասես դրանք երկաթից էին. ու ոտները փոխում էր այնպես, կամենում էր կարծես տրորել կամ սեղմել ինչ-որ։ Նրա դեմքը թուխ էր, ոչ մսոտ և փոքր-ինչ ձիգ, ինչ հետևանք էր թերևս սև մորուքի, որն այնքան էլ երկար չէր։ Բայց նրա երեսին առավել ուշագրավ էին աչքերը, որոնց մեջ այդ պահին կար շանթի ու կայծակի պես մի բան, որ փոխնիփոխ հաջորդում էին իրար, փայլեցնելով նրա աչքերի սպիտակուցները։

Մի քանի անգամ ետ-առաջ անելով՝ երբ մոտեցավ գահին, նա կանգ առավ՝ աչքերի սպիտակուցները շողացնելով։ Կանգ առավ ու մի ոտքը դրեց գահի պատվանդանին։

«Գնելը դա՞վ է նյութում... ի՞մ դեմ... Ուզում է դառնալ թագապահ՞նջ... Ինչո՞ւ. հավանաբար մտածում է, որ եթե հայրը չմեռներ, ըստ օրենի, որպես ավագ, նա պիտի լիներ գահակալ... Բայց քանի որ գահն անցել է ինձ՝ Գնելը ցանկանում է ուրեմն...»։

«Դավ է պատրաստվում»,— կրկնեց Արշակը Վարդ իշխա-

նի խոսքը, մտածելով սրամտությամբ, թե ահավասիկ ճշտվում է հավիտենական այն ճշմարտությունը, որ օձը կծում է տաքացնողին... Պետք է ստուգել սակայն, թե այդպե՞ս է արդյոք... Անհավանական չէ, անշուշտ, որ Գնելն ամուսնությունից հետո ձգտի և փառքի. կամենա դառնալ գահակալ... Բոլոր արքայազունների երազն է այդ։ Բայց Գնելն անկախ մենակ չէ իր ձգտումի մեջ... Եվ Արշակին թվում էր, թե նրա ետև կանգնած են պնշուշտ իր հակառակորդները, գուցեև թշնամիները։ Առաջինը թեկուզ իր հայրը, որ տակավին չի կամենում հաշտվել իր գահազրկության հետ և թերևս նա է դրդում Գնելին այդ քայլն անելու...

«Այո, հայրս»...— և Արշակը հիշեց թագաղուրկ հորը՝ Տիրան արքային, որին ինքը բնակության համար հատկացրել է Կավաշ ամրոցը։ Սակայն կույր գահընկեցը, որքան լսում էր Արշակը, դժգոհ էր, թե ինչո՞ւ թագավոր որդին չէր թողել նրան մայրաքաղաքում, մոռանալով, որ գահընկեցին սովորաբար հեռու են պահում արքունիքից... Իսկ Արշակը կարծում էր, որ նա Վաղարշապատում մնալով պիտի խանգարեր իրեն, միջամտելով ամեն խնդրի ու ձեռնարկի... ուստի և զարմանում էր, որ հայրը չէր հասկանում, թե մայրաքաղաքում ապրելը առավել ծանր կլիներ նրա համար։ Շատ բան պիտի լսեր և, սրտնեղելով, դժգոհեր... Դժգոհ է անշուշտ և հիմա։ Չկարողանալով հավանաբար իր դժգոհությունը հայտնել որևէ կերպ՝ նա ուրեմն թոռանը՝ Գնելին, մղում է թագապահանջության դավի, մտածելով երևի թագավորեցնել նրան անվանապես, որպեսզի կառավարի ինքը...

«Բայց այժմ առավել լավ է լսենք իրեն՝ Տիրիթին,— ասաց Արշակը մտովի։— Դրանից և կպարզվի, թե ի՞նչ է կատարվում Կավաշում և ո՞վ է կատարում»։

Եվ ահա, այդ խոսքերին ասես ի պատասխան, ներս մտավ սենեկապահ ծերունին՝ ականջներից ներքև իջնող ճերմակ մազերով և ձեռքը կրծքին խոնարհում արավ.

— Արքայազն Տիրիթ և Վարդ իշխան։

— Կարո՞ղ են,— կանգնեց թագավորը գահասրահի մեջտեղը այնպես, ինչպես կար՝ նույն գոտեպինդ կապան հագին, գլուխը բաց և դեմքը տարակույսից ու կասկածից մռայլ։

Երբ դռան ծանրագին վարագույրը ետ գնաց՝ ներս մտավ

նախ թիկնոցով մի երիտասարդ, ապա՝ Վարդ իշխանը։ Երիտասարդի դեմքն արևահար էր, թուխ մազերն ունեին թեթև գանգուրներ, որոնք փնջի պես բոլորում էին նրա գլուխը, հասնելով մինչև բաց, անօձիք վիզը։ Ներս մտնելով՝ նա թափառուն հայացքը պտտեց նախ գահասրահում և ապա աչքերը խոնարհեց ու աչը բարձրացրեց։

— Ողջո՞ւյն արքային,— ասաց նա ու կանգ առավ տեղում։

Արշակը աչքերը կկոցելով զննաբար նայեց երիտասարդին և ասաց.

— Առաջացիր, Տիրիթ։ Հուսամ գալուստդ բարի՞ է։

— Անշուշտ, արքա-հորեղբայր,— պատասխանեց Տիրիթը նույն թափառ հայացքով շուրջը նայելով. թվում էր՝ ստուգում էր, թե ուրիշ մեկը չկա՞ ներսը և ականջներն սպասելով, որ նախ հարցում անեն իրեն։

Եվ թագավորը, ասես այդ հասկանալով, հարցրեց.

— Ինչպե՞ս է ապրում արքահայրը։

— Ծերությունից և իր վիճակից դժգոհ, արքա՛,— խոնարհած կոպերը բարձրացրեց Տիրիթը։

— Իսկ նորապսակ Գնե՞լը։

— Պատրանքներով և երազներով,— ասաց Տիրիթը մեկեն, ասես այդ հարցումի համար նախապատրաստված։

— Պատրանքնե՞ր,— երկարեց թագավորը, աչքերն ավելի կկոցելով, կարծես երիտասարդի ներսը թափանցելու համար և ապա շարունակեց ձայնին մեղմություն տալով։— Իսկ ի՞նչ պատրանքներ են դոքա։

— Պատրանքներ մեծության ու փառքի,— վրա բերավ Տիրիթը առանց հապաղելու։

Արշակը լարվեց, բայց հետաքրքրությունը թաքցնելու համար նստեց և ոտքը գցեց ոտքի վրա։

— Նախ նստիր, Տիրիթ, և խոսիր ավելի համարձակ, մի զգա քեզ օտարի մոտ,— նկատեց Արշակը չգիտես նեղվելո՞վ երիտասարդի անորոշ խոսքերից, թե անհամբեր մի բան իմանալու մտքից։

Տիրիթը նստեց առաջին պատահած արծաթազարդ եռոտանուն, թիկնոցի փեշերը ծնկների վրա հավաքելով։

— Այժմ զրուցիր, թե ի՞նչպես է անցնում իր օրերը Գնելը ամուսնությունից հետո։

— Գնելը, արքա-հորեղբայր... ամուսնությունից հետո զբաղվում է հրավերքներով և զինախաղով,— սկսեց Տիրիթը հոնքերի տակից հորեղբորը նայելով։

— Եվ ովքե՞ր են մասնակցում այդ խաղերին ու հրավերքներին։

— Որդիները այն նախարարների, ովքեր եղած են հարսանյաց հանդեսին և ովքեր... դժգոհ են քեզնից։

— Ա՞յն է։

— Կամսարական, Վահևունի և Համունի սեպուհները։

— Այլ ովքե՞ր։

— Երբեմն և Արծրունյաց և Աբեղենից, Գաբեղենից սեպուհները։

— Եվ զբաղվում են զինախաղո՞վ։

— Երբեմն և որսագնացությամբ, արքա,— ասաց Տիրիթը և լռեց՝ խուսափուկ հայացքը նորից հածելով գահասրահում։

— Այդպե՞ս...— Արշակը նույնպես լռեց և դարձյալ, նեղացրած աչքերով սկսեց զննել եղբորորդուն՝ նրա թիկնոցը, տակի ոսկերիզ կապան և անգամ դեղնափայլ մույկերը։ Մի վայրկյան հետո սակայն նա աչքերը բացեց, սպիտակուցները փայլեցնելով։— Ասա ինձ, սիրելիդ իմ Տիրիթ, այդ սեպուհները ժամանում են ինքնաբե՞ր, թե միշտ Գնելի հրավերով։

— Երբեմն հրավերով, երբեմն ինքնաբեր, արքա։ Հավաքվում են, զրուցում...

— Այդպե՞ս,— Արշակը նորից սեղմեց կոպերը։— Իսկ ի՞նչ է նյութը նոցա զրույցի։

— Նոցա զրույցի խորհուրդին ես հասու չեմ, արքա, քանզի զրուցում են հանապազ առանձին։

— Առանձի՞ն...

Թագավորն ուղիղ նայեց Տիրիթի աչքերին, որոնք սակայն Տիրիթն իջեցրեց իսկույն, ասես չկարողանալով տանել հորեղբոր սուր հայացքը։

— Իսկ ինքդ երբեք մասնակից չե՞ս այդ զրույցներին։

— Թնավ, արքա։ Նոքա այդ անում են գաղտնածածուկ,

Գնելի հարկաբաժնում։ Ժամանողն իջևանում է նորա մոտ, հյուրասիրվում... Ինձ մասնակից են անում միայն զինախաղերին։ Գիտեմ միայն, որ երբ խաղի միջոցին Գնելը հաջողակ սկավառակ է նետում կամ նշան զարկում, հյուրերը, սեպուհները նրան առնում են ձեռքերի վրա և գոչում. «Կեցցե՛ Գնելը, կեցցե՛ մեր արքայազն տերը»... և նման խոսքեր։

Այս անգամ Արշակը հոնքերը վրա բերավ իրար, որից նրա հոնքամիջի կնճիռն ավելի խորացավ.

— Այդպե՞ս...

Տիրիթն այդ բացականչի վրա թագավորին նայեց այնպիսի հայացքով, որի մեջ կարդացվում էր, թե նա սպասում է, որ արքա-հորեղբայրը հիմա կբարկանա, բայց Արշակը խոսեց բոլորովին այլ, կողմնակի նյութից։

— Իսկ ինչպե՞ս է Գնելի հարսի անունը։

— Փառանձեմ։

— Այո, Փառանձե՛մ։ Լսել էի, սակայն... մոռացա,— շարունակեց Արշակը մտացրիվ։ Իսկ Տիրիթը զարմացած, հետաքրքրված նայեց նորից հորեղբորը մի հայացքով, որի մեջ կարելի էր կարդալ, թե ինչո՞ւ է արդյոք նա հետաքրքրվում Գնելի հարսով։

— Իսկ Գնելը սիրո՞ւմ է իր հարսին,— կրկին հետաքրքրվեց Արշակը։

— Հարկավ, արքա։

— Այդպես, այդպես,— կրկնեց թագավորն իր սիրած բառը։— Եթե սիրում է իր հարսին, իր Փառանձեմին, ուստի և, որպես նորապսակ, չպետք է զբաղեր այդ, ինչպես դու ասացիր, գաղտնածածուկ գործերով։ Այնպե՞ս է։

— Անշուշտ, արքա, սակայն...— Տիրիթը կամեցավ ինչոր բան ասել, բայց թագավորն իսկույն ընդմիջեց նրան։

— Սակայն ինչպե՞ս է նայում այդ ամենին Տիրան պապը։

— Պապն ուրախ է, արքա-հորեղբայր։ Ուրախ է, որ Գնելին շրջապատում են սեպուհներ,— աշխուժացավ Տիրիթը, որ խոսքը նորից դարձավ Գնելին։— Պապը մինչև իսկ Գնելին ու սեպուհներին հաճախ կանչում է իր մոտ և զրուցում երկար։

Արշակը լսել էր, որ թագավորահայրը սիրում է սպանված ավագ որդու ժառանգին՝ Գնելին. սիրում այնչափ, որ նրա հարսանիքի օրը իր բաժին կալվածներն ու հարստությունը

նվիրաբերել է Գնելին, իսկ Գնելը Բյուզանդիոնից բերած ոսկեղենն ընծայաբերել է հարսանիք եկած նախարարներին և նրանց որդիներին, ահա ինչու և ամենքը սիրում են նրան և իրենց որդոց ուղարկում նրա մոտ՝ զենքի վարժության։ Բայց այսօր առաջին անգամն էր լսում, որ գահաղուրկ հայրը նրանց կանչում է զրույցի։

— Այդպե՞ս...— Արշակը ծնոտներն այնպես սեղմեց իրար, որ ներքին շուրթից ցած եղած մազերը նորից ցցվեցին ասեղների պես։

Նա լռեց քանի մի վայրկյան, ապա ելավ և իր ոտքերի տինդ քայլվածքով մի փոքր գնաց-եկավ սրահի երկայնքով ու կրկին մոտեցավ Տիրիթին։

— Ուրեմն այդ ամենից եզրակացնո՞ւմ ես, որ նոքա չար են խորհում իմ դեմ, Տիրիթ։ Այո՞։

— Անշուշտ եմ, արքա։— Տիրիթն ընդհատեց խոսքը և, նոր բան հիշելով ասես, ավելացրեց.— Բացի այդ, արքա, Գնելը Բյուզանդիոնում ունի շատ բարեկամներ, ստանում է նամակներ...

Արշակը նորից սկսեց քայլել մտածումների մեջ, այս անգամ մատներով ձգելով կարճ մորուքի մազերը։ Նրան հայտնի էր գահազուրկ հոր զժգոհությունն իրենից. գիտեր, որ նա գահաժառանգ էր որոշել Գնելի հորը՝ ավագ որդուն, բայց նա մեռավ Բյուզանդիայում... և հիմա անհավանական չէ, որ հայրը Գնելին լարի իր դեմ... Բայց իրո՞ք այդպես է,— կասկածում էր նա։

— Ասացիր չար են խորհում, Տիրիթ,— նորից կանգ առավ Արշակը Տիրիթի դիմաց։— Կարո՞ղ ես ասել ի՞նչ է խորհում ինքը՝ Գնելը։

Տիրիթը շփոթվեց մի ակնթարթ, հարցն անսպասելի էր և կտրուկ։

— Գնե՞լը...— Տիրիթը թարթեց աչքերը.— Նա հավանաբար ցանկանում է գահը ժառանգել մեռած հոր փոխարեն՝ նախարարների և բյուզանդացի բարեկամների ձեռնտվությամբ։

Վարդ իշխանը, որ զրույցի ընթացքում մնում էր անշարժ, այս խոսքերի վրա աչքերը չռեց. իսկ Արշակը սեռուն նայեց եղբորորդուն։

— Ունե՞ս ապացույցներ։

— Այո, արքա։ Եթե բարի է խորհում, ինչո՞ւ համար գեթ մի անգամ չի այցելում քեզ։

— Չկա գուցե առիթ, կամ՝ չունի ասելիք։

— Ոչ, արքա։ Նա գոռոզ է, հպարտ իր կրթությամբ, նաև նրանով, որ հայրը պիտի լիներ թագավոր Հայոց, եթե չմեռներ։ Պսակից հետո մանավանդ դարձել է առավել բարձրահոն... Գոռոզանում է գուցե, որ կայսրը շնորհել է իրեն հյուպատոսի տիտղոս...

Այստեղ Տիրիթը, նկատելով արքայի՝ իր վրա սևեռած հայացքը, լռեց։ Իսկ Արշակը, նայելով նրան ևս մի վայրկյան, հարցրեց անսպասելի.

— Եվ դու, Տիրիթ, չե՞ս չարախոսում արդյոք։

Տիրիթը շառագունեց։

— Երդվում եմ, արքա, իմ՝ արքայազնիս պատվով և քո ծիրանիով։

Թագավորի դեմքով ստվեր անցավ, և նա գլուխն իջեցրեց, որ նշան էր, թե տեսակցությունն ավարտվեց։ Տիրիթն այդ զգաց և աչքը բարձրացրեց։

— Կենդանություն արքային,— ասաց նա ետ-ետ գնալով, ինչպես կարգ էր թագավորից հեռանալիս։

Նա գուրս եկավ խոնարհումով. նրա հետ և Վարդ իշխանը։

* * *

Երբ նրանք ելան և դուռը ծածկվեց նրանց ետև, Արշակին պաշարեցին վաղուց ի վեր նրա հոգում նիրհած կասկածները և ինչ-որ նոր մտքեր ու տարակույսներ։ Լսածը որքան անակնկալ, նույնքան և վրդովիչ էր։ Գնելը Բյուզանդիոնում ունի բարեկամնե՞ր... արդյոք նա այնտեղից չի՞ եկել հատուկ նպատակով՝ գահը գրավելու մտադրությամբ... Արդյոք այդ նպատակով չէ՞ Բյուզանդիոնից բերած ոսկեղենը ընծայաբերել իր բարեկամ նախարարներին և այդ... թագավորից դրժգոհ նախարարներն անշուշտ կանցնեն նրա կողմը։ Հարկավ... Նրանք եթե մինչև այսօր, մինչև այժմ լուռ էին, այսուհետև կարող են ելնել իր դեմ... Ահա ինչո՞ւ Կամսարա-

կանը և Վահնունին չեն զիջում իրենց բերդերը,— մտածում էր Արշակը գահասարահում երթևեկելով, երբեմն միայն կանգ առնելով ու պատուհանից բակի ծառերին նայելով։

Ինչպես փոքր առաջ Վարդ իշխանի հետ խոսելիս, այնպես էլ այժմ նայում էր Արշակը այդ ամենին և ոչինչ չէր տեսնում։ Նա տարված էր իր մտքերով, զարմացած էր իր լսածով։ Նա գտնում էր, որ բնավ էլ անհավանական չէ մի այդպիսի չար խորհուրդ... չէ՞ որ Գնելը, Բյուզանդիայից վերադառնալով, իրոք չիջևանեց իր մոտ՝ Վաղարշապատի պալատում, այլ գերադասեց Կավաշը՝ կույր պապի դղյակը... Բայց դա թերևս այն պատճառով, որ գիտե, թե արքայազուններին արգելված է բնակվել մայրաքաղաքում։ Սակայն չէ՞ որ այցելությունը արգելված չէ. Գնելը պետք է իմանար այդ...

Եվ Արշակին թվում էր, թե այդ վարմունքի մեջ եղել է անշուշտ մի խորհուրդ. դիտավորյալ անտեսում գուցե, ինչ և կապվում է Տիրիթի հաղորդածների հետ, եթե միայն նրա խոսքերը չափազանցություն չեն կամ սուտ... Պետք է ասել, որ Արշակը անվերապահ չէր հավատում Տիրիթին և մտածում էր, որ նա գուցեև ճիշտ չէր, գուցեև դատել է արտաքուստ, գուցեև զժտվել է Գնելի հետ, զրպարտում է նրան՝ թագավորի համակրանքին արժանանալու... Բայց ինչո՞ւ պիտի զրախոսեր Տիրիթը,— մտածում էր Արշակը։— Կարող էր գուցե սխալվել, բայց ոչ ստել կամ զրպարտել, քանզի պիտի խորհեր, որ իր հաղորդածը ինքը՝ թագավորը կարող է ստուգել և... զրախոսության կամ զրպարտության դեպքում՝ պատժել չարաչար։ Ո՛չ, հավանաբար, կա մի բան...

«Դավ,— ասում էր Արշակը մտքում,— կարող է լինել և ճշմարիտ դավ։ Եվ դա անշուշտ կատարվում է արքայահոր դրդումով... Պարզ է հիմա, թե ինչո՞ւ էր արքահայրը ցանկություն հայտնում, անգամ խնդրում, որ Գնելը, Բյուզանդիայից դարձին, բնակվի իր մոտ... Ու ես ընդառաջ գնալով նրա ցանկության, խախտեցի հին կարգը, թույլատու եղա, որ Գնելը բնակվի Կավաշում և ահա...»։

Այստեղ թագավորն ընդհատեց իր մտածումները, որովհետև այդ պահին դռան վարագույրի ետևից լսվեց մի նուրբ ձայն, որ ասում էր հունարեն.

— Կարելի՞ է, բազիլևս։

Արշակը դադարեցրեց երթևեկը, շտկեց նախ կապայի օձիքը, ապա կարմիր գոտին ու պատասխանեց նույնպես հունարեն.

— Համեցիր, բազիլեյա։

Հանդարտորեն ներս մտավ համաչափ կազմվածքով մի երիտասարդ կին՝ կապույտ աչքերի պաղ հայացքով ու զուսպ շարժումներով, իրանը շիտակ, մազերը հարթ-հավաք սանրած ու ոսկի հերկալներով ամրացրած։ Նրա կաթնաճերմակ դեմքը ձվաձև էր, հունական ուղիղ քթով և բարձրաթառ բարակ հոնքերով։

Օլիմպիա թագուհին էր։

Ներս մտնելով՝ նա մի վայրկյան կանգնեց դիք և ապա՝

— Ինչպե՞ս է բազիլևսի տրամադրությունը,— խոսեց նա հունարեն, նուրբ, գրեթե նվագային մի ձայնով, որ դիմացինին ակամա տրամադրում էր լինել սիրալիր ու ուշադրաստակամ։

Բայց Արշակը հապաղեց իր պատասխանով։

Թագուհին նկատեց այդ. նկատեց և այն, որ նա հանգիստ չէ և մռայլ է անսովոր։

— Մի՞թե վատ լուրեր, Արզաս,— ասաց թագուհին ըստ բյուզանդացիների սովորության շ-երը միշտ ս, առհասարակ կոշտ տառերը փափուկ արտասանելով։

Օլիմպիայի վերին շուրթը կարճ էր, խոսելիս միշտ ջանում էր, որ այն ատամներից վեր չթռչի և լնդերը բացի։

— Այո, բազիլեյա,— խոսեց Արշակը տրտում շեշտով։— Վիրավորվել է իմ զորավարներից մեկը։

— Եվ որտե՞ղ։

— Պարսից սահմանի վրա։

Թագուհին հառաչեց.

— Ա՛խ, այդ պարսիկնե՛րը... Երբեք հանգիստ չեն մնում։ Մի՞թե պատերազմ են սկսել, բազիլևս։

— Ոչ, բազիլեյա։ Պատահական բան է։ Ընկել է ձիուց և ոտքը վնասել։

— Ա՛հ,— թեթևություն զգաց թագուհին և, առաջ գալով, փարվեց Արշակի թևին։— Ջարժե տխրել դորա համար, բա-

զիլևս։ Հասարակ բան է, կարելի է բուժել։ Իսկ ես կարծեցի պատերազմ է և երկյուղը համակեց ինձ։

— Ոչ, Օլիմպիա. պատերազմ չկա առայժմ, սակայն...— սկսեց Արշակը մտահոգ և իսկույն լռեց։

Թագուհին ուշիմ հայացքը հառեց նրան։

— Սակա՞յն,— և նա հարցական սպասեց, թե ամուսինը հիմա ավելի կպարզի իրեն զբաղեցնող միտքը։

Արշակը սակայն մնաց լուռ և դարձյալ մտահոգ։

Այդ նկատելով՝ Թագուհին շարունակեց.

— Իսկ նախարները հանգի՞ստ են։

Թագուհին իր հունարենի մեջ հաղվադեպ գործ էր ածում նաև մեկ-երկու հայերեն բառ, ինչ սովորել էր հայոց արքունիքում. այդ բառերից էր և նախարար բառը, որ նա գործ էր ածում կրճատ,— նախար կամ նախարներ, որովհետև հայոց բառերը նրան թվում էին շատ երկար, ինչպես խոստովանել էր մի անգամ։

— Նախարարնե՞ր,— երկարեց Արշակը։— Այո։ Նոքա հանգիստ չեն գուցե, բայց առայժմ լուռ են, բազիլեյա։ Դու լսե՞լ ես որևէ բան։

— Ոչ, բազիլևս։ Ես կուզեի միայն, որ հանգիստ լինի Արմենիան, քո տերությունը, որպեսզի հանգիստ լինես նաև դու, նաև ինքս։ Վասնզի, բազիլևս, քո հանգիստը իմ հանգիստն է,— և Թագուհին մեղմ ժպտաց, ապա շարունակեց ավելի նուրբ ձայնով։— Ճշմարիտն ասեմ, բազիլևս, երբ տեսնում եմ ճակատդ մռայլ՝ տագնապը համակում է հոգիս։ Չէ՞ որ, քեզնից բացի, ես այստեղ չունեմ և ոչ մի հարազատ, ոչ մի մերձավոր...

— Օլիմպիա,— և Արշակը, վանելով կարծես իրեն պաշարող մտքերը, մոտեցավ Թագուհուն։— Մի՞թե պալատական տիկինները անուշադիր են և չեն զբաղեցնում քեզ։

— Ոչ, բազիլևս, նոքա և՛ ուշադիր են, և՛ զբաղեցնում են ինձ սիրալիր, սակայն... չէ՞ որ նոքա չեն հասկանա իմ հոգին... Այո, բազիլևս, միայն դու ես հասկանում իմ հույզերը, իմ խոհերը, ուստի և կուզեի, որ երբեք չտխրես և ինձ մենակ չթողնես։

Արշակի դեմքին ժպիտի նման մի բան շողաց, որից և

փոխվեց նրա աչքերի սպիտակուցների փայլը, և նա աջ ձեռքով գրկեց Թագուհու մեջքը։

— Դու եղիր միշտ հանգիստ, Օլիմպիա։ Դու պարտավոր ես լինել հանգիստ, և իմ տխրությունը թող երբեք չհուզի քեզ։ Երկրի տերը կարող է և՛ տխրել, և՛ հուզվել, և՛ զայրանալ, սակայն դա առիթ չպիտի տա քեզ ես հուզվելու։

Թագուհին զննաբար նայեց ամուսնուն։

— Հապա այն ասպետը, Արզաս, որ սրարշավ եկավ առավոտը վաղ... Ես իմ դաշտահայաց պատուհանից տեսա նորան և լավ ինչ չգուշակեց սիրտս։ Թվաց ինձ՝ սուրհանդակ է, վատ լուրեր է բերում սահմանից կամ որևէ մի նախարից։

— Ոչ, Օլիմպիա։ Նա սուրհանդակ չէր։ Դու ճանաչում ես նորան։ Նա իմ եղբոր որդին էր՝ արքայազն Տիրիթը։ Եկել էր այցելության և... խնդրելու, որ թույլատու լինեմ, որպեսզի առժամ մնա կույր պապի մոտ։

— Եվ դու թույլատրեցիր անշուշտ։

— Այո, հարկավ։

— Տիրի՜թ,— երկարաձգեց Թագուհին հոնքերը պռստելով։— Գիտեմ, այո։ Բայց մի՞թե նա լավ մարդ է, բազիլևս, որ արտոնում ես բնակվի մայրաքաղաքին այդքան մոտիկ։ Չէ՞ որ Արմենիայի օրենքով...

— Այո, Օլիմպիա, արքայական գերդաստանի անդամները, արքայազունները, բացի գահաժառանգից, չունին իրավունք մայրաքաղաքին մոտիկ ապրելու։ Այդպես է օրենքը և Բյուզանդիայում։

— Գիտեմ, բազիլևս։

— Բայց ես ահա այս Տիրիթին և Գնելին...

— Նա, որ ամուսնացավ վերջերս։ Լսել եմ։

— Այո, նա,— շարունակեց Արշակը շուրթերը գրեթե սեղմելով։— Այդ երկուսին ես արտոնել եմ առժամ մնալ Կավաշ դղյակում՝ կույր պապի մոտ։ Այնուհետև կխորհենք, թե ո՞ւր գնան մշտապես բնակվելու։ Ուստի և դու կարող ես հանգիստ լինել, Օլիմպիա։

— Այժմ հանգստացա, բազիլևս,— և Օլիմպիան ժպտաց, թույլ լտալով վերին շուրթը շատ բարձրանա։— Իսկ ե՞րբ ես մեկնում նոր քաղաքի շինությունը տեսնելու։ Այսո՞ր, վա՞ղը։

— Այդ կպարզեմ այսօր, բազիլեյա։

— Բայց, կարծյոք, որոշված էր արդեն։

Արշակը լրջացավ և խուսափողական պատասխան տվեց.

— Տակավին պետք է խորհել, Օլիմպիա։ Կան քանի մի գործեր անհետաձգելի, կան հանգամանքներ...

— Իսկ ինձ հայտնեցին, թե ամեն ինչ պատրաստ է մեկնելու համար։

— Այդ շուտով կպարզեմ, Օլիմպիա։

— Եվ ինձ կիմացնե՞ս հարկավ։

— Անշուշտ։

— Ես եկա միայն այդ իմանալու համար,— գլուխը նազանքով թեքեց Թագուհին։— Այժմ կարող եմ գնալ իմ հարկաբաժինը։

Արշակը խոնարհում արավ նրան բյուզանդական արքունիքում ընդունված ձևով՝ աջը սրտին մոտեցնելով։

Թագուհին դուրս եկավ հանդարտ, համաչափ քայլերով։

Իսկ Արշակը մի փոքր մնաց նույն տեղը, ապա, երբ լռեց Թագուհու ոտնաձայնը, ծափեց թեթև։ Ներս մտավ նույն բարետես ծերունի սենեկապահը՝ պալատական կարգերին սովոր շարժումներով ու խոնարհումներով։

— Հրավիրիր Վարդ իշխանին։

Երբ ծերունին դուրս եկավ՝ Արշակը տնքաց բարկացած։

— Կրկին խանգարվեց...

Նա վաղուց պատրաստվում էր այսօր-վաղը մեկնել Արշակավան, մնալ մի քանի օր, ապա վերադառնալով գնալ Շահապիվան, ուր շուտով սկսվելու էին Նավասարդյան տոները, որոնց ներկա էր լինում միշտ՝ խաղեր և պարեր տեսնելու։ Դիտելու էր նաև արքունի զորքի այն մասը, որ ամառամեջ լինում էր այնտեղ։ Բայց ինչպե՞ս գնար հիմա։ Կարելի՞ էր,— մտածում էր նա հոնքերն իրար բերած։

Ներս մտավ Վարդ իշխանը առաջվա պես դիք ու խրոխտ, բայց տարակույսը աչքերում։

— Ունկնդիր եմ, արքա։

— Վաղը, իշխան, մեկնիր Կավաշ և ստուգիր այն ամենը, ինչ լսեցինք միասին արքայազն Տիրիթից։ Այցիր նաև արքայահորը. տուր նրան ինձնից ողջույն և հասու եղիր, թե ի՞նչ է խորհում ծերունին։ Կտանես նորան և ընծաներ, ինչպես միշտ, ու իր սիրած մրգերը։

— Բարի է, արքա,— գլխով թեթևակի խոնարհում արեց Վարդ իշխանը։— Սակայն մեկնո՞ւմը Ավան։

— Այդ հետո, իշխան։

— Սակայն ամեն ինչ պատրաստ է, արքա։

— Հայտնիր, որ մեկնումը հետաձգվում է առայժմ,— ասաց Արշակը միշտ նույն տեղը կանգնած։ Ապա գլուխը տարուբերեց անխոս. նա ցավում էր, որ խանգարվեց իր մեկնումը Ավան, բայց անչափ կարևոր էր ստուգել Տիրիթի հայտնությունը. գուցեև իրոք դավ է նյութվում, որը պարզելը նա համարում էր ավելի անհրաժեշտ ու անհետաձգելի, քան Ավան մեկնելը։

Վարդ Մամիկոնյանը կարծես ըմբռնեց այդ։

— Բարի է, արքա,— ասաց նա ետ-ետ գնալով և երբ մոտեցավ դռանը՝ ավելացրեց,— վաղը առավոտյան ես կմեկնեմ Կավաշ։

— Այդպես։ Եվ հետևյալ օրը երեկոյան լուր կբերես ինձ։ Իմացիր նաև, թե Գնելն ի՞նքն է հրավիրում այդ սեղուհներին, թե նոքա այցում են ինքնաբեր։— Արշակը մի վայրկյան լռեց մտածումների մեջ։— Այնուհետև, իշխան, կուզեի, որ մեր զրույցը և քո Կավաշ մեկնելու նպատակը չիմանա ոչ ոք։

— Բարի է, արքա։

«Կրակը պետք է հանգցնել, քանի դեռ կայծ է,— ասաց Արշակը մտքում,— այլապես նա կդառնա հրդեհ... Այցը Ավանին՝ կարելի է հետաձգել, բայց հրդեհի մարումը՝ երբեք»...

Սակայն նրան վիճակված չէր շուտով այցել Ավանը, պարզվեցին նոր հանգամանքներ և դարձյալ հետաձգեցին նրա ուղևորությունը դեպի կառուցվող քաղաքը։

* * *

Մինչ պալատում տեղի էր ունենում այս զրույցը թագավորի և Վարդ իշխանի միջև, արքայազն Տիրիթը իր սև նժույգը հեծած, թիկնապահները հետևից, անշտապ գնում էր Կավաշ տանող ճանապարհով, որը նախ անցնում էր մայրաքա-

գաքը շրջապատող այգիների միջով, ապա ձգվում-գնում դեպի Արագածոտնի առապարները։

Գնում էր Տիրիթը իր թիկնապահներից բավական առաջ ընկած և հրճվանքով մտածում, որ թագավորը իր հաղորդածին հավատաց անշուշտ։ Նա գիտեր, որ հորեղբայրը կասկածոտ է, որ նա կասկածում է անգամ կույր արքայահորը, թե արդյոք դավեր չի՞ նյութում իր դեմ...

Վերհիշելով իր զրույցը թագավորի հետ և թագավորից ստացած տպավորությունը՝ Տիրիթը համոզված էր, որ հորեղբայրը հիմա ալեկոծվում է կասկածների մեջ, և համենայն դեպս անհետևանք չի թողնի այդ... Այո, հորեղբայրը Գնելին չի ների, որ նախարարների որդիներով ու սեպուհներով շրջապատում է իրեն։ Այո, չի ների և... Փառանձեմը կմնա այրի...

Գնում էր Տիրիթը նժույգի վրա և գոհությամբ մտածում, որ թագավորը լիովին հավատաց իր ասածներին։ Եթե չհավատա անգամ, չի կարող հանգստանալ և, անշուշտ, կցանկանա ստուգել լսածը... Մտածելով այս՝ Տիրիթը միևնույն ժամանակ գտնում էր, որ տեղին ակնարկեց, թե շատ սեպուհներ, զինախաղի գալով, Գնելի հետ ունենում են գաղտնախորհուրդ զրույցներ։

«Այս բանումս արդեն ես սուտ չեմ լինի,— մտովի հանգստացնում էր Տիրիթն իրեն,— թեկուզ ստուգելու գա Արշակ թագավորն ինքը»։

Այո, Տիրիթը վստահ էր, որ իր հայտնությունից հետո թագավորը չի հանգստանա և շուտով մեկ կամ մի քանի մարդ կուղարկի՝ իր հաղորդածը ստուգելու։ Եվ հավանաբար կժամանի նույն ինքը Վարդ իշխանը. չէ՞ որ մշտապես նա է գալիս արքայահորը տեսնելու և նրա ցանկություններն իմանալու...

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Հետևյալ օրը, արևը դեռ չծագած, նույն ճանապարհով, որով գնաց Տիրիթը, չորս հեծյալ թիկնապահի ուղեկցությամբ, իր կապուտակ նժույգը նստած Մամիկոնյան

Վարդ իշխանը արքայի հրամանով գնում էր Կավաշ։ Գնում էր նժույգի վրա դիք նստած։ Բացի թիկնապահներից, նրա հետևից գնում էին չորս բեռնաբարձ ջորիներ, որ նվերներ էին տանում կույր արքայահորը։ Ինչպես գահազուրկ արքային հատկացված էր մի ամբողջ գավառ իր բերքով ու հասույթով, այնուամենայնիվ Արշակը ամեն ամիս իր համբարակներից նրան ուղարկում էր ամեն տեսակ պաբեն ու նպար։ Այժմ սակայն Վարդը, կասկած չհարուցելու համար, Կավաշ էր գնում ընծաների պատրվակով ու մայրաքաղաքից դուրս գալու պահից նրա միտքն զբաղված էր իր առաքելության հոգսով. կհաջողի՞ արդյոք իմանալ որևէ բան...

Հիշելով Տիրիթի ասածները՝ նա խորհում էր, որ եթե ճշմարիտ լինի այդ ամենը, նշանակում է, թե Գնելը ձգտում է իրոք Արշակին հակառակ նախարարների և բյուզանդացիների ձեռնտվությամբ դառնալ թագավոր հայոց... Ու եթե,— մտածում էր Մամիկոնյան իշխանը,— կատարվի մի այդպիսի բան, Գնելը, անտարակույս, աշքունիքից կհեռացնի թե՛ իրեն և թե՛ այսօրվա բոլոր պալատականներին ու ավագներին...

Բայց դա հավանակա՞ն է արդյոք... Վարդը գիտեր Գնելին. նա այն տպավորությունն ուներ, թե Գնելը համեստ երիտասարդ է։ Բայց... մարդն անքննելի է... «Պետք է ստուգել տակավին»,— մտածեց Վարդ իշխանը և բնազդաբար մտրակեց նժույգը։

Չնայած այս թերահավատ մտքերին՝ Վարդն այնուամենայնիվ չէր կասկածում, թե Տիրիթը չարախոսեր հորեղբոր որդուն՝ Գնելին։ Փաստ և հիմք չունեցողը հազիվ թե համարձակվեր այդպիսի հայտարարություն անել, այն էլ թագավորի մոտ...

Ու Վարդն ակամա ուսերը վեր քաշեց ձիու վրա։

«Հազիվ թե հանդգներ,— ասաց նա մտքում։— Այստեղ անշուշտ կա մի ինչ... Եթե բյուզանդական արքունիքը պատանդ Գնելին թույլ է տվել գալ հայրենիք և շնորհել է նրան հյուպատոսի տիտղոս, պետք է ուրեմն մակաբերել, որ նրանք ունեցել են լուրջ նպատակներ... Թերևս խորհել են, որ եթե թագապահանջը լինի երկրում՝ առավել կդյու-

բանա նրան օգնելու գործը... Գուցեև հայրենի դժգոհ նախարարներն են դիմել բյուզանդական կայսեր, որ Արշակի փոխարեն թագավորեցնել կուզեին Գնելին, պատճառ հորինելով, թե Արշակը հավատարիմ չէ կայսեր և նման բաներ... Ու խորամանկ Վաղես կայսրը հարգել է նրանց ցանկությունը. այլապես ինչո՞ւ պետք է թողներ Գնելին, այն էլ բացատրելով, թե թողնում է Արշակի պատվին... Անհասկանալի է. դժգո՞հ է կայսրը Արշակից, վստա՞հ չէ նրա հավատարմությանը... Այդ ժամանակ հապա Օլիմպիա թագուհի՞ն»...

Վարդ իշխանի միտքը խճճվում էր կասկածների ու ենթադրությունների մեջ։

«Դժվարինս է հասկանալ բյուզանդական խաղերը նենգ», — նորից խոսեց նա մտովի, նայելով ճանապարհի հեռուն, տեսնելու, թե չի՞ երևում արդյոք Կավաշի ամրոցը։

Ոչ. երկու կողմը տակավին լեռնուտներ էին, և ճանապարհը հետզհետե ոլորվում-բարձրանում էր վեր՝ գալարագնաց օձի նման։ Սկսվող աշնան առավոտի հստակ օդում ճախրում էին բազմատեսակ թռչուններ։ Արևի ծիրանագույն ճառագայթները խաղում էին ծառերի տերևների ու կանաչների վրա և Արագածից իջնող ջրերում, որոնք երբեմն ցոլցլում էին այնպես, որ թվում էր ոչ թե ջուր, այլ հալած ոսկի է հոսում ցած։

Թեև Վարդն առաջին անգամը չէր գնում այդ ճանապարհով, բայց երբ հասավ մի բլրի, ուր ուզին թեքվելու էր նրա ետև, նա նայեց ետ մնացած թիկնապահներին ու ձին կանգնեցրեց, որ նրանք մոտենան. ամայի ձորը կարող էր վտանգավոր լինել... Վարդ իշխանն այն կարծիքի էր, թե պալատականը պետք է զգույշ լինի այդպիսի տեղերում։ Փորձով գիտեր, որ իր դիրքն ունեցողը որքան և լինի բարի ու բարյացակամ, այնուամենայնիվ կունենա թշնամիներ... որոնք և առիթ չեն փախցնի իրեն վնասելու։

Երբ նա ձին կանգնեցրեց՝ նժույգը վրնջաց։ Վարդին թվաց, թե կենդանին ինչ-որ բան զգաց, մինչդեռ դա նրա սովորությունն էր՝ հեռու մնացողին իմացնել իր տեղը, և թիկնապահները, այդ ձայնը լսելով, շտապեցին հասնել իրենց տիրոջը։ Երբ բլուրը շրջեցին, հասան Վժան գյուղը,

որն իր անունն ստացել էր վժժոցով իջնող ջրերից։ Այդ-տեղից արդեն Կավաշը հեռու չէր։ Կտրեցին ևս մի փոքր տարածություն՝ երևաց Կավաշի ամրոցի աշտարակը սարալանջի գոգավորության մեջ։ Մի փոքր հետո երևաց նաև ամրոցը շրջափակող քարե պարիսպը՝ ներսը գտնվող ծառախմբերով։ Աշունն այստեղ փռել էր իր թևերը. ծառերն ավելի դեղին էին, քան դաշտում, քան Վաղարշապատի այգիներում։ Ջնայած արևը բարձրացել էր բավական, բայց օդը ցուրտ էր տակավին։ Ճանապարհի երկու կողմը երևում էին շինականներ, որ ինչ-որ արմատներ էին հանում և թիթեն հավաքում, իբրև ձմռան վառելիք, և գեղջկուհիներ, որ մասուր էին քաղում սարալանջերում, ուր տավար ու ոչխար գրեթե իրար խառնված արածում էին ցրված, բերանները գետնից չպոկելով։

Իսկ ամրոցում ասես կենդանություն չկար. թվում էր փակ և ամայի։ Բայց երբ մոտեցան ավելի, պարսպադռան առաջ երևացին երկու պահակ. մեկը նիզակն ուսին հենած՝ նստել էր դռան մոտ, երեխան գրկին. մյուսը ձիգ կանգնած, ձեռը ճակատին՝ նայում էր մոտեցող հեծյալներին։ Եվ երբ եկվորները առաջացան բավական՝ կանգնած պահակը նայեց պարսպադռան բացվածքից ներս, ասես այնտեղ գտնվող մեկին հայտնեց ինչ-որ ու նորից շտկվեց տեղում՝ նիզակն ուղիղ բռնած. իսկ մյուս պահակը, երեխան ցած դնելով, ինքն ևս կանգնեց՝ նիզակն ավելի բարձր բռնելով։

Մինչ Վարդ իշխանը կմոտենար իր մարդկանցով, ներսից դուրս եկավ միջահասակ մի տղամարդ՝ գլխաբաց, երկար, սև բեղերով և մաքուր կապա հագած. նրա հետ դուրս եկան և երկու երիտասարդ՝ ավելի հասարակ հագնված։ Երբ Վարդն ուզեց իջնել ձիուց, երեքն էլ առաջ եկան խոնարհումներով, իսկ մաքուր կապա հագածը բռնեց նրա ասպանդակը և ասաց հարգալից.

— Բարի գալուստ մեծ իշխանին։

— Բարի տեսանք,— ասաց Վարդը, դեռ հեռվից ճանաչելով ամրոցի հյուրընկալին, և հետաքրքրվեց, թե ինչպե՞ս է արքահայրը և կարո՞ղ է այսօր ընդունել իրեն։

— Բարեառողջ է, իշխան. բայց ննջում է տակավին։

Այս կարճ խոսքերից հետո ամրոցի երկաթակապ դռները

բացվեցին և ընդունեցին իշխանի թիկնապահներին ու նրանց բերած մթերաբարձ ջորիներին. իսկ հյուրընկալը հարգալիր շարժումներով իշխանին առաջնորդեց մի մեծ սրահ, ուր սովորաբար իջևանում և հանգստանում էին բարձրաստիճան հյուրերն ու այցելուները։ Հյուրասրահն այնքան էլ հարուստ չէր իր կահավորությամբ. կային փռված գորգեր, օթոցներ պատերի տակ և պարզ եռոտանիներ ու նստարաններ, ապա մի քանի եռաստեղ շարժական ջահեր, որոնց մեջ ավելի ձեթ էին վառում, քան մոմեր։

Վարդ իշխանի հետ այդ սրահը եկավ նաև նրա թիկնապահներից մեկը, որ սպասարկում էր ուղևորության միջոցին։ Ներս մտնելով՝ իշխանն իրեն հանձնեց սպասավորին, որը և անմիջապես սովոր շարժումներով հանեց նրա ճանապարհի վերնազգեստը, երկարաճիտ մույկերը և հողաթափներ տալով, այդ բոլորը՝ գլխարկի հետ միասին տարավ դրսում մաքրելու։ Իշխանը մեկնվեց բազմոցներից մեկի վրա և մտածեց, թե ինչպե՞ս և որտեղի՞ց սկսի իր ստուգումը. մտերմաբար, արտացավ հարցուփորձի՞ հյուրընկալին ու մյուս սպասավորներին՝ իմանալու ինչպես է անցնում կյանքը ամրոցում, թե՞ միայն ուշադիր դիտի շրջապատը... Պետք էր այսուամենայնիվ գտնել մի միջոց ամրոցի կյանքին ու անցուդարձին վերահասու լինելու... Կարելի է այցել և Գնելին ու, նրա պսակը շնորհավորելու պատրվակով, տեսնել ի՞նչ կա նրա հարկաբաժնում և իմանալ նրա մտքերը...

Ու ահա այդ իսկ պահին, երբ իշխանն այս խոհերի մեջ էր, բակի կողմից լսվեցին ուրախ ձայներ, ապա խմբական ծիծաղ։ Կույր, ծեր և քնած գահազուրկ թագավորի բնակարանի առաջ այսպիսի ձայնե՞ր... Այդքան ձայն և այդպիսի ուրախ ծիծաղ իշխանը երբեք չէր լսած այստեղ՝ այս ամրոցում... Բակը մտած շինականնե՞ր էին, թե հարբած պահապաններ... համենայն դեպս այնքան օտարոտի էր այդ ամենը, որ Վարդ իշխանն ակամա ելավ բազմոցից և մոտեցավ պատուհանին. ու նրա առաջ պարզվեց մի անսպասելի տեսարան...

Բակի մի ծայրում տասից ավելի երիտասարդներ ու պատանիներ թեթև հագնված, բոլորը բաց սրունքներով, գլխաբաց ու թևաբաց սկավառակ էին նետում... Հերթով վերցնում էին այն և վարժ շարժումով գցում վեր։ Սկավառակը թռչում

էր օդում և գնում-ընկնում հեռու մի տեղ. պատանիներից մեկը բաց սրունքներն ու բաց թևերը արևի տակ փայլեցնելով վազում բերում էր այն և հանձնում խմբին. այս անգամ նետում էր մի այլ պատանի, ու այդպես հերթով, և ով վրիպում էր՝ դառնում էր հեգնանքի ու ծիծաղի առարկա։

Երբ երկու հոգի նետեցին ու վրիպեցին, նախ բարձրացավ ծիծաղ, ապա լսվեցին հատ-հատ բացականչեր. «Ջեղա՛վ, ջեղավ»...— ու ծիծաղը տարածվեց ողջ բակում։ Այնուհետև սկավառակը հանձնեցին մի այլ երիտասարդի, որը հագնված էր ճիշտ մյուսների նման և նույնպես գլխաբաց էր։ Վարդ իշխանին թվաց, թե ինքը մի տեղ տեսել է դրան, բայց հագուստը նրան այնպես էր փոխել, հիշել, ճանաչել չկարողացավ։ Երիտասարդը բաժանվեց ընկերների խմբից, երկու քայլ արավ դեպի ասպարեզի կենտրոնը, ոտքի մեկը դրեց առաջ, մյուսը՝ ետ, ինչպես անում են փորձված մարզիկները, և ապա ձեռքի տարուբերումով սկավառակը նետեց վեր։

Մետաղյա շրջանակը մի քանի վայրկյան ցոլքլաց արևի տակ, ապա կորագիծ կազմելով գնաց ու զրնգոցով դիպավ դիմացի պարսպի վերև ցցված ժայռին ու ետ եկավ մետաղական դողդոջ ձայնով։

Լսվեցին միահամուռ ծափեր ու կանչեր։

— Ապրի՛ Գնելը... Ապրի՛...

Վարդ իշխանը նոր միայն ճանաչեց Գնելին... Ուրեմն այդ ծափողների և ապրի կանչողները սեպուհներ են, եկել են խաղի և գվարճության... Եվ Վարդ իշխանին համակեցին ուրախության ու կասկածի զգացմունքներ։ Ուրախացավ, որ ականատես եղավ խմբի խաղին.— ուրեմն Տիրիթը ճշմարիտ էր, որ երիտասարդ սեպուհները հավաքվում, փառաբանում են Գնելին։

«Գարզ է և հասկանալի»,— ասաց նա մտքում և շարունակեց նայել ավելի լարված, չանալով ճանաչել երիտասարդներից որևէ մեկին, միաժամանակ դրանց մեջ փնտրելով և Տիրիթին։ Սակայն բոլորը միատեսակ ոլոքամերկ ու թևաբաց էին, գրեթե իրար նման, ուստի և Վարդը դժվարացավ նրանց տարբերել իրարից։

Մինչ այդ խաղն առաջ էր գնում եռանդով ու ոգևորությամբ. թվում էր՝ երիտասարդները մրցության մեջ են կամ

գրաղ են եկած ինչ-որ բանի շուրջը, ուստի և ջանում են չզիջել միմյանց։

Նորից մեկը չկարողացավ մետաղյա սկավառակը նետել հեռու։ Բարձրացավ թեթև մի ծիծաղ և դրա հետ նոր բացականչեր.

— Չեղա՛վ... չեղա՛վ...

Երիտասարդների մեջ կային այնպիսիները, որ կարողանում էին սկավառակը հասցնել նշած տեղը, կային և այնպիսիները, որ վրիպում էին կամ պարզապես չէին հասնում իրենց նպատակին... Գնելը, երկրորդ և երրորդ անգամ խաղին մասնակցելով, նորից արժանացավ ծափերի ու գովքի.

— Կեցցե՛ Գնելը, կեցցե՛ արքայազնը...

Իսկ վերջին անգամ երիտասարդներից մի քանիսը բարձրացրին նրան իրենց ձեռքերի վրա ու պտտեցին խաղի ասպարեզում։

— Փա՛ռք Գնելին,— գոչեց մեկը, և մյուսները ձայնակցեցին անմիջապես.— Փա՛ռք, փա՛ռք...

— «Այո, այստեղ ավելին է կատարվում, քան կարելի էր երևակայել»,— զարմացավ Վարդ իշխանը, պատուհանից չհեռանալով։

Սկավառակի խաղից հետո սկսվեց զինախաղ. դղյակի սպասավորները նախ սրածայր նիզակները բաժանեցին երիտասարդ սեպուհներին, և սրանք նիզակներն առնելով՝ վեց հոգի կանգնեցին մի կողմ, վեցը՝ մյուս կողմ, ապա նիզակները հորիզոնական դիրքով բռնած գնացին միմյանց դեմ։ Որքան էլ խաղը կատարվում էր պատուհանից հեռու՝ այնուամենայնիվ իշխանը լսում էր, թե ինչպես են զենքերը բախվում իրար, և դրա հետ միասին նրա ականջին էին հասնում խրախուսանքի ձայներ. «Զա՛րկ... Համարձակ... Անվրե՛պ»...

Խաղը շարունակվեց երկար. ավարտվեց մի քանի անգամ ու նորից սկսվեց նիզակների անընդհատ բախումով ու խրախույսով. յուրաքանչյուրը ջանում էր հարվածել դիմացինին, իբրև հակառակորդի, նշան բռնելով նրա փորը, կուրծքը, ուսը, բայց հակառակորդը միշտ ճգնում էր իր զենքով ետ վանել հարվածը և ինքը զարկել նրան... Ու ասպարեզը բռնել էին մենամարտող զույգերը. ամեն կողմ սուր սայրեր էին բարձրանում ու իջնում փայլատակումներով, և Վարդ իշխա-

նը դժվարանում էր հետևել մեկին կամ մյուսին, դժվարանում էր պարզել՝ ո՞վ է հաղթում, ո՞վ է պարտվում... Նա այդ հասկացավ այն ժամանակ միայն, երբ նորից ծափեցին ու կանչեցին. «Ապրի՛ Գնելը... Կեցցե՛ Գնելը»...

Ուրեմն հաղթել էր այն խումբը, որի մեջ էր Գնելը։ Հաղթել էր Գնելն ինքը, որ ծափերից ու կանչերից շիկնած՝ ձեռքը նախ բարձրացրած, ապա սրտին մոտեցնելով, շնորհակալություն հայտնեց խաղակիցներին, հետո, երեսը դարձնելով դեպի տան թևակը, ձեռքով ողջունեց վերև գտնվող մեկի՞ն, թե շատերի...

«Ո՞ւմ է ողջունում Գնելն այդպես»,— մտածեց Մամիկոնյան իշխանը՝ նույնպես այն կողմը նայելով. ու նոր միայն նկատեց, որ կից շենքի քարե կամարակապ պատշգամից (իր լուսամուտին շատ մոտ) խաղի ասպարեզն էին դիտում հինգ-վեց նորատի կին՝ գլուխներին գույնզգույն քողեր, պարանոցներին մանյակներ։ Բոլորի մեջտեղը կանգնած էր մի նորահարս՝ ճերմակ քողը գլխին և ուսերին։ Նրա դեմքն այնքան պայծառ էր ու խնդուն, որ զարմացրեց Վարդ իշխանին, և նա հայացքն ակամա հառեց նրան։ Այդ դեռատի կնոջ ամեն ինչը համաչափ էր. կաթնագույն դեմքը ձվաձև էր, աչքերը խաժ ու լուսափայլ, ճակատը ճերմակ, որի վրա ասես նկարված էին սև, կամարաձև հոնքեր։ Իսկ այտերի վրա խաղում էր մի շարժուն կարմրություն։ Դեղձան մազերը փայլուն էին այնպես, թվում էին փայլ տված։ Այս ամենի հետ միասին՝ նրա վիզը բարեձև էր ու լեցուն։ Խաժ աչքերի բիբերն ասես կայծեր էին ցայտում ու նսեմացնում շրջապատի կանանց։

Երբ Գնելը ձեռքով ողջունեց պատշգամի կանանց, այդ պայծառադեմ նորատին ասես ավելի պայծառացավ, նրա խոշոր աչքերը դարձան ավելի լուսափայլ... Մամիկոնյան իշխանը մոռացավ խաղը, մոռացավ երիտասարդներին և շարունակեց նայել միայն կանանց կողմը, ավելի շուտ բոլորի կենտրոնում գտնվող ճերմակ քողավորին, որ հափշտակված նայում էր ներքև՝ սրախաղն ավարտած սեպուհներին ու Գնելին։ Որսեսզի պատշգամի կանայք չնկատեն իրեն և ինքը կարողանա ավելի լավ դիտել նրանց՝ Վարդ իշխանը քաշվեց լուսամուտի մի կողմը, պատին մոտիկ, որտեղից կանայք

Երևում էին առավել որոշ. ու շարունակեց նայել ճերմակ քողավորին։ Ո՞վ էր դա այդչափ զարմանալի...

Գնալով իշխանի հետաքրքրությունն այնքան բորբոքվեց, որ նա հեռացավ լուսամուտից և հյուրասրահի դռանը մոտենալով ծափ զարկեց։

Ներս մտավ հյուրընկալ ծեր սենեկապահը՝ պատրաստակամ ու ժպտադեմ, ինչ թելադրում էր նրա պաշտոնը։

— Ովքե՞ր են այդ տիկինները,— առանց նախաբանի, ուղղակի հարցրեց իշխանը, մատնացույց անելով քարե պատշգամը։

— Արքայազն Գնելին հյուր եկած սեպուհների կանայք,— խոնարհում արավ ծերունին։

— Իսկ ո՞վ է այն ճերմակ քողավորը։

— Արքայազն Գնելի հարսը՝ իշխանուհի Փառանձեմը։

— Փառանձե՞մը,— կրկնեց իշխանը, հայացքը պատշգամից չկտրելով։— Ազատ ես,— շրջվելով հրամայեց նա և շարունակեց դարձյալ զննել պատշգամը մի նայվածքով, ասես գտել էր կորցրած մեկին։

Փառանձե՛մ... Սա է ուրեմն Գնելի կինը և Սյունյաց Անդոք իշխանի դուստրը... Վարդը լսել էր, որ Անդոք իշխանի դուստրը գեղեցիկ է, բայց չէր կարծել այդչափ... Նշանակում է արքայազն Գնելը զուրկ չէ ճաշակից։ Ինքը բարեկազմ, խաղի մեջ հաջողակ, ամենքից սիրված և այդպիսի նորահարսի տեր... այն էլ ինչպիսի՜ հարս...

Երբ խաղն ավարտվեց և ծափերը դադարեցին՝ կանայք իջան պատշգամից, և այդ ժամ ահա իշխանը տեսավ Փառանձեմի բայլվածքը՝ համաչափ ու հպարտ։ Մանիշակագույն հագուստը, որ վերից վար ոսկե կոճակներ ուներ, ուսերից իջնելով ու նեղանալով գրկում էր նրա բարակ մեջքը և անփոթ տարածվում ազդրերի վրա, որ որոշապես գծագրվում էին հագուստի տակ և նրա ամբողջ մարմինը դարձնում ձիգ ու միաձույլ։

Որքա՞ն նայեց իշխանը՝ չէր կարող իմանալ, երբ հանկարծ ներս մտավ երկարաբեղ հյուրընկալը և հայտնեց խոնարհ.

— Թագավորահայրը հաճեց արթնանալ. այժմ սպասում է քեզ, իշխան։

Վարդի առաջին զգացումը եղավ տհաճություն. ինչո՞ւ հենց հիմա, երբ ինքը կլանված է առջևը պարզված տեսարաններով. բայց հրավերը անտեսել կամ ուշանալ չէր կարելի, ուստի և շտապեց գահազուրկ արքայի մոտ՝ բնապդաբար չափած քայլերով և մարմինն ավելի ձիգ պահած, ինչպես գնում էր սովորաբար Արշակի մոտ։

Երբ հյուրընկալը բացեց արքայահոր սրահի դուռը, Վարդ իշխանը դեռ ներս չմտած, մի հայացքով ընդգրկեց սրահի ներսը. նախկին արքան, այժմ կույր ծերունին, նստած էր բեհեզյա փափուկ բազմոցին, երկար մի պարեգոտ հագած, ինչպիսին հագնում են հարուստ եպիսկոպոսները իրենց տանը։ Նրա խոշոր գլուխը անբնական դիք, լարված կեցվածք ուներ՝ կուրության հետևանքով։ Գլխի արծաթ մազերը իջնում էին մինչև ուսերը և խառնվում ճերմակ մորուքին, որ ծածկում էր համարյա կրծքի կեսը։ Իսկ նրա աչքերի խոռոչները այդ ճերմակ մազերի շրջանակում ավելի խոր և ավելի սև էին երևում։ Չորս թե հինգ տարվա մեջ, այսինքն՝ այն ժամանակից, երբ Շապուհը գերի վերցրեց նրան և հանել տվեց աչքերը՝ Բյուզանդիայի հետ բարեկամություն սկսելու համար, թագավորահայրը ճերմակել էր իսպառ, սակայն մարմնով մնացել էր տակավին ամուր։

— Գետնամած ողջույն արքային,— և Վարդ իշխանը, դռնից առաջանալով մի քանի քայլ, կանգ առավ ու ձեռքը, ըստ սովորության, դրավ կրծքին, իմանալով հանդերձ, որ դիմացինը կույր է և չի կարող տեսնել իր մեծարանքի ցույցը։

— Մամիկոնեից տե՞ր է, Վարդ իշխա՞նը,— լսվեց արքայահոր ծերունական, բայց տիրական ձայնը։— Ուրախ եմ ժամանելուդ և կարի դժգոհ, որ ուշ, շատ ուշ ես այցում մենավորիս...

Ծերունին խոսում էր յուրաքանչյուր բառը շեշտելով, գլուխը միշտ անբնականորեն դիք պահած և ապա, մոտեցող ոտնաձայնը լսելով, չոր, կաշի ու ոսկոր կտրած ոտը, որ նման էր թարմությունը կորցրած տերևի, պարզեց առաջ՝ նույնպես անբնական մի ձևով։

Մամիկոնյան իշխանը մոտեցավ ակնածելով, չգիտես

կույր թագավորի՞ց, թե նրա անցյալից, ու հարգանքով համբուրեց նրա պարզած աջը։

— Նիսո՛ն, իշխան, և մխիթարիր ինձ ուրախ լուրերով,— ասաց ծերունին բեկվող ձայնով։— Մայրաքաղաքից հեռու՝ ես իսպառ անիրազեկ եմ աշխարհի չարին ու բարուն։

Վարդը հարգանքով ու զգուշությամբ նստեց անթիկնակ մի աթոռի, որ ընդելուզված էր ինչ-որ դեղին մետաղով։

— Անշուշտ, ախորժելի չէ, իշխան, և ոչ էլ շահավետ՝ այցել մի կույր գահազուրկի, որը չունի ո՛չ գանձ, ո՛չ իշխանություն,— և ծերունու դեմքով մի մռայլ ստվեր անցավ, որն առիս կնճռեց նրա ճակատը։— Անկասկած եմ, որ այդպես է մտածում յուրաքանչյուր նախարար ու սեպուհ... մանավանդ, երբ տեսնում են Արշակ թագավորն ինքը չի այցելում հորը... ուստի նոքա ևս...

Ծերունին լռեց մեկեն. նրա խոսքերի մեջ կար գառնության շեշտ ու դժգոհություն թե՛ իր վիճակից, թե՛ հարազատներից, գուցեև ամբողջ աշխարհից։

Վարդն այդ զգաց իսկույն և հարեց անմիջապես.

— Տեր արքա,— ասաց նա ոտքի կանգնելով ու շփոթվելով, որ մոռացել է կարևորը։— Արշակ թագավորը հրամայել է ինձ՝ ողջունել քեզ խոնարհ և ցանկալ բարեբաստիկ օրեր...

Իշխանը հապաղեց առվայրկյան. չգիտեր ինչո՞ւ՝ չէր համարձակվում նայել ծերունու աչքերին, ուստի նայեց նրա շոր տերևների նմանող ձեռքերին և ավելացրեց.

— Հրամայեց նաև իմանալ, թե ի՞նչ ցանկություններ ու կարիքներ ունի թագավորահայրը։

Ծերունու կույր դեմքով նորից ստվեր անցավ։

— Այո,— հառաչեց նա երկարաձիգ։— Թագավոր էի և ողջամիտ դարձա թագավորահայր։ Ցանկություններ և կարիքնե՞ր... Սակայն ինչու Արշակը ինձ հետ խոսում է միշտ ուրիշի բերանով։ Դու չվիրավորվես, իշխան։.. Մի՞թե հնարավոր չէ կտրել մի օրվա ճանապարհ և այցել դժբախտ հորը։ Մի՞թե այդքան...

Այս անգամ ծերունին պարզապես չուզեց շարունակել և լռեց՝ կույր աչքերի փակ կոպերը գողացնելով։

Վարդ իշխանը, ասես նրան կարեկցելով, ուզեց ասել

«արքա», որ չվշտանա, բայց մեքենաբար խոնարհում արավ կրկին, ինչպես տեսնողի առաջ։

— Եվ թող արքահայրը ների ինձ՝ նկատելու, որ Արշակ թագավորը միշտ և հանապազ հիշում է քեզ, բայց հույժ զբաղված արքունի գործերով և մանավանդ նոր քաղաքի շինության հոգսով՝ անկարող է լինում...

— Սակայն մի մոռանար, իշխան,— ընդմիջեց նրան ծերունին՝ չորացած, գրեթե անարյուն աջը բարձրացնելով։— Մի մոռանար, որ նա արհամարհեց ու չեկավ Գնելի հարսանիքին։ Գիտեմ, պատշաճ չէ և ոչ էլ հնարավոր, որ թագավորը գնա ամենայն տեղ և ամենայն մարդու մոտ, սակայն ինքը պարտավոր էր ներկա լինել իր ավագ եղբոր որբ զավակի հարսանիքին։ Այնպե՞ս է, իշխան։

«Ո՜րբ»,— կրկնեց մտքում Վարդը և նեղն ընկավ. համաձայնե՞ր՝ հարմար չէր, առարկեր՝ անվայել էր, ուստի, առանց ծերունու աչքերին նայելու, հարեց.

— Հարսանյաց օրերին, արքա, Արշակ թագավորը գտնվում էր Կոգի հովտում. գնացել էր նոր քաղաքի կառուցումը դիտելու։

— Լսած եմ, այո։ Հիմնել է նոր քաղաք և անվանել Արշակավա՜ն,— երկարեց ծերունին, ձեռքը նույնպես երկարելով.— սնափառությո՜ւն... Ավելորդ սնափառություն և անխոհեմ քայլ... Այո, անխոհեմ,— և նա գլուխը ստորուքներեց դժգոհ։— Ինչո՞ւ մի այդպիսի կարևոր քայլի ձեռնարկելիս նա չուզեց հարցնել իմ խորհուրդը։ Արհամարհո՞ւմ է ծերունի հորը, թե՞ կարծում է՝ ցնորել եմ կուրացումից հետո։ Սխալվում է, իշխան։ Սխալվում է։ Տակավին չեմ կորցրել ունակությունս խորհելու, մանավանդ մեր աշխարհի շահն ու կորուստն ըմբռնելու։

Արքահայրը լռեց մի պահ՝ աչքերի փակ կոպերը դողացնելով. ասես ճիգ էր անում բանալու, բայց զգալով կարծես, որ բանալ չի կարող, շարունակեց սրտմտած ու վիրավորված.

— Արշակավա՜ն... կամենում է Մեծն Տիգրանի նման կառուցել իր Տիգրանակե՞րտը։ Այո՞... Մոռանում է սակայն, որ Մեծն Տիգրանը այդ արավ մեծամեծ հաղթանակներից հետո, գերի ստրուկների միջոցով։ Իսկ ի՞նքը։ Ի՞նչ է արել ինքը՝ Արշակը։ Ոչինչ։ Տակավին ոչի՜նչ... Ի՞նչ հաղթանակներ է շա-

հել։ Եվ ոչ մի։ Ուրեմն ինչով պիտի կառուցի այդ քաղաքը... Բավական է, եթե նա կարողանա ապահով պահել Հայոց Աշխարհը։ Դա կլինի ինքնին մեծ փառք ու պատիվ։ Իսկ նա, շարած ոչինչ և ոչինչ, ձգտում է անմահության... Խոսի՛ր, իշխան. գուցե սխալվում եմ...

— Ներիր ինձ, արքահայր,— նորից ձեռքը մեքենայորեն կրծքին դրեց Վարդը։— Քեզ հավանաբար իրազեկ չեն կացուցել քաղաքի կառուցման հանգամանքներին ու պատճառներին։

— Պատճառնե՞ր... Ուրեմն սնափառությունից դուրս կան այլ պատճառնե՞ր։ Այդ պարագային, իշխան, բարի եղիր լուսավորելու կույր ծերունուս կույր միտքը։ Ես լսում եմ։

— Նախ, արքա,— սկսեց Վարդը զգուշությամբ,— Արշակ թագավորը կարծում է, թե կարի անհրաժեշտ է Կոգովիտում ունենալ մի քաղաք՝ քարավանների ճանապարհին։ Դա համարում է օգտավետ և... Իսկ կառուցումը կատարվում է Հայոց Աշխարհի արհեստավորաց ու շինականաց ձեռքը։ Եվ դորա համար խաշար է հանված։

Ծերունին գլուխն ու ձեռքը շարժեց անհույս։

— Դա կտևի տարիներ և ի գլուխ չի գա...

— Բայց թագավորը հույս ունի մարդեր ստանալ նախարարներից, որոնց և դիմել է խնդրանքով։

— Խնդրանքո՛վ... Հա՛-հա՛-հա՛,— ծիծաղեց հանկարծ արքահայրը մի չարախինդ ձայնով։— Նախարարնե՞րը, նախարարները հայոց,— կրկնեց ծերունին։— Ձվշտանաս, իշխան, եթե ասեմ, որ Հայոց Աշխարհը քանդում են այդ իսկ նախարարները, և Արշակը կամենում է, որ նոքա քաղա՞ք շինեն իր համար։ Պատրա՞նք... Հայոց Աշխարհի կորովը ջլատում են այդ մանրիկ սնափառները, որ իրենց մեն մի այծը ավելի են սիրում, քան երկիրը հայրենի... Եվ նոքա չէի՞ն միթե, որ լքեցին ինձ և զորավիգ չեղան պարսից դեմ ուղղված իմ ջանքերին։ Եվ նոքա չէի՞ն միթե, այո, որ դրդեցին իմ սենեկապետ շորիկ շնաբերան Փիսակին՝ դառնալ տիրանենգ և պարսից ձեռքը մատնել ինձ... իմ արքունի գաղտնիքներով։

Եվ նախկին թագակիրը վշտացած կախեց ալեղարդ գլուխը, ասես ծանր, սրտամաշ հուշերի ներքո։

Վարդ իշխանը նայում էր նրան և ջանում հասկանալ, թե ի՞նչ է ուզում ասել ծերունին. դատապարտո՞ւմ է դյուրն, թե խղճում... Ու տարակույսի մեջ սպասում էր նրա խոսքի ավարտին, որպեսզի անցներ իր առաքելության կատարմանը, այսինքն՝ հետաքններ և հետամուտ լիներ իր հարցումներով, թե ի՞նչ է կատարվում Կավաշում, ի՞նչ է նշանակում սեպուհների ներկայությունը այստեղ կամ ո՞վքեր են այդ սեպուհները։ Բայց ծերունին շարունակեց.

— Պիտի ասեմ նաև, իշխան, որ Հայոց Աշխարհի ու գահի համար նախարարների չափ, և թերևս ավելի, վնասակար են հոգևորները հայոց՝ այդ մոլեռանդ թշվառները, որ այլոց քարոզում են հնազանդություն, իսկ իրենք մնում են հանդուգն ու գոռոզամիտ։

Այս անգամ Վարդ իշխանը հիշեց, թե ինչպես կույր ծերունին իր գահակալության օրերին հրամայել էր բրոնել մեռցնել Հուսիկ կաթողիկոսին... իրեն՝ արքային հանդիմանելու համար... Հիշեց իշխանը այս և մտածեց, որ նա գահընկեցությունից ու կուրացումից ցնորվել է խպառ, և ուզեց մի հարցում անել, բայց արքահայրը ժամանակ չտվեց։

— Այդպես, իշխան Մամիկոնեից,— ասաց նա հուզումից հևալով ու գլուխը մի կողմ թեքելով։— Չկարծես բնավ, թե ցնորել եմ։ Ընդհակառակը, կուրությունը սրել, լուսավորել է միտքս և ինձ դարձրել խելահաս։ Եթե ես իշխանությանս օրերին հասու լինեի այս ամենին. խպառ կջնջեի մեր շարաբարո նախարարներին և հոգևորներին բոլոր՝ Հայոց Աշխարհի այդ թշնամիներին։

Վարդը դարձյալ ուզեց հարցնել, թե ովքե՞ր են արքայահոր կարծիքով չար նախարարները, որոնց պետք է ջնջեն... Այսպիսով՝ այս հարցի պատասխանից, թվում էր նրան, կիմանար ծերունու վերաբերմունքը դեպի այս կամ այն նախարարական տունը, որից և կպարզվեր. թե ո՞ւմ է համակրում ինքը, հետևաբար և Գնելը, բայց արքահայրը դարձյալ ժամանակ չտվեց նրան։

— Իսկ Արշա՞կը... Ինչո՞վ է զբաղվում, քաղա՞ք է շինում իր անունով, կամենում է անուն թողնել դարերում... Փառասիրությո՞ւն... Բյուզանդիայից կին առնելով՝ իզուր է կարծում, թե նենգն Բյուզանդիոնը զորավիգ ու թիկունք կլի-

նի իրեն։ Սխալվում է չարաչար... Չպետք է հավատալ ոչ հոռոմներին, ոչ պարսից, ոչ վատաբարո նախարարաց և ոչ կրոնավորներին զրախոս։ Արշակը չի կարող իշխել. իշխելու համար պետք է կտրել ամեն մի բարձրացող ու ընդդիմացող գլուխ։ Ինքս եթե անեի այդպես, այսօր կույր չէի լինի և այստեղ չէի լինի...

«Ցնորել է, իսպառ ցնորել է»,— մտածեց Մամիկոնյան նախարարը։ Այս մտածելով հանդերձ Վարդը չուզեց և չհամարձակվեց որևէ խոսքով ընդմիջել նրան կամ հարցում անել, չնայած մտքում ծագում էին անթիվ հարցումներ։ Նա սպասեց մինչև դառնացած թագազուրկը ավարտեց խոսքը։ Եվ երբ լռություն իջավ, Վարդը առանց ծերունու աչքերին նայելու (նրան թվում էր շարունակ, թե փակ խոռոչներից մի որևէ կայծ կարող է տեսնել իրեն և հասկանալ իր առաքելության նպատակը), հետաքրքրվեց.

— Իսկ արքայազն Գնելը, արքա, ինչպե՞ս է զգում իրեն այստեղ՝ Բյուզանդիայի ճոխ կյանքից հետո։ Չի՞ տխրում արդյոք։

Վարդ իշխանն այս ասաց թե՛ զրույցի նյութը փոխելու և թե՛ իր առաքելության նպատակին մոտենալու համար։

— Տխրե՞լ,— ուսերը ցնցեց ծերունին։— Հարկավ տխուր կլինի ապրել մի կույր, իշխանություն ու պատիվ չունեցող ծերունու մոտ։ Սակայն, սիրելով իմ Գնելին, ես ամուսնացրի նրան Սյունյաց մեծ իշխանի դստեր հետ, որպեսզի լտրխրի և, քանզի սիրում եմ Գնելիս՝ մեռած որդուս չափ, նրան շնորհեցի իմ ողջ գույքն ու կալվածները...

«Գույքն ու կալվածնե՞րը, —մտածեց իշխանը։— Եվ դա արել է անշուշտ հատուկ նպատակով»։

— Եվ արքայազն Գնելն այստեղ, հուսամ, շատ չպիտի տխրի, քանզի այցում են նրան երիտասարդ սեպուհներ, իշխաններ, ու Գնելն ունենում է նրանց հետ անշուշտ հաճելի ժամանց՝ խաղեր, զրույցներ...

«Չի կամենում ասել զինավարժություն,— մտմտաց Վարդը։— Իսկ զրույցնե՞րը»... Իշխանը կուզեր իմանալ, թե ինչի՞ մասին են զրուցում այդ սեպուհները կամ ի՞նչն է նրանց զրույցի նյութը, և ի՞նչ սեպուհներ են դրանք, և ո՞ր նախա-

բարությունների։ Սակայն վարդ չհամարեց այդ մասին հարցում անել ծերունուն, ուստի և ասաց.

— Եվ, անշուշտ, արքա, մեծ սփոփանք է քեզ համար ուսյալ արքայազն Գնելի ներկայությունը այստեղ՝ Կավաշի ամրոցում։

— Հարկա՛վ, հարկա՛վ,— խանդաղատեց ծերունին։— Նա փոխարինում է իմ խավարած աչքերի լույսին։

«Ա՜, ուրեմն Գնելին է համարում իր աչքի լույսը և ոչ Արշակ արքային, թոռանը և ոչ որդուն։ Հասկանալի է»,— մտածեց նորից Վարդ իշխանը, ասես կարևոր մի գյուտ անելով, ու ասաց.

— Եվ քանի որ, արքա, ես մեծ համակրանք եմ տածում առ արքայազն Գնելը և քանի չեմ եղած նորա հարսանյաց հանդիսին, թույլատրիր ինձ անձամբ շնորհավորել նրան և ցանկալ երջանիկ օրեր։ Նա այժմ այստեղ՝ ապարանքո՞ւմն է անշուշտ։

— Հարկավ, իշխան,— ուրախացավ ծերունին։— Կարող ես շնորհավորել անտարակույս։ Սակայն նա այժմ խաղի մեջ է երիտասարդ և պատանի սեպուհների հետ։ Լսո՞ւմ ես դուրսի ձայները. այդ նորա՞ն են սկավառակ ու մկունդ նետում... Ահավասիկ դրա համար է, որ պատուհանս բաց է հարաժամ, որպեսզի լսեմ նոցա ձայնը երիտասարդ և մենակ չզդամ ինձ այս... աքսորավայրում։

Վերջին բառը արքահայրը արտաբերեց երկար մի հառաչով, որ ելնում էր ասես նրա ողջ էությունից. հառաչ անցած փառքի և մարմնի անզորության։

Փոքր անց Վարդ իշխանը հրաժեշտ առավ ծերունուց և նրա հարկաբաժնից ելնելով՝ հյուրընկալի առաջնորդությամբ դուրս եկավ դղյակի ընդարձակ բակը՝ երիտասարդների խաղը դիտելու. խաղ, որը նրանք վերսկսել էին բակի հեռու մի ծայրում... Միաժամանակ Վարդ իշխանը ցանկանում էր մի անգամ ևս նայել Գնելի հարսին՝ Փառանձեմին։

Մինչ այդ Տիրիթը, որ խաղի մասնակիցների մեջ էր, լսելով Վարդ իշխանի գալուստը և նրա այցը պապին, հասկացավ նրա ժամանելու պատճառը և խաղի միջոցին մոտեցավ Գնելին.

— Ժամանել է Վարդ իշխանը մայրաքաղաքից։ Իմացա՞ր։ Գնելը գլխով արավ։

— Եվ հասկացա՞ր ինչու,— շարունակեց Տիրիթը՝ իր հարցին խորհրդավորություն տալով։

— Կարծես պապին բերել է ընծաներ և սովորական քաղցրենիք, ինչպես միշտ։

Տիրիթը տարուբերեց գլուխը։

— Ոչ, Գնել։ Ոչ... Կարծում եմ՝ մեզ ստուգելու ժամանել է տեսնելու, թե արքայազուններս այստեղ՝ Կավաշում, ծույլ նստա՞ծ ենք, թե զբաղվում ենք որևէ շահեկան գործով։ Այո։ Ուստի կարծում եմ, Գնել, մենք խոհեմություն արած կլինենք, եթե շարունակենք զինախաղը, որ այդ արքունյաց աղվեսը բարի լուրեր տանի արքային, թե մենք ձրիակեր ու ծույլ արքայազուններ չենք, այլ ջանում ենք լավ զորականներ դառնալու։ Իրազեկ եմ, որ արքան սիրում է, երբ երիտասարդ սեպուհները զբաղվում են զենքով։

— Եվ այդ ճշմարի՞տ է,— ժպտաց Գնելը առողջ, ճերմակ ատամնաշարը բանալով, ինչ նրան տվեց պարզ, խանդավառ պատանու արտահայտություն։— Եթե իրավ այդպես է՝ շարունակենք, Տիրիթ սիրելի։

Եվ նրանք փոքր դադարից հետո վերսկսեցին նիզակախաղը՝ դարձյալ նույն երիտասարդ ու պատանի սեպուհների մասնակցությամբ։

— Ովքե՞ր են այս պատանիները,— հարցրեց հյուրընկալից Վարդ իշխանը ամրոցի ընդարձակ, ծառազարդ բակը մտնելով և բորբոքված զինախաղը դիտելով։

Հյուրընկալը խոնարհում արավ և ասաց հարգալից կիսաձայնով.

— Արքայազն Գնելը, արքայազն Տիրիթը և նախարարաց սեպուհ որդիները։

Վարդ իշխանը գլխով արավ և մտածեց, որ այժմ կարելի է իմանալ և մյուսների ո՞վ լինելը։

— Արքայազուններին գիտեմ,— ասաց նա,— սակայն մյուսներին անծանոթ եմ։ Ովքե՞ր են և ո՞ւմ որդիները։

— Տարբեր տներից, իշխան։ Այն շիկահերը ահա,— մատնացույց արավ ծերունի հյուրընկալը,— որդին է Կամ-

սարական նար իշխանի, մյուսը՝ Բասենից Մանեճի, երրորդը, որ վազում է առաջ...

Մինչ հյուրընկալը, իշխանի ուշադրությունից շոյված, պատրաստակամ սիրով բացատրում էր հյուր-սեպուհների տոհմը և ո՛ւմ զավակ լինելը, այդ իսկ պահին խաղից շառագունած, թեթև հևքով ու կայտառ վազքով իշխանին մոտեցան Գնելն ու Տիրիթը։

— Ողջույն, տեր Մամիկոնեից,— ասաց Գնելը զվարթաձայն և մերկ թեր պարզեց բարևի։

Նույնն արավ և Տիրիթը, բայց ավելի զուսպ։

— Զվարճանո՞ւմ եք բյուզանդական խաղերով,— ժպտաց Վարդը, արքայազուններին ողջունելուց հետո։

— Թեթև սրախաղ բարեկամներիս հետ,— ձեռքը դեպի հյուրերը մեկնեց Գնելը։

— Հաճելի է և գովելի... Երիտասարդներին վայել զբաղում. սրախաղ, զինավարժություն... Խրախուսելի է անշուշտ, խրախուսելի,— կրկնեց Վարդ իշխանը, նայելով պատանի Գնելի գոհունակ դեմքին, որ փայլում էր ասես խաղի հաղթանակի հրճվանքից։

«Ժպիտով ու զվարթությամբ քողարկում է իր խաղի նպատակը»,— մտածեց Վարդը։

— Բայց ներիր ինձ, արքայազուն, ես մոռացա կարևորը,— ժպտաց իշխանը այս անգամ ձայնին մեղմություն, անգամ քաղցրություն տալով։— Պարտ եմ սրտիվ ողջունել քո սուրբ պսակը Այունյաց իշխանի դստեր հետ։

— Շնորհակալություն, տեր Մամիկոնեից,— շառագունեց Գնելը նորահարսի պես։— Հուսամ բարի լուրեր եք բերել իմ հորեղբայր-արքայից։

— Միանգամայն, արքայազուն։ Արքան իր սերն ու ողջույնն է հայտնում ամենքիդ և ցավում է հույժ, որ հնար չի ունեցել ներկա լինելու քո հարսանյաց հանդիսին։

Գնելը մի շնորհալի խոնարհում արավ թագավորի ուշադրության համար։

— Որքան ուրախ պիտի լինեինք, եթե հորեղբայր-արքան...

Խոսեցին մի փոքր էլ, որից հետո Վարդ իշխանը մի վերջին անգամ նայեց այն քարե պատշգամին, ուր խմբված էին

կանայք. նայեց Փառանձեմին տեսնելու, թե ողջունելու ակնկալությամբ։

Բայց Փառանձեմն այլևս այնտեղ չէր։

Եվ իշխանը ճանապարհ ընկավ նրա ցոլուն աչքերը մը-քում։

Իսկ արքայազն Տիրիթը նայում էր նրա հետևից. նայում էր և մտածում տարակույսների մեջ.

«Ի՞նչ է պատմելու արդյոք արքային... Պիտի ճշմարտի՞ ինձ, թե...

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Երբ Վարդ իշխանը Կավաշից վերադառնալով տեսածը պատմեց Թագավորին, Արշակը լսեց առանց ընդհատելու, իսկ երբ նա ավարտեց խոսքը, հարցրեց.

— Եվ ո՞ր նախարարաց սեպուհներն են այցում նրան։

— Ես, արքա, տեսա միայն Արծրունյաց, Վահևունյաց, Կամսարականաց և Աբեղենից սեպուհներին։

— Կային նույնպես և նախարարնե՞ր։

— Ոչ, արքա, ես ականատես չեղա։

Արշակը լռեց առժամ և ապա՝

— Իսկ այդ ամենը ինչպե՞ս է ընդունում արքահայրը։

— Գոհունակ։ «Դրանք իմ մխիթարն են», ասաց։

— Այդպես,— և Արշակը երեսը դարձրեց խոսակցից ու նորից լռեց մի վայրկյան, ապա կամեցավ նոր հարցում անել, բայց միտքը փոխեց և ասաց միայն.

— Ազատ ես, իշխան։

Վարդը դուրս եկավ տարակույսների մեջ, չիմանալով, թե իր հաղորդումը ի՞նչ եզրակացության բերեց Թագավորին ու միայն նկատեց, որ նա մռայլվեց՝ ներքին շուրթը ատամների տակ առնելով։

Եվ այնուհետև Արշակը մռայլ էր մի քանի օր. օրվա մեծ մասը երթևեկում էր առանձնարանում և խորհում անվերջ։ Ընդունում էր հազարապետ Դավիթ Գնունուն, ընդունում էր իրեն՝ Վարդին, անում էր անհրաժեշտ կարգադրություններ և խորհում դարձյալ։ Ի՞նչ էր խորհում, ինչո՞ւ էր մռայլ՝ չէր հասկանում ոչ ոք։ Խորհում էր և միևնույն ժամանակ, վատ

տրամադրությունը պալատականներից աննկատ պահելու համար, ջանում էր լինել սովորական, բայց և այնպես պալատականները՝ թե՛ հազարապետը, թե՛ պալատի կառավարիչ Դղակ Հայր-Մարդպետը, թե՛ Վասակ սպարապետը, թե՛ որսապետ Հավնունին, թե՛ Սմբատ Բագրատունին ու մյուսները նկատում էին, որ թագավորին զբաղեցնում են ծանր մտքեր... Սակայն, նկատելով հանդերձ, ոչ մեկը տակավին չէր համարձակվում հարցում անել կամ հետաքրքրվել։ Ընդունված չէր. եթե թագավորն ինքը հայտներ՝ կլսեին, և պարտավոր էին լսել, այլապես անպատշաճ էր միջամտել։

Այնուամենայնիվ ամենքին անհանգստացնում էր թագավորի մռայլ տրամադրությունը։ Անում էին, ճշմարիտ է, ենթագրություններ, բայց չէին կարող բնավ հասու լինել պատճառին։ Միայն Մամիկոնեից Վարդ իշխանը գիտեր, որ արքային մռայլություն բերեց իր հաղորդումը։ Իսկ պալատականներից ոմանք կարծում էին, թե դա թերևս կապ ունի այն բանի հետ, որ նախարարների մի մասը ուշացնում է իր պատասխանը։ Նրանք գիտեին, թե ո՞րքան էր ոգևորված Արշակը, որ շուտով նախարարներից կստանա մարդ՝ բանակը զորացնելու, գործավորներ՝ քաղաքը կառուցելու, և բերդեր՝ երկրի պաշտպանությունը ապահովելու համար... և որովհետև ուշանում էր նախարարների պատասխանը, ուստի արքան մռայլվում էր օրեցօր։

Անգամ Օլիմպիա թագուհին չէր կարողանում հասու լինել և ցրել թագավորի մռայլը։

— Ինչո՞ւ տխուր ես, բազիլևս,— հարցնում էր նա տագնապով։— Պատահե՞լ է տխուր մի ինչ։

— Առայժմ ոչինչ, բազիլեյա։

— Գուցե պարսիկը պատերազմ է պատրաստում Արմենիայի դեմ,— շարունակում էր հետաքրքրվել Օլիմպիան։— Դրանից բնավ չպետք է վշտանալ, բազիլևս. կայսրը միշտ օգնության կգա մեզ։

— Ոչ, բազիլեյա։ Պարսիկը հանգիստ է առայժմ,— պատասխանում էր Արշակը և, շուրթերը սեղմած, աչքերի սպիտակուցները փայլեցնելով թուխ, մազոտ դեմքի վրա, երբ թևեկում էր իր խոհերին անձնատուր։— Կա առավել ծանրակշիռ հանգամանք։

Իսկ թե ինչ էր այդ ծանրակշիռը՝ նա չէր բացատրում, այլ միայն խորհում էր մտամփոփ, մոռացած ամեն ինչ, անգամ Ավանի կառուցումը, որ մի քանի օր առաջ նրան զբաղեցնում էր ամեն ինչից ավելի... Իսկ պալատականները, տարբեր ենթադրություններ անելով հանդերձ, սպասում էին այնուամենայնիվ, թե արքայի տխրությունը կանցնի շուտով կամ կպատահի ուրախ մի դեպք, և նա նորից կվերստանա իր նախկին տրամադրությունը։

Սակայն պատահեց հակառակը. ուրախ դեպքի փոխարեն թագավորն ստացավ մի գրություն, որը նրան մռայլեց ավելի։ Գրությունը հարավային նախարարներից էր՝ ոլորած, ժապավենակապ ու կնքած։ Երբ Արշակն սկսեց ընթերցել գրությունը, այն թագավորին հանձնող Վարդ իշխանը ակզբում նկատեց, որ արքայի աչքերը փայլատակեցին, բայց երբ կարդաց մինչև վերջը, նա ծնոտները սեղմեց իրար և մագաղաթը նետեց հատակին... Թե ինչ էր գրված այդ մագաղաթի վրա՝ Վարդը իմանալ չէր կարող, միայն կռահեց, որ հաճելի բան չէր, թերևս ավելին... Նա իր ենթադրության մեջ համոզվեց մանավանդ, երբ փոքր անց թագավորը կառգադրեց.

— Ավագներին, իշխան, հրավիրիր գահասրահ...

Արշակը որևէ ծանր խնդրի առջև գտնվելով կամ որևէ դժվարության հանդիպելիս՝ հավաքում էր ավագներին և լսում նրանց կարծիքները, շասելով իրենը, ստուգում էր անելիքը և ընդհանրապես շոշափում տրամադրություններ։ Ի՞նչ էր այս անգամ հավաքելու առիթը՝ Վարդը դարձյալ չիմացավ և միայն հարցրեց.

— Ե՞րբ կհրամայես, արքա։

— Երեկոյան։

— Հրամանդ,— և Վարդը դուրս եկավ խոնարհումով, զգալով, որ թագավորը զայրացած է հույժ։

Եվ նույն օրը երեկոյան, երբ ճրագարանները վառեցին պալատում, իրար հետևից սկսեցին գահասրահ գալ ավագները։ Եկավ ամենից առաջ Հավնունի Մանասսյ իշխանը՝ մի բարձրահասակ, լայնալանջ տղամարդ, որի խոշոր բեղերը կեռիքների պես կախվել էին ծնոտներից։ Դա վաթսունն անց թարմ ծերունի էր՝ ճերմակ մազերով։ Որպես արքունի որսա-

պետ՝ նա էր կազմակերպում թագավորի որսագնացությունը և, չնայած առաջացած տարիքին, անձամբ մասնակցում էր արքայի այդ զվարճության, միշտ նժույգի վրա, ինչպես մի երիտասարդ սուրում էր այս-այն կողմ՝ նետ-աղեղը պատրաստ բռնած... Նա երբեք չէր վրիպում։ Ջանում էր չհեռանալ թագավորից, որպեսզի անակնկալ պատահարից պաշտպանի նրան. երբեմն իր խփած որսը համարում էր թագավորի խփած։ «Ոչ, դու զարկեցիր, արքա. քո նետը դիպավ»,— պնդում էր նա։ Եվ Արշակը, սիրելով նրան, կարգել էր ավագանու անդամ. ուստի և նա անխախտ մասնակցում էր պետական բոլոր խորհուրդներին և գալիս ամենից շուտ։

Երկրորդ եկողը եղավ արքունի կալվածների և պալատի կառավարիչ Դղակ Հայր-Մարդպետը։ Նրա խոշոր, մեծամասկոր ուսերին բարձրանում էր անժպիտ ծաղկատար դեմքը, որ իսպառ զուրկ էր բուսականությունից ոչ թե ծադիկ հիվանդության հետևանքով, այլ ներքինի լինելու հանգամանքով։ Այդ էր պատճառը թերևս, որ ինչպես ասում էին, ատում էր կանանց և ուրախանում, երբ պատժում էին որևէ տղամարդու։ Ատում էր բոլոր նրանց, ովքեր բյուզանդասեր էին. և առաջին հերթին եկեղեցականներին։ Եվ չէր թաքցնում իր այս ատելությունը, քանի որ այն համոզումն ուներ, թե բյուզանդացիք էին, որ հայերին թշնամացրին պարսիկների հետ, ու միշտ ցանկություն էր հայտնում, որ թագավորը հեռու մնա հոգևորներից...

Ներս գալով՝ նա գլուխը թեքեց թեթևակի, Հավնունյաց իշխանին բարևելու համար։

— Հավնունյաց տեր, հուսամ բարեհաջող են որսից գործերը,— ասաց նա հեգնախառն մի ձայնով, որ կանացիական շեշտ ուներ։— Ե՞րբ եք ելնում նոր որսի։

— Երբ արքան աղատ լինի հոգսերից, տեր Մարդպետ,— պատասխանեց Մանասպ իշխանը շինականի պարզությամբ։

— Եվ ուրեմն որսի չես գնա այս տարի, քանզի արքայի հոգսերը կարի շատ են,— նկատեց Հայր-Մարդպետը մի ակնհայտ, շեշտված խորհրդավորությամբ, որից բարեհոգի, պարզամիտ Հավնունին լարվեց հետաքրքիր։

— Պատահե՞լ է նոր ինչ, Հայր-Մարդպետ։

— Այժմ կպարզենք, Հավնունյաց տեր։ Քանի արքան կանչել է արտաքո կարգի խորհրդի՝ կա ուրեմն կարևոր ինչ...

Նրանք ուզում էին շարունակել, բայց այդ խոսքերի վրա ներս մտավ հազարապետ Դավիթ Գնունին՝ վաթսունն անց, խելացի աչքերով մի ծերունի. ներս մտավ թեև տիրական վստահ քայլերով, բայց մտահոգ։ Նրա հետ էր և Բագրատունյաց Սմբատ ասպետը, որ պալատում իրեն զգում էր ինչպես իր տանը։ Այս զգացումը նրա մեջ թերևս իրավական-ժառանգական էր, որովհետև Բագրատունիները թագադիր էին՝ թագավոր օծելիս նրանք էին թագ դնում արքայի գլխին, ինչպես և ինքը եղել էր Արշակի թագադիրը։ Այս հանգամանքը նրանց տալիս էր հպարտություն և գերազանցության գիտակցություն։ Բայց Սմբատ ասպետը պարզ բնույթի մարդ էր և միշտ ժպտերես։

Երբ սրանք ներս մտան, Հայր-Մարդպետը և Հավնունին ընդունված կարգով անխոս խոնարհում արին։

Հազարապետը և Սմբատ ասպետը փոխադարձեցին։

— Այստեղ չէ՞ միթե Վարդ իշխանը,— հարցրեց ծեր Գնունին։

— Ոչ, տեր հազարապետ,— ասաց Հայր-Մարդպետը պատասխանում և լուր իմանալու տրամադիր։— Ով մի՞թե, տեր Գնունի, ինքդ իրազեկ չես հավաքման պատճառին։

— Ոչ տակավին։

Այդ միջոցին արագ քայլերով, գրեթե փութկոտ ներս մտավ կարճ ու պնդակազմ Վասակ սպարապետը, ինչպես միշտ, արծաթապատ սուրը կողքից կախ։ Նրա սրահայաց, ծակող, թափանցող աչքերը տեսնելով՝ ներկաները թվաց զգաստացան, և բոլորը միասին գլուխ իջեցրին, իսկ Բագրատունին, որ ավագների մեջ ամենակրտսերն էր, բայց մարմնով բոլորից հուժկու, մոտեցավ նրան։

— Դու ևս, տեր սպարապետ, անհրաժե՞շտ ես արքայի հրավերի նպատակին։

— Միանգամայն, տեր ասպետ։ Վստահ էի, թե կիմանամ ձեզնից,— և նա աչով ցույց տվեց հավաքվածներին։— Վարդ իշխանը հայտնեց, թե արքան ստացել է հույժ կարևոր մի գրություն, ինչ և «սասստկագույնս վրդովել է նորանս։

— Պատերազմի լո՞ւր։

— Կամ անիրավ պահանջ հարևաններից։

— Գուցեև...

Դրեաց, որ ոչ ոք չգիտեր, թե ինչո՞ւ համար է կանչել թագավորը, և ենթադրությունների էլ ժամանակ չեղավ, որովհետև հազիվ նրանք նստել էին բարձերին, երբ ծանրաքայլ գահասրահ մտավ Արշակն ինքը, ինչպես միշտ, դիք ոտքերով, մոռացուն թիկնոցը ուսերին և մտասևեռ։ Նա հետևից գալիս էին Վարդ իշխանը և արքայադպիր Եզրը՝ առատամազ ու սեպամորուք մի երիտասարդ, որ ձեռքին բռնել էր արծաթ սկուտեղ՝ վրան երկու գրություն և մելան ու գրիչ։

Թագավորին նկատելուն պես բոլորը ոտքի ելան իսկույն և խոնարհում արին ընդունված կարգով՝ աջ ձեռքերը սրտերին դրած, սպասելով, որ արքան նստի, որպեսզի իրենք ևս տեղավորվեն բարձերի վրա։ Արշակը շուրթերը սեղմած բարձրացավ պատվանդանի երկու աստիճանը և նստեց լայն, բազկավոր փայտե գահին, որի թիկնակը և նստատեղը ծածկված էին վագրի մորթիներով։ Նույնպիսի մի մորթի փռված էր գահի առաջ, վառ գույներով գորգի վրա, որի ծայրը ծածկում էր պատվանդանի աստիճանները և իջնում տարածվում հատակին։

Նստելով՝ Արշակը ձեռքով կտրուկ նշան արավ, որ ավագները նույնպես նստեն։ Եվ նրանք նստեցին ծանրորեն...

Երբ ամենքը տեղավորվեցին, թագավորն ասաց մռայլ.

— Ընթերցիր, Եզր։

Արքայադպիրը ձեռի արծաթ սկուտեղը դրավ ցած՝ մի նգույրի, առավ նրա վրայի ոլորուն մագաղաթներից մեկը և նրա վերին ու ներքին ծայրերը բռնած՝ սկսեց կարդալ, սեպաձև մորուքը մի կողմ թեքած, որ իրեն չխանդարի։ Նա, չգիտես ինչու, շփոթված էր երևում և ձայնը դողում էր։ Եզրը սկսեց, ամենքը դարձան լսողություն, իսկ ծերունի հազարապետը նույնիսկ ձեռքը բռնեց ականջի ետև, որ բաց չթողնի և ոչ մի բառ։

Գրությունը հարավային նախարարներից էր, որոնք գրում էին, թե ամիսներ առաջ թեպետև միաժողովում խոստացան խորհել և անել կարելին— այսինքն՝ մարդ տալ արքային՝ զորքի և քաղաքի համար, այժմ սակայն կշռադատելով խնդիրը ամենակողմանի, գտան ցավոք, որ ի վիճակի չեն այդ

անելու, վասնզի իրենք ևս հույժ կարիք ունեն «մարդերի և ծառայից»...

Գրության ընդհանուր իմաստն այն էր, որ նրանք մերժում էին գրեթե հանձն առած պարտավորությունները։

Եվ ստորագրել էր նախարարների մի մեծ խումբ, դրանց թվում Արծրունի Մերուժանը, Կամսարական տան նահապետ Ներսեհը, Վահևունյաց Վահեն, Բասենի Մանեճը և ուրիշները։ Վերջում խնդրում էին նրանք, որ մնա ավանդական կարգը, որ իրենք կշարունակեն տալ այնքան մարդ, որքան տալիս են միշտ պատերազմների ժամանակ, և ոչ ավելի, «զի ունինք մեծ կարիք գործավորաց»։

Իսկ երկրորդ գրությամբ բերդատեր նախարարները՝ նույն Կամսարականն ու Վահևունին հրաժարվում էին իրենց բեռները հանձնել արքային, պատճառ բերելով այն, թե առանց բերդերի անկարող կլինեն պաշտպանել իրենց կալվածները հայրենի և «ի դեպս թշնամյաց վտանգի կզրկվեն ապաստարաններից ապահով»։

«Ահա ինչու մագաղաթը նետեց արքան», մտքում կրկնեց Վարդը ընթերցման միջոցին և ընթերցումից հետո։ Իսկ նրա գրությունները, ընթերցելով, դրանք նորից ոլորեց խնամքով, նորից դրեց արծաթ սկուտեղի վրա ու կանգնեց ձիգ՝ ձեռքերը փորին դրած, նեղ, երկար այծամորուքը կախած, բայց աչքերի ծայրով մերթ արքային, մերթ նախարարներին նայելով, ավելի շատ նախարարներին, երևի տեսնելու, թե ի՞նչ տպավորություն արին գրությունները։

Ընթերցումից հետո լռությունը խորացավ գահասրահում։

Թվում էր՝ ոչ ոք չի կամենում ասել առաջին խոսքը, որ սխալված չլինի։ Տպավորությունը մեծ էր. նախարարների վարմունքը կարգից, պատշաճից դուրս էր. նախարարների մի ամբողջ խումբ, համախորհուրդ, մերժում էին թագավորի խնդրանքը։ Դա չեղած դեմընթաց վարմունք էր՝ հավասար ապստամբության։ Դրան վերադիր՝ մարդիկ դրժել էին իրենց խոսքն ու խոստումը, որ տվել էին երկու ամիս առաջ իշխանաժողովում՝ ամենքի ներկայությամբ։ Ի՞նչ կարելի էր ասել։ Արդարացնե՞լ՝ երբեք։ Մեղադրե՞լ... Արժանի էին մեղադրանքի։ Հանդգնությունը մեծ էր... Վաղուց տեսնված չէր նման բան։ Զգում էին ամենքը, որ նախարարների վարմունքն ունի

անտարակույս լուրջ պատճառ, բայց և կարող է ունենալ ծանր հետևանքներ... Խորհում էր ավագներից յուրաքանչյուրը և լռում։

— Տեր ավագներ, այժմ կամիմ լսել ձեր խոսքը,— ասաց թագավորը ձայնը փոխած, բայց դեմքի արտահայտությունը չփոխելով։

Երբ թագավորն առաջարկում էր խոսել, այլևս չէր կարելի լռել, և առաջինը խոսեց որսապետ Հավնունին.

— Արքա, մեն մի նախարար պարտ է, հարկավ, լինել խոսքիվ և գործիվ ճշմարիտ. առաջ ու առաջ պարտ է կատարել իր խոսքը և խոստումը նախարարական և ապա պարտ է հնազանդել արքայի կարգադրությանց, այլապես կլինի անիշխանություն անցանկալի...— Հավնունին շունչ քաշեց բարձրաձայն, ասես ծանր բեռան տակ ու շարունակեց՝ դարձյալ թագավորին նայելով։— Իսկ բերդերը հարկ է առնել, վասնզի և ոչ մի նախարար կարիք չունի բերդի, քանզի բերդատերը կամի լինել ինքնիշխան և չհնազանդիլ արքային։ Եվ ինչո՞ւ քանի մի նախարար ունենան բերդեր, մյուսները՝ ոչ։ Այո, հարկ է, որ բերդերը լինեն արքունի և... իրավացի է պահանջն արքայի...

Ավագները իրար նայեցին բազմանշանակ։ Նրանց հայտնի էր, որ Հավնունի Մանասպ իշխանը, որքան և բարի, տանել չէր կարողանում իր հարևան Կամսարական և Վահևունի իշխաններին, որոնք ավելի մեծ կալվածներ ունեին և տեր էին առավել ամուր բերդերի։ Նա չէր հանդուրժում, որ Հայոց Աշխարհում կան նախարարներ, որ բերդատեր լինելով՝ գոռոզամիտ են, ուստի և կուզեր, որ նրանք իսպառ զրկվեն իրենց բերդերից։

Հավնունին խոսում էր բարկացած, և նրա խոսքերից Վասակ սպարապետի նուրբ, զգայուն դեմքին առաջանում էին թեթև կնճիռներ, մկանների նկատելի կծկումներ։ Նա մերթ թարթում էր աչքերը, մերթ լարվում, ասես նրան ավելի լավ հասկանալու համար կամ մի բան ասելու ցանկությամբ, այնպես որ, երբ Հավնունին ավարտեց՝ նա ոտքի ելավ անհամբեր, թեև ընդունված էր խոսել բարձի վրա նստած։ Ոտքի ելավ և թուրը ետ տարավ, որ չխանգարի իրեն։

— Նոքա, ովքեր հզել են քեզ, արքա, սույն պատասխա-

նը,— սպարապետը մատնանիշ արավ սկուտեղը,— եղել են անշուշտ անխոհեմ։ Սակայն այսօր պատժել նոցա այդ պարտազանցությանց համար՝ կլիներ սխալանք։ Հավնունյաց տերը, հավանաբար— ես մակաբերում եմ նրա խոսքերից—, կամենում է ներքին պատերազմ, ինչ կուրախացներ միայն Հայոց Աշխարհի թշնամիներին։

— Ոչ, սպարապետ, ես կամիմ ո՛չ ներքին պատերազմ,— ուղղեց Հավնունին,— այլ կամիմ, որ պատժվեն հանդուգն մարդիկ։

— Պատժել, այո, ես նույնպես կամիմ, սակայն հարկ է ի գործ դնել պատժի այնպիսի եղանակ, որ առիթ չլինի ներքին պատերազմի։ Իսկ Հավնունյաց առաքինի տերը, չիսելով պատժի այլ եղանակներից, առաջարկում է միջոց մի, որ կարող է հարուցել ներքին պատերազմ։ Այն է՝ գրավել նախարարաց բերդերը. դա անտարակույս պետք է կատարվի զինու զորությամբ... սակայն նոքա ևս ունին զենք և... ահավասիկ ներքին պատերազմ։ Ո՛չ, արքա, պատժի սույն այս եղանակը ո՛չ վայել է և ո՛չ հարիր քո դիրքին, ո՛չ նաև մեր աշխարհի կացության, ուստի մերժում եմ...

Թագավորը լսում էր լարված, աչքերը կծկած, անշարժ, բայց երբ սպարապետը շեշտեց «մերժում եմ» բառը, նա իրանը առաջ բերեց գահի վրա և հարցրեց.

— Իսկ ո՞ր եղանակը կհամարես ցանկալի, սպարապետ։

Հարցումն անսպասելի կտրուկ էր և չոր։

Սպարապետը, թվաց, անակնկալի եկավ մի վայրկյան, բայց և այնպես, երբ ուզեց շարունակել՝ թագավորն ընդմիջեց։

— Ամեն խռովություն կարելի է սաստել գավազանով երկաթյա,— ասաց նա, և ամենքն զգացին, որ նա կողմնակից է խիստ պատժի, ուստի և լարվեցին իմանալու, թե ի՞նչ կպատասխանի սպարապետը։

— Ես, արքա, նախանձախնդիր եմ Հայոց Աշխարհի խաղաղության,— սկսեց սպարապետը ուղիղ գահին նայելով,— հետևաբար և մերժում եմ ամեն խիստ պատիժ, որ պատճառ կլինի ներքին խռովության։ Մենք ունենք թշնամի հարևաններ և դա շահավետ կլինի նոցա, արքա։ Դու ցանկացար իմանալ, թե պատժի ո՞ր եղանակը կհամարեմ ցանկալի։

Ահավասիկ իմ եղանակը. զրկել նոցա թեկուզ՝ իրենց բարձերից և հանդիմանել խստիվ։

Թագավորը նորից ուղղվեց. մեջքը հենեց գահի թիկնակին և աչքերը կծկեց ավելի. նա սովորաբար խուսափում էր վեճի մտնել սպարապետի հետ, որին հազիվ, մեծագույն դժվարությամբ, երկու տարի առաջ, համոզել էր հանձն առնել հայոց զորքի ղեկավարությունը, ինչ-որ հայրը՝ Տիրան թագավորը, առել էր Մամիկոնյաններից, վիրավորելով նրանց ինքնասիրությունը։ Ուստի Արշակը լռեց, չկամենալով այլևս ընդմիջել նրան։

Երբ Վասակն ավարտեց ասելիքը, Արշակը ներքին շուրթը դրեց ատամների տակ և նայեց մյուսներին, սպասելով նրանց խոսքին։

Բագրատունի Սմբատը համաձայն եղավ Վասակ սպարապետին։

— Տեր Հավնունին հարգելի է ամենիս,— ասաց նա.— Սակայն նրա ցանկությունը կլինի աղետավոր։ Ուստի և համամիտ եմ տեր սպարապետին։

Նույնպիսի համամտություն հայտնեց և Մեհենդակ իշխանը, ավելացնելով.

— Արդյոք կարելի չէ՞ նոր մարդ չպահանջել նախարարներից և իզուր չգրգռել նոցա։

Այս մտքին հավանություն տվեց նաև Վասակը։

— Առայժմ չպահանջել, արքա։ Աշխարհիս խաղաղությունը չվրդովելու համար։

Արշակը թեթևակի տարուբերեց գլուխը.

— Չպահանջել՝ նշանակում է քաղաքի կառուցումը թողնել ընդերկար։ Այնինչ՝ պետք է շտապել։

Այս ասելով՝ Արշակը չհայտնեց սակայն, թե հետո կարող են տեղի ունենալ խանգարիչ դեպքեր, կարող է ծագել պաուերազմ և կառուցումը կմնա անավարտ։ Նա չուզեց լիովին բացատրել նախարարներից մարդ պահանջելու իր նպատակը։

Հազարապետ Դավիթ Գնունին, իր բարձին նստած և խելացի աչքերը մի կետի հառած, շարունակ շփում էր ճերմակող մորուքը և թվում էր կշռադատում է մարդկանց ու նրանց խոսքը։

Երբ Սմբատ ասպետն ու Մեհենդակ իշխանն ավարտեցին իրենց ասելիքը՝ Թագավորը նայեց նրա կողմը։

— Իսկ ի՞նչ է խորհում Գնունյաց տերը,— ասաց նա մի ձայնով, որի մեջ կար և՛ հարգանք, և՛ վստահություն։

Հազարապետը մորուքը թողնելով շտկվեց և նայեց Թագավորին մի հայացքով, որ վկայում էր, թե նա ծանր կացության մեջ է զգում իրեն։

— Ես, արքա, խորհում եմ,— սկսեց նա հանդարտ,— որ մենք տակտվին կարող կլինենք կրկին քննության առնել նախարարաց գրությունները։ Սակայն առանց կացությունը և դոցա առաջացումը պարզելու՝ դիմել մեկեն խստագույն պատժի՝ էլիներ ոչ խոհեմ, ոչ հրահանգելի։ Մենք պարտ ենք նախ համոզել նախարարաց, որ վտանգալից քայլ են առած թե՛ իրենց և թե՛ Հայոց Աշխարհի համար։

— Ուրեմն տեր հազարապետը կամենում է, որ լինեմ զիջող և հանդգնությունը նոցա թողնեմ անպատի՞ժ,— ասաց Արշակը և զննող նայվածքը սևեռեց Գնունուն։

Բայց ծերունին բոլորովին չշփոթվեց.

— Ո՛չ, արքա. առայժմ չեմ հրահանգում ոչինչ և չեմ էլ ցանկանում խռովություն, քանզի խռովությունը մեզ կբերի թշվառություն և աղետներ չարագույն... Ես կամիմ նախ պարզենք շարժառիթը նոցա մերժումի և ապա համոզել... համոզել,— շեշտեց նա։

Թագավորը հիասթափված նորից հենվեց գահին և նայեց Հայր-Մարդպետի կողմը, կամենալով լսել նաև նրա խոսքը. բայց ներքինին լռում էր գլուխն իջեցրած, և դա զարմացրեց Արշակին։ Չէ՞ որ նա սովորաբար չէր խուսափում խոսք ասելուց. իսկ երբ չէր ցանկանում խոսել, հազվադեպ, անկարելի էր լինում խոսք իմանալ նրանից։

«Աղվեսը երևի զրուցել չի կամենում... Մտքերը թաքցրնում է՝ մարդոց չվիրավորելու համար»,— մտածեց Թագավորը և, աչքերը լրիվ բանալով, ասաց.

— Կամեցա, տիարք, որ օգնեք ինձ ձեր խորհուրդներով խոհական, բայց քանզի ցանկալի եք համարում խորհել կրկին, ուստի խորհենք ամենքս... Բայց պարտազանցությունը և հանդգնությունը բնավ չպետք է թողնել անպատի՞ժ։

Ու Արշակը մեկեն, ոմանց թվաց դժգոհ, ելավ գահից. դա նշան էր, որ խորհուրդը վերջացած է և ամենքը ազատ են, կարող են գնալ, ուստի և ավագները, գլխի խոնարհումներով, իրար հետեից, դուրս եկան գահասրահից։ Սովորաբար, նրման խորհուրդներից հետո, Արշակը խնդրում էր ավագներից որևէ մեկին՝ մնալ առանձին խոսելու, բայց այս անգամ չպահեց և ոչ մեկին։ Եվ երբ նրանք գնացին բոլորովին՝ նա դարձավ իր դպիրին, որ տակավին, սուր մորուքը կախ, մնացել էր կանգնած, հրամանի պատրաստ։

— Դու ևս ազատ ես, Եղբ։

Դպիրը վերցրեց արծաթ սկուտեղը՝ վրայի ոլորուն գրություններով հանդերձ և նույնպես դուրս եկավ՝ նույն սովորական խոնարհումներով, որոնք սակայն, այժմ մորուքի պատճառով, թվում էին ծամածռություններ։

Մենակ մնալով՝ Արշակը մտածեց, որ սպարապետը, հազարապետը և Բագրատունին թերևս իրավացի են.— առայժմ հարկ չկա պատժել խոստումնազանց նախարարներին. հայտ է պարզել իրոք, թե ինչո՞ւ նոքա խրոխտացել են այնքան, որ հանդգնել են հղել իրեն մերժողական գրություններ։ Որտեղի՞ց նոցա այդ համարձակությունը, այդ դեմընթաց ոգին, ինչ նկատելի չէր մի քանի ամիս առաջ, երբ նոքա պարկեշտ ու հնազանդ մասնակցում էին նախարարների միաժողովին։

Արշակը հանդարտ քայլում էր գահասրահի երկարությամբ և խորհում, թիկնոցը վար առած։ Երբեմն անցնում էր առանձնարանը, որ կից էր գահասրահին։ Նախարարների մերժումը նրան թվում էր վիրավորանքից ավելի, արհամարհանքի հասնող մի բան... Նա չէր մտածում, որ իր պահանջն անսովոր է և կարգից դուրս... ուստի և խորհելով՝ կրկին ու կրկին գալիս էր այն եզրահանգումին, որ գրությանց հեղինակ նախարարների հանդգնությունը ներշնչված կամ կատարված է մեկի թելադրանքով։

Մտածելով՝ Արշակը համոզվում էր, որ Վարդի բերած լուրերը լիովին հաստատեցին Տիրիթի խոսքերը և իր կասկածները Գնելի նկատմամբ։ Այդ կասկածներն ավելի ամրապնդեց նախարարների գրությունը... մերժողական... Ու նա որոշեց՝ նախ պարզել այդ դավը, ապա զբաղվել քաղաքով...

Բայց ո՞վ էր դավողը...

Արշակի միտքը կանգ էր առնում միայն Գնելի, արքայազն Գնելի վրա։

«Թերդերը չեն հանձնում, մարդեր չեն տալիս»,— մտածում էր նա և այդ ամենի պատճառը համարում էր այն, որ նրանք ապավինում են Գնելին։ Այդ ամենը հավանաբար նրանք թելադրում է ոչ թե ինքը Գնելը անձամբ, այլ անշուշտ նրա ներկայությունը Կավաշում։ Ինչո՞ւ քանի Գնելը չէր եկել Կավաշ՝ ամենքը հնազանդ էին և պատրաստակամ... Սակայն նրանք փոխվեցին Գնելի Կավաշում բնակություն հաստատելուց հետո... Ոչ միայն փոխվեցին... այցելում են նրան, մասնակցում նրա հարսանիքին, խնջույքներին. իրենց որդիներին ուղարկում են նրա մոտ՝ զինախաղերի ու զինավարժության... Եվ այս ամենը չգիտեն իմ ավագները, չգիտեն և դատում են ընդունայն... Միայն Հայր-Մարդպետը գիտեր երևի և լռում էր։ Բայց կարիք կա՞ այս ամենը նրանց պարզելու։ Եվ մի՞թե այս ամենը պերճախոս փաստեր չե՞ն, և չե՞ն բացահայտում միթե նախարարների տրամադրության փոփոխության պատճառը...

Արշակը լսել էր, որ իրենից դժգոհ արքահայրը Գնելի ճոխ հարսանիքին հրավիրել է շատ նախարարների, և որ Գնելը նրանց նվիրել է ոսկի և արծաթ զարդեր... Լսել էր, որ Գնելը վայելում է նրանց սերը։ Այս պարագան հայտնի էր Արշակին, ուստի և անհավանական չէր համարում, որ գժգոհ նախարարները, դալելով իր դեմ, գահ բարձրացնեն նրան... Նախարարնե՞ր։ Ինչե՞ր ասես չեն անի նախարարները հայոց...

«Զարիքի արմատը պարզ է,— խոսեց Արշակը ինքն իրեն գյուտ անողի նման սթափվելով և մտածեց, որ պետք է ուրեմն կանխել չարիքը, իսկ կանխելու համար՝ պետք է կտրել այն արմատից... Անհնազանդության և հանդգնության աղբյուրը Գնելն է անշուշտ, այո, Գնելը»,— մտածում էր Արշակը շարունակելով իր անցուդարձը։

Քայլում էր և կրկնում մտքում, որ հանդուգն Արծրունուն, Կամսարականին, Վահևունուն և մյուսներին հնազանդության մեջ պահելու լավագույն միջոցը թերևս այն կլինի, որ Գնելը հեռացվի Կավաշից՝ իր հարսի հետ միասին... Այնժամ այլևս չեն հոխորտա այդ Արծրունի, Կամսարական, Վահևունի և

համախոհ նախարարները... այնժամ կզսպեն իրենց և կկատարեն արքայի կամքն ու պահանջները... Այո, նրանք, կըսթափվեն դրանից և կզգան, որ թագավորը չի խնայում անգամ իր հարազատ եղբորորդուն՝ արքայազն Գնելին, հետևարար՝ չի խնայի և իրենց... Եվ, վերջապես, Գնելին հեռացնելով, ինքը հանցանք չի գործի, այլ պահպանած կլինի ավանդական օրենքը։ Ամենքը գիտեն, որ արքայազունները, բացի գահաժառանգից, չպետք է ապրեն Այրարատում, այլ Աղիովիտ ոավառում... Արշակին թվում էր, թե արտոնելով Գնելին՝ գալ Կավաշ, ինքը այդպիսով գործել է մեծ սխալ, որի տխուր հետևանքը ակներև է ահա։

— Այո, թագավորությանս մեջ խաղաղություն պահելու համար Գնելը պետք է հեռացվի... Տիրիթը զգուշացումը կատարեց ժամանակին,— ասաց Արշակը և, կանգ առնելով, ծափեց։

Ներս մտավ ծեր սենեկապահը և ձգվեց հրամանի պատրաստ։

— Կանչիր Վարդ իշխանին։

Ցանցավ մի քանի վայրկյան՝ եկավ Մամիկոնյան իշխանը զարմացած, որ արքունի խորհրդից անմիջապես հետո թագավորն այդպես շտապ կանչում է իրեն։ Ի՞նչ կար արդյոք նոր, արտակարգ,— կարդացվում էր նրա դեմքին։

Տեսնելով Վարդ իշխանի մուտքը՝ Արշակն ընդհատեց երթևեկը և մոտեցավ նրան։

— Այդպես, իշխան. այսօր իսկ հարկ է գրել հրաման և տանել արքայազն Գնելին, որպեսզի նա, երեք օրվա մեջ, թողնի Կավաշը և գնա ապրելու Հաշտենից գավառը՝ Աղիովիտ կամ Առբերանի... իր հարսով հանդերձ։

Այս ասելով՝ թագավորը մտածեց մի պահ և ավելացրեց շեշտով.

— Նա՛և արքայազն Տիրիթին։

— Նաև Տիրիթի՞ն,— չկարողացավ իր զարմանքը պահել Վարդ իշխանը։— Եվ ինչո՞ւ, արքա։

— Որպեսզի լինեն մայրաքաղաքից հեռու, ինչպես կարգն է, ավանդական։

— Թույլատրիր խոսել, արքա։

— Խոսիր, իշխան։

— Ներիր, արքա, համարձակ հարցումս։ Կա՞ սրբյոք կարիք, որ արքայազն Գնելը արտաքսվի Կավաշից։ Եթե դա արվում է այն նպատակով, որ նա չդավի և իր շուրջը չժողովի նախարարներ դժգոհ, ապա իրավունք տուր դիտեմ, որ Գնելը այդ ամենը ավելի ազատ և ավելի դյուրին կանի Հաշտենից գավառում, ինքը ևս միանալով տեղի դժգոհ նախարարաց, վասնզի ինքն ևս կլինի կարի դժգոհ... Թերևս նախարարներից առավել։ Մինչդեռ, արքա, եթե նա մնա Կավաշում, կլինի հանապազ հսկողությանդ ներքո, հետևաբար՝ կլինի զգույշ և չի համարձակի անել ոչինչ չարամիտ։

Թագավորը վճռաբար տարուբերեց գլուխը։

— Ոչ, երիցս ոչ, իշխան։ Կանենք այնպես, որ նա այնտեղ ևս լինի մեր հսկողության ներքո։ Տիրիթը նույնպես կտեղափոխվի այնտեղ, ինչպես լսեցիր։ Եվ նա արդեն իսկ իրազեկ կպահի մեզ Գնելի վարքի և վարմունքի մասին,— շեշտեց Արշակը իր վճռից գոհ։

— Իսկ արքահա՞յրը,— ու Վարդը հարցական նայեց Թագավորի երեսին։— Չէ՞ նա խնդրեց՝ թողնել թոռնիկին մոտը, և դու թույլատու եղար, արքա։ Նա կցանկա անշուշտ՝ իմանալ թոռանց հեռացման պատճառը։ Ի՞նչ պատասխանել... Չե՞ն ասի արդյոք, որ դու վախեցար Գնելից և... դա առիթ չի՞ դառնա, որ քո հայտ և անհայտ թշնամիներդ...

Արշակը սև հոնքերն իրար բերեց։

— Նախ, իշխան, արքայազուն թոռները չեն, որ պիտի խնամեն արքայահորը, այլ իմ կարգած մարդիկ։ Նոքա՝ այդ թոռները, եկան-տեսան իրենց պապին, և բավ է։ Չպետք է թողնել չար հունդը ծլի և աճի, և կամ կայծը հրդեհ դառնա։ Իսկ թե ի՞նչ կզրուցեն թշնամիները՝ կարևոր չէ բնավ։ Թշնամին հանապազ մնում է թշնամի և բարի չի խորհում երբեք։ Հետևաբար, առավել խելացի չէ՞ր լինի հեռացնել թշնամուն, որ չխանգարի մեր գործն ու հանգիստը։

Վարդ իշխանը, որ լսում էր զարմանքից անշարժ, թագավորի խոսքից հետո կարևոր համարեց նկատել.

— Այդ վճիռը, արքա, ծանր, անչափ ծանր կլինի արքայահոր համար։

Արշակն անմիջապես չպատասխանեց, նորից սկսելով քայլել։

— Ծա՛նր,— ասաց նա առանց կանգ առնելու։— Չի մնա և չենք թողնի մենակ, ինչպես և մենակ չէր մինչև թոռների ժամանումը։

— Նա բողոք կբառնա, արքա... կնզո՛վի։

— Խզո՛ւր։

— Կարգադրությունդ կհամարի թշնամություն իր դեմ։

— Առավել իզուր,— կրկնեց Արշակը և նորից կանգ առավ։— Այդպես, իշխան, այժմ իսկ թող Եզրը հորինի այդ հրամանը։

Հրաման հորինելը դժվար խնդիր չէր, Վարդն անմիջապես կարող էր այդ կատարել։ Սակայն դժվարը, որ այդ պահին մտահոգում էր Վարդ իշխանին, այն էր, թե ո՞վ պետք է տաներ այդ հրամանը Կավաշ... Հանկարծ թագավորը այդ առաքելությունը նորից հանձնարարեր իրեն, ինչ ինքը չէր ցանկանա երբեք... Ահա ինչո՛ւ նա ցանում էր տարհամոզել արքային, որ չվտարեր արքայազուններին... Քանի մի օր առաջ շնորհավորել էր Գնելին իր հարսանիքի առթիվ և... վաղը մյուս օրը հրաման տաներ արտաքսելո՞ւ... Ի՞նչ կմտածեր Գնելը իր մասին. կեղծավո՛ր, լրտե՛ս, խաբեբա՛... Ո՛չ, Վարդ իշխանն այդ չէր ցանկանա... Չէր ցանկանա նորից հանդիպել ո՛չ Գնելին, ո՛չ արքայահորը և ո՛չ Փառանձեմին, մանավանդ Փառանձեմին... Ինչո՞ւ մի այդպիսի նորատի աքսորվի հեռավոր մի գավառ... Իսկ Տիրիթը, Տիրիթը, որ սիրում և վստահում է իրեն, ի՞նչ կասեր... Եվ, վերջապես, այդ արքայազուններից մեկը կարող է թագավորել մի օր...

Ու Վարդն աղոթում էր մտքում, որ տերը փրկի իրեն այդ ծանր փորձությունից և միաժամանակ հնար էր մտածում խուսափելու այդ տխուր, ոչ պատվաբեր առաքելությունից. նա մինչև իսկ մտածում էր հիվանդություն կեղծել, մնալ տանը փակված, որ թագավորն իր այդ կարգադրությունը հանձնարարի մեկ ուրիշի... այլապես ինքը չէր կարող տեսնել կույր արքայահորը և լսել նրա կշտամբանքը, զայրույթը և վիշտը... Այո, արքահայրը կզայրանար սաստիկ և չէր խնայի ոչ ոքի...

Ու Վարդ իշխանը խորապես վշտացած դուրս եկավ գահարահից։

«Օ՜, ծանր է լինել հրամայողի կամակատար»,— հառաչեց Վարդը միջանցքում և գնաց արքայի հրամանը դպիր Եզրին հայտնելու... Միաժամանակ նա մտածում էր և արքայազն Տիրիթի մասին. չէ՞ ինքը խոստացել էր օգնել նրան, բարեխոս լինել արքայի առաջ, որ սա բարեհաճ լինի նրա հանդեպ։ Ի՞նչ անել այժմ...

Այդ օրը մինչև կեսգիշեր, մինչև հրամանի պատրաստումը, մինչև առավոտ՝ Վարդ իշխանը խորհում էր թագավորի մտադրության մասին և ցանկանալով ցանկանում, որ այդ հրամանի հանձնակատարը չլինի ինքը...

Ր

Այն պահին, երբ Վարդը մտածում էր այդ ծանր առաքելությունի վրա, Արշակ թագավորը, շարունակելով իր անհանգիստ երթևեկը, խորհում էր դարձյալ Գնելի մասին։ Որքա՞ն իրոք խելացի կլիներ վտարել Գնելին Կավաշից. դա չի՞ հարուցի արդյոք ընդհանուր դժգոհություն և թշնամիները չե՞ն շարախնդա իրոք, որ ինքը նրան հեռացնում է երկյուղից, ինչպես ասում է Վարդ իշխանը։

«Թշնամիներս, այո, կշարախնգան անշուշտ»,— ասաց Արշակը մտովի և անմիջապես արդարացրեց իրեն, որ դա անում է անհրաժեշտությունից դրդված՝ երկիրը խաղաղ պահելու համար... Խաղաղություն, որի մեջ միայն հնարավոր կլինի կառուցել և ավարտել իր Ավանը... ու քանի որ նախարարները մերժում են իրենց բերդերը՝ նա իր Ավանը կկառուցի այնպես, որ այն դառնա ամուր բերդ... ոչ թե մեկի բերդը, այլ ամենքի բերդը, հայոց բերդը... Սակայն Գնելին վտարելու փոխարեն խելացի չէ՞ր լինի կանչել նրան և անձամբ խոսել հետը, սիրել, սիրաշահել, որ նա, տակավին անփորձ պատանի, չընկնի չարանենգ նախարարների ազդեցության ներքո,— ասում էր մի այլ ձայն։

«Եվ ինչո՞ւ ոչ,— մտածում էր Արշակը։— Կարելի է և կանչել. կանչել մայրաքաղաք և գրուցել հետը... Սիրելով կարելի է փոխել մարդուն և դարձնել անձնվեր հավատարիմ... Թեև կարգ չէ և ընդունված չէ, բայց կարելի է գուցե հանձնել

նրան և բարձր մի պաշտոն արքունիքում... այսպես նա հեռու կլինի դժգոհ նախարարներից...»։

Մտածելով՝ Արշակը գտնում էր, որ պետք էր փորձել այդ՝ անձամբ խոսել Գնելի հետ և հասկացնել, որ վտանգավոր է լսել նախարարներին, որ նրանք ամենքը անբարեհույս մարդիկ են, կարող են պղտորել մարդկանց հոգին և մտքերը մղել հանցավոր գործերի... Այո, նա կզգուշացնի, որ նախարարները կարող են անել մեծամեծ խոստումներ, սակայն Գնելը չպետք է հավատա նրանց, զի նրանք ամենքը թշնամի են Արշակունիներին. նրանք պատրաստ են մինչև իսկ գժտություն սերմանել թագավորի և արքայազունների մեջ՝ իրենց նպատակներին հասնելու համար...

«Իսկ եթե Գնելն ուղարկված է կայսեր կողմի՞ց»,— ասաց ներքին մի ձայն։ Արշակը մտածեց։ «որ դա ևս կարող է լինել։ Թերևս կայսրը դժգոհ է իրենից և կամենում է իր փոխարեն թագավորեցնել Գնելին... Անհավանական չէ և այդ... Բայց դա ևս կարելի է պարզել գուցե անձամբ խոսելով։

Սակայն ինչպե՞ս կարելի է տեսնվել Գնելի հետ.— Գնալ Կավաշ արքայահորը տեսնելու պատրվակո՞վ և խոսե՞լ այնտեղ։ Ոչ, դա վայել չէր և ոչ էլ հարմար. արքահայրը, իրեն տեսնելով,— մտածում էր Արշակը,— պիտի գանգատեր իր վիճակից... Ոչ. գնալ Կավաշ՝ հարմար չէր։ Հարսանիքին չգնալուց հետո դա ո՛չ հարմար է, ո՛չ պատշաճ... Լավագույնը կլինի այն, Գնելին իր հարսի հետ հրավիրել Վաղարշապատ և զրուցել այստեղ՝ պալատում,— եզրակացրեց Արշակը։ Բայց այդ միջոցին հանկարծ— չգիտես ինչ կապով— հիշեց, որ շուտով լինելու է Նավասարդի տոնը Շահապիվանում, տարեկան աշխարհախումբ տոնը, ուր մեկնելու է նաև ինքը՝ Օլիմպիա թագուհու հետ։

«Լավագույնս է ահա հրավիրել Գնելին այդ տոնին,— մտածեց Արշակը,— և այնտեղ առանձինս խոսել հետը, նախապես շնորհավորելով ամուսնությունը, ընծաներ տալով իրեն ու իր հարսին... Դա կլիներ առավել խելացի... Դա կուրախացներ և արքայահորը»...

Այս միտքն այնքան հաճելի թվաց Արշակին, որ նա նրստեց մտածումներից ու երթևեկությունից հոգնած։ Բայց որքան էլ հոգնած՝ նա այնուամենայնիվ շարունակում էր մտա-

ծել, և գտնում էր, որ Գնելին բարեկամանալուց հետո կարելի է հանգիստ զբաղվել թե՛ Ավանի շինությամբ և թե՛ պատժել անհնազանդ նախարարներին...

Գալիս էին նաև հակառակ մտքեր, որ առարկում էին այդ եզրակացության դեմ, և Արշակը կանգնում էր ծանր երկընտրանքի առաջ...

«Ի՞նչ անել, ո՞րին նախապատվություն տալ»,— մտածում էր նա, և մտածում էր երկար։

Փոքր հետո նա ծափ զարկեց։

Ներս մտավ տարեց սենեկապահը։

— Հրավիրիր Հայր-Մարդպետին։

Սենեկապահը գլուխ իջեցնելով դուրս գնաց, և փոքր անց եկավ մեծամարմին ներքինին՝ մի բարակ թիկնոց վրան։ Նրա խոշոր, անմազ, ծաղկավեր դեմքը շիկնած էր կիսաեփ կարկանդակի պես, չգիտես անակնկալ կանչվելո՞ւց, թե շտապելուց։

— Ողջո՛ւյն արքայիս,— խոնարհեց նա գլուխը և կանգնեց պատկառոտ։

— Ողջո՛ւյն, մարդպետաց հայր,— շեշտեց Արշակը պաշտոնական եղանակով և, մատնացույց անելով նրան մի եռոտանի, ինքն ևս նստեց նույնանման մի աթոռի։

Երբ երկուսն էլ արդեն նստել էին դեմ-դիմաց, թագավորը, աչքերը կծկած, նայեց պալատի կառավարչին, նայեց անխոս, ապա ասաց հանդարտ.

— Ես, Հայր-Մարդպետ, կարի դժգոհ եմ քեզնից։

Հայր-Մարդպետը գունատվեց՝ անմազ կոպերը թարթելով։

— Ինչո՞վ եմ արժանացել, արքա...

— Ինչո՞ւ լռեցիր ավագների ժողովին և չասացիր խոսքդ։

Հայր-Մարդպետը չշփոթվեց։

— Լռեցի, արքա, քանզի բարկացած էիր հույժ։

— Կարծիքովդ՝ չպե՞տք է բարկանալ չարամիտների և ուրացողների վրա։

— Բարկանալ կարելի է, արքա, և զանցառուները արժանի են բարկության։ Սակայն բարկությունը վճիռ արձակելիս վատ խորհրդատու է։

— Պետք է մակաբերեմ ուրեմն, որ հակառակորդի վրա պետք չէ՞ բարկանալ։

— Տարբեր են լինում, արքա, հակառակորդները։ Ամենքին հարկավ չի կարելի վերաբերվել միատեսակ։

— Հակառակորդը թշնամի է, ուստի և արժանի է պատժի,— և Արշակը սև հոնքերը այնպես բերեց իրար, որ հոնքամեջը չքացավ։

Հայր-Մարդպետը ժպտաց.

— Ինչո՞ւ, արքա, երբ հակառակորդին կարելի է հաղթել՝ հետը հաշտվելով կամ լիակշիռ ոսկի տալով, և կամ՝ համախոհից բաժանելով։

«Որքա՜ն խորամանկ է այս աղվեսը և որքա՜ն խելոք... Մի՞թե կռահել է, որ ես այդպես եմ վարվելու Գնելի հետ, որ կամենում եմ բարեկամանալ Գնելիի»,— մտածեց Արշակը։ Նա Հայր-Մարդպետին կանչել էր իսկապես հարցնելու, թե ի՞նչ կարծիքի է Գնելի մասին, բայց, նրա խոսքը լսելով, ուրաց միայն.

— Պետք չէ՞ ուրեմն հակառակորդին պատժել։

Հայր-Մարդպետի շուրթերի վրա ժպտի նման մի բան երևաց։

— Հակառակորդին կարելի է և պատժել, արքա, եթե դա շահավետ կլինի քեզ և երկրիս հայոց։ Ես այնպես եմ խորհում, որ թույլ հակառակորդին, արքա, պետք է վախեցնել, քաջին՝ ընկճել, ազահին՝ տալ դրամական ու հողային նվեր, իսկ հավասարին՝ հնթարկել։ Գալով նախարարներիդ ներհակ՝ նոքա անշուշտ հավասար չեն քեզ, արքա. հետևաբար՝ դոցա դյուրավ կարելի է բաժանել միմյանցից՝ առատ խոստումներով, ոմանց ծանրագին նվերներով կամ բարձր ու շոյող մի պաշտոն հանձնելով։ Իսկ ընդհանրապես, ներիր ծառայիդ հանդգնությունը, արքա, դու քեզ պետք է հանգիստ պահես անգամ այն ժամանակ, երբ զայրացած ես։

— Հանգի՞ստ, երբ զայրացա՜ծ եմ,— Արշակը քմծիծաղով տարուբերեց սևամազ գլուխը։

— Այո, արքա,— շարունակեց պալատի կառավարիչը, չվարանելով թագավորի քմծիծաղից։— Ոչ միայն հանգիստ, պետք է ժպիտով խոսել այն մարդու հետ, ով վիրավորանք է ասել քեզ...

Թագավորը նորից տարուբերեց գլուխը։

— Ինքդ, մարդպետաց տեր, չես սիրում հոգևորներին, բայց խոսում ես նոցա մտքերով ու լեզվով։

— Տարբեր ենք, արքա. նոքա քարոզում են հեզություն ու հնազանդություն, իսկ ես,— ներիր համարձակ խոսքս,— ես ասում եմ՝ քեզ և մեր աշխարհի համար օգտակար խոսքեր։ Չեմ ասում բնավ՝ եղիր հնազանդ։ Ո՛չ երբեք... Այլ ասում եմ, թե երբ զայրացած ես՝ եղիր սիրալիր, և քաղցր խոսքեր ասա, երբ պատրաստվում ես հարվածելու, անգամ՝ երբ հարվածում ես։

Արշակն ընդմիջեց.

— Սթափի՛ր, Հայր-Մարդպետ։ Արքայիդ խորհուրդ ես տալիս կեղծավորե՞լ...

— Բնավ, արքա։ Այդ պահանջում է քո գահը։ Այդպես պետք է վարվել երկիր կառավարելու համար։ Այդպես կհաղթես ավելի։ Իսկ երբ թշնամուդ ընկճես՝ հեզ եղիր և հեզ խոսքեր ասա, ու ցույց տուր, որ ցավում ես հոգով— և դու կդահես, արքա, ոչ միայն ականատես կոզմնակի մարդոց, այլև թշնամուդ համակրանքը։

Արշակը բարձրացրեց հոնքերը, և դրանից վերացավ նրա հոնքամիջի կնճիռը։

— Ավելորդ խոսքեր ես զրուցում, Հայր-Մարդպետ։ Թշնամուն հարվածում են զենքով և նախատական խոսքով։ Ասածդ՝ վատթար կեղծավորություն է, և ինքդ հավանաբար այդպես ես վարվում, այո՞։

Եվ Արշակը շեշտ նայեց խոսակցի աչքերին։

Հայր-Մարդպետը լռեց վիրավորված։

Արշակը նկատեց այդ և նորից դիմեց նրան հեգնախառն ձայնով.

— Այնուհետև՝, տեր փիլիսոփ։

— Այնուհետև ի՞նչ զրուցեմ, արքա, երբ հեգնում ես նվաստես,— վշտացած ձևացավ ներքինին։— Զրուցովս մի ցանկություն ունեցա, արքա, օգտակար լինել քեզ և Աշխարհիս։

— Ա՛, եթե ցանկությունդ այդ է, շարունակիր,— և Արշակը ձեռք խփեց նրա ծնկան։— Ես լսում եմ քեզ։

Հայր-Մարդպետը շտկվեց նստած տեղում։

— Արքա, մտածելով մեր աշխարհի օգուտը՝ պարտ ենք կշռադատել պատերազմն ու հաշտությունը։ Եթե հավասար շահ են բերում դրանք՝ պետք է նախընտրել հաշտությունը, վասնզի պատերազմն ավերանք է ու մահ և, վերջապես, մեղքի մեջ է դնում սկսողին։ Սույնպես նայելու է, արքա, և նախարարաց վարքին։ Ելանել և պատժել նոցա՝ շահավետ չէ բնավ, քանզի միաբան են և միախորհուրդ։ Չպետք է դրգռել նոցա, այլ հաշտ բաժանել և խորտակել մեկ-մեկ... հանուն գահի և հայրենյաց։

«Խելացի է ազվեսը և խորամանկ»,— մտածեց նորից Արշակը և գլխով նշան արավ, որից ներքինին զգաց, որ ինքն ազատ է։

Հազիվ Հայր-Մարդպետը դուրս էր եկել, Արշակը կարգադրեց հրավիրել սպարապետին։ Ցանկալի էր իմանալ, թե Վասակն ի՞նչ է մտածում Գնելի մասին, և նախարարների վարմունքն արդյոք հետևանք չի՞ համարում Գնելի ներկայության կամ թելադրության...

Վասակը եկավ զարմացած։ Թեև գիտեր, որ թագավորը սովորություն ունի՝ ամեն մի խորհրդաժողովի վերջում ավագներից մեկին-երկուսին պահելու մոտը կամ հրավիրելու հետո, բայց և այնպես այս անգամ նա եկավ զարմացած։ Ինչո՞ւ է կանչել թագավորը։ Եթե ուներ ասելիք՝ ինչո՞ւ չասաց ժողովից անմիջապես հետո... Նոր ի՞նչ կարող է լինել։

Բայց թագավորի առաջին իսկ հարցումը ցրեց նրա տարակույսը։

— Տե՛ր սպարապետ, խոսքդ նախարարաց նամակի առթիվ պարզ չեղավ ինձ։ Չկամեցա հարցում անել ավագների ներկայությամբ։ Այժմ կուզեի մեկնես այն, ինչ չմեկնեցիր այնտեղ։

— Ճշմարիտ է, արքա, ես ասելիքս չավարտեցի, քանզի հնար չէր ասել ավելին։ Այժմ կլինեմ առավել պարզ։ Դու կամենում ես խստություններով հնազանդեցնել նախարարաց, կամենում ես նոցա ենթարկել արքունյաց կամքին, որպեսզի վտանգի ժամին դյուրանա պաշտպանությունը հայրենյաց։ Դժվարին խնդիր է։ Նախարարները եղել են ինքնագլուխ, ինքնակամ, ուստի և հազիվ համաձայնեն բերդերը յուրյանց զիջանել քեզ։

— Սակայն հնարավո՞ր է արդյոք առանց խստության նոցա զինական ուժը քո հրամանիդ հնթարկել, որպեսզի ի վիճակի լինենք դիմագրավել արհավիրքները։

Վասակը աչքերը կկոցեց.

— Ոչ, արքա, խստություն պետք չէ։ Անհրաժեշտ է մեզ ինչպես արտաքին, այնպես և ներքին խաղաղություն։ Թող Նոցա բերդերը մնան յուրյանց։ Դու շինիր քո բերդը։

Թագավորը շեշտ նայեց սպարապետին և անսպասելի գրկեց նրա ուսերը։

— Ճշմարիտ ասացիր, սպարապետ։ Գուշակեցիր միտքս։ Ես վաղուց խորհել եմ՝ կառուցել իմ բերդը, որը չի լինի մեկի բերդը, այլ ամենայն հայոց բերդը։ Ես իմ ավանս հիմնեցի այդ իսկ նպատակով։ Բայց չուզեցի իմանան գաղտնին։ Այժմ, երբ ինքդ ասում ես նույնը, գոհ եմ անչափ։ Ուստի ներիր, որ խոհս նվիրական չեմ հայտնել քեզ, քանզի այն տակավին չուներ կերպ ու մարմին, առավել՝ չուզեցի իմանան նախարարները ներհակ. այլապես կհասցնեին Շապուհի ականջը և առավել ամուր կպահեն իրենց բերդերը։ Այնինչ ես կամենում եմ, որ Հայոց Աշխարհի բոլոր բերդերը լինեն քո ձեռքին՝ մեր հայրենին պաշտպանելու համար... Այսու նախարարաց չպետք է թողնել ինքնագլուխ...

Այստեղ Արշակն ուզեց հարցնել, թե ի՞նչ ազդեցություն ունի Գնելը նախարարների վրա և թե նպատակահարմա՞ր է արդյոք Գնելին թողնել Կավաշում. բայց ավելորդ համարեց. սպարապետը կարող էր կարծել, թե ինքը վախենում է Գնելից։

Թագավորն ու սպարապետը խոսեցին երկար։ Արշակը պնդում էր՝ ուժի զորությամբ նախարարներին ենթարկել արքունիքին, առնել նրանց բերդերը և զինական ուժը։ Վասակը դարձյալ դեմ էր խստության. դա կայառակտի Հայոց երկիրը, որ առանց այդ էլ միաբան չէ։ Սպարապետը հայտնեց նաև այն կարծիքը, թե երբ կառուցվի նոր բերդը, այնժամ նախարարները կպատկառեն, և Հայոց Աշխարհը կարող է հանգիստ լինել պարսից կողմից։ Սպարապետի կարծիքն ուրախացրեց Արշակին, բայց և այնպես նա կարևոր համարեց բացատրել, թե ինքը հետամուտ է այդ իսկ նպատակին. բեր-

դը կառուցել պարսից ներխուժման մշտական ճանապարհի վրա։

— Բարի է, արքա,— ասաց Վասակը,— դա կլինի ամրակուռ պատվարը մեր աշխարհի ապահովության։

Երբ սպարապետը հրաժեշտ առավ և գնաց, Արշակը նորից մտածեց, թե որտեղի՞ց է արդյոք նախարարների հանդգնությունը և, երկար խորհելուց հետո, գտավ դարձյալ, որ նրանց համարձակություն է տիրշնչում անշուշտ Գնելի ներկայությունը Կավաշում... Գուցեն այդպես վարվում են Գնելի հետ համախորհուրդ...

Ի՞նչ պետք է անել ուրեմն՝ արտաքսե՞լ Գնելին, թե բանկամանալ... Որի՞ն նախապատվություն տալ,— մտածում էր նա դարձյալ, և մտածում էր երկար ու ոչ մի վճիռ չէր կարողանում ընդունել...

Եվ ահա, երբ մյուս օրը առավոտյան Վարդ իշխանը մտավ թագավորի առանձնարանը և Գնելին արտաքսելու հրամանը տվեց արքային ստորագրելու, Արշակը գլուխը տարուբերեց.

— Հրաման պետք չէ, իշխան։ Կավաշ կմեկնես առանց հրամանի։

Վարդը գունատվեց. ծանր, տհաճ առաքելությունը ուրեմն վիճակվեց իրեն,— մտածեց նա հուսահատությունից մի ոտքի հենվելով։ «Ծանր մի առաքելություն՝ առանց գրավոր հրամանի... ուրեմն կարգադրությունը պիտի կատարեր բանավո՞ր»։ Դա կլիներ արդեն առավել դժվարին։

— Ծանր, դժվարին առաքելություն է, արքա,— ասաց Վարդն ակամա։

— Ոչ, իշխան, առաքելությունդ այս անգամին չի լինի դժվարին։

— Ինչպե՞ս, արքա,— դարձյալ ակամա ելավ Վարդի բերանից։

— Դու կմեկնես Կավաշ այլ առաքելությամբ։

Վարդի վախը փոխվեց տարակույսի։

— Այո, կմեկնես և Գնելին իր հարսի հետ կհրավիրես Շահապիվանի տունին։ Ես կամենում եմ տեսնել նորան և

անձամբ-անձին խոսել արքայազնի հետ։ Այնուհետև կլինի որսագնացություն։

Այս անգամ Վարդի տարակույսը փոխվեց զարմանքի։ Որքան էլ թեթևություն զգաց, բայց զարմացավ թագավորի փոփոխամտության վրա.— ի՞նչ էր կատարվել մի գիշերվա մեջ, ինչո՞ւ էր արքան փոխել իր որոշումը, զայրույթը դարձնելով ողորմածություն։ Պարզվե՞լ էր նոր հանգամանք, թե զղջացել էր իր խստագույն հրամանի համար։

Թագավորը շարունակեց.

— Մեկնելով Կավաշ, քեզ հետ, իշխան, կտանես և նվերներ արքայահոր համար, այն, ինչ ախորժելի է նրա ճաշակին,— կարգադրեց Արշակը վերջում։

Երբ Վարդը հրաժեշտ առավ մեկնելու, նա ամենայն արագությամբ դուրս եկավ պալատից, մտածելով, թե թագավորը հանկարծ նորից չփոխի իր որոշումը։

* * *

Հաջորդ օրը Վարդ իշխանը երկին մեկնեց Կավաշ՝ դարձյալ ձիաբեռ նվերներով ու թիկնապահներով։ Որքան էլ ճանապարհը տհաճ էր իր խորդուբորդներով, իր վերելքներով ու վայրէջքներով, նա այնուամենայնիվ գնում էր թեթև սրտով. հույս ուներ, որ այս անգամ հանդիմանություններ չէր լսի կույր արքայից և ծանր կացության մեջ չէր լինի։

Երբ Վարդը արքայի հրավերը հայտնեց Գնելին, արքայազնը ուրախությունից շառագունեց և ժպիտներ ցոլացին նրա աչքերում։

— Շնորհակալություն արքա-հորեղբորս,— ձեռքը սրտին դրավ Գնելը։— Այդ մեծ պատիվ է ինձ և իմ հարսին։ Պիտի գամ մեծավ սիրով։

Ապա Գնելը հետաքրքրվեց, թե ե՞րբ է սկսվելու տոնը։

— Նորապսակները մոռանում են, արքայազն, ամեն բան,— նկատեց Վարդը մեղմաժպիտ, և բացատրեց, որ տոնն սկսվելու է տասը օրից, այնպես որ բավական ժամանակ է մնում հարկ եղած պատրաստությունները տեսնելու։

Կյանքում ինչպես վատ, այնպես և լավ լուրերը երկար չեն մնում ծածուկ. տարածվում են անհայտ ճանապարհնե-

ռով։ Այդպես էլ այս անգամ. չգիտես ինչպես, Կավաշի ամբոցում ամենքն անմիջապես իմացան, որ Արշակ թագավորը արքայազն Գնելին ու իր հարսին հրավիրել է Շահապիվանի Նավասարդյան տոնին, և ուրախացան բոլորը... բացի Տիրիթից։

Երբ Տիրիթը լսեց այդ՝ տխրեց սաստիկ.— ուրեմն թագավորը չհավատա՞ց իր խոսքին... և ահա Գնելին ու իր հարսին հրավիրում է Շահապիվան, իրեն՝ ոչ... Ի՞նչ է նշանակում այս... Գնելին պատժելու փոխարեն արքան պատիվնե՞ր է տալիս նրան... Ուրե՞մն...

— Ո՛չ,— ասաց,— տակավին ամեն ինչ կորած չէ։ Փառանձեմը...

Այս ասելով՝ նա շտապեց տեսնել Վարդ իշխանին։

Բայց ո՞ւր է նա, որտե՞ղ էր իջևանել...

Ուղարկված սպասավորը լուր բերեց, թե նա այժմ հանգիստ է առնում ամրոցի հյուրատանը և վաղը պիտի մեկնի։

Թեև կարգ չէր, որ արքայազնն ինքը այցելի մի իշխանի կամ նախարարի, սակայն Տիրիթը գնաց Վարդ իշխանի մոտ՝ պարզելու, թե այդ ինչպե՞ս է եղել, որ թագավորը հրավիրել է Գնելին՝ իր հարսի հետ միասին, բայց... անտեսել է իրեն։

— Ողջո՛ւյն, արքայազն... մեծ պատիվ եք արել ինձ,— դիմավորեց նրան Վարդը պատշաճ խոնարհումով։— Ինչո՞վ եմ արժանացել...

Տիրիթը, նրա խոսքերին անուշադիր, ասաց հազիվ շենքից ներս մտած.

— Իշխան, հայտնեցին ինձ, որ արքան քո միջոցովդ Գնելին և իր հարսին հղել է հրավեր՝ գնալ Շահապիվանի տոնին,— սկսեց նա արագ, բայց դժվար արտաբերելով բառերը։— Ինչպե՞ս հասկանամ... ինչպե՞ս...

Վարդը ուշադիր նայեց նրան.— Տիրիթի տեսքը վարանոտ էր, դեմքը ջղաձգվում էր. անդրավարտիքի տոտերը մի կերպ առել էր մուչկերի մեջ։ Երևում էր՝ շտապելուց կարգի չէր բերել իրեն... Իսկ ընդհանրապես մռայլ էր և ընկճված։

— Ինչո՞ւ այդպես, իշխան,— շարունակեց Տիրիթը, մի կերպ նստելով իրեն առաջարկված աթոռին։— Մի՞թե արքան իմ խոսքը առ ոչինչ համարեց, արհամարհեց... Ջունի՞ վստահություն առ ինձ, թե... Չէ՞, իշխան, ինքդ ականատես

եղար, թե ինչպես նախարարաց որդիները սիրում են նրան, խաղեր են խաղում և զինավարժություն կատարում հար ու հանապազ... Եվ մի՞թե ես, իշխան...

Նա չավարտեց ասելիքը, և տենդով հիվանդի նման ձեռքը դրեց ճակատին ու կռացավ։ Այդ պահին նա թվաց այնքան թշվառ, որ Վարդը հարկ համարեց հանգստացնել հրավերի առիթ հորինելով։

— Դա անտեսում չէ, արքայազն, և ոչ իսկ անվստահություն։ Պարզապես արքան չի եղած Գնելի հարսանիքին, ուստի և, որպես եղբորորդու, կամենում է տեսնել նորան։ Այդ իսկ պատճառով հղել է հրավեր։

— Հապա ե՞ս, իշխան...

Վարդը չհասկացավ նրա միտքը և նկատեց.

— Արքան քեզ տեսել է, արքայազն։

— Ոչ, իշխան, խոսքս տեսնելու մասին չէ։ Արքան կարծիք չի վստահում ինձ, հետևաբար և չի կամեցել հրավեր հղել նաև ինձ։ Գուցեն հղել է, իշխան, մոռացե՞լ ես ինքդ։

— Ոչ, արքայազն։ Ինչպե՞ս կարող եմ չհիշել, մոռանա՞լ։

Տիրիթը գլուխը կախեց մի ակնթարթ, ապա բարձրացրեց ցնցումով։

— Ասա ինձ, իշխան, հետաքրքիր եմ իմանալու, թե ինչպե՞ս հաղորդեցիր արքային այն ամենը, ինչ տեսար նախորդ այցիդ։

— Այնպես, ինչպես տեսա, արքայազն...

Տիրիթը լռեց և աչքերը հառեց հատակին, նրա դեմքի մկանները խաղում էին այտերին, առանձնապես ականջների կողմը, իսկ ինքը շուրթերը ծամում էր մտածումների մեջ։ Ու մնաց այդպես միառժամ, ապա ելավ ու սկսեց լայն քայլերով գնալ-գալ սրահում, առանց Վարդ իշխանին նայելու։

Այդ պահին նրա հայացքը կանգ չէր առնում և ոչ մի բանի վրա։ Շուտով սակայն, մի քանի վայրկյան քայլելուց հետո, նա թափով կանգ առավ և հարցրեց.

— Ասա, ինձ, իշխան, կարո՞ղ եմ ինքս նույնպես գալ Շահապիվան՝ տոնին մասնակից լինելու,— և Տիրիթը սևեռուն նայեց Մամիկոնյան իշխանին, կամենալով ասես նրա պատասխանից կռահել թագավորի վերաբերումը։— Կարո՞ղ եմ,— կրկնեց նա պահանջկոտ։

— Հարկավ, արքայազն, հարկավ,— պատասխանեց Վարդը վստահ ձայնով, ակներև նրան հանգստացնելու նպատակով։— Ամենքն ունեն իրավունք Շահապիվան լինելու։ Անշուշտ, դու ևս, արքայազն, ունիս իրավունք Նավասարդյան տոներին մասնակցելու։

— Իսկ արքան չի դժգոհի՞,— Տիրիթի աչքերում կասկածներ կայծեցին։— Նրան անհաճո չի թվա՞ երբեք...

— Բնա՛վ, արքայազն, բնա՛վ... Վստահ եմ՝ ոչ երբեք...

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Շահապիվան... Մեծ չէր այս ավանը և ոչ էլ հարուստ, բայց մեծ էր նրա անունը, որովհետև դարեր շարունակ համարվում էր հեթանոս հայերի Նավասարդյան տոների սրբավայր, ուրախության ու հաճույքի օրրան։ Նույն այդ համայքը նա պահպանել էր և բրիստոնեություն ընդունելուց հետո. Հայոց Աշխարհի բոլոր գավառներից ոչ միայն երիտասարդները, այլև ծերունիները, շինական թե ռամիկ, ազատ թե կարճազատ, նախարար թե հոգևոր հայր Նավասարդի տոներին ձիով, սայլով ու հետևակ շտապում էին այնտեղ՝ հայոց աշխարհահանդես տոնին ներկա լինելու, ծեսեր կատարելու, խաղեր տեսնելու և ուրախանալու... Ու ամենքն իրենց հետ բերում էին զոհաբերության կենդանիներ, ուտելիքներ և բազմատեսակ մրգեր։

Մեծ չէր, այո, Շահապիվանը, բայց մեծ էր նրա համայքը։

Գրավիչ էր Շահապիվանը գուցեև նրա համար, որ հարթ, ընդարձակ դաշտեր ուներ, փարթամ այգիներ և մշտական կապույտ երկինք։ Տարվա այդ պահին ուր էլ ամպ լիներ, խառնակ եղանակ, անձրև թե քամի— Շահապիվանում միշտ անդորր էր և երկինքը ջինջ։

Այդ օրը նույնպես ջինջ էր նրա երկինքը, և ավանը իր միհարկանի, ծեկուսի տներով ու տերևաթափվող այգիներով (որոնց մեջ փողփողում էին աշնան բոլոր գույները), փռված-տարածված էր աշնան զով արևի տակ, իսկ նրա ետևը, ինչպես միշտ, ամուր նստած էր Շահապիվանն սարը իրեն դա-

բավոր պահապան, որ հսկում էր ասես իր անունը կրող ավանը և պաշտպանում նրան հյուսիսի ցուրտ քամիներից։

Բայց այդ պարզ, պաղպաջուն օրը ավանի սովորական անդորրը փոխված էր. ավանն աղմկում էր բազմատեսակ ձայներից. երգ, նվագ, կանչ, խոսք խառնվել էին իրար և ստեղծել մի համատարած ուրախ ժխոր, որ հիշեցնում էր հազարավոր անտես մեղուների բզզոց։

Ավանի ներսն ու շրջակաները լիքն էին մարդկային բազմություններով, որ երկու օր գալիս էին անընդհատ։ Ամեն կողմ երևում էին մարդկային խմբեր. կանայք՝ վառ կարմիր, վառ կապույտ, վառ նարինջ հագուստներով, խայտաբղետ, ինչպես աշնան ծառերը։ Տղամարդիկ հագնված էին ավելի համեստ՝ կարճ ու երկար կապաներ, ծոսյավոր լայն անդրավատիքներ. դրել էին թաղիքե ուլունքաշար կամ մորթե թոք գդակներ, երբեմն և ծղոտե ինքնագործ գլխարկներ, և բոլորն ունեին մեծ կամ փոքր սրեր, որ պատյանի մեջ կախված էին նրանց արծաթյա կամ կաշյա գոտիներից... Եկել էին շինականներ ու ազատներ՝ իրենց սայլաբարձ ընտանիքներով և նժույգներ հեծած երիտասարդ սեպուհներ, անգամ նախարարներ ու իշխաններ՝ իրենց տիկիններով ու օրիորդներով, որոնց շատերին բերում էին պատգարակ-ժանավարներով։ Եկել էին և շատ կրոնավորներ՝ տարբեր վանքերից ու մենաստաններից։

Մարդն այնքան շատ էր, որ ավանը, թվում էր, խեղդվում է և անկարող է տեղավորել ամենքին... բոլոր բակերում գրեթե և ավանի շուրջբոլորքը վրաններ էին ու սայլեր՝ ծածկված գույնզգույն թաղիքներով, կարպետներով ու գորգերով։ Իսկ սայլերի, վրանների միջև և նրանց հետև, բացի եզներից ու ձիերից, այս ու այն տեղ երևում էին թոկերով, շղթաներով կապված սպիտակ արջառներ։ Երևում էին ճերմակ աղավնիներ, որ հին հեթանոսական սովորությամբ բերել էին որպես ողջակեզ։

Ինչպես նավասարդի բոլոր տոներին, այնպես էլ այժմ Շահապիվան էին եկել ամեն արհեստի մարդիկ. միմոսներ՝ երկար, սուր գդակները ծուռ դրած ու երեսները ներկած. գուշակողներ՝ բութ մատի եղունգը լաթով փաթաթած կամ գուշակության թասերը ծոցներին. լարախաղացներ՝ փնջավոր,

զանգուլակով գդակ դրած, կուրծքները գույնզգույն թելերով ու եռանկյունի լաթերով զարդարած, ինչ նրանց անմիջապես զատում էր բազմության մեջ. և անթիվ գուսաններ՝ իրենց նվագարաններով... Ու Շահապիվանն այժմ, առանձնապես նրա փոքրիկ եկեղեցու բակն ու շուրջը, թնդում էր նրանց երգից ու նվագից, մանավանդ շինական տղաների ու աղջիկների տաղերից... որոնք և պարում էին մենակ կամ խմբով՝ բազմության մեջ բացած փոքրիկ տարածության վրա, տղաները անթևներ հագած, մի վառ թաշկինակ տատանելով, աղջիկները՝ զույգ կամ յոթ հյուսքեր արած, օրորելով իրենց երկար ու բազմածալ շրջազգեստները, որոնք ոչ այնքան թանկ էին, որքան վառ. նրանք մազերին խրել էին աշնան ծաղիկներ, պարանոցներին կապել մանյակներ, որոնք կամ գույն-գույն քարերից էին, կամ պտուղների կորիղներից և կամ գունավոր ապակուց։ Նրանք իրենց հագուստների վերի մասերին շարել էին պղնձյա կամ արծաթյա կոճակներ, գոտիների վրա՝ փայլող ուլունքներ։ Իսկ ականջներին արդեն ծփուն օղեր էին կամ փայլատակող զարդեր։ Երբ նրանք պարում էին, պարի թափի հետ միասին նրանց այդ ամբողջ զուգսը զրնգում ու շողում էր արևի տակ, բազմության ծափերի ու կանչերի մեջ։

— Ա՛-հա՛... Ա՛-հա՛...— լսվում էր տարբեր կողմերից, պարողներին շրջապատողների միջից։ Եվ այդ կանչերն ավելի էին ոգևորում թե՛ նվագողներին և թե՛ պարողներին։

Մարդիկ սկսել էին ուրախանալ, չսպասելով, որ տոնահանդեսը բացվի պաշտոնապես։ Իսկ այդ բացումը պետք է լիներ պատարագից հետո, որ այժմ կատարվում էր ավանի մեծ, երկարավուն, անգմբեթ, բայց սյունաշատ եկեղեցում, որը բնավ չէր կարող տեղավորել անթիվ-անհամար այն բազմությունը, որ շրջապատել էր նրան և լցրել գյուղը։

Ամենքը, հատկապես երիտասարդները, անհամբեր սպասում էին պատարագի ավարտին, որ սկսեն մրցումները՝ ձիարշավ, մկունդախաղ և վազք, ինչ կատարում էին սովորաբար. ուստի և շատերը, չկարողանալով մտնել ներս և պատարագ լսել, առայժմ այս-այն կողմ խմբված՝ հետաքրքիր դիտում էին պարերից բացի զանազան խաղեր. մի տեղ արջը վեր ու վար էր անում մազապարար ոտքերը՝ տիրոջ մահակն

ուսերին բռնած. մի այլ տեղ կռվեցնում էին մարդած խոյեր և աքլորներ. մի երրորդ տեղում սև ու ճերմակ օձերը արկղից դուրս գալով սողում էին տիրոջ մերկ մարմինն ի վեր և փաթաթվում նրա թևերին ու պարանոցին, և մարդը ժպտում էր անշարժ... Բայց բազմությունն ամենից ավելի շրջապատել էր լարախաղացներին, որոնք մերթ մեկ, մերթ զույգ ոտները կաթսայի մեջ դրած մի երկար ձող բռնած գնում-գալիս էին սյունից սյուն ձգված պարանների վրայով։

Բոլոր տոների օրինակով այդ տարի ևս եկեղեցու շուրջը և մոտիկ փողոցներում առևտրականները վաճառում էին մրրզեր, հագուստի կտորներ՝ մետաքս, բեհեզ, կտավ։ Ոմանք, վաճառելի ապրանքն ուսերին ու թևերին, շրջում էին բազմության մեջ և, խմբից խումբ անցնելով, գայթակղում կանանց՝ ցուցադրելով հուլունքների շարաններ, ոսկյա և արծաթյա օղեր, մանյակներ, ճակատանոցներ, ապարանջաններ և պես-պես ճարմանդներ ու գոտիներ։ Կային նաև մարդիկ, որոնք ծախում էին միայն մատանի, քորոց, հերկալ և տարբեր մեծության ու ձևի կոճակներ... Եվ ամենքը անուն առ անուն հիշելով գովում էին իրենց ապրանքը։

— Առեք-տարեք՝ ուրախ արեք, հարս-աղջիկներ, սեպուհ-քաջեր...

Թեև ավանը և նրա շրջապատը լիքն էր ժողովրդով, բայց տակավին գալիս էին խմբերով, խայտաբղետ հագնված ու, թեկուզև հոգնած, բայց ուրախ, անհոգ ու խնդուն, ինչպես լինում է ուխտագնացության միջոցին...

Ու բոլորն շտապում էին դեպի միակ եկեղեցին, ուր ուխտավորների հետ խառն էին արքունի զինվորներ ու սպաներ, որոնք, տեղում ապրելով, նույնպես հետաքրքիր էին ժամերգություն լսելու, մանավանդ իմացել էին, որ պատարագը կատարելու է մայրաքաղաքից ժամանած կաթողիկոսն ինքը։

Զորքի և ժողովրդի մեջ մեծ հետաքրքրություն էր հարուցել նաև այն լուրը, թե թագավորը նույնպես ժամանել է և հիմա պիտի գա ժամերգության՝ իր թագուհու հետ միասին։ Այդ էր պատճառը, որ շատերը եկեղեցուն մոտենալով հարցնում էին առաջին հանդիպողին.

— Թագավորը ժամանե՞լ է արդյոք։

— Ասել չեմ կարող։

— Քահանայապե՞տը։

— Պատարագում է։

Եվ հարցնողն շտապում էր մտնել ներս։ Ու գալիս էին դարձյալ, գալիս անվերջ դեպի եկեղեցի։ Մարդիկ, կանայք իրենց ձիերը, սայլերը թողնում էին գյուղի այս-այն մասում կամ գյուղից դուրս և շտապում նրա կենտրոնը՝ ժամերգություն լսելու, մեծամեծների տեսնելու։

Քահանայապետը ժամանել էր մի օր առաջ. նրան տեսել էին շատերը։ Իսկ Թագավորի գալուստը հայտնի էր սակավ մարդկանց, որովհետև նա եկել էր գիշերը և իր շքախմբով իջևանել տեղի զորապետի տանը։ Եվ այդ առավոտ ահա, այն պահին, երբ տեղ հասնողը հետաքրքրվում էր Թագավորով, այդ իսկ ժամին Արշակն ինքը, սամույր մուշտակով ծածկված պառկած, հետաքրքրվում էր այլ բանով.

— Իսկ Գնելը ժամանե՞լ է արդեն,— հարցնում էր նա Վարդ իշխանին։

— Ոչ, արքա. տակավին ոչ։

— Եվ ինչո՞ւ։ Մի՞թե կարող է դրժել իր խոսքը։

— Ոչ, արքա։ Նա ասաց, որ կժամանի տոնի առաջին օրը... իր հարսի հետ միասին։

— Եվ ասաց սիրո՞վ։

— Այո, արքա։ Ես պատմեցի քեզ, թե որքա՛ն ուրախ եղավ։

— Սակա՞յն... չէ՞ որ այսօր սկսվում է տոնը։

— Ամեն վայրկյան սպասում եմ նորան,— ասաց Վարդ իշխանը և փոքր անց՝ դուրս եկավ իմանալու, թե արքայազն Գնելը չի՞ ժամանել արդյոք։

Ոչ ոք չգիտեր։ Ուստի և նա, երկու թիկնապահ առած, գնաց դեպի եկեղեցի։ Ամեն կողմից այնտեղ էին շտապում և շատ մարդիկ, կանայք, աղջիկներ, կրոնավորներ։ Պարիսպների ներսը և դուրսը բազմությունը խտացել էր այնպես, որ եկեղեցի մտնելու համար պետք էր արմունկներով հանապարհ բանալ։

Ու մինչ դուրսը նվագում էին, պարում և նոր խաղերի պատրաստվում, եկեղեցում ժամերգությունը շարունակվում էր հանդարտ, հանդիսավոր, մոմերի բոցկլտումներով ու

բուրվառների խնկարկումով։ Զգեստավորված քահանաներն ու վարդապետները կատարում էին պատշաճ կարգը, իսկ Ներսեսն իր եպիսկոպոսներով կանգնել էր աջ դասում և ժամանակ առ ժամանակ խաչակնքում էր ջերմեռանդ, Ծանր օդից նեղվելով։ Դուրսը խմբված բազմությունը փակել էր մուտքերը, իսկ ներսը գտնվողներն այնպես էին սեղմել իրար, որ ճիպոտ չէր անցնի արանքներով. ամենքը շնչում էին ծանր, հևագին. քրտնահոտը խառնվել էր խնկի բուրմունքին։

Եվ այդ միջոցին ահա, երբ ներսը խաղաղ ժամերգություն էր, իսկ դուրսը խմբվածները լսում էին եկեղեցուց ելնող աղոթքներն ու շարականները, դրանց հետ և գուսանների երգը, հանկարծ օդը պատռեց մի աղեկտուր ճիչ, կանացի մի սուր հիչ, որ խլացրեց բոլոր մյուս ձայները.

— Օգնությո՜ւն... Տարա՜ն... օգնությո՜ւն...

Ճիչը կրկնվեց նորից ու նորից, և դա որքան սուր, նույնքան և ահավոր էր։

Բազմությունը սարսափեց. բոլորը մեկեն լռեցին. լռեց երգ, նվագ. կանգ առավ և ամեն շարժում։

Ի՞նչ էր պատահել... Ո՞ւմ պետք էր օգնել... Ո՞ւմ էին տանում և ո՞ւր...

Եվ ո՞վ էր կանչում «օգնություն»...

Ու բոլորը նայեցին կրկնվող կանչի կողմը։

Եվ ահա շուտով երևաց ձիավոր մի կին, ոչ թե կին, այլ կարծես ձիավոր մի հրեշ. շքեղ հագուստի փնջերը բամուն տված, գլխի ծածանվող քողով նա, զարհուրած, ձեռքի մեկը գլխից վեր շարժելով, գալիս էր անտառի կողմից նժույգի քաշաստրոփ վազքով։

— Օգնությո՜ւն... Տարա՜ն... Սպանո՜ւմ են...

Գանչում էր կինը ձիու վրայից և սլանում առաջ, իսկ խռնված բազմությունը ետ-ետ էր գնում նրան ճանապարհ տալու, նրա ձիու տակ չընկնելու համար, և ամենքը Ծայրատիճան հետաքրքիր էին, թե ո՞վ է դա, ի՞նչ է ուզում և ո՞ւր է գնում այդպես մոլեգին։

Իսկ կինը շարունակում էր առաջանալ և, ամին պատշաճավորություն ու համեստություն մոռացած ճչալ.

— Օգնությո՜ւն... Ո՞ւր է քահանայապետը։ Ո՞ւր է Վեհը... Ո՞ւր է արքան...

Այնքան սարսափելի ու վեհ էր այդ կնոջ տեսքը և ձայնն այնքան վշտահար, որ նրան ճանապարհ տվող մարդիկ անխոս մատնացույց էին անում եկեղեցին, չհամարձակվելով անգամ անել որևէ հարցում։ Իսկ երբ նա ձիուց ցատկելով նույն աղաղակով ընկավ եկեղեցի, իր թանկ հագուստները ծվատելով, ճչաց դարձյալ.

— Ո՞ւր է Վեհը...

Եկեղեցու հանդիսավոր, ներդաշնակ ժամերգության մեջ այնպես սուր ու ցավագին հնչեց նրա ձայնը, որ մարդիկ այստեղ նույնպես ետ-ետ քաշվեցին՝ ճանապարհ տալու, կաթողիկոսի տեղը մատնանշելով։ Եղավ ավելին. նրա ձայնից ժամերգությունն ընդհատվեց. ամենքը նայեցին դեպի դուռը, անգամ Ներսեսը շրջվեց տարապայման կանչի կողմը։ Իսկ մինչ այդ մետաքս հագած նորատի կինը արցունքն աչքերին նստվեց դեպի զգեստավորված կաթողիկոսը և մեկեն փովեց գետնին. ոչ թե փովեց, այլ կարծես փլվեց նրա առաջ։

— Տեր քահանայապետ, փրկիր իմ Գնելին։ Նորան կամենում են սպանել...

Ներսեսն այլայլվեց. նրա խիտ հոնքերը բարձրացան և խոշոր աչքերը բացվեցին տենդափայլ։

— Ն՛ լ, կին, և խոսի՛ր որոշ,— ասաց նա նշան անելով, որ բարձրացնեն այդ կնոջը։

Երկու վարդապետ հապճեպ մոտեցան և, կնոջ թևերից բռնելով, բարձրացրին, և այդ ժամանակ միայն Ներսեսը, չնայած կնոջ խռիվ մազերին ու անկարգ հագուստին, ճանաչեց Սյունյաց իշխանի դստերը՝ Փառանձեմին։

— Ո՞վ, իշխանուհի, ո՞վ տարավ քո ամուսնուն,— ասաց նա դողացող ձայնով։— Ո՞վ է համարձակվել և ինչո՞ւ...

— Ջիմացա, քահանայապետ,— Փառանձեմի դեմքն այրվում էր, խոսքերը հնչում էին բեկ-բեկ։— Երբ մենք նժույգներ հեծած մոտեցանք անտառին՝ դիմակով, զինավառ մարդիկ հարձակվեցին Գնելի վրա. «Արքայի հրամանով» ասացին... Եվ երբ կամեցան կապել նորա ձեռքերը, ես ձիավազ եկա օգնության... Փրկիր, տեր, աղաչում եմ... նոքա կսպանեն իմ Գնելին...

Ներսեսի աչքերը դարձան ավելի տենդափայլ. նա նշան արավ, որ վերցնեն իր շուրջառը, և երբ երկու վարդապետ

կատարեցին հրամանը, նա արագ քայլեց դեպի դուռը՝ վամավորների բացած ճանապարհով. նրա հետ դուրս թափվեցին և շատ աղոթավորներ ու հոգևորներ՝ իմանալու, թե ի՞նչ է լինելու։

Զայրացած դուռս գալով եկեղեցուց՝ Ներսեսը նախ կարգադրեց այդտեղ կանգնած զինվորականներին՝ «ական թոթափել ձիավազ գնալ աղետի վայրը և փրկել անմեղին»... ապա հուզված ու հապճեպ, այնպես, որ երկու փեշերը խանգարում էին նրա ընթացքը, շտապեց թագավորի իջևանած տունը, որ հեռու չէր եկեղեցուց և պահակներ ուներ մուտքի առաջ։

Տեսնելով մոտեցող հուզված կաթողիկոսին՝ պահակները ետ-ետ գնացին հարգանքով, իմանալով, որ նա անարգել մուտք ունի թագավորի օթևանը։ Բայց, միևնույն է, չլիներ անգամ այդ արտոնությունը, նրանք չէին համարձակվի կանգնեցնել հրաբորբ աչքերով կաթողիկոսին, որ սուսանց շուրջը նայելու գնաց ներս։

— Արքա՛,— տակավին թագավորի սրահի շեմից ձայնեց Ներսեսը, սակայն նկատելով թագավորը պառկած է երեսը դեպի պատը, նա ձայնը բարձրացրեց։— Արքա՛...

Զգալով, որ թագավորն իրեն չլսեց, մոտեցավ ավելի, հրեց նրա ուսը և, մոռանալով ամեն պատշաճավորություն, պոռաց,

— Ել, արքա. ե՛լ... Սպանում են քո հարազատին...

Թագավորը շարժվեց սամույրի տակ և նստեց սև մազերը խռիվ, քնատ աչքերը բացխփելով։

— Ո՞ւմ են սպանում և որտե՞ղ,— ընդոստ վեր թռավ թագավորը։— Հարձակո՞ւմ է, կռի՞վ...

— Ո՛չ հարձակում և ո՛չ կռիվ,— գրեթե ճչաց Ներսեսը։— Դիմակով մարդիկ կալանել են արքայազն Գնելին և կամենում են սպանել քո հրամանով։

— Ինչպե՞ս,— զարմանքից անշարժացավ թագավորը։— Ես կանչել եմ նորան տեսակցության... Եվ ո՞վ է համարձակվել, ո՞վ...

— Անհայտ է, արքա. շտապիր և կանխիր ոճիրը, այլապես...

Ներսեսը չկարողացավ շարունակել, իսկ թագավորը հարցրեց.

— Սակայն ո՞վ է բերել այդ լուրը։

— Արքայազն Գնելի կինը, իշխանուհի Փառանձեմը... Շտապիր, ալքա...

Հուզումից, բարկությունից Ներսեսը հևում էր. նրա սև խոշոր աչքերը բորբոք խաղում էին գունատված երեսին։

Արշակը սակայն հանկարծակիի եկած, կամենում էր դեռ պարզել, հասկանալ, թե ի՞նչ է կատարվում... Նա զարմացած էր։

— Գնելի՞ն։ Ինչպե՞ս։ Ո՞վ է համարձակվել։ Արդյոք թյուրիմացություն չէ՞, քահանայապետ։

— Ոչ, արքա,— գրեթե ճչաց Ներսեսը։— Իջեցրել են երիվարից և ձեռքերը կապանել...

— Ես անմիջապես,— և Արշակն ուզեց կանչել սենեկապետ Վարդին. բայց այդ իսկ վայրկյանին ներս մտավ նրա թիկնապահ գնդի պետը՝ երիտասարդ Վահան Խորխորունին, թուրը կողքից կախ։

— Իշխա՛ն, քահանայապետը լուր է բերել, որ դիմակավոր մարդիկ անտառում կալանել են արքայազն Գնելին և կամենում են սպանել... Շտապի՛ր և կանխի՛ր ոճիրը և... պատուհասիր չարագործներին։

Խորխորունին ձգվեց թրի գլուխը բռնած։

— Այլևս ուշ է, արքա,— ասաց նա խոշոր մարմնին համապատասխան բամբ ձայնով։— Նա սպանված է։

Այդ ժամանակ կաթողիկոսը ձգվեց-շտկվեց կանգնած տեղը, հուզված, բարկացած նայեց թագավորին, կասկածով նայեց նրա թիկնապահ գնդի պետին և վրդով գնաց դեպի դուռը։

— Այս ոճիրը Կայենի գործ է, և ոճրապարտը կստանա երկնային պատիժ։ Ով սուր առցի՝ սրով անկցի...

Ու դուրս եկավ առանց ետ նայելու։

* * *

Փոքր անց, երբ կաթողիկոսը հազիվ հասած լիներ եկեղեցի, թագավորի օթևանը մտավ Վարդ իշխանը և Խորխորունու հետ պատմեց սպանության հանգամանքները, նաև այն, թե որքան ծանր տպավորություն է թողել այդ սպանությունը ուխտավոր բազմության վրա։

— Իսկ ո՞վ հանդգնեց կատարել այդ ոճիրը,— ձեռքը բռունցք շինեց Արշակը։

— Պարզել կարելի չէ, արքա՛։ Ոճրագործները եղել են դիմակավոր և անհետացել են իսկույն։

— Եվ ուրե՞մն...

Արշակն ուզում էր հարցնել, թե ճի՞շտ է, որ ոճրագործները գործել են իր անունով, բայց լռեց։

— Ամենքը գնում են բերվող դիակին ընդառաջ։

— Իսկ ո՞ւր են տանում նրա դին։

— Կամենում են թաղել Լիսին բլուրի վրա։

Արշակը լռեց. նա մի երկու վայրկյան գլխիկոր անցավ սրահի երկայնքով, ապա ձիգ կանգնեց Վարդի առջև.

— Կարգադիր եղիր, իշխան, որ ամենքն անմիջապես գնան և սուգ անեն արքայազն Գնելի վրա։ Ամե՛նքը...

— Հրամանդ, արքա՛։

Երկու ժամ հետո Շահապիվանից փոքր հեռու գտնվող անտառամիջի Լիսին բլուրը ծածկված էր ամեն խավի ու տարիքի բազմությամբ՝ տեղացի և ուխտավոր շինականներով, ռամիկներով, զինվորներով։ Բազմության մեջ երևում էին նաև իշխանազուն երիտասարդներ, իշխաններ ու կրոնավորներ։ Խայտերանգ հագնված բազմության մեջ դարձյալ զատվում էին զինվորներ՝ իրենց նիզակներով, լայնալիճ կամ հասարակ աղեղներով։ Թվում էր՝ եկել են կարգ պահելու. սակայն մյուսների, ոչ զինվորականների նման նրանք ևս ցանում էին առաջ գնալ և տեսնել, թե ինչ է կատարվում այնտեղ՝ որ-ոարգելոցի պատի տակ, որտեղից արդեն գալիս էին ողբի և կոծի ձայներ։ Մի ձայն առանձնապես հնչում էր շատ բարձր և այնպես աղեկտուր, որ փշաքաղում էր լսողին։

— Ո՞վ է ողբում այդպես անհույս ու սարսափելի,— հարցնում էին իրար, բազմության մեջ։

— Սպանվածի այրին...

Եվ ամենքը առաջանում էին հետաքրքիր, տեսնելու գեթ սպանվածի կնոջը՝ անծանոթ իշխանուհուն, որ ձիավազ հասել էր Շահապիվան՝ ամուսնու համար օգնություն խնդրելու և այժմ կոծում էր այնպես, որ կանայք չէին կարողանում զըսպել իրենց արցունքները։ Մարդիկ շարունակում էին գալ ան-

վերջ շարքերով ոչ այնքան թագավորի հրամանով, որքան սպանության խորհրդավոր հանգամանքներով հետաքրքրված։

— Ճշմարի՞տ է, որ արքայազնին սպանել են ավազակները՝ կողոպտելու միտումով,— հարցնում էր մեկն իր հարևանին։

— Ստույգ չեմ կարող ասել։ Ականջալուր եղա, որ թիկնապահները մնացել էին ետ և ինքը մենակ դիմագրավել անկարող է եղել... Ու կինը ձիավազ գնացել է օգնություն խնդրելու։

Մի այլ խմբում խոսում էին այլ բան.

— Այո, այո, խորհրդավոր սպանություն... Դիմակավոր մարդիկ,— ասում էր մեկը շուրթերը պոստելով։— Հավանաբար ունեցել է թշնամիներ ոխերիմ։

— Ը՞սս... Այդ տարիքում թշնամիներ՞,— խոսողը ձայնը իջեցրեց շշուկի։— Ոչ մի թշնամի... Զրուցում են, որ ամենը կատարված է թագավորի հրամանով... ը՞սս...

— Բայց... բայց եթե լիներ այդպես,— շշնջաց մյուսը։— Եթե լիներ այդպես՝ թագավորը չէր հրամայի սուգ անել դրժբախտի համար։

— Զրուցում են։ Այնտեղ տեսել են արքունի մարդոց։

— Գնացել են անշուշտ սպանիչներին կալանելու։ Քահանայապետը նույնպես մարդ է ուղարկել աղետի վայրը։

— Ինչպես և լինի՝ ոճիրը սարսափելի՞ է... Երիտասարդ, նոր ամուսնացած և... սպանում են նորատի կնոջ աչքի առջև...

Այդ միջոցին խոսողների ետև բազմությունն անձայն տագնապով իրար անցավ. լսվեցին հրամայական և երկյուղած շշունջներ.

— Ճանապա՞րհ... Ճանապա՞րհ...

— Թագավո՞ր... Ճանապա՞րհ...

Բազմությունը ոչ թե գիտակցաբար կամ հրամանով, այլ ասես բնազդաբար բաժանվեց երկու մասի և, երկու պատնեշ գոյացնելով, ուղի բացեց նիզակավոր զինվորների առաջ։

— Ճանապա՞րհ... թագավորը...

— Ճանապա՞րհ...

Լսելով այդ խոսքերը և մանավանդ բազմության իրարանցումը՝ բլուրի գլխին գտնվողները նայեցին ցած և մարդ-

կային երկու պատնեշի արանքով տեսան իրոք, որ բլուրի ստորոտից վեր է բարձրանում թագավորն իր շքախմբով։ Նրա հետ և թագուհին։

Ինչպես միշտ, նրանց առջևից գալիս էին տեգավոր և նիզակավոր զինվորներ՝ թիկնապահ գնդի հագուստներով ու սաղավարտներով։ Արշակ թագավորը հագնված էր պարզ. գլխին միայն թագաձև գդակ, ուսերին՝ մի թուխ թիկնոց, որ առնում էր վրան ոչ տոն և ոչ հանդիսավոր օրերին, որևէ տեղ մեկնելիս։ Իսկ թագուհին դրել էր նուրբ բանված մի գլխանոց, որ ծածկում էր միայն մազերը, և ուսերին առել էր նույնպես մի պարզ մեկնոց, որը կրծքին ամրացված էր բյուզանդական ճարմանդներով։

Բազմությունը երկու մասի բաժանված նայում էր ակընդետ և ոչ ոք չէր համարձակվում խոսել կամ ձայն հանել։ Թագավորի և թագուհու մեն մի շարժումը, քայլը, նայվածքը դրավում էր գյուղերից, ավաններից և հեռու քաղաքներից եկած շինականներին, ազատներին ու զինվորներին, որ երբեք թագավոր, թագուհի չէին տեսել, ուստի, սպանությունը մոռացած, ագահ աչքերով նայում էին նրանց գլխանոցներին, թիկնոցներին. շատերին կարծես գրավում էին ավելի թագավորի գեղին, ոսկեփայլ մույկերը և նրա թիկնոցի տակից երևող կապայի արծաթերիզ քղանցքները։

Թագավորը գալիս էր հանդարտ, քայլերը շատ կամաց փոխելով, ասես նրա համար, որ թագուհին ետ չմնա իրենից, որովհետև թագուհին քայլում էր դանդաղ, ծայր զգուշությամբ, երբեմն վախենալով սայթաքել։

Մարդիկ սովորաբար թագավորի երթ տեսնելիս ուրախ կամ հարկադրված բացականչություններ էին անում... Այժմ սակայն ամենքը լուռ էին։

Երբ սգավոր կանայք լսեցին թագավորի գալու լուրը, ողբի ձայնը սաստկացավ և լաց ու կոծի միջից լսվեցին.

— Իմ ցերեկի՜ արև, իմ գիշերի՜ լուսին, իմ պայծա՜ռ Գնել, քեզ ո՞վ խավարեց...

Այս խոսքերին հետևեց ընդհանուր խմբական ողբ, որը դադարեց թե չէ՝ լռության մեջ հնչեց նորից նույն ձայնը.

— Իմ անմե՜ղ Գնել, քեզ ո՞վ նախանձեց և... ինչո՞ւ ինձ արևից զրկեց։

Երբ Թագավորն իր փոքրաթիվ շքախմբով վերջապես մոտեցավ սգատեղին և կանգնեց լացողներից մի երկու քայլ հեռու, լացուկոծը կրկնապատկվեցին։ Սգավորների մեջ Թագավորը նկատեց մի նորատի կին, որը ճերմակ թևերը կոտրտելով ու գրեթե հերարձակ գլուխը տատանելով լալիս էր աղիողորմ և լացացնում շրջապատողներին. Նրա ողբն ա՛յնքան հուսահատ էր ու սրտահույզ, որ Արշակը գլուխը կախեց ակամա, իսկ Թագուհու և շքախմբի մարդկանց աչքերում արցունքներ երևացին։ Արշակը կռահեց, որ նորատի կինը Փառանձեմն է, ու հոնքերի տակից դիտեց նրան. Փառանձեմի հագին մի կերպաս հագուստ էր, որը նա պատռել էր վշտից...

Բավական ժամանակ անցավ, երբ գլխիկոր սգացող Փառանձեմը գլուխը բարձրացրեց հանկարծ և, ձեռքերը կրծքին տրորելով ու երկինք նայելով, ողբաց իր կորուստը— Արշակը զարմանքից նայեց Թագուհուն ու շքախմբի անդամներին.— Նա առաջին անգամ էր տեսնում Գնելի հարսին. ի՞նչ դեմք, ի՞նչ դեղձան մազեր և ի՞նչ բարձրաթառ հոնքեր... և Թագավորն ակամա համեմատեց նրան իր Օլիմպիայի հետ, որ միշտ սառն էր, ձիգ ու հանգիստ, իսկ այժմ, թեև հուզված, բայց օտարի պես էր կանգնել իր կողքին։ Այնինչ Փառանձեմը թվում էր բռնկված կրակ, աչքերը հրացայտ, մազերը բոց... Արշակը լսել էր, որ այո, Գնելի հարսը գեղանի է, բայց երբեք չէր կարծել այդչափ...

Մինչ Թագավորը խորհրդածում էր այսպես, ողբասաց կանայք ընդհատեցին իրենց լացն ու կականը, իսկ Փառանձեմը ճերմակ ձեռքը ճակատին, օրորվեց մի երկվայրկյան, ապա ձեռքերը կրծքին խաչելով նորից սկսեց.

— Իմ լույս Գնել, իմ հույս Գնել, քո մահը... քո մահը իմ պատճառով եղավ... իմ պատճառով...— ու հեկեկալով նա ձեռքերը պարզեց վեր՝ դեպի երկինք։— Թո՛ղ ամենքը լսեն, թո՛ղ ամենքը լսեն, որ իմ ազնիվ Գնելի մահը իմ պատճառով եղավ... Ի՛մ պատճառով... Մեկը աչք դրեց վրաս ու նյութեց այս սպանությունը... մեկի խոսքերը հասան ականջիս, թե՝ «մի տանջիր քեզ, կունենաս առավել լավ ամուսին»...

Այս խոսքերի հետ նա, արձակ մազերը բռնած, սրտապատառ հեկեկանքով ընկավ ամուսնու դիակի վրա.

— Սպանեց քեզ և... այժմ ցանկանում է, որ չա՞մ, չըգա՞մ քեզ...

Արշակը, որ մինչ այդ զարմացած, կարեկցանքով էր նայում Փառանձեմին, նրա վերջին խոսքերից սթափվեց և ակամա շուրջը նայեց տարակուսով, նրա նայվածքն ասես հարցնում էր շրջապատողներին, թե ի՞նչ էին նշանակում սգավորի խոսքերը... Բազմության մեջ Արշակը նկատեց մի քանի ծանոթ դեմքեր՝ նախարարներ, սեպուհներ, հոգևորներ, դրանց հետ և արքայազն Տիրիթին, որ գլուխը կախել էր վշտահար։

«Ահա, Տիրիթը նույնպես այստեղ է,— մտածեց Արշակը։— Իցե նա օգնի պարզելու այս առեղծվածը»...

Արշակը կանգնեց մի փոքր ևս, ապա մոտեցավ սգավորների խմբին. կռանալով Գնելի ճերմակ սավանով ծածկված դիակի վրա՝ երեք անգամ խաչակնքեց այն ու դանդաղ գարձավ եկած ճանապարհով։

Շքախումբը հետևեց նրան։

Վերադարձի ամբողջ ճանապարհին թագավորը չարտասանեց և ոչ մի բառ։ Նույնը և շքախմբի անդամները։ Միայն հյուրընկալ օթևանի առաջ, երբ թագուհին ասաց՝ «որքան սարսափելի էր, բազիլևս»,— Արշակը պատասխանեց.

— Այո, բազիլեյա...

— Դեմ չե՞ս լինի, բազիլևս, եթե սգավոր իշխանուհուն տանենք պալատ, քանի նորա ծնողներն այստեղ չեն, և նա մնում է միայնակ,— ասաց խղճահարված թագուհին, նայելով Արշակի մռայլած դեմքին։

— Կարելի է... այո,— պատասխանեց Արշակը մտացրիվ, և ամուսինները բաժանվեցին՝ յուրաքանչյուրն իրեն հատկացված սրահը գնալու։

Երբ Արշակը մտավ իր օթևանը, կարգադրեց իրեն հետևող Վարդ իշխանին։

— Թող միայնությունս չխանգարի ոչ ոք, անգամ թագուհին։

— Հրամանդ, արքա,— և Վարդը հեռացավ տարակուսով։

Իսկ թագավորը, ներս մտնելով սկսեց գնալ-գալ սրահի երկայնքով։ Նրան խռովել էին երկու հանգամանք. Փառանձեմի տեսքը և նրա վերջին խոսքերը... Ի՞նչ էին նշանակում այդ խոսքերը. ո՞վ է աչք դրել Փառանձեմի վրա, ո՞վ է ասել՝

կունենաս առավել լավ ամուսին... Ո՞ւմ էր ակնարկում Փառանձեմը...

Արշակը շփոթված էր. նա մտածում էր միաժամանակ, թե այս սպանության լուրը շուտով կտարածվի ամբողջ Հայոց Աշխարհում և ամեն տեղ կասեն, թե սպանությունը կատարվել է «արքայի հրամանով»... ու ամեն տեղ պիտի խորհեն, թե թագավորն ինքն է վերացրել Գնելին՝ թագապահանջ չունենալու համար... Եվ ո՞ւմ կարող ես ապացուցել հակառակը... Բայց ահա Փառանձեմն ասաց, թե սպանությունը եղել է իր պատճառով, և դա ասաց բարձրաձայն... ամենքի առաջ, ժողովրդյան առաջ... Ոճրագործները Գնելին կալանել են իբր «արքայի անունով». սակայն Փառանձեմը կրկնում է, որ սպանությունը եղավ իր պատճառով...

Ծագում էին անվերջ հարցեր, հարցեր՝ մեկը մյուսից առեղծվածային ու մթին։ Եվ Արշակը, չգտնելով ոչ մեկի պատասխանը, իրեն զգում էր նվաստացած և... կատարված ոճիրի ակամա մասնակից։ Չէ՞ ինքն էր հրավիրել Գնելին Շահապիվանի տոնին...

Որքան էլ մտածում էր Արշակը, պարզել չէր կարողանում հանելուկը և չգիտեր ո՞ւմ հետ խոսի այդ մասին, և ո՞վ կտա իրեն պատասխան... Ամենքն իմացան Փառանձեմի խոսքերը, իմացան և շքախմբի անդամները, բայց ո՞վ կարող է պարզել կատարվածը... և մի՞թե սխալ էին Փառանձեմի խոսքերը... Կարո՞ղ է պատահել, որ նա այդ խոսքերն ասեր առանց մի բան լսելու... Ոչ. Արշակը գիտեր, որ մարդիկ վշտի մեջ անկեղծ են լինում, առանձնապես խոր վշտի...

«Հետևաբար այդ կինը ճշմարիտ էր»,— մտածեց նա և որոշեց՝ հետաքրքրվել ու պարզել, թե ո՞վ է արդյոք աչք դրել Փառանձեմի վրա, և ո՞վ է ասել այդ խոսքերը առավել լավ ամուսնու մասին։ Այդ կիմանա անշուշտ ինքը Փառանձեմը։

Այստեղ Արշակը հիշեց Փառանձեմին, նրա անփույթ, շռայլ գեղեցկությունը՝ անգամ սուգի մեջ, և մտածեց, թե անհավանական չէ, որ նրա գեղեցկության համար ոճիր գործեին։

Մտածելով նա միաժամանակ հիշեց թագուհու ցանկությունը և, կանգ առնելով սրահի մեջտեղը, ծափ զարկեց։

Ներս մտավ ծերունի սենեկապահը։

— Կանչիր Վարդ իշխանին։ Անհապա՛ղ։

Ցանցավ քանի մի վայրկյան՝ ներս մտավ Վարդ իշխանը և, ըստ սովորության, կանգնեց ձգված։ Նա շատ զարմացած էր, թե ինչո՞ւ է թագավորն այդպես անակնկալ կանչել իրեն։ Սովորաբար մի տեղից վերադառնալիս թագավորն ինքը հանգստանում էր երկար և իրեն՝ Վարդին նույնպես թողնում էր հանգիստ առնելու։

Այսօր այլ էր. Արշակն այժմ պարզապես մի անդիմադրելի ցանկություն էր զգում խոսել նրա հետ և հարցուփորձել, թե ի՞նչ էին նշանակում Փառանձեմի խոսքերը. գուցե Վարդը կարողանա մեկնել... Ո՞վ է արդյոք աչք դրել այդ կնոջ վրա... Նա կամենում է, այո, խոսել և պարզել, թե ո՞վ նյութեց այս ոճիրը և իրեն դարձրեց մեղապարտ աստծու և մարդկանց առաջ... Սակայն, նայելով Մամիկոնյան իշխանի հոգնած դեմքին, մտածեց, որ նա թերևս շտապում է... Մտածեց և իսկույն էլ որոշեց՝ չասել ոչինչ, այլ սպասել առժամ. գուցե ուռեղծվածը պարզվի ինքնին...

Իսկ թագավորը, նայելով դարձյալ Վարդ իշխանի ձիգ հասակին ու հոգնած դեմքին, դանդաղում էր հայտնել ասելիքը։

— Հրամայեցիր Ներկայանալ, արքա։

— Այո, իշխան, և ահա ինչ,— Արշակը կանգ առավ։— Ես մտադիր էի,— այդ ինքդ գիտես, իշխան,— մնալ աստ քանի մի օր, դիտել զորանոցները և զորաց վարժությունը։ Սակայն այժմ, այս ամենից հետո, գերադաս եմ համարում՝ մեկնել։ Ուրեմն և կարգադիր եղիր, որ պատրաստեն ամենը՝ վաղը մեկնելու համար։

Թագավորը լռեց և նորից նայեց Վարդի դեմքին, որ զարմացած էր լսածից։

— Ինչ հետ, հարկավ, մեկնում է և թաղուհին։ Իմացիր նաև, իշխան, հարկ չկա պատմելու նորան արքայազնի սպանության հետ կապված ամեն հանգամանք և հուզելու իզուր։

Վարդը չհասկացավ, թե ինչո՞ւ համար է ասում այդ թագավորը, բայց խոնարհում արավ.

— Հրամանդ, արքա։

— Կարգադիր եղիր նաև սգավոր Փառանձեմին տեղափոխել Վաղարշապատ՝ արքունի պալատը, Օլիմպիա թագուհու հետ միասին։ Չպետք է թողնել դժբախտ իշխանուհուն մենակ, հարազատները բացակա են և չունի ոչ մի մխիթար։

Իսկ պալատում նրան կշրջապատեն, կսփոփեն իշխանուհիները... և թագուհին նույնպես, ինչպիսի ցանկություն հայտնեց ինքը։ Հասկանալի՞ է։

Վարդը նորից խոնարհում արավ։

— Թերել խնամով և մեծ զգուշությամբ,— շարունակեց թագավորն արդեն քայլերով։— Ոչ թե երիվարներով, այլ թեռնս ժանավարով...

Արշակը մի վայրկյան լռեց խոհերի մեջ, ապա ավելացրեց.

— Բայց լավագույնս կլինի տրամադրել նրան արքունի կառքերից մեկը... թերևս թագուհին նրան առնի իր կառքը... Գնելը մեր հարազատն է... նրա այրին չպետք է թողնել միայնակ՝ ծանր սուգի մեջ...

Ուրախությունը հանգավ Շահապիվանում... դադարեցին երգ, նվագ, պար, աղոթք ու առևտուր... Եվ դա ոչ թե մեկի հրամանով, այլ ինքնաբեր. սպանվել էր մարդ— և ամենքը մարդ էին։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Պատմենք այժմ, թե ի՞նչ եղավ Շահապիվանից հետո։

Որքան էլ Արշակ թագավորը մտադիր էր, թե Շահապիվանի տոնից հետո և մանավանդ Գնելին հանդիպելուց և բարեկամանալուց հետո կերթա նոր Ավանի աշխատանքները դիտելու և նոր կարգադրություններ անելու, բայց նորից խանգարվեց նրա ուղևորությունը... Ի դեպ. Գնելի սպանությունը նրան շփոթեց այն աստիճան, որ նա տրամադրություն ու ժամանակ չունեցավ անգամ վրաց թագավորի նվերները նայելու, որ ուղարկել էր նա Նավասարդի տոնի առթիվ, ինչ հարևան երկու թագավորները անում էին ավանդաբար՝ միմյանց նոր տարին շնորհավորելու համար։ Արշակը չկարողացավ ոչ միայն նվերները դիտել, այլև կարգադրել պատշաճը՝ բերողներին պարգևատրելու։ Ոչ միայն այս. նա չէր կարող մտածել անգամ իր Ավանի մասին. ստիպված էր մնալ Վաղարշապատում և պարզել Գնելի սպանության հան-

գամանքները։ Սպանվողը հասարակ մեկը չէր, ոչ էլ սպանությունն էր հասարակ, կատարվեց այնպիսի պարագաներում, որ կարող էր դուռ բանալ ամեն տեսակ կասկածի։

Եվ իրոք. արքայազն Գնելի սպանության լուրը նույն օրը տարածվեց ամեն կողմ. տունից վերադարձող ուխտավորները սարարշավ տարան այն իրենց գյուղերը, քաղաքները, ամրոցները, և դա ամենուրեք հարուցեց անասելի հետաքրքրություն. ո՞վ սպանեց, ի՞նչ պարագաներում և ինչո՞ւ... Առաջիններից մեկը, ով ստացավ Գնելի սպանության լուրը, եղավ Կամսարական Նար իշխանը. նրա երեք որդիները և երկու եղբայրը, որ ներկա էին եղել Շահապիվանի տոնահանդեսին, այդ լուրը ամենայն արագությամբ, ինչպես իրենք էին ասում՝ «ական թոթափել» հասցրին իրենց տոհմապետին։ Երբ նրանք, իրար ընդմիջելով ու լրացնելով, պատմեցին դեպքը, Նար իշխանն ասաց առանց այլևայլի.

— Ոճիրը Արշակ թագավորից է։

Ապա, երբ պատմեցին, թե ի՞նչ պարագաներում է կատարվել սպանությունը և սպանողները եղել են դիմակավորված՝ նա ձեռը թափ տվեց միայն.

— Միևնույն է. ոճիրը նյութել է Արշակը՝ թագապահանջ ունենալու երկյուղից...

Զրույցի այս պահին հայտնեցին, թե հարևան նախարարներ են եկել, երբ Նար իշխանը կարգադրեց հրավիրել, իրար հետևից, ներս մտան ծռաքիթ, անգղադեմ ծեր Վահևունին, Կարուց տեր Զաքարեն և Կամսարականի փեսա Դավիթ Համունին։

— Աճապարեցինք, իշխան, հաղորդելու... Իմացա՞ր ինչե՞ր եղան,— կռնչաց Վահևունին դեռ սեմից։— Արշակը չարագործում է ոչ միայն մեր դեմ...

— Առավել լավ, առավել լավ,— կրկնեց Կամսարականը։

— Սույն ոճիրը կարագացնի գահավիժումը նորա. ամենքը կճանաչեն, թե ի՞նչ ծնունդ է թագավորնիս։

Ու սկսվեց ընդհանուր, երկարատև մի զրույց, թե ի՞նչ կլինի այսուհետև։ Վահևունին այն կարծիքը հայտնեց, թե Արշակը հավիտենապես արատավորեց իրեն. այժմ ամենքը նրանից կդարձնեն նրանից։

— Եվ հուսամ՝ սորանից հետո նա հանգիստ կթողնի մեզ,— ուրախացավ Դավիթ Համունին։

— Վստա՞հ ես,— ընդմիջեց Նար իշխանը գլուխը թերահավատ շարժելով։— Հակառակը, սիրելիդ իմ։ Սպանություն կատարողը գազազում է. մեր մերժումներից զայրացած՝ կարող է վրեժխնդիր լինել մեզ. կարող է հարձակումով խլել մեր բերդերը։ Ի՞նչ և լինի՝ մնանք աչալուրջ և պատրաստ. թույլ չտանք, որ նա ի գործ դնի իր նպատակները չարաչար...

— Իսկ դրա համար ի՞նչ կարող ենք անել, իշխան,— հետաքրքրվեց Կարուց տերը՝ Զաքարեն։

— Մնանք և գործենք համախորհուրդ,— վրա բերավ Կամսարականը։— Ի միտ բերենք, որ եթե լինենք միհնակ, նա կկլանի յուրաքանչյուրիս, իսկ միասին՝ երբեք։

— Սակայն կարո՞ղ ենք հուսալ, որ մեզ կթողնի հանգիստ,— խոսեց նորից Վահևունին։

— Անշուշտ եմ,— վստահ նկատեց Համունին։— Այժմ Արշակն այնպիսի վիճակի է՝ այլևս չի խորհի ո՛չ մեր բերդերի և ո՛չ իսկ քաղաք շինելու մասին։

Կամսարականը բազմախորհուրդ նայեց քեռայր Համունուն.

— Արդյո՞ք, վստա՞հ ես,— կասկածով հարցում արավ նա։

Այդ օրերին արքայազն Գնելի սպանության մասին էին խոսում նաև ավագները պալատում։ Ինչպես Շահապիվանում, այնպես էլ այստեղ ամենքին զբաղեցնում էր այն միտքը, թե ո՞վ կարող է կատարած լինել այդ ոճիրը։ Այստեղ էլ յուրաքանչյուրն անում էր իր ենթադրությունը, և այդ ենթադրություններին ի պատասխան Վարդ իշխանը կարևոր էր համարում հայտնել, թե արքան Գնելին հրավիրել էր հանդիպումի և սիրալիր զրույցի. բայց ահա ինչ-որ անհայտ մարդիկ գործեցին այդ ոճիրը և թույլ չտվին, որ արքան տեսակցի հարազատի հետ։

— Բայց ճշմարի՞տ է, որ մարդասպանները չեն կողոպտել ոչինչ,— հարցրեց Հայր-Մարդպետը։

— Ճշմարիտ է,— հաստատեց Վարդ իշխանը։— Սակայն

դա շնորհիվ Գնելի հարսի, որ փութով օգնություն կանչեց և սպանիչները փախան անհետ։

— Այդչափ խիզա՞խ է եղել իր հարսը,— զարմացան խոսակիցները։

— Առավել քան խիզախ,— ասաց Վարդը։— Իզուր չէ, որ Անդոք իշխանի դուստրն է։

Պետք է ասել և այս, որ պալատականներից և համակիր նախարարներից ոմանք մտածում էին, թե արդյոք Գնելի սպանությունը չի՞ կատարել թագավորի հակառակորդներից մեկը, և որպեսզի արատ բերի թագավորի անվան, գործել է թագավորի անունով... Իսկ ոմանք լսելով, թե այդ սպանությունը թելադրած կլինի թագավորը, պնդում էին, թե Արշակը երբեք չէր անի այդօրինակ մի քայլ, լավ իմանալով, որ դա կարատավորի իր անունը. չէ՞ որ ինքն էր հրավիրել նրան Շահապիվան... Մի՞թե նա կցանկանար, որ խանգարվեր աշխարհախումբ տոնը Նավասարդի և մարդիկ կասկածի առնեն իրեն...

Ինչպես երևում է, շատ սակավ մարդիկ էին լսել Փառանձեմի խոսքերը, թե սպանությունն իր պատճառով եղավ, կամ, եթե լսել էին, կարևորություն չէին տալիս։ Ուստի և տարածվում էր այն լուրը, թե սպանությունը եղել է թագավորի հրամանով, ու խոսում էին ամենքը, ամբողջ երկրում, որովհետև լուրը բերնեբերան հասել էր ամեն տեղ ու ամեն բերան մի խոսք էր ասում և անպայման մի ենթադրություն անում։ Ամմասն չէին անգամ հեռու մենաստանների կրոնավորները. նրանք էլ տարուբերում էին գլուխները և շշնջում.

— Առանց արքայի կամքի Գնելի մազը չէր ընկնի...

Բայց, այս ամենից անկախ, բոլորը՝ նախարար թե շինական, պալատական թե հոգևոր մարդիկ հանգում էին միևնույն մտքին, թե այդ սպանությունը «ծնելու է կասկածներ բազում» և ծանր վիճակի մեջ է դնելու Արշակ թագավորին։

Եվ այս ենթադրությունը ճշմարիտ էր։

Իրոք, կասկածների մեջ էին շատերը։ Բայց ամենից ավելի ծանր կասկածների մեջ էր Արշակ թագավորն ինքը։ Ոմանց նման նա ևս մտածում էր, թե սպանությունը կատարեցին գուցե իրեն թշնամի նախարարներից, որպեսզի խանգարեն Ավանի կառուցումը... և մանավանդ հանցապարտ դարձնեն

իրեն ժողովրդի առաջ, դիտավորյալ տալով իր անունը՝ «Թագավորի հրամանով»...

Բայց ահա այն խոսքերը, որ ասել էր Փառանձեմը սուգի ժամին՝ ամուսնու դիակի վրա, թե «մեկը աչք դրեց վրաս և հիմա ցանկանում է, որ չտանջեմ ինձ»...— շփոթում էին իմացողին, ցրում էին բոլոր ենթադրություններն ու գուշակությունները, և մարդիկ ակամա մտածում էին, թե՞ ով կարող է լինել դա՝ այդ վատհոգին, որ սիրո կրքից սպանել տար նորապսակ Գնելին։ Ու անում էին տարբեր կռահումներ և չէին գտնում հավանական մեկին, բայց կարծում էին, թե դա կարող է լինել Կավաշ այցելող սեպուհներից մեկը, կամ այլ մի իշխանազուն, որ ամուսնությունից առաջ սիրահարված է եղել Սյունյաց իշխանի դստեր վրա ու որոշել է թեկուզ ոճիրի գնով տիրանալ նրան։

Այսպես, ամենատարբեր ենթադրություններ անելով, ամենքը համարյա հանգում էին միևնույն մտքին, թե սպանության գաղտնիքն անշուշտ կիմանա միայն Փառանձեմն ինքը, որ սուգի միջոցին անգամ ասել էր այդ խոսքերը ի լուր ամենքի։ Նա գիտե անկասկած, թե ո՞վ է այն մարդը, որ «աչք է դրել» իր վրա...

Այսպես էր մտածում և Արշակ թագավորը, բայց առայժմ պատշաճից դուրս էր համարում հարցում անել այդ մասին Փառանձեմին, չնայած երկու շաբաթից ավելի էր, ինչ նա գտնվում էր Վաղարշապատի պալատում, առանձին խուցում մի հարկաբաժնում, ուր նրան գրեթե ամեն օր այցելում էր Օլիմպիա թագուհին, այցում էին պալատական տիկիններ։

Այցելուների մոտ Փառանձեմն իրեն պահում էր զուսպ, վիշտը սրտում ամփոփած, բայց խոշոր խած աչքերում մի անասելի թախիծ... Խոսում էր սակավ, հակիրճ դարձվածքներով, պատասխանելով միայն հարցումների. իսկ մնացյալ ժամանակը լռում էր թեթև հառաչով և աչքերը ծածկում ձեռքով, կամ՝ հայացքը մի կետի, մնում նստած։ Բայց երբ այցելուներն իրենց միխիթարանքի խոսքերն սպառելով հեռանում էին, նա գեղեցիկ գլուխն առնում էր ափերի մեջ և արտասվում, հիշելով Գնելի անշունչ դին, մտքով նզովում էր թե՛ սպանողին և թե՛ սպանությունը դավողին։ Նրան առանձնապես մեծ կսկիծ էին պատճառում այն խոսքերը, թե՝ «Մի

տանջի քեզ. կունենաս առավել լավ ամուսին»... Բայց թե ո՞վ էր ասողը՝ Փառանձեմը չգիտեր. լսել էր միայն, չէր տեսել ո՛չ ասողին, ո՛չ ճանաչել էր ձայնը... Այժմ իր մենության մեջ հիշելով այդ խոսքերը՝ նրան պաշարում էին կասկածներն ու տարակույսները. ի՞նչ էին նշանակում այդ խոսքերը... Ո՞վ էր ասողը և ո՞ւմ կողմից...

Խորհելով այս մասին՝ նա կրկին հիշում էր սուգի ժամանակ լսած խոսքերը և ասում ինքն իրեն. «Կարենայի պարզել ո՞վ էր ասողը»...

Բայց ինչպես մխիթարության եկողները չէին խոսում այդ մասին, այնպես էլ ինքը Փառանձեմը, որքան էլ նրանք զրուցեին իր վշտի մասին։ Օլիմպիա թագուհին, օրինակ, Փառանձեմին անհույս վշտի մեջ բերելով պալատ, շրջապատեց նրան սիրով ու գորովով։ Շուտ-շուտ գալիս էր նրա հարկաբաժինը և մխիթարում նրան մեղմ խոսքերով, նրա ձեռները առնելով իր ափերի մեջ։ Թագուհու բախտից Փառանձեմը, որ ծնողների հետ տարիներով ապրել էր Բյուզանդիոնում, գիտեր հունարեն՝ մայրենի լեզվի պես, ուստի և զրուցում էին ազատ և լիովին հասկանում միմյանց։

— Ա՜խ, տիրելիդ իմ Ֆարանզեմ, ա՜խ,— ասում էր Օլիմպիա թագուհին հայկական կոշտ տառերը փափկացնելով։— Շատ ծանր է, քայլ պետք է տոկալ։ Գիտեմ, ահավոր է հարազատի կորուստը, սակայն այդպիսինակ դժբախտություններ պատահում են ամենքին։ Ինքս կորցրել եմ հայր, փեսացու և եղբայր... Ա՜խ է, քայլ պետք է տանենք ի վերուստ վիճակվածը։ Մայրս, տիրելիդ իմ Ֆարանզեմ, ասում էր միշտ, թե հարազատ հանգուցյալները երբեք գոհ չեն լինի, եթե մենք մնանք վշտահար. նրանց հոգին, ասում էր, հանգիստ չի մնա և կտանջվի... Ուրեմն չպետք է արտասվել շատ։ Պետք է մեզ պահենք, որ կարողանանք պահել և նրանց հիշատակը... Այո։

Փառանձեմը լցվում էր այս խոսքերից, հիշում էր նորից Գնելին և ձեռքերը դնում երեսին։

— Մի՛, քույրս, մի լար, խնդրում եմ։ Մենք ջերմ խոսքով կհիշենք քո Գնելին, լացով՝ ոչ. լացով բավական է։ Հանգուցյալներին, ճշմարիտ է, չպետք է մոռանալ, բայց պարտավոր ենք թողնել հանգիստ...

Խոսում էին նրանք Երբեմն երկար, երբեմն կարճ և Փառանձեմը կամաց-կամաց մտերմանում էր Թագուհուն։ Լոկ այն հանգամանքը, որ Թագուհին այդքան ուշադրություն ու ժամանակ էր նվիրում իրեն, արդեն իսկ սփոփում էր Փառանձեմին։ Օլիմպիան ուշիմ կին էր. գալով Հայոց Աշխարհը հարս՝ նա իրեն զգում էր մենակ, օտարության մեջ, ուստի և միշտ զգաստ էր և զգույշ։ Ապրած լինելով բյուզանդական արքունիքում, որպես կայսեր եղբոր հարսնացու, գիտեր, որ դավերն ու նախանձը մեծ դեր են խաղում պալատներում։ Դեռ Բյուզանդիայում նրան ասել էին, ինքն ևս գիտեր, որ Թագավորներն ունենում են հայտնի և անհայտ շատ Թշնամիներ, որոնք միշտ և հանապազ հետամտում են իրենց նպատակին, և Թույնը առաջին տեղն է բռնում այդ գործում, ուստի և Օլիմպիան կերակուրն ընդունում էր միայն հետը բերած նաժիշտների ձեռքից... Զգուշությունը Թելադրում էր նրան լինել չափից ավելի շրջահայաց։ Բյուզանդիայի ճոխ արքունիքից ընկնելով Վաղարշապատի համեստ պալատը՝ շատ բան այստեղ հաճելի չէր նրան, շատ բան չէր համարում նրա ճաշակին, նախ պալատը փոքր էր՝ միայն երկհարկանի և քիչ հարկաբաժիններով. ապա չուներ այն ոսկեհուռ կահերը, կարասիները, շքեղ զարդերն ու փռվածքները, ինչ կար կայսեր պալատում։ Սակավ էին պալատական կանայք ու աղջիկներ, սակավ էին տոնահանդեսներն ու պարահանդեսները, մանավանդ կաքավող ու երգող վարձակները... Այնուհետև հազվադեպ էին գնացող-եկող օտարները, օտարերկրյա դեսպաններ՝ իրենց շքախմբերով, իրենց պես-պես գլխանոցներով ու շքեղազարդ հագուստներով, իրենց մեծագին նվերներով... Չկար նաև ամենագլխավորը՝ ծովը, որին այնպե՞ս կարոտում էր նա։ Ծով, որին նայում էր ինքը արթնանալուն պես՝ իր ննջարանի լուսամուտից և իրեն զգում էր միշտ թեթև, եթերային.... Որքան էլ հոգնած լիներ՝ ծովի մի փոքրիկ կտորը, նրա կապույտ ժպիտը հանգստացնում էր նրան... Իսկ այստեղ՝ Արմենիայում միայն դաշտեր էին և լեռնե՞ր, լեռնե՞ր... Դրանց նայելիս նրան թվում էր երբեմն, թե այնքան բարձր են և պարսպի նման այնպես իրար կպած, որ անցնել անկարելի է. դրանից և այն պատրանքն էր ունե-

նում նա, թե ընկել է մի տեղ, որտեղից այլևս դուրս գալ չի կարող։

Սակայն Օլիմպիան սիրեց հայ կանանց, նրանց սրտալի խոսքն ու ջերմ վերաբերմունքը։ Այդ գուցե նրանից էր, որ պալատական կանայք, ամենքը հարգում էին նրան և պատվում։ Մի երկուսը նույնիսկ, ինչպես հազարապետ Դավիթ Գնունու տիկինը՝ իշխանուհի Նանան, Վասակ սպարապետի կինը՝ Կատրանիդեն, Վարդ իշխանի Շուշանը և մյուսները ասել էին նրան. «Մայրդ ու քույրերդ, բազիլեյա, հեռու են այստեղից. մենք, եթե կհաճես, կլինենք քեզ մայր ու քույր։ Ցտխրես բնավ և, եթե կունենաս ինչ մի փափաղ կամ ցանկություն՝ հայտնիր մեզ և եղիր վստահ, որ կկատարենք»... Եվ Օլիմպիան գոհ էր նրանցից ու ինքը նույնպես սիրալիր էր նրանց հանդեպ. բայց անվերապահ հավատում էր միայն ամուսնուն՝ Արշակին, որի անունը, ի դեպ, ճիշտ արտասանել չկարողանալով, արտաբերում էր Արզաս, իսկ Մարգիանց ներկայությամբ արդեն «բազիլևս»...

Խոսում էին, և դա հայտնի էր ոմանց, որ Օլիմպիան չէր ցանկացել հարս գալ Հայոց Աշխարհը, թեկուզ իրեն թագուհի, Արմենիան համարելով բարբարոսների երկիր։ Բայց համոզել էին, թե պետք է հանձն առնել Բյուզանդիայի սիրույն, որպեսզի արմենների թագավորը միշտ բարեկամ մնա կայսեր... Ու խոստացել էին, թե յուրաքանչյուր տարի արքունի մարդիկ մի քանի անգամ կայցելեն իրեն կամ իրեն կհրավիրեն Բյուզանդիա... Օլիմպիան չէր հավատացել այդ ամենին, սակայն, գալով Հայաստան և մնալով մոտ երեք տարի, նա սկսեց սիրել երկիրը՝ գարնանը նրա ծաղկող այգիները, ամառանը ու աշնանը՝ նրա քաղցր, բուրավետ պտուղները, իսկ ձմեռը՝ նրա առատ ձյունն ու ձյունամրրիկները,— բնության պես-պեսություններ, որ չկային իր ծննդավայրում։ Բայց առավել սիրեց հայ կանանց զգացմունքների առատությունը, պարզությունը և անշահախնդիր բարությունը...

Այժմ էլ, հանդիպելով Փառանձեմին, համակրում էր նրան սրտանց, տեսնելով մանավանդ, թե որքա՜ն կիրթ է, զուսպ և հունարեն խոսում է ավելի լավ, քան որևէ մեկը պալատում։ Այդ համակրանքն ավելանում էր թերևս այն պատ-

ճառով, որ Օլիմպիան խղճում էր Փառանձեմին՝ նրան վիճակված դժբախտության համար։

Թագուհու հետ կամ առանձին Փառանձեմին այցելում էին և պալատական կանայք՝ հազարապետ Դավիթ Գնունու տիկինը, Վասակ սպարապետի կինը և ուրիշները։ Սրանք ամենքը, հավաքվելով Փառանձեմի մոտ, մխիթարելով, փայփայում, սիրում էին նրան և զանազան պատումներով ջանում, որ նա անձնատուր չլինի իր վշտին։ Խոսում-զրուցում էին մեղմ, հանդարտ և հեռանալիս հարցնում.

— Եթե ունես որևէ կարիք, իշխանուհի, ասա... մենք սիրով...

Փառանձեմին այցելում էր և թագավորը, ավելի ուշ-ուշ, քան Օլիմպիա թագուհին։ Առաջին անգամ Արշակը նկավ թագուհու հետ, հետո մի այլ անգամ հազարապետ Գնունու և որսապետ Հավնունու հետ։ Սանր էր Արշակի համար առանձնապես առաջին այցը։ Նա մտածում էր, թե Փառանձեմը ևս գուցե, ուրիշների նման, իրեն է համարում Գնելին սպանող... չէ՞ որ Փառանձեմն ինքն է ասել, թե Գնելին կալանողները հայտնել են «արքայի հրամանով», ուստի և ծանր էր գալ և խոսել Փառանձեմի հետ... Բայց, հիշելով Փառանձեմի խոսքերը սուգի միջոցին, գնաց։ Թագուհու հետ մտնելով նրա հարկաբաժինը և հատկապես այն սենյակը, ուր նստած էր Փառանձեմը, Արշակը հոնքերն իրար բերեց ակամա և աչքերը կկոցեց։

Փառանձեմը ոտից գլուխ սգո հագուստի մեջ էր, որի սևությունն առանձնապես ընդգծում էր նրա դեմքի կաթնագույն մաշկը, բարձրադիր աղեղնաձև հոնքերը և խոշոր խաժ աչքերը, որոնց պայծառությունն սքողված էր վշտով. վիշտ, որ թվում էր վեհ հպարտություն էր տվել նրան։

Թագավորին ու թագուհուն նկատելով՝ Փառանձեմը մի հպարտ շարժում արավ ոտքի կանգնելու, բայց Արշակը մաղմամազոտ ձեռքը բարձրացրեց իսկույն.

— Նիստ, Փառանձեմ։ Այստեղ քեզ զգա այնպես, ինչպես տանդ հորենական։

Բայց Փառանձեմն այնուամենայնիվ ոտքի կանգնեց, և Արշակն առաջին անգամ տեսավ նրան ամբողջ հասակով. մի հասակ, որը նրան թվաց ոչ բարձր, բայց բարեձև ու համա-

չափ. սև ամբողջական հագուստը գրկելով իրանը՝ թեթև սեղմում էր մեջքը և հավասար ծալքերով իջնում ծածկում ոտքերը։ Նա կանգնեց հագիվ մի վայրկյան. թագուհին անմիջապես նստեցրեց նրան.

— Քո վիշտը, սիրելիդ իմ Ֆարանգեմ, քեզ իրավունք է տալիս ոտքի չկանգնել,— և թագուհին, նրա թևքը բռնելով, նստեցրեց կողքին։

Իսկ թագավորը տեղավորվեց նրանց դիմացի սաղաֆով ընդելուզված բազկաթոռին։ Արշակը թիկնոցով էր և գլխաբաց։ Փառանձեմը թեև առաջին անգամ էր հանգիպում թագավորին (թաղման օրը նա համարյա չէր նկատել նրան), բայց նայվածքը հատակին՝ չէր նայում նրան, և Արշակը չէր կարող ասել՝ ամաչելո՞ւց էր այդ, թե կասկած ունի իր նկատմամբ... Ու մտածեց— եթե ամոթխածությունի՞ց է՝ հասկանալի է, բայց եթե... Այսուամենայնիվ նա զգաց, որ պետք է մի բան ասել, ու դիմեց թագուհուն հունարեն.

— Մի՞թե իշխանուհին միշտ մենակ է այստեղ, բազիլեյա։

— Ոչ, բազիլևս. նրա մոտ կան նաժիշտներ. նրա սպասին է մեր դայակը,— պատասխանեց Օլիմպիան նույնպես հունարեն։— Ամենայն օր Ֆարանգեմին այցելում են պալատական տիկիններ, նաև ինքս։

— Այդպես։ Փառանձեմին չպետք է թողնել մենակ,— շարունակեց Արշակը հունարեն, նայելով գլխիկոր սգավորին։— Այո, Փառանձեմ, ծանր է քեզ վիճակված վիշտը,— խոսեց այս անգամ հայերեն։— Բայց չպետք է անձնատուր լինել հուսատության։

Արշակը լռեց և նորից թավ հոնքերի տակից նայեց Փառանձեմին. Փառանձեմի դեմքի և ոչ մի մկանը չշարժվեց։ «Ունի՞ որևէ կասկած, թե ամաչում է վերոտին»,— մտածեց թագավորը և այս անգամ արդեն ենթադրեց, որ եթե Փառանձեմը ունենար որևէ կասկած՝ չէր համաձայնի գալ պալատ... իսկ այժմ, իր գալը տեսնելով, ոտքի չէր կանգնի... Մակայն ինչո՞ւ է անտարբեր դեպի իր խոսքը, ինչո՞ւ որևէ նշանով, թեկուզ գլխի թեթև մի շարժումով չի ցուցաբերում որևէ վերաբերում...

Արշակը նորից զննաբար նայեց Փառանձեմին և ասաց.

— Ես խնդրել եմ, Փառանձեմ, որ պալատի տիկինները քեզ միայնակ չթողնեն...

Ասաց, բայց իսկույն էլ զգաց, որ դա հայտնի է արդեն և կատարվում է։

Սակայն այդ խոսքերին էլ Փառանձեմը չպատասխանեց. մինչդեռ կարգը պահանջում էր, որ նա շնորհակալ լիներ թագավորի այդ շնորհի համար. բայց Փառանձեմը դարձյալ մնաց լուռ։ Ի՞նչ էր նշանակում այդ լռությունը. խոր վի՞շտ, թե...

Արշակը վարանքի մեջ էր։

— Այդպես, Փառանձեմ, կցանկանայի, որ դու չափից ավելի անձնատուր չլինես վշտիդ,— խոսեց Արշակը ձայնին ավելի մեղմություն տալով, և կրկին զգաց, որ չասաց այն, ինչ անհրաժեշտ էր, ինչ կարևոր էր, ու դարձյալ լռեց, դարձյալ նայեց գլխահակ Փառանձեմին, որին շարունակում էր փայփայել Օլիմպիան՝ աջով շոյելով նրա ճերմակ ձեռքը։— Եղիր վստահ, Փառանձեմ, որ եղեռնագործը կգտնվի և կըստանա արժանի պատիժը,— փոքր լռելուց հետո ասաց Արշակը ներքուստ ուրախ, որ գտնվեց վերջապես հարկավոր խոսքը։

Բայց Փառանձեմն այդ խոսքերին նույնպես անտարբեր եղավ։

Այն ժամանակ Արշակը վեր կացավ տեղից և գնաց դեպի լուսամուտը, մտածելով, թե վիշտը հավանաբար թմրեցրել է Փառանձեմին։ Բայց և այնպես պետք է սրտապնդել նրան, և ասաց.

— Այո, եղեռնագործը կստանա իր արժանի պատիժը. իսկ դու քեզ զգա ինչպես հարազատներիդ մոտ...

Արշակն ու թագուհին խոսեցին մի փոքր. ևս ու ապա հեռացան իրենց հարկաբաժինը։

Ջնայած Արշակը շարունակ մտածում էր հարցնել Փառանձեմին՝ ո՞վ էր ասել, թե՝ «կունենաս առավել լավ ամուսին» խոսքերը և արդյոք դրանք մխիթարանքի համա՞ր էին ասված, ինչպես կարծում էին ոմանք, թե լուրջ նպատակով... Այսուամենայնիվ նա անկարող եղավ անել այդ հարցումը, և այդ միտքը հանգիստ չէր տալիս նրան։

Երկրորդ այցին խոսակցությունն ընթացավ ավելի դյուրին։

Ինչպես առաջին անգամ, Արշակը նստեց Փառանձեմի դիմաց և ասաց.

— Գնելի կորուստը ծանր է ամենիս և ամենից առավել քեզ համար, Փառանձեմ։ Սակայն...

Թագավորի առաջին իսկ խոսքերից Փառանձեմի աչքերում արցունք երևաց, և նա գլուխն իջեցրեց։

— Արցունքն անշուշտ թեթևացնում է վիշտը, Փառանձեմ,— շարունակեց Արշակը՝ ձայնի մեջ վշտախառն մեղմություն։— Սակայն արցունքով ետ չենք բերի Գնելին։

Փառանձեմը, չգիտես այս խոսքերի տպավորությա՞ն տակ, թե ինքնաբեր, սրբեց արտասուքը և, աչքերը մի կետի հառած, անշարժացավ։ Թվաց դարձյալ, թե չի կամենում կամ չի համարձակվում նայել թագավորի երեսին. և Արշակը հորից մտածեց, թե նա գուցե կասկածներ ունի դարձյալ... Այլապես՝ չէ՞ որ պատիվ պիտի համարել խոսել թագավորի հետ, պատասխանել նրա հարցումներին։ Ամաչո՞ւմ է... Սյունյաց իշխանի դուստրը շինականի աղջիկ չէ։ Իշխանական դերդաստանում մեծացած և տարիներով Բյուզանդիայում ապրած՝ նա պետք է որ համարձակ լիներ։ Սակայն... Տեսնելով նրա համառ լռությունը՝ Արշակն ասաց.

— Ես, Փառանձեմ, արդեն սուրհանդակ եմ ուղարկել Բյուզանդիոն՝ Անդոք իշխանին և Մարիամ իշխանուհուն կանչելու։ Հարազատներիդ ներկայությունը կարի անհրաժեշտ է։ Այդպե՞ս է։

Եվ որովհետև Փառանձեմն անմիջապես չպատասխանեց՝ Արշակը հարցրեց.

— Հուսամ դժգոհ չես լինի՞։

Վերջապես Փառանձեմը գլուխը բարձրացրեց և նայեց թագավորին։

— Բնավ, արքա։ Շնորհակալ եմ խորապես,— ասաց նա մի այնպիսի ձայնով, որի մեջ խոր վշտի հետ միասին ըզգացվում էր և երախտագիտության շեշտ և ձայնի հաճելի մի երանգ։ Եվ Արշակը նրա ձայնի այդ շեշտից ու երանգից զգաց, որ նա իրեն չի կասկածում Գնելի սպանության մեջ և դրանից թեթևություն զգաց, ապա մտածեց. «Այժմ գուցե

բացատրի, թե ո՞վ էր ասել նրան «Մի տանջիր քեզ, կունենաս առավել լավ ամուսին»... Մտածելով՝ Արշակը ելավ տեղից, ասես կարևոր գյուտ արած և, մեկ-երկու քայլ անելով, նորից մտածեց՝ հարցնե՞լ, թե ոչ։ Բայց, հարցնելու փոխարեն, ասաց.

— Այդպես, Փառանձեմ, արիացիր։ Հուսամ Անդոք իշխանը մեզ երկար սպասել չի տա և կժամանի փութով Մարիամ իշխանուհու հետ։

— Շնորհակալություն, արքա,— կրկնեց Փառանձեմը՝ այս անգամ արդեն թագավորի աչքերին նայելով, վշտակիր ձայնի մեջ նույն հաճելի շեշտը։

Փառանձեմի պարզ հայացքից Արշակը նորից թեթևություն զգաց։

«Այո, բոլորովին չի կասկածում»,— մտածեց նա Փառանձեմի սենյակից դուրս գալով։

Առաջին և երկրորդ այցից հետո թագավորը հաճախեցել էր իր այցերը. այժմ գնում էր մենակ, միայն թիկնապահ Եզնիկի ուղեկցությամբ։ Երբ արքան մտնում էր ներս, Եզնիկը մնում էր հարկաբաժնի միջանցքում կանգնած։

Այցի գալով՝ Արշակը նախ հետաքրքրվում էր նրա առողջությամբ և ասում մխիթարանքի խոսքեր։ Փառանձեմին նայելիս Արշակին թվում էր, թե նրա աչքերը նման են եղնիկի աչքերի՝ վճիտ ու խորունկ, բայց մարդկային վշտով լի։ Սակայն այդպես էլ գրավիչ էին. ունեին մի անմեկնելի քաշող զորություն. նրանց մեջ շողում էին ինչ-որ հպարտ կայծեր։ Իսկ Փառանձեմի դեմքի մաշկը հիշեցնում էր կաթնագույն ատլաս։ Աղեղնաձև հոնքերն այնպես էին, որ ծանր վիշտը չէր եղծում նրանց հպարտ գիծը... Նայելով Փառանձեմին՝ թագավորը նորից, ինչպես այնտեղ՝ Լիսին բլուրի վրա, նրան ակամա համեմատում էր իր պաղահայաց ու զուսպ Օլիմպիայի հետ և զարմանում, որ եթե սուգի մեջ Փառանձեմը գեղեցիկ է այսքան, հապա ի՞նչ կլիներ իր երջանկության օրերին...

Նայելով Փառանձեմին՝ Արշակը մտածում էր նորից, թե ի՞նչ ձևով հարցում անել խոսքեր ասողի մասին, որ անպատշաճ չթվա...

Եվ ամեն անգամ, երբ թագավորը գնում էր Փառանձեմի

մոտ, պալատական սպասավորներն ու նաժիշտները դռների արանքից, անկյուններից նայում էին նրա հետևից և երբեմն իրար գալով շշնջում.

— Արքան նորից գնաց...

— Դժբախտը երևի վատ է։

— Այո, վատ է։ Նրա դայակն ասել է, թե շարունակ լալիս է։ Անգամ Թագուհին չի կարենում մխիթարել։

Այդ այցերի մասին խոսում էին և պալատական ալեգները, թե ինչո՞ւ է արքան շուտ-շուտ գնում այդպես...

Ոչ սպասավորները, ոչ նաժիշտները և ոչ պալատականները չէին կարող իմանալ, իհարկե, որ Արշակը գնում է պարզելու Փառանձեմի վերաբերմունքը դեպ իրեն և մանավանդ այն, թե ով էր ասել այն խոսքերը Փառանձեմին։ Ամեն այցի նա որոշում էր հարցնել այդ, բայց Փառանձեմի սենյակը մտնելիս, անպատշաճ էր համարում սկսել դրանով, ուստի նախ ասում էր.

— Հուսամ հանգիստ ես, Փառանձեմ։

— Շնորհակալություն, արքա,— լինում էր համեստ պատասխանը։

— Այցո՞ւմ են քեզ տիկինները, Թագուհին։

— Հանապազ, արքա։ Շնորհակալություն։

— Գուցե ցանկաս, որ քեզ այցեն բարեկամներ մայրաքաղաքից կամ այլ վայրից։ Ասա, հղենք հրավեր:

— Շնորհակալ եմ, արքա։ Հուսով եմ, որ իշխան-հայրս և իշխանուհի-մայրս ժամանեն շուտով։ Անհամբեր եմ նրանց գալուն։

Ինչպես առաջ, այնպես էլ այդ այցերին Արշակին հաճելի էր թվում Փառանձեմի ձայնը և խոսելու կիրթ ձևը, և նա նորից ակամա Փառանձեմին համեմատում էր պալատական տիկինների հետ, իրեն ծանոթ իշխանուհիների հետ, իր Օլիմպիայի հետ, և դարձյալ զարմանում, որ Գնելի կինը գեղեցիկ է եղել այդպես։ Միաժամանակ Արշակը նրա խոսքից զգում էր, որ նա առանձին մի փափագով է սպասում ծնողներին, գրեթե այնպես, ինչպես կալանավորը՝ ազատության։ Նկատելով նրա այդ հոգևին փափագը՝ Արշակը մտածում էր, թե նա հավանաբար դժգոհ է իրենից, որ իր հրավերով պատանդ եղավ Գնելի սպանության... Գուցեև Փառանձեմը ոչինչ չէր

մտածում, բայց Արշակին թվում էր, թե նա կամենում է շուտ հեռանալ ու սպասում է միայն ծնողներին...

Բայց ինչպե՞ս... հեռանա դեռ ոչինչ չպարզած. չէ՞ որ գաղտնիքը գիտի միայն նա. պետք է իմանալ և պարզել... այլապես ծանր կասկածները կմնան ամենքի մեջ... Եվ Արշակը մի օր հարցրեց անսպասելի.

— Դու, Փառանձեմ, անշուշտ, մտածում ես եղեռնագործի մասին։ Այդպե՞ս է։

— Այո, արքա։ Ես հիմա այլ մտածում չունեմ, քան իմ դժբախտությունը և թե...

— Բայց եղիր հանգիստ, Փառանձեմ... ես կհայտնաբերեմ եղեռնագործին և չեմ ների։ Սակայն դու ևս պետք է օգնես ինձ եղեռնագործին գտնելու։

Փառանձեմը լարվեց.

— Սակայն ինչպե՞ս, արքա։

— Եթե հիշես, թե ո՞վ ցշնչաց՝ «Մի տանջիր քեզ, կունենաս առավել լավ ամուսին»... Կարծես այդպես են ասել։ Այո՞...

— Ճիշտ այդպես, արքա։ Բայց իմ սուգի մեջ ես չեմ հիշում, թե ո՞վ էր այդ անսիրտ անհոգին,— և Փառանձեմը հուզումից մեկեն բարձրացրեց գլուխը։— Աղերսում եմ, արքա, գտիր եղեռնագործին... Ես ինքս կառնեի Գնելի վրեժը, սակայն ես... կին եմ։ Ախ, գեթ կարողանայի առատ արտասվել...

Այս խոսքերի հետ Փառանձեմի միշտ հանգիստ թարթիչները ցնցվեցին հանկարծ, և աչքերը, խաժ աչքերը փայլատակեցին անսովոր, և Արշակն այդ աչքերի մեջ զգաց թե՛ խորին վիշտ և թե՛ վճռականություն, որից Փառանձեմի դեմքը ավելի գեղեցկացավ։ Միևնույն ժամանակ Արշակին թվաց, թե այդ կնոջ մեջ կա մի թաքնված խորհրդավորություն, որ չէր զգացել մինչ այդ, գուցե սուգի հետևանքով։ Զգաց, որ այդ կինն իրոք կարող էր ձիավազ գալ Շահապիվան և օգնություն խնդրել վտանգված ամուսնու համար։ Այդ կարող էր անել միայն խիզախ հոգին...

Մի վայրկյան Արշակը նայեց Փառանձեմի բռնկված դեմքին և ցանկություն զգաց իր հիացումը հայտնել նրան՝ այդ խիզախության համար, բայց իսկույն էլ զգուշացավ։ Սա-

կայն դրան փոխարինեց ուրիշ միտք, այն, որ ինքը խոստացավ գտնել եղեռնագործին. ինչպե՞ս կարող է գտնել այժմ, երբ Փառանձեմը չի հիշում այդ խոսքերն ասողին...

* * *

Վերջապես, Գնելի մահից քսան օր անց եկավ Փառանձեմի հայրը՝ Անդոք իշխանը՝ մենակ, առանց իր իշխանուհու. դա հիսունն անց մի ամրակազմ ու կորովաքայլ տղամարդ էր. երկու օրվա մեջ նա կարողացավ կարծես սփոփել դստեր։ Երբ Փառանձեմը լալիս էր իր կորուստը՝ նա գրկում էր աղջրկա գլուխը, և ճակատը համբուրելով, կրկնում.

— Մի՛, մի՛, Փառանձեմ։ Լացը վայել չէ քեզ՝ Անդոք իշխանի դստեր։ Հայրդ շուտով ի հայտ կբերի եղեռնագործին և որձակոտոր կանի տոհմը նորա։ Մի՛...

Արշակը, լսելով լեռնական իշխանի այդ խոսքերը, մտածում էր, որ Անդոք իշխանը, իրոք այնպիսի մարդ է, որ ամեն ինչ կարող է անել։

Եվ ահա շուտով հայտնի դարձավ, որ լեռնական իշխանը դստեր պատմածներից հասու է եղել, որ Գնելի սպանությունը խարդավանքի հետևանք է...

Այդպես էլ նա խոսեց թագավորի հետ.

— Ես կարծում եմ, արքա, որ իմ արքայազն փեսան զոհ է խարդավանքի։

— Ճշմարիտ ես, իշխան, ճշմարիտ ես,— և Արշակը թեթևության մի հոգոց արձակեց։— Եվ ես վշտացած եմ առավել, քան դու, իշխան։ Ես նորան հրավիրեցի տոնին... Ով կարող էր ենթադրել այսօրինակ եղեռն...

— Սակայն, արքա, ինձ կոչում են Սյունյաց Անդոք իշխան։ Ես հասու կլինեմ ճշմարտության և կպատուհասեմ եղեռնագործին՝ ո՛վ և լինի։— Նա լռեց՝ շունչ առնելու։— Նիրիր ինձ, արքա, այս խոսքերիս համար և թույլատրիր այդպես վարվելու։

— Ես արտոնում եմ քեզ, իշխան։ Վարվիր այնպես, ինչպես կամենաս,— ասաց Արշակը շեշտով և ակամա նայեց Սյունյաց տիրոջ թուխ, խոշոր, հրաբորբ աչքերին, որոնց մեջ

զայրույթից ավելի փայլատակում էր վրեժխնդրության կամքը։

— Շնորհակալ եմ, արքա։ Քո արտոնությունը արքայական՝ սփոփում է իմ վշտացած սիրտը։

Թագավորը կամեցավ իմանալ, թե իշխանը ո՞ւմ է համարում այդ եղեռնը կատարող կամ ո՞ւմ է կասկածում, անշուշտ Փառանձեմի պատմածների հիման վրա. բայց սպասեց, որ իշխանն ինքը հայտնի... Արշակը նույնիսկ բնական էր համարում, որ զրույցի ընթացքը հանգեր դրան։ Սակայն Անդոքը չասաց ոչինչ։ Նա հավանաբար ցանկանում էր առայժմ գաղտնի պահել այդ, կամ՝ գուցե մտածելով, որ եթե Թագավորն իմանար ո՛վ է ոճրագործը, գուցեև հարուցեր որևէ արգելք...

Իշխանի ծածկամտությունն այսպես բացատրեց Արշակը, միաժամանակ ենթադրելով. թե իշխանն ինքն էլ հավանաբար չգիտի ոճրագործի ով լինելը, այլ միայն որոնում է...

Սակայն եղեռնագործին երկար փնտրելու հարկ չեղավ։

* * *

Այդ օրերին էր ահա, որ մի գիշեր Վարդ իշխանի տանը անսպասելի հայտնվեց արքայազն Տիրիթը, և նրա առաջին հարցումը եղավ Վարդին, թե ինչպե՞ս է ապրում Փառանձեմը։

Վարդը պատմեց ինչ գիտեր. ապրում է հատուկ հարկաբաժնում. սպասավորում են նրան մի դայակ և նա փիշտանոց... Մխիթարելու համար ամեն օր նրան այցում են պայտտական տիկիններ, երբեմն նաև Թագուհին ու Թագավորն ինքը... Իսկ վերջերս եկել է և հայրը՝ Անդոք իշխանը Բյուզանդիայից։

— Միով բանիվ, արքայազն, Փառանձեմն այստեղ ամենքի կողմից վայելում է խնամք ու սփոփանք,— ավարտեց իր բացատրությունը Վարդը։

Բայց դա ակներև չգոհացրեց Տիրիթին։ Նա ցանկանում էր իմանալ ավելին. Փառանձեմի կյանքի, ապրումների, նույնիսկ ապրուստի մանրամասն նկարագրությունը... Վերջապես նա ասաց և այն, թե կկամենար անձամբ խոսել Փառանձեմի հետ և ասել «նորան սփոփիչ, հուսաբեր խոսքերը»... Հնարավո՞ր է այդ... Նա այդպես էլ ասաց։

— Կարո՞ղ եմ, իշխան սիրելի, գնալ պալատ,— հետաքրքրվեց նա այնուհետև։

Այս խոսքերից Վարդ իշխանը թարթեց աչքերը. նրա գլխով տարբեր մտքեր անցան. կարծես կռահեց ինչ-որ, հանգարտ քորեց խոյաքիթը, ինչ անում էր, ըստ սովորության, գժվար խնդրի առաջ լինելիս, և ապա հարցրեց.

— Ունե՞ս կարևոր ասելիք, արքայազն։

— Կարևո՞ր։ Այո... կարի կարևոր։

Վարդը, զգալով նրան պալատ կամ Փառանձեմի մոտ տանելու դժվարությունը, ասաց.

— Ասելիքդ, արքայազն, թերևս հանձնարարե՞ս ինձ։

Տիրիթը գլուխը կախեց մտածումների մեջ. ասես կշռադատում էր անելիքը, և անսպասելի հայտնեց, թե իր պալատ մտնելու ցանկությունն ու նպատակը այն է, որ տեսնի Փառանձեմին, և զրուցի հետը... կարևոր, շատ կարևոր խնդրի մասին։

— Սակայն, արքայազն, նա քառասունքի մեջ է տակավին,— ասաց շփոթված, զարմացած Վարդը, կամենալով մի բանով անկարելի դարձնել այդ տեսակցությունը, զգալով դրա դժվարությունը։

Տիրիթը հառաչեց.

— Օ՜, դժվարին է սպասել մինչև քառասունքը։ Իսկ քառասունքից հետո եթե հանկարծ...

Եվ Տիրիթը, խոսքը չավարտած, հարցրեց, թե արդյոք որևէ մեկը ցանկություն չի՞ հայտնել Փառանձեմի հետ ամուսնանալու... կամ՝ հայրը մտադիր չէ՞ տանել նրան... գուցե որևէ իշխանիկի տալու... Չէ՞ որ կարգ է այրեացած կինը քառասունքից հետո, սգահան լինելով, կարող է ամուսնանալ...

Ահա ինչո՛ւ է ցանկանում տեսնել Փառանձեմին։

Վարդը նորից քորեց քիթը։

— Մի այդպիսի տեսակցության համար պետք է խնդրել հավանաբար արքայի թույլտվությունը, արքայազն,— ասաց նա մտածումների մեջ։— Եվ պետք է խնդրես ինքդ, արքայազն։ Իսկ ես, ինչպես և անցյալ անգամին, պարտքս կհամարեմ՝ խնդրել արքային, որ ունկնդրի քեզ։

— Բարի, իշխան։ Սակայն կուզեի, որ դա լիներ կարելի-

վույն շուտ։ Կփափագեի այսօր իսկ տեսնել Փառանձեմին, այլապես հայրը կարող է տանել նորան...

Եվ ահա հետևյալ իսկ օրը, երբ Արշակը անցուդարձ էր անում իր ընդունարանում՝ հուզված ու դժգոհ, որ դեպքերը խանդարեցին Ավանի գործով զբաղվելու և, քանի ձմեռը չէր եկել, մի անգամ ևս այնտեղ գնալու, կամ՝ պարտազանց նախարարներին մի կերպ պատժելու, ներս մտավ Վարդ իշխանը և ըստ ընդունված կարգի թեթև խոնարհում անելով ու ձիգ կանգնելով, հայտնեց հանդարտ.

— Արքայազն Տիրիթը, արքա, խնդրում է քո տեսությունը։

— Տիրի՞թը,— զարմացավ թագավորը։— Նա այստե՞ղ է, մայրաքաղաքո՞ւմ։

— Այո, արքա,— թագավորի զարմանքի վրա տարակուսեց Վարդը։— Ժամանեց երեկ և իջևանեց իմ տանս։

Արշակը լռեց ու կծկած աչքերով նայեց Վարդին, ասես առաջին անգամն էր տեսնում նրան՝ զննաբար։

— Եվ ցանկանում է ի՞նչ,— հետաքրքրվեց Արշակը։

Թագավորի սառը խոսքի եղանակը շփոթեց Վարդին. նա պահ մի գլուխն իջեցրեց, ասես խորհում էր, թե դրա՞ից հետո արժե՞ր ասել այն, ինչի համար է տեսություն խնդրում Տիրիթը։

— Զրուցիր, իշխան։ Ինչո՞ւ հապաղեցիր։

— Ներիր, արքա, գուցեև ճշտիվ չբանաձևեմ արքայազն Տիրիթի ցանկությունը։ Թերևս սխալվեմ...

— Խոսիր, ինչպես կարող ես,— ասաց թագավորը չոր, բայց հետաքրքրված։

— Արքայազն Տիրիթը, արքա, ցանկանում է քո արքայական թույլտվությունը...

Վարդը դարձյալ հապաղեց։

— Ինչո՞ւ համար սակայն։ Խոսիր, իշխան, լիաբերան։ Ի՞նչ թույլտվություն է արքայազնի խնդրածը։

Այս անգամ իշխանը չէր կարող չպատասխանել և ասաց.

— Արքայազն Տիրիթը, արքա, ցանկանում է քո բարեհաճ թույլտվությունը՝ արքայազն Գնելի այրին տեսնելու,— արագ-արագ խոսելով՝ գլուխն իջեցրեց Վարդը, ասես ամոթից, որ միջնորդում է այդպիսի բանի համար։— Նա անչափ

խղճում է իշխանուհի Փառանձեմին, ուստի իր պարտքն է համարում...

— Իր պա՞րտքը,— ընդմիջեց թագավորը։— Իսկ ո՞ւր էր մինչ այժմ։ Ինչո՞ւ այսքան ուշ է գալիս իր հարազատին մխիթարելու։

— Հարմար չի նկատել, արքա,— հորինեց Վարդը, ցանկանալով արդարացնել Տիրիթին, բայց թագավորի փորձող հայացքի ներքո ստիպվեց լինել անկեղծ և հայտնեց Տիրիթի գալու նպատակը։

— Վստահ է եղել, որ պալատում խնամով կպահեն Փառանձեմին, բայց այժմ, երբ քառասունքը լրանում է՝ անհանգիստ է։

— Եվ ինչո՞ւ։

— Երկյուղ ունի, թե հանկարծ Փառանձեմը քառասունքից հետո ամուսնանա ուրիշի հետ, թե ծնողները կնության տան որևէ մեկին...

— Եվ դա անհանգստացնո՞ւմ է նորան։ Ինչո՞ւ։ Կամենում է երևի ի՞նքը ամուսնանալ։ Այո՞...

Վարդը գլուխն իջեցրեց. նա չիմացավ ի՞նչ ասել և լռեց։ Բայց Արշակը շարունակեց.

— Կամենո՞ւմ է ինքը կնության առնել նորան։ Զրուցիր, իշխան։

— Կարծյոք,— շշնջաց Վարդը։

— Այդպե՛ս... Այդ որոշումը նա ընդունել է ա՞յժմ, թե վաղուց...

Արշակը շեշտ նայեց Վարդին, սպասելով նրա պատասխանին։

Բայց որովհետև Վարդը չկարողացավ իսկույն պատասխանել, Արշակը ելավ տեղից։

— Պարզ է, իշխան։ Պարզ և հասկանալի,— ձայնը բարձրացրեց թագավորը։— Ուրեմն՝ նախ զրպարտեց նորան իմ առաջ, ապա ոճիր նյութեց, որ կնության առնի Գնելի այրո՞ւն...

Վարդն անշարժացավ։ Իսկ թագավորը ձայնն ավելի բարձրացրեց.

— Քսությամբ, դավով սպանել տվեց Գնելին՝ նրա կնոջը տիրանալո՞ւ համար։ Կալանե՛լ անմիջապես եղեռնագործին

և հատել գլուխը, որ հարազատիս արյան մեջ մեղապարտ բարձրացրեց ինձ։

Վարդի երեսը դողաց. նա երբեք թագավորին չէր տեսել այդպես զայրացած ու ահավոր. և ակամա խոնարհում արավ։

— Հրամանդ օրենք է, արքա,— ասաց մեքենաբար, խորհելով, թե հնարավոր չէ արդյոք մեղմել թագավորի ցասումը կամ բացատրել մի ինչ։

Բայց Արշակը, որ խոժոռ ու զննաբար նայում էր Վարդին, շեշտեց ավելի ուժգին.

— Գնա՛ և նորան հանձնիր անմիջապես Երազմակին։

Երազմակը արքայի դահիճն էր...

Վարդը, գունատված, քայլեր արավ դուրս գնալու, բայց դազիվ հասել էր դռանը, թագավորը ձայնեց.

— Սպասի՛ր, իշխան։

Վարդը ետ դարձավ. թագավորը մթնել էր ավելի։

— Ասա ինձ, իշխան,— սկսեց նա փոխված՝ սուր ձայնով։— Ինչպե՞ս էր նա հայտնվել այնտեղ։ Ես նորան չէի հրավիրել...

Վարդը լռեց։ Ասես՝ հրավիրել է ինքը... թագավորը չէր ներիր. նա չէր արտոնել... Ուստի՝ լավագույն էր լռել, ու լռում էր։ Իսկ թագավորը սևեռուն նայում էր իրեն։

— Սակայն ինչպե՞ս էր հանդգնել գալ։ Ասա՛, իշխան,— շարունակեց նա զայրույթը զսպած։— Գուցե ինքդ ես հրավիրել... Դու այնքան մտերիմ ես նորան... միշտ իշնանում է տանդ...

Թագավորի խոսքերի մեջ Վարդն զգաց դառը հեգնանք և շառագունեց։

— Եկել էր, արքա, թերևս հետաքրքիր լինելով...— խոսեց նա վերջապես, մի ոտից հենվելով մյուսի վրա։

— Սակայն ինչո՞ւ չներկայացավ ինձ, ինչպես կարգն է,— նայեց Արշակը իր կնքապահին սևեռուն մի հարցով։

Բայց Վարդը այս անգամ աչքերը խոնարհեց հատակին և չկարողացավ պատասխանել.

Թագավորը, որ շարունակում էր նայել նրան, երեսը շրջեց մեկեն.

— Կարո՞ղ ես գնալ...

Նրա գնալուց հետո սակայն թագավորը, կասկածելով ինչ-որ, հրամայեց՝ կանչել իսկույն Երազմակին, և երբ նա ներկայացավ իր ահեղ ոսկրապինդ մարմնով՝ կարգադրեց.

— Արքայազն Տիրիթը գտնվում է Վարդ իշխանի տանը։ Կալանի՛ր անմիջապես և հատիր գլուխը։

— Հրամանիդ ծառան, արքա,— և Երազմակը իր ահագին կոպիտ մարմնով, ցուլի իր վզով խոնարհվեց մինչև հատակի գորգը մի այնպիսի գոհունակ շարժումով, ասես համեղ պատառ էին շնորհել նրան։

Բայց անցավ մի քանի օր՝ ոչինչ... Տիրիթը չքացել էր, նրա հետ և Վարդ իշխանը։ Հինգ օր հետո միայն թագավորին լուր բերին, թե ձիավազ փախչող Տիրիթին սպանել են Բասենի անտառում։

— Ապացո՞ւյց,— կասկածեց թագավորը։

Հազարապետը պատասխանեց.

— Գլուխը Երազմակի մոտ է։

— Իսկ տմարդն Վա՞ղը։

— Նույնպես ընկել է նետահար...

Արշակը թեթևացած շունչ քաշեց...

* * *

— Եղեռնագործը պատժված է, Փառանձեմ,— ասաց Արշակը մյուս օրը նորատի այրու հարկաբաժինը մտնելով։— Այն վատ հոգին, որ նյութեց Գնելի սպանությունը՝ չկա այլևս։

— Տիրիթը ապիրա՞ռ,— տրորվեց Փառանձեմը, որ այսօր իսկ դայակից լսել էր Տիրիթի սպանությունը։

— Այո, նա, ապիրատն ինքը,— և թագավորը զննաբար նայեց Փառանձեմին և հարցրեց։— Կարծյոք նա՞ էր մարդ հղել Գնելի թաղման օրը, թե «մի տանջիր քեզ»... Այդպե՞ս է։

Փառանձեմը զարմացավ, որ թագավորը չի մոռացել այդ խոսքերը և ասաց ինչպես առաջ, թե չի կարող պնդել, սակայն մեկն իրոք ասել էր իրեն այդ խոսքերը։ Ինչ վերաբերում է Տիրիթին՝ ինքը նկատել էր, որ նա թեև բարեկամ էր ձևանում, բայց բարեհաճ չէր դեպի Գնելը։

— Այդպես,— գլուխը շարժեց Արշակը։— Իսկ օրեր առաջ

անարգը մեկի միջոցով իմ թույլտվությունն էր խնդրում՝ կնության առնել քեզ։ Դու այդ կցանկանա՞յիր, Փառանձեմ...

Փառանձեմն ասես սարսուռ զգաց ու կծկվեց։

— Այդ հարցումն անգամ վիրավորում է սիրտս, արքա,— առաջին անգամն էր, որ Փառանձեմը, գուցեև ակամա, համարձակ խոսեց թագավորի հետ— Լինե՞լ նորա կինը... Գնելից հետո՞... անե՞ծք և նզո՞վք,— շարունակեց նա արդեն հուզված և, հանկարծ, փղձկալով փարվեց թագավորի թևին, չգիտես երախտագիտությո՞ւն թե շնորհակալություն հայտնելու համար, որ ամուսնու վրեժն առնված է։

— Այսուհետ արտասվել մեղք է, Փառանձեմ,— և Արշակը մեղմաբար, ինչպես հանգստացնում են լացող երեխային, շոյեց Փառանձեմի փոքրիկ ճերմակ ձեռքը, որ հանգչում էր իր թևին։— Այժմ ոչ թե լաս պիտի, այլ ուրախանաս, որ ոճրապարտը չկա։ Ինքս ցավում եմ անչափ, որ եղեռնագործը արքայազն է և Արշակունի... Նա արատավորեց Արշակունի անունը, տոհմը, ինձ... ամենիս... Սակայն գոհանանք, որ ստացավ արարքին արժանի մահ... Կատարվածը համարենք անցած, Փառանձեմ։ Դու տակավին երիտասարդ ես, և կյանքը քեզ իրավունք չի տա սուգի մեջ մնալու։

Այս անգամ Փառանձեմը թողեց թագավորի թևքը, նստկանգնեց և զույգ ձեռքերով ծածկեց երեսը։

— Այդպես, Փառանձեմ, իմացիր, որ երիտասարդ ես,— կրկնեց Արշակը և, Փառանձեմին մոտենալով, շոյեց նրա ուսը, ապա գահավորակին նստեցնելով, ինքն ևս նստեց նրա կողքին։— Խորհիր, որ երկար կյանք կա առջևդ։ Իսկ վիշտը նման է ժանգի, որ մաշում է մարմինը և թունավորում հոգին։ Եվ հարկ չկա, որ ապրես փակված։ Ել երբեմն և դնա տիկինների մոտ, թագուհու մոտ։ Ինձ հայտնեցին, որ հրաժարվում ես հրավերներից։ Իզո՞ւր... միայնությունը ծանրացնում է վիշտը։

Փառանձեմը սևեռուն նայում էր մի կետի։

— Հուսամ՝ պիտի հետևես խորհրդիս։

Փառանձեմը լուռ էր։

— Ես կխնդրեմ Նանա իշխանուհուն, որ իր խնամքը չնվազեցնի քո հանդեպ. և դու լսիր նորան, զի նա խոհեմ և փորձ կին է։

— Այո, արքա։ Գորովագութ, ինչպես մայր։

— Ուրեմն եղիր հանգիստ, մանավանդ այստեղ է իշխան-հայրդ,— շարունակեց Արշակը։— Այդպես, Փառանձեմ. չմեր-ժես արքայի խորհուրդները,— և թագավորը կրկին շոյից Փառանձեմի ուսը, որպես հրաժեշտի նշան, և դուրս եկավ թիկնոցի քղանցքը բռնած։

Մենակ մնալով՝ Փառանձեմը նախ գոհունակության զգա-ցում ունեցավ, որ Գնելին սպանողը չկա, որ չարն ընկավ չար մահով... և դրա համար նա իրեն երախտապարտ էր զգում թագավորին։ Բայց դրա հետ նրան պաշարեց մի զարմանք. մի՞թե այդքան ստոր է եղել Տիրիթը... Ապա հիշեց, որ Կա-վաշում թե այլուր, երբ միասին էին լինում, Տիրիթն իրեն նայում էր օտարոտի նայվածքներով, միաժամանակ ուշադիր ու պատրաստակամ, կամենում էր զրուցել շարունակ, անել կատակներ և ուրախ պատումներ... Բայց մի՞թե այդ նայված-քի, ժպիտների ներքո թաքնված են եղել ցանկասիրություն և ոճրածին մտքեր... Փառանձեմի զարմանքն ավելանում էր մանավանդ, երբ հիշում էր Գնելի թաղման օրը լսած խոսքե-րը. «Մի տանջիր քեզ, կունենաս առավել լավ ամուսին»... Փառանձեմը հիշում էր, որ այդ օրը Տիրիթը կանգնած էր իր գլխավերև. բայց մի՞թե այդ խոսքերն ասողը Տիրիթն էր, թե մի ուրիշը՝ նրա թելադրությամբ...

Հիշելով այս ամենը՝ Փառանձեմը տանջվում էր ինչպես Գնելի թաղման օրը.— Ա՜խ, եթե ինքն զգար, կռահեր Տիրի-թի ցանկությունը՝ Գնելին երբեք չէր թողնի մնալ նրա հետ մի շենքում, թեկուզ մի վայրում... Ու երկար մտածելով այս մա-սին՝ նա եզրակացնում էր, թե ճիշտ է ուրեմն, որ Գնելի մահ-վան պատճառն ինքն է, իր գեղեցկությունը... Եվ այդ մտքից նրա սիրտը սեղմվում էր. թվում էր՝ արյունը կանգ է առնում երակներում։ Բայց այս ամենի հետ միասին հիշելով թագա-վորի այսօրվա հայտնությունը՝ գոհանում էր, որ մարդաս-պանը պատժված է։

Իսկ Արշակը, Փառանձեմի սենյակից հեռանալով, դարձ-յալ մտածում էր նրա գեղեցկության վրա. «Եթե վշտի մեջ տեսոք է այսքան, հապա երբ մոռացվի վիշտը՝ որքա՞ն կլի-նի առավել», կրկնում էր վաղուց ասած դարձվածքը և մտա-ծում նորից, որ Փառանձեմին չպետք է թողնել սուգի մեջ...

Ու Տիրիթի սպանությունից հետո թագավորն ավելի հաճախացրեց այցերը։ Լսելով այն ամենօրյա զեկույցները, որ տալիս էին հազարապետը տուրքերի ու գանձումների մասին, Հայր-Մարդպետը՝ արքունի կալվածների կամ պալատի մեջ ու նրա շուրջը կատարված դեպքերի մասին, Վասակ սպարապետը՝ սահմանների և զենքի վիճակի մասին և այլ երկրորդական զեկույցներ, Արշակը, փոխանակ պալատից դուրս գալու և զբոսանքի գնալու, ինչ անում էր սովորաբար,— այժմ շատ անգամ, երկու-երեք օրը մեկ, թիկնոցն ուսերին քայլերն ուղղում էր Փառանձեմի հարկաբաժին, երբեմն իր գալը նախապես չիմացնելով. ու եթե այդ պահին Փառանձեմի մոտ լինում էին պալատական տիկիններ, կամ՝ մեկը նրանցից,— դրանք անխոս վեր էին կենում, գլուխ իջեցնում և անխոս հեռանում։ Վայել չէր թագավորի այցի ժամանակ լինել ներկա... Բայց մի քանի անգամ ներկա էր եղել Անդոք իշխանն ինքը... Մտնելով ներս, Արշակը, Փառանձեմին ողջունելով, նստում էր նրա դիմաց և հետաքրքրվում նրա առողջությամբ, ապա խոսում նրա անցյալից, Բյուզանդիայում անցրած օրերից։

Փառանձեմը պատասխանում էր շտապելով, որ թագավորը, պետական գործերը թողած, զբաղվում է երեխով, կամենալով սփոփել իր վիշտը... Ամաչում էր, որ ինքն այդքան հոգս է պատճառում նրան և առհասարակ ամենքին՝ պալատական կանանց և Օլիմպիա թագուհուն։ Մտածելով այս՝ նա լցվում էր երախտագիտության զգացմունքներով, որը և արտահայտում էր երբեմն մեկ-երկու զուսպ բառով.

— Շնորհակալություն, արքա։

Զրուցելիս թագավորը երբեմնակի ուշով նայում էր Փառանձեմի դեմքին, կրծքին, կամ՝ ելնում էր տեղից և թիկնոցն ուսերին գնում-գալիս, ըստ սովորության երկար ոտքերը պինդ դնելով, ապա մեկեն կանգ առնելով, կրկին կոպերն իրար բերած, նայում էր երիտասարդ այրին, և ամեն անգամ մի նոր զարմանալի գեղեցիկ գիծ նկատում նրա դեմքին, շարժումների մեջ, անգամ նրա տխրամած աչքերի հայացքում։ Նայում էր և դարձյալ զարմանում նրա դեմքի համաչափ գծերով, կիրթ շարժումներով։ Նայում էր և միշտ զգում, որ Փառանձեմի գեղեցկությունը լրիվ չի բացվում վշտի հե-

տևանքով։ Եվ մի օր էլ մտածեց, թե արդյոք լա՞վ չէր լինի, նրա վիշտը մեղմելու համար, Փառանձեմին զբաղեցնել այլ բաներով... ու հետևյալ այցին Արշակը բերեց նրան մի ոսկե բազպան, որը ուներ երկու մատ լայնություն՝ վրան թռչուններ փորագրած։

Փառանձեմն, այդ տեսնելով, շառագունեց. բայց ինչպե՞ս կարելի էր մերժել թագավորի նվերը։ Ընդունեց ու դրեց կողքին՝ գահավորակի բարձին։ Որքա՜ն վայել էր սուգի մեջ ուրախանալ նվերով...

— Կապիր, Փառանձեմ, և ստուգիր՝ հարմա՞ր է արդյոք,— առաջարկեց Արշակը և, նկատելով նրա հապազումը, ինքն առավ բազպանը և կապեց Փառանձեմի գիրգ դաստակին։

Եվ Փառանձեմը չընդդիմացավ ամոթից, պատկառանքից.— ինչպե՞ս հակառակել արքայի ցանկության...

— Այսպես,— ասաց Արշակը, բազպանի փակը միացնելով։— Կցանկանայի, որ միշտ կրես, Փառանձեմ։

Փառանձեմը դարձյալ համակերպեց և բազպանը ոչ միայն հանելու, անգամ նրան շոշափելու շարժում իսկ չարեց։ Իսկ Արշակը, արածից գոհ, բռնեց Փառանձեմի բազպանով ձեռքը ու շոյեց այն մեկ-երկու անգամ։— Կրիր, Փառանձեմ...

Փառանձեմը, որքան էլ սուգի մեջ, իրեն շոյված զգաց թագավորի ուշադրությունից։

Եվ Արշակն այդ օրվանից Փառանձեմին սուգից հանելու խնդիրը դարձրեց հոգացողության առարկա. շարունակ մտածում էր, թե ի՞նչ կարելի է անել նրա վիշտը մոռացնելու համար... Մի օր էլ, երբ նա խորհում էր այդ մասին, հայտնեցին , թե արքայահոր սենեկապետը եկել է Կավաշից՝ Տիրան արքայի հանձնարարությամբ և ունկնդրություն է խնդրում։

— Հրավիրել։

Եկավ թավ քնչացքով և ծռված կողքով այն ծերունի սենեկապետը, որ շատ առաջ Վարդ իշխանին Կավաշում առաջնորդեց արքայահոր մոտ։ Տեսնելով հոր ծանոթ սենեկապետին և առնելով նրա ողջույնը՝ Արշակը հետաքրքրվեց.

— Ի՞նչ է ցանկանում արքահայրը։

— Արքայահոր ցանկությունը պարզ է, արքա։ Նորից ցանկանում է այն, ինչ անցյալ անգամ։

— Ա՞յն է։

— Որ հանգուցյալ արքայազն Գնելի դժբախտ այրիին ուղարկես Կավաշ։ Թագավորահայրը...

— Իսկ ինչպե՞ս է թագավորահայրը,— քնդմիջեց Արշակը։

— Վատթար, քան երբևէ։ Շարունակ կրկնում է, որ Գնելը զոհ եղավ խարդավանքի։ Սուգ է անում և նզովում այն օրը, երբ Գնելը գնաց Շահապիվան... և այժմ վշտացած է անցյալ անգամի մերժումով։ Սակայն հիմա վստահ է, որ իր ցանկությունը կկատարվի։ Այսպես հրամայեց ասել, արքա։

Նկատելով թագավորի հապաղումը՝ ծեր սենեկապետը շարունակեց.

— Թագավորահայրը ցանկանում է, արքա, անձամբ մխիթարել իր հարսին և մեռած Գնելի կարոտն առնել նրանից։

— Սակայն այնտեղ հազիվ թե կարելի լինի մեղմել նրա վիշտը,— խոսեց Արշակը մտասույզ աչքերը հոր սենեկապետի վրա դարձնելով։— Գալով իր ապրած վայրը և, մնալով մենակ, չե՞ս կարծում նրա վիշտը նորոգվի ավելի։ Իսկ այստեղ իշխանուհի տիկինները հանապազ այցում են նրան և հսկում նրա առողջությունը։

— Մի՞թե Փառանձեմ իշխանուհին հիվանդ է,— զարմացավ սենեկապետը։

— Այո,— վրա բերավ Արշակը տխրաշեշտ, և գոհ եղավ, որ ինքնաբեր եկավ հիվանդության մասին։

— Հիվա՜նդ,— կրկնեց ծերունին։— Այդ պարագային հարկավ անկարելի է։ Հարկա՜վ։ Հիվանդությանը իրազեկ չէր թագավորահայրը։ Այդպես կարելի չէ, հարկավ։

Ծերունի սենեկապետը խոնարհում արավ՝ ձեռքը սրտին դնելով և դուրս եկավ ետ-ետ գնալով։

Թագավորահոր սենեկապետի գնալուց հետո Արշակը գնաց Փառանձեմի մոտ։

— Կկամենայի՞ր, Փառանձեմ, գնալ Կավաշ,— հարցրեց նա սովորական բարևախոսքից հետո։

Փառանձեմը իր խոշոր աչքերի ուշիմ հայացքով փութանցիկ նայեց թագավորին և գլուխն իջեցրեց անմիջապես. նա ասես հանկարծակիի եկավ. թագավորի հարցումն անակնկալ էր իր համար ու մտածեց, թե գուցե թագավորը ձանձրացել է և... կամենում է ազատվել իր ներկայությունից...

— Եթե արքայի կամքն է. կարող եմ մեկնել հարկավ...

— Ոչ, Փառանձեմ, ոչ,— ընդմիջեց Արշակը։— Ես միայն խորհում եմ, թե գուցե ունենաս նման փափագ։

— Ոչ, արքա։ Գնալ նորից այն վայրերը և հիշել, որ... ծա՛նր է, արքա։ Ընդհակառակը, կցանկանայի, արքա, շուտով գնալ մորս, քույրերիս ու եղբայրներիս մոտ։

— Բյուզանդիո՞ն...

Ինչպես Կավաշը Փառանձեմի համար, այնպես էլ այս Բյուզանդիոնը անակնկալ եղավ Արշակի համար, և սա մտածումների մեջ ընկավ։

— Բյուզանդիո՞ն,— կրկնեց Արշակը, նայելով Փառանձեմի խոնարհած աչքերին, որոնց երկար թարթիչները դողում էին այդ պահին։— Ինչո՞ւ սակայն, մի՞թե քեզ տհաճ է այստեղ կամ... գուցե անուշադիր են,— հարցրեց թագավորը հետաքրքիր նայելով գլխահակ Փառանձեմին։

— Բնավ, արքա։ Հակառակը։ Այստեղ անչափ ուշադիր են և սիրում են ինձ թե Օլիմպիա թագուհին, թե տիկինները իշխանազուն։ Սակայն կփափագեի լինել հարազատներիս մոտ...

— Բյուզանդիոն մեկնել այս ձմռա՞նը, երբ ծովային ու լեռնային ճանապարհները փակ են։ Իշխան Անդոքը հազիվ հաջողել է գալ, մեծամեծ վտանգներ հաղթահարելով։ Իսկ դու ինչպե՞ս...

Փառանձեմը գլուխն իջեցրեց։

Արշակը մոտեցավ և զգուշաբար բարձրացրեց նրա ճակատը։

— Մի կարծիր, Փառանձեմ, թե արգելում եմ քեզ այդ ճանապարհորդությունը,— ասաց նա։— Բնա՛վ։ Կուզեի մնաս առայժմ, մինչև անցնեն ցրտերը խստաշունչ։

Ընդունված չէր առարկել թագավորի ցանկության, ուստի և Փառանձեմը նորից իջեցրեց գլուխը։

Երբ Արշակը դուրս եկավ Փառանձեմի հարկաբաժնից և գնաց միջանցքով, նրան հետևեց նրա դինակիրը, որ միշտ կանգնում էր այն դռան առաջ, ուր լինում էր թագավորը։ Քայլում էր Արշակը դեպի գահական տաճարը և մտածում, թե ինչո՞ւ է արդյոք Փառանձեմը ցանկանում մեկնել Բյուզանդիոն։ Մի՞թե նեղվում է պալատում կամ ձանձրանում շրջապատից, թե հայրն է դրդում գնալու, չկամենալով հյուր մնալ

երկար... Ինչ էլ լիներ սակայն՝ Արշակին թվում էր, որ եթե Փառանձեմը մեկնի ոչ թե միայն Բյուզանդիոն, այլ որևէ վայր առհասարակ... Եթե անգամ դուրս գա քաղաքից, պալատը կամայանա, նա կզրկվի մի...

Արշակը դժվարանում էր ասել ինչից, բայց զգում էր, որ պալատից կպակասի մի... հաճելի բան։

Անկախ դրանից՝ նա կարծում էր, թե այժմ, քանի դեռ ձմեռ է, Փառանձեմը չի կարող մեկնել, ուստի պետք է ընդդիմանալ...

«Իսկ եթե Անդոք իշխանը ցանկանա՞,— մտածեց Արշակը։— Եթե ցանկանա՝ այնժամ կխորհենք անհրաժեշտը»...

Նույն օրը, երբ պալատի բոլոր լույսերը վառված էին և խաղաղություն էր ամեն կողմ, Արշակը կանչեց իշխան Անդոքին և ասաց.

— Իշխան, ես կարի անհրաժեշտ խնդրանք ունեմ առ քեզ և հուսամ չես մերժի։

— Պատրաստ եմ կատարելու, արքա, եթե միայն իմ ուժերից վեր չէ և եթե ի վիճակի լինեմ,— ասաց Անդոքը ակներև զգուշությամբ։

— Համեստությունը պատիվ է բերում քեզ, իշխան։ Բայց ես խորհում եմ, որ իմ ավագներից և ոչ մեկը ի վիճակի չէ կատարել խնդրանքս այնպես, ինչպես դու՝ իշխանդ Սյունյաց։ Քո բազմափորձությունը և խելամտությունը առհավատչյա են։

Անդոքի դեմքը պայծառացավ. նա ակներև շոյված զգաց իրեն և հարցրեց.

— Իսկ ի՞նչ է առաջարկում իմ տեր արքան։

— Մի առաքելություն դեպի Վրաստան,— և Արշակը ուշով նայեց Անդոքի խոշոր ծիրեերով ծածկված դեմքին, ասես ստուգելու համար իր խոսքերի տպավորությունը, և որովհետև իշխանի դեմքը չունեցավ ո՛չ զարմանքի, ո՛չ դժգոհության որևէ նշան, նա շարունակեց.— Նավասարդի առնին վրաց արքունիքը հղել էր ինձ ընծաներ և ողջույններ, այժմ կամենում եմ փոխադարձել։

— Բարի է, արքա,— ասաց Անդոքը ճերմակող, խոշոր գլուխը իջեցնելով, որ նշան էր, թե ընդունում է թագավորի հանձնարարությունը։

Եվ մյուս օրն իրոք նա ընծաներով և թիկնապահների մի հեծյալ խմբով ճանապարհ ընկավ դեպի Վրաստան։

«Այժմ Փառանձեմը չի շտապի մեկնելու... Նա կսպասի մինչև հոր վերադարձը»,— մտածեց Արշակը գոհունակ շրջելով իր ընդունասրահում։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Ընթերցողը վաղուց երևի զգում է, որ վեպի այս միջանկյալը երկարում է... Բայց դա հեզինակի մեղքը չէ, դեպքերն այնքան կարևոր են, որ հնարավոր չէ անտեսել կամ պատմել ավելի հակիրճ, մանավանդ որ դժգոհ նախարարներն իրենք շարունակ ակնարկում են անցյալի այդ իսկ դեպքերը։

Մի փոքր համբերություն և հեզինակը կավարտի այս երկար միջանկյալը։

Շարունակենք ուրեմն որտեղից պետք է։

Անդոք իշխանի մեկնումն իհարկե աննկատ չմնաց։ Ընդհակառակը, առիթ տվեց բազմատեսակ զրույցների։ Ավագները, պալատականները, մանավանդ պալատական կանայք, իրար հանդիպելով, հարցնում էին միմյանց.

«Ինչո՞ւ է մեկնել... Ի՞նչ առաքելությամբ»։

— Ընծաներ է տարել վրաց թագավորին։

— Ընծանե՞ր...

— Բայց չէ՞ նա եկել էր դստերը Բյուզանդիա տանելու։ Ինչո՞ւ արքան նրա՞ն է հանձնարարել այդ առաքելությունը և ոչ մեր ավագներից մեկին։

— Հավանաբար թագավորը նրան ևս կամենում է դարձնել ավագ պալատական։

— Սա՞ս...— գլխով էին անում խոսակիցները և լռում։

Բացի հազարապետ Դավիթ Գնունուց, որին թագավորը հայտնել էր այդ մասին, մյուս բոլոր ավագները դժգոհ էին, որ վրաց թագավորին ընծաներ տարել է Անդոք իշխանը։ ուրեմն և նա ինքը կստանա վրաց թագավորի մեծագին նվերները... Ավագներից Սմբատ Բագրատունին իրեն էր հարմար տեսնում այդ առաքելության համար՝ թե՛ որպես թագադիր և թե՛ որպես մի նախարար, որ կալվածներով սահմանակից էր

Վրաստանին և գիտեր վրաց լեզուն։ Բայց ամենից ավելի դժգոհ էր Հայր-Մարդպետը. նա կարծում էր, որ ինքը ի պաշտոնե պետք է իմանար, թե ի՞նչ է անցնում-դառնում պալատում. բայց նա, ըստ սովորության, իր դժգոհությունը չէր հայտնում որևէ մեկին, այլ միայն ասում էր ինքն իր մեջ. «Համենայն դեպս պալատի կառավարիչը պիտի իմանար այդ... Ինչո՞ւ թագավորը ծածուկ է պահել ինձնից։ Պետք է խորամուխ լինել»... Նրա լեզվով «խորամուխ լինել» նշանակում էր՝ հետամուտ լինել և իմանալ գաղտնիքը։

— Տեր Հավնունի, անշուշտ, իրազեկ ես Անդոք իշխանի առաքելության,— հարցրեց նա նույն օրը արքունի որսապետին։

— Այո, տեր Մարդպետ, լսած եմ,— ասաց հսկան իրեն հատուկ բարձր, բայց ծորուն ձայնով։

Հայր-Մարդպետը շուրջը նայեց։

— Նախ զրուցենք կամաց, տեր Հավնունի,— ձայնը իջեցրեց Մարդպետը։— Ինչո՞վ նա արժանացավ այդ առաքելության... Մի՞թե ինքդ ավելի արժանի չէիր։

— Ես թագավորի գործերին չեմ միջամտում, տեր Մարդպետ,— ասաց պարզախոս Հավնունին։— Արքան երևի հարմար է տեսել այդպես։

— Գուցե հայտնի է քեզ, թե ինչո՞ւ նորան։

— Ասել չեմ կարող, Հայր-Մարդպետ։ Իսկ ինքդ հարմար չե՞ս տեսնում միթե։

— Կամաց, տեր Հավնունի. ես ուզեցի միայն իմանալ,— և Հայր-Մարդպետը լռեց մի փոքր շուրթերը լիզելով, ապա,— իսկ ի՞նչ է պատճառը, որ թագավորնիս հիմա, չասեմ որսով, այլ իր սիրած Ավանով քիչ է զբաղվում։

— Օ՜հ, մարդպետաց հայր։ Դեպքերը թողի՞ն միթե, որ զբաղվի։

— Դեպքերը, այո, խանգարեցին, անշուշտ,— համաձայնեց Հայր-Մարդպետը և նորից հարցրեց.— իսկ ինչո՞ւ այդ Անդոք իշխանը իր դստեր չի տանում Բյուզանդիա։ Կարծյոք եկած էր դրա համար, այնպես չէ՞։

— Եվ այդ մի՞թե անհանգստացնում է քեզ, Հայր-Մարդպետ,— զարմացավ Հավնունին պարզամտությամբ։

— Ոչ, ոչ, պարզապես հետաքրքիր եմ,— ասաց Մարդպե-

տը, մտածելով, որ թագավորը երևի վստահություն չունի դեպ իր անձը, ուստի ինչ-ինչ բաներ ծածուկ է պահում իրենից։

Իսկ Արշակը սովորաբար հարկ չէր տեսնում իր ամեն մի քայլը բացատրելու։

Պալատը, ինչպես միշտ, ապրում էր լի կյանքով, բայց թագավորն ինքը վերջերս դարձել էր զարմանալի ինքնամփոփ. առաջվա պես չէր հետաքրքրվում ամեն ինչով, և դա զարմացնում էր պալատականներին։ Սովորականի պես լսում էր զեկույցներ երկրի ներքին և արտաքին կացության մասին, անում էր անտարբեր կարգադրություններ, նժույգ նստած գնում էր զբոսանքի և կամ, պալատում մնալով, շաբաթը մի երկու անգամ այցում էր Փառանձեմին... Բայց Ավա՞նը՝ մոռացել էր կարծես. առաջ օր չէր անցնի, որ նա չխոսեր այդ մասին կամ չմտահոգվեր նրանով... Դա զարմացնում էր մանավանդ այն պատճառով, որ ամենքին հայտնի էր, թե մի ամիս առաջ պատրաստվում էր գնալ Ավան, իսկ հիմա՝ ոչ մի խոսք... Այդ հասկանալի էր այն օրերին, երբ պետք էր պարզել Գնելի սպանության հանգամանքները, գտնել մարդասպանին, որ ոճիրը գործել էր իր անունով... Մարդասպանը գտնվեց և պատժվեց... Իսկ ա՞յժմ։

Եվ ահա մի օր, երբ զբոսանքից վերադառնալով ըստ սովորության հարցրեց իրեն դիմավորող հազարապետին՝ «ի՞նչ նոր»— հազարապետը պատասխանեց.

— Եկել է նոր քաղաքի շահապը, արքա, և սպասում է տեսությանդ։

— Վարազ իշխա՞նը,— բացականչեց Արշակը, և նրան ասես շանթեց մի միտք. ինչպե՞ս է մոռացել Ավանը, իր խոստումները Վարազ իշխանին. մինչև օրս չի ուղարկել նրան խոստացած գործավորները։ Ի՞նչն էր այս ամենի պատճառը... Նա հիշեց նախարարների մերժողական գրությունները, վերջին օրերի մտահոգիչ հանգամանքները... Տիրիթին և... Իսկ այժմ ի՞նչն է մոռացնել տալիս... Փառանձե՞մը... Նրա վի՞ճակը...

Այս ամենի մասին մտածելով՝ մոռացել է իր Ավանը՝ իր նվիրական գործը... Իսկապես մինչ այդ դեպքերը ոչ մի բան Արշակին այնպես չէր զբաղեցնում իր թագավորության մեջ,

ինչպես զորքը և իր հիմնած Ավանը, առանձնապես Ավանը։ Նրան միշտ անհանգստացնում էր այն միտքը, թե սկսածը հանկարծ մնար կիսատ կամ անավարտ՝ դա կլիներ խայտառակություն իր անվան, իր գահի, իր իշխանության համար։ Այդ էր պատճառը, անշուշտ, որ Ավանին վերաբերող մեն մի լուր հետաքրքրում էր նրան և անհանգստացնում այն աստիճան, որ ցանկանում էր իմանալ անմիջապես։ Այդպես էլ այժմ. երբ իմացավ Վարազ իշխանի ժամանումը՝ անհանգստացավ։ Թեև իրիկնաժամ էր և ինքը հոգնած, բայց, պալատ մտնելուն պես, հրամայեց, որ Ավանի կառավարչին բերեն իր մոտ։

— Հուսամ՝ գալուստդ բարի է, իշխան,— սկսեց Արշակը, երբ Վարազ իշխանը խոնարհումով մտավ նրա առանձնարանը, ուր գորգապատ հատակին կային եռոտանի կարմիր մի սեղան և երեք բազկավոր աթոռ՝ ձկան ատամներով ընդելուզված։— Ավանի կառուցումը անշուշտ կանգ է առել ցրտերի հետևանքով, այնպե՞ս է։

— Ոչ, արքա. թեև ցուրտ, բայց աշխատանքը շարունակվում է,— ասաց Գնունին, թագավորի հրավերով նստելով բազկաթոռներից մեկին։— Սակայն կարելի էր անել ավելին, եթե նախարարաց գործավորները գային. գործավորներ, որ դու խոստացար, արքա։

Արշակը թեև գիտեր դրանց չգնալու պատճառը, բայց իր արժանապատվությունը պահած լինելու համար, որ Վարազը չկարծի, թե նախարարներն անտեսում են իր խոսքը, զարմացած ձևացավ. մի՞թե չեն եկել... Գուցե կարծել են մուտքցող ձմռան պատճառով կառուցում ու աշխատանք չի կատարվելու։

— Թվում է, արքա, ձմեռը չպիտի խանգարեր, եթե ցանկային...

— Ես այնուամենայնիվ հակամետ եմ կարծելու, իշխան, որ գարնան նոքա կուղարկեն խոստացած մարդերը,— ասաց Արշակը և մտածեց. «Մինչ այդ ես կստիպեմ նոցա»...

— Ուրախ կլինեմ, արքա, եթե...

— Դու կասկածո՞ւմ ես, իշխան։

— Կասկածս հիմք ունի, արքա,— խոսեց Գնունին զուսպ, ինչ-որ մտքեր թաքցնելո՞վ, թե չկամենալով արտահայտել։

Արշակը նկատեց այդ։

— Զրուցիր լիաբերան, իշխան։ Կասկածիդ հիմքը։

— Այն, ինչ լսել եմ, արքա։

— Ծղիր, իշխան, ավելի պարզ։

Ու Վարազը հայտնեց, ինչ հարմար չէր համարում հայտնել. այն, որ «ականջալուր է եղած», թե նախարարները ոչ միայն չեն ցանկանում կատարել իրենց խոստումը՝ գործավորներ ուղարկելու, այլև լուրեր են շրջում, թե նոքա այնպես են խորհում, որ իրենք չէին ցանկանա «արքայի իշխանությունը ամրացնել իրենց գլխին»։

— Այդպե՞ս,— և Արշակը, տեղից ելնելով, սկսեց քայլել։ Ուրեմն՝ չէին ցանկանա... նշանակում է՝ չեն կամենում հնազանդել... Արշակը մտածում էր, որ նրանց գրությունից իսկ ակներև էր այդ։ Նրանց հակառակությունը, պարզ է արդեն, կապ չունի Գնելի հետ... Իսկ ինքը իզուր կարծում էր...

Մի փոքր քայլելուց հետո Արշակը նորից գրավեց իր տեղը և իշխան Վարազին հրավիրեց նույնպես նստել, որովհետև նա, թագավորի ելնելուն պես, ինքն ևս ոտքի էր կանգնել՝ պատշաճից կարգը պահպանելու համար։

— Ես, իշխան, կխորհեմ անհրաժեշտը,— խոսեց Արշակը հանգիստ, բայց ձայնի մեջ մի զուսպ բարկություն։— Ասա միայն որքա՞ն տուն է կառուցված։

Վարազը, մատները ծալելով, թվեց կատարված աշխատանքները. պարզվեց, որ կառուցված են հարյուրավոր տներ՝ գործավորների համար, պահեստներ՝ մթերքների համար, բացի մեծ իջևանատունը, աղբյուրները։ Վարազը հիշեց և այն, թե որքան գետին են հարթել, որքան քար ու եղեգ են կրել և որքան հիմեր են փորել՝ գարնանը նոր տներ շինելու համար։ Այդ բոլորից հետո նա ավելացրեց, որ շինարարական այդ աշխատանքները վարպետների հետ կատարում էն խաշար տրված արքունի շինականները և մերձակա գյուղերից եկած մարդիկ միայն. իսկ եթե գային նախարարների խոստացած գործավորները՝ կանեին ավելի հարկավ։

Արշակը լսում էր գլուխը շարժելով, լսում էր և մտածում նախարարների մերժողական գրության վրա. մտածում էր, թե ինչպե՞ս պատժի այդ հանդուգն մարդկանց... Ափսո՞ս, դեպքերը խանգարեցին, որ ինքը հենց այն ժամանակ, նրանց

գրությունն ստանալուց հետո, պատժիր այդ պարտազանց-ներին... Մինչ թագավորը խորհում էր նրանց տալիք պատժի վրա՝ Վարազը շարունակում էր պատմել եկեղեցու և պալատի շինության մասին, որոնց հիմքը նոր միայն փորել են, բայց որոնք պահանջում են թե՛ մեծ թվով վարպետներ և թե՛ հմուտ գործավորներ...

Երբ Վարազը վերջացրեց՝ Արշակը ձեռքը խփեց նրա ծունկան.

— Շարունակիր, իշխան, նույն եռանդով,— ասաց։— Ես կանեմ ամենը, որ գարնանը դու Ավանում ունենաս բազում գործավորներ։ Գնա վստահ։ Խոսքս քեզ քաջալեր։

Վարազի հետ խոսելով և հանգստացնող խոսքեր ասելով նրան՝ Արշակը բռնկեց ներքուստ նախարարների վրա, որ անպատկառորեն խաբեցին իրեն, խոստանալով ու մերժելով... և ինքն իզուր լսեց Վասակին...

«Բայց ինչպե՞ս պատժեիր, երբ ժամանակ չեղավ, երբ կատարվեց այս ոճիրը»,— ասաց ներքին մի ձայն։

«Սակայն ես կպատուհասեմ նոցա»,— ասաց Արշակը մտքում։ Իսկ երբ Ավանի կառավարիչը հատուկ խոնարհումներով դուրս եկավ, Արշակը նորից ելավ և նորից սկսեց լայն քայլեր անել սրահում։ Նախարարների վարմունքը այժմ էլ վրդովում էր նրան այնպես, ինչպես նրանց գրությունն ստացած օրը։ Բավական չէ հրաժարվում են իրենց խոստումից, բավական չէ վատ օրինակ են տալիս մյուս նախարարներին, այլև հանդգնում են ասել, թե չէին կամենա արքայի իշխանությունը ամրացնել իրենց գլխին... Մտածելով՝ Արշակը անհավանական չէր գտնում մի այդպիսի տրամադրություն. չէ՞ որ նրանք հրաժարվում են գործավորներ տալուց։ Դա ևս նույն նպատակն ունի անկասկած։

«Բայց Ավանը կառուցվում է և պիտի կառուցվի»,— ասաց Արշակը մտքում։ Այո, ինքը նախ կհանդիմանի գրության հեղինակ նախարարներին և կպահանջի, որ կատարեն իրենց խոստումը։ Եթե հրաժարվեն՝ կդիմի խստագույն միջոցների և կհնազանդեցնի, ինչպես հարկն է... Ուայն ժամանակ կզղջա՛ն...

Բայց ինչպե՞ս պատժի, ինչպե՞ս, որ իրոք զղջան իրենց պարտազանցությունը... Դեռ նախարարների գրավոր մերժումն ստանալու օրից Արշակին տանջում էր անհնազանդ-

ներին պատժելու միտքը։— Ինչպե՞ս անել, որ խորապես զգեղչան իրոք և գան ծնրադիր ներումն խնդրելու... Հարձակվե՞լ ու գրավել նոցա բերդերը, թե նորից ամոթահար անել, որ անազնիվ եղան... թե՞ զորքով պաշարել նոցա ոստանները... Գուցե ավագներից մի քանիսին՝ հազարապետ Գնունուն և սպարապետին կրկին հրավիրի և միասին խորհեն, թե ինչպես վարվեն...

Բայց հիշեց, որ թե՛ սպարապետը և թե՛ հազարապետը դեմ են խստությանց... Մինչդեռ այս ամենից հետո միայն մի միջոց էր մնում՝ խստություն, միա՛յն խստություն...

— Եվ ես կլինեմ խիստ, անչափ խիստ, որ հավիտյան չմոռանան, թե ինչ է նշանակում դրժել արքային տրված խոսքը...

Նախարարների վարմունքի մասին մտածելիս թե խոսելիս՝ Արշակը զայրանում էր միշտ. բայց անելով այս որոշումը՝ նրա տրամադրությունը բարձրացավ. այո, ինքը կընկրճի համառ նախարարներին և ամեն ինչ կընթանա հաջողակ...

Գալով այս լավատես եզրակացության՝ նա հիշեց, որ երկու օր է չի եղել Փառանձեմի մոտ. այժմ կարելի է այցելել նրան, հետո կխորհի, թե ինչպես վարվել պարտազանցների հետ։ Պետք է այցել Փառանձեմին, որ չկարծի, թե իշխանհոր մեկնելուց հետո ինքը դարձել է անուշադիր։

Ու փոքր անց իսկապես գնաց, ըստ սովորության թիկնոցն ուսերին առնելով։ Թիկնապահ Եզնիկը, որ այժմ կնքապահի պաշտոն էր կատարում Վարդից հետո, ուղեկցեց նրան հեռվից մինչև Փառանձեմի հարկաբաժինը ու մնաց, ինչպես միշտ, միջանցքում կանգնած։ Փառանձեմի սրահը լուսավորված էր երկու եռաստեղ մոմակալներով, որոնք բնկբեկուն լույսեր էին սփռում հատակի գորգին, բազմոցներին։ Ամեն անգամ Փառանձեմին այցելիս Արշակը մտածում էր ի՞նչ խոսի հետը, իսկ այս անգամ նրան թվաց, թե չունի ասելիք. կրկնել սովորական խոսքերը մեկնելու և եղեռնագործի մասին՝ ավելորդ էր. այդ էր պատճառը, որ ներս մտնելով, սովորական բարևախոսքից հետո, հարցրեց.

— Գիտե՞ս, Փառանձեմ, որ ես կառուցում եմ մի նոր, մեծ Ավան։

— Այո, արքա... Կավաշում ամենքը զրուցում էին այդ մասին։

— Եվ ի՞նչ կարծիք,— Արշակը հետաքրքիր նայեց Փառանձեմին։

— Այն, որ համարում են դժվար իրագործելի։

— Դժվար իրագործելի՞... Ինչո՞ւ, և ի՞նչ նկատ ունեին։

Փառանձեմը վարանեց կարծես պատասխանել այդ հարցումին, և Արշակը շտիպեց. Նրա փոխարեն պատասխանեց ինքը.

— Ոչ, Փառանձեմ, իրագործելի է և արդեն իսկ իրագործվում է։ Դա կլինի ոչ միայն Ավան, այլև բերդ ու պատվար մեր աշխարհի համար։ Այո...— Դավիթ Գնունուց ու Վասակից հետո Արշակը իր գաղտնիքը հայտնում էր Փառանձեմին։— Իրագործելի՛ է... Բերդատեր Նախարարները չկամեցան զիջանել իրենց բերդերը, և ես ահա կշինեմ իմ բերդը, ամենքի բերդը՝ մեր երկրի պաշտպանության համար։ Անշուշտ, դա հաճելի չէ նախարարաց, գուցեև այլոց, բայց, հասամ, ինքդ ուրախ պիտի լինես, Փառանձեմ։

Այս անգամ Փառանձեմը չկարողացավ անպատասխան թողնել թագավորին։

— Անտարակույս, արքա. յուրաքանչյուր ոք պետք է ուրախ լինի, որ մեր աշխարհը դառնա զորավոր ու ապահով, որպեսզի ո՛չ պարսիկը իշխեր գալ մեզ վրա, ո՛չ բյուզանդացին։

Փառանձեմի խոսքը, որ ասաց նա համեստաբար, բայց սրտագին շեշտով, հաճելի եղավ Արշակին։ Այդպիսի համակիր խոսք նրան թվաց տակավին չէր լսած մեկից, ուստի և զգացված նայեց Փառանձեմի աղեղնաձև հոնքերով հովանավորված խոշոր խաժ աչքերին և ասաց.

— Այդպես, Փառանձեմ, խոսքերդ ճշմարիտ են։ Անենք պիտի այնպես, որպեսզի ոչ մեկը չհամարձակվի գալ մեզ վրա։ Ոչ մեկը։ Նոր Ավանը պիտի դառնա ամրակուռ բերդ՝ ոչ միայն օտար թշնամյաց դեմ, այլև մեր շարամիտ նախարարաց, որ ցայգ ու ցերեկ խորհում են միայն իրենց որկորի մասին և չեն կամենում զորավիգ լինել երկրին հայրենի...

Փառանձեմը զարմացած նայեց թագավորին և մտածեց, թե ինչո՞ւ է նա այդ ամենը պատմում իրեն... մինչ այդ նրան

թվացել էր, թե թագավորները շատ փակ, անմատչելի և ծածկամիտ են լինում, գաղտնիքներ չեն հայտնում... Այդպես էին խոսում հատկապես Արշակ թագավորի մասին... Բայց ահա նա ասում է իրեն ամեն ինչ...

Խոսելով՝ Արշակը պատմեց Փառանձեմին, թե որքա՜ն կարևոր է այդ նոր քաղաքի և բերդի կառուցումը...

— Ես կամեցա, որ դու իմանաս մեր աշխարհի վիճակը, նրա կարիքը։ Արդ ուրախ եմ, որ իմ համառոտ խոսքից ունակ եղար ինձ ըմբռնելու... Մեր նախարարները սակայն չեն ըմբռնում, թե ինչ է պակասում մեզ, ի՜նչ պիտի անենք մեր աշխարհը ապահովելու...

Փառանձեմը զարմացած էր, այո, որ թագավորն այդպես ազատ, առանց ձևականության խոսում է իր հետ, խոսում է թշնամիների մասին... Միաժամանակ նրան թվում էր, թե հավանաբար Ավանից ավելի սիրելի բան չկա թագավորի համար... Այդ մասին խոսելիս՝ նա փոխվում էր և հափշտակվում։

— Երբ ավարտի, Փառանձեմ, տանեմ պիտի քեզ նոր Ավանը տեսնելու,— շարունակեց Արշակը։— Ես այնտեղ կառուցեմ պիտի և եկեղեցի, և դղյակ արքունի՝ ամառս այնտեղ անցնելու։ Իսկ քո խոսքը համակիր՝ ուժ և խրախույս է ինձ։ Օլիմպիա թագուհին երբեք չի խոսել ինձ այդպես... Նա հակառակ է անգամ, որ ես հոգսի մեջ եմ մտել իզուր։ Իսկ դու հասկացար ինձ, Փառանձեմ, դու ըմբռնեցիր ինձ, և դա ոգի է տալիս ինձ...

Այս խոսքերի հետ Արշակն այնպես ոգևորվեց իրոք, որ ելավ բռնեց Փառանձեմի թևը և անսպասելի համբուրեց նրա մազերը, ինչպես հայրը կհամբուրի զավակի գլուխը։ Բայց հանկարծ... Փառանձեմը վեր թռավ ու ետ-ետ գնաց։

— Արքա,— ասաց նա գրեթե ակամա, հանկարծակիի եկած ու վախվորած։

— Թագուհի՜ս...

— Թագուհի՜ս,— զարմացած, մեքենաբար շշնջաց Փառանձեմը։ Թագավորը նրան թվաց հարբած։— Սթափիր, արքա։ Ես թագուհի չեմ, այլ թշվառ մի աղջիկ։

— Ոչ, Փառանձեմ։ Այսօրվանից դու ես թագուհին իմ սրտի...

Փառանձեմը լայնաբաց աչքերով նայեց թագավորին և, օտարոտի մի հուր նկատելով նրա հայացքում, նորից շշնջաց.

— Մի՛, մի՛ մեղանչիր, արքա, Օլիմպիա թագուհու դեմ... Աղաչում եմ, արքա...— Նա ուզում էր ասել «թող ինձ մենակ», բայց դա համարեց անպատշաճ ու նորից ետ-ետ գնաց։

— Անհյուրընկալ ես, Փառանձեմ։

Փառանձեմը գլուխը կախեց. նա կամենում էր ասել, որ թագավորի արքայական պատիվը և իր վիշտը թույլ չեն տալիս այլ կերպ լինելու, բայց դարձյալ չկարողացավ ասել այն, ինչ մտածում էր և միայն ավելացրեց.

— Ես քո հյուրն եմ, արքա, ուստի և խնդրում եմ...

— Հրամայիր, Փառանձեմ։ Քո մեն մի հրամանդ պատրաստ եմ կատարելու։

Փառանձեմը շառագունած նայեց Արշակին և ասաց վարանոտ.

— Կրկին կխնդրեի, արքա, թույլատրիր ինձ մեկնել հարազատներիս մոտ...

— Դարձյա՞լ մեկնել,— Արշակը տարուբերեց գլուխը։— Ամեն խնդրանք, Փառանձեմ, պատրաստ եմ կատարելու սիրահոժար, բայց ոչ այդ... Պիտի սպասես իշխան Անդոքի վերադարձին,— և Արշակը բարեժպիտ հայացքը սևեռեց Փառանձեմի երեսին։— Դու կմնաս, Փառանձեմ, իմ պալատում, որպես նրա զարդը, որպես նրա ոգին, որպես նրա թագուհին։

— Արքա՞,— ասաց Փառանձեմը սրտաբեկ և զույգ ձեռքերով ծածկեց երեսը։

Լռություն իջավ, որի մեջ Արշակն ասես լսում էր իր սրտի զարկերը։ Նա մի վայրկյան նայեց շուրջը, դռանը և, ձայնն ավելի իջեցնելով, շշնջաց.

— Արքաները նույնպես մարդ են, Փառանձեմ, և գիտեն սիրել ու...

— Բայց դու, արքա...— Փառանձեմի ձայնը հնչեց կերկեր ու ընդհատ,— ունես թագուհի, մի առաքինի հոգի, որ սիրում է քեզ անսահման...

— Սակայն առավել չէ, քան դու, Փառանձեմ...

Լսվեց դռան բացվելու ձայն, և թագավորը լռեց։

Կից սենյակում ոտնաձայն լսվեց. երևաց մի ստվեր և չքացավ ինկույնը։

Երբ թագավորը դուրս եկավ, նրա սուր հայացքը միջանցքում նկատեց միայն սպասավորներ ու նաժիշտներ. բայց չնկատեց, որ բոլորի դեմքին զարմանք կար, թե ինչո՞ւ թագավորն այդքան երկար մնաց Փառանձեմի մոտ։ Նույն զարմանքը կար և թիկնապահ Եզնիկի դեմքին։

* * *

Օլիմպիա թագուհին կանոնավոր, օրընդմեջ, այցում էր Փառանձեմին և սիրով զրուցում հետը, ջանալով ամեն կերպ մեղմել նրա վիշտը։ Մյուս կողմից Փառանձեմը նրան գրավում էր և այն պատճառով, որ լավ գիտեր հունարեն։ Թագուհու կարծիքով՝ ով լավ գիտեր հունարեն, ուրեմն կիրթ մարդ էր. ուստի, թվում էր, թե Փառանձեմի հետ իր մայրենի լեզվով խոսելով՝ նա առնում էր հայրենիքի կարոտը, չնայած որ թե՛ Արշակի և թե՛ պալատական մի քանի տիկինների հետ խոսում էր հունարեն։ Այնպես որ Փառանձեմը նրա համար եղավ գյուտ։ Ու այցում էր սիրով, և այցելիս երբեմն խոսում մեկ-երկու ժամ, իսկ հեռանալիս մտածում միշտ, թե ի՞նչ կարելի է անել, որ դժբախտը լավ զգա իրեն.— Նվերնե՞ր տար, ինչպես ընդունված էր Բյուզանդիայում, հարմար չէր առայժմ— Փառանձեմը սուգի մեջ էր։ Առաջարկեր զբոսանքի գնալ՝ նույնպես հարմար չէր քառասունքի պատճառով։ Իսկ հետո, երբ սկսեցին աշնան ցրտերը, թագուհին բնավ ցանկություն չէր ունենում դուրս գալու և, այցելով Փառանձեմին, ավելի երկար էր նստում մոտը և երբեմն փորձում հրավիրել նրան իր հարկաբաժինը... Թագավորի նման Օլիմպիան ևս Փառանձեմի վիշտը մեղմելու նպատակով խնդրում էր պալատական տիկիններին՝ շուտ-շուտ այցել դժբախտին։ Առաջին օրերը նա նույնը խնդրում էր թագավորից։

— Քո այցդ, բաղիլես, առավել նշանակություն կունենա նրա համար և կլինի առավել սփոփիչ,— ասում էր Օլիմպիան, իմանալով հանդերձ, որ Արշակը նույնպես այցում է երբեմն։

Այդ մինչև Անդոք իշխանի մեկնումն էր։

Վերջերս սակայն Օլիմպիան նկատում էր, որ ամուսինն ավելի հաճախ է այցելում Փառանձեմին։ Ի՞նչ էր նշանակում այդ. չէ՞ որ Փառանձեմի վիշտը այժմ, առաջին օրերի համեմատ, մեղմացած էր, և ուրեմն հարկ կա՞ր միթե, որ բազիլևսն այնքան շուտ-շուտ այցի երան, մանավանդ որ այնքա՛ն զբաղված է իր Ավանով, իր «շար նախարարների» գործով... Այդ ինչպե՞ս է Արզասը ժամանակ գտնում... և ի՞նչ է խոսում այդքան Ֆարանզեմի հետ...

Եվ Օլիմպիան որոշեց— երևույթն իր համար պարզելու նպատակով— իմանալ Փառանձեմից, թե արդյոք գո՞հ է թագավորի այցերից, կամ՝ հարցնել իրեն՝ Արզասին, թե ի՞նչ է կարծում— Ֆարանզեմի վիշտը մեղմացնե՞լ է արդյոք... Ու նրան թվում էր, թե այդ հարցումների պատասխանից կարելի է մակարերել մի բան... Բայց ահռելի օր Փառանձեմն ինքը, որ իրոք նեղվում էր պալատում, խորհելով, թե ծանրություն է շրջապատի համար, իսկ վերջերս, լսելով թագավորի աներկմիտ ակնարկներն ու խոսքերը, մի օր հայտնեց թագուհուն, թե ցանկանում է գնալ հարազատների մոտ և խնդրում է բարեխոսել արքայի առաջ, որ թույլատրի։

— Մինչ այսօր քառասունքի պատճառով մեկնել հարմար չէր,— ավելացրեց Փառանձեմը,— այժմ սակայն կարող եմ։

Այս խոսքերը փարատեցին Օլիմպիայի կասկածը, և նա մտածեց, որ եթե Արզասն զգում է որևէ բան դեպի Ֆարանզեմը, վերջինս սակայն ոչինչ չունի։ Ուստի հանգիստ նկատեց.

— Բայց մի՞թե, Ֆարանզեմ, լեռներում ցուրտ չէ հիմա։

— Այո, բազիլեյա։ Բայց ես սովոր եմ ցրտերին։

«Այո, Ֆարանզեմը ոչինչ չունի»,— մտածեց թագուհին և նույն օրը երեկոյան խոսեց թագավորի հետ, ու այդ զրույցի ընթացքում նկատեց, որ Արզասը միայն հոգատարություն ունի դեպի Ֆարանզեմը. և չկա սակայն այն հատուկ քնքշությունը, դեմքի ու աչքերի փոխված արտահայտությունը, ինչ կարող էր լինել հափշտակության դեպքում։

— Մի այդպիսի փխրուն էակի համար,— ասաց Արշակը,— ինչպիսին Փառանձեմն է, բազիլեյա, անչափ դժվար կլինի հեռադնաց ճանապարհ՝ լեռնաշխարհի ցրտերում... Վերջապես, Անդոր իշխանը վերադառնա Վրաստանից՝ ի՞նքը,

կորոշի գնալու օրը։ Փառանձեմը, միևնույն է, առանց նրան մեկնել չի կարող։ Այնպե՞ս է։

Արշակի այս խոսքերից հետո արդեն Օլիմպիայի մեջ ոչ մի կասկած չմնաց թագավորի զգացմունքների նկատմամբ, ուստի և հարցրեց հանգիստ, նույնիսկ գոհ.— Ուրեմն լավագույն է մնա՞։

— Անշուշտ։

Այդ գիշեր Օլիմպիան կասկածներից ազատված՝ թեթև էր զգում իրեն և, երբ մտածում էր Փառանձեմի մասին, ցավում էր, որ նա այդքան դեռատի զրկվեց ամուսնուց՝ այգպիսի աղբերգական ձևով... Հանգստանալով նա քնեց։ Իսկ առավոտյան արդեն ,սովորական ժամից շուտ այցելով Փառանձեմին, խոսեց հետը և ջանաց համոզել, որ ցրտերին չկատարի այդ ուղևորությունը դեպի Բյուզանդիա, այլ մնա գարնանը, երբ ինքն էլ գուցե ուղեկից լիներ նրան։

— Դու շատ բարի ես, բազիլեյա,— խոսեց Փառանձեմը երախտապարտ ձայնով։— Սակայն ես այնպե՞ս եմ կարոտել հարազատներիս։

— Այդ հասկանալի է, սիրելիդ իմ Ֆարանզեմ։ Ես նույնպես հաճախ զգում եմ հարազատներիս կարոտը և ցանկանալով ցանկանում եմ լինել նոցա մոտ։ Այդ հասկանալի է։ Բայց պետք է սպասել...

Փառանձեմը լռում էր և երբեմն միայն հառաչում։ Օլիմպիան, նրա փոքրիկ ճերմակ ձեռքն առնելով իր ափերի մեջ, շոյում էր այն և կրկնում.

— Սպասիր, Ֆարանզեմ։ Բազիլևսն ինքը ցանկանում է այդ։ Նա ևս խորհուրդ չի տալիս այժմ մեկնելու։

Փառանձեմը լռում էր և գլուխը կախելով գարձյալ հառաչում։ Եվ թագուհին չէր կարողանում հասու լինել՝ համաձայնո՞ւմ է, թե ոչ։

Այս խոսակցությունը կրկնվեց մի քանի անգամ առանց պարզ արդյունքի։ Հետո Օլիմպիան, լսելով որ թագավորը շարունակում է այցել Փառանձեմին, մտածում էր, որ երևի նույնպես համոզում է, որպեսզի նա չմեկնի, և զարմանում էր միաժամանակ Փառանձեմի համառության վրա, որ անտեսում է իր և արքայի խոսքը։ Ու մի օր էլ ահա Օլիմպիան,

Վերջերս սակայն Օլիմպիան նկատում էր, որ ամուսինն ավելի հաճախ է այցելում Փառանձեմին։ Ի՞նչ էր նշանակում այդ. չէ՞ որ Փառանձեմի վիշտը այժմ, առաջին օրերի համեմատ, մեղմացած էր, և ուրեմն հարկ կա՞ր միթե, որ բազիլևսն այնքան շուտ-շուտ այցի երան, մանավանդ որ այնքա՛ն զբաղված է իր Ավանով, իր «շար նախարարների» գործով... Այդ ինչպե՞ս է Արզասը ժամանակ գտնում... և ի՞նչ է խոսում այդքան Ֆարանզեմի հետ...

Եվ Օլիմպիան որոշեց— երևույթն իր համար պարզելու նպատակով— իմանալ Փառանձեմից, թե արդյոք գո՞հ է թագավորի այցերից, կամ՝ հարցնել իրեն՝ Արզասին, թե ի՞նչ է կարծում— Ֆարանզեմի վիշտը մեղմացե՞լ է արդյոք... Ու երան թվում էր, թե այդ հարցումների պատասխանից կարելի է մակարերել մի բան... Բայց ահա՜մի օր Փառանձեմն ինքը, որ իրոք նեղվում էր պալատում, խորհելով, թե ծանրություն է շրջապատի համար, խոկ վերջերս, լսելով թագավորի աներկմիտ ակնարկներն ու խոսքերը, մի օր հայանեց թագուհուն, թե ցանկանում է գնալ հարազատների մոտ և խընդրում է բարեխոսել արքայի առաջ, որ թույլատրի։

— Մինչ այսօր քառասունքի պատճառով մեկնել հարմար չէր,— ավելացրեց Փառանձեմը,— այժմ սակայն կարող եմ։

Այս խոսքերը փարատեցին Օլիմպիայի կասկածը, և նա մտածեց, որ եթե Արզասն զգում է որևէ բան դեպի Ֆարանզեմը, վերջինս սակայն ոչինչ չունի։ Ուստի հանգիստ նկատեց.

— Բայց մի՞թե, Ֆարանզեմ, լեռներում ցուրտ չէ հիմա։

— Այո, բազիլեյա։ Բայց ես սովոր եմ ցրտերին։

«Այո, Ֆարանզեմը ոչինչ չունի»,— մտածեց թագուհին և նույն օրը երեկոյան խոսեց թագավորի հետ, ու այդ զրույցի ընթացքում նկատեց, որ Արզասը միայն հոգատարություն ունի դեպի Ֆարանզեմը. և չկա սակայն այն հատուկ քնքշությունը, դեմքի ու աչքերի փոխված արտահայտությունը, ինչ կարող էր լինել հափշտակության դեպքում։

— Մի այդպիսի փխրուն էակի համար,— ասաց Արշակը,— ինչպիսին Փառանձեմն է, բազիլեյա, անչափ դժվար կլինի հեռադնաց ճանապարհ՝ լեռնաշխարհի ցրտերում... Վերջապես, Անդոք իշխանը վերադառնա Վրաստանից՝ ի՞նքը,

կորոշի գնալու օրը։ Փառանձեմը, միևնույն է, առանց նրան մեկնել չի կարող։ Այնպե՞ս է։

Արշակի այս խոսքերից հետո արդեն Օլիմպիայի մեջ ոչ մի կասկած չմնաց թագավորի զգացմունքների նկատմամբ, ուստի և հարցրեց հանգիստ, նույնիսկ գոհ.— Ուրեմն լավագույն է մնա՞։

— Անշուշտ։

Այդ փիշեր Օլիմպիան կասկածներից ազատված՝ թեթև էր զգում իրեն և, եթե մտածում էր Փառանձեմի մասին, ցավում էր, որ նա այդքան դեռատի զրկվեց ամուսնուց՝ այգպիսի ողբերգական ձևով... Հանգստանալով նա քնեց։ Իսկ առավոտյան արդեն ,սովորական ժամից շուտ այցելով Փառանձեմին, խոսեց հետը և ջանաց համոզել, որ ցտեսին չկատարի այդ ուղևորությունը դեպի Բյուզանդիա, այլ մնա գարնանը, երբ ինքն էլ գուցե ուղեկից լիներ նրան։

— Դու շատ բարի ես, բազիլեյա,— խոսեց Փառանձեմը երախտապարտ ձայնով։— Սակայն ես այնպե՞ս եմ կարոտել հարազատներիս։

— Այդ հասկանալի է, սիրելիդ իմ Ֆարանզեմ։ Ես նույնպես հաճախ զգում եմ հարազատներիս կարոտը և ցանկանալով ցանկանում եմ լինել նոցա մոտ։ Այդ հասկանալի է։ Բայց պետք է սպասել...

Փառանձեմը լռում էր և երբեմն միայն հառաչում։ Օլիմպիան, նրա փոքրիկ ճերմակ ձեռքն առնելով իր ափերի մեջ, շոյում էր այն և կրկնում.

— Սպասիր, Ֆարանզեմ։ Բազիլևսն ինքը ցանկանում է այդ։ Նա ևս խորհուրդ չի տալիս այժմ մեկնելու։

Փառանձեմը լռում էր և գլուխը կախելով գարձյալ հառաչում։ Եվ թագուհին չէր կարողանում հասու լինել՝ համաձայնո՞ւմ է, թե ոչ։

Այս խոսակցությունը կրկնվեց մի քանի անգամ առանց պարզ արդյունքի։ Հետո Օլիմպիան, լսելով որ թագավորը շարունակում է այցել Փառանձեմին, մտածում էր, որ երևի նույնպես համոզում է, որպեսզի նա չմեկնի, և զարմանում էր միաժամանակ Փառանձեմի համառության վրա, որ անտեսում է իր և արքայի խոսքը։ Ու մի օր էլ ահա Օլիմպիան,

տեսնելով Արշակին Փառանձեմի հարկաբաժնից ելնելիս, հարցրեց.

— Համաձայնե՞ց, բազիլևս։

— Տակավին ոչ,— ուսերը շարժեց Արշակը և ուզեց քայլել առաջ, բայց Օլիմպիան շարունակեց.

— Ա՜խ, բազիլևս, տեսա՞ք նվերը Ֆարանզեմին։

— Իմ նվե՞րը,— Արշակի սպիտակուցները փայլեցին։

— Այո, բազիլևս։ Ինչո՞ւ զարմացար։ Նա ինքը ցույց տվեց ինձ, և գոհ է ուշադրության համար։ Քո կողմից դա մեծ բարեհաճություն է անշուշտ։ Եվ միշտ պետք է ուշադիր լինել դեպի նա։ Դա գուցե ազդի նորա տրամադրության վրա և հետաձգի իր մեկնումը։ Այնպես չէ՞... Ա՜խ, նա այնքան տառապած է, անմխիթար...— Օլիմպիան հառաչեց.— Ի՞նչ խորհուրդ տաս, բազիլևս։ Ես նույնպես կամենում եմ մի նվերով մխիթարել նորան։

— Բարի միտք է, Օլիմպիա,— և Արշակը կասկածով, հոնքերն ու կոպերը իրար բերած, նայեց թագուհուն, թե արդյոք նա չի փորձում իրեն, բայց չնկատելով ոչ մի դիտավորություն և կարծես համոզվելով, որ Օլիմպիան այդ ասում է առանց հետին մտքի, շարունակեց.— այդ ինքդ պիտի որոշես, բազիլեայ։ Այդ խնդիրներում կանայք ավելի հնարամիտ են։

— Ճշմարիտն ասեմ, բազիլևս, ես կարեկցում եմ նոան և սիրում քրոջ պես։

Արշակը չգիտեր ի՞նչ ասել և միայն գլխով էր անում՝ հոնքերն ու կոպերը իրար բերած։ Նա պարզապես նեղվում էր զրույցից և ցանկանում էր շուտ ավարտել այն։ Բայց միևնույն ժամանակ ջանում էր զսպել իրեն և թագուհուն լսել սովորական հանգստությամբ։

Սակայն նրան անհանգստացնում էր այն, ինչ տեղի էր ունեցել մի քանի օր առաջ Փառանձեմի սրահում։ Չգիտեր՝ Օլիմպիան տեսե՞լ էր այդ, լսե՞լ էր, թե կասկածում էր... Նա չգիտեր նաև իր արածը պատշա՞ճ էր, թե ոչ, բայց զգում էր, որ ուրիշ կերպ վարվել չէր կարող...

— Ուրեմն, բազիլևս, նա համաձայն չէ՞ մնալ,— շարունակեց Օլիմպիան, բայց Արշակից անմիջապես պատասխան չստանալով՝ զարմացած նայեց նրան և նոր մեկայն նկատեց,

որ Արզասը շփոթված, օտարոտի տեսք ունի ու ներքին մի բան, որ Օլիմպիան ինքն էլ չէր կարող ասել ինչ, անհանգստացրեց նրան, և նրա սրտում նորից գլուխ բարձրացրեց հին կասկածը. և կամեցավ պարզել, թե ի՞նչ է կատարվում Արզասի հոգում... Ա՜հ, ինչպե՞ս կուզեր նրա այցի ժամանակ ինքը լինել Փառանձեմի սենյակում, որպեսզի անձամբ տեսներ ու լսեր, թե ի՞նչ է խոսում նա այդ դեռատի այրիի հետ— դեմքի և աչքերի ի՞նչ արտահայտությամբ, ի՞նչ ձայնով, և ի՞նչ եղանակով, որից և կարելի էր գուշակել մի բան։ Թեպետև մի-երկու անգամ, առաջ, Արզասին հանդիպել էր Փառանձեմի սենյակում, բայց նրանց զրույցից չէր հասկացել ոչինչ, քանի որ նրանք խոսում էին արմեն լեզվով... Բայց, լեզվից անկախ, Օլիմպիան կարծում էր, թե սիրողների մեն մի շարժումից, մեն մի նայվածքից կարելի է կռահել նրանց զգացմունքները։ Այն օրվանից, երբ ինքը տեսավ Փառանձեմին, թեև ծանր վշտի մեջ, զգաց, որ այդ նորատի կնոջ գեղեցկությունը՝ նրա ծովախոր աչքերը, ճերմակ ճակատը, բարձրակամար հոնքերը և դեղձան մազերը տեսնող տղամարդը չէր կարող անտարբեր լինել՝ ինչ տարիքի ու դիրքի էլ լիներ։ Բայց մի՞թե բազիլևսը կարող է հրապուրված լինել, — մտածում էր Օլիմպիան ուշիմ նայելով Արշակի դեմքին, որն այժմ նրան թվում էր օտարոտի, և մազմապոտ ձեռքերին, որ ասես դողում էին աննշմար։

Այս մտքերով տարված Օլիմպիան լսեց թագավորին, որ ասաց. «Ոչ, չի համաձայնում»... Չլսեց, բայց դարձյալ զգաց մի օտարոտի բան, և նրա սիրտը կասկած ընկավ. Արշակն այդ ասաց այնպես անտարբեր ու շփոթ, որ Օլիմպիան շուրթերը սեղմեց և, գլուխն իջեցնելով, գնաց դեպի իր օթևանը։ Մտնելով իր հարկաբաժինը՝ նա հույն նաժիշտներից մեկին ասաց.

— Երբ արքան կերթա վշտահարի մոտ՝ հայտնիր ինձ։

Եվ ահա երկու օր հետո, երբ նրան հայտնեցին, թե թագավորը գնաց Փառանձեմի հարկաբաժինը, Օլիմպիան առանց ժամանակ կորցնելու, առանց պատշաճ ձևով հագնվելու, միայն երկար վերնոցը ուսերին, ինքը ևս գնաց նրանց զրույցին հետևելու, որ գեթ նրանց տեսքից, նայվածքից, խոսելու եղանակից հասկանա մի բան... Որքան էլ կասկածամիտ,

բայց չէր հավատում, թե Արզասը հրապուրվեր Ֆարանգեմով. չէ՞ որ երիտասարդ իշխանուհին սուգի մեջ էր, և բազիլևսը պիտի հարգեր նրա սուգը... Եվ Օլիմպիային մերթ թվում էր, թե դա հնարավոր չէ, մերթ էլ, կանացի հոտառությամբ, զգում էր, որ Փառանձեմի գեղեցկությունը կարող է խախտել ամեն տղամարդու հավատարակշռությունը։ Չէ՞ որ այդ իշխանուհու հմայքին չդիմացավ Տիրիթը և ոճիր գործեց... Նա հիշում էր նաև, թե բյուզանդական արքունիքում ո՛րքան դեպքեր են եղել, երբ տարիքով իշխանը, կոմսը, պատրիկը սիրահարվում էր նորատի աղջկա... Կյանքում ամեն ինչ հնարավոր է... Բայց Օլիմպիային թվում էր, թե Արզասը երբեք այդպիսի անխոհեմ քայլ չի անի. հափշտակվի իր հարազատո՞վ... երբե՛ք։

Այսուամենայնիվ Օլիմպիան հետաքրքրված էր. նա որոշեց մտքում— այսօր իսկ, իրեն հանգստացնելու համար, իր կասկածները փարատելու համար պարզել, թե ի՞նչ է անցնում-դառնում Ֆարանգեմի և Արզասի միջև։

Ու, ինչպես միշտ, հանդարտ քայլերով դիմեց Փառանձեմի հարկաբաժինը, մտածելով՝ ի՞նչը համարել իր գալու առիթը՝ մոռացված մի ի՞ր, թե հանձնելիք մի բան... վերջապես, մի պատրվակ... Օլիմպիան քայլում էր շատ զգույշ, սովորականից զգույշ ու հանդարտ։

Մտնելով Փառանձեմի օթևանի առաջին սենյակը՝ նա ավելի դանդաղեցրեց քայլերը։ Իսկ երբ մոտեցավ այն սրահին, ուր այցելուներ էր ընդունում Փառանձեմը, Օլիմպիան կանգ առավ. մտնե՞լ, թե չմտնել, և որքան վայե՞լ էր մտնել առանց զգուշացնելու, գաղտագողի... Այդտեղ՝ նախասրահում սովորաբար լինում էր Փառանձեմին խնամող դայակը, բայց այդ ժամին չկար և այդ պարագան վճռեց խնդիրը։ Օլիմպիան, մինչև կորոշեր անելիքը, սրահի մուտքը ծածկող վարագույրի արանքից նայեց ներս.— Արզասը շատ ազատ, թիկնոցը վրան նստել էր մետաքս բազմոցին, Ֆարանգեմի կողքին և զրուցում էր։ Արզասի աչքերը ժպտում էին սովորականից ավելի... Թե ի՞նչ էին խոսում՝ Օլիմպիան չէր կարող իմանալ. բայց թվում էր նրան, թե զրույցը սովորական չէր. թվում էր մտերմիկ բացատրություն. թվում էր Արզասը ինչ-որ բան էր համոզում Փառանձեմին...

Եվ այստեղ ահա Օլիմպիան առաջին անգամ, Հայոց Աշխարհը գալուց հետո, ցավեց, որ չգիտեր արմեն լեզուն... այլապես կհասկանար, թե ի՞նչ են խոսում. ավելի շուտ՝ ի՞նչ է ասում Արզասը։

Իսկ Արզասը խոսում էր հանգիստ և, որքան երևում էր վարագույրի ճեղքից, հանգիստ էր նաև Փառանձեմը. նա արքային լսում էր գլուխը խոնարհած և անշարժ, շուրթերը սեղմած։ Երբ Արզասն ավարտեց ասելիքը, խոսեց Փառանձեմը, և Օլիմպիան ցավեց դարձյալ, որ չէր հասկանում արմեն լեզուն... Իսկ եթե հասկանա՞ր...

Այո, նա չէր հասկանում, իսկ նրանք շարունակում էին։

— Լինել հա՞րճ...— հանկարծ ճչաց Փառանձեմը։— Ո՛չ, արքա... Սյունյաց իշխանի դուստրը...

Նա ուզում էր կրկնել «հարճ լինել չի կարող», բայց լռեց։

Արշակն այլայլվեց։

— Մի՛ սխալվիր, Փառանձեմ։ Ոչ թե հարճ, այլ թագուհի։

— Փառանձեմը առավել վախով նայեց Արշակին և նորից ուզեց ճչալ, բայց կրկին զսպեց իրեն և միայն՝

— Գթա՛ ինձ, արքա,— ասաց ու ձեռքերով ծածկեց երեսը։

Փառանձեմը պարզապես շփոթված էր. թագավորն ինչո՞ւ այդքան հեռու գնաց. «Թագուհի՞»... Ո՛չ. իր վիշտը, իր Գնելը... Ո՛չ մի գայթակղություն... Եվ Փառանձեմը լռեց վախից ու ամոթից։

— Խոսի՛ր, Փառանձեմ։

— Գթա՛ ինձ, արքա,— կրկնեց միայն Փառանձեմը։

Արշակը սակայն, բազմոցի վրա ձգվելով, ուզեց բռնել նրա ձեռքը, բայց Փառանձեմը վախո՞վ թե բնազդով ետ քաշեց այն ու ահաբեկ թռչունի նման նայեց թագավորին։ Ու մինչ նա կսթափվեր, Արշակն ուզեց գրկել նրան։

Այս անգամ Փառանձեմը խայթվածի պես վեր թռավ ու գնաց սենյակի մի անկյունը՝ մազերի ալիքներն ուսերին թափած։ Բայց Արշակը թափով ելավ տեղից և, թիկնոցն ուսերից գցելով, խոյացավ դեպի Փառանձեմը։

Կիրքը թագավորին դարձրել էր սովորական մարդ։

Տեսնելով այս՝ Օլիմպիա թագուհին դողաց, չգիտես վախի՞ց, թե զարմանքից, բայց մնաց կանգնած, չկարողանալով ոչ առաջ գնալ, ոչ ետ. այլ, ասես չընկնելու համար,

բռնեց հատակին հասնող կերպաս վարագույրը ու մի վայրկյան մնաց այդպես՝ աչքերը լայնաբաց ու դողդոջ, ապա մեկեն պոկվեց տեղից, շրջվեց ու հեռացավ պինդ, փութկոտ քայլերով։

Արշակը, որ թիկնոցը գցելու հետևանքով միայն կապայով էր, ոտնաձայն լսելով նայեց վարագույրի կողմը և, տատանվող վարագույրի արանքով Օլիմպիայի հագուստը նկատելով, գրեթե վազեց նրա հետևից, մոռանալով իրեն, իր դիրքը, ո՛ւր գտնվելը, մոռանալով միջանցքում կանգնած իր թիկնապահին։

— Օլիմպիա՜,— ձայնեց վազելով։

Բայց մինչ կհասներ՝ Օլիմպիան միջանցքի կարճ տարածությունը կտրելով մտավ իր հարկաբաժինը և դուռը փակեց նրանից։

— Ես ոչ ոքի չեմ ընդունում։ Դուռը չբանա՛լ,— կարգադրեց նա ընդառաջ եկող նաժիշտներին։

— Բարի, բազիլեյա,— խոնարհում արին հույն աղջիկները։

Դռան փակվելու ձայնը լսելով՝ Արշակը կանգ առավ մոայլած։— Ի՞նչ անել. գնալ բախե՞լ դուռը, թե ետ դառնալ։ Բախե՛լ... նախ՝ դա կլիներ շատ օտարոտի. ի՞նչ կասեին հույն նաժիշտները, թիկնապահ Եզնիկը, որ նայում էր ակնապիշ։ Երկրորդ՝ ինքը գիտեր Օլիմպիայի համառ բնավորությունը, որ հուզված ժամանակ չէր ընդունի։ Սակայն ետ դառնալ առանց բացատրության, նույնպես անհարմար էր և անկարելի...

Այդպիսի անել վիճակի մեջ նա չէր եղել երբեք. դուռ փակեն իր առջև՜... Իր ողջ թագավորության մեջ ոչ ոք այդպես չէր վարվել իր հետ և վարվել չէր կարող... Մի՛այն կինը ահա... միայն իր թագուհին... Եվ Արշակն իրեն նվաստացած զգաց անչափ. նվաստացած ու մեղավոր... Թագավոր և ահա՜... հասարակ մի ռամիկի պես կանգնել է փակ դռան առաջ... Ավելի շուտ՝ բաց դուռը փակել են իր առջև...

Սակայն դա միայն զգացում էր և այնքան չէր զբաղեցնում նրան, որքան այն, ինչ տեղի ունեցավ և ինչ տեսավ թագուհին։ Բայց ինչպե՞ս պատահեց այդ. ինքն այդպես ան-

զգույշ եղավ... Եվ ինչպե՞ս այդ իսկ ժամին վրա հասավ Օլիմպիան. ասե՞լ էր մեկը նրան, թե եկավ ինքնաբեր...

Ինչպես և լիներ՝ կատարվածը Արշակին թվում էր տհաճ, և նա մտածում էր, որ այժմ իսկ պետք է բացատրվել կամ... ներում խնդրել Օլիմպիայից... Բայց ի՞նչ ասեր իբրև բացատրություն... Ասեր, թե մխիթարում էր Փառանձեմին... Ո՛չ, պետք չէ ո՛չ բացատրություն, ո՛չ սուտ... Պետք է միայն ներում խնդրել... Սակայն կների՞ արդյոք. չէ՞ նա հեռացավ կարծես զարհուրած և դուռը փակեց այնպես զայրացած...

Դա ինքնին պատասխան չէ՞ր միթե։

Եվ Արշակը, որ ամեն բանում ազատ էր, համարձակ և իր վճիռների մեջ կտրուկ, այստեղ իրեն զգում էր անզոր ու անել...

Այո, նա պարզապես ելք չէր գտնում կատարվածը հարթելու։ Մերթ մտածում էր գնալ բախել դուռը և, ներս մտնելով, խոսել անմիջապես. մերթ գտնում էր, թե լավ կլիներ թերևս բացատրությունը թողնել վաղվան... Այո, վաղը կամ երեկոյան, երբ Օլիմպիան ավելի նվազ հուզված կլիներ... Բայց չէ՞ որ այժմ չէր կարելի թողնել նրան այդ վիճակում՝ չշագրգիռ,— մտածում էր Արշակը, գտնելով, որ պետք է այժմ իսկ հանգստացնել նրան՝ բացատրություն տալով, թե ներում խնդրելով, միևնույն է։

Կանգնելով ևս մի վայրկյան՝ Արշակը ետ դարձավ սթափվելով, որ պալատական ծառայողները, սովորություն ունենալով հետևել թագավորի և թագուհու յուրաքանչյուր քայլին, այստեղ արդեն կարող են նկատել բացահայտ, որ իր և թագուհու միջև տեղի է ունեցել ծանր մի անախորժություն, ու այսօր-վաղը կտարածեն պալատում, դուրսը՝ ժողովրդյան մեջ... Արշակը գիտեր, որ մարդկային լեզուն չի սիրում պարապ մնալ և... այս կարգի դեպքերը սիրելի են նրան, որպես զրույցի նյութ։

Այս մտքերով Արշակը մտավ գահասրահ, ուր կարող էր բացարձակ մենակ լինել և խորհել անելիքը։ Նախ, ըստ սովորության, երբ հուզված էր լինում և միտքը ալեկոծ, սկսեց երթևեկել ծանր, նյարդային քայլերով, շարունակելով մտածել կատարվածի մասին... Փառանձեմն, այո, բացառիկ է, զարմանալի. դեմքը, նայվածքը, խոսելու եղանակը... անդի-

մադրելի ու գրավիչ... բայց մի՞թե սերը գերող է այնչափ, որ թագավորներն անգամ տկարանում են նրա առաջ... Դա հափշտակությո՞ւն էր, թե...— մտածում էր Արշակը, չէր կարողանում բացատրություն գտնել և նորից ու նորից հիշում էր Օլիմպիայի փախուստը... Եղավ անհարմար և անվայել...

Անվերջ քայլելով մտածում էր Արշակը և, քանիերո՞րդ անգամ, կրկնում, թե պետք է հարթել անախորժությունը՝ առանց հետաձգելու, այլապես Օլիմպիան կվշտանա ավելի... Նա գիտեր, որ Օլիմպիան որքան սառն էր, չափավոր ու զուսպ, նույնքան դյուրաբորբ է և շուտ վիրավորվող անհաճո բաներից։ Սովոր բյուզանդական արքունիքի վայելչաձևությանն ու նրբանկատ՝ նա հաճախ չէր ըմբռնում հայ մարդկանց ու կանանց զգացմունքի այս կամ այն արտահայտությունը։ Անպատեհ մի բառ, խիստ մի շարժում կամ ծիծաղ՝ նա ընկալում էր այլ կերպ. նրան թվում էր անտեղի, կոպիտ...

Ուստի և Արշակը ոչ միայն մտածում, այլև զգում էր, որ Օլիմպիան խորապես վիրավորվեց տեսածից։ Բայց արդյոք ամե՞ն ինչ տեսավ փակ վարագույրի հետևից... Հավանաբար, այո. այլապես չէր զայրանա այդչափ,— մտածում էր Արշակը և գտնում, որ պետք է գնա և խոսի հետը— ոչ թե վաղը, այլ այսօր իսկ՝ երեկոյան, երբ սպասավորները քաշված կլինեն իրենց խցերը և առհասարակ չեն տեսնի իր այցը և չեն ականջի, նրան թվում էր, թե Օլիմպիան իրենց այդ տեսակցության միջոցին կխոսի շատ զայրացած, իսկ նա չէր ցանկանա, որ մեկը լսի իրենց...

Սակայն երեկոյան դեմ, երբ Օլիմպիան ճաշում էր սովորաբար, լուր տարածվեց, թե թագուհին փակվել է իր ննջարանում. ճաշի ժամն է արդեն, բայց նա բախումներին չի պատասխանում. հիվանդ չէ՞ արդյոք... Այս բանը թագուհու հույն նաժիշտներից մեկը հայտնեց կին սպասավորների գլխավորին. սա, իր հերթին, թագավորի նոր սենեկապետ Եզնիկին, և երկուսով միասին գնացին ստուգելու։

Թագուհու ննջարանի դուռն իրոք փակ էր, և նա չէր պատասխանում ներսից։

— Պետք է հայտնել Հայր-Մարդպետին,— որոշեց թագավորի նոր սենեկապետը։

Եկավ պալատի կառավարիչ Հայր-Մարդպետը՝ ծանր ու մեծ շարժումներով, ծաղկատար լերկ դեմքը խոժոռած։ Սա նույնպես, նախ զգույշ, ապա փոքր-ինչ ուժեղ բախեց Թագուհու ննջարանի դուռը. դարձյալ ձայն, շարժում չլսվեց ներսից...

Այս ամենը կատարեցին շատ մեծ զգուշությամբ. նախ, որ չանհանգստացնեն Թագուհուն. երկրորդը՝ պալատի սպասավորները չիմանան, որ պատահել է արտակարգ մի բան... Այս բոլորից հետո Հայր-Մարդպետը հարցրեց հույն նաժիշտներին, թե Թագուհին վաղո՞ւց է քնած, կամ, քնելուց առաջ, չի՞ ասել ոչինչ։

— Եվ ոչ մի խոսք,— ասացին նրանք արտասվաձայն, ավելացնելով նաև, որ երեք-չորս ժամ առաջ հուզված մտել է իր ննջասենյակը և այլևս չի կանչել իրենց։

Հայր-Մարդպետը մտածեց մի վայրկյան, ապա որոշեց գնալ Թագավորի մոտ և եղածը հայտնել նրան։ Այդպես էր կարգը։ Բայց կես ճանապարհին հանդիպեց իշխանուհի Նանային՝ հազարապետի տիկնոջը, որ մոտեցավ բադի պես երերուն և հարցրեց հևալով.

— Ի՞նչ է պատահել Թագուհուն, տեր Մարդպետ։

Երբ Հայր-Մարդպետը անմազ դեմքի սառն արտահայտությամբ պատմեց համառոտ, Նանա իշխանուհին, ներքինու խոսքի շարունակությունը թողած, շտապեց Թագուհու հարկաբաժինը։

Նրա զգույշ բախումները և մեղմ կանչերը նույնպես մնացին անպատասխան։ Սովորաբար ննջելու գնալիս Օլիմպիան դուռը չէր փակում ներսից, և հիմա ամենքը զարմացած էին. ինչո՞ւ է այդպես վարվել այսօր... Նանա իշխանուհին նույնպես բացատրություն չէր գտնում, ուստի նորից երերաքայլ, շտապեց հայտնել այդ հազարապետ ամուսնուն, իսկ Հայր-Մարդպետը, մինչ այդ, գնաց Թագավորի մոտ։

Ներքինուն լսելով՝ Արշակը այլայլվեց։

— Փակվե՞լ է ննջարանում. և ո՞չ մի ձայն ներսից։

— Ոչ իսկ մի ձայն,— կրկնեց ներքինին անհույզ։

— Ի՞նչ կարող է լինել,— մտմտաց Արշակը արտաքուստ հանգիստ, բայց ներքուստ շփոթված և անմիջապես, առանց

Հայր-Մարդպետին նայելու՝ հետևո՞ւմ է իրեն, թե ոչ— շտապեց դուրս։

Ծկող թագավորին նկատելով՝ հույն նաժիշտներն ու սպասուհիները, վերստին եկած իշխանուհի Նանան ետ-ետ գնացին՝ նրան ճանապարհ տալու։ Իսկ Արշակը փութկոտ, բայց տիրական քայլերով գնաց դեպի թագուհու ննջասենյակը։

Ոչ ոք չհամարձակվեց հետևել նրան. անգամ անցնել երկրորդ, երրորդ սենյակը։

Արշակը մենակ հասնելով թագուհու ննջարանին՝ մատի ծայրով բախեց դուռը։

Լռություն։ Բախեց նորից։

— Բազիլեյա՛... Բազիլեյա՛...

Դարձյալ ոչ մի ձայն և ոչ մի շարժում։

. . . . . .

Վերջապես, երբ դուռը բացին, Օլիմպիային գտան իր մետաքս անկողնու վրա անշունչ։ Նրա մոտ ընկած էր թույնի մի սրվակ, որ պատրաստում էին միայն Բյուզանդիոնում։

«Թունավորել է իր անձը»,— ասաց Արշակը մտքում և գլուխն իջեցրեց։ «Ընդունել է մահադեղ»։

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

Ինչպես Գնելի սպանության լուրը, այնպես էլ Օլիմպիա թագուհու մահվան բոթը ամենայն արագությամբ տարածվեց Հայոց Աշխարհի բոլոր մասերում և ամեն տեղ առաջ բերեց զարմանք ու տարակույս։

— Թագուհին թունավորե՞լ է իր անձը...

Շատերին օտարոտի էր թվում այդ և պարզապես անհասկանալի։ Իսկ պալատի մարդիկ արդեն շատ զարմացած էին այդ, ինչպես իրենք էին ասում, «անակնկալի» մահով, և ոչ մեկը չէր կարենում մի բացատրություն գտնել։ Անգամ պալատի կառավարիչ Հայր-Մարդպետը, որ կյանքում շատ բան էր տեսել և գիտեր թափանցել երևույթների խորքը, նա ևս զարմանքի մեջ էր։

— Եվ սակայն ստուգապես հասու չեմ, իշխան, թե ինչի՞ց

եղավ թագուհու մահը,— ասաց նա մի օր հազարապետ Գնունուն։

— Եվ մի՞թե պարզ չէր, Հայր-Մարդպետ։ Թագուհին ինքը ընդունել էր մահադեղ։

— Ճշմարտապե՞ս...

— Դու կասկածո՞ւմ ես, տեր Մարդպետ։

— Բնավ, իշխան։ Միտքս միայն անհանգիստ է։ Խորհում եմ և հասու եմ լինում, որ ինքնասպան լինում է ճակատամարտում պարտված, գերության վտանգին ենթակա զորավարը, կամ սիրանվեր մի կին, որ ամուսնուն կորցնում է հանկարծ... Սակայն տեսնված չէ, որ այր լինի թե կին՝ փառքի մեջ մահադեղ ընդունի և... Խորհում եմ ու չեմ գտնում, թե ի՞նչը հարկադրեց Օլիմպիա թագուհուն այդպես վարվելու... Պատճա՛ռը, իշխան, պատճա՛ռը պարզ չէ ինձ, ուստի և մտատանջ եմ, վասնզի ջանում եմ խորամուխ լինել կատարվածին։

Հազարապետ Դավիթ Գնունին անցողակի, բայց զննաբար նայեց Մարդպետի մռոտ ու ծաղկատար դեմքին և հառաչեց նշանակալից.

— Երբեմն, տեր մարդպետաց, անքննելի է մարդուս, մանավանդ կնոջ հոգին։ Գուցե հայրենի երկրի կարոտ, գուցե այլ հանգամանք...

— Ահավասիկ այդ իսկ հանգամանքը կուզեի պարզել ինձ, իշխան,— նորից նշմարելի կասկածը կկոցած աչքերում խոսեց Հայր-Մարդպետը։— Նկատում եմ, որ թագավորնիս ընկճված է սաստկապես...

— Բնական է, տեր Մարդպետ... Թագուհու մահը ծանր վիշտ է ամենքիս համար, առավել՝ արքայի համար։

Հազարապետ Գնունին ինքը ևս, ինչպես շատերը պալատում, լուրջ կասկածների մեջ էր այդ առթիվ. սակայն չուզեց պալատի կառավարչին զգացնել տալ այդ. կերթարկպատմեր, ըստ սովորության, թե հազարապետը տարակույսներ ունի և այլ զրույցներ, ուստի լռությունը համարեց խոհեմություն և, գլուխ տալով, հեռացավ արագ։

Թեպետև Օլիմպիա թագուհու մահից ու թաղումից անցել էր մոտ երեք շաբաթ, սակայն թե՛ պալատում և թե՛ դուրսը՝ մայրաքաղաքի բնակչությունը և այլ տեղեր տակավին խո-

սում էին թագուհու մահվան մասին, որովհետև այդ մահը ամենքին թվում էր առեղծվածային։

Օլիմպիային թաղեցին մեծ հանդեսով, ինչ վայել է թագուհուն։ Թաղմանը ներկա էին ոչ միայն պալատականները, այլև մոտիկ վայրերից եկած նախարարներ, կրոնավորներ և մեծ թվով ժողովուրդ։ Թե՛ թաղումից առաջ և թե՛ թաղումից հետո ամենքը հետաքրքրված են այդ մահով ու անում էին ամեն տեսակ ենթադրություններ, թե ինչի՞ց մեռավ թագուհին... Նախարարներից ոմանք իրենց ընտանիքներում շըշընջում էին, թե արդյոք Արշակն ինքը չի՞ թունավորել թագուհուն, կամենալով իր կապերը խզել Բյուզանդիայի հետ, կամ՝ գուցե ցանկացել է ազատվել Օլիմպիայից, քանի որ նա չորս տարվա մեջ ժառանգ չի պարգևում արքային։ Իսկ Արշակը, ասում էին, ցանկանալով ցանկանում էր արու մի զավակ, որ ժառանգեր գահը։ Խոսում էին նաև, թե Արշակը տառել էր Օլիմպիայից նրա համար, որ նա Բյուզանդիայից եկած հյուրերի հետ առանձնանում էր և խոսում երկար... Թե ի՞նչ էր գրուցում կամ ի՞նչ հանձնարարություն էր անում՝ Արշակին չէր ասում ոչինչ... Ոմանք էլ, դարձյալ նախարարներից, խոսում էին, թե թագավորը գտել է Օլիմպիայի մի նամակը, որտեղ նա կայսեր գրել է Արշակի գաղտնի նպատակների մասին... և Օլիմպիան ահա վախից ընդունել է մահադեղ...

Ենթադրությունները մեկը մյուսից անհիմն էին ու անհեթեթ, բայց կրկնվում էին համառոտաբար, և ոչ ոք համարյա չէր հավատում, թե թագուհին ինքն է թունավորել իրեն։— «Փառքի, պատվի և պալատի ճոխության մեջ ապրողը ինչո՞ւ պետք է մահադեղ ընդուներ կամովին»,— ասում էին գրեթե ամենքը։

Արշակն ինքը ծանր ապրումների մեջ էր. կատարվածը արտառոց բան էր, անսովոր, և նա վշտից ավելի անախորժություն էր զգում. ի՞նչ կասեն և կմտածեն պալատականները, իշխանները, նախարարները, մանավանդ հակառակորդ նախարարները։ Ինչ անակնկալ և անախորժ մահ... Մահ, որ նման է խայտառակության... Չէին ասելու՝ թագուհին մեռավ, այլ տարածելու էին, թե մեռավ թույնով. և չէին ասելու, թե ինքը մահադեղ ընդունեց, այլ պիտի չարաբանեին, թե թագավորը թունավորեց... Եվ Արշակին թվում էր, թե բոլոր

դեպքերում այդ մահվան պատճառը համարելու են իրեն, միա՛յն իրեն... Երբ պալատականները, նրանց կանայք, տարբեր գավառների նախարարներ հերթով գալիս էին ցավ հայտնելու և մխիթարելու,— և շատերը, պետք է ասած, մխիթարանքի խոսքեր ասում էին ջերմապես ցավակցելով, ոմանք արտասուքն աչքերում,— Արշակն անհարմարություն էր զգում... Մտածելով Օլիմպիայի մահվան մասին՝ նա իրեն ավելի անհարմար և պատասխանատու էր զգում Բյուզանդիայի առաջ։— Ի՞նչ կասեն և ի՞նչ վերաբերում կունենան այնտեղ և անձամբ կայսրն ինքը...

Թագուհու մահվան հաջորդ օրն իսկ հատուկ ճեպագնաց սուրհանդակների միջոցով հազարապետը բյուզանդական արքունիքին ուղարկել էր մի նամակ, որի մեջ, Օլիմպիայի մահվան լուրը հաղորդելով, գրել էր նաև, թե «հանգուցյալ Թագուհին մեր երկիրը կապում էր բարեկամության կապերով, բայց նրա մահից հետո ևս մեր երկիրների բարեկամությունը կմնա հաստատ, անխախտ և տևական»... Այս նամակին ի պատասխան՝ տասնհինգ օր հետո Բյուզանդիոնից եկավ մի երիտասարդ պալատական՝ իր ուղեկիցներով։ Սա հետը բերել էր կայսեր ցավակցական նամակը, որը նա հատուկ ձևով՝ կրծքին ու ճակատին դնելով հանձնեց Արշակին, իր կողմից ևս ցավ հայտնելով. ապա հետաքրքրվեց Օլիմպիայի մահվան հանգամանքներով։ Երբ հազարապետը պատմեց Օլիմպիայի հանկարծակի մահը (խոսք չասելով մահադեղի մասին)՝ հույն պալատականը այնուհետև ուզեց իմանալ, թե ի՞նչ տրամադրություն ունի հայ արքունիքը Բյուզանդիայի նկատմամբ։ Հավաստիանալով, որ Արշակը և նրա ազատները բարեկամաբար են տրամադրված դեպի Բյուզանդիան՝ նա բավարարվեց, որից հետո այցելեց Թագուհու գերեզմանը, շրջեց մայրաքաղաքում, մնաց ևս երեք-չորս օր, հետաքրքրվելով Հայաստանի մրգերով ու ձիերով։ Ապա մեկնեց, հետը տանելով յոթ ձիաբեռ մրգ, հայկական գորգեր և երեք նժույգ, որպես նվեր կայսեր։ Մեկնելիս այդ երիտասարդ գեսպանը հույս հայտնեց, թե այս մահից հետո ևս անխախտ կմնա Բյուզանդիայի և Արմենիայի բարեկամությունը։

— Անշուշտ,— ասաց Արշակը։— Մենք եղել ենք բարե-

կամ և կլինենք հավետ։ Ուստի կխնդրեի, տեր պատրիկ, կայծ ներ հաղորդել իմ եղբայրական ողջույնը։

Բյուզանդական դեսպանը խոնարհում արավ և մեկնեց։

Թե՛ կայսեր նամակը և թե՛ այն, որ դեսպանը մեկնեց առանց ծանր տպավորության, թեպետև զգալի թեթևություն բերին Արշակին, բայց և այնպես թագուհու մահվան պատճառած անախորժությունը չվերացավ իսպառ, չնայած նրան մխիթարելու էին գալիս ամեն օր ծանոթ և անծանոթ նախարարներ, սեպուհներ (դրանց մեջ չերևացին ոչ Արծրունի, ոչ Կամսարական նախարարները և ուրիշ մի քանիսը, ինչ նրան առիթ տվեց մտածելու, որ նրանք «չար են խորհում անշուշտ»), իսկ պալատականները ամեն օր գրեթե, որոշ ժամերի, երբ թագավորն ինքը ցանկանում էր, շրջապատում էին նրան, զրուցում տարբեր նյութերից՝ արքայի վիշտը ցրելու նպատակով։ Եվ Արշակի օրերն անցնում էին գրեթե իրար նման. առավոտները զեկույց, պետական ընթացիկ գործեր և մխիթարանքի եկած մարդիկ։ Օրընդմեջ թագավորին այցելում էր և Վասակ սպարապետը՝ միշտ խոսք բանալով բանակը լրացնելու և զինելու իր ծրագրի մասին, լավ իմանալով, որ բանակի զորացումը արքային հետաքրքրում է առանձնապես։ Իսկ հազարապետը թագավորին զբաղեցնում էր ներքին կյանքի խնդիրներով, անախորժ դեպքերն ու երևույթները թաքցնելով՝ խոսում էր միայն հաճելի բաներից.— բերքը առատ է լինելու. այս տարի կունենան անհրաժեշտ պաշար զորքի համար, համբարակները լցնելու համար. երկրում պակասել են հանցագործությունները... Նույնպիսի եղանակով էին մխիթարում Արշակին նաև թագադիր ասպետ Բագրատունին ու Հայր-Մարդպետը։ Առաջինն իր զրույցները վերջացնում էր միշտ կրկնելով. «Հուսով և հավատով եմ, արքա, որ սա կլինի քո վերջին վիշտը»... Իսկ Հայր-Մարդպետը ավելացնում էր. «Վշտերը գնայուն են, արքա, կյանքը մնայուն։ Այս է աշխարհիս օրենքը հավիտենական»... Ասենք, ի դեպ, որ Մարդպետն ինքը բնավ վշտացած չէր այդ մահով, որովհետև զգացել էր, որ Օլիմպիան չէր համակրում իրեն և երբեք չէր դիմում որևէ հարցով, որպես պալատի կառավարչի, այնինչ մյուս ավագների հետ զրուցում էր սիրով։

Սակայն Արշակին ավելի հաճելի էին իշխան Անդոքի այ-

ցելությունները։ Սա, որ մտադիր էր, Վրաստանից վերադառնալուն պես, դստեր հետ մեկնել Բյուզանդիա— չկարողացավ անել այդ։ Պատիվներ ու ընծաներ ստացած վերադառնալով՝ տեսավ թագուհին մեռած, ուստի և մեկնումը հետաձգեց թագավորի սուգի պատճառով... Բնականաբար մեկնել չէր կարող և Փառանձեմը, չնայած թագուհու մահը այնպես ծանր էր ազդել վրան, որ կուզեր հեռանալ շուտ. բայց պատշաճից կարգը ինչպես հորը, այնպես էլ նրան պահեց։ Օլիմպիայի անսպասելի մահը ցնցել էր նրան և նա, Գնելին մոռացած, մտածում էր շարունակ, թե արդյոք այս մահն ևս իր պատճառով չէղա՞վ...

Բայց ինչպես ամենքը, ինքն ևս Նանա իշխանուհու հետ գնաց թագավորին վշտակցություն հայտնելու՝ դեպքի երկրորդ թե երրորդ օրը, երբ Անդոք իշխանը տակավին չէր ժամանել Վրաստանից։ Երկրորդ անգամ գնաց հոր հետ, հոր առաջարկով, որն ասաց, թե «թագավորը քո սուգի օրերին քեզ բերել-միխիթարել է պալատում— այժմ ինքդ չպետք է անտարբեր լինես, Փառանձեմ»... Եվ Փառանձեմը գնաց։ Թագավորը նորից շնորհակալություն հայտնեց, իսկ Անդոք իշխանին խնդրեց հաճախակի այցել իրեն։

— Քո զրույցները, իշխան, սփոփում են ինձ։ Հուսամ՝ շուտ չես մեկնելու։

— Կմնամ, արքա, որքան ցանկաս,— շոյվեց Անդոքը։

— Մնացիր, իշխան, մնացիր և ստեպ-ստեպ այցիր։

Եվ Անդոքը, իրոք հյուրեղ զրուցող, այցում էր և խոսում՝ ամեն բանից, ջանալով ցրել նրա վիշտը։ Առաջին այցերին պատմեց, թե ինչպես ընդունեցին իրեն վրաց արքունիքում, ուր ինքը Արշակ թագավորի նվերներն անձամբ մատուցել էր վրաց Միհրան թագավորին, որը և խնդրել էր իր «սերն ու ողջույնը հայտնել հայոց մեծ արքային»... Այնուհետև համառոտ հիշեց, որ իրեն ևս արժանացրին ընծաների... Բայց այս առթիվ չտարածվեց, համարելով այդ անպատշաճ սգավոր մարդու առաջ։ Իր այցերի միջոցին Անդոքը ոչ միայն մխիթարանքի խոսքեր էր ասում կամ մանր պատումներ անում, այլև շոշափում էր այնպիսի խնդիրներ և դրանց մասին իոսում այնպես իրազեկ, որ Արշակը նրան լսում էր սիրով, դոհեն կլանված, մանավանդ, երբ նա խոսում էր երկրի ապահովու-

թյան մասին։ Բյուզանդական արքունիքի կյանքին ու տրամադրությանը լավատեղյակ՝ Անդոք իշխանը վստահեցնում էր Արշակին, թե կայսրն ու արքունիքը բարյացակամ են դեպի նա, ուստի և թող արքան չմտահոգի, թե նրանք կարող են սառել կամ փոխել իրենց վերաբերումը թագուհու մահվան պատճառով, եթե ինքը՝ Արշակը շարունակի բարեկամ մնալ Բյուզանդիային։

Այս զրույցները երբեմն Արշակին մոռացնել էին տալիս կատարվածը, և նա, որքան էլ սուգի մեջ, այնուամենայնիվ զբաղվում էր պետության ընթացիկ գործերով, որ նույնպես միջոց էին մոռացության։ Ճշմարիտ է, չէր գնում հեռագնաց զբոսանքների կամ որսի, ինչ կլիներ արդեն պատշաճից դուրս և կարող էր տեղի տալ չարախոսության, սակայն զբաղվում էր պալատ հասած շատ խնդիրներով, իսկ ազատ ժամերին նրա միտքը տարվում էր անթիվ հարցերով, որոնց գլխավոր առանցքը կազմում էր իր Ավանը։ Թեև ձմեռ էր, բայց և այնպես Ավանի կառավարիչը Արշակի կարգադրության համաձայն երբեմն գալիս էր և նկարագրում այնտեղ կատարվող աշխատանքները։ Եվ Արշակը անխախտ հարցնում էր. «Որքա՞ն տուն է կառուցված... որքա՞ն գործավոր է աշխատում... Ունի՞ք ինչ մի կարիք»... Կառավարիչ Վարազը պատասխանում էր՝ գրպանից մագաղաթի մի կտոր հանելով ու կարդալով։ Եվ Արշակը, եթե գոհ էր լինում, գլուխը շարժում էր վերևից ներքև, որ նշան էր հավանության։ Իսկ դժգոհ դեպքում՝ տարուբերում էր այն։ «Սակա՛վ է. պետք է կառուցել ավելի՛ն»... և անում էր ցուցումներ։ Բայց երբ Վարազ իշխանը հայտնում էր, թե գործավորները նույնպես սակավ են, Արշակն ավելացնում էր. «Ես կխորհեմ անհրաժեշտը»... Ու մռայլվում էր։

Եվ ահա մի օր, երբ Արշակը զրուցում էր Ավանի գանձրահեր կառավարչի հետ, եկավ Անդոքը։ Իմանալով ո՛ւմ հետ և ինչի՛ մասին է խոսում Արշակը՝ Սյունյաց իշխանը նկատեց Վարազի գնալուց հետո.

— Քանզի, արքա, կառուցում ես բերդ, պիտի կարծեմ՝ վստահ չես, թե Բյուզանդիան կլինի քեզ նեցուկ և զորավիգ վտանգի ժամին։

Արշակը կռահեց, որ Անդոքը բերդի մասին լսել է անշուշտ

Փառանձեմից և ասաց քմծիծաղ.— Բյուզանդիան զորավի՞գ...

— Եվ ինչո՞ւ ոչ, արքա։ Եթե մենք նորա բարեկամը, ինչ պահանջում է մեր երկրի ապահովությունը, նա կլինի մեզ հուսալի նեցուկ։

— Սակայն տեսական ապահովությունը օտարի օգնությամբ չի լինում, իշխան։ Երբե՛ք։ Կարծում եմ, որ մեր աշխարհի ապահովության հոգսը քեզ պիտի հուշեր այլ մտքեր, այն, որ մենք ինքներս կռենք մեր ապահովությունը՝ մեր բերդերով, մեր զինու զորությամբ և ոչ օտարին ապավինելով։ Ապավեն փնտրում են անկարներն ու հիվանդները, բայց ոչ քաջառողջ մարդիկ...— այս խոսքերի հետ Արշակը շեշտ նայեց Անդոքին։— Մի՞թե, իշխան, դու այլ կարծիքի ես։

— Ոչ, արքա։ Բնավ ոչ,— շտապեց արդարանալ Սյունյաց իշխանը։— Ես կամեցա իմանալ քո վերաբերումդ։ Հարկավ և ոչ մի օտար, որքան և զորավոր, առանց շահի ակնկալության, պաշտպան չի կանգնի մեզ։ Տալով մի ինչ՝ կպահանջի եռապատիկն ու տասնապատիկը... Ուստի՝ կառուցիր, արքա, կառուցիր։ Ես ինքս Սյունյաց աշխարհի իմ բերդերը հանձնում եմ քո տնօրինության։ Արա, ի՛նչ կամենում ես։

— Շնորհակալ եմ, իշխան։ Մի խումբ նախարարներ նույնպես կամովին զիջանել են իրենց բերդերը։ Սակայն սակավաղոր են դրքա։ Մեզ պետք են զորավոր բերդեր...

— Ճշմարիտ է, արքա, որքան ունենաս զորավոր ամրություններ, այնքան ավելի կապահովես աշխարհս հայրենի։

— Սակայն չունեմ աջակից, իշխան,— ասաց Արշակը տխրաձայն։— Միայն սպարապետն է, որ բերդը համարում է կարևոր, համամիտ չէ սակայն, որ նախարարներից մարդիկ պահանջեմ ստիպով։ Իսկ թե ինչո՞ւ եմ կամենում այդ՝ ամենքին պարզել չեմ կարող։ Բավական է պարզեմ՝ խսկույն կհասնի Շապուհի ականջը, որ բերդ եմ կառուցում պարսից դեմ... այնինչ՝ կցանկանայի ի գլուխ բերել այդ գաղտնի և արագ... Արդ ինչպե՞ս համոզեմ մեր ապիրատներին, որ ծայր անհրաժեշտ է սույն բերդաքաղաքը... Տո՛ւր ինձ մի խորհուրդ, իշխան, թե ինչպես վարվել նոցա հետ, որպեսզի ըմբռնեն մեր աշխարհի վիճակը, և ինչպես միաբանել նոցա...

— Ինչպե՞ս միաբանել...— և Անդոքը մտածումների մեջ

կախեց գլուխը։— Միաբանե՞լ...— Նա գիտեր, որ հայոց նա-խարարները մինչ այժմ երբեք չեն միաբանել, անգամ արտաքին վտանգի ժամին... ու ոչ մի հույս չէր տեսնում, թե միաբանեն այսուհետ, մանավանդ աշակից լինեն արքային։

— Իմացա, արքա, փորձեցիր պահանջել նոցա բերդերը և նոքա զլացան...

— Զլացան, այո։ Բայց ես, իշխան, կստեղծեմ իմ բերդը, որ լինի ամենքի բերդը, և կլինի ավելի հզոր, քան նախարարաց բերդերը. ու դորանով ես կմիաբանեմ նոցա. և այդ միաբանությունը կդառնա հայոց բերդ, անխորտակ բերդ... Թշնամին անզոր կլինի կործանել նորան։ Այո, իշխան. տեսանելի բերդից ավելի ստեղծենք մեր ներքին բերդը...

Իշխան Անդոքը, որքան էլ բանիմաց մարդ, չըմբռնեց, թե ի՞նչ է նշանակում ներքին բերդ, և անհարմար համարեց հարցնել։ Իսկ Արշակի համար դա նշանակում էր՝ բոլոր նախարարներին ենթարկել իրեն, կազմել մեծ բանակ և Հայոց Աշխարհը պաշտպանել ամեն վտանգից։

Անդոքը ամեն այցի նկատում էր, որ Արշակի տրամադրությունը բարձրանում էր օրեցօր. փոխվում էր տխրամած ձայնը, և նա խոսում էր աշխույժ, երբեմն զվարթ։

Սուգի օրերին այս զրույցները մոռացնել տալով իր ծանր ապրումները՝ Արշակին բերում էին նոր խոհեր, բարձրացնում էին նրա ընկճված տրամադրությունը, և նա ավելի էր մտածում իր անելիքների, իր Ավանի մասին... և որքան էլ Անդոք իշխանը համամիտ չէր լինում նրան՝ ավելի սիրով էր զրուցում հետը ու, ամեն հեռանալիս, ասում էր դարձյալ. «Վաղը նույնպես հաճիր գալ, իշխան»։ Իսկ այդ օրը հետաքրքրվեց.

— Կցանկայի իմանալ, իշխան, ե՞րբ ես մտադիր մեկնելու

— Երբ կհրամայես, արքա,— գլուխն իջեցրեց Անդոքը։— Ես մնացի արդեն Փառանձեմիս սուգից հանելու նպատակով և քեզ հասած դժբախտության հետևանոք։

— Հուսով եմ, որ Փառանձեմի վիշտը մեղմացած է, իշխան։

— Անշուշտ, արքա։ Սակայն թագուհու մահը...

Անդոքն ուզում էր ասել «ծանր է ազդել», բայց Արշակը վրա բերավ.

— Վաղը նույնպես հաճիր, իշխան։

Իշխան Անդոքին օտարոտի թվացին թագավորի հարցումները, բայց ոչինչ չասաց և, հրաժեշտ առնելով, գնաց իր հարկաբաժինը։

* * *

Եվ օրերն անցնում էին այդպես իրար հետևից՝ միանման. մոտենում էր թագուհու մահվան քառասունքը, ու քանի մոտենում էր այդ օրը՝ այնքան ավելի թե՛ պալատում և թե՛ դուրսը, թե՛ մարդիկ և թե՛ կանայք խոսում էին՝ ո՞վ կլինի արդյոք ապագա թագուհին, որովհետև կարգ էր՝ այրիացած թագավորը պարտավոր էր նորից ամուսնանալ՝ պետության գործերը երեսի վրա չթողնելու և առհասարակ տևաբար վշտի անձնատուր չլինելու համար. կար այստեղ և այն նկատառումը, որ բամբասանքից զերծ մնան թագավորն ու պալատական կանայք... Ու անում էին բազմատեսակ ենթադրություններ, թե ո՛ր արքունիքից կլինի թագուհին՝ վրա՞ց, աղվանի՞ց, թե դարձյալ բյուզանդական իշխանուհիներից մեկը։ Եվ արդյոք ի՞նչ է մտածում թագավորը այդ առթիվ... Պալատում ոչ ոք իհարկե չգիտեր թագավորի տրամադրությունն այդ մասին, իսկ հարցնել՝ հարմար չէր բնավ։ Բայց ամենքը հետաքրքրված էին ծայրաստիճան, մանավանդ պալատական կանայք։

— Ի՞նչ է խորհում արքան,— գրեթե ամեն օր հետաքրքրվում էր նանա իշխանուհին, երբ հազարապետը թագավորի մոտից վերադառնում էր իր օթևանը։

— Ասել չեմ կարող, իշխանուհիս,— պատասխանում էր հոգնած հազարապետը։— Այդ մասին թագավորի խոսքն իսկ չեմ լսած, ուր մնաց մտածմունքը...

— Ուրեմն խոսիր ինքդ, իշխան,— շարունակում էր հետաքրքրված իշխանուհին։— Քառասունքը լրանում է։ Պետք է խոսել։

— Պատշա՞ճ է արդյոք։

— Եվ ինչո՞ւ ոչ։ Եթե ինքը տակավին չի որոշած, կամ՝ մոռացել է, հարկ է հիշեցնել։ Եվ կարող ես անել ինքդ, իշխան, որպես արքունի ավագ, որպես ավագների երիտագույնը։

Դա մինչև իսկ պարտք է, իշխան,— հորդորում էր ամեն բա-նի հետաքրքիր Նանան։— Սթե դժվարին է քեզ, թույլատրիր խոսել ինձ։

— Մի՛ շտապիր, իշխանուհիս։ Դյուրին գործ չէ։ Թույլ տուր ինձ խորհել։

— Խորհիր, իշխան, խորհի՛ր։ Ամենքը սպասողական են...

Նույնպիսի հետաքրքրություն էին ցուցաբերում այդ առթիվ նաև մյուս պալատական կանայք։

— Կուզեի իմանալ, թե ո՞ւմ նկատի ունի արքան։ Արդյոք հայ իշխանական տների՞ց կընտրի նոր թագուհուն, թե օտար արքունիքներից,— ասում էր սպարապետի բարակ, բայց ոսկրոտ տիկինը։

— Որտեղից և լինի, իշխանուհի,— հոնքերը բարձրացնում էր Սմբատ սպասեի Շուշանը,— ես կուզեի, որ նոր թագուհին լինի տեսոք և բարեհամբույր։

— Եվ չլինի գոռոզ ու բարձրահոն։

— Այլ հոգով բարի և լեզվով հաճելի,— ավելացնում էին մյուսները։— Նաև բարեպաշտ ու բարեմիտ։

Պալատական կանանցից առանձին այդ մասին զրուցում էին հաճախ նաև ավագ պալատականները։ Հայր-Մարդպետը, որպես պալատի կառավարիչ, իր պարտքն էր համարում հետաքրքրվել՝ հազարապետին և Սմբատ Բագրատունուն հանդիպելիս։ Միայն դրանց, որովհետև մյուսներին արժանի չէր համարում այդպիսի խոսակցության, իսկ Վասակ սպարապետը պարզապես խորշում էր նրանից։

— Ի՞նչ ես խորհում, տեր սասպետ, արքան կրկին Բյուզանդիայի՞ց կբերի մեր նոր թագուհուն, թե այլ արքունիքից,— դիմեց մի անգամ Հայր-Մարդպետը Բագրատունուն։

— Ինքդ որտեղի՞ց կցանկանայիր, տեր Մարդպետ,— հետաքրքրվեց Բագրատունին իր հերթին։

— Ես իմ բաղձանքը չեմ թաքցնի, իշխան։ Գերադասելի է, որ նոր թագուհին լինի Տիզբոնի արքունիքից։

— Եվ ինչո՞ւ,— շարունակեց հետաքրքրվել Բագրատունին։

— Որպեսզի ավելի սերտ դարձնենք մեր և Իրանի բարեկամությունը,— ասաց ներքինին։— Բայց տարակույս ունեմ մեծ, որ բյուզանդական արքունիքը առաջարկի մի նոր իշ-

խանումի՝ Հայոց Աշխարհը միշտ և հանապազ իր կողմը պահելու համար։ Ես այս մտածում եմ երկյուղիվ մեծ։

— Հազիվ Բյուզանդիան նորից, տեր Մարդպետ, անի այդօրինակ առաջարկություն։ Դա դուրս է պատշաճից։ Օլիմպիայի հանգամանքն այլ էր։ Արքան այնժամ գտնվում էր Բյուզանդիայում։ Այդ չի կրկնվի նորից։

— Իսկ եթե կրկնվի՞, տեր Բագրատունի։

— Արքան կմերժի։

— Մերժե՞լ... Դյուրի՞ն է արդյոք,— տարակուսով գլուխն օրորեց Մարդպետը և հարցրեց։— Եթե, իշխան, բյուզանդական արքունիքը մի այդպիսի առաջարկ անի քեզ, կարո՞ղ ես մերժել։

— Ի՞նձ. ինչո՞ւ ինձ,— շփոթվեց Բագրատունին։— Ես հարկավ կմերժեմ։ Եվ բնավ նպատակ չունեմ հրաժարվելու իմ իշխանությունից կամ պարսիկի նման բազմակնությունը գբաղվելու։ Ոչ, տեր Մարդպետ, ես իսպառ կհրաժարվեմ այդ պատվից։

— Ինքդ՝ թերևս, տեր ասպետ։ Սակայն դյուրին չէ արքայի համար։

— Իսկ արքայի հետ խոսա՞ծ ես այդ մասին,— հետաքրքրվեց Սմբատ ասպետը միամիտ ձևացած, ներքինու ներքին ցանկությունները իմանալու համար։

— Ոչ, տեր Բագրատունի, տակավին ոչ։ Եթե արքան հարցում անի ինձ՝ ես անշուշտ կասեմ իմ կարծիքս։

Հայր-Մարդպետը այս մասին խոսեց և հազարապետի հետ. իմանալով, որ նա ևս տեղյակ չէ արքայի մտադրության, նրան նույնպես հայտնեց իր ցանկությունները ապագա Թագուհու թեկնածու ընտրելու մասին։ Այո, լավագույն կլինի, եթե արքան կնության առնի Շապուհի քույրերից մեկին. դրանով ամուր հիմք կդրվի մեր և պարսից բարեկամության ու կվերանան իսպառ պարսից վտանգները Հայոց Աշխարհի համար։

— Համամի՞տ ես, տեր հազարապետ։

— Այդ արքայի վճռելիք խնդիրն է,— չեզոքություն հայտնեց իշխան Գնունին։

Ապա Թագուհու խնդրով ու անձով հետաքրքրվում էին նաև պալատի մյուս մարդիկ՝ պաշտոնյաներ, սպասավորներ,

նաժիշտներ. ամենքը հավասարապես ցանկանում էին, որ նոր թագուհին ունենա լավ բնավորություն, որպեսզի բարեհաճ լինի և բարեգութ... Սակայն անստույգ էր տակավին, թե ի՞նչ է խորհում արքան. մինչև իսկ տարակույս ունեին, որ նա գուցեև չի մտածում այդ մասին, գուցեև չգիտե՞, թե այսօրվաղը լրանում է քառասունը, գուցեև մոռացել է կարգը։

— Հարկ է ուրեմն, որ մեկը խոսի արքայի հետ, հիշեցնի կարգը։

— Լավագույն է անի հաղարապետը։ Արքան հարգում է նորան։

— Ճշմարիտ է։ Իսկ եթե նա հանձն չառնի՞, Բագրատունյաց տերը ինչպե՞ս։

— Կարող է նույնպես, իբրև թագավոր աստված։ Պերճախոս է և համոզունակ։

— Բայց չէ՞ արքան ավելի ընդունում է այժմ Անդոք իշխանին և զրուցում ընդերկար։ Թերևս նա՛ խոսի արքայի հետ։

Եվ ամենքը գտնում էին, որ այո, միայն Անդոք իշխանը կարող է խոսել. նա համարձակ է։ Մյուսները չեն իշխում ամեն անգամ խոսք ասել, բայց նա՝ թագավորը, հարգում է նրան և ամեն օր գոնեմե հրավիրում զրույցի։

Պալատի մարդիկ ճշմարիտ էին։ Ինչպես երևում է՝ բոլորն արդեն նկատել էին, որ Անդոք իշխանը թագավորի հետ խոսում է ազատ, համարձակ. դա թերևս տարիքի բերումով, թերևս և այն պատճառով, որ նա Սյունյաց նախարար էր, այսինքն՝ առաջին բարձր տերը բոլոր նախարարների մեջ։ Կար և այն հանգամանքը, որ նա վերջին տարիներն ապրում էր Բյուզանդիոնում և ընդունված էր արքունիքում։ Անվանի էր նաև որպես զորավար։ Բայի այդ՝ համարձակ էր իր կարծիքների և վերաբերումի մեջ, և Արշակը սիրում էր նրա համարձակությունը և հաճախ, երբ չէր երևում մի քանի օր— սենեկապետին ուղարկում էր նրան կանչելու, ինչ որ հաճելի չէր մյուս ավագներին, և նրանք սպասում էին, որ նա շուտ հեռանա մայրաքաղաքից։ Այդ ցանկանում էր մանավանդ Հայր-Մարդպետը։

Եվ ահա մի երեկո Արշակը մենակ էր իր առանձնարանում, մեկնոցը վրան, մերթ գնում-գալիս էր գունավետ գորգի վրայով, մերթ կանգ էր առնում մտախոհ ու նայում մի կետի. երբեմն նստում էր մետաքսյա բազմոցին և ականջ դնում դրսի մի ձայն լսելու։

Պալատը լուռ էր. ոչ մի ձայն, անգամ հեռավոր ոտնաձայն չէր լսվում։ Իսկ Արշակին թվում էր, թե հիմա ուր որ է կգա Անդոք իշխանը իր ծանր ու համարձակ քայլերով. վաղուց անցել էր նրա այցի ժամը, բայց նա չկար։ Իսկ Արշակն սպասում էր նրան. սպասում էր ավելի լարված, քան երբևէ, որովհետև քանի օր էր նա չէր եկել զրույցի. այնինչ ինքը ոչ միայն զգում էր նրա սուր զրույցների կարիքը, այլև ցանկանում էր այսօր անպայման խոսել հետը.— ուներ կարևոր ասելիք, բայց Անդոքը, չգիտես ինչո՞ւ, չէր երևում։ Ի՞նչ էր պատահել. նորից, ըստ սովորության, հյո՞ւր էր գնացել մայրաքաղաքում ապրող իշխանների տները, թե զրուցում էր պալատական ավագների հետ... Արշակը զարմանում էր նրա եռանդի վրա, որ չէր կարողանում հանգիստ նստել և միշտ շրջագայության մեջ էր. բայց, չգիտես ինչո՞ւ, երեք օր էր չէր դալիս զրույցի։ Մի՞թե մոռացել էր իր խնդրանքը, թե՝ կարող է այցել ամեն օր...

Երբ բավական ժամանակ անցավ և Անդոքը դարձյալ չերևաց, Արշակը ծափ զարկեց։ Ներս մտավ նոր սենեկապետ-թիկնապահ Եզնիկը և կանգնեց ձիգ, աչքերը թագավորի երեսին, հրամանի սպասելով։

— Հրավիրիր իշխան Անդոքին,— ասաց Արշակը ձայնին առանձին մեղմություն տված։

Թիկնապահ Եզնիկը, որ միշտ հաճույքով էր գնում Անդոքին կանչելու, որ հնար ունենար գեթ մի աչքով Փառանձեմին նայելու, այս անգամ ևս ուրախությամբ դուրս նետվեց թագավորի առանձնարանից և միջանցքով սլացավ իշխան Անդոքին և Փառանձեմին հատկացված հարկաբաժինը, որ հեռու չէր։ Բայց երբ հասավ, նա քայլերը դանդաղեցրեց և, հագուստն ու ընչացքը շտկելով, դուռը բախեց կամացուկ։ Փայտե դուռը ետ գնաց և, նաժիշտի փոխարեն նրա առջև կանգնեց Փառանձեմը՝ սև հագուստի մեջ, նրբիրան և շողարձակ խոշոր աչքերով։ Եզնիկը, հանկարծակիի եկողի նման աչքերը Բար-

թեց, ապա զգալով իր վրա նրա հրեղեն հայացքը՝ շփոթվեց մի վայրկյան ու ասելիքը մոռացավ այնպես, որ Փառանձեմը հարցրեց.

— Դու կամենում ես իշխան-հո՞ր։

— Հրամայել ես, իշխանուհի։ Ճիշտ այդպես։ Արքան հրավիրում է իշխանին։

— Իշխանը ելավ դուրս։

— Ելավ դո՞ւրս,— կրկնեց Եզնիկը ասես չկարողանալով ետ գնալ. նայում էր Փառանձեմին և ժպտալով լռում, մինչև որ Փառանձեմը կրկնեց.

— Այո, ելավ փոքր առաջ։ Ժամանելուն պես կգա արքայի մոտ։

Եզնիկը շարժվեց վերջապես։ Մի քայլից սակայն ետ նայեց։ Փառանձեմը չէր երևում։ Ափսոսաց։ Իսկ երբ թագավորի առանձնարանը մտնելով հայտնեց, թե իշխանը չկա, նրա ոտները դողում էին։

Արշակն անխոս, բայց մտազբաղ հայացքով նայեց սենեկապետին, ապա, ներքին շուրթը առամի տակ առնելով, հարցրեց.

— Ամե՞նքը բացակա են։

— Տանն է իշխանուհի Փառանձեմը միայն։

Այս անգամ Արշակը աջով բռնեց իր մորուքը, նայեց հատակին և ապա ասաց.

— Հրավիրիր իշխանուհի Փառանձեմին։

Եզնիկը զարմացած, բայց աշխույժ դուրս եկավ. ասես ուրախություն զգաց, որ նորից պիտի տեսնի Փառանձեմին, դրանից էր երևի, որ հակառակ ընդունված կարգի, գրեթե վազեց մինչև Փառանձեմի հարկաբաժինը և ուրախաձայն հայտնեց դուռը նորից բացող Փառանձեմին։

— Ներիր, իշխանուհի. կրկին անհանգստացրի։ Արքան հրավիրում է...

Փառանձեմի աչքերում տարակույսներ երևացին։

— Ասացի՝ իշխանը ելավ դուրս։

— Ոչ, իշխանուհի։ Արքան հրավիրում է քեզ։

— Ի՞նձ,— շիկնեց Փառանձեմը։

— Հրամանքդ, իշխանուհի. քեզ։

— Չե՞ս սխալվում։

— Բնավ, իշխանուհի։ Ինչպե՞ս կարող եմ։

— Սակայն...— Փառանձեմը կամենում էր ասել ինչ-որ, բայց զսպեց իրեն և ասաց միայն.— սպասիր,— և դուռը դնելով սկսեց պատրաստվել տարակուսով։ Ինչո՞ւ է արդյոք արքան հրավիրում իրեն,— մտածում էր նա։ Պատահել էր, և շատ անգամ, հրավիրել էր հորը, ինքը հոր հետ մի անգամ եղել էր մոտը, կամ՝ պարզապես ինքն արքան էր առաջնորդում եկել իր հարկաբաժինը, սակայն չէր պատահել երբեք, որ հրավիրեր իրեն... Արդյոք ի՞նչ խնդիր է անհետաձգելի, որ հայրը չկա՝ հրավիրում է իրեն...

Բայց կարգ էր. երբ թագավորը հրավիրում էր՝ պետք էր գնալ... մանավանդ հայրը բացակա էր՝ պետք է գնար, թերևս կա շտապ մի ինչ, մի լուր՝ մորը վերաբերող... Եվ Փառանձեմը հապ-շտապ փոխեց վրայի հագուստը ու դուրս եկավ չահով լուսավորված միջանցքը։

— Գնանք,— ասաց նա սենեկապետ Եզնիկին ու առաջ ընկավ։

Սենեկապետի աչքերը շողում էին. նա այնպիսի նայվածք ուներ՝ թվում էր երջանիկ է, որ այսօր երկու անգամ տեսավ Փառանձեմին և այժմ քայլում է նրա հետևից, տեսնում է նրան ոտից գլուխ՝ բարեկազմ ու վեհընթաց։ Իսկ երբ Փառանձեմը իր անշտապ ու հանդիստ քայլերով մտավ արքայի ընդունարանը՝ Եզնիկը մնաց զուրսը կանգնած. նրա դեմքին երանության պես մի բան կար, միաժամանակ մի զուսպ հետաքրքրություն, թե արդյոք ինչո՞ւ կանչեց արքան Փառանձեմ իշխանուհուն հոր փոխարեն։ Ի՞նչ կար արդյոք...

Մինչ այդ Փառանձեմը ներս մտնելով տեսավ թագավորին սրահի մեջտեղը կանգնած, արքայական թիկնոցը ուսերին և գլխաբաց։ Փառանձեմին նկատելով՝ նա եկավ ընդառաջ։

— Բարի եկար, Փառանձեմ,— և թագավորը թեթև խոնարհեց գլուխը։

Փառանձեմը շիկնեց այդ ընդունելությունից և նույնպես գլուխ իջեցրեց։

— Հաճիր նստել, Փառանձեմ,— Արշակը ձեռը թիկնոցի տակից հանելով՝ հյուրասեր շարժումով ցույց տվեց սրահի

մետաքսյա բազմոցը, որի վրա շարված էին բեհեզակար բարձեր։

Եվ երբ Փառանձեմը նստեց՝ սև զգեստի փեշերն ուղղելով, Արշակն ինքը տեղավորվեց նրա դիմաց, մի հասարակ եռոտանու վրա։

— Ներիր ինձ, Փառանձեմ, պատճառածս անհանգստության համար,— աջը կրծքին դրավ Արշակը։— Ես կամեցա զրուցել Անդոք իշխանի հետ, բայց քանի բացակա է նա... կխոսենք մենք...

Թագավորի խոսելու եղանակը Փառանձեմին թվաց օտարոտի, և նա գլուխն իջեցրեց ակամա։

— Շնորհակալ եմ, Փառանձեմ, որ հաճեցիր գալ,— կրկնեց թագավորը՝ ասելիքի համար կարծես խոսքեր փնտրելով։— Ես ցանկություն ունեցա իշխան Անդոքի հետ խոսելու մեր երկրի ապահովության մասին... և դու ևս, Փառանձեմ, կարող ես օգնել ինձ, ու թերևս առավել դու, քան ուրիշ մեկը...

Արքայի խոսքերը տարօրինակ էին. Փառանձեմը հոնքերի տակից դիտեց նրան մի փութանցիկ ամոթխած նայվածքով։

— Ե՞ս, արքա... ինչպե՞ս,— ակամա դուրս թռավ Փառանձեմի շուրթերից և նա, շփոթությունն ու զարմանքը ծածկելու համար, ժպտաց ճիգով։

— Այո, դու ինքդ, Փառանձեմ,— կրկնեց Արշակը։

Փառանձեմը նորից շիկնեց։ Նրա խած աչքերը տարակուսից ավելի ցոլացին, և նա լարվեց լսելու, թե ի՞նչ էր ասելու թագավորը։ Իսկ Արշակը մի վայրկյան նայեց հատակը ծածկող գորգին, նայեց բազմոցին ու տրորեց ձեռքերը։ Փառանձեմը նորից ակամա նիրված զգաց իրեն և, նայելով թագավորի մազմազոտ ձեռքերին, մտածեց, թե նա ինչո՞ւ է հապաղում ասելիքը հայտնելու։

Արշակը զղաց նրա անհանգստությունը և հարցրեց.

— Հիշո՞ւմ ես, Փառանձեմ, մենք խոսեցինք իմ Ավանը կառուցելու մասին։

Փառանձեմը զարմանքից շուրթերը հպեց ավելի։

— Հիշում եմ, արքա,— ասաց և մտածեց, թե ինչո՞ւ համար է այդ հարցը։

— Հիշո՞ւմ ես, երբ պարզեցի քեզ, թե դա լինելու է մոր

ապահովության բերդը— դու համակիր եղար և ասացիր խոսքեր, որ հուզեցին ինձ։

Փառանձեմը լսում էր և կռահել չէր կարողանում, թե ինչու համար է հիշում այդ թագավորը և ի՞նչ նպատակով։

— Իսկ երբ Օլիմպիա թագուհու հետ խոսում էի իմ Ավանի մասին, հանգուցյալը իր շատ բարեմասնություններով հանդերձ, չէր ըմբռնում ինձ, իմ նպատակս ու ցանկանում էր, որ հեռու մնամ ավելորդ հոգսերից, որ լինեմ այնպես, ինչպես բյուզանդական կայսրը, որ բնավ չի մտածում բերդեր ու քաղաքներ կառուցելու մասին, այլ միայն շքեղ հանդեսների... Օլիմպիան հասու չէր մեր աշխարհի վիճակին, նաև իմ վիճակիս։ Իսկ դու, Փառանձեմ, հիշո՞ւմ ես, հասկացար ինձ և... խրախույս եղար ինձ...

Փառանձեմը հիշում էր և այդ. սակայն ինչո՞ւ է թագավորը հիշեցնում անցածը,— մտածում էր նա և ներքին անհանգստությունից ակամա տրորում էր փոքրիկ սպիտակ ձեռքերը, սպասելով նրա բուն ասելիքին։

Եվ Արշակը երկար սպասել չտվեց։

— Այժմ կուզեի, Փառանձեմ, որ օգնես իմ Ավանը կառուցելու,— շարունակեց թագավորը և անսպասելի, բայց քնքշաբար իր աջով բռնեց Փառանձեմի ձեռքը, ինչպես սև մի թռչուն բռնի ճերմակ աղավնի։

Փառանձեմը շառագունեց, բայց չհամարձակվե՞ց, թե անպատշաճ համարեց ձեռքը խլել, ինչպես անցյալ անգամ, և միայն ասաց.

— Իսկ ինչո՞վ կարող եմ օգնել, արքա, ես մի տկար կին։

— Քո համակրանքով, Փառանձեմ, քո... սիրով։

Փառանձեմը գլուխն իջեցրեց. երկար թարթիչները ըստվեր գցեցին այտերին, և նա լռեց։ Իսկ թագավորը շարունակեց.

— Գիտես, անշուշտ, Փառանձեմ, որ իմ սգո քառասունքը լրանում է շուտով և... ավանդական կարգ է թագավորաց՝ վերստին զույգ կազմել...

Թագավորի խոսքի շարունակությունը Փառանձեմը չլսեց. նրա մարմնով մի սարսուռ անցավ. նա ըմբռնեց Արշակի զրույցի իմաստը և զլջաց գալու համար։ Իսկ թագավորը շարունակում էր։ Նա ասում էր, որ այդպես է պահանջում Հա-

յոց Աշխարհի շահը և ինքը, որպես թագավոր հայոց, պարտ է ենթարկվել կարգին ավանդական... Հուսկ ուրեմն նա չի կամենում հեռու արքունիքներում և իշխանական ոստաններում փնտրել հայոց գահի թագուհի...

Արշակն այս ասաց անհարթ ու լռեց մեկեն. նա դժգոհ մնաց, որ չկարողացավ ասելիքը հայտնել այնպես, ինչպես կուզեր և ինչպես պետք էր։ Իսկ Փառանձեմն ավելի սեղմվեց և ոչ միայն աչքերը, գլուխը ևս խոնարհեց. այժմ նա հաղիվ էր լսում թագավորի մնացած խոսքերը, որ արտասանում էր նա՝ ձայնին զարմանալի մեղմություն ու քնքշություն հաղորդած։

— Հուսամ, Փառանձեմ, չես մերժի... քո դժբախտ արքայի թագուհին լինել...

Փառանձեմն անել կացության մեջ զգաց իրեն. ինչպե՞ս խոսել թագավորի հետ, որ իրեն դժբախտ է անվանում, որ... ու կատարվեց անսպասելի մի բան։ Փառանձեմը, ինքն էլ չիմացավ ինչպես, բազմոցից սահելով ծունկի եկավ թագավորի առաջ։

— Ներիր ինձ, արքա,— ասաց կերկեր,— երբեք չէի ցանկանա դժբախտացնել քեզ...

Արշակը ձգվեց զարմանքից.

— Ինչպե՞ս...

— Ինձ, արքա, նզովել է աստված, ուստի չէի ցանկանա, որ կապվելով ինձ, դժբախտանաս և ինքդ։— Փառանձեմի ձայնը բեկվեց ավելի։— Վհուկը գուշակել է, որ ես դժբախտ եմ լինելու կյանքում... ու այդ իսկ պատճառով, ինձ հեռած աղետից հետո, ուխտել եմ հեռանալ մենաստան...

— Այդ ի՞նչ խոհեր են, Փառանձեմ,— Արշակը տեղից ելնելով բռնեց Փառանձեմի թևերը, բարձրացրեց զգուշությամբ, ինչպես փխրուն իրն են բարձրացնում, որ չվնասվի, և կրկին նստեցրեց բազմոցին։— Ավելորդ ցանկություն, Փառանձեմ։ Ինչո՞ւ աստվածային գեղեցկությունդ մաշես մենաստանում։

— Ինչո՞ւ,— կրկնեց Փառանձեմը մեքենաբար։— Վասնզի, արքա, այդ իսկ գեղեցկությունը, ասել է ինձ վհուկը, լինելու է իմ դժբախտությունս։ Նա այդպես էլ ասաց. «Գեղեցկությունդ դառնալու է դժբախտությունդ», ու տվեց խստիվ մի խորհուրդ՝ զույգ չկազմել բնավ։ Սակայն ես զանց առա

Ետրա խոսքը... և դու, արքա, վկա եղար, թե գեղեցկությունս ի՞նչ դժբախտություն բերեց ինձ և իմ Գնելին։

— Ա՛խ, Փառանձեմ։ Դժբախտությունդ անցավ, մոռացիր և գուշակությունը չար վհուկի։ Դու ծնված չես մենաստանում մաշվելու համար։

Արշակը լռեց մի վայրկյան և այս անգամ, Փառանձեմի ձեռքը բռնելով, շարունակեց մեղմաձայն.

— Օգնիր ինձ, Փառանձեմ, և գթա... քանզի ես մենակ եմ և զգում եմ կարիքը մի ջերմ հոգու։ Եվ այդ հոգին դու ես։ Քո ներկայությամբ ես...

Այս խոսքերով Արշակը կրկին ելավ աթոռից և կամեցավ կարծես այժմ ինքը ծունկի գալ Փառանձեմի առաջ, բայց սա անսպասելի վեր թռավ տեղից և, զույգ ձեռքերով երեսը ծածկած, դուրս նետվեց սրահից...

Սենեկապետ Եղնիկը, որ սպասողական ու լարված նստել էր միջանցքում, նկատելով դուրս եկող Փառանձեմին, զարմացած ոտքի կանգնեց և աչքերը թարթելով նայեց նրա հետևից։ Փառանձեմը գնում էր առանց շուրջը նայելու և այնպես փութկոտ, որ Եղնիկը չիմացավ՝ ուղեկցի՞ նրան, թե... Սակայն երևույթն այնքան օտարոտի էր, որ նա չարժվել իսկ չկարողացավ, միայն նայեց նրա հետևից այնքան, մինչև նա անհետացավ։

* * *

Երբ Փառանձեմը թափով մտավ իր հարկաբաժնի առաջին սենյակը, տեսավ հայրը նոր եկել հանվում է նաժիշտի օգնությամբ։ Որքան էլ չանաց թաքցնել հուզումը՝ անկարելի եղավ. հայրը իսկույն նկատեց նրա արտակարգ տեսքը։

— Որտեղի՞ց, դստրիկ, և ինչո՞ւ այդպես այլայլված։

Փառանձեմը չէր կարող իսկույն պատասխանել. նա հնում էր և ձեռքը ինքնաբեր դնում մերթ սրտին, մերթ կամենում էր կարծես ծածկել-թաքցնել երեսը։ Բայց երբ հայրը կրկնեց հարցումը՝ նա ասաց միայն.

— Արքայի մոտից։

Զարմա՞նք...

— Արքայի՞...— Անդոքը ուշադիր նայեց դստեր, ասես

Նրա տեսքից մի բան կռահելու համար ու կրկնեց ակամա՝ Արքայի՞...

— Այո, հայր. փոքր առաջ արքայի սենեկապետը եկավ քեզ հրավիրելու. այստեղ չէիր։ Ես այդպես էլ ասացի։ Սակայն... նա գնալով՝ նորից վերադարձավ և այս անգամ արդեն հրավիրեց ինձ...

— Արքայի՞ մոտ,— չհամբերեց զարմացած Անդոքը։

— Այո, հայր։

— Արքան հավանաբար շտապ ասելիք ուներ ինձ, այո՞։

Փառանձեմը չիմացավ ինչ պատասխաներ։ Եվ Անդոք իշխանը դստեր հապաղումը տեսնելով՝ առաջարկեց անցնել կից սենյակը։ Անցան։

— Այժմ խոսիր, Փառանձեմ։ Ի՞նչ ասաց արքան։

— Արքան, արքան...— կմկմաց Փառանձեմը կրծքի ելևէջով ու հայացքը թաքցնելով։— Արքան, հայր... չեմ իշխում ասել,— և այս անգամ Փառանձեմը ձեռքը տարավ աչքերին։

— Խոսիր, դստրիկս։

— Ոչ, հայր, դժվարին է... Արքան խնդրեց ինձ...

— Խոսի՛ր, խոսի՛ր,— Անդոքը հետաքրքիր բռնեց դստեր թևը։— Խոսիր համարձակ։

— Արքան, հայր,— սկսեց Փառանձեմը այս անգամ ճիգով,— խնդրեց ինձ... լինել... լինել թագուհի...

Խոսքը հազիվ ավարտած՝ նա նորից ձեռքը դրավ աչքերին և սկսեց լալ։

— Թագուհի՞... և դու լալիս ես, դստրիկ։

Իշխանի ձայնի մեջ կար և՛ զարմանք, և՛ հետաքրքրություն, ուստի և ավելի մոտեցավ դստեր ու, ձեռքը նրա ուսին դնելով, հարցրեց.

— Եվ դու ի՞նչ պատասխանեցիր։

— Ես մերժեցի, հայր։

Նոր զարմանք. իշխանի սև հոնքերն ասես ճակատը թռան։

— Մերժեցի՞ր...

— Այո... Գնելից հետո կարելի՞ է միթե...

— Եվ այդպես էլ ասացի՞ր...

— Ո՛չ, հայր։ Ասացի, որ ես անիծված եմ, որ ես...— և Փառանձեմը պատմեց, ինչ ասել էր վհուկի գուշակության

մասին և ապա իր որոշումի մասին, թե, Գնելի մահից հետո հեռանալու է աշխարհից և մտնելու է մենաստան։

— Անմի՛տ, ավելո՛ր խոսքեր,— մռայլվեց իշխանը։— Վհուկները խարդա՛խ են. գուշակությունները նոցա՝ սուտ ու պատիր։

— Ես նույնպես, հայր, խոսքերը նոցա համարում էի պատիր. սակայն գուշակությունը կատարվեց. Գնելը սպանվեց։

— Դա եղավ, ավա՛ղ, և անցավ, Փառանձեմ։ Դու չունես իրավունք աշխարհը թողնելու և մենաստան մտնելու։ Այդպես է ցանկանում հայրդ՝ Սյունյաց Անդոր իշխանը։

— Սակայն, հայր...

Իշխանը սենեակն ու դժգոհ նայեց դստեր։

— Վանիր քեզնից այդ տխուր մտքերը, Փառանձեմ, ու եղիր խելամիտ։ Քո ամուսնությունը Գնելի հետ, այո, եղավ դժբախտ։ Ցավում ենք ամենքս քեզ հետ։ Բայց այժմ, Փառանձեմ, քեզ համար բացվում են երջանկության դռներ, և դու հրաժարվո՞ւմ ես մտնել ներս։

— Հայր, տակավին մխում է սրտիս վերքը և աշխարհն այլևս հրապույր չունի ինձ համար։

— Մխիթարվիր այնուվ, որ դառնալու ես թագուհի։ Հայոց թագուհի, Փառանձեմ։ Խորհի՛ր... Այսպիսի բախտ չի վիճակվում ամենքին, այլ միայն ընտրյալներին։ Քո վհուկը Լղել է ստոր խաբեբա։ Նախանձել է գեղեցկությանդ և կամեցել է թունավորել միտքդ։

— Ո՛չ, հայր, ո՛չ,— գլուխն օրորեց Փառանձեմը։— Այդ վհուկը խաբեբա չէր. նա շոյեց գլուխս և ցավելով ասաց, որ ես պիտի բարձրանամ և ընկնեմ։

— Թո՛ղ այդ, Փառանձեմ։ Արքայի խոսքը մերժել՝ նշանակում է անարգել նորան։

— Բնա՛վ, հայր։ Ես չէի ցանկանա անարգել արքային. ոչ, ես միայն խղճում եմ նորան, որ կորցրեց թագուհուն և մնաց միայնակ։

— Առավել ևս չպետք է մերժես, եթե խղճում ես։

— Սակայն մի՞թե, հայր, վիրավորած չեմ լինի իմ Գնելին...

— Երբե՛ք, Փառանձեմ։ Եթե մերժես թագավորին՝ նշա-

նակում է մերժում ես և իմ հայրական խորհուրդը և իմ ցանկությունը քեզ երջանիկ տեսնելու։ Լսիր, զավակս...

Պատասխանի փոխարեն Փառանձեմը նորից ձեռքերով ծածկեց երեսը և ընկավ բազմոցին, ու փոքր անց հայրը լսեց նրա հեկեկանքը... Անդոք իշխանը արցունք չէր սիրում. նա անմիջապես մոտեցավ դստեր, շոյեց նրա ուսերը և խնդրեց, որ դադարեցնի լացը։

— Թող, Փառանձեմ։ Սիրտը հաճախ վատ խորհրդատու է։ Լսիր բանականությանդ։ Արքան կարող էր թագուհի ընտրել ամեն ազգի արքունիքից, սակայն նախապատիվ է համարել քե՛զ...

Փառանձեմը, հայացքը մի կետի, չէր պատասխանում։ Նա չէր ձևանում աշխարհից ձեռնթափ։ Գնելի մահից հետո աշխարհը խրոք թվում էր նրան չար, անհրապույր, մարդկանց հասարակությունը՝ տհաճ։ Եվ այդ ամենից հետո ամուսնանա՞լ, ո՛չ։ Գնելի պայծառ տեսքից հետո հաճելի չէին նրան Արշակի թուխ, մազմազոտ դեմքը, ձեռքերը... Բայց այս ամենը ասել չէր կարող ու լռում էր։ Իսկ հայրը չգիտեր ինչ անել։

— Ասա, վերջապես, Փառանձեմ, հայրդո՞ւմ ես ծնողիդ, թե ոչ։ Եթե հարգում ես, պետք է կատարել իմ կամքը, այլապես... Պատասխանիր, Փառանձեմ, կամենո՞ւմ ես անարգել մեզ, թե...

Հարցումը նորից կտրուկ էր, ուստի և Փառանձեմը չէր կարող լռել։

— Միայն պատվել, հայր։

— Ուրեմն և պիտի համաձայնես թագավորի առաջարկության։

Փառանձեմը լսեց գլխահակ, լռեց առժամ, ապա ասաց.

— Եթե դու այդպես ես ցանկանում, հայր... Բայց չէ՞ ես մերժել եմ արդեն։

— Այդ թող ինձ, դստրիկ...

* * *

Մինչ Անդոք իշխանի հարկաբաժնում տեղի էր ունենում այս լարված խոսակցությունը, Արշակ թագավորը վշտացած երթևեկում էր նույն սրահում, նույն գունազարդ գորգի վրա։

ներքեմն կարճ, թուխ մորուքի մազերը ձգելով։ Փառանձեմի մերժումն անակնկալ էր նրա համար. նա բնավ չէր սպասում, ուստի ոչ միայն զարմացած էր, այլև ընկճված։ Քանի քառասունքը մոտենում էր իր վախճանին՝ ոչ միայն ուրիշները, նա ինքն ևս (սուգի օրերին որևէ տեղ չգնալով, պալատից անգամ չելնելով և միայն պետական ընթացիկ գործերով զբաղվելով) ազատ ժամերին շարունակ խորհել էր, թե քառասունքից հետո պարտավոր է նորից ամուսնանալ։ Մտածելով նոր թագուհու մասին՝ նրա առջև երևացել էր միշտ Փառանձեմը... և քանի անգամ կամեցել էր խոսել այդ մասին Անդոք իշխանի հետ, բայց և միշտ հետաձգել էր, պահը հարմար չնկատելով։ Այո, նա կամեցել էր խոսել... և չէր կասկածում, որ Անդոք իշխանը կտար իր համաձայնությունը։ Իսկ Փառանձեմը... Ի՞նչ կասեր Փառանձեմը... Արշակը չէր կասկածում նաև նրա համաձայնության վրա. մտահոգում էր միայն այն, թե ինչպես խոսեր Փառանձեմի հետ։ Չէ՞ որ Գնելի հիշատակը տակավին թարմ էր։ Ուստի և, երկար խորհելուց հետո, նա քաջվոք համարեց խոսել նաև Անդոք իշխանի հետ ու կանչեց նրան... Երբ իմացավ բացակայում է՝ ցավեց։ Բայց և այնպես, չկամենալով արդեն հասունացած միտքը նորից թողնել, նա հրավիրեց Փառանձեմին, մտածելով, որ նրա համաձայնությունն առնելուց հետո դյուրին կլիներ խոսել նաև հոր հետ։ Ու Արշակը համոզված էր, որ Փառանձեմը գոհունակությամբ կընդուներ իր խոսքը... Այժմ սակայն զարմացած էր նրա վարմունքից. և, զարմացած լինելով հանդերձ, մտածում էր՝ այժմ խոսի՞ արդյոք Անդոք իշխանի հետ, թե ոչ։ Նա գտնում էր, որ պետք էր խոսել և ասել իշխանին, թե ինքը կամենում էր միայն երջանկացնել նրա Փառանձեմին, վասնզի նա արժանի է, որ իր գժբախտությունից հետո լինի երջանիկ...

Արշակն այս մտածումների մեջ էր, երբ սենեկապետ Եզնիկը, ներս մտնելով, հայտարարեց.— Այունյաց տերը՝ իշխան Անդոք։

— Հրավիրիր։

— Ներիր, արքա, անժամանակ այցս,— ներս գալով սկսեց Անդոք իշխանը՝ փոքր-ինչ հուզված, բայց մեղավոր ձայնով։— Հաճել էիր, արքա, կանչել Փառանձեմին և խոսել

հետը. նա սակայն, առանց երկար խորհելու, հիշելով իր թարմ կորուստը, չի ընդառաջել քո արքայական կամքին։

— Ճշմարիտ է, իշխան։ Ես թերևս խոհեմ չեղա և միտքս չհայտնեցի պատշաճ խոսքերով, գուցեև վիրավորեցի նորա զգացմունքները նվիրական։

— Ոչ, արքա, իմ Փառանձեմը շտապել է իր պատասխանով. նա սխալվել է պարզապես։ Ես զրուցեցի հետը, որ արքային չի կարելի թողնել սուգի մեջ և միայնակ, և... և...

— Եվ նա,— չհամբերեց Արշակը,— համաձայնե՞ց...

Անդոքն սկսել էր հեռվից, բայց երբ թագավորն ընդմիջեց անհամբեր և հարցում արավ ուղղակի, իշխանը չէր կարող չպատասխանել.

— Համաձայնեց...

Արշակն այլևս լսեց իշխանի խոսքի շարունակությունը. առաջ եկավ թափով և գրկեց Անդոքին.

— Շնորհակալություն, իշխան, հոգացողությանդ համար հայրական,— ասաց թեթև շիկնելով։— Ես անշուշտ սխալվեցի, որ նախ չխոսեցի քեզ հետ...

* * *

Ավանդական կարգ էր, այո, որ թագավորն իրավունք չունի այրի մնալու. ուստի քառասունքից մի շաբաթ հետո եղավ նրա ամուսնությունը Փառանձեմի հետ։ Պսակի կարգը կատարեց պալատական քահանան, որին, չգիտես ինչու, կոչում էին Մրջյունիկ։ Հանդեսին եկել էին բոլոր պալատականները իրենց կանանցով, որ զարմացած էին, թե ինչո՞ւ արքան կին չէր առել որևէ թագավորական տնից... Եկել էին և հոգևոր հայրեր, բացի Ներսես կաթողիկոսից, որ հիվա՞նդ էր, թե ձևացել էր այդպես՝ ոչ ոք չգիտեր։

Փառանձեմը, ամուսնանալով հանդերձ, դարձյալ չէր հաշտվում իր վիճակի հետ. Արշակի մաղմաղոտ դեմքը, ձեռքերը հաճելի չեղան նրան երկար ժամանակ։ Իսկ երբ, ամուսնությունից մի քանի ամիս անց, զգաց իր հղիությունը, նա աղոթում էր, որ երեխան հոր նման թուխ ու մազոտ չլինի։ Որքան էլ այդպես, բայց խղճում էր Արշակին, որ մենակ

է, որ մերձավորներ ու բարեկամներ չունի. ու խղճալով սկսեց սիրել նրան...

Մեր այս միջանկյալը շատ կերկարի, եթե հիշատակենք բոլոր անցքերը։ Հիշենք միայն մի քանի կարևոր դեպքեր, թերևս ամենակարևորը դրանցից, և շարունակենք մեր ընդհատված պատմությունը։

Ամուսնությունից մի տարի հետո Փառանձեմն ունեցավ մի արու զավակ, որին և կոչեցին Պապ։ Թագաժառանգի ծնունդը եղավ ամառը և այնքան ուրախացրեց Արշակին, որ նա առավել մեծ եռանդով ձեռնամուխ եկավ Ավանի կառուցման աշխատանքներին, որ թուլացել էր և մասամբ մոռացության էր տվել Գնելի սպանության և Օլիմպիա թագուհու մահվան պատճառով։ Բացի այն, որ Արշակը հազարապետի միջոցով արքունի բոլոր շեներից, հատուկ հրամանով, ատհեստավորներ ու գործավորներ էր հանել Ավանի կառուցման համար և միևնույն ժամանակ պատրաստվում էր սուրհանդակների միջոցով հիշեցնել նախարարներին իրենց խոստումը՝ «սատար լինել կառուցման իրենց մարդերով ու ծառաներով», լիահույս էր, թե այս անգամ չեն հրաժարվի իրենց խոստումից և ամեն ինչ կընթանա ցանկացածի համաձայն։ Մերժումի դեպքում, որքան էլ դրան դեմ էին սպարապետն ու հազարապետը, Արշակը մտադիր էր խստորեն պատժել նրանց, բայց մինչև կպարզեր մի բան՝ բռնկեց պարսից պատերազմը Բյուզանդիայի դեմ։ Սա արդեն ավելի բան խանգարեց Ավանի գործը, և նրա շինարարությունը գրեթե կանգ առավ, մանավանդ, որ Արշակը լսել էր, թե Շապուհը կայսրից պահանջում է Միջագետքը, պահանջում է հրաժարվել Հայաստանին օգնելու պայմանագրից։ Այս պարագան բնականաբար այնքան անհանգստացրեց Արշակին, որ նա ստիպվեց զորաժողով անել և սպասել, հարկը պահանջած դեպքում, իր սահմանները պաշտպանելու։ Եվ պարս-բյուզանդական այս պատերազմը տևեց տարիներ. ոմանց ասելով՝ տասը, մյուսների ասելով՝ տասներկու-տասներեք տարի, այնքա՛ն երկար, որ իրար հետևից այդ կռիվների մեջ ընկան բյուզանդական երկու՝ Կոստանդ և Հուլիանոս կայսրերը. և այդ ամբողջ ժամանակ պարսից ներխուժման վտանգը կախված

էր Հայոց Աշխարհի գլխին, ուստի և Ավանով զբաղվելու համար չկար ո՛չ ժամանակ, և ո՛չ միջոց։

Այս խառը դեպքերի և հոգսերի միջոցին, երբ Արշակը գտնվում էր մայրաքաղաքից հեռու, Կավաշում միևնույն ծերունի թագավորահայրը՝ նզովելով աշխարհը և իր թշնամիներին։

Ծանր էր Արշակ թագավորի վիճակը։ Հայաստանը գտնվում էր երկու հզոր գիշատիչ թշնամիների միջև ու հաճախ դառնում էր կռվող կողմերի ոտի կոխան։ Այս պայմաններում ի՞նչ կարող էր անել հայոց թագավորը. կանգնե՞ր կռվողներից մեկի կողմը, թե ասեր. «Դուք կռվեցեք իմ հողի վրա՝ ես կմընամ չեզոք»... Երկու դեպքումն էլ նա զգում էր, որ Հայոց աշխարհը ոչինչ չէր շահի, ուստի և նա գերադաս համարեց առերևույթ պահպանել չեզոքություն, քանի նրանք հեռու էին իր սահմաններից... Բայց, հակված լինելով Բյուզանդիայի կողմը, ծածուկ պարենավորում էր բյուզանդական բանակը և իր զորքը պահում պատրաստ՝ իր սահմանների վրա։ Ի դեպ. այս պատերազմին էր, որ Արշակը իր աներոջը՝ Անդոք իշխանին, որպես փորձ մարդու, նշանակեց Տիգրանակերտի կառավարիչ՝ Հայաստանի հարավային սահմանները ներխուժումից պաշտպանելու, և Անդոքը, չեզոքություն պահպանելու համար, մերժեց Շապուհին ապաստան տալ հայոց քաղաքում, երբ նա մեծաքանակ զորքով գնում էր Բյուզանդիայի դեմ... Բայց հետո քինախնդիր Շապուհը, իր հաղթական դարձին, ավերեց հայոց հին մայրաքաղաքը, կողոպտելով նրա գանձերը։ Սակայն անպատիժ չմնաց։ Տարիներ անց Անդոքն իր վրեժն առավ նրանից՝ իր հեծելազնդով սրարշավ պարսից մայրաքաղաք Տիզբոնը մտնելով և Շապուհի պալատը քանդելով։

Այս ի միջի այլոց։

Հայաստանին հարևան այս երկու մեծ պետությունների պատերազմը, որ տևեց տարիներ, մեծ հոգսեր պատճառեց Հայոց Աշխարհին։ Երկար կլիներ մանր պատմել այդ պատերազմը, որին ակամա պիտի մասնակցեին հայերը... Որպեսզի հայոց երկիրը չդառնա կռվող կողմերի ռազմաբեմ, Արշակը կարողացավ միայն ավերիչ պատերազմը հեռու պահել իր երկրից, բյուզանդական կայսեր համոզելով, որ հայոց լեռ-

ներն ու կիրճերը նպաստավոր չեն լինի բյուզանդական զորքերի ռազմական գործողությունների համար։ Եվ պատերազմը եղավ Միջագետքում, հայոց հարավային սահմանների մոտ։ Բայց դրանով չէր վերանում ներխուժման վտանգը, և Արշակը այս բոլոր դեպքերի մեջ չէր մոռանում իր Ավանը, այժմ նա ավելի էր զգում ամուր բերդերի կարիքը, չէր մոռանում նախարարների բերդերը և հաճախ մտածում էր, թե երբ պիտի անցնեն խանգարիչ հանգամանքները, որպեսզի կարողանա վերսկսել իր Ավանի և իր բերդի շինությունը։

Եվ նա դրանով զբաղվելու հնար ունեցավ միայն այն ժամանակ, երբ վերջացավ տարիներ տևող պատերազմը։ Արշակը Ավանի շինության ձեռնամուխ եղավ արտակարգ մոլեգնությամբ... Ի՞նչն էր պատճառը. ոմանք պնդում էին դարձյալ, թե փառասիրությունը, բայց ոչ. ավելի շուտ այն, որ այժմ ավելի, քան երբևէ զգում էր, թե պարսից ներխուժման ճանապարհի վրա պետք է ունենալ բազմամարդ բնակավայր, մի ամրակուռ բերդ, որ գոնե արևելքից պաշտպաներ երկիրը։ Քանի արտաքին վտանգ չկար և քանի խաղաղ էին հարևանները, Արշակը կամենում էր ավարտել Ավանը և ամրացնել այն հաստաբետ պարիսպներով... Ու կանչելով վորրազ իշխանին՝ հրամայեց վերսկսել քաղաքի ընդհատված շինարարությունը։

— Այս պատերազմին, իշխան, բարերախտաբար ստիպեցինք սակավ։ Բայց քինախնդիր Շապուհը դժգոհ է, որ մենք չօգնեցինք իրեն (հիմարը միայն կարող է օգնել իր թշնամուն). ուստի և կցանկանա անշուշտ վրեժխնդիր լինել։ Իսկ Բյուզանդիայից օգնություն չենք կարող ակնկալել, որքան էլ նա ձևանա բարեկամ։ Բարեկամությունը երբեք տևական չի լինում... Պետք է կառուցենք մեր բերդը...

— Հրամանդ, արքա. սակայն վարպե՞տ, գործավո՞ր...

Եվ Արշակը նորից կարգադրեց արդեն ծերացած հազարապետ Գնունուն՝ արքունի շեներից մարդաժողով անել Ավան ուղարկելու։ Բայց լավ իմանալով, որ դա չի լրացնի կարիքը՝ նա միաժամանակ հրահանգեց, որ հազարապետը հատուկ գրությամբ հիշեցնի նախարարներին իրենց հին խոստումը՝ Ավանին գործավորներ տալու, ըստ որում այդ հիշեցումը

գրվեց այնպես, որ անտեսվում էր նրանց տարիներ առաջ հղած մերժողական գրությունը...

Արքունի շեները, բնականաբար, լռելյայն ենթարկվեցին. հրամանի ուժով այդ տեղերից տարան այնքան մարդ, որքան ցանկացան։ Բայց անցան շաբաթներ, նախարարների մեծ մասից չեկավ ո՛չ մարդ, ո՛չ պատասխան։

Արշակը զայրացավ և հիշեցրեց երկրորդ անգամ։

Դարձյալ նույնը. ո՛չ մարդ, ո՛չ պատասխան։

Այդ ժամանակ Արշակի բարկությունը բորբոքվեց։ Նա զայրանում էր արդեն ոչ միայն նախարարների դեմ, այլև իր դեմ, որ այսքան ժամանակ չի կարողանում գտնել մի զորավոր միջոց խոստումնազանցներին կարգի հրավիրելու կամ ընկճելու, ուստի և նորից կամեցավ գործադրել այն, ինչ մտադրել էր տարիներ առաջ.— անմիջապես զորք ուղարկել նախարարների համառությունը պատժելու, բայց Դավիթ Գնունին, Վասակ սպարապետը և Փառանձեմը ընդդիմացան դարձյալ.

— Հարկ չկա, արքա։ Դա կուրախացնի Շապուհին։ Պետք է լեղու ցանել և ամենը անել համոզելով։

— Ոչ, հարկ է լինել խիստ, որ սթափվեն նորա և ըմբռնեն Հայոց Աշխարհի շահը,— պնդեց Արշակը։— Ով ոչ լուիցն ունկամբ լուիցի թիկամբ։

Պնդեց, բայց ցիջեց։

— Բարի, չեմ հղի զորք, բայց կանեմ այն, ինչ պետանի են։

Հազարապետը հարցական նայեց թագավորին։

— Ցուցեցին մարդեր տալ կամավ, կտան տիկամա,— ասաց նա։— Այո, մարդերը այժմ կգան նոցա կամքին հակառակ...

Դա թվաց ասեղծվածի պես բան. հազարապետն ու թագուհին ցանկացան հարցնել, թե ի՞նչ է նշանակում այդ, բայց Արշակն անցավ իր առանձնարանը և նույն օրը երեկոյան, կանչելով արքայադպիր Եզրին, թելադրեց հետևյալը.

«Արշակ թագավորը ողջունում է Հայոց Աշխարհի մեծին ու փոքրին և հայտնում ի լուր ամենքի, որ իր թագավորության Գ. տարում Կոգի հովտում հիմք է դրել

մի Ավանի, և արդ կոչ է ուղղում ամենքին Հայոց Աշխարհի ժողովրդյան, որ այն ծառաները, ովքեր կամենում են լինել ազատ՝ թող գան նոր Ավանը։

Եվ ով կգա նոր Ավանը և կկամենա շենացնել այն՝ նա կունենա բնակություն և օթևան. նա կստանա նաև իրավունք՝ ապրել առանց հարկի ու տուրքի։

Արքունի Ավանը կարող է գալ ամեն ոք, ով դժգոհ է տիրոջից և ով կամենում է լինել ազատ։ Ով հալածվում է և չի գտանում ապահով ապաստան՝ թող գա Ավանը արքունի, և նա կազատվի դատից ու դատաստանից։ Նմանապես նա, ով պարտք ունի մեկին և չի կարող վճարել՝ թող գա Դաստակերտը արքունի և ապահով լինի, որ նորա վրա չի լինի դատ ու դատաստան։

Արշակ Բ՝ թագավոր հայոց»։

Երբ սա պատրաստ եղավ՝ Արշակը հրամայեց բազմացնել այն և, արքայական կնիքով դրոշմած, ուղարկել նախարարություններին։

Ու մի քանի օր հետո հրովարտակը, արագընթաց սուրհանդակների միջոցով, ուղարկվեց Այրարատ նահանգի բոլոր գավառները... Ի դեպ. սուրհանդակներին հրահանգված էր հրովարտակը կարդալ բոլոր եկեղեցիներում ու հրապարակներում, ժողովրդի խմբված ժամերին։

Ուղարկելով այս հրովարտակները՝ Արշակը մերթ հրճվում էր, թե մարդիկ՝ նախարարների ծառաները, լսելով արքայական խոստումները, կլքեն տերերին և կգան իր Ավանը և ինքը այդպիսով կպատժի նախարարների համառությունը. նրանք կզղջան և ներողամտություն կհայցեն... Մերթ էլ նրա ինքնագոհությունը տեղի էր տալիս կասկածի, մի խոր կասկածի, որ ակամա մռայլում էր նրան.— իսկ եթե գալ չկամենա՞ և ոչ մի ծառա, ոչ մի անազատ... կամ արգելե՞ն տերերը... Այն ժամանա՞կ... Ի՞նչ պետք է անել այն ժամանակ։

Ու ամենից ավելի Արշակը սպասումների, իրար փոխարինող հույսերի ու կասկածների մեջ էր, և դա թերևս տևեր երկար, եթե շուտով մայրաքաղաք չգար կառուցվող Ավանի շահապ Վարազ Գնունին։ Նկավ նա գրեթե տագնապած։

— Արքա, ես ծանր կացության մեջ եմ. չունեմ ո՛չ կա-

ցարան և ո՛չ սնունդ, մանավանդ սնունդ... ինչպե՞ս անել...

Արշակը, նայելով նրա հուզված մորուքին, հետաքրքրվեց, թե ի՞նչ է պատահել արդյոք... Նա կռահում էր ինչ-որ ադետ, բայց շահապի պատմածից պարզվեց, որ խմբերով փախստականներ են գալիս Ավան, և այնքան շատ, որ ինքը հնար չունի նրանց բնակեցնելու և կերակրելու... Ի՞նչ պետք է անել...

— Այլևս մի մտահոգիր, իշխան. արքունի համբարները բաց են առջևդ. տար, կերակրիր, վրաններ զարկիր և կառուցիր, կառուցիր...

Արշակի կասկածները չքացան. այժմ նա ցնծության մեջ էր. հիմա կարագանա Ավանի կառուցումը, հիմա կփշրվեն նախարարների հպարտության եղջյուրները, և կգան նոքա ներողամտություն հայցելու։

Բայց աշխարհում ոչ մի ուրախություն հավիտենական չէ։ Երկար չտևեց և Արշակի ուրախությունը։ Զանցավ մի քանի ամիս՝ և ահա մի օր արքայադպիր Եզրը, այծի մորուքը դողացնելով, Արշակին բերեց մի ոլորած մագաղաթ։

— Նախարարներից նամակ, արքա։

— Նախարարների՞ց...— Արշակին թվաց, որ դա անշուշտ զղջումի նամակ է և գլխով նշան արավ դպիրին, որ ընթերցի։

— Ինձ, արքա, դժվարին է... ընթերցել,— ասաց դպիրը շփոթված։

Արշակը զարմացած նայեց Եզրի երեսը։

— Տկա՞ր ես միթե։

Դպիրը տատանվեց անհամարձակ.

— Ոչ, արքա։ Գրված է... հույժ անվայել։

Այդ ժամանակ Արշակը, նամակն առնելով, սկսեց կարդալ ինքը։

Նա կարդում էր և նրա թուխ ու թավ հոնքերը մերթ բարձրանում էին, մերթ սեղմվում հոնքամիջում, իսկ երբ վերջացրեց՝ քմծիծաղը ծամածռեց նրա դեմքը։

— Բողոքո՞ւմ են... Դժգոհո՞ւմ... և թող բողոքին ու դժգոհեն որքան կամենան...

Իսկ նամակում ահա ինչ էր գրված.

«Հայոց նախարարները ողջունում են Արշակ թագավորին։

Տեր արքա.

Քո հրավերը, որ շինականք ու ծառայք դան հիմնածդ Արշակավան քաղաքը՝ ազատ, արտոնյալ ապրելու, ժողովրդյան մեջ հարուցել է մեծ գայթակղություն, և ահա ամեն անբարեհույս՝ գող, պարտազանց, ավարառու և պարտապան, ամուսնաթող և պոռնիկ, միով բանիվ՝ ամեն արատի մարդիկ փախչում ապաստանում են Արշակավան, ոմանք ընտանյոք, լքելով գործը և պարտքդ յուրյանց։

Արդ մենք՝ նախարարներս ստորագրողք, հանուն արդարության և օրենքի, հանուն կարգի և իրավունքի՝ բողոքում ենք հրավերիդ դեմ. հրավեր, որ խրախուսում է հանցագործությունը և խախտում մեր աշխարհի կարգը ավանդական։

Վերացրու, արքա, հրավերը քո. փակիր գայթակղության դուռը և մի հարկադրիր մեզ լինել ծառս ստամբակ և ամբարիշտ։

Արծրունյաց տեր՝ Մեռուժան
Տարոնի Մամիկոնեից տեր՝ Վահան
Արշարունիքի և Շիրակի տեր՝ Կամսարական Ներսեհ
Բասենից իշխան՝ Մանեհ
Վահևունյաց տեր՝ Վահե»...

Այնուհետև ստորագրել էին ավելի փոքր նախարարներ։

Արշակը կարդաց նորից և երբ հազարապետ Գնունին ներս եկավ, նամակը մեկնեց նրան, կամենալով իմանալ նրա կարծիքը։

— Ի՞նչ ես խորհում, տեր հազարապետ,— հարցրեց, երբ Գնունին ավարտեց ընթերցումը։— Եթե նախարարների փախչողները գողեր և հանցագործներ են՝ տերերը պիտի ուրախանա՞ն, թե տխրեն...

— Ակնարև է, արքա,— ասաց ծերունին,— գոհ պիտի լինեն, անշուշտ, որ ազատվում են նոցանից, ուստի և ընծաներ ու շնորհակալիք պիտի հղեն քեզ և ոչ թե գիր դժգոհության։

— Այո,— ասաց Արշակը և սկսեց ծիծաղել այնպես, որ հազարապետը երբեք չէր լսել թագավորից։ Այդ ծիծաղը նրան թվաց ոչ միայն հաղթանակի ծիծաղ, այլև չարախինդ ու վրեժխնդիր ծիծաղ...

Այս ամենը կատարվեց այն ժամանակ, երբ թագաժառանգ Պապը տասնհինգ տարեկան էր։ Իսկ երբ նա դարձավ տասնվեց տարեկան պատանի, Անդոք իշխանը նրան տարավ Բյուզանդիոն, որպեսզի, ինչպես ինքն էր ասում, ստանա թագաժառանգին վայել կրթություն։ Տարավ ասելով, թե Պապը ի՞նչ կարող է սովորել պարսկամետ Հայր-Մարդպետից կամ պալատի քահանա Մրջյունիկից, որ իսպառ անիրազեկ է հունաց կարևոր դպրությանց... Մի քանի պալատականներ իրենց հեծյալ թիկնապահներով ուղեկից եղան թագաժառանգին մինչև Եփրատ։ Վերադարձին նրանք պատմեցին, որ այդ կողմերի նախարարական կալվածքներով անցնելիս՝ նրկատեցին տերերի դժգոհ տրամադրություն։

— Նախարարք մեր երթին նայում էին դժկամ,— պատմում էր Եզր դպիրը։— Իմանալով ով է անցնում՝ ո՛չ եկան ընդառաջ, ո՛չ ուղեկից եղան գեթ մի կարճ տարածություն։ Բացառություն եղան Զյունական և Հավնունի իշխանները...

Արշակը կարևորություն չտվեց դրան. դժգոհ են, թող այդպես էլ մնան... Նա ուրախ էր, որ որդին մեկնեց տիեզերական մայրաքաղաքում ուսանելու։ Մյուս կողմից՝ նրա հայրական սիրտը գոհ էր, որ գահը ժառանգ ունի, ուստի և խորհում էր, որ պետք է ջանա ամեն կերպ որդուն փոխանցել մի բարեկարգ ու ապահով երկիր... Եվ ուրախ էր, որ Ավանի կառուցումն այժմ կընթանա արագ և մի երկու տարուց կմոտենա իր ավարտին։ Ուրախ էր նաև, որ իր Ավանը, տակավին չավարտած, լցվում է բնակիչներով, որ եկել ու գալիս են ամեն կողմից։ Արշակն ուրախ էր մանավանդ, որ իր Ավանը օրըստօրե ձև ու մարմին է առնում մեծ թափով

— Այս Ավանի, այս բերդի կառուցումը, Փառանձեմ,— ասաց Արշակը մի օր,— մեզ կբերի ներքին և արտաքին ապահովություն, որից հետո ես կմիացնեմ նախարարներին ներհակ և Հայոց Աշխարհը կամրանա հավետ։

Այս դեպքերն էին ահա, որ անցել-դարձել էին մինչև նախարարների միաժողովը Կամսարականի ապարանքում։

Այժմ հետևենք իշխան Կամսարականին՝ տեսնելու, թե ո՞ւր է գնում և ի՞նչ է անում...

ԳԼՈՒԽ ՍՈՒԱՋԻՆ

Գառնի...

Զով պաղպաջուն կեսօր էր. զգացվում էր թարմ, կազդուրիչ օդ, որը չգիտես լեռների՞ց էր իջնում, Ազատ գետի հոսա՞նքն էր բերում իր հետ, թե դա երկնի ջինջ կապույտից էր, որ տարածվում էր վեր խոյացած, տեղ-տեղ սեպացած լեռների գլխին, որպես մի նուրբ, թավշյա վրանատանիք։

Արեգունի սարալանջին, այնտեղ, ուր պարսպավոր վանքն էր իր հարակից շենքերով, պարսպից դուրս, վանքից վեր կանաչների մեջ երևում էին սևազգեստ մարդիկ, որ մենավոր կամ զույգ-զույգ շրջում էին գլուխները կախ ու դանդաղ, ասես աղոթք էին մրմնջում բնության գրկում։ Դրանք վանքի միաբանության երիտասարդ անդամներն էին, որ դուրս էին եկել գարնան նորելուկ բանջարներ քաղելու։

— Ես քաղում եմ ոչ ինձ համար, այլ հայր Բարնաբասի, որ սիրում է բանջարը վայելել յուղով և հավկիթով,— ասում էր մի բարակ ու երկար աբեղա՝ իր կարճ ու կլոր նորամորուս ընկերոջը։

— Իսկ ես, աբեղա եղբայր, մառանապետ հոր համար. նա ևս սիրում է բանջար և պատվիրել է քաղել առատաբար... Ահավասիկ. գտա...

Այս ասելով՝ կարճ աբեղան, պարեգոտի փեշերը բարձրացնելով, կռացավ մասրի թփի մոտ և բրիչով հանեց բանջարը իր արմատով. և այն ժամանակ ահա, երբ նա բույսը գցում էր պարկը, նկատեց, որ ձորից՝ ճանապարհի զառիվեր-

ռով, բարձրանում է մի մեծ ասպախումբ՝ տեգերով, նիզակներով զինված։

— Ահավոր տեսիլ,— շշնջաց նա ահաբեկ և կծկվեց թփի հետև։— Ասպատա՛կ...

Իսկ երկար աբեղան իր հերթին նայելով եկողներին, նույնպես կռացավ և նույնպես խոսեց վախաշշուկ.

— Ճշմարտապես՝ ասպատակ... Պետք է հաղորդել վանահորը։

Ու էլ չսպասելով ընկերոջ խորհրդին՝ կուզեկուզ նետվեց դեպի վանքը, որի բակում այդ պահին խմբված էին մի քանի վարդապետներ ու աբեղաներ՝ բոլորը միատեսակ երկար, սև զգեստներով, բոլորը երկարամազ գլուխներին սև սուր գլխարկներ, որոնք թույլ կտորից լինելով՝ ծալծլվել էին այս-այն կողմ։ Նկատելով հևասպառ վազող աբեղային՝ նրանցից մեկը հարցրեց.

— Ո՞ւր, աբեղա։ Պատահե՞լ է ինչ...

— Արշավա՛նք, ասպատա՛կ,— կրկնեց աբեղան և, առանց կանգ առնելու, նետվեց դեպի վանահոր խուցը։

— Վանահայր սուրբ, ասպատակ է գալիս,— ճչաց նա ծունկի գալով։

— Ասպատա՞կ,— վեր թռավ ընթերցումով զբաղված վանահայրը։

— Այո, զինավառ մարդոց մի խումբ։

— Բայց գուցե զո՞րք է հայրենի։

— Անհայտ է, վանահայր սուրբ...

Վանահայրը, որ հիսունը թևակոխած մարդ էր՝ վայելուչ աղսւպղպեղ մորուքով, գլուխն օրորեց.

— Զգո՛ւյշ, աբեղա։ Գնա ստուգիր և ճշտիվ լուր բեր ինձ, և այնպես, որ իզուր չտագնապենք Վեհին...

Երբ աբեղան շփոթված գնաց իր մեծի պատվերը կատարելու՝ վանահայրը, անհանգիստ երթևեկելով նեղ խցում, սպասեց աբեղային, որպեսզի ստուգված լուր տանի կաթողիկոսին, որն այդ պահին գտնվում էր վանքից ու խուցերից ոչ հեռու մի շենքի մեջ։ Ներսեսը, որ, ըստ սովորության, գարունը բացվելուն պես շրջում էր վանքերը՝ սրանց միաբանությունների կյանքին ծանոթանալու, տասը օր առաջ եկել էր Գառնի իր երկու դպիրների՝ Փավստոսի և Ապոստոսի հետ.

եկել էր ոչ թե հանգիստ առնելու կամ զով ապրելու, ինչպես անում էր ամառը, այլ միաբանությանը խրատելու. որովհետև նրան լուրեր էին հասել, թե վանքի միաբանները իրենց պահում են ոչ արժանավայել, որի հետևանքով շինականները խորշում են թե՛ հոգևորականներից և թե՛ վանքից։ Վերջերս հոգևորների հարկահավաքից և վատ վերաբերումից երկրում երևացել էին դժգոհ մարդիկ, որ լքում էին վանքապատկան հողերը և հեռանում այլ շեներ կամ գնում անտառները և միանում այն աղանդավորներին, որ իրենց կոչում էին մեսաղյաններ ու բորբորիտներ... Գառնիի վանքի շուրջն էլ լինում էր նույնը. ուստի և Ներսեսը, որպես հոգևոր պետ, եկել էր պարզելու, թե ինչե՛ր են կատարվում գավառում, և միաբանությանը ներշնչելու, ինչ անհրաժեշտ էր։ Ու արդեն իսկ մի քանի անգամ զրուցել էր վանահոր և միաբանության հետ, թե ինչպիսի կենցաղով պիտի ապրեն հոգևոր հայրերը, որ ժողովուրդը տարբերություն չտեսնի նրանց կյանքի ու քարոզի մեջ։ Միևնույն ժամանակ նա խորհուրդ էր տվել վանահորը, որ սա բանիբուն վարդապետներ ուղարկի փախած շինականներին խոսելու, վասնզի եղել են դեպքեր, երբ ամբողջ մի շեն, վանական տուրքերից ու պահանջներից հոգնած, հեռացել էր և շատ գյուղեր այլևս չէին կամենում լսել Քրիստոսի անունից խոսող վարդապետներին... Այս ամենը նկատ առնելով՝ քահանայապետը ներշնչում և հրահանգում էր վանահորը, թե վանականը պետք է լինի «կարի բանիմաց ու խելացի, զի նոքա կոչված են կառավարելու երկիրը և խելքիմաստություն սովրեցնելու մարդկանց՝ շինականներից մինչև իշխաններից, իշխաններից մինչև թագավորը»... Այսօր էլ նա իր զով օթևանում ճերմակող գլուխը բաց, ճերմակած մորուքը կրծքին՝ զրուցում էր մի եպիսկոպոսի հետ, երբ ներս մտավ վանահայրը և հայտնեց խոնարհումով.

— Ժամանել է մեծ իշխան Կամսարականը և Վեհիդ տեսությունն է խնդրում։

Լսելով հարուստ կալվածների տեր, մեծազդեցիկ իշխանի գալուստը՝ Ներսեսը շտկվեց նստած տեղում, տարակուսով նայեց վանահորն ու զրուցակից եպիսկոպոսին։

— Ի՞նչը կարող էր գոռոզ Կամսարականին բերել ինձ մոտ,— զարմացավ նա։

— Կամենում է գուցե եկեղեցի կառուցել իր կալվածնե-
րում. եկել է հավանաբար ցուցումներ խնդրելու,— ենթադրեց
վանահայրը։

— Հազիվ, սրբազան հայր։ Հազի՛վ։ Նա բարեպաշտ չէ
այնքան,— գլուխը թեթևակի տարուբերեց Ներսեսը։— Երկու
տարի առաջ, երբ Շիրակի եպիսկոպոսը խնդրում է՝ «Ցուրա-
քանչյուր շենում կառուցել մի աղոթատուն», իշխանը մեր-
ժում է. «Թող մի շենի բնակիչները գնան հարևան շենի աղո-
թատունը»,— պատասխանում է և նույնհետայն ավելաց-
նում. «Շինականը անասուն է՝ կարող է ապրել և առանց
աղոթքի»...— Ներսեսը տնքաց սրտախոր և ասաց, կարծես
ինքն իրեն հարցում անելով։— Ի՞նչն է արդյոք նրան բերել
առ ինձ... Հրավիրիր, վանահայր տեր։

Փոքր անց ներս մտավ իշխան Կամսարականը կարճ կա-
պա հագած, առանց ճանապարհի թիկնոցի և, ինչպես ըն-
դունված էր կաթողիկոսին ներկայանալիս, գլխաբաց ու
առանց թրի։ Նրա խոշոր մարմինը մեկեն ծածկեց դռոը և
մթնեցրեց սենյակը։ Առաջ գալով՝ նա ոչ թե խոնարհվեց եր-
կուտակվելով, ինչպես անում էին ուրիշները, այլ իջեցրեց
միայն գլուխը։

— Փա՛ռք տերն մերո Հիսուս Քրիստոսի։

— Հավիտյանս հավիտենից։

Ապա մոտենալով՝ իշխանն ընդունված կարգի համա-
ձայն, առավ կաթողիկոսի աջը.

— Օրհնի՛ր, քահանայապետ։

— Եվ թող հար հավիտյան օրհնված լինի մեծ տունը
Կամսարականաց և գերդաստանը քո, սիրելիդ իմ իշխան,—
և կաթողիկոսը աջը բարձրացնելով խաչակնքեց օդը։

Երբ իշխանը նստեց, փայտե բազկաթոռը ճռնչաց նրա
ծանր մարմնի տակ, և Ներսեսը չիմացավ ա՞յդ էր պատճառը,
որ իշխանը մոայլվեց, թե վանահոր և զրուցակից եպիսկոպո-
սի ներկայությունը հաճո չեղավ նրան, ուստի բարվոք հա-
մարեց ասել.

— Մենք այդ խնդրո մասին կխորհենք հետո, հայր սրբա-
զան։ Այժմ զրուցեմ իշխանիս հետ։

Զրուցակից եպիսկոպոսը և վանահայրը հասկացան, որ
կաթողիկոսը ցանկանում է մենակ լինել իշխանի հետ. և երբ

նրանք խոնարհումներով դուրս եկան, Ներսեսը դիմեց իշխանին բարեժպիտ.

— Մեծահույս եմ՝ անվնաս ես գերդաստանիվ, իշխան սիրելի, և աստծո բարությունը չի լքել քեզ։

Իշխանը ոչ թե պատասխանեց, այլ մռնչաց.

— Լքե՛լ է, տեր հոգևոր, լքե՛լ է,— ասաց նա պնչերի աղմուկով շնչելով, որից ուսերը բարձրացան նկատելի։

Կաթողիկոսը իր խոշոր թափանցող աչքերը հառեց իշխանի երեսը՝ մի այնպիսի զարմացական ու հարցական նայվածքով, որին իշխանը պատասխանեց անմիջապես.

— Լքել է, այո՛, հայր վեհափառ, և մատնել մեզ Արշակ թագավորի չարության ու խարդավանքին։

Ներսեսը աչքերը կծկեց ակամա և լարվեց։

— Ես իսպառ անիրազեկ եմ, իշխան,— ասաց նա պարզ տարակուսով։— Ի՞նչ չարություն և ի՞նչ խարդավանք։

Իշխանը կրկին տնքաց և շունչ առավ հևալով։

— Մի՞թե Վեհդ անտեղյակ է Արշակավանի հիմնադրումին։

— Լիովին տեղյակ եմ, իշխան։

— Եվ անշուշտ թագավորի արձակած հրովարտակների՞ն։

— Որոնցով նա ազատություն է խոստանում տերերից փախած մարդոց,— ընդմիջեց կաթողիկոսը։

— Ոչ միայն խոստանում, այլև սովորեցնում է տիրանենգություն և տիրասպանություն։

Ներսեսը վախեցած թարթեց աչքերը.

— Թագավո՞ր...

— Այո, Արշակ թագավորն ինքը,— և իշխանը երրորդ անգամ տնքաց ամբողջ կրծքովը մեկ։

— Դու չե՞ս մեղանչում, տեր Կամսարական։

— Բնա՛վ, հայր հոգևոր։

— Պատմիր, իշխան։ Ամսից ավելի ես շրջում եմ վանքերը և հեռու եմ Վաղարշապատից։ Զրուցիր։

— Ժամանել եմ այդ իսկ նպատակով, տեր հոգևոր։ Ժամանել եմ ասելու ամենը, ինչ ծանրացել է սրտիս։ Բոլոր նախարարաց սրտերին։

Եվ Կամսարականը հուզված պատմեց վերջին օրերի դեպ-

քերը՝ իշխանների վրդովանքը թագավորի հրովարտակի առթիվ, պատմեց փախած շինականների մասին, թե թագավորից խաբված լքում են օրինական տերերին և գաղտագողի գնում Արշակավան. պատմեց և վերջին դեպքը, թե ինչպես շինականները իրենց փախուստի ճանապարհին սպանել էին իր փեսային՝ Համունի Դավիթ իշխանին, որին թաղելուց հետո ահա եկել է քահանայապետի մոտ։

— Շինականները սպանե՞լ են Համունի իշխանին,— զարմացավ Ներսեսը։— Ինչպիսի՜ ոճիր։

— Այո, տեր հոգևոր, այդպես...

Երբ Կամսարականը վշտացած ասաց, թե թագավորը կամենում է նախարարներին դարձնել հասարակ հպատակներ և գուցե զինվորներ շնչին, կաթողիկոսը հարցրեց.

— Մի՞թե, իշխան, եթե ամենքդ կատարեք ձեր պարտքը թագավորի հանդեպ, կարո՞ղ է լինել նա խիստ։

— Իսկ ինքը, քահանայապետ, թագավորը կատարո՞ւմ է իր պարտքը մեր հանդեպ։ Ո՛չ երբեք։ Նա կամենում է տկարացնել մեզ, ոչնչացնել մեզ, որպեսզի տեր դառնա մեր հողերին, մեր մարդերին, մեր բերդերին։ Ու այս գործերում վատարի նորան աջակից է անշուշտ իր անները՝ Սյունյաց Անդոքը և Վասակը գուցե։ Այս է ցանկանում արքան, տեր հոգևոր։

— Խորհում եմ, իշխան, որ արքան չի լինի այդչափ դաժան։

— Այդպես է սակայն։ Ահավասիկ։ Նա պահանջեց ինձանից Արտագերս և Կապույտ բերդերը՝ ես հոժար չեղա. զի չէի կարող կալվածներս թողնել անպաշտպան։ Առանց բերդերի՝ ես չեմ խորհում իմ կյանքը և տոհմիս գոյությունը։ Իսկ Արշակ թագավորը կամենում է ընկճել ինձ և սեփականել բերդերս...

Այս խոսքերի հետ Կամսարականը մատով լայնացրեց օձիքը, շունչ առավ մի փոքր և շարունակեց այնպես, ինչպես թարմ վիրավորանք ստացած մեկը.

— Քաղաք է հիմնել իր փառասիրության համար և հրովարտակով ազատ կյանք է խոստանում ամենքին, ովքեր կգան այնտեղ աշխատելու և ապրելու։ Սո՛ւտ է այդ խոստումը, քահանայապետ։ Բայց հրովարտակը հրապուրեց չարա-

գործներին ու գողերին, և գնացին նոքա... Մենք նախարարաց հանրագիր հղեցինք արքային, որ խրախուս չլինի չարության և ետ վերցնի իր հրովարտակը։ Նա չանսաց, տեր հոգևոր։ Ընդհակառակը. հրամայել է՝ հրովարտակը կարդալ ամեն տեղ ու գայթակղել ծառաներին։ Եվ ահավասիկ այդ հրովարտակի հետևանքը. տիրանենգություն և տիրասպանություն։

Կաթողիկոսը թեև տեղյակ էր թագավորի հրովարտակներին, բայց լսում էր ուշադիր և սպասում իմանալու, թե ի՞նչն է իրոք իշխանի այցելության նպատակը, ինչո՞ւ է այդ ամենը պատմում իրեն։ Նա մեկ ուզեց ասել, որ վանքապատկան շինականներ նույնպես փախել են այնտեղ, բայց լռեց, մտածելով, որ դա պատվաբեր չէ վանքերի համար և իրենց վայել չէ առայժմ դժգոհություն հայտնել։ Իսկ իշխանը շարունակում էր.

— Եթե, տեր հոգևոր, շարունակվի այսպես, ծառաները լքեն իրենց տերերին և հանցանքներ գործելով փախչեն Արշակի Ավանը, նախարարները չեն հանդուրժի, իրենք ևս կդառնան տիրասպան...

Կամսարականի վերջին խոսքերից Ներսեսն անախորժ ցնցում զգաց, ձեռքերը քաշեց իրեն և հրացայտ աչքերը թարթեց նորից։

— Ի՞նչ խոհեր են դրանք, իշխան։ Մի՞թե վայել են Կամսարականաց առաքինի տոհմի նահապետին։

— Միայն ես չէ, որ խորհում եմ այսպես, հայրապետ, այլ ամենքը, մեծ մասը նախարարաց, որոնց ծառաներին թագավորը գրավում է խաբեությամբ ու դավով։

Կաթողիկոսը լսում էր մտասույզ, բայց երբ իշխանն ավարտեց՝ հարցրեց տրտում.

— Եվ մի՞թե հնարավոր չէ վերացնել այդ թշնամությունը։

— Այդ միայն դու կարող ես անել, տեր հոգևոր։ Ահավասիկ եկել եմ առ քեզ, որպես Հայոց Աշխարհի վեհագույն դատավորի,— շտկվեց իշխանը՝ շեշտ կաթողիկոսի դեմքին նայելով։— Հատուկ ժամանել եմ դժգոհ իշխանաց կողմից, որ վեհդ կարգի հրավիրի Արշակ թագավորին, այլապես մենք ևս կդիմենք խստագույն միջոցի...

Իրոք, Ներսեսին էր պատկանում երկրում ծանր, կնճռոտ

խնդիրներ լուծելու իրավունքը, հատկապես այն խնդիրների, որոնք ծագում էին հարևան նախարարների կամ նախարարների ու թագավորների միջև։

— Պատերազմ թագավո՞ր դեմ,— աչքերը թարթելով գլուխը բարձրացրեց Ներսեսը։— Երբե՛ք։ Ես թույլ չեմ տա, իշխան։ Մենք ունենք թշնամի հարևաններ։ Երկիրը կավերվի եղբայրական պատերազմի մեջ, և թշնամին անարգել կմբտնի մեր տունը։ Ո՛չ։ Երբե՛ք...

— Ստիպված կլինենք, տեր հոգևոր։ Ստիպված, եթե Արշակը չդադարեցնի իր թշնամությունը... Թող նա իմանա, որ հայոց նախարարները կարող են ապրել առանց թագավորի, իսկ Արշակն ինքը չի կարող ապրել առանց նախարարների։ Նախարարներն են, որ վտանգի ժամին զորավիգ են լինում նորան։ Ուստի թող իմանա Արշակը, որ վտանգ է ստեղծում ի՛նքն համար, ի՛ր գահի համար... Այո, եթե չզսպես նորան, տեր հոգևոր, այսօր կխլի մեր իրավունքը, վաղը՝ քո, և կանի այնպես, որ եկեղեցին ևս առնի իր իշխանության ներքո...

Ներսեսի խոշոր, թորշոմած դեմքով մի ստվեր անցավ և մռայլեց նրան։ Շահապիվանի դեպքից հետո նա հազվադեպ էր լինում պալատում. գնում էր, երբ հրավիրում էին, իսկ երբ լսում էր անարդար մի բան, օրինազանցություն վրդովիչ— ինքն էր գնում։ Այժմ, լսելով իշխանի խնդրանքը, նրա մեջ ներքին կռիվ էր. ինչպե՞ս գնար, երբ թագավորը անբարեհաճ էր ընդունում իրեն, լսում էր ակամա, շատ ժամանակ չէր համաձայնում հետը կամ հեգնում էր նվաստացնելու աստիճան. ուստի և ամեն անգամ, երբ անհրաժեշտ էր լինում ներկայանալ թագավորին, գնում էր մեծ դժկամությամբ... Սակայն ինչպե՞ս վարվեր հիմա.— գնար՝ հանդիպելու էր դարձյալ անբարեհաճության և նվաստացումի. չգնա՞ր... զգում էր, որ խնդիրն այնպիսին է, որից կարող է ծագել ահավոր աղետ. հետևաբար՝ պետք էր գնալ և կատարել քրիստոնեից քահանայի պարտքը՝ կանխել չարիքը։

— Քո խոսքը, իշխան, կարի հուզեց ինձ,— խոսեց նա փոքր-ինչ մտածելուց հետո։— Անշուշտ, քրիստոնեից վայել չէ ո՛չ գժտություն, ո՛չ արյունահեղություն։ Ես կերթամ արքայի մոտ։

— Սակայն՝ մի խնդրանք, հայրապետ։

— Խոսիր, իշխան։

— Թագավորը, իրազեկ ես անշուշտ, անբարեհաճ է դեպ իմ անձը, հետևաբար, հայրապետ, առաքելության հաջողության համար, լավագույնս է՝ չհիշել ինձ...

— Այլ կերպ և չեմ վարվի, իշխան,— հանգստացրեց նրան կաթողիկոսը։— Ինքս գիտեմ, որ նախարարները դժգոհ են, ուստի և պիտի խոսեմ ամենքի անունից...— Ներսեսը հապաղեց մի վայրկյան։— Սակայն, իշխան, նախապես ասել չեմ կարող՝ կունենա՞մ արդյոք հաջողություն, Թագավորը կանա՞ ինձ։

Այս անգամ Նար իշխանը ելավ տեղից և նորից լայնացրեց օձիքը։

— Եթե չանա, հայրապետ, մենք ևս չենք զիջի։ Զորքոտանին անգամ պաշտպանում է իրեն։ Մենք ևս չենք ցանկա մեռնել անխոս....

Կամսարականի խոսքերն ասվեցին այնպիսի շեշտով, որ կաթողիկոսն ակամա ձեռքը բարձրացնելով խաչակնքեց նրան։

— Խաղաղությո՛ւն, իշխան, խաղաղությո՛ւն. զի խաղաղությունն է մայրը բարյաց մարգոց մեջ և աշխարհում բովանդակ։ Եռ կերթամ իմ քահանայապետական պարտքը կատարելու։

— Իսկ ես, քահանայապետ, կսպասեմ վերադարձիդ, որպեսզի կարողանամ որոշել անելիքս։

Կամսարականի այս խոսքը հաճելի չեղավ Ներսեսին. նա կուզեր Թագավորի մոտ գնալ փոքր ուշ. բայց երբ իշխանը հայտարարեց, թե կսպասի մինչև նրա վերադարձը, համաձայնեց ակամա.— Բարի...

Հաճելի չեղավ նախ, որ ինչ-որ սպառնալիք զգաց այդ խոսքի մեջ, երկրորդ՝ շտապ մեկնելու այդ պահանջը խախտում էր իր ծրագիրը. նա եկել էր այստեղ վանքի գործերով և մասամբ առանձնության մեջ խորհելու, թե ինչ ձեռնարկումներ են պետք եկեղեցու իշխանությունը բարձրացնելու համար։ Եվ քանի օր էր ահա այդ մասին խորհելով՝ նա դպիրներին թելադրում էր գրելու իր մտքերը։ Իսկ երբ հոգնում էր խոհերից, դուրս էր գալիս կանաչ դարավանդի եզերքը, հունարեն մի գիրք ձեռքին։ Այստեղ՝ անգունդի եզերին

նստած, Ազատ գետի խոխոջն ականջում, կարդում էր և մտասույզ խորհում դարձյալ։ Ինչպես Արշակը տարված էր իր քաղաքի շինությամբ, այնպես և Ներսեսը, տեսնելով ժողովուրդը վերապահ է դեպի քրիստոնեությունը, և ոմանք փախչում են վանական կալվածներից, ինքը, հետևելով բյուզանդական Եվստաթեոս եպիսկոպոսի օրինակին, հիմնեց ոչ միայն նոր վանքեր ու եղբայրանոցներ, այլև բարեգործական հաստատություններ՝ անկելանոցներ ու ձրի հյուրատներ, որպեսզի բարձրացնի թե՛ եկեղեցու և թե՛ իր հեղինակությունը, որպեսզի ամենքը համոզվեն, որ քրիստոնեությունը մարդասիրական կրոն է։ Բացի այդ, ինչպես Արշակը ջանում է զորացնել բանակը, այնպես էլ Ներսեսը, հին հեթանոսության օրինակով, հիմնում էր ուժեղ միաբանություններ՝ թե՛ կուսակրոնների և թե՛ կույսերի, որ բարձրացնի եկեղեցու իշխանությունն ու հեղինակությունը։ Այդ իսկ նպատակով, աշխարհիկ իշխանությունից առաջ անցնելով, նա Աշտիշատում գումարեց մի մեծ ժողով և սահմանեց կանոններ թե՛ եկեղեցու և թե՛ Հայոց Աշխարհի ժողովրդյան համար։ Այդ կանոններում նա հրահանգում էր, որ տերերը խնամք ունենան դեպի ծառաները, իսկ ծառաները հնազանդ լինեն տերերին...

Եվ ահա, մտածում էր նա Կամսարականի ասածներից հետո, թե առաջինը թագավորն ինքն է խախտում կանոնները։— Եվ ինչո՞ւ,— հարց էր տալիս Ներսեսը ու ինքը պատասխանում.— Իր սնափառության համար։ Քաղաք է կամենում կառուցել և հրովարտակով գայթակղում է նախարարների և եկեղեցու շիններին... Նա չգիտե մի՞թե, որ հին թագավորները քաղաք կառուցում էին հաջող պատերազմից բերած գերիներով... Իսկ Արշակը,— մտածում էր Ներսեսը,— ի՞նչ է անում Արշակը. չունենալով գերի ստրուկներ, բայց ունենալով մեծ փառասիրություն, իղուր թշնամանում էր իր նախարարների հետ։

Մտածելով այս ամենը՝ Ներսեսը համաձայնեց, թե պետք է իսկապես գնալ և խոսել Արշակ թագավորի հետ. խոսել և համոզել, որ ետ կանգնի այդ վտանգաբեր ձեռնարկից։ Մի ձեռնարկ, որ կարող է վնասել ոչ միայն նախարարներին, այլև եկեղեցուն, մանավանդ եկեղեցուն. զրկվելով շինական-

ներից՝ կայակասեն եկեղեցու հասույթները, և նա հետզհետե կզրկվի հեղինակությունից... Կարող է լինել ավելին. Արշակը զորանալով՝ կսկսի հոխորտալ...

«Պետք է գնալ,— վճռեց Ներսեսը, հրկար մտածելուց հետո»

Երբ հայտնի դարձավ իշխան Կամսարականի ժամանելու նպատակը և քահանայապետի զրույցը նրա հետ՝ Փավստոս դպիրը, առանձնանալով, ամենքից ծածուկ պահվող իր մատյանում գրեց հետևյալը.

«Տեր մեր Ներսես քահանայապետը լսեց Կամսարականաց նահապետ Նար իշխանի տրտունջը արդար, որ արքայն Արշակ գայթակղում և ապաստան է շնորհում հանցագործ մարդոց՝ նախարարաց ծառաներին և անբարո կրքեր է հարուցում ամենուրեք։ Նա աղերսեց վեհին՝ լինել միջնորդ թագավորի առաջ և վերացնել հրովարտակը գայթակղիչ։ Մեծ քահանայապետը, հանուն քրիստոնեից հավատի և խաղաղության, խոստացավ լինել միջնորդ և համոզել թագավորին, որպեսզի առհի՛ թ չտա ծառաների անկարգությանց և որպեսզի նոքա դեմ-ընթաց չլինեն տերերին յուրյանց, այլապես Աշխարհը Հայոց կդառնա վայր անօրինությանց։ Իսկ մեծ իշխանին Կամսարականաց հորդորեց՝ մնալ հավատարիմ Քրիստոսի պատվիրանաց, որ հրահանգում են մեզ՝ լինել խաղաղ և տիրասեր, տալ զաստծունն աստուծո և զկայսերն՝ կայսեր»...

* * *

Ամբողջ երկու օր Ներսեսը մտածում էր, թե ինչպե՛ս գնա մայրաքաղաք և ինչպե՛ս խոսի թագավորի հետ. թեև Կամսարականին խոստացավ, թե կմեկնի անմիջապես, բայց զգում էր, որ հանձն է առել դժվարին մի գործ։ Փորձով գիտեր, որ Արշակի հետ տեսակցելիս միշտ այնպես էր պատահում, որ խաղաղ սկսված յուրաքանչյուր զրույց երկուսի միջև փոխվում էր անսպասելի, ընդունում սուր, անհաշտ բնույթ, և

ինքը հեռանում էր սրտի մեջ ճնշող զգացումով և այնուհետև հիշում շաբաթներ... Մյուս կողմից՝ Ներսեսը խորհում էր, որ իրեն վայել է այդ վեճերի ու կռիվների մեջ պահել չեզոք դիրք և ջանալ հաշտեցնել կողմերին... Դա կբարձրացներ իր հեղինակությունը, և կողմերը գոհ կմնային իրենից, նմանապես և ժողովուրդը։ Սակայն Արշակը կլսի՞ արդյոք իր խորհուրդը,— մտածում էր Ներսեսը։

Ճշմարիտն ասած՝ Ներսեսին տհաճ էր հանդիպել Արշակին, որը նրան թվում էր կամակոր, համառ. մանավանդ նա արդարացնել չէր կարողանում և հոգում դատապարտում էր, որ Արշակն ամուսնացել էր եղբորորդու՝ Գնելի այրու հետ, Գնելի սպանության պատմությունից հետո...

Ներսեսը գիտեր, որ Ավանի կառուցումից դժգոհ են ոչ միայն նախարարները, այլ նաև հոգևորականները, առանձնապես Բագրևանդի եպիսկոպոս Խաղը, որի գավառը մոտ էր Ավանին։ Խաղը համոզում էր, որ Ներսեսը նզովի Արշակավանը, որովհետև նրա շինականները նույնպես գայթակղվում են հրովարտակից և նույնպես գնում այդ «երիցս անիծյալ Ավանը»... Բայց Ներսեսը խոհեմություն էր համարում մնալ ձեռնպահ. կարիք չկար բացահայտ թշնամանալ թագավորին. առանց այդ էլ հարաբերությունը պայծառ չէր նրա հետ։ Միաժամանակ նա մտածում էր, որ մի այդպիսի քայլ՝ նզովելու թեթև մի փորձ՝ իրեն կվարկաբեկեր ժողովրդի աչքում... Ճշմարիտ է, ինքը նույնպես դժգոհ էր Արշակավանի կառուցումից, բայց նզովել՝ երբեք... Այժմ նա գոհ էր, որ նախարարները դժգոհ են Արշակից.վանքերի շինականները նույնպես փախչում էին այդ քաղաքը։ Ներսեսին լուրեր էին հասել նաև, թե բորբորիտներն ու մծղնե աղանդին հետևողները, որ հեռանում էին Քրիստոսի եկեղեցուց, նրա շեներից և ապրում թափառաշրջիկ խմբերով, նույնպես գնում էին Արշակավան, թագավորի հրովարտակի խոստումներով հրապուրված։

Այս ամենի մասին Ներսեսը շատ բան էր լսել և շատ բան գիտեր, բայց չէր կամեցել խոսել Արշակի հետ։ Այժմ զգում էր արդեն, որ նախարարների մեջ ծայր առած դժգոհությունը կարող է վտանգ բերել ոչ միայն թագավորին, այլև երկրին հայոց և հավատին քրիստոնեական։ Եթե սկսվեր պատերազմ թագավորի և նախարարների մեջ՝ պարսիկը կխուժեր երկիր

և եկեղեցին կործանելով կկանգներ ատրուշաններ... Եկեղեցու հետ կոչնչացներ և բոլոր հոգևորականներին և այն ամենը, ինչ հիմնել է ինքը... Այս հեռանկարը սարսափ բերեց Ներսեսին, և նա որոշեց, առանց հետաձգելու, գնալ Թագավորի մոտ և կատարել իր պարտքը։

Նա ճանապարհ ընկավ առավոտյան վաղ, երբ օդը զով էր սառնության չափ. բայց քանի իջնում էին ցած, այնքան զգալի էր դառնում տաքը, Արարատյան դաշտի գոլ շունչը, թեև ամառ չէր։ Մտքերի մեջ նա ձին վարում էր դանդաղ և զգույշ։ Ներսեսը, որևէ տեղ գնալիս, սովորաբար գնում էր շքախմբով, բայց այս անգամ նրան հետևում էին ուղեկից եպիսկոպոսը և Փավստոս դպիրը։

«Եթե Արշակը նորեն չկամենա լսել ինձ՝ ես կհանդիմանեմ նորան,— մտածում էր Ներսեսը։— Ես կասեմ, որ իր Ավանով երկիրը տանում է դեպի կործանում։ Ես կասեմ, որ առանց նախարարների հնար չէ պահել աշխարհս հայրենի, եկեղեցին, քրիստոնեությունը... Եթե հակառակի՝ կնդովեմ»,— շարունակում էր խորհրդածել Ներսեսը ոլոր ճանապարհով իջնելով դեպի դաշտը։ «Արշակի արարքները հանդուրժեցի մինչ այժմ, կարելի է միթե մարդոց գրգռել այնպես, որ ծառայք սպանեն տերերին։ Սույնը արդեն վարմունք է նզովքի արժանի»...

Ամբողջ ճանապարհին այս մտքերն էին զբաղեցնում նրան, և այդ իսկ պատճառով նա խոսք չէր փոխանակում ուղեկիցների հետ։

Հասնելով մայրաքաղաք՝ նա, սակայն, անմիջապես չգնաց միջնաբերդ, ինչպես արել էր մի քանի անգամ, շատ անհետաձգելի գործերի համար։ Գերադաս համարեց նախ հանգիստ առնել վեհարանում և ապա իմանալ՝ Թագավորը միջնաբերդո՞ւմ է, թե, ըստ իր սովորության, գնացել է շրջագայության կամ գուցե իր նոր քաղաքը։ Վանքը իր միաբանների խցերով ու վեհարանով գտնվում էր քաղաքից դուրս և շրջապատված էր պարսպով։ Այնտեղ չգիտեին Թագավորի ուր լինելը, ուստի մյուս օրն առավոտյան, երբ ուղարկված վարդապետը լուր բերեց, թե արքան պալատումն է, Ներսեսը պատրաստություն տեսավ գնալու։ Թագրևանդի եպիսկոպոս

խաղը, որ տեղապահ էր, իմանալով, թե Վեհը կամենում է գնալ թագավորի մոտ, որպես միջնորդ հաշտության, ասաց.

— Ջարժե, տեր քահանայապետ։ Արշակն իզուր կվիրավորի անձդ։ Նախարարները որքան դժգոհեն նորանից և թըշնամանան նորան՝ առավել լավ։ Պետք չէ հաշտեցնել։ Միևնույն է։ Նա չի լսի Վեհիդ խոսքը հաշտության։

— Պարտքս է,— ասաց Ներսեսը և ճանապարհ ընկավ՝ հետը երկու եպիսկոպոս և մի դպիր առած։ Նրանք գնում էին դարձյալ նժույգներ հեծած, որովհետև նախ կարգն էր պահանջում, որ քահանայապետը ոտքով չգնա այցելության և ապա բավական տարածություն կար մինչև միջնաբերդ, այնտեղ հասնելու համար պիտի անցնեին փոշոտ ճանապարհներ և մի քանի նեղ փողոցներ։

Մայրաքաղաքը ուներ երեք գոտի. առաջինը արվարձաններն էին, որ գտնվում էին քաղաքի պարսպից դուրս և շրջապատված էին խաղողի, դեղձի ու ծիրանի այգիներով։ Երկրորդ գոտին, պարսպի ներսը, բուն քաղաքն էր, ուր ապրում էին արքունիքին և ապա քաղաքացիներին սպասարկող արհեստավորներ։ Դրանց հետ միասին այդտեղ ապրում և գործում էին նաև առևտրականներ, ռամիկներ ու ազատներ։ Երրորդ գոտին արդեն միջնաբերդն էր՝ իր բարձր, ատամնավոր ու բրգաշատ պարսպով. դրա ներսը տարածվում էր ընդարձակ մի ծառաստան՝ բազմատեսակ պտղատու և անպտուղ ծառերով, թփերով ու բույսերով։ Ծառաստանի ուղիղ մեջտեղը բարձրանում էր արքայական երկհարկ պալատը՝ այս-այն կողմ գնացող ուղիներով։ Պարսպի ներսը կային և այլ շենքեր։ Դրանք պաշտոնատներ էին, համբարականոցներ և պալատականների բնակարաններ։ Բոլորից քարած ուղիներ էին գնում դեպի պալատը՝ ծառաստանի միջով։

Երբ Ներսեսը նժույգի վրա ձգված, ճերմակ մորուքը սևահանդերձ կրծքին, իր եպիսկոպոսներով մտավ քաղաքի պարսպից ներս և ընթացավ դեպի միջնաբերդ, արհեստավորները դադարեցին իրենց աշխատանքը և նայեցին հոգևոր հայրերի թափորին. իսկ երբ նրանք մոտեցան միջնաբերդի երկաթագամ դռներին՝ նիզակավոր պահակները հարգանքով բացեցին երկու փեղկն էլ և ճանապարհ տվին։

Մինչ կաթողիկոսը հանդիսավոր ընթացքով գնում էր գե-

ոլի պալատ, Թագավորն այդ պահին լսում էր Ավանի շահապ Վարազ Գնունու զեկույցը՝ քաղաքի շինության ընթացքի մասին։ Թագավորի առանձնարանում պինդ սեղանի վրա դրված էր պղնձյա մի կլոր խոշոր սկուտեղ՝ ավազով լիքը. ավազը հարթված էր և վրան ուներ բարակ երկար ձողեր, նաև կես մատի չափ փոքրիկ քառակուսի փայտիկներ։ Սկուտեղն իր ավազով՝ քաղաքի տարածությունն էր, իսկ ձողիկները և քառակուսիները՝ փողոցներն ու տները։ Խոսելով՝ Վարազը ցույց էր տալիս ձողիկներից մեկը՝ մի փողոց և բացատրում, թե քանի տուն է շինված այդտեղ... Թագավորը դժգոհ էր, որ կառուցումը դանդաղում է։

— Լսում եմ, որ բազում են եկողները, սակայն...

— Այո, արքա, բազում են, սակայն ամենքը ի վիճակի չեն կառուցել։ Ջունեն փորձ. նաև քարը և փայտը չի բավում ամենքին, վասնզի ամենքը...

— Իսկ եկեղեցի՞ն։ Ջանացեք ավարտել գեթ եկեղեցին, — ասաց Արշակը և դժգոհ հեռացավ սկուտեղից։

Այդ պահին էր ահա, որ հայտնեցին, թե քահանայապետը ժամանել է տեսակցության։ Արշակի առաջին զգացումը եղավ դժգոհություն, որ Ներսեսը խանգարեց իր զրույցը. նրա աչքերի սպիտակուցները փայլեցին իսկույն, բայց մտածեց, որ այդ այցելությունը հավանաբար կունենա լուրջ պատճառներ, այլապես Ներսեսը այդքան շուտ չէր թողնի իր Գառնին... Թագավորին հայտնի էր, որ նա սովորություն ուներ նշանավոր մենաստան կամ միաբանություն մեկնելիս՝ մնում էր երկար։ Այժմ ի՞նչը կարող էր բերել նրան,— դա հետաքրքրեց Արշակին, և նա քաղաքի շահապին արձակելով՝ կարգադրեց հրավիրել։

Երբ արարողապետը կաթողիկոսին հրավիրեց գահասրահ՝ ուղեկից եպիսկոպոսներն ու Փավստոս դպիրը մնացին սպասասրահում։ Ներսեսը արծաթագլուխ գավազանը ձեռքին ներս մտնելով, տեսավ թագավորին մի բարակ ծիրանի ուսերին դանդաղ քայլելիս։ Կաթողիկոսին նկատելով՝ Արշակը կանգ առավ դրված։

— Բարի եկար, քահանայապետ։

— Բարին արքային և պալատին, նաև տանս արքունի,—

Ներսեսը աջով խաչակնքեց թագավորին ու գահասրահը, չնայած դժգոհություն զգաց, որ Արշակը պատշաճ ձևով չընդունեց իրեն։

— Հաճիր բազմել, քահանայապետ,— ձեռքը դեպ բազկաթոռը մեկնեց Արշակը։

Եվ երբ Ներսեսը տեղավորվեց բազկաթոռում, Արշակը, ինքը ևս նստելով, թուխ աչքերի սուր հայացքը հառեց հյուրի երեսը։

— Երեկ հայտնեցին՝ Գառնի ես։ Ի՞նչը հարկադրեց ժամանելուն պես գալ ինձ։

— Մեր երկրի խաղաղությունը, արքա։

Որքան հարցը անհյուրընկալ էր, պատասխանը եղավ նույնքան անակնկալ, և Արշակը լարվեց տարակուսով։

— Պատահե՞լ է դժբախտ ինչ։

— Տակավին՝ ոչ, արքա։ Սակայն կարող է պատահել ամեն վայրկյան։

— Խոսիր ավելի պարզ, քահանայապետ,— Արշակի սպիտակուցները փայլեցին հետաքրքրությունից։— Դու ականջալո՞ւր ես եղած որևէ դավի, թշնամության։

— Ոչ միայն ականջալուր, արքա, այլ ունեմ լուրեր հավաստի. դեմդ կա մի տրտունջ, որը սակայն կարող է լեռնանալ և դառնալ աղետավոր...

Այստեղ Ներսեսը մտածեց, թե ինչպե՞ս հայտնի լսածը և ի՞նչ ձևակերպումով, որ միջնորդությունը իզուր չանցնի. չգրգռի Արշակին և միաժամանակ օգուտ բերի գործին։

— Քո հիմնադրած քաղաքը, արքա, ցանկալի է անշուշտ, — շարունակեց Ներսեսը ձայնին մեղմություն ու խորհրդավորություն տալով,— սակայն քո հրովարտակը՝ մարդաժողով անել նախարարներից... Իրազե՞կ ես արդյոք նոցա դժգոհությանը, արքա։

— Այո, տեր հոգևոր, քաջատեղյա՛կ եմ, որ նոքա անգամ ժողովներ են գումարում իմ դեմ։ Իրազեկ եմ նաև, որ Վասպուրականի տեր Արծրունի Մերուժանը, չկատարելով իր պարտքը արքունյաց հանդեպ, գրգռում է հարևան ու բարեկամ նախարարներին իմ ձեռնարկումների դեմ, ի՛մ դեմ, ի՛մ գահի դեմ։ Իրազեկ եմ,— կրկնեց Արշակը և մեկեն հարց-

բեց.— իսկ ինքդ, քահանայապետ, չես կամենում մի՞թե, որ մեր երկիրը զորանա և դիմագրավի իր թշնամիներին։

Արշակի լավատեղյակությունը և նրա անակնկալ հարցումը ասես շփոթեցին Ներսեսին և նա խոշոր աչքերը թացխփեց մի քանի անգամ։ Նա, իհարկե, չգիտեր և չէր կարող իմանալ, որ Անգեղաց իշխանիկը իրենից մի օր առաջ եղել էր արդեն թագավորի մոտ, պատմել էր իշխանաժողովի մասին և առանց մահափորձի դեպքը հիշելու խնդրել էր որևէ պաշտոն, քանի որ մտադիր չէր այլևս վերադառնալ իր կալվածը։ Եվ թագավորը նրան, իր իսկ ցանկությամբ, ուղարկել էր զորքի մեջ ծառայելու։

Զարմանալով թագավորի իրազեկության վրա՝ Ներսեսն այնուամենայնիվ անհրաժեշտ համարեց պատասխանել Արշակի հարցումին, որը նման էր վեղադրանքի։

— Հարցնում ես, արքա, թե մի՞թե չեմ կամենում, որ երկիրը մեր զորանա և դիմագրավի թշնամիներին։ Հարկավ, արքա։ Ես ուրիշ խոհ չունեմ։ Մեր աշխարհն է ամենքիս կյանքն ու ապավենը։

— Հետևաբար, քահանայապետ, լսելով այդ տրտունջքը, դու պետք է գայիր ոչ ինձ, այլ գնայիր տները այն նախարարաց, որ տրտունջ ունին... և կշտամբեիր, որ չխորհեն միայն իրենց կալվածի մասին, այլ խորհեն, որ երկիրը օտարից պաշտպանողը միայն թագավորը չպետք է լինի...

Արշակը լռեց մտածումների մեջ, իսկ Ներսեսը ներուստ տհաճություն զգաց, որ թագավորը ընդհատեց իրեն և փոխեց զրույցի ընթացքը, ինչպես անում էր հաճախ։

— Այո, հայրապետ, եթե դու խորհեիր երկրիս համար, պետք է վարվեիր այդպես։ Սակայն դու հոգում ես միայն քո եկեղեցու, անկելանոցների և աղոթքի մասին. իսկ ես աղոթքով կարող չեմ պահել Աշխարհը Հայոց։ Ինձ պետք է զորություն, բերդ, միաբան կամք...

— Մի՞թե, արքա,— ընդմիջեց Ներսեսը վիրավորված,— ես չէի՞ ցանկա, որ նախարարները հայոց զորավիգ լինեն քեզ մեր աշխարհի պաշտպանության գործում։

— Ոչ, տեր հոգևոր, նոքա հիմա զորավիգ են լինում միմյանց։ Եվ եթե ինքդ, քահանայապետ, հոգածու ես մեր աշխարհի ապահովության՝ գովելի է։ Սակայն ի՞նչ է պահան-

ջում աշխարհիս ապահովությունը,— հարցրեց Արշակը հանկարծ կանգնելով ուղիղ կաթողիկոսի առաջ, բայց չսպասելով նրա պատասխանին՝ ասաց,— այն, որ բերդերի տերը լինի թագավորը, թե նախարարները։

Ներսեսը նորից անակնկալի եկավ, աչքերը թարթեց մի քանի անգամ. նրան թվում էր, թե Արշակը վաղուց ի վեր առիթի էր սպասել, որպեսզի հարձակվի իր վրա։ Եվ, կամենալով կարծես կանխել թագավորի նոր հարձակումը, ուզեց պատասխանել, բայց թագավորը ժամանակ չտվեց.

— Տրտնջո՞ւմ են... Ես նոցանից խնդրեցի մարդ՝ արքունի բանակը զորացնելու՝ մերժեցին։ Խնդրեցի բերդեր՝ վարձահատույց լինելու պայմանով՝ չհոժարեցին։ Այժմ, դատիր ինքդ, տեր հայրապետ, ես,— Արշակը մատը դրեց կրծքին,— Հայոց Աշխարհի թագավորս, ի՞նքս պետք է հնազանդեմ նոցա։

— Ո՛չ, արքա, ո՛չ. հարկավ՝ ոչ,— ծանր շնչելով, բայց արագությամբ վրա բերավ Ներսեսը։— Դու նրանց տերն ես միշտ և հանապազ։ Պարտավոր են հնազանդել նո՛քա...

— Սակայն զոռոզ են և ամբարտավան։ Եթե պահանջում եմ մարդ և բերդ՝ մի՞թե կարծում են պահանջում եմ անձիս համար։ Քահանայապետ, ես կոչված եմ երկիր պաշտպանելու և ժողովուրդը ինձ համար զորք է, ուստի և կարելի չէ թողնել նախարարաց իրավունքի տակ։

Ներսեսը, որ ուշով հետևում էր թագավորի խոսքին և հարմար վայրկյան էր սպասում իր առաքելության մասին խոսելու, այստեղ կարևոր համարեց նկատել.

— Ահավասիկ, արքա, այդ իսկ պատճառով տրտնջում են նոքա։ Տրտնջում են, որ գրավում ես նոցա ծառաներին։ Տրտնջում են և ասում, որ եթե արքան չփոխի իր վերաբերումը և իր հրովարտակը մարդաժողովի...

Արշակը չուզեց լսել շարունակությունը։

— Ուրեմն նոքա սպառնո՞ւմ են ինձ,— կանգնեց նա աչքերի սպիտակուցները փայլեցնելով։— Եվ կամենում են, որ հրաժարվե՞մ հիմնածս Ավանից, որպեսզի ծառա չկորցնե՞ն իրենք։ Բայց մի՞թե կարծում են, որ Ավանը կառուցում եմ ինձ համար,— Արշակը հարցական և սևեռուն նայեց Ներսեհին։

Բայց Ներսեսը չշփոթվեց։

«Այո, ոչ քո անձի, բայց քո փառասիրության համար»,— մտածեց նա և ասաց.— սակայն և այնպես, արքա, պետք է հարգել նոցա իրավունքները տոհմական։

— Իրավունքնե՞րը տոհմական,— թագավորի դեմքին խաղաց մի քմծիծաղ։— Ասա ինձ, տեր հոգևոր, կհանդուրժե՞ս ինքդ, երբ քո եպիսկոպոսները և վանահայրերը չհնազանդեն քեզ։ Հաճո՞ կլինի, եթե յուրաքանչյուրը նոցանից լինի ինքնագլուխ և մերժի քո կամքը։

— Ոչ. դա կլինի պարտազանցություն, արքա։

— Այդպես... Իսկ իմ նախարարները խորհում են դավեր, խորհում են մտնել օտար իշխանության տակ կամ լինել ինքնիշխան և չանսալ իրենց թագավորին. և դու եկել ես բարեխոսելո՞ւ, ինձ խաղաղության հրավե՞ր կարդալու։

Ներսեսը թագավորի խոսքի մեջ զգաց հեգնանք և հանդիմանություն։

— Ես քրիստոնեից հովիվ եմ, արքա. պարտքս է քարոզել խաղաղություն և մեղմել կրքերը։

— Խաղաղությո՞ւն,— հեգնական երկարեց Արշակը։— Լավագույն խաղաղությունը կլիներ այն, տեր հոգևոր, եթե ապահովեինք մեր աշխարհը օտարի ներխուժումից։ Այդպես։ Եվ դու, ինձ բարության ու գթության կոչ անելուց առաջ՝ պետք է խորհեիր, թե ո՞րն է բարին Հայոց Աշխարհի համար։

«Վերստին վիրավորա՛նք... Երբե՛ք չունի հարգանք դեպի հայրը հոգևոր։ Անզուսպ է հանապազ և խստապարանոց»,— մտածեց Ներսեսը տհաճությամբ։

— Բայց մի՞թե, արքա, ես հասու չեմ, թե ո՞րն է բարին,— ասաց նա վիրավորված ձայնով, կամենալով վերջապես սթափեցնել թագավորին։

— Ո՛չ, հայրապետ, լիովին ո՛չ,— շեշտեց Արշակը։

Ներսեսը գունատվեց։

«Կամենում է վիրավորել դարձյալ»,— մտածեց նա խորին սրտմտությամբ։

Բայց Արշակը, ուշք չդարձնելով նրան, շարունակեց.

— Ո՛չ, քահանայապետ, հասու չե՛ս։ Դու ըմբռնում ես միայն ժամանակավոր բարին, քրիստոնեից բարին։ Պետք է

ըմբռնես հեռավոր բարին, այն, որ մենք ամրացնենք մեր աշխարհը գալոց ժամանակների համար։ Իսկ դու քարոզում ես ինձ խաղաղություն։ Այդ իմաստությունդ պիտի քարոզեիր անհնազանդ նախարարներին...

Ներսեսը նստած տեղում դժգոհ շարժում արավ։ Նա վիրավորվեց ավելի, և որպեսզի թագավորին զգացնել տա, թե ինքն ըմբռնում է այդ ամենը, ասաց.

— Արքա, քանի մենք բարեկամ լինենք Բյուզանդիային՝ մեր երկիրը կլինի ապահով...

— Բյուզանդիա՞,— ընդմիջեց Արշակը հեգնանքով։— Օտարի օգնությո՞ւն... Ջանանք, տեր, կարող չլինել օտարի օգնության։ Ահա բարին, որին հասու չե՞ս։

Կաթողիկոսը վիրավորանքից շուրթերը սեղմեց և հառաչեց.

— Դու, արքա, խոսում ես ապահովության մասին և ինքդ թշնամացնում ես նախարարներին, արհամարհելով նոցա իրավունքները, գրավելով նոցա ծառաներին...— Այստեղ Ներսեսը հիշեց Կամսարականի խոսքը և վրա բերավ։— Իմացիր, արքա, որ առանց նախարարների օգնության հնար չէ երկիր պահել։ Վտանգի ժամին նոքա պիտի գան քեզ օգնության։ Ուստի և իզուր ես անտեսում նոցա...

— Նախարարնե՞րը... Նոքա միշտ և հանապազ խորհում են յուրյանց շահը և դու միջնորդում ես, որ հարգե՞մ նոցա։

— Եթե չհարգես, արքա, այն ժամ...

— Այն ժա՞մ,— նորից ընդմիջեց Արշակը։— Կամենում ես ասել, որ թույլ կտան հանդուգն արարքնե՞ր։

— Անշուշտ, քանզի ոչ ոք չի կամենա զրկվել իր ունեցածից, առավել ևս նախարարները, որ ունեն իրավունքներ ավանդական։

— Եվ ուրե՞մն,— Արշակը դարձյալ հեգնախառն հետաքրքրությամբ նայեց կաթողիկոսի հոգնած դեմքին։

— Ես ասացի, արքա. չխախտել նոցա իրավունքները, չհրապուրել նոցա ծառաներին։

— Ես պետք է կառուցեմ իմ Ավանը։

— Կառուցիր առանց նոցա մարդոց։

— Այդ կարելի չէ, հայրդ հոգևոր։ Ինձ պետք են գործավորներ, շա՛տ գործավորներ և բնակիչներ։

— Այնժամ, արքա, ինքդ մեղավոր կլինես առաջի մարդոց և աստուծու։ Եթե կամ զգուշացնելու ծանրածանր հետևանքներից, քանզի Ավանգ փախչող ծառաները սկսել են սպանել իրենց տերերին։

Արշակը լարվեց. այդ նորություն էր նրա համար։ Եվ Ներսեսը, այդ նկատելով, պատմեց Համունի իշխանի սպանությունը։

— Ահավասիկ, արքա,— շեշտեց նա։— Կարելի՞ է միթե ստրկին տալ սուր և ազատություն։ Այսօր նոքա սպանում են իշխան ու նախարար, վաղը սուր կբարձրացնեն ի՛նձ վրա, քե՛զ վրա։ Ապա նույնատեսակ սպանությունները կարող են լցնել բարկության բաժակը և նախարարները կելնեն քո դեմ, գահիդ դեմ և այնժամ ուշ կլինի...

Վերջին խոսքը ասելով՝ հուզված կաթողիկոսը թափով ելավ տեղից և, առանց թագավորին նայելու, գավազանը հատակին զարկելով, դուրս եկավ գահասրահից։

Ընդունարանում սպասող ուղեկիցները, նրա այլայլումը նկատելով, անխոս շրջապատեցին նրան։

* * *

Իսկ Արշակը, կաթողիկոսի մեկնելուց հետո, թեթևություն զգաց և ուրախացավ միաժամանակ, որ Ավանի համար մարդ ժողովելու իր միջոցը հաջողել է. թող նախարարները դժգոհեն. թող զգան, թե ինչ է նշանակում դեմընթաց լինել արքային,— մտածում էր նա և դառնում գոհունակ քայլերով, իբրև հաղթանակ տարած, նույնիսկ շփում էր ձեռքերը, ինչպես լավ գործարք կատարած մարդ, երբ ներս մտավ Փառանձեմ թագուհին՝ ամառային մի նուրբ հագուստի մեջ, պարանոցին մանյակ, մազերի մեջ փայլուն հերկալներ։ Չնայած նոր ամուսնությունից անցել էր 17—18 տարի, բայց նա տակավին պահպանել էր իր աշխույժն ու թարմությունը, առանձնապես խոշոր խաժ աչքերի փայլը և դիմագծերի կանոնավորությունը։

— Կարելի՞ է իմանալ, արքա, թե ինչո՞ւ համար էր Վեհի այցը,— հազիվ ներս մտած հետաքրքրվեց նա։

— Թերել էր ինձ ուրախալի լուրեր...

Թագուհին զարմացավ.

— Ուրախալի՞... Ինձ հայտնեցին սակայն, որ նա հեռացել է սաստկապես վշտացած։

— Այնուամենայնիվ՝ բերած լուրերը ուրախալի են, Թագուհիս։

— Ուրախալի՞...— տարակուսեց Փառանձեմը։

— Այո, նա հայտնեց, որ նախարարները անչափ գժգոհ են ինձնից։

— Ա՞յդ է ուրախալին,— աչքերը լայն բացեց Փառանձեմը։— Դա ավելի քան տխուր է, արքա։

— Ոչ, Թագուհիս, հույժ ուրախալի։ Եթե նոքա գժգոհ են՝ ապացույց է, որ շատ մարդ է գնում Ավան, և ուրեմն կարագանա Ավանիս կառուցումը, հետևաբար կամրանա մեր ապահովությունը... Ավանից հետո կլինի բերդը, որ ես կարող եմ լինել հանգիստ. կփակվի մեր աշխարհի բաց դռներից մեկը պարսից առաջ։

Այս ասելով Արշակը այնուամենայնիվ հակիրճ հայտնեց կաթողիկոսի այցելության նպատակը։

— Միով բանիվ՝ միջնորդում է, որ նախարարներից մարդեր չգրավեմ Ավանիս համար։

Փառանձեմը գլուխը շարժեց նշանակալի.

— Ուրեմն Վեհը նույնպե՞ս չի ցանկանում, որ Ավանը կառուցվի,— ասաց Փառանձեմը գժգոհ։— Իսկ եկեղեցի կառուցել կարելի է, և ամեն տեղ։ Կուսանոցներ կարելի է ամեն տեղ... Ո՛չ, արքա, ունկն մի դիր այդ խոսքերին և շարունակիր սկսածդ...

Խոսելով՝ Փառանձեմը փեշերը վեր պահելով նստեց այն բազկաթոռին, ուր քիչ առաջ բազմած էր կաթողիկոսը։— Դու ճշմարիտ ես, արքա։ Քաղաքը և բերդը անվտանգ կդարձնեն մեր ապահովությունը, ուստի պետք չէ հապաղել։ Գահաժառանգիդ և ժողովրդյան պարտավոր ես թողնել ապահով երկիր... Վտանգներից ազատ երկիր։

Երկիրը, պետությունն ու թագաժառանգը Փառանձեմի մտքում ձուլվում էին իրար։ Ամուսնության առաջին տարին նա անտարբեր էր գեպ ամեն ինչ, բայց որդի ունենալուց հետո հետաքրքրվում էր այն ամենով, ինչ վերաբերում էր ամուսնուն ու որդուն. գիտեր արդեն, որ նրանց գոյությունը,

կյանքը պայմանավորված է պետության անվտանգությամբ ու հզորությամբ։ Եվ առիթ եղած ժամանակ ներշնչում էր Արշակին լինել անխնա։ Արդյոք հոր անզիջող ոգի՞ն էր նրա մեջ, որ չէր ուզում տեսնել պարսկասեր մի նախարար, ու ամեն պարսկամետի հոմարում էր թշնամի ոխերիմ ու կրկնում հոր նման.

— Հայրենի երկրին դավաճանողը արժանի չէ գթության, իսկ պարսիկին ծառայողը՝ ևս առավել...

Արշակը հաճախ էր խոսում Փառանձեմի հետ պետական խնդիրների մասին և, նրա ուշիմությունից զոհ, երբեմն նրան համեմատում էր Օլիմպիայի հետ և ասում ինքն իրեն. «Օլիմպիան երբեք չէր թափանցի։ Նա երբեք չէր հետաքրքրվում մեր աշխարհի գործերով։ Այլ հաճախ երազում էր Բյուզանդիոնը, նրա արքունիքը ճոխ և ծովերը կապույտ... Իսկ Փառանձեմն իզուր չէ, որ Անդոք իշխանի դուստրն է»։ «Պարսիկը երբեք բարեկամ չի լինի մեզ»,— ասում էր նա.— «Բյուզանդիայի բարեկամությունը միայն մի նպատակ ունի՝ կլանել մեզ»։ Իսկ այժմ լսելով, որ ներսեսը բարեխոսում է հաշտ մնալ պարտազանց նախարարների հետ, վրդովվեց.

— Երբե՛ք, արքա։ Ո՛չ մի զիջում և ներողամտություն։

— Այդպես և կլինի, թագուհիս։ Հուսով եմ՝ մեր ջանքերը իզուր չեն անցնի։ Իսկ քո խոսքերդ, Փառանձեմ, սիրելի են ինձ, ուստի վստահ եմ, որ կավարտեմ թե՛ Ավանը և թե՛ բերդը... Հայոց բերդը...

Փառանձեմը ելավ տեղից և անխոս փարվեց ամուսնուն.

— Այո, մեր բերդը, մեր աշխարհի ապահովության բերդը...

* * *

Կամսարականը, սպասելով կաթողիկոսի վերադարձին, կարծես հանգիստ չուներ, տեղ չէր գտնում իրեն, չէր տեղավորվում վանքի շրջափակում. մերթ շրջում, դիտում էր վանքը, նրա ամուր պատերը, մերթ մեկ կամ երկու թիկնապահի հետ գնում էր մոտիկ գյուղը, մոտիկ մանրածառ անտառը կամ երբեմն իջնում էր Ազատ գետի ձորը, որ թնդում էր միշտ ջարնան շրերից. կամ՝ խցերի առաջ կանգնած զրուցում էր

տարեց վարդապետների հետ։ Այդ զրույցներից իմանալով, որ վանքապատկան շինականներից նույնպես փախել են Սվան, նա մտածում էր. եթե այդպես է՝ Ներսեսը խիստ լեզու կբանեցնի... Ու համոզված էր, թե հոգևոր հոր առաջ, որ միաժամանակ համարվում էր երկրի վերին դատավորը, թագավորը տեղի կտա և ետ կառնի իր հրովարտակը։ Նրան թվում էր, թե Արշակը անշուշտ չգիտի, թե որքա՜ն դժգոհ են նախարարները. և եթե իմանա— այժմ արդեն կաթողիկոսից կիմանա վերջապես— հազիվ թե շարունակի համառել...

Այդպես էր մտածում Կամսարական Նար իշխանը։ Բայց մեծ եղավ նրա զարմանքն ու բարկությունը, երբ Ներսեսը բերեց թագավորի մերժումը. այսինքն՝ այն, թե Արշակը չի կամենում և երբեք չի կամենա ետ վերցնել մարդաժողովի իր հրովարտակը։ Հայտնելով այս ամենը՝ Ներսեսն ասաց.

— Արեցի, իշխան, ինչ հնարավոր էր...

Այս խոսքերը պետք էր հասկանալ այնպես, թե ինքն այլևս անզոր է որևէ քայլ անելու։ Քահանայապետն իհարկե թաքցրեց թագավորից ստացած վիրավորանքը և այն, որ Արշակը ոչ միայն պատվով, այլև մինչև իսկ պատշաճ հարգանքով չէր ընդունել իրեն։

Լսելով այս՝ Կամսարականը թափով ոտքի կանգնեց։

— Եվ թող ուրեմն Արշակի գլխին ծանրանա մեղքը այն ամենի, ինչ լինելու է,— ասաց նա սեղմած ատամների արանքից և արագ նետվեց դուրս։

Մինչ կաթողիկոսը կուղարկեր դպրին, որ նա ետ դառնա և վայելի վանքի ճաշը, իշխանը հեծավ իր նժույգը և, անգամ առանց հրաժեշտի, շտապեց հեռանալ վանքից։

Զարմացած թիկնապահները հետևեցին նրան։

Ո՞ւր էր շտապում իշխանը և ինչի՞... Նա ոչինչ չասաց։ Բայց նրան զբաղեցնում էր մի սևեռուն միտք, թե ի՞նչ պետք է անել հիմա. նորից գնալ հրավիրել իշխանաժողով՝ նրանց կամքն ու կարծիքը իմանալու, թե գնալ խորհուրդ անել իշխաններից մեկ-երկուսի հետ։ Բայց ո՞ւմ հետ. գնալ որի՞ մոտ...

Այսպիսի դեպքերում, երբ ծանր մտքերը ալեկոծում էին նրան և ինքը չէր կարող որոշել անելիքը, Նար իշխանը սովորաբար գնում-զրուցում էր քեռայրի հետ, կամ՝ նրան էր կան-

չում իր դղյակը։ Բայց Դավիթ Համունին չկար այլևս... և հիմա ո՞ւմ կարող էր գնալ ինքը, ո՞ւմ, որ հասկանար իրեն և տար խորհուրդներ խելացի. խորհուրդներ, թե ի՞նչ պետք է անել այսուհետև։ Գնա՞ր Վահևունի իշխանի մոտ— ծանրախոհ չէր. լուրջ խոսելու փոխարեն բռնկվում էր իսկույն և հայհոյում։ Գնա՞ր Գաբեղենից Սահակ իշխանի մոտ— ավելորդ նեղություն. նա զբաղված կլիներ խրախճանով և չէր էլ հիշի, թե իրենից քանի ծառա է փախել Արշակավան... Գնար գուցե... Կամսարականը մտքում թվում էր հարևան նախարարներին, բայց չէր գտնում մեկին, որ օգտակար լիներ իրեն։ Այդժամ նա հիշեց Մերուժանին՝ Վասպուրականի տիրոջը։ Բայց ուր կլիներ նա այժմ, իր ոստանո՞ւմ՝ Հադամակերտո՞ւմ։ Թե Աղթամարում...

Ու ճանապարհ ընկավ հապճեպ։ Նա ոչ միայն վանականներին, մինչև իսկ թիկնապահներին չասաց, թե ո՞ւր են գնում։ Բայց թիկնապահները շուտով նկատեցին, որ վերադառնում են եկած ճանապարհով, ուրեմն՝ գնում են տուն, մտածեցին նրանք, և ուրախացան, որ վերադառնում են հարազատների մոտ... Բայց ինչո՞ւ էր իշխանը մռայլ. ի՞նչ էր անցել-դարձել,— մտածում էին նրանք։ Եվ ո՞վ կարող էր հարցնել այդ, կհամարձակվե՞ր մեկը— երբեք... Սակայն, երբ երկու օրում, թեթև դադարներով հասան Կամսարականների ոստանին՝ իշխանն իր դղյակը չմտավ. նրա կողմն իսկ չթեքվեց. միայն թիկնապահներից երկուսին ուղարկեց ճանապարհի պաշար առնելու և ինքը շարունակեց ուղին մյուս թիկնապահների հետ։

«Ո՞ւր է գնում իշխանը, արդյոք ո՞ւր է տանում մեզ»,— մտածում էին թիկնապահները տարակույսով, և նրանց տուն գնալու ուրախությունը փոխվեց զարմանքի և թեթև սրտաբեկության։

Իսկ Նար իշխանը, ձին վարելով, շարունակ մտածում էր միևնույնը, թե այժմ ո՞ւր կլինի արդյոք Մերուժանը՝ Հադամակերտո՞ւմ, թե Աղթամարում։

Բայց ի՞նչ էր նշանակում այդ։ Ինչո՞ւ էր Կամսարականին մտահոգում Մերուժանի ո՛ւր լինելը։

Դա ուներ հարկավ իր պատմությունը և Նար իշխանի համար միևնույնը չէր՝ գնալ Հադամակե՞րտ, թե Աղթամար...

Մերուժան Արծրունին, լինելով հարուստ Վասպուրականի տերը, ուներ թե՛ մեծ կապեր և թե՛ մեծ ազդեցություն։ Հարևան նախարարները, որևէ գործ սկսելիս, հաճախ դիմում էին նրա խորհրդին, իսկ նա իրեն պահում էր միշտ ծանր ու մեծ։ Շատերը գիտեին, որ նա դժգոհ է Արշակ թագավորից և առհասարակ Արշակունիներից, որովհետև նրա տոհմակիցներից մի քանիսին ջնջել էր Արշակի հայրը՝ Տիրան թագավորը։ Եվ նա իր դժգոհությունը չէր թաքցնում, այն աստիճան, որ չգնաց անգամ Արշակի թագավորության հանդեսին, ուստի և թագավորից դժգոհ որևէ նախարար գալիս էր նրա մոտ իր վիշտը հայտնելու և խորհուրդ հարցնելու։

Մերուժանի հայրենի ոստանը թեև Արծրունյաց Հաղամակերտ քաղաքն էր, բայց նա տարվա մեծ մասն ապրում էր Աղթամարա կղզում. վերջերս մանավանդ գարնան սկզբից քաղաքից տեղափոխվում էր կղզի և մնում մինչև ձմեռ։ Նա այդ բացատրում էր նրանով, թե սիրում է ապրել խաղաղության մեջ, բայց իրոք, ինչպես բացատրել էին Կամսարականին, կամենում էր իր այցելուներին ընդունել ընտանիքից հեռու, որպեսզի թե՛ մայրը և թե՛ կինը շարունակ չհետաքրքրվեն, թե ո՞վ էր եկողը և ինչո՞ւ։ Այդ հարցումներին մի անգամ կարող էր չպատասխանել, երկրորդ անգամ թաքցնել եկողի այցելության նպատակը, հորինելով հասարակ մի բան. բայց այդպես շարունակել համարում էր անկարելի։ Մանավանդ որ մայրը կրքոտ հետևում էր, որպեսզի իր տունն այցելեն միայն բարեմիտ մարդիկ... Ավելին. մայրը կամենում էր, որ որդուն այցելողները գաղտնիք չունենան իրենից, որովհետև, իր ասելով, վախենում էր, որ այցելուները խաբեն իր Մերուժանին՝ վատ խորհուրդներ տան, մասնակից դարձնեն ինչ-որ անցանկալի գործերի։ Պառավ, շրջահայաց իշխանուհուն վշտացնում էր մանավանդ այն, որ Մերուժանին այցելում էին նաև պարսիկ իշխաններ։ Նա ատելով ատում էր այդ պարսիկ իշխաններին։

— Ո՞վ են այդ պարսիկները, Մերուժան. կամ՝ ինքդ ի՞նչ ունես պարսից հետ, որ այցելում են քեզ,— անհանգստանում էր մայրը։

— Հատուկ ոչինչ, մայր։ Հարևան են, ծանոթ, գալիս են հյուր։ Կարելի՞ է մերժել,— ասում էր Մերուժանը, ասես ինչ-

որ բանից արդարանալով, բայց հետո տեսնելով, որ կնոջն ևս հաճելի չէ պարսիկների այցը, նա բարկացավ.

— Մի՞թե Վասպուրականի տերը ես չեմ, մա՛յր։

— Դու ես, անշուշտ,— ասաց մայրը։— Սակայն ես, որպես Արծրունյաց մեծ իշխանուհի, որպես մայր, անմասն չպիտի մնամ գործերիդ և խորհուրդներիդ։ Ի՞նձ ևս պետք է հայտնի լինեն անելիքներդ։

Եվ Մերուժանն ահա, մոր, մասամբ և կնոջ դժգոհանքը չլսելու և չտեսնելու համար, տասը տարուց ավելի էր գարնանը տեղափոխվում էր կղզի և այստեղ ընդունում այցելուներին, որովհետև դրանք գալիս էին առանձնապես գարնանից մինչև ձմեռ, և Մերուժանը երբեմն օրերով պահում էր նրանց, զրուցում հետները, շրջելով կղզում կամ ընդարձակ իր ապարանքում, որ ժառանգություն էր մնացել հորից։ Իսկ այդ ապարանքն ուներ շատ սենյակներ և շատ սպասավորներ, այժմ նաև շատ այցելուներ ու հյուրեր։ Վաղուց ի վեր սովորություն էր, որ Մերուժանին այցելողները լճի ափին պարզում էին ճերմակ մի լաթ, ինչ նշան էր, թե կամենում են գալ կղզի։ Նշան տեսնելով՝ կղզու երեք նավակներից մեկը չորս թիավարներով գնում էր ընդառաջ։

Եկողները հաճախ լինում էին Մերուժանի կալվածների կառավարիչները կամ հեռու-մոտիկ հարազատներ, որ խոսում էին առտնին գործերից՝ ցանքերի, հարկերի, եկամուտների մասին։ Իսկ հյուրերը լինում էին մեծ մասամբ նախարարներ ու սեպուհներ։ Սրանք գալիս էին տարբեր վայրերից և ունենում էին տարբեր զրույցներ. ոմանք գանգատվում էին հարևանից, ոմանք խնդրում էին խորհուրդ կամ օգնություն... Զրույցները լինում էին կամ ապարանքում, կամ՝ բացօթյա՝ ծովափին, նայած եղանակին։ Մերուժանը սիրում էր զրուցել ավելի ծովափին, որ սպասավորներից և ոչ մեկը լսի իրենց, ինչ հնարավոր չէր տանը։ Մերուժանը չէր վստահում ծառաներին. նրան թվում էր, թե ամենքը լրտեսներ են՝ մորից կամ թագավորից կաշառված։ Այդ էր պատճառը, որ նա գերադասում էր զրուցել դուրսը... Իսկ երբ զրույցը վերջանում էր, նա հյուրին հրավիրում էր ճաշի։

Բայց Մերուժանը բոլորին միատեսակ չէր ընդունում. մոտիկներին, ավելի շուտ՝ համախոհներին ընդունում էր սի-

րով, անծանոթներին վերապահությամբ, երբեմն կասկածով, վասնզի նրան թվում էր, թե Արշակ թագավորը կամ թշնամի նախարարներից մեկը կարող է ուղարկած լինել մահափորձի համար։ Պետք էր զգույշ լինել...

Զգուշությունն անհրաժեշտ էր մանավանդ այժմ, որովհետև Մերուժանին թվում էր, թե Արշակ թագավորն արդեն իսկ իրազեկ պիտի լինի, որ ինքը, կանչվելով, մեկնել է Տիզբոն. իսկ թե ի՞նչի՝ ինքը ոչ ոքի չէր ասել հարկավ, բայց թվում էր նրան, որ կասկածամիտ Արշակը չէր հանգստանա մինչև չիմանար՝ ինչի՞ է կանչվել և, եթե անգամ չիմանա, կդիմի վճռական միջոցի՝ կուղարկի վրեժինդիր ձեռք... Այս զգուշության հետ միասին Մերուժանը մտածում էր, որ եթե իրագործվի իր իղձը, նա կզղին կդարձնի արքայական ոստան և այդտեղից կկառավարի Հայոց Աշխարհը. երեք նավակի փոխարեն կունենա շատ նավակներ, դրանք կսուրան ամեն ուղղությամբ և կտանեն ամենուր իր արքայական հրամանները...

Այդ օրն էլ, երբ Կամսարականը եկավ մոտը, նա տարված էր այս մտքերով։ Ծովն առավոտից վեթվեթում էր մանրակոհակ. ալիքները համաչափ շաչյունով գալիս լիզում էին ափերի ավազանները և ետ գնում հանդարտ, արևի ցայտերը իրենց երեսին, որ թվում էր ժպտում են հազարաձև ժպիտներով, բայց կեսօրին մոտ կոհակները դարձան ալիքներ և հետզհետե ուռչելով ու ճերմակ բաշեր առնելով, սկսեցին օրորել ծովը, ծածկել նրա ամբողջ մակերեսը։ Խոնավ քամի բարձրացավ և օդը լցրեց ջրերի շառաչով։

Մերուժանը, հետաքրքիր իր սովորությամբ, ճեմում էր հարթ ափին։ Հագել էր մուգ գույնի կապա՝ թևքերը կողքերից թողած։ Ոտքերին սրաքիթ մույկեր էին, գլխին՝ խույրի նման գդակ, մեկն այն գդակներից, որ դնում էին պարսից ավագները. սրանց նման նրա մազերը նույնպես գանգրացված էին հատկապես ծայրերը և մորուքի վարի մասը։ Խոսում էին, որ Մերուժանն այդ անում է ոչ այնքան իր ճաշակի պահանջով, որքան պարսիկներին հաճոյանալու համար, քանի որ, որպես Իրանին սահմանակից նախարար, հաճախ հանդիպումներ էր ունենում այդ երկրի երևելիների հետ, իսկ վերջիրս երբեմն հրավիրվում էր Տիզբոն, ուր նրան ըն-

դունում էին պատվով, խոսում սիրալիր, մանավանդ անում էին գրավիչ խոստումներ...

Շրջում էր Մերուժանը հանդարտ և, չնայած քամին խաղում էր նրա քղանցքների ու թեզանիքների հետ, նա չէր դադարեցնում երթևեկը։ Այդ պահին նրա միտքն զբաղեցնում էին շատ խնդիրներ, հանդիպումի խոսքեր. բայց ամենից շատ մի կարևոր խնդիր, այն, թե պետք է հաշտ ու բարեկամ լինել պարսից, այլապես նրանք մի հարձակումով կարող են գրավել իր ողջ կալվածները... Պետք է մտերմանալ պարսից և նրանց խոստումները չհամարել անարժեք ու սին... Շապուհը ամենազոր է. եթե կամենա՝ կանի ամեն ինչ. անգամ կարող է թագ դնել ուզած մարդու գլխին...

Այս մտքերի մեջ Մերուժանը նայեց ծովի հեռուն և նկատեց ճերմակ մի դրոշ։

«Նորից այցելու,— մտածեց,— և ո՞վ կարող է լինել»։

Նորից ավելի ուշադիր նայեց քամուց ծածանվող ճերմակին և, շրջելով տան կողմը, ձեռք բարձրացրեց։ Ծառաներից մեկ-երկուսը, որ հեռվանց միշտ հետևում էին իրենց տիրոջը՝ նրա հրամանին ու ակնարկին պատրաստ, վազեցին դեպի Մերուժանը։

— Նավակ ուղարկեցեք ափ,— կարգադրեց նա, երբ ծառաներն իրար առաջելով մոտեցան նրան։

Կարգադրեց ու ինքը շարունակեց նույն համաչափ քայլքը ափի երկարությամբ։

Մինչ նա ենթադրություններ էր անում, թե ո՞վ կլինի եկողը, նավակներից մեկը չորս թիավարներով գնաց այցելուին կղզի բերելու։ Ալեկոծությունը չէր խանգարում նավակի ընթացքը. մարդիկ հուժկու շարժումներով այնպես էին վարում տաշտանման, կպրից սևացած մակույկը, որ նա ջրերի վրայով սահում-սլանում էր ձուկ հալածող մի խոշոր սև թռչնի նման։

Երբ նավակը հասավ մյուս ափը և եկողներին ընդունելով բռնեց վերադարձի ճանապարհը, Մերուժանը կանգնեց ափին և ջանաց ճանաչել եկողին։ Նավակի մեջ նստած էր դիք մեկը՝ սև գդակով և սև վերնազգեստով. նրա ետևը տեղավորվել էին ուրիշ երկուսը։

«Դրանք հավանաբար առջևում նստողի ծառաներն են»,— մտածում էր իշխանը, չկարողանալով ճանաչել եկողին։

Ծովը տատանում էր նավակը, փրփրաբաշ ալիքները երբեմն գալիս թեքում էին նրան այս-այն կողմ, բայց թիավարները պահում էին ուղղությունը և առաջանում շարունակ։ Իսկ Մերուժանը խոշոր աչքերը լարած նայում էր անվերջ և չէր կարողանում գեթ մոտավորապես կռահել եկողի ո՛վ լինելը։ Եվ այդպես մինչև մակույկը չհասավ ափը՝ նոր միայն բացականչեց.— «Տեր Կամսարակա՞ն»,— ու ձեռքը մեկնեց նրան նավակից դուրս քաշելու։

Ու երկու վայրկյան անց նրանք գնում էին դեպի կղզու ապարանքը։

— Է՛հ, սիրելիդ իմ իշխան, բարի լինի գալուստդ,— ասաց Մերուժանը հյուրին, երբ երկուսով տեղավորվել էին ընդունարանի փափուկ գահավորակի վրա։— Սակայն ինչո՞ւ տխուր ես։ Մի՞թե հրավիրածդ իշխանաժողովը չհաջողվեց։

— Հաջողվեց, տեր Արծրունի. սակայն...

— Սակա՞յն,— լարվեց Մերուժանը հետաքրքիր։— Արդյո՞ւնքը։ Ինձ չհաղորդեցիր արդյունքը։

— Արդյունքը նույնպես բարեհաջող,— շեշտեց Կամսարականը։— Ամենքյան զայրացած են և համամիտ՝ չթողնել, որ Արշակը իր հրովարտակով հրապուրի և գողանա մեր մարդոց։

— Այդ պարագային դու պետք է լինես ուրախ, իշխան, և ոչ ընկճված,— նկատեց Մերուժանը, շարունակելով զննել հյուրի դեմքը։

— Ընկճված, այո, վասնզի եղավ սպասածիս հակառակը...

Եվ Կամսարականը, պատմելով ժողովի ընթացքի մասին, հիշեց այն հանձնարարությունը, որ արել էին իրեն նախարարները, այն է՝ խնդրել քահանայապետի միջնորդությունը, որ նա համոզի Արշակին՝ ետ վերցնելու իր հրովարտակը, այլապես... Ինչպես ժողովի մասնակիցները, այնպես և ինքը վստահ էր, որ Արշակը պիտի երկնչի նախարարների դժգոհությունից և ետ վերցնի իր հրովարտակը, սակայն...

Մերուժանը գլուխը տարուբերեց քմծիծաղ։

— Եվ Արշակը չէր կարող վարվել այլ կերպ, սիրելիդ իմ

իշխան։ Նա հարկավ պիտի մերժեր, և նա եղել է իրավացի։ Դիմելով նրան՝ մատնել եք ձեր տկարությունը։ Թշնամուց դժգոհը չի դիմում նրա գթասրտության, այլ հարվածում է։ Թշնամու հետ բանակցել կարելի է ժամանակ շահելու համար, բայց երբեք նրան համոզելու... Անուղղելի սխալ։ Արշակը ոչ միայն պիտի մերժեր, այլև պիտի արհամարհի ձեզ ավելի, որ դուք...

Կամսարականը շառագունեց, ապա գունատվեց. նա զգաց իր սխալը. այո, չպետք է դիմեր Արշակին։ Զգաց ու միաժամանակ մտածեց, եթե Մերուժանն ինքը ներկա լիներ իշխանաժողովին՝ այդ սխալը չէին գործի...

— Ի՞նչ պետք է արած ուրեմն, տեր Արծրունի,— հարցրեց նա։

— Այն, ինչ պետք է անել ամեն թշնամու դեմ— գտնել բարեկամներ ու դաշնակիցներ և...

— Նախարարաց մի մասն արդեն իսկ դեմ են Արշակին,— ասաց Կամսարականը,— և արդեն իսկ դաշնակից բնական։

— Դա հույժ պակասավոր է,— գլուխն օրորեց Մերուժանը։— Արշակին ընկճելու համար պետք է առավել զորավոր դաշնակից։

— Բայց որտեղի՞ց։ Կա՞ այդպիսին...

— Դիցուք... Շապուհը։

Կամսարականը շտկվեց, կարծես խայթված և անթարթ նայեց Մերուժանին։

— Շապո՞ւհը... Ինչպե՞ս։ Նա ինքը ավելի աղետ չի՞ բերի մեզ ամենից, տեր Արծրունի։ Նա չէ՞ որ...

Մերուժանը ժպտաց։

— Մի վախենար, իշխան։ Ես այդ անունը հիշեցի այնպես։ Բայց մենք կարող ենք խնդրել Շապուհին մի այլ բան, որ նա Արշակի փոխարեն տա մեզ մի այլ թագավոր։ Թող գա մի ուրիշը, որ հարգի մեզ։

— Իսկ Շապուհը արդյոք չի՞ բերի մի պարսիկ և դնի մեր գլխին։

— Կարող է թագավոր կարգել և հայ իշխանի։

— Բայց կա՞ արդյոք մի այդպիսի հայ իշխան։

— Եվ ինչո՞ւ ոչ,— ասաց Մերուժանը։— Ահավասիկ ինքդ, իշխան։

— Ե՞ս,— զարմացավ և վախեցավ Կամսարականը։— Կատակո՞ւմ ես, տեր Արծրունի։

— Բնավ, տեր Կամսարական։ Արշակի փոխարեն կարող է մեր երկրում թագավորել մեծատոհմիկ մի հայ իշխան։ Մի՞թե չկա այդպիսին։

Կամսարականը մտածեց մի վայրկյան և զգաց, որ Մերուժանը անշուշտ նկատի ունի ինքն իրեն և ցանկանում է հավանաբար, որպեսզի Կամսարականը իր բերանով ասի այդ։ Բայց Կամսարականը չասաց ոչինչ, այլ միայն կրկնեց.

— Ո՛չ, տեր Արծրունի, ես անեծք չեմ վերցնի վրաս. թող թագավորի Արշակը, բայց և հանգիստ թողնի նախարարաց։

Արծրունին շուրթերը ծամեց։

— Հանգիստ թողնի՞... Պատրանքնե՞ր...— ասաց կարծես ինքն իրեն, ապա, խոսելով հին իրավունքների մասին, հիշեց, որ անցյալում ոչ մի թագավոր չի ոտնահարել նախարարների այդ իրավունքը, պատիվը, և ապա ավելացրեց, որպես եզրակացություն.

— Բայց, իմացիր, իշխան, քանի կառուցվում է այդ Արշակավան կոչվածը, նախարարներիս չի լինելու հանգստություն. մեր ծառաները պիտի փախչեն այնտեղ... Կարո՞ղ ես ասել՝ Արշակը միայն քաղա՞ք է կառուցում, թե բերդ։

Որքան էլ հարցը դարմացրեց Կամսարականին, բայց պատասխանեց հանդիստ.

— Միևնույն է, տեր Արծրունի։ Ի՞նչ կուզե կառուցի, միայն թե՝ թողնի մեզ հանգիստ և չգրավի մեր մարդոց։

Բայց Արծրունին շարունակեց իր միտքը.

— Իսկ այդ Արշակավանը դու համարում ես լոկ քաղա՞ք։

— Հարկավ։

— Եվ սակայն, իշխան, լուրեր են հասնում, թե Արշակը մտադիր է այդ քաղաքը դարձնել բերդ։ Մի՞թե այդպես չէ...

— Պիտի խոստովանեմ՝ երբեք չեմ լսած,— խոսեց Կամսարականը մտածումների մեջ։— Գիտեմ այսքանս։ Արշակը ինձնից պահանջեց իմ բերդերս՝ ես մերժեցի (դու այդ գիտես)։ Որից հետո նա ձեռնարկեց այդ ավանի շինության։ Եթե դա լինելու է բերդ՝ թող լինի, որպեսզի Արշակը աչք չդնի ուրիշի բերդերին։

Մերուժանը գլուխը տարուբերեց կրկին.

— Կառուցելով իր բերդը, իշխան, կարծո՞ւմ ես Արշակը քո բերդերը կթողնի՞ քո ձեռքը։

— Եվ ինչու՞։

— Այնպես, ինչպես այժմ գրավում է իմ, քո և մյուս նախարարաց ծառաներին, այնուհետև, ամրանալով ու հզորանալով, այդպես կգրավի բոլորիս բերդերը, որպեսզի ամենքիս դարձնի իր ծառաները։ Թվում է ինձ, որ նա քաղաք չի շինում, այլ բերդ՝ մեզ ամենքիս իրավազուրկ անելու և իրեն ենթարկելու։ Այսօր գրավում է մեր ծառաներին, որպեսզի վաղը հարձակվի մեզ վրա։ Լինենք զգաստ և հեռատես, իշխան։ Կանխենք աղետը, քանի չի պայթել մեր գլխին։

— Իրա՞վ Արշակը միտում է այդօրինակ չարության։

— Մի՞թե տարակուսում ես, իշխան։

— Կարծում էի՝ մեր մարդոց գրավում է լոկ մեզ տկարացնելու համար։

— Ոչ միայն տկարացնելու, այլև իսպառ բնաջնջելու, իշխան, բնաջնջելու։ Կամենում է նախ վերացնել մեծերին, որ փոքրերը մնան հնազանդ։ Արշակն ինքը ունի բազում շներ։ Թող որքան կուզի խաշար հանի և պարհակ պահանջի։ Չի կամենում, վասնզի նպատակադրել է հողին հավասարել մեզ։ Իսկ քո ծառաներից շա՞տ են փախել, տեր Կամսարական։

— Հարկավ։ Չէ՞ ես ավելի մոտ եմ Արշակավանին։ Իսկ քո ծառաների՞ց, տեր Արծրունի։

— Նույնպես։ Բայց չեմ թողնի այսպես։ Թույլ չեմ տա։

Այստեղ Կամսարականը հայտնեց Համունու սպանությունը՝ իր մանրամասներով։

Մերուժանը տնքաց.

— Ահավասիկ, իշխան։ Եթե թույլ տանք Արշակին անել ինչ կամենում է՝ դա կլինի ամենքիս վախճանը։ Նա խորամանկությամբ ծառաներին գրգռում է մեր դեմ, որ ոչնչացնի մեզ։ Նույնն անում է քահանայապետ Ներսեսը, եթե կամենաս։ Երկուսն էլ մի նպատակ ունին՝ խլել ժողովրդյան միմյանց ձեռքից և նվաստացնել մեզ...

Կամսարականը զարմացած էր. նա վտանգն այդքան մեծ չէր պատկերացրել, չէր կարծել, թե թագավորը, ինչպես Մերուժանն էր ասում, այդպիսի հեռավոր նպատակներ ունի, և այժմ լսելով այդ՝ կարծում էր, որ եթե կարողանան իրենց

ֆախած ծառաներին ետ բերեն և կամ մնացածներին չթողնեն փախչել, դրանով իսկ կխանգարեն Արշակի ծրագիրները...

Այնուհետև նրանք իրենց զրույցը շարունակեցին ավելի կամացուկ, ու խոսեցին մինչև ուշ գիշեր, երբ դուրսը լսվում էր արդեն հուզված ծովի մեծաշառաչ ճողփյունը ափերին։

Մյուս օրը Կամսարականը կղզուց հեռացավ պայծառացած։

Թե ի՞նչ էին խոսել Մերուժանն ու նա— մնաց անհայտ։

ԿԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Արշակավան... Ամառային զով առավոտ էր։

Քաղաքը զարթնել էր վաղուց. երդիկներից, բակերից անվերջ ծխեր էին բարձրանում և երբեր սյուներով ձգվում վեր, դեպի ջինջ կապույտը, ու ամեն կողմ արդեն սկսվել էր առտնին շարժում. մի տեղ մեկը կովը տանում էր դաշտ, մի այլ տեղ տանտիկինները այծերը քշում էին բանջարանոցից, մի ուրիշը վազում էր խրտնած ձիու հետևից։ Տղամարդիկ մենակ կամ խմբերով շտապում էին այս-այն կողմ, կանայք և աղջիկներ մաքրում էին բակերը, կավե կժերն ուսած գնում էին ջրի կամ արդեն վերադառնում էին աղբյուրից... Եվ օդը, գնալով, լցվում էր տարբեր կանչերով, ձայներով ու միօրինակ տևական մի դրնգոցով, որ գալիս էր դարբնոցից, ավելի շուտ՝ դարբնոցի առջևից, ուր քաղաքում հայտնի դարբին Դավիթը ուղղակի փողոցում, ինչպես ամեն օր, իր աշակերտների հետ շիկացած երկաթ էր ծեծում.— դի՛նգ-դրա՛նգ, դի՛նգ-դրա՛նգ... Մետաղյա հուժկու հարվածներ, որ հաճախ խլացնում էին քաղաքի մյուս բոլոր ձայները, անգամ քարտաշների քարակոփը։

Գնալով օրը բացվում և ժամ առ ժամ ավելանում էր թե՛ մարդկային շարժումը և թե՛ ժխորը. կառուցվող տների վրա երևացին մարդիկ, փողոցներում ճռնչացին սայլեր, սայլերի հետևը՝ գաղտագողի շարժվող մանուկներ։ Դրանք այն սայլերն էին, որ ամեն առավոտ գնում էին գերաններ, քար և եղեգ կրելու, և երեխաները, նրանց գնալու ժամն իմանալով,

խմբերով թափվել էին փողոց՝ նրանց վրա բազմելու և որոշ մի տարածություն գնալու։ Բայց սայլապանները, ինչպես միշտ, կատակով մատ կամ ճիպոտ էին թափ տալիս նրանց վրա և ապա խրախուսում եզներին.— Հե՛, հո՛...

Իսկ փոքր անց, երբ քաղաքի շարժումը հանդարտել էր թեթևակի՝ գլխավոր փողոցում երևաց շահապ Վարազ իշխանը՝ իր սևաթույր նժույգը նստած, երկու թիկնապահ հետը։ Նա դանդաղ շարժվում էր փողոցով, որը ծածկված էր եղեգնի փնջերով ու փշուրներով։ Իշխանի ձին, որ դրանք կոխոտելով առաջանում էր հպարտ քայլքով, փոքրիկ գլուխ ուներ ու բարակ ոտներ. զարդարված էր դեղնավուն տապճակով և փափուկ թամբով, որի կեխերն արծաթած էին, ինչպես և պախուրցի հանգույցները։ Նժույգը գեղեցիկ էր, իսկ զարդերն ավելի էին գեղեցկացնում նրան։ Թերևս այդ էր պատճառը, որ Վարազ իշխանը, անգամ վատ տրամադրության մեջ, երբ հեծնում էր նրան, իրեն զգում էր ուրախ ու թեթև։

Հանդարտ գնում էր իշխանը և ձիու բարձրությունից զննաբար նայում առաջը փռված քաղաքին, ուր, ինչպես միշտ, տեսնում էր նախ այն բլրանման բարձունքը, որի վրա շինվում էին պալատն ու եկեղեցին, երկու մեծ շենք, որ տակավին անավարտ, իշխում էին քաղաքի վրա, նրա միհարկանի տների վրա, որոնց գորշությունը մեղմացնում էին տեղ-տեղ երևացող ծառախմբերը, պարզապես փոքրիկ պարտեզները։ Իշխանի հայացքը հածում էր թաղից թաղ, դիտում մոտ կամ հեռու կառուցվող տները, նկատում էր նրանց վրա աշխատողներին և, մոտենալիս, բարևում միևնույն խոսքերով.

— Բարևողջույն վարպետաց...

Ասում էր, ձին կանգնեցնում մի երկու վայրկյան՝ աշխատանքները դիտելու, ապա ճանապարհը շարունակում էր զույգ թիկնապահների հետ։ Նա հագել էր մուգ կանաչ կապա, դրա երկար թևքերը, ըստ սովորության, գցել ուսերին. գլխին դրել էր բարակ գդակ, որի տակից գանգրածայր մազերն իջնում էին մինչև օձիքը, իսկ մորուքը իր սև ու ճերմակ թելերով երերում էր կրծքին՝ նժույգի քայլերին համաչափ։ Եվ որովհետև ձիու սանձը բռնել էր աջով՝ բութ մատին աչքի էր ընկնում ոսկե լայն մատանին, որի տափակ գլխին փորա-

գրված էր նրա տոհմանիշը՝ կանգնած եղջերու, ինչ ծառայում էր որպես կնիք։

Դա Վարազ իշխանի ամենօրյա երթն էր քաղաքում՝ շինարարությունը դիտելու և շինարար վարպետներին խրախուսելու համար։

Չնայած երկրում շատ նախարարներ և այլ կարգի մարդիկ դժգոհում էին Ավանի դեմ, ոմանք նաև նզովում, ինչպես եկեղեցականները, բայց քաղաքը կառուցվում էր անհապան։ Վարազ իշխանի ցուցումներով շինում էին մի քանի խոշոր շենքեր, հարթում-բանում էին նոր ճանապարհներ, որոնք պիտի տանեին դեպի հարևան գյուղերը. շինում էին նոր աղբյուրներ, որոնց ջուրը կավե խողովակներով բերում էին հեռու լեռներում գտնվող ակունքներից։ Դրսից դիտողը և թե քաղաքի մեջ շրջողը տեսնում, լսում էր շարունակ շինարարական իրարանցում ու աղմուկ, և դա ոչ թե մի թաղում, այլ ամեն կողմ. քար էին տաշում, շաղախ էին անում, պատ էին շարում, գերան էին հղկում, կամ՝ դուռ ամրացնում... Շատ փողոցներում թափված էին շինանյութեր, և երեխաները խաղում էին դրանց մեջ. բազմաթիվ սայլեր քար, եղեգ, գերան էին կրում միակտուր, չյուղած անիվների սուր, երբեմն ամեն ինչ խլացնող ճռինչով։ Դրանց ավելանում էին սայլվորների կանչերը և որմնադիրների ձայնը, որ կառուցվող տների վրայից պահանջում էին քար, աղյուս կամ շաղախ...

Մեծ թվով վարպետներ ու գործավորներ աշխատում էին եկեղեցու վրա, որը պալատի հետ միասին շինվում էր քաղաքի կենտրոնում, իշխող բլուրի վրա։ Այս երկու շենքերի պատերն այժմ իսկ, իրենց անավարտ վիճակում, ավելի բարձր էին, քան բոլոր տները։ Արքունի գործավորների հետ միասին աշխատում էին տարբեր նախարարություններից եկած մարդիկ, որոնց մի բառով կոչում էին «տիրափախ», այսինքն՝ տիրոջից փախած, որ վիրավորական չէր թվում բնավ, այլ ընդհակառակը. խոսքը կարծես քաջություն կատարած մարդու մասին էր։ Արքունի շինականները բացառապես ապրում էին կացարաններում, նույն տեղերում ապրում էին և նորեկ տիրափախները։ Ընտանիքավորները կացարաններում ունեին մի-մի խուց, իսկ մենակներն ապրում

էին ընդհանուր խցերում. հինգ-վեց, երբեմն մինչև տասը հոգի մի տեղ։ Այդ կացարանները Վարազ իշխանը կառուցել էր քաղաքի շինարարության սկզբից՝ այդ իսկ նպատակով։ Դրանք շատ հասարակ, ցածրիկ շենքեր էին, որ իրենց լույսն ու օդը ստանում էին դռնից, երդիկից կամ փոքրիկ, երկու թզաչափ պատուհաններից։ Մարդիկ այդտեղ արթնանում էին շատ վաղ, մեկը մյուսի ձայնից կամ հրումից և գնում այս-այն թաղը, վերակացուների հսկողությամբ մեծ շենքերի վրա աշխատելու, կամ՝ քաղաքից դուրս՝ քար, շինափայտ ու եղեգն կրելու, բերվող աղբյուրների կավե խողովակները շարելու։ Ընդունված կարգի համաձայն՝ վարպետներն ու գործավորները բաժանվում էին խմբերի, և յուրաքանչյուր խումբ աշխատում էր որոշ տեղում, մի որոշ տան վրա և յուրաքանչյուրը գիտեր իր անելիքը։

Այդպիսի կարգ էր սահմանել կառավարիչ իշխանը քաղաքի շինարարության դեռ սկզբից, և դա, նրա կարծիքով, նպատակահարմար էր և արդյունավետ։ Միևնույն ժամանակ Վարազ իշխանը, հավատարիմ իր սկզբունքին, թե գովեստով ու խրախուսանքով մարդուն կարելի է աշխատեցնել առավել լավ, խոսք չէր խնայում վարպետներին ու գործավորներին և ամեն խրախուսանքի վերջում կրկնում էր միշտ.

— Ջմոռանաք, ավարտումից հետո լինելու են արքունի պարգևներ ամենքի՛ն, ամենքի՛ն...

Խոստումը հարկավ լինելով գրավիչ՝ ոգևորում էր գործավորների մեծ մասին, մանավանդ որ մի երկու անգամ պարգևներ տվել էր մի քանի մարդու։— Արքունական պարգևնե՛ր...

Քաղաքում աշխատում էին և կանայք։ Սրանք կատարում էին համեմատաբար թեթև գործեր՝ կավահող էին կրում, մաղում, շաղախ անում՝ կավին ավազ ու դարման խառնելով։ Այդ կավից նրանք թափում էին նաև աղյուս, և կաղապարած այդ աղյուսները շարում հարթ տեղեր՝ չորացնելու... Այդ շաղախների համար կժերով ջուր էին կրում աղբյուրներից կամ Ջկնգետից։ Ոմանք սայլերով բերված եղեգը իջեցնում էին գիրկ-գիրկ և փռում գետնին, որ չորանա, իսկ չորերը բարձրացնում էին կտուրները և փռում նորավարտ տան գերանների վրա։

Եղե՜գնը... քաղաքը լիքն էր դրանով, որովհետև եղեգնը համարվում էր կարևոր շինանյութ՝ փայտին գրեթե հավասար. բացի այն, որ դրանով ծածկում էին տանիքները, այլև շինում էին հոլիկներ՝ ամառվա ժամանակավոր օթևաններ նորեկների համար։ Երբեմն դրանով պատեր էին հյուսում և, դրսից ու ներսից ծեփելով, բնակվում մեջը։ Իսկ օջախները և թոնիրների մշտական վառելանյութը եղեգն էր արդեն՝ դյուրամատչելի և դյուրավառ։

Աշխատանքների մեջ ուրախ էր անցնում առանձնապես գերանները կտուր բարձրացնելը։ Չգիտես տունն ավարտելու ուրախությունի՞ց էր այդ, թե աշխատանքի բնույթից,— մարդիկ պատերի վրա կանգնած, պարաններով ձգում էին գերանները և կանչում.

— Տո՛ւր, քաշի՛ր... Տո՛ւր, քաշի՛ր...

Բառերը կրկնվելով՝ դառնում էին երգի պես բան, խլացնում շրջապատի բոլոր, անգամ դարբնոցի ձայները և գալիս մարդկանց հեռու-մոտիկ տներից. բակերից դուրս էին թափվում մարդ, կին, երեխա տեսնելու, թե ի՞նչ է կատարվում. շատերը վազում էին մոտիկից դիտելու, իսկ երեխաները խանդավառվում էին և, իրենց զվարթ կանչերով, քաշողների հետ կրկնում նույնը.

— Տո՛ւր, քաշի՛ր... Տո՛ւր, քաշի՛ր...

Երեխաներն ավելի զվարճանում էին այն պահերին, երբ լծված եզները փողոցներով գետնաքարշ գերան էին տանում որևէ կողմ. խմբերով, թռչունների պես, շարվում էին այդ գերանների վրա և... գնո՜ւմ։ Դա նրանց պատճառում էր անասելի հաճույք։ Պակաս չէին գրավում նրանց նաև եղեգնակիր սայլերը, որոնց նկատելուն պես՝ վազում էին ամեն կողմից, կտրում սայլի հետևից կախված ավելանման եղեգնափնջերը և տանում խաղում բակերում. իսկ ոմանք եղեգնի փողերից շվիներ էին շինում և սուլում անվերջ։ Պատահում էր նաև, որ տղաները, հաճախ խմբերի բաժանվելով, այդ փնջերով միմյանց զարկում էին այնքան, որ նրանք ջարդվում, անպետքանում էին, որպես կովի գենք ու խաղալիք... Ահա ինչո՜ւ շատ փողոցներում թափված-տարածված էին եղեգնի տերևներ ու փշուրներ։

Քաղաքի այն մասը, որ շինված էր տարիներ առաջ, այ-

ինքն՝ նրա կառուցման առաջին տարիները, ուներ արդեն խիտ շարքերով տներ, որոնք իրենց հերթին ունեին ծառեր և բանջարանոցներ, ախոռներ և այլ հարակից մասեր շենքեր։ Այդ թաղում գրեթե ամենքը, որպես հին բնակիչներ, ունեին կովեր, այծեր և հավեր։ Այդ մասումն էր և գլխավոր փողոցը՝ երկու քարաշեն աղբյուրով, որոնց հորդ ջրերը գիշեր-ցերեկ շաչում, զրնգում էին և կենդանացնում շրջապատը, մանավանդ որ յուրաքանչյուրի առջև կար մի-մի մեծ քարե գուռ, ուր ջրվում էին քաղաքի անասունները՝ եզները կոտոշները իրար շրխկացնելով, ձիերը երբեմնակի փռնգտոցով, իսկ այծերն ասես միայն համտես էին անում ջուրը՝ սուր-կախ մռութները շարժելով։ Այս փողոցի վրա էր և մեծ իջևանատունը՝ երկու մասի բաժանված։ Մի մասում նեղ պատուհաններով փոքրիկ խցեր էին՝ ուղևոր առևտրականների համար, որոնք իրենց ծառաներով և բեռնաբարձ ուղտերի քարավաններով Հնդու երկրից Իրանով գալիս գնում էին Բյուզանդիա կամ Բյուզանդիայից դեպ Իրան ու հեռուն։ Իջևանատան մյուս մասը ախոռն էր, ընդարձակ ախոռը, ուր միանգամից կապում էին երեսուն-քառասուն ուղտ ու ձի։ Այդ միայն ձմեռը, իսկ ամառը ուղտերը նստում էին բակում կամ փողոցում և առասպելական փետրաթափ թռչունների նման վիզները պարզած որոճում էին գիշերն աստղերի տակ, ցերեկն՝ արևի, գրավելով միշտ հետաքրքրասերների բազմություն, առանձնապես երեխաների։

Հեռավոր վայրեր գնացող այդ մեծ քարավաններից զատ՝ քաղաք մտնում էր նաև շաբաթը մեկ-երկու փոքր քարավան՝ զանգուլակների տևական ու ծորուն զնգոցով, որը միաժամանակ թվում էր քաղաքացիներին արթնացնելու, թե հրավիրելու ազդանշան... Այդ քարավանները բերում էին բազմատեսակ ապրանքներ և վաճառում իջևանատան բակում կամ փողոցում։ Քարավանի գալը տոնի պես բան էր լինում. երբ լսվում էր նրա բոժոժների ծանոթ կարկաչը՝ շատերը վազում էին ընդառաջ. «Գալի՞ս է, գալի՞ս»... «Եկա՜վ, եկա՜վ»... Եվ ուղեկցում էին մինչև իջևան։ Իսկ երբ հազիվ իջեցնում էին բեռները՝ իջևանատան բակն ու փողոցը դառնում էր շուկա.— բոլորն անհամբեր սպասում էին հակերի բացվելուն... Իսկ երբ բացվում էին դրանք՝ սկսվում էր անասելի իրարանցում.

կին, մարդ, մեծ, փոքր հրհրում էին միմյանց, ապմկում. յուրաքանչյուրը ձգվում էր, որ առաջինն ինքը տեսնի դրսից բերված նորությունը... Հակերից դուրս էին գալիս գունագեղ՝ կարմիր, կապույտ, ճերմակ... ամեն գույնի կտորներ՝ շալ, կերպաս, մետաքս, քաթան. նաև պղնձի, բրոնզի, երկաթի իրեր... նաև պես-պես հուլունքներ, կոճակներ, կեղծ փայլուն ոսկեգույն դրամներ, որոնցով կանայք զարդարում էին թե հագուստները և թե շարում ճակատներին, կամ՝ շարած գցում վզները, երբեմն կապում և բազուկներին կամ կարում վերնազգեստի թևքերին։

Քարավանի եկած օրը և մյուս օրերը իջևանի առաջ և նրա բակում հավաքվում էին նաև շատ շներ՝ ընկած կամ նետած կերի մնացորդներն առնելու։ Այդ առևտուրն այնքան մարդ էր հավաքում, թվում էր քաղաքը կյանք էր առնում այդտեղից, թվում էր դա է քաղաքի զարկերակը... Քարավանի այս առևտրից բացի՝ քաղաքն ուներ և՛ ձեռքի առևտուր, և՛ արհեստներ։ Թեև մաշիկներ և շատ երկաթե իրեր բերում էին քարավանները, բայց քաղաքում էլ կային մաշկակարներ, որ տարբեր ձևի մաշիկներ էին կարում թե՛ կանանց և թե՛ տղամարդկանց համար, կային հյուսներ և երկաթագործներ։ Երբ քաղաքում լսում էին ձայները՝ ամենից բարձր լսվում էին երկաթագործների մուրճերի ուժգին, բայց համաչափ հարվածները, որոնցից ամենաուժգինը դարձյալ դարբին Դավիթի դարբնոցից էր, որ շատ հեռու չէր իջևանից։

Գլխավոր այս փողոցի վրա էին նաև այն մթերանոցները, որտեղից պարեն էին ստանում ընտանիք չունեցող վարպետները, գործավորները և վերջին նորեկները։ Պահեստներին կից էին թոնրատները, ուր ամեն օր հաց էին թխում պառավները, և նորաթուխ հացի հոտը առավոտից բռնում էր ոչ միայն փողոցը, այլև տարածվում էր քաղաքի վրա, մանավանդ քամի օրերը, գրգռելով դուրսն աշխատողների ախորժակը... Թոնրատներից հեռու չէին և ճաշի ակուները։ Մի խումբ կանայք պառավների հսկողությամբ կերակուր էին եփում վիթխարի սաների մեջ և, պարենի ու հացի նման, բաժանում անընտանիք գործավորներին, որոնք, ասենք ի դեպ, բացի հացից ու այդ հասարակ ճաշից, ուրիշ վարձ չէին ստանում։ Եկած օրից, առաջին ամիսներին, այդտեղից էին առ-

նում իրենց ճաշը նաև Թորգոմը և նրա ընկերներ Վարդանն ու Հովսեփը։

Քաղաքի կառավարիչ Վարազ իշխանը նույնպես ապրում էր այս փողոցի վրա, իր սեփական տանը, որ միակ երկհարկանի շենքն էր, շրջապատված բարձր պարսպով, ինչպես մի միջնաբերդ։ Պարսպի ներսը կային պես-պես շենքեր՝ պահեստներ, ախոռներ, մառաններ։ Իսկ տունն ուներ քարե պատշգամ, որտեղից երևում էր քաղաքն իր շրջապատի լեռներով և Կոգովիտի լեռնահովիտի մի մասը։ Իշխանի ընտանիքը մեծ չէր .կինն էր, երկու որդին. բայց ուներ շատ սպասավորներ, որոնք ծառայում էին թե՛ տանը, թե՛ դուրսը։ Ամառները, երեք օրը մեկ, դրանք ձիերով ու ջորիներով գնում էին մայրաքաղաք կամ Սուրմարի՝ մթերք, միրգ բերելու, որովհետև իշխանը սիրում էր առատ սեղան։ Նրա տան առջևից անցնողը միշտ առնում էր տարբեր համեմունքների, կերակուրների հոտ։ Բացի այդ, նա ունենում էր և շատ հյուրեր, որ գալիս էին մայրաքաղաքից կամ այլ ոստաններից՝ նոր քաղաքը տեսնելու։ Մի անգամ եկավ նույնիսկ իր ծերունի հորեղբայրը՝ հազարապետ Դավիթ Գնունին։ Կառավարիչը սովորաբար հյուրերին պտտում էր փողոցներում և, կառուցվող շենքերը ցույց տալով բացատրում, թե ո՞րը երբ է շինված կամ երբ կավարտվի։ Իսկ հյուրեր չեղած օրերը նա իր նժույգը նստած, ինչպես այսօր, մի կամ երկու թիկնապահի ուղեկցությամբ գնում էր աշխատանքները գիտելու, և ամենից առաջ պալատն ու եկեղեցին, ուր բանում էին առավել հմուտ վարպետները։

Այս երկու շենքին Վարազ իշխանը նվիրում էր հատուկ ուշադրություն։ Նժույգից իջնելով՝ մանրազնին դիտում էր ամեն բան. օրվա կառուցվածը, սրբատաշ քարերը, քանդակները։ Ավելի կանգ էր առնում սակայն պալատի մոտ։ Եթե մի որևէ բան նրան թվում էր ոչ պարզ կամ տարակուսելի, հարցնում էր վարպետների ավագին, և եթե բանավոր բացատրությունը չէր գոհացնում իշխանին կամ դժվար էր պատկերացնում, ավագը փռած-հարթած ավազի վրա գծում էր անելիքը։

— Բարի է,— ասում էր վերջապես կառավարիչը և, նորից հեծնելով նժույգը, գնում էր եկեղեցու շինության աշխատանքները դիտելու։

Այսօր էլ ահա Վարազ իշխանը երկու թիկնապահով (որոնք նրան պետք էին ոչ թե իր անձը պահելու, այլ կարգադրություններով այս-այն կողմ ուղարկելու համար) հանդարտ գնում էր կառուցվող շենքերը դիտելու։

Վերջերս նա շարունակ հիշում էր թագուհու պատվերը, թե պետք է ավարտել գեթ եկեղեցին, ուստի և ինչպես միշտ, այնպես էլ այսօր գնում էր տեսնելու նախ ավարտվող եկեղեցին։ Փողոցը, որով գնում էր թիկնապահների հետ, անհարթ էր, անիվներով ակոսված, եղեգնի կտորներով ու տերևներով ցանցնված։ Պատահող անցորդները— կին թե մարդ— կանգնում էին և, ձեռքերը սրտներին դնելով, ողջունում նրան։ Իսկ իշխանը, կապայի մի թևքը ուսը գցած, աջը բարձրացնում էր թեթևակի, ինչ նշանակում էր, թե պատասխանում էր բարևներին։

Փոքր-ինչ առաջ գնալով նա ընդունեց մի տարեց մարդու բարևը և ձին կանգնեցրեց։

— Ո՞ւր, վարպետ,— հարցրեց։

Մարդը կանգ առավ՝ ձեռքը սրտին դնելով։

— Ընտանյաց գործով, տեր իշխան։

— Բարի,— ասաց Վարազը։— Գալիս եմ ձեր վերջին աշխատանքը դիտելու։ Իսկ կինդ ապաքինե՞լ է,— հարցրեց նա և, դրական պատասխան ստանալով, խթանեց ձին ու առաջ անցավ։

Վարազը ճանաչում էր քաղաքի վարպետներից ու գործավորներից շատերին. երբեմն, շինարարությանը վերաբերող խնդիրներից հետո հարցուփորձում էր նրանց, թե ով քանի՞ երեխա ունի, անուններն ինչպե՞ս են, նորածնի կնքահայրն ո՞վ պիտի լինի... Ու հաճախ պատրաստակամություն էր հայտնում՝ ինքը լինել կնքահայր։ Ինչպես խոստումները, այնպես էլ այս մտերմությունը մարդկանց ոգևորելու մի ձև էր նրա համար, և դա տալիս էր իր արդյունքը. աշխատանքը կատարվում էր ավելի, քան կանեին օրվա ընթացքում։

Վերջապես, երբ նա, թիկնապահները հետևից, բարձրացավ քաղաքամիջի այն բլուրը, ուր եկեղեցին էր, ձին քշեց դեպի աղոթատան մուտքը։ Այդտեղ խմբված վարպետներն ու գործավորները գլուխ տվին և հետ-ետ գնացին, որպեսզի իշ-

խանը մտնի ներս, որովհետև ավարտման աշխատանքները այժմ կատարվում էին ներսում։

— Բարյավս վարպետաց և գործավորաց,— ասաց նա փորձելով իջնել, բայց թիկնապահներն խսկույն, ձիերից թռչելով, օգնեցին նրան ոտքը ասպանդակից հանելու։ Իջնելով՝ Վարազը սանձը տվեց դրանցից մեկին և մոտեցավ եկեղեցուն, որ մի երկարավուն շենք էր՝ նեղ պատուհաններով (այնքան նեղ, որ թևաբաց աղավնին չէր կարող մտնել ներս) և կամարակապ մի մեծ մուտքով, որի ուղիղ գլխին և երկու կողմը, միակտուր խոշոր քարերի վրա քանդակված էին հավասարաթև խաչեր՝ յուրաքանչյուրը մի կանգուն երկարությամբ։

— Համարենք ավարտա՞ծ,— հարցրեց նա խաչերը դիտելով։

— Հրամա՛նդ տեր, դուրսը ավարտեցինք,— ասաց վարպետների ավագը՝ ճերմակող մուրուսով հաստաբազուկ մի մարդ, դուրն ու մուրճը ձեռքին առաջ գալով։

Գնունին զննաբար, առանձին-առանձին դիտեց երեք խաչն էլ և ասաց.

— Թվում են լավ։ Ցանկանք, որ արքային նույնպես հաճելի լինի։ Վստա՞հ եք...

— Հուսով ենք։ Արել ենք կարելին։

— Իսկ սեղա՞նը, ավագ վարպետ։

— Այնտեղ պիտի աշխատենք տակավին, տեր շահապ։

— Բայց շտապեք, շտապեք։ Ես արքային խոստացել եմ ավարտել մինչև ամառս և օծումը կատարել շուտով։

Այս ասելով՝ նա մտավ ներս, նրա հետ և ավագը։ Մի խումբ վարպետներ հղկած սալաքարեր էին շարում եկեղեցու մի ծայրին։ Դա լինելու էր սեղանը, որ մի կանգուն բարձր էր քարած հատակից։

— Շտապեք, շտապեք,— կրկնեց Վարազը միառժամ ներսը դիտելուց հետո։ Իսկ երբ պատրաստվում էր դուրս գալ՝ նորից հարցրեց,— հուսամ՝ յոթ-ութ օրից պիտի ավարտենք. այնպի՞ս է։

Թե աշխատանքները և թե ստացած պատասխանը գոհացրին Վարազին, որովհետև նա իրոք Արշակ թագավորին

խոստացել էր շուտով կատարել եկեղեցու օծումը, որին ներկա պիտի լիներ թագավորն ինքը թագուհու հետ միասին։ Հաջող աշխատանքը բարձրացրեց նրա տրամադրությունը. ուրեմն ժամանակին կկատարի օծումը և թագավորը գոհ կմնա իրենից։ Այդ օծումը շտապեցնում էին, որովհետև քաղաքը չուներ տակավին եկեղեցի. թե ժամերգությունը և թե բոլոր ծիսական կարգերը— կնունք, պսակ— կատարվում էին հասարակ տան մեջ, երկու քահանայի ձեռքով։

— Ժամանակին ավարտեցիք՝ արքունի պարգև,— ասաց նա փորձելով հեծնել ձին։ Այս անգամ էլ թիկնապահները օգնության հասան նրան։

Իշխանն այնքան գոհ էր, որ ըստ սովորության չգնաց պալատի աշխատանքները դիտելու, այլ ձին քշեց քաղաքի արևելյան կողմը, ուր չէր եղել արդեն քանի օր։ Մի փոքր գնալով՝ նա հասավ մի մեծ շենքի. դա նոր կացարանն էր՝ երկրորդ կացարանը տիրափախների համար։ Նույնպես մեծ թվով վարպետներ ու գործավորներ էին աշխատում. ոմանք քար էին տաշում, ոմանք պատ շարում ցեխոտ ձեռքերով, ոմանք կավ ու դարման էին շաղախում. երբեմն մի վարպետ կանչում էր «քար», մյուսը՝ «կավ», և ոչ մեկը գլուխը չէր բարձրացնում աշխատանքից։ Իշխանին նկատելով՝ ավելի լարվեցին. իսկ մի երիտասարդ մոտեցավ և գլուխ իջեցրեց։ Դա տիրափախ Թորգոմն էր, որին իշխանը մի տարի առաջ ասել էր. «Ջանադիր եղար՝ կկարգեմ վերակացու», և կարդել էր։

— Օ՜, դանդաղ են բարձրանում պատերը,— ասաց Վարազը առանց ձիուց իջնելու։

— Ջանում ենք, տեր, լրիվ կատարել օրվա գործը։

— Ջանացեք, ջանացեք։ Ավարտեցիք՝ արքունի պարգև,— ասաց նա կամենալով խթանել ձին, բայց կանգ առավ։— Իսկ ինքդ, տղաս, տունդ ավարտեցի՞ր։

— Ոչ, տեր իշխան։

— Եվ ինչո՞ւ «ոչ»։ Չէ՞ տվել եմ քեզ և՛ հող, և՛ ամեն նյութեղեն։

— Ուշանում է, վասնզի նրա վրա գործում եմ սակավ։

— Գործիր ավելի և ավարտիր։ Գալիս են նոր մարդիկ և

ամենքն ունեն կացարանի կարիք,— ասաց իշխանը և ձին քշեց առաջ։

Թորգոմը նայեց նրա հետևից և տխրեց մտածմունքի մեջ։

* * *

Բայց ինչո՞ւ տխրեց Թորգոմը։ Չէ՞ որ նա արդեն Արշակավանումն էր, շահագրգիռ իշխանը նրան հող էր ավել տուն կառուցելու և նույնիսկ կարգել էր վերակացու։

Քաղաք հասնելուց հետո մենք ոչինչ չասացինք Թորգոմի մասին։ Բայց այժմ գոնե պետք է մի քանի խոսք ասել, թե ի՞նչ էր անում նա և ինչպե՞ս էր ապրում։

Օ, Թորգո՜մը... Ամենից առաջ նա շատ զգայուն ու պատվախնդիր երիտասարդ էր։ Իշխանի դիտողությունն այսօր շատ ծանր եկավ նրան, ուստի և տխրեց։

Թորգոմը, իհարկե, ցանկանալով ցանկանում էր՝ շուտ ավարտել տունը, դուրս գալ աղմկոտ ու նեղ կացարանից, մանավանդ որ տան ավարտի հետ էր կապված իր պսակը Մինայի հետ։ Բայց տուն կառուցելը այնքան դյուրին գործ չէր, ինչպես թվում էր առաջ։ Կառավարիչ իշխանը ինչպես բոլոր տիրապետներին, այնպես էլ Թորգոմին ու ընկերներին հատկացրել էր հողամաս ու քար, մնացյալ աշխատանքը թողնելով իրենց։ Սակայն Թորգոմը, լինելով շինարար գործավորների մի խմբի վերակացու, իր տան կառուցումով զբաղվում էր միայն երեկոյան ժամերին, երբ գադարում էր շտապ կառուցվող նոր կացարանի աշխատանքը։ Մինչև գալիս էր ճաշում մոր հետ՝ արևը մայր էր մտնում, այդ իսկ պատճառով իր տան վրա աշխատում էր շատ քիչ, այն էլ օրերի ընդմիջումով. աշխատանքը խանգարվում էր մանավանդ անձրև օրերին։ Եվ ընդհանրապես Թորգոմի կյանքն անցնում էր միօրինակ և հոգսերով լի։ Քաղաքում ամենից շուտ զարթնում էին նրա կացարանի մարդիկ և, շենքի առջև լվացվելով, խմբերով կամ մենակ շտապում աշխատանքի։ Իսկ Թորգոմի մայրը զարթնում էր ավելի վաղ՝ առաջին թռչնակրկրող հավախոսին։ Մորից քիչ հետո զարթնում էր ինքը Թորգոմը։ Երբ նա մի քիչ հաց ուտելով դուրս էր գալիս խցից՝ իր գործավորներին հավաքելու, մայրը գնում էր նրա հետևից և հարցնում.

«Ե՞րբ պի գաս, տղաս»... «Երբ ազատիմ»... «Այսօր պի բանե՞ս տան վրա»... «Պի՛,— հետևում էր պատասխանը, ապա կամացուկ մի խորհուրդ։— Դու Մինային լավ նայե, մարե»... Իսկ երբ մայրը ներս էր մտնում, Թորգոմը թեքվում էր նույն կացարանի ծանոթ խուցի կողմը և կանգնում նրա պատուհանի առաջ։

— Մինա, ինչո՞ր է պապն,— հարցնում էր նա հարսնացուի հոր առողջությունը։ Երբ Մինան պատասխանում էր «լավ»՝ Թորգոմն այնժամ ավելացնում էր. «Էհ, ես գնացի։ Դու մարեին լավ նայե»...

Ու գնում էր, իսկ Մինան անխոս, բայց հպարտ նայում էր նրա հետևից՝ մինչև նա թաքնվում էր աչքից։

Այս Թորգոմի ամենօրյա, սովորական ծեսն էր, որ կատարում էր աշխատանքի գնալուց առաջ։ Ճշմարիտն ասած՝ նա իր պարտքն էր համարում այդպես վարվելու, որովհետև պարտավորված էր զգում այդ երեք հոգու առաջ. չէ՞ որ ինքն էր պատճառ եղել նրանց այստեղ գալու...

Մի տարվա մեջ Թորգոմը եղել էր տարբեր աշխատանքների վրա, բայց այն օրից, երբ նշանակվել էր վերակացու՝ առավոտը պետք է շուտ զարթներ, վարպետներին ու մշակներին հավաքեր գործատեղ և հսկեր, որ աշխատանքը կանգ չառնի։ Բայց նա ոչ միայն հսկում էր մյուս վերակացուների նման, աշխատում էր ինքն էլ, որպեսզի արդարացնի Վարազ իշխանի վստահությունը. դրա հետևանքով և սեփական տունը դանդաղ էր շինվում. ուստի երբ ընկերները, ծանոթները հարցնում էին, թե ե՞րբ է պատկվելու, պատասխանում է.

— Երբ տունս ավարտեմ...

Այս կարծիքին էր և մայրը. «Քանի, տղաս, չունենք մեր օթևան, մեր թոնիր, մեր երդիկ՝ կարելի չէ։ Շիքենք մեր տուն՝ հետո աստուծով»։

Իսկ ծանոթ քահանայի այն հարցին, թե՝ «Էյ, տղաս, ե՞րբ պատկեմ քեզի»,— Թորգոմը պատասխանում էր անփոփոխ. «Տունս ավարտեմ՝ հետո»։— «Իսկ ե՞րբ կավարտես, տղաս»...

— Շուտով, շուտով...

Ու կառուցում էր։ Պետք է ասել, որ տան աշխատանքներին մասնակցում էին մայրը, երբեմն և Մինայի հայրը։

Թորգոմի ընկերները՝ Հովսեփն ու Վարդանը, նույնպես

շինում էին իրենց տները, որ համարյա կից էին Թորգոմի տեղին։ Օրվա աշխատանքից դառնալով՝ Թորգոմը նախ ճաշում էր, հանգստանում մի փոքր և գնում իր տան վրա աշխատելու։ Օրեցօր բարձրանում էին պատերը, ուրախություն բերելով ոչ միայն իրեն՝ Թորգոմին, այլև մորը և աներոջը, որ ամենից ավելի էր շտապում աղջկան ամուսնացած տեսնելու։ Երբեմն տան կառուցումը դիտելու էր գալիս և Մինան. սա խնդուն, գրեթե մանկան ժպիտով ու հետաքրքրությամբ էր նայում տան վրա կատարվող աշխատանքը. թվում էր՝ ավելի է հրճվում ապագա օթևանի համար, քան մյուսները։ Թորգոմը ջանում էր այդ ամառ վերջապես պատերը բարձրացնել և կտուրը ծածկել։ Բայց կառուցումը, հակառակ իր կամքի, դանդաղ էր կատարվում. սկսում էր աշխատել թե չէ՝ օրը մթնում էր։ Այս էլ պիտի ասել, որ Թորգոմն ամեն աշխատանք կատարում էր ինքը. պատրաստում էր դուռ, լուսամուտ կամ գերաններ էր հարթում, և երբեք անգործ չէր մնում, ու մայրը միշտ խրախուսում էր.

— Աստուծով շիքենք մեր տուն, բերենք մեր հարս...

Թորգոմի երազը նույն էր հարկավ։ Բայց երբ նկատում էր մոր թաքնված ուրախությունը, մտածում էր, որ տունը նրա համար ամեն ինչ էր՝ գերագույն մի բան. ուստի ջանում էր մորը չզրկել այդ ուրախությունից, տալ նրան այն մեծ հաճույքը, ինչ բաղձում էր նա։

— Շուտով, մարե, շուտով կշինենք և ամենը կլինի քո սրտով։

— Հա՛, Թորգոմ, կուզեմ տեսնեմ ու մեռնեմ...

Աշխատանքի ժամանակ, երբ Թորգոմը նկատում էր Մինան նույնպես կամենում էր օգնել իրեն, երբեմն ուրախ թեքվում էր դեպի նրա ականջը և շշնջում. «Շուտով կավարտենք մեր տուն և դուն կլինես մեր հարս»... Աղջիկն ինքն էլ թեև սպասում էր դրան, բայց կարմրում էր կակաչի պես, և աչքերը դառնում էին երազային։

Այս աշխատանքների միջոցին Թորգոմը երբեմն հիշում էր անտառի դեպքը և մտածում, թե արդյոք մարդիկ մոռացե՞լ են այդ և վրեժխնդիր չե՞ն լինի սպանված իշխանի համար... Բոլոր նշաններից նա հասկացել էր, որ սպանվածը իշխան էր, բայց թե ո՞վ է՝ չէր կարող իմանալ։ Նրան թվում

էր, թե նրա հետ եղած մարդիկ ճանաչեցին իրեն և ուրեմն կարող են գալ մի օր... Բայց իսկույն էլ վանում էր այդ միտքը։ Սակայն վանել դժվար էր, քանի որ առիթներ էին լինում կասկածելու։ Հազիվ տասը օրվա եկած՝ նա մի օր իմացավ, թե շահապ իշխանը գրություն է ստացել՝ մի սպանության մասին. պահանջում էին սպանողին հանձնել սպանվողի եղբորը։ Վարազը չգիտեր և չէր էլ կարող իմանալ, թե վերջին եկողներից ո՞րը կլինի դա, ու չհետամտեց։ Բայց միայն հետաքրքրվեց, թե վերջին նորեկներից ո՞վ է մարդ սպանել։ Մեծ մասամբ ասում էին՝ չգիտեն, իրենց հայտնի չէ... Այս հարցումով իշխանը դիմեց և Թորգոմին որպես նորեկի. «Լսե՞լ ես, տղաս, անտառում սպանված իշխանի մասին»,— հարցրեց Վարազը։ Թորգոմի առաջին զգացմունքը եղավ զարմանքը.— «Ի՞նչպես է իմացել»,— մտածեց նա ներքին դողով և ասաց. «Ի՞նչ իշխան է, տեր»— «Համունի իշխանն»,— շեշտեց Վարազը։— «Համունի՞»,— նորից զարմացավ Թորգոմը և կրկին մտածեց.— «Ուրեմն եղել է Համունի իշխանը։ «Համունի, Համունի,— մտմտաց նա և գլուխն օրորեց։— Ոչ, տեր, լսած չեմ այդպիսի բան»... Երբ նա իշխանից հեռացավ՝ սիրտը դողում էր. թվում էր Վարազը կարող էր կալանավորել իրեն. բայց հետո հիշեց, որ իշխանը թագավորից հրաման ունի՝ եկողներից և ոչ մեկին չհանձնել տիրոջը, ինչ պարագայում էլ լինի, քանի որ քաղաք մտնողը համարվում է արդեն թագավորի մարդ... Այնուամենայնիվ Թորգոմն այդ օրը իշխանի մոտից անմիջապես տուն չգնաց, այլ շտապեց Հովսեփի և Վարդանի մոտ։ Լսածը պատմելով՝ նա ասաց. «Եթե իշխանը ձեզ հարցնի— չգիտեք, այնպես չէ՞»... «Հարկավ»,— եղավ ընկերների պատասխանը։

Այս նրանց քաղաք գալուց տասը օր հետո էր։ Բայց ամիսներ անց, Թորգոմը երբեմն հիշում էր այն և իսկույն էլ այդ հուշը վանում իրենից, ցանալով մոռանալ։ Եվ մոռանում էր, երբ տարվում էր գործով, զրուցով կամ երբ լինում էր բազմության մեջ։ Իսկ նա երբեք մենակ չէր լինում. սովորություն էր դարձել, երբ մութն ընկնում էր և այլևս աշխատել հնարավոր չէր, գնում էր ընկերների, ծանոթների հանդիպելու։ Եկած օրից նա ուներ արդեն շատ ծանոթներ, նաև հարևաններ, որոնք երեկոները— ձմեռները մեկի կամ մյու-

սի տանը, իսկ ամառը որևէ պատի տակ՝ գերանների և քարերի վրա, հավաքվում էին զրույցի, և զրուցում էին երկար, ամեն ինչից. երիտասարդները երբեմն երգում էին այն երգերը, ինչ երգել էին իրենց շեներում՝ մեծ տոներին, հարսանիքներին կամ դաշտային աշխատանքների ժամանակ։ Իսկ ընդհանրապես հին եկողները պատմում էին իրենց գլխով անցածը, նորեկները՝ իրենց։ Մեկն, օրինակ, պատմում էր, թե երկար ժամանակ որոշել էր փախչել, բայց հնար չէր գտել և մի օր էլ, ի վերջո, վճռել էր փախչել ժանգաղը ձեռին տիրոջ դաշտից, և ոչ ոք չէր կասկածել, թե փախչում է։ Մի ուրիշն ասում էր, թե իրեն հարկադրեց հեռանալ այն, որ ուզեն ստիպել էր ամուսնանալ հղիացած աղջկա հետ։

— Առերես համաձայնեցի, բայց չկամեցա ուրիշի զավակի հայր լինել, և փախա նույն օրվա գիշերը։

Թորգոմը, ինչպես և Հովսեփն ու Վարդանը, գրեթե միշտ ներկա էին լինում այդ զրույցներին, հավաքույթներին և հեռանում էին այն ժամանակ, երբ բոլորը ցրվում էին քնելու։

Այդ օրն էլ, իշխան Վարազին հանդիպելու օրը, երբ Թորգոմը մինչև մթնշաղ աշխատեց իր տան բարձրացած պատերի վրա, մութն ընկնելուց հետո, ըստ սովորության, գնաց ծանոթների այդ հավաքատեղին՝ հանգստանալու և զրուցելու։ Հավաքավայրը հեռու չէր. դա մեծ կացարանի պատի տակն էր, այնտեղ, ուր գերաններ էին թափված։ Խաղաղ աստղալույս գիշեր էր։ Թորգոմը հասավ այն պահին, երբ նորեկ տիրապետները պատմում էին, թե նախարարները այժմ, Ավանի դեմ զայրացած, հսկողության այնպիսի կարգեն սահմանել, որպեսզի առավել դժվարացնեն ծառաների փախուստը. հիմա հարևան նախարարը հսկում է հարևանի մարդկանց, որ իր հողով չանցնեն, և, մի բան նկատելիս, իմացնում է հարևանին կամ պարզապես կալանում փախչողին։

Այս պատմում էր Վանանդից եկած մեկը։ Իսկ Վանից փախած մի քարագործ պատմեց, թե ինչպես իր տերը՝ Արծրունյաց Մերուժան իշխանը, գետնատնակներ է շինել մեծ ճանապարհների վրա, որ հեռացողին կալանեն կամ «ուտտակենա»։

— Եվ բանվածին կխոշտանգեն ու կսպանեն չարաչար,— ավարտեց քարագործը։

Լսելով այս՝ լռություն իջավ մի վայրկյան, ապա ունկնդիրներ[illegible] մեկը, մի տիրապետ, բացականչեց.

— Օ՜, եթե նորից ընկնենք մեր տերերու ձեռք... Եթե չսպանեն՝ կխեղդեն աշխատանքով, կմեռցնեն քաղցած։

— Էհ, աշխատանքն այստեղ էլ թեթև չէ,— տնքաց մեկը։ — Մի տարի է կաշխատեմ օրն ի բուն, բայց չունեմ դեռ տուն, կստանամ կերակուր մի շերեփ ու մի բլիթ...

Դժգոհ էին առանձնապես հին տիրապետները, որ տակավին չուներին այն, ինչ երազել էին։

— Բայց թագավորը խոստացել է մեզ պահել ազատ, չառնել տուրք ու տուգան,— միջամտեց մի ուրիշը։

Իսկ մի երրորդը նկատեց.

— Թող լինի աշխատանք, միայն մեր հին տերերը հանդիստ թողնեն մեզի։

— Էլ ոչինչ։ Կամենան էլ՝ չեն կարող անել ոչինչ. մենք հիմա թագավորի ծառաներն ենք...

Եվ այդ հանգամանքը, թե գտնվում են թագավորի հողում և աշխատում են նրա անունով կառուցվող քաղաքում՝ թվում էր, հեռացնում է ամեն վտանգ, և նրանք իրենց զգում էին ապահով։ Բայց մեկը հանկարծ հարցրեց, թե չի՞ կարող պատահել, որ տերերը պահանջեն իրենց վերադարձը. ինքը լսել է այդպիսի բան... Թորգոմի հարևանների մեջ կար մեկը, մի տարեց կին՝ Մարինե անունով, որ սիրում էր մասնակցել տղամարդկանց զրույցներին և խոսում էր միշտ առածներով ու մուր տալով։ Լսելով այս՝ նա մատները չռեց.

— Ո՜ւ. ես նորեն իմ զավկներ չեմ տանի Կամսարականին ծառա։ Չէ. կապրիմ աստեղ, կմեռնիմ աստեղ։

— Իսկ եթե տանելու գա իշխանն ի՞նքը,— կատակեց մեկը։

— Իշխանը ցավս թող տանի իրեն,— մուր տվեց պառավը հինգ մատը չռած։

Ծիծաղեցին, բայց հետո նորից ծանր լռություն իջավ։ Երկար ժամանակ ոչ ոք չէր խոսում։

— Իսկ պատահե՞լ է, որ մի ծառա սպանի իր տիրոջը և փախչի,— գիմեց մեկը այն նորեկ փախստականին, որ պատ-

մում էր, թե նախարարներն այժմ շատ զայրացած են և սահմանել են խիստ հսկողություն։

— Պատահել է, պատահել,— ասաց նորեկը։— Մի՞թե չեք լսել, որ մի տարի առաջ մեկը, փախուստի ճանապարհին, անտառում սպանեց Համունի նախարարին։ Որքա՜ն փընտրեցին, գազազեցին։ Բայց չգտան... Պատահել է...

Այս խոսքերի վրա Հովսեփն ու Վարդանը նայեցին Թորգոմին, իսկ Թորգոմն ինքը զգաց, որ երեսը տաքացավ, ու լարվեց լսելու, թե ուրիշ ի՞նչ կասի պատմողը, բայց նա չշարունակեց, այլ եզրակացրեց միայն.

— Դրանից ահա, կասեն, թե նախարարները զայրացած են այնչափ, որ խորհում են դառնալ օտար թագավորի հպատակ, քան մնալ մերայինի՝ Արշակ թագավորի ձեռքը։

— Ուրանա՞լ հայի հավատ,— լսվեց մեկի ձայնը պատի ստվերից։— Մոռանա՛լ երկիր, գնա՛լ օտար թագավորի աշխա՞րհ։

— Ինչո՞ւ գնալ. կուզեն իրենց հողով, իրենց շեներով մտնել օտար թագավորի ձեռքի տակ։ Քանի որ, կասեն, իրենց մարդեր, մեր թագավորի կամքով, կփախչեն-կուգան աստեղ... ու կուզեն, որ յուրյանց բոլոր մարդեր տանեն...

— Ցա՜վս տանեն,— նորից մուր տվեց պառավը։

Եվ զրույցն այդ երեկո սրանով վերջացավ գերանների վրա։

Ընկերներից բաժանվելով՝ Թորգոմը մտածում էր, թե ինչպես երևում է, դեռ փնտրում են իրեն. և թերևս այդ պատճառով են խիստ հսկողություն սահմանել։ Նշանակում է՝ այսուհետև թույլ չեն տա որևէ մարդ փախչի իրենց ծառաներից...

Բայց սխալվում էր։ Սխալվում էին և վերջին նորեկները։ Տիրափախները շարունակում էին գալ, և մեծ խմբերով։ Գարնան սկզբին, երբ օդը դեռ սառն էր, նրանք չէին երևում, բայց երբ կանաչն սկսեց բարձրանալ և ծառերը տերևակալեցին, նրանք սկսեցին գալ անվերջ։ Թորգոմն ուրախանում էր նրանց գալը տեսնելով,— ո՜րքան շատ գան, այնքան լավ. նախարարները կմոռանան կատարված սպանությունը... Բայց ամեն անգամ այդ սպանության մասին մտածելիս, նա

Ձեռքը թափ էր տալիս՝ կարծես այդ մտքերն իրենից վանելու։

— Պետք է տունը կառուցել և վերջացնել...

Եվ կառուցում էր...

Բայց տիրափախների գալով ավելի ուրախ էր լինում Վարազ իշխանը. նրան հարկավոր էին շատ աշխատողներ, քանի որ քաղաքի կարևոր շենքերը պետք է ավարտեր այս տարի։ Այդ էր պատճառը, որ շտապում էր ինքը և շտապեցնում ուրիշներին։

— Ջանացե՛ք, ջանացե՛ք։ Ավարտելուց՝ արքունի պարգևներ...

Եթե այդ պտույտների ժամանակ նրա հետ էր լինում Դավիթ դպիրը, նա նույնպես իր պարտքն էր համարում ընդօրինակել տիրոջը։

— Այո, ջանացողը կստանա արքունի պարգևներ...

«Արքունի պարգևների» հեռանկարը, իհարկե, ուրախացնում էր թե՛ վարպետներին և թե՛ գործավորներին։ Դա ուրախացնում էր և Թորգոմին, ա՛յ, կավարտի իր տունը, կպսակվի Մինայի հետ, ապա աշխատանքի համար կստանա արքունի պարգև... ու ամենը կլինի լավ...

Բայց թե ինչո՞ւ էր այդպես Վարազ իշխանը շտապեցնում մարդկանց, ինքը չէր ասում ոչինչ, սակայն ուրիշները խոսում էին, թե ամառը թագավորը գալու է քաղաքը տեսնելու, ահա ինչո՞ւ իշխանն շտապում է և շտապեցնում ամենքին։ Խոսում էին միաժամանակ, թե թագավորը կամեցել է, որ իր հիմնած քաղաքը լինի օրինակելի. թե՛ դրավի մարդկանց, թե՛ հաճելի լինի և թե՛ ստատիվ բերի իրեն։ Արքունի շենքերի օրինակները վերցնում էին հին մայրաքաղաք Արտաշատից և Վաղարշապատից, բայց և ցանկանում էին անել ավելին։ Ասում էին, որ թագավորը կարգադրել է կառավարիչ իշխանին. «Ջխնայել ոչինչ»... Եվ Վարազ Գնունին ասես ջանում էր, որ մինչև թագավորի ժամանումը պատրաստ լինեն բոլոր աղբյուրները, բաղնիսները, դեպ գյուղեր տանող ճանապարհները, եկեղեցին և նույնիսկ պալատը, որ եկեղեցուց հեռու չէր. այս երկուսի ավարտումը, իշխանին թվում էր, լրիվ տեսք ու շուք պիտի տար քաղաքին։ Գեթ պետք էր ավարտել դրանց պատերն ու տանիքները, դրսի աշխատան-

քը գլխավորապես, իսկ ներսը կարելի էր և փոքր հետու։ Բայց ամենից շուտ պետք էր ավարտել։ Իհարկե, եկեղեցին։

Եկեղեցու ավարտն շտապեցնում էին և քահանաները։ Ավագերեցը գրեթե ամեն օր գնում էր կառավարչի մոտ և ասում.

— Աղոթատունս նեղ է, իշխան, ժողովուրդը շատ։ Շտապիր, աղաչում եմ։ Երիտասարդները ցանկանալով ցանկանում են ամուսնանալ և սպասում են աստծո նոր տաճարին։ Ավարտիր, իշխան։ Կլինեմ աղոթարար քո արևշատության,— շողոքորթում էր նա։

Իսկ մյուս քահանան, որ մի քանի տարով փոքր էր ավագից, հաճախ գնում հորդորում էր եկեղեցու վրա աշխատող վարպետներին.

— Եթե շուտ ավարտիք՝ տերն մեր Հիսուս Քրիստոսի օրհնությունը կլինի ամենքիդ վրա և ձեր հոգիները կդառնան դրախտական...— Ապա ղգալով, որ դրանք ընդհանուր խոսքեր են վերացական և քիչ բան կարող են ասել նրանց և մանավանդ շահագրգռել, քահանան խոսում էր ավելի պարզ։— Կուզեմ ձեր զավակներաց կնքեմ այստեղ, պսակեմ այս նոր տաճարում, որ լինեն հավետ երջանիկ...

— Իսկ թաղումն ինչպե՞ս, հայր քահանա,— ասում էր վարպետներից մեկը հեգնոտ։

— Թաղո՜ւմ... Երբեք չէի ցանկանա, որ մեկիդ մատը փուշ մտներ, զավակներս,— մաղթում էր քահանան։

Վարպետները ծիծաղում էին և խոստանում.

— Եթե այդպես է՝ կավարտենք շուտով։

Չգիտես կառավարչի հոգացողության շնորհիվ, թե քահանաների հորդորանքի հետևանքով՝ եկեղեցին ավարտվելու էր ավելի շուտ, քան սպասում էին։ Ասենք այդպես էր կամեցել Արշակ թագավորն ինքը. «Նախ եկեղեցին՝ աստծո տունը, ապա պալատը՝ թագավորի տունը»,— ասել էր նա։

* * *

Անցավ մի քանի օր։ Վարազ իշխանը ցնծության մեջ էր։ Երկու թիկնապահի հետ գնում-կարգադրություններ էր անում այս-այն թաղում, որ կարգի բերին ճանապարհները, փողոց-

ները և անգամ տները, բակերը։ Նա առանձնապես հոգ էր տանում, որ դրսից քաղաք մտնող ճանապարհը և գլխավոր փողոցը լինեին ավելի բարեկարգ ու մաքուր։ Ամեն տեղ ինքը չէր հասնում, իհարկե, բայց ուղարկում էր թիկնապահներին, որպեսզի նրանք հրամայեն իր անունից։

— Ձեր շահապը պահանջում է, որ մաքրեք, կարգավորեք...

— Ձեր շահապը հրամայում է՝ պատրաստ եղեք մեծ ուրախության...

Ի՞նչ էր պատահել։

Եկել էր վերջապես այն օրը, երբ եկեղեցին ավարտվել էր իրոք, և նա պատրաստություն էր տեսնում այն օծելու։ Ինքն արդեն հատուկ սուրհանդակ էր ուղարկել թագավորին այդ մասին հայտնելու, և թագավորից անմիջապես հրաման էր եկել, որ Վարազ իշխանը այդ կատարի առաջիկա տասը օրվա մեջ և այդ օրվա մասին վաղօրոք հայտնի իրեն՝ արքային։ Վարազը հասկացավ, որ թագավորը իսկապես գալու է օծմանը, ուստի և, հրաման ստանալու օրն իսկ, կարգադրեց՝ մաքրել և զարդարել եկեղեցին. ներսը գորգ էր փռել, խունկ ծխել... Իսկ ինքը երկու թիկնապահով գնաց Բագրևանդ՝ գավառի եպիսկոպոս և կաթողիկոսի տեղապահ Խաղի մոտ, նրան հրավիրելու՝ եկեղեցու օծման կարգը կատարելու համար։ Իշխանը գնաց հպարտանքով մտածելով, որ Հայոց Աշխարհի այդ նշանավոր եպիսկոպոսը շատ գոհ պիտի մնա իրենից, որ նոր եկեղեցի է կառուցել և իրեն հրավիրում է օծելու։

Բայց մեծ եղավ Վարազ Գնունու զարմանքը, երբ Խաղը մերժեց իր հրավերը։

— Ոչ, իշխան,— ասաց,— ես աստվածընդդեմ գործ կատարած կլինեմ, եթե հանձն առնեմ օծել մի եկեղեցի, որը ծառայի պիտի գողերաց և մարդասպանից։

Վարազը հանկարծակիի եկավ։

— Սրբազան տեր, հայր հոգևոր,— իշխանի ձայնն ընդունեց աղերսական շեշտ,— թագավորը պիտի ժամանի այդ հանդեսին։ Հրաժարվել կարելի՞ է միթե...

— Հրաժարվելը իմ իրավունքն է, իշխան,— ասաց Խաղը

թավ հոնքերը վրա բերելով,— և ոչ մի թագավոր չի կարող հրամայել ինձ։

Երբ Վարազը կրկնեց իր խնդրանքը, այնժամ եպիսկոպոսը պայման դրեց՝ սառը դեմքը փոքր-ինչ մեղմացնելով.

— Ես, տեր Գնունի, կհոժարեմ օծել քաղաքիդ եկեղեցին, եթե փախած բոլոր ծառաներին վերադարձնես յուրյանց տերերին, դրանց հետ և վանորեից շինականներին, այլապես՝ ո՛չ երբեք։

Բագրևանդի եպիսկոպոսը բացահայտ դժգոհ էր, որ Արշակ թագավորը իր հրովարտակով արտոնել էր, թե իր նոր քաղաքում («ազատ քաղաքում»,— հեգնում էր նա) բնակվել կարող են տերերից փախած շինականներ ու ծառաներ։ Խաղը զայրացած էր մանավանդ, որ այդտեղ ապաստանել էին իր փեսա Կամսարականից փախած մարդիկ, մեծ թվով ռամիկներ և շինականներ։

Վարազը կարևոր համարեց բացատրել.

— Ինքս, սրբազան տեր, առանց թագավորի հրամանի, չունեմ իրավունք ոչ իսկ մեկ մարդ վերադարձնելու։ Յուրաքանչյուր ոք, որ գալիս է Արշակավան բնակվելու, արքայի ծառան է, արտոնված ազատ լինելու, հետևաբար և ես չունիմ իրավունք նորա վրա։

— Հետևաբար և ինքս օծել չեմ կարող մի արենապիղծ եկեղեցի,— հրաժարվեց Խաղը կտրուկ։

Վարազ Գնունին չհուսահատվեց։ Նույն օրը զույգ թիկնապահների ուղեկցությամբ նա մեկնեց հարևան գավառի եպիսկոպոսի մոտ և, նրա համաձայնությունն առնելով, վերադարձավ. ապա, նկատ առնելով թագավորի ցանկությունը՝ ներկա լինել օծման հանդեսին, անմիջապես սուրհանդակ ուղարկեց մայրաքաղաք՝ թագավորին հայտնելու, թե եկեղեցու օծումը նշանակված է Վարդավառի տոնին։ Դրան ի պատասխան՝ Վաղարշապատից եկավ արքայական սուրհանդակ, թե թագավորը կժամանի հանդեսից երկու օր առաջ։

Եվ իշխան Վարազը, արդեն ուրախության մեջ, ոսկեերիզ կապան հագին, սև նժույգը նստած, գանգրահեր գլուխը բարձր բռնած՝ արագ անցնում էր այս-այն փողոցով, այս-այն թաղը, և անցողակի կարգադրություններ անում վերակացուներին, վարպետներին և առհասարակ բոլոր նրանց՝

ում հետ գործ էր ունենում այդ օրերին կամ հանդիպում էր պարզապես իր ճանապարհին։

— Թագավորը պիտի ժամանի... իմացեք և հայտնեցեք ամենքին, որ հագնվեն վայելուչ, որ ամեն ինչ լինի բարետես...

* * *

Իսկապես, նշանակված հանդեսից երկու օր առաջ եկավ Թագավորը՝ Փառանձեմ թագուհու հետ, մի մեծ շքախմբով, որի մեջ էին Բագրատունի Սմբատը, Թշտունյաց Մեհենդակ իշխանը և ուրիշները։ Բոլորը նժույգների վրա էին, անգամ թագուհին։ Դրանց հետ էր և դրանիկ գունդը՝ իր երիտասարդ պետ Վահան Խորխորունու գլխավորությամբ։

Վարազ իշխանը, նախապես իմանալով թագավորի գալը, երկար տարածություն գնաց ընդառաջ, մտածելով, որ թագավորը իջևանելու ավելի հարմար տեղ չունի, հետևաբար պետք է հրավիրի իր տունը, խորհում էր, որ դա, որքան էլ ծանր հոգս, բայց մեծ պատիվ կլիներ իր համար։

Եվ նա իր հրավերը հայտնեց միայն քաղաքին մոտենալիս։ Բայց թագավորը հրաժարվեց, ասելով, թե որոշել են ապրել վրանների տակ, «քանզի ամառ է»... Կառավարիչ իշխանը կոտրված ձևացավ, բայց ներուստ ուրախ եղավ, որ ինքը և ընտանիքը ազատվում են մեծ հոգսից։ Սակայն դա բնավ չէր թեթևացնում իհարկե ընդունելության հոգսն ու պատասխանատվությունը։

Թագավորի հետ եկել էին մեծաթիվ սպասավորներ, բերելով իրենց հետ մետաքսյա վրաններ, ամանեղեն և ամեն տեսակի հարմարանք. եկել էին նաև խոհարարներ, որ առաջին իսկ ժամին, երբ վրանները բացում էին քաղաքից հեռու՝ մարգագետնի վրա, կրակ արին և մեծ փայլուն կաթսաները կրակին դնելով սկսեցին կերակուրներ պատրաստել, իսկ թագավորն ու թագուհին, նաև շքախմբի անդամները իջան վրաններում հանգիստ առնելու, որպեսզի մյուս օրը շրջեն քաղաքը և դիտեն շինարարությունը։

Այդպես էլ եղավ. և երկու օր իշխան Վարազը հանգիստ չուներ, մերթ նժույգը նստած համեստաբար ու պատրաստա-

կամ ուղեկցում էր թագավորին, մերթ, նժույգից իջած, ոտքի վրա մնում էր նրա վրանի առաջ, սպասելով նրա խոսքին, հարցումին կամ կարգադրության։

Վերջապես եկավ օծման օրը։ Գնունու կարգադրությամբ՝ այն փողոցները, որով պիտի անցներ թագավորը՝ թագուհու և շքախմբի հետ, մաքրված էին, իսկ եկեղեցու բակում գորգերի ճանապարհ էր շինված մինչև աղոթատան դուռը և ավելի ներսը։

Եղանակը պայծառ էր. արևը ջերմ լույսերով ողողել էր քաղաքը. բնակիչները խմբերով շրջապատում էին հանդեսը, բացի այն, որ շատերը նայում էին կտուրները բարձրացած, նայում էին ցանկապատերից և առանձին մեծ քարերի վրա կանգնած։

Եկեղեցու բակը լցված էր, երբ Թորգոմն իր մոր և Մինայի հետ հասավ այնտեղ։ Միսակատար եպիսկոպոսը հետը բերած վարդապետներով, դրանց հետ և տեղի քահանաները, շքեղ զգեստավորված խունկ էին ծխում և աղոթում բարձր երգեցիկ ձայներով, խաչակնքելով բոլոր կողմերի պատերը, բեմը, հատակը, թագավորին թագուհու հետ, պալատականներին և ամբողջ ժողովրդին, որ լցրել էին ներսը և բռնել անգամ մուտքերը, բակը ամբողջ։

— Ճանապա՛րհ, թողեք ներս... ճանապա՛րհ...

— Չկա ճանապարհ, չկա տեղ...

Ու մարդիկ խմբվում էին մուտքի առաջ, խմբվում գավիթում... Ամենքն ուզում էին տեսնել օծման կարգը և մանավանդ թագավորին ու թագուհուն։

Երբ ներսի օծումը վերջացավ, եպիսկոպոսն իր վարդապետներով բուրվառելով ու երգելով դուրս եկան գավիթը և այստեղ, դառնալով եկեղեցու շուրջը, օծեցին նրա դրսի պատերը՝ գարձյալ խաչակնքելով և օրհնած ջուրը սրսկելով։ Այս վերջին գործողությունը կատարում էին երկու վարդապետ և քահանաներից մեկը. կալե ամաններից (որ բռնել էին ձախ ձեռքով) ջուրը վերցնում էին աջով և նետում պատերի վրա, ու ամեն անգամ, ջուր վերցնելուց առաջ, խաչակնքում էին ջերմեռանդ։ Միսակատարությանը մասնակցում էր և Դավիթ դպիրը, ինչ-որ բան տանելով եպիսկոպոսի և վարդապետների հետևից։ Թորգոմը նրան նայելիս նկատում

էր նրա ջերմեռանդ հայացքը և այծի մորուքը, որ դողում էր շարունակ. թվում էր՝ դպիրը աղոթում է անխոս։

Միսակատար հոգևորականների հետ եկեղեցու շուրջն էին դառնում վառ մոմեր բռնած թագավորն ու թագուհին, պալատականները և ամբողջ ժողովուրդը. մարդիկ սեղմում էին իրար և դժվարությամբ շարժվում առաջ։ Շատերն առանձնապես դիտում էին թագուհուն՝ նրա հագուստները, թևերի և պարանոցի զարդերը... Դիտում էին և շշնջում միմյանց

— Թագավորը թուխ է, թագուհին՝ ճերմակ... Ինչո՞ւ է այդպես։

— Աստծու կամքն է...

Թորգոմը լսում էր այդ և նման խոսքեր ու ջանում մոր և Մինայի համար գրավել այնպիսի տեղ, որպեսզի կարողանան լավ տեսնել թագավորին ու թագուհուն։ Բայց չէր հաջողվում։ Վերջապես, երբ բոլորը դառնում էին եկեղեցու շուրջը, Թորգոմը յուրայինների հետ կանգ առավ պատի տակ և տեսավ այն, ինչ ցանկանում էին այնպես։ Պառավին միշտ թվում էր, թե թագավորն ու թագուհին կլինեն բոլոր մարդկանցից բարձրահասակ ու մարմնեղ, և զարմացավ, որ այդպես չէին։ Այդ տարօրինակ էր թվում և Թորգոմին. բայց նա այդ մասին մտածելու ժամանակ չունեցավ, որովհետև իր հետ աշխատող վարպետներից մեկը հարցրեց շշուկով.

— Այսօր պարգևներ բաշխե՞ն պիտի, Թորգոմ։

— Չգիտեմ,— ուսերը թոթվեց Թորգոմը։

— Ինչպե՞ս։ Ամենքը սպասում են,— շարունակեց մարդը։

Բոլորն իրոք սպասում էին, թե Վարազ իշխանի իոստացած «արքունի պարգևները» կբաշխեն այսօր, թագավորի ներկայությամբ, բայց... Բայց օծման կարգը վերջացավ ահա և... ոչինչ չեղավ։ Սպասում էին, թե «արքունի պարգևներ» կբաշխեն գեթ եկեղեցին կառուցող վարպետներին, գործավորներին... Բայց Վարազ իշխանը, օծման հանդեսից հետո, նրանց բացօթյա հացկերույթ տվեց միայն.

— Այսօր ձեզ հացկերույթ,— ասաց նա։— Այնուհետև կխորհենք...

Եկեղեցին օձելուց հետո թագավորը երկու օր ևս մնաց քաղաքից դուրս խփած իր վրաններում։ Առավոտները, նախաճաշից հետո, նա, թագուհու և իր շքախմբի մարդկանց հետ գալիս էր շրջում քաղաքում։ Դրանց միանում էր ժամ առաջ վրանների մոտ սպասող Վարազ իշխանը և ուղեկցում նրանց։ Թագավորն իր ճերմակի վրա անցնում էր թաղից թաղ և նայում-զննում ամեն տուն. երբեմն նա նժույգը կանգնեցնելով մի որևէ շենք դիտում էր ավելի ուշադիր։ Դիտում էր և լռում... Այնինչ Վարազ իշխանը սպասում էր, որ թագավորը մի խոսք ասի՝ հավանի կամ դիտողություն անի։ Սակայն՝ ոչի՛նչ... Բայց Վարազ իշխանի անհանգստությունը դրանով չէր վերջանում։ Ամեն անգամ, երբ թագավորի և թագուհու նժույգների ոտքը դիպչում էր քարի կամ նոր կառուցվող շենքի մոտենալիս, դրանց ոտներն ընկնում էին կավե շաղախի մեջ, Վարազն իրեն վատ էր զգում. փորձում էր առաջ անցնել օգնելու կամ ներողություն խնդրելու։ Այնուամենայնիվ նրա մեծագույն հոգսը մնում էր այն, որ թագավորը դիտում էր ամեն բան և տպավորություն չէր հայտնում։ Չգիտես հավանո՞ւմ էր, թե ոչ... համենայն դեպս արքայի աչքերի ամեն մի կծկումը Վարազին սրտդող էր պատճառում. շուտ-շուտ քրտնում էր կամ պաղում։ Ինչո՞ւ թագավորը խոսք չի ասում։

«Հավանաբար հաճելի չեղավ,— մտածում էր նա,— հավանաբար դժգոհ մնաց և հիմա դիտողություն կանի մարդոց ներկայությամբ»։

— Այս փողոցի շենքերն ավարտվա՞ծ են, իշխան,— հարցնում էր երբեմն թագավորը։

— Տակավին՝ ոչ, արքա։

— Իսկ ե՞րբ կավարտես։

— Հավանաբար գալ տարի։

Անցնում էին մի այլ փողոց. նայում էր թագավորը աջ ու ձախ տներին և նորից հարցնում.

— Ովքե՞ր են բնակվում այս օթևաններում, իշխան։

— Երկրագործներ և քաղաքիս գործավորները։

Շրջագայության ամբողջ տևողության միջոցին թագավորը միայն այսպիսի հարցումներ էր անում և լռում. չէր ասում ո՛չ լավ, ո՛չ վատ։

Վերջապես, ծամեր անց, նա նժույգը կանգնեցրեց և ասաց.

— Այսքանս բավ համարենք, իշխան...

Եվ նժույգի գլուխը թեքեց դեպի վրանները։ Նույնն արին շքախմբի անդամները՝ Բագրատունի Սմբատ ասպետը, Մեհենդակ իշխանը, դրանիկ գնդի պետ Վահան Խորխորունին և մյուսները։ Վարազը հետևեց նրանց ո՛չ կենդանի, ո՛չ մեռած։ Ինչո՞ւ է լռում արքան։ Խոսք չասել՝ նշանակում է չհավանել։ Ավելին՝ դժգոհ լինել... Մի՞թե ամեն ինչ ասելու է վրանում, հանդիմանելու է շքախմբի անդամների և թագուհու ներկայությամբ...

Բայց այդպես չեղավ։ Երբ թագավորը ձիուց իջավ, նա բոլորին թույլատրեց գնալ և հանգիստ առնել, իսկ Վարազին հրավիրեց իր վրանը.

— Հրամիր, իշխան։

Վարազը ներս մտավ ներքին դողով։ Հրավերը պատիվ էր, բայց ինչո՞վ կվերջանար...

Երբ նստեցին, թագավորը մատից հանեց ակնաքարերով ոսկե մատանին և մեկնեց իշխան Վարազին։

— Դու, իշխան, հանձնարարություն կատարել ես սիրով, ուստի և, ի նշան շնորհակալության, ընդունիր այս մատանին։

Վարազը պայծառացավ և ուրախությունից խոսք չգտավ ասելու։

— Եվ այնուհետև, իշխան սիրելի,— շարունակեց Արշակը,— եթե հնար է, շուտով սկսիր Ավանիս բերդապարիսպը։

Վարազը խոնարհեց գլուխը.

— Հրամայել ես, արքա։

— Եվ դորա համար, իշխան, լարես պիտի կորովդ ամբողջ, որ ամուր ու անխորտակ լինի մեր բերդը։

Վարազը նորից խոնարհում արավ.

— Թող լինի կամքը արքայի։

— Այո, իշխան, Կամսարականը և խոհակիցները նորա չկամեցան զիջանել իրենց բերդերը, մենք կշինենք մեր բերդը, ամենայն հայոց բերդը... Ու պետք է կառուցել արագ, որ թշնամիներս չիմանան և չխանգարեն։ Թող այնպես կածեն, որ շինում ենք պարիսպ և ոչ բերդ։

Արշակը տեսնելով, որ իր Ավանն արդեն կառուցվել է և դարձել բազմամարդ, մտածում էր, թե լավ չէ՞ր լինի արդյոք արձակել մի նոր հրովարտակ՝ նոր գործավորներ ժողովելու, ինչ անհրաժեշտ կլիներ բերդի շինությունը արագացնելու համար։ Ու ցանկացավ խոսել այդ մասին Վարազ իշխանի հետ։

— Չե՞ս կարծում, իշխան, որ կարի անհրաժեշտ է արձակել նոր մի հրովարտակ մարդաժողովի, թե՞ վարպետներդ և գործավորներդ բավ են քեզ։

— Անշուշտ, արքա. վասնզի սկսում ենք մեծ գործ՝ պիտի ունենալ նաև գործավորների մեծ թիվ՝ այդ ամենը գլուխ բերելու,— համաձայնեց Վարազը։— Սակայն, արքա. դա նորից չի՞ հուզի նախարարաց, քանզի նորեկները վկայում են, որ նոքա վրդոված են հույժ։

Վարազին իրոք լուրեր էին հասնում, թե որքան կառուցվում ու բազմամարդանում է քաղաքը, այնքան դժգոհ են մնում նախարարները, անգամ ապստամբություն են խորհում, կամենալով մինչև իսկ նոր թագավոր դնել հայոց գահին։ Ճշմարի՞տ էր այս, թե ոչ՝ նա չգիտեր, բայց մեկ-երկու անգամ ինքն անձամբ հայտնել էր թագավորին, թե դժգոհ նախարարները զենք են հավաքում և մարդիկ են վարժեցնում նետաձգության և նիզակի գործածության։

Արշակը չէր հավատում այդ ամենին, ավելի շուտ՝ կարևորություն չէր տալիս։ Այդ մասին խոսել էր նրա հետ և Փառանձեմը, բայց Արշակը. «Չունի՛ արժեք, թագուհիս»... Իսկ Վարազի նախազգուշացումներին պատասխանում էր միշտ.— «Չունի արժեք, իշխան։ Նոքա հույժ տկար են իմ դեմ ելանելու»...

Սակայն Արշակը որքան խիստ էր, կասկածամիտ, նույնքան և դյուրահավատ էր երբեմն։ Իրոք, նա արժեք չէր տալիս նախարարների դժգոհության և ինչ-որ ռազմական պատրաստության լուրերի... Նա ուրախ էր, որ իր Ավանի կառուցումն առաջ էր գնում արագ ու անարգել և մանավանդ գալիս են նոր բնակիչներ։ Ուրախ էր նաև, որ Վարազը խնամքով կատարում է իր կարգադրությունները, որ կառուցում էր ինչպես տներ, այնպես էլ շինում էր աղբյուրներ, բաղանիս և քաղաքից դուրս եկող ուղիներ, որպեսզի դրանցով տարբեր

շեներից պարեն ու մթերք բերեն քաղաք։ Նմանապես նրա՝ Արշակի կարգադրությամբ էր Վարազը պատրաստվում կամուրջներ կապել Զկնգետի վրա, որպեսզի թե՛ մարդ, թե՛ սայլ դյուրությամբ և կարճ անցնեն դիմացի շեները։ Խոսում էին, որ քաղաքն արդեն տասը հազարի չափ բնակիչ ունի. դրանց պետք էր ապահովել սնունդով... Այո, տասը հազարի չափ, և մյուս կողմից, չնայած տերերի արգելքներին, շարունակում էին գալ. և գալիս էին գրեթե ամեն օր։

Ինչո՞ւ էին գալիս այդպես ամեն վտանգ արհամարհելով... Ծանր, անազատ ապրող և իրենց աշխատանքից բաժին չընտացող կամ՝ շնչին բաժին ստացող շինականները ելք էին փնտրում տանելի ապրելու, և ահա, երբ հնար էին տեսնում ազատ լինելու՝ շտապում էին Ավան, չմտածելով, թե ի՞նչ կլինի հետո... Ազատ լինելու ցանկությունն ավելի մեծ էր, քան վտանգը... Եվ որքան շատ էին գալիս՝ տերերն այնքա՛ն շատ էին բորբոքված քաղաքի դեմ։

Խոսելով Թագավորի հետ՝ Վարազ իշխանը նորից հիշեցրեց նախարարների վրդովանքը։

— Որքան և կուզեն վրդովվեն,— ձեռն արհամարհանքով թափ տվեց Արշակը,— չունի՛ արժեք։ Երկյուղ չունեմ նոցա ուժից, բայց զարմանում եմ նոցա հանդգնության վրա...

Փառանձեմը, որ լսում էր Թագավորի և Վարազի զրույցը վրանի մյուս բաժանմունքում, ուրախությունից երազում էր, թե շուտով կունենան ամուր մի բերդ, ամրակուռ բերդաքաղաք, որը Հայոց Աշխարհը կպաշտպանի վերջապես բոլոր թշնամիներից՝ նրանց հանկարծակի ներխուժումից, գազանային գործերից և երկրին հայրենի կբերի խաղաղություն ու ապահովություն...

— Տեր, լե՛ր օգնական ազգիս հայոց,— Փառանձեմը ձեռքերը միացրեց իրար և աղոթողի նման աչքերը հառեց վերը։

Մյուս օրը Թագավորը, Թագուհու և ամբողջ շքախմբի հետ մեկնեց մայրաքաղաք, իսկ Վարազ Գնունին սկսեց պատրաստություն տեսնել բերդապարսպի հիմքը դնելու։ Բայց երբ վարպետներից մեկ-երկուսը հիշեցրին նրան «արքունական պարգևների» մասին՝ Վարազը բացատրեց.

— Արքունի պարգևներ, սիրելիդ իմ, կլինի քաղաքիս պարիսպն ավարտելուց հետո... Անշուշտ և ճշմարտապես...

Վարազ իշխանը ցնծում էր։ Թագավորի շնորհակալությունը ոգևորել էր նրան անչափ, ուստի և կամենում էր ժամ առաջ կատարած լինել նրա հրամանը՝ սկսել նախ պարիսպները, ապա բերդը. ու այդ գործով կամենում էր զբաղեցնել ամենքին՝ քարհատների, վարպետների, սայլավորների, մշակների և ամեն կարգի գործավորների. նժույգը նստած օրը մեկ-երկու անգամ անցնում էր փողոցներով և կանգնելով յուրաքանչյուր անավարտ շենքի առջև՝ կրկնում էր միևնույնը գրեթե ամեն օր.

— Ավարտեցեք թևերին, սկսենք պարիսպները...

— Քաղաքը չի լինի ապահով, եթե չունենա պարիսպներ ամուր...

— Պարիսպներից հետո՝ արքունի պարգևներ ամենքի՞ն...

Թորգոմը նույնպես շտապում էր ավարտել իր տունը։ Նրա ճանապարհի ընկերներ Վարդանն ու Հովսեփը ոչ միայն ավարտել էին իրենց շենքերը, արդեն իսկ բնակվում էին. բայց Թորգոմը ցանկանում էր նաև իր տունը ծեփել-ճերմակեցնել ներսից ու դրսից, որպեսզի այն, ինչպես ինքն էր ասում, լինի ավելի «տեսքոք», քան ուրիշներինը։ Բայց մինչև այդ նա նույնպես մոր հետ արքունի կացարանից տեղափոխվել էր իր տունը։ Վաղաժամ տեղափոխվելու նպատակն էր՝ ավելի արագ վերջացնել ծեփը. դրանից էր կախված ամուսնությունը։ Երբ ծեփը չորանա՝ նա երկրորդ օրը պիտի գնար պսակի և հարսին բերեր տուն...

Եվ քանի օր էր ահա նա տան ներսը լուսնահողով ծեփելուց հետո սկսել էր ծեփել և դուրսը, ինչպես անում էին շատերը քաղաքում։ Կարելի է ասել, այդ նկատել էին և հարևանները, որ Թորգոմը ոչ մի աշխատանք չէր կատարել այնպիսի ջանասիրությամբ, ինչպես այդ ծեփը։ Չգիտես նրա՞ համար, որ դա կոկում ու լուսավորում էր տունը, թե այն պատճառով, որ դրանով ավարտում էր տան կառուցումը. համենայն դեպս նա ուրախ էր, որ վերջապես պիտի ունենար իր տունը, իր բույնը, ուր պիտի ապրեր Մինայի հետ, մոր հետ, աներոջ հետ, որ հոր չափ հոգածու էր իր հանդեպ. իսկ ինքը ակնածում էր նրանից և հարգում անչափ, որ Մինային

ուրիշի չտվեց և համաձայնեց փախչել իր հետ այսքան հեռու, որպեսզի Մինային չխլեն իր ձեռից։

Հետաքրքրական էր տեղափոխության առաջին օրը. երբ մեծ ու փոքր կապոցներով մայր ու որդի մտան իրենց տան բակը, կատարվեց Թորգոմի համար օտարոտի մի բան. մայրը, որ չնայած կառուցման օրերին բազում անգամ էր եղել նոր տան ներսը, այս անգամ սակայն, կապոցները ներս տանելուց առաջ, ծունկի եկավ մուտքի առջև և, շեմափայտը համբուրելով, խաչակնքեց ջերմեռանդ, որ բախտավոր տուն լինի, որ շար աչքի, շար փորձանքի չգա...

Հետաքրքրական էր և առաջին գիշերը։ Երբ Թորգոմը պառկեց իր հարկի տակ, նա իրեն զգաց երանության մեջ,— վերջապես կարող է հանգստանալ, ամուսնանալ և ապրել առանց տագնապի։ Հիշում էր, որ տարուց ավելի էր ինչ հասել էր քաղաք։ Որքա՜ն էր երազել տան մասին. որքա՜ն աշխատեց մի օթևան ունենալ... և ահա այդ օթևանը պատրաստ է, և ինքը պառկած է մեջը։ Այդ օթևանը պատրաստ կլիներ ավելի շուտ, եթե Թորգոմը եկած օրից աշխատեր նրա վրա։ Բայց այդպես չեղավ. նախ հողամասն ուշ ստացավ. ապա քարը, գերանները... Ճիշտ է, քարը, գերանները ձրի էին, բայց քարհանքից՝ ու անտառից բերելը երկարեց... Ինչևէ. տունն արդեն պատրաստ էր, մնում էր ուրեմն կատարի իր վերջին իրաը— պսակվի և Մինային բերի իր տուն...

Առաջին այդ գիշերը Թորգոմի մայրը, նույնպես մտքերի մեջ, ուրախությունից երկար ժամանակ չէր կարողանում քնել։ Նա նույնպես ուրախ էր, որ քնում էր իր հարկի տակ, շուտով կտեսնի Թորգոմի պսակը՝ նրա երջանկությունը Մինայի հետ և այնուհետև, եթե մեռնի էլ՝ ոչինչ... Բայց ինչո՞ւ մեռնի հենց նրանց պսակից հետո. ոչ, լավ կլիներ ապրեր, այնքան, մինչև տեսներ առաջին թոռանը և նոր միայն աչքերը փակեր և գնար իր ծնողների մոտ։ Բայց ինչո՞ւ միայն առաջին թոռանը. լավ չէ՞ր լինի տեսներ մի քանի թոռ, մեծացներ դրանց, որ տունը լցվեր ժառանգներով, ուրախ կյանքով։

Մտածում էր պառավը և միաժամանակ ականջ դնում որդու շնչառությանը. նա զգում էր, գուցեև լսում, որ Թորգոմը նույնպես արթուն է. շարժվում էր շուտ-շուտ և երբեմն հո-

բանջում։ Մայրը չհամբերեց և հարցրեց կամաց, շատ կամաց.

— Թորգո՞մ, արթուն ես։

— Շոգ է, մարե, քնել չի լինում։

Իրոք շոգ էր և ներսը օդը թվում էր պակաս. բայց միայն դա չէր Թորգոմի անքնության պատճառը. նա դարձյալ մտածում էր, թե ինչպես կատարի պսակը և ո՞ւմ հրավիրի հարսանիքին... Այդ մտքերը սակայն չխանգարեցին, որ նա շուտով անկողինը տանի կտուրը՝ զով քնելու համար։

Ամռան գիշերները որքան կարճ են, նույնքան ավելի քնաբեր։ Դրանից էր, որ Թորգոմը քնեց իսկույն, մոռանալով այն ամենը, ինչ զբաղեցնում էր իրեն... Դրանից էր գուցե, որ չնայած օգոստոսի հանգիստ լուսաբաց էր, բայց Արշակավանի բնակիչները տակավին խաղաղ քնած էին տներում, բակերում, կտուրներին։ Աղջամուղջի մեջ փռված-տարածված քաղաքի տներից միայն մեկ-երկու ծխնելույզից էր ծուխ բարձրանում և հալվում-խառնվում բացվող առավոտի շամանդաղին. երբեմն անհանգիստ մի կով էր բառաչում ինչոր թաղում, և նրա բառաչը, խաղաղ օդը պատռելով, տարածվում էր քաղաքի վրա, կամ՝ աքաղաղներն էին ձայնակում իրար. թվում էր՝ մեկը հարցնում էր «արթո՞ւ-ուն եք»։ Մյուսը պատասխանում էր «Վաղո՜ւ-ո՜ւ-ո՜ւց»... Զարմանալին շներն էին, որ երբեմն վազում էին այս-այն փողոցով կամ, հետին թաթերի վրա նստած, հսկում էին բակը, փողոցը՝ պահակի աշխատությամբ։ Թորգոմի տանը մոտ էին Հովսեփի ու Վարդանի տները։ Հողը ստանալիս նրանք չուզեցին բաժանվել և ապրել տարբեր թաղերում. գերադասեցին լինել մոտիկ և, հարկ եղած դեպքում, օգնել միմյանց։ Ճիշտ է, նրանք տարբեր գյուղերից էին և միայն ճանապարհին էին ծանոթացել իրար, բայց այն հանգամանքը, որ վիճակակից էին՝ երեքն էլ փախել էին տերերից և վտանգից ազատվեցին միասին՝ դա բարեկամացրեց նրանց, մանավանդ Հովսեփն ու Վարդանը շարունակ հիշում էին, որ ծանր փոքանքից, գերությունից Թորգոմը փրկեց իրենց, սպանելով կուլանել ցանկացող զինված իշխանին... Եվ դրա համար նրանք չուզեցին հեռու լինել իրարից ու տները շինեցին մոտիկ, որ աշխատանքի գնան միշտ միասին։

Թորգոմը շուտ էր արթնանում և, աշխատանքի գնալուց առաջ, մորը խղճալով և նրան օգնած լինելու համար, ջուր էր բերում մոտիկ աղբյուրից, լվացվում էր, ապա քարե սանդուղով բարձրանում նորից կտուրը՝ անկողինը հավաքելու։ Բայց հավաքելուց առաջ նա, ըստ սովորության, դառնում էր դեպի արևելք՝ դեպ նոր եկեղեցին և խաչակնքում երեսը, որ տերը «չարը խափանի և բարին առաջի»։ Այսօր էլ, երբ նա անկողինը ցած իջեցնելու համար բարձրացավ կտուրը և նայեց դեպ արևելք՝ զարմացավ, և այնքան, որ չկարողացավ երեսը խաչակնքել. նրա աչքերը լարվեցին. հայացքը հառեց հեռուն. նայեց աջ, ձախ և մեկեն լրջացավ.— առավոտյան ծխանման մուժի միջից տեսավ երեք կողմից հեծյալ խմբեր էին գալիս դեպի քաղաք, և այդ խմբերը մեկ-երկու չէին, այլ բազմաթիվ։

«Սրանք զո՞րք են, թե քարավաններ»,— մտածեց նա և իսկույն ասաց ինքն իրեն.— «Բայց ինչո՞ւ երեք կողմից... Գուցե արքունի զորքեր են»,— ասաց քիչ հետո մտքում, երբ նկատեց, որ դրանք նման չէին քարավանների. ձիերի վրա բեռներ չէին երևում, այլ միայն հեծվորներ, և այն էլ նիզակավոր հեծվորներ... Բայց եթե արքունական զորքեր են՝ ինչո՞ւ երեք կողմից են գալիս,— շարունակում էր մտածել նա, դիտելով առաջացող հեծյալ խմբերը։ Եվ ոչ-վհեռև քաղաքը տակավին պարիսպ չուներ՝ առջևում ամեն ինչ երևում էր, ծայրամասի տներից սկսած մինչև հեծվորները և ավելի դեռ, իսկ արև օրը շատ ավելի հեռուն՝ մինչև լեռնածիր հորիզոնը։ Այժմ արշալույսի բոսորագույն ցոլքերը ասես նիզակներով ցրում էին մթնշաղը և լուսավորում շրջապատն ու եկողներին։

Թորգոմը, միառժամ դիտելով երեք կողմից շարժվող այդ հեծյալ խմբերը, մեկեն թափով նետվեց բակը և վազեց դեպի ընկերների տունը՝ և երկուսին էլ արթնացրեց միևնույն խոսքերով, որ ահաբեկ շեշտ ունեին.

— Արթնացե՛ք, զորք է գալիս... Արթնացե՛ք...

— Ի՞նչ զորք,— հարցրին մարդիկ քնաթաթախ վեր թռչելով։

Բայց ընկերների հարցումին պատասխանելու փոխարեն՝ նա այժմ էլ նետվեց փողոց և սկսեց վազել։ Վազում էր մի

թափով, ասես գնում էր հրդեհ հանգցնելու, առանց շուրջը նայելու, առանց շունչ առնելու։ Ճանապարհին մեկը ինչ-որ բակից ձայն տվեց նրան. «Ո՞ւր, Թորգոմ, ո՞ւր»... Բայց Թորգոմը ձայնի կողմն անգամ չնայեց և շարունակեց վազքը՝ ձեռքերը թևերի պես թափահարելով։

Այդպես նա անցավ մի փողոց, երկու փողոց և, վերջապես, մտնելով գլխավոր փողոցը, կանգ առավ շահապի տան առաջ, նայեց վեր պատշգամին, ապա նետվեց բակը։

— Իշխա՜նը, ո՞ւր է իշխանը,— ասաց նա գրեթե շնչատ, դիմելով տան առջև կանգնած նիզակավոր, բայց քնատ պահակին։

— Իշխա՜նը,— երկարեց պահակը զայրացած։— Դու չգիտե՞ս, իշխանը քնած է էս ժամին։

— Գիտեմ, գիտեմ,— կրկնեց Թորգոմը գրեթե բարկացած։— Բայց ինձ հարկավոր է իշխանը։ Գնա արթնացրու,— և Թորգոմը մինչ կսրբեր ճակատի քրտինքը՝ տան ներքևի հարկից դուրս եկավ իշխանի ծանոթ թիկնապահը՝ դեռ լրիվ չհագնված և հետաքրքրվեց, թե ի՞նչ է պատահել։

— Արթնացրու իշխանին. ունեմ կարևոր ասելիք։

Թիկնապահը նեղացավ.

— Ի՞նչ ասելիք...

— Զորք է գալիս, իմացիր...

Թիկնապահը գնաց և անմիջապես ետ գալով Թորգոմին դանդաղեց վերև։ Եվ երբ Թորգոմը ծանր շնչելով մտավ ներս և պառկած իշխանին հայտնեց տեսածը, շահապը վեր թռավ.

— Զո՞րք... հեծյալ մարդի՞կ,— բացականչեց նա և այլևս որևէ հարցում չանելով՝ հապճեպ հագավ վերնոցը և դուրս եկավ իր քարե պատշգամը։ Այո, քաղաքի երեք կողմից հեծյալ խմբեր էին առաջանում։ Երևում էին մինչև իսկ նրանց սուրսայր նիզակները։

Տեսածն այնքան անսպասելի էր և շարագուշակ, որ իշխանն իսկույն ետ դարձավ և, երեսն ու վիզը կարմրած, կարգադրեց թիկնապահին.

— Կանչիր կայազորի պետին։ Անմիջապե՜ս...

Ու ինքը շարունակեց նայել առաջացող հեծյալներին, մտածելով, որ եթե դրանք արքունի զորքեր լինեին, նախա-

պես սուրհանդակի միջոցով լուր կտային իրենց մասին, տեղի և մթերքի պատրաստություն տեսնելու։

Սակայն եկողները մոտենում են տարօրինակ ձևով՝ երեք կողմից և առաջանում էին ոչ թե ուղիղ գծով, այլ տարածվում էին չգիտես ինչու... Վարազ իշխանը նայում էր հետզհետե աճող զարմանքով։ Գնալով՝ նրա տարակույսներն ու կասկածները ավելանում էին և ահա այն ժամանակ, երբ փոքր անց եկավ կայազորի պետը, նա հարցրեց անհամբեր.

— Ի՞նչ զորքեր են։

Կայազորի հրամանատարը, որ միջին տարիքի և քունքերն ու մորուքի միջուկը արդեն ճերմակած, ձիգ տղամարդ էր, պատասխանեց մռայլ.

— Տեսա, տեր իմ։ Թշնամական զորք է անշուշտ։

— Այդպես։ Իսկ ուղարկեցի՞ր մեկին՝ նրանց ո՛վ լինելը պարզելու։

— Պատրաստվում էի ուղարկել՝ կանչեցիր, տեր։ Մյուս կողմից՝ ուզեցի ձեր խորհրդով...

— Ուրեմն՝ կուղարկեմ ինքս։ Անհապաղ,— և իշխանը, կանչելով իր դպիր Դավիթին և մի տարեց թիկնապահի, կարգադրեց.— գնացեք և պարզեք ովքե՞ր են եկողները, ո՞ւր են գնում կամ ի՞նչ են կամենում։

Երբ դպիրն ու թիկնապահը դուրս ելան, իշխանը դարձավ կայազորի պետին.

— Իսկ դու, զորապետ, պատրաստ եղիր ամեն պատահարի։ Գնա և զինիր ամենքին, ամենքի՛ն։

Մինչ այդ եկող զորքի լուրը արդեն տարածվել էր քաղաքում և բնակիչները— մեծ, փոքր—հապ-շտապ հագնվելով լցվել էին փողոցները, բարձրացել կտուրները, ոմանք ելել էին եկեղեցու բլուրը, որտեղից երևում էր ողջ շրջակայքը. շատերը խմբվել էին Վարազ իշխանի տան առաջ՝ ստույգ լուր իմանալու... Օրը բացվում էր հետզհետե և քաղաքի շրջապատը երևում էր ավելի պարզ ու որոշ. հեծյալ խմբերը շարունակում էին ավելանալ ու տարածվել... Դա ի՞նչ հանելուկ էր։

Նայում էին մարդիկ և նորանոր ենթադրություններ անում, թե եկողները գուցե պարսիկներ են կամ՝ այլ երկրի զինվորներ, կամ թերևս արքունական զորքե՞ր են։— Եթե այդպես ։՝

ինչո՞ւ դանդաղ են շարժվում, ինչո՞ւ միանգամից չին առաջանում ուղիղ գծով, այլ տարածվում են քաղաքի երկարությամբ, ավելի շուտ՝ նրա շուրջը։

— Կարծյոք դաշտում հանգստանալու տեղ են որոնում,— ասաց մեկը։

— Ոչ, կարծյոք նպատակ ունեն...

Ամենքին համակել էր մի ներքին տագնապ, ու բոլորն ակնդետ նայում էին այն ուղղությամբ, ուր գնացին իշխանի ուղարկած մարդիկ։ Սպասում էին, թե ի՞նչ լուր կբերեն, գուցեև վտանգավոր ոչինչ չկա, գուցե իսկապես արքունի զորք է, դուրս է եկել ամառային երթի, ինչ անում էին սովորաբար ձմեռոցներ գնալուց առաջ։

Մեծերի լուրջ, սպասողական տրամադրությունը համակել էր և երեխաներին։ Նրանք ոչ միայն չէին խաղում. ձայն, ծիծաղ չէր լսվում նրանցից. մեծերին շրջապատած՝ ականջում էին նրանց յուրաքանչյուր խոսքը և նույնպես սպասում, թե ի՞նչ է լինելու...

Եվ սպասողական այդ վիճակը տևեց բավական երկար, այնքան, մինչև որ իշխանի բանագնաց դպիրը և թիկնապահը, ձիերի վրա մոտեցան եկող զորքի առաջապահին, խոսեցին զորքից անջատված ինչ-որ մի ձիավորի հետ, որը և նրանց առաջնորդեց մի այլ խումբ մարդկանց մոտ։ Վանցիները նկատեցին, որ այդտեղ էլ դպիրը խոսում է... Բայց այդ խոսակցությունը ավելի կարճ տևեց, և դպիրը շուտով եկ դարձավ։

Բայց նա, չգիտես ինչու, գալիս էր դանդաղ և հանապարհին պատահող մարդկանց հարցումին, թե ովքե՞ր են և ուր են գնում— ոչինչ չէր պատասխանում։ Խորհրդավորությունն ավելանում էր։ Նա մոտալ անցավ փռոցներով և այդպես էլ գնաց իշխանի տուն։

— Ի՞նչ լուր,— հարցրեց իշխանը անհամբեր ընդառաջ գալով։

— Տեր Գնունի,— լեզուն գժվարությամբ պտտելով ասաց դպիր Դավիթը,— նախարարաց զորքեր են։ Ողջը սպառազեն... Իմ հարցիս, թե ի՞նչ են ցանկանում և ո՞ւր են գնում, նրանց մեծը, սաղավարտով մի իշխան, ասաց.— «Հայտներ քաղաքի շահապին, թե նախարարները եկել պահանջում են

իրենց ծառաներին... այն բոլոր ծառաներին, ասում է, որ երբևէ փախել են... իրենց տերերից»։

Իշխան Գնունին գունատվեց, դրա հետ միաժամանակ դողաց նրա գանգուր մորուքը. նա գիտեր, թե որքան նախարարները զայրացած են իրենց կալվածներից փախած մարդկանց, ծառաների դեմ, Արշակավանի դեմ... Գիտեր, լսել էր նաև, որ վաղուց պատրաստություն էին տեսնում ինչ-որ բանի համար, բայց երբեք չէր կարծել, մտքովն իսկ չէր անցել, թե մի օր կհանդգնեն զորքով գալ և փախած ծառաներ պահանջել... Ուստի և, լսելով մի այդպիսի անակնկալի, նա բոլորովին պատրաստ չէր ո՛չ պատասխանելու և ո՛չ մանավանդ դիմագրավելու։

— Այնուհետև՞,— և իշխանի մորուքը դողաց դարձյալ։

— Այնուհետև, տեր Գնունի, նրանց պետը հայտնեց նաև, թե տիրափախ ծառաները, եթե չգան իրենց կամքով, կուանեն ուժով։ Այդպես էլ ասաց, իշխան. «կուանենք, ուժով»։ Ու պատասխանի համար տվեց կես օր ժամանակ,— ավելացրեց դպիրը, ինքն ևս փոխեփոխ գունատվելով ու կարմրելով, զգալով, թե որքան անհաճո լուրեր է հաղորդում իր տիրոջ։

Որքան էլ լուրը տհաճ էր, բայց և այնպես Վարազ իշխանը, ճիշտ է, գունատվեց, բայց բնավ չկորցրեց սառնասրտությունը։

— Իսկ հասու եղա՞ր, թե ովքե՛ր են այդ նախարարները։

— Ոչ, տեր իմ։ Հարցումիս չուզեցին պատասխանել։

— Այժմ գնացեք և վարը սպասեք իմ կարգադրությանց,— ասաց նա բանագնաց դպիրին և թիկնապահին, ցանկանալով երևի մենակության մեջ խորհել անելիքը, բայց հաղիվ նրանք դուրս էին եկել՝ նորից եկավ կայազորի պետը։

Իմանալով հակառակորդ նախարարների պահանջը՝ նա գլուխն օրորեց։

— Պետք է անհապաղ օգնություն խնդրել թագավորից, իշխան,— ասաց նա ձեռքը բռունցք շինելով։— Անհապա՛ղ։

— Ես նույնպես այդ եմ խորհում, Արտակ սիրելի։ Պետք է արագընթաց սուրհանդակներ ուղարկել արքային, և անհապաղ։

Այս ասելով՝ իշխանը ծափ զարկեց։

Ներս մտավ նրա ծերունի սենեկապահը։

— Վռամ և Արամ թիկնապահներին ուղարկիր ինձ։

Ասաց ու նստեց մագաղաթի կտորի վրա մի երկտող գրելու։

Նամակը հազիվ էր ավարտել, ներս մտան իշխանի թիկնապահներից երկուսը՝ 20—25 տարեկան առողջ երիտասարդներ, որ ցերեկ թե գիշեր ուղեկցում էին նրան ամեն տեղ։ Ներս մտնելով՝ վարժ զինվորների պես ձիգ կանգնեցին իշխանի առաջ, իրենց թուխ աչքերի հրացայտ նայվածքը նրա շուրթերին հառած։ Նրանց այդ նայվածքից ու կեցվածքից նկատելի էր, որ սպասում են վտանգավոր հրամանի։

Եվ իշխանը չհապաղեց. ելավ նստած տեղից և կանգնեց թիկնապահների առաջ։

— Արամ և Վռամ, հեծեք իսկույն և ճեպով սլացեք մայրաքաղաք,— նա մեկնեց նամակը։— Ես այստեղ գրել եմ ամենը, բայց ասեմ նաև ձեզ, որ նամակս կորցնելու դեպքում, հայտնեք բանավոր։ Այսպես կհայտնեք արքային, որ թշնամի նախարարները պաշարել են Ավանը և պահանջում են իրենց ծառաներին, որոնք փախել ապաստանել են քաղաքումս... Գնացեք իսկույն, քանի դեռ իսպառ չեն պաշարել քաղաքը։ Միով բանիվ՝ անցեք այնպիսի ճանապարհով, որ չկարենան կալանեն ձեզ։ Ապա չմոռանաք հայտնել, որ ինձ պատասխանի համար տվել են կես օր ժամանակ։ Հայտնեցեք, որ օգնություն եմ խնդրում շուտափույթ։ Մաղթում եմ հաջողություն։

Երբ սուրհանդակները դուրս եկան թափով, իշխանը մոտեցավ կայազորի պետին։

— Այժմ, Արտակ սիրելի, իբրև զորական, ասա՝ ի՞նչ անենք պիտի վտանգը կանխելու համար։ Ինքնին պարզ է, ես առանց թագավորիս կամքի և հրամանի չեմ անի ոչինչ։ Պիտի մերժեմ նոցա պահանջը...

— Անշուշտ, իշխան,— խոսեց վերջապես կայազորի պետը հուզումի՞ց, թե անակնկալ վտանգից կարմրած։— Անշուշտ. համաձայնել չենք կարող նոցա պահանջին։ Չենք կարող թույլ տալ, որ գան, թեկուզ նախարարներ, և մարդ պահանջեն արքայի քաղաքից։ Որքան էլ սակավամարդ է

կայազորս՝ պիտի ընդդիմանամ, պիտի աքգելեմ ներս գալու։ Դա իմ պարտքս է։

— Իսկ ունե՞ս պաշար զինական։

— Կայազորս ապահովված է անշուշտ։ Սակայն հարցնում ես ինչո՞ւ, տեր Գնունի։

— Խորհում եմ, որ հնարավոր է մերժում ստանալով նախահարձակ լինեն նոքա։ Ուստի լավագույնս է նախօրոք զենքի պաշարը բաժանել բնակիչներին, անշուշտ նոցա, ովքեր ի վիճակի են զենք ի գործ դնելու։ Եվ նոքա կկովեն կատաղի, վասնզի այստեղ ապաստանել են ոչ նրա համար, որ դյուրությամբ անձնատուր լինեն նախկին տերերին։ Ո՛չ, նոքա անձնատուր չեն լինի։ Երբե՛ք... Պետք է զենք տալ նոցա. կարողներին մանավանդ, քանզի կայազորը սակավամարդ է։ Նոքա զորավիգ կլինեն քեզ և կայազորին։

— Խորհուրդդ բարի է, իշխան. սակայն զենք բաժանելը կլինի իզուր, եթե զենք ստացողները չունենան փորձ, ղեկավարներ։ Կա՞ն այդպիսիք։

Իշխանը դժվարացավ հաստատական պատասխան տալ և միայն շուրթերը սեղմեց մտահոգ։

— Համենայն դեպս՝ մենք ևս լինենք պատրաստ և անենք ի՛նչ կարող ենք, մինչև կհասնեն գնդերը արքունի։ Թերևս բանակցելով կարողանանք ժամանակ շահել թեկուզ մի օր... Ես կխորհեմ այդ մասին։ Իսկ դու,— նա խոսքը չավարտած, հլավ տեղից կայազորի պետին ճանապարհ դնելու,— դու արա անհրաժեշտը՝ աղետը առժամ կանխելու...

Կայազորի պետը նոր էր դուրս եկել և ձի նստել, երբ վարազ իշխանը հուզված ձայներ լսեց.

— Իշխա՛նը, իշխա՛նը...

— Իշխանը կուզենք,— լսվում էին ներքևից՝ տան առջևից։

Երբ իշխանը դուրս եկավ պատշգամ և տեսավ մի քանի տասնյակ երիտասարդներ, որոնց հայացքները նրան թվացին շանթ ու կրակ։ Մեկը նրանցից, իշխանին տեսնելով, առաջ եկավ և ձեռքը բարձրացրեց։

Իշխանը ճանաչեց նրան. Թորգոմն էր։

— Ներիր, տեր իշխան,— ասաց նա։— Մենք փափանք

մեր տերերից, և դու ապաստան տվիր մեզ. այժմ իրավունք տուր խոսելու։

— Խոսիր, տղաս,— իրավունք տվեց իշխանը։

— Իմացանք, որ մեր հին տերեր եկել պահանջում են մեզ։ Ի՞նչ է կամքդ, իշխան։ Հանձնե՞ս պիտի մեզ...

Վերջին բառերն արտասանվեցին այնպիսի ողբերգական ու վճռական ձայնով, որ Գնունի իշխանը զգացվեց և պարտք համարեց ասել անմիջապես.

— Ձեզ հանձնել նոցա՞... Ո՛չ, զավակներս։ Երբե՛ք։ Ես այդօրինակ որոշում չունեմ բնավ։ Եղեք հանգիստ և ոչ մեկդ մի ենթարկվեք խուճապի...

— Իսկ մենք, տեր շահապ, անձնատուր չենք լինի երբեք,— խոսեց նորից Թորգոմը։— Հրամայիր՝ տան մեզ զենք, որ պաշտպանենք քաղաքը և մեր անձը։

Այս ասելիս թե՛ Թորգոմը և թե՛ նրա հետ եկած բոլոր երիտասարդները իրենց սրված հայացքները հառել էին Գնունի իշխանի երեսը, սպասելով նրա խոսքին, որը թվում էր պիտի փրկեր կամ կործաներ իրենց։ Առանձնապես հրաբորբ էր Թորգոմի հայացքը... Իշխանը լիովին հասկանում էր նրանց տագնապը. հասկանում էր, որ իր մի խոսքից է կախված նրանց հանգստությունը, ուստի և ասաց այդ խոսքը.

— Գնացեք կայազորի պետի մոտ, զավակներս. ամենքդ։ Նա ձեզ կտա ձեր ցանկացածը։ Արդեն իսկ կարգադրված է։

Զարմանալի է մարդը. իշխանի հանգիստ ասված այդ մի քանի բառը այլափոխեցին նրանց, և նրանք կարծես փրկություն ստացան. մոայլ դեմքերն աշխուժացան, արնամած հայացքները պայծառացան. իրար հրհրելով շրջվեցին ու դիմեցին դեպի կայազորի զորանոցը։

Իշխանը տխրամած նայեց նրանց հետևից և մտածեց ակամա. «Բայց կարո՞ղ են արդյոք պաշտպանել իրենց, առանց զորքի»...

Նոր էին հեռացել երիտասարդները, երբ մոտիկ փողոցից լսվեց ճիչ, աղմուկ և, փոքր անց, այս անգամ իշխանի տան առաջը բռնեց կանանց, երեխաների ու ծերերի խայտաբղետ բազմությունը. կանայք խոսում էին բռունցքներ բարձրացրած, ճչում մազախռիվ, անիծում։ Դրա հետ միասին լսվում էին «վայ»-եր, նախատինք ու հայհոյանք։

— Թող որքան կուզեն պահանջեն... Չե՛նք ի գնա... Թո՛ղ իրենք գնան սատանի ծոցը...

Ու լսվում էին դարձյալ խառնաձայն ճիչեր, ծղրտոցներ, զայրագին աղաղակներ... Ինչպես երևում էր դպիր Դավիթի լուրը մի քանի վայրկյանում տարածվել էր արդեն քաղաքում։

Որքան անակնկալ էր նախարարական զորքի գալն ու պահանջը, նույնքան մեծ էր վախն ու տագնապը և նախկին տերերի ձեռքը չընկնելու կամքը, նույնիսկ ցասումը։ Դրանից էր, որ շուտ-շուտ լսվում էր.

— Չենք ի գնա... Երբե՛ք... Իշխան կառավարիչը չի հանձնի մեզի...

Բոլորը գիտեին, արդեն իսկ լսել էին, որ կառավարիչը կեսօրին պատասխան պիտի տա եկողներին։ Պիտի համաձայնի կամ մերժի։ Դրանից էր, որ երբ իշխան Գնունին նորից ելավ տան քարե պատշգամը, բոլորը գրեթե ճչացին.

— Չհանձնեք մեզի, իշխան. չտաք մեզ արնախումների. կտանջեն, կսպանեն մեզի...

Իշխան Գնունին, որ ինքը պակաս տագնապած չէր, երբ վերևից նայեց կանանց ու երեխաների այդ լարված, գրգռված, վշտից ու հուզմունքից աղավաղված դեմքերին, լիովին հասկացավ նրանց։ Հասկացավ ու ջանաց հանգստացնել.

— Եղեք հանգիստ։ Ոչ մեկիդ չեմ հանձնի ձեր կատաղի թշնամիներին։ Իսկ արքայի քաղաքը չի կարող մտնել ոչ մի նախարար։ Գնացեք ձեր տները և ով զենք ունի՝ թող առնի։ Եվ երբ հրաման լինի պաշտպանվելու՝ պաշտպանվենք, մինչև կհասնի զորքը արքունի։

— Ճշմարի՞տ ես, իշխան... Այո՞... Երդվիր, որ այդպես է...

Այս հարցումներից իշխանը նորից զգաց, թե ո՛րքան խոր է նրանց երկյուղը, սարսափը վտանգի հանդեպ։

— Երդվում եմ նախահայրերիս գերեզմանով,— ասաց Գնունին ձեռքերը տարածելով ու ապա կրծքին դնելով, և դա ազդեց գրգռված բազմության վրա։

Ու ցրվեցին կարծես հուսադրված, բայց տակավին հուզված և կառավարիչ իշխանի խոսքերը յուրովի կրկնելով.

— Տեսա՞ր։ Երդվում է, որ չի հանձնի...

— Ինչո՞ւ պիտի հանձնի։ Իրավունք չունի հանձնելու։ Եթե հանձնի՝ թագավորը կպատժի...

Վտանգը, առջևում կանգնած մոտալուտ վտանգը մոռացնել էր տվել բոլոր աշխատանքները. քաղաքում կանգ էր առել ամեն ինչ. և ո՞վ կարող էր աշխատանքի ձեռնարկել այն պահին, երբ թշնամին մեծ զորքով պաշարել էր քաղաքը. տնեցում նույնպես մարդիկ, կանայք չէին կարողանում ոչինչ անել. ամեն գործ մնացել էր երեսի վրա։ Քաղաքը նման էր ահաբեկված փեթակի. բնակիչները, բոլորն իրար անցած, սպասում էին, թե ի՞նչ է լինելու։ Դրան ավելացավ տավարի բառաչը, ձիերի խրխինջը, ոչխարների մայունը... Ոչ ոք իր անասունը դաշտ չէր տարել, և սոված-ծարավ կենդանիները անհանգիստ ձայներ էին արձակում բակերում, և դա ավելացնում էր խուճապը։ Բնակիչների մի մասը, առանձնապես կանայք, երեխաներ բարձրացել էին տների տափակ կտուրները, ծառերը կամ այլ բարձրություններ և այնտեղից դիտում էին, թե ի՞նչ են անում եկողները, որոնց չգիտեին ինչ անուն տալ— թշնամի՞ էին, պահանջատե՞ր, թե այլ բան... Նրանց հեծյալ խմբերը քաղաքից հեռու շարունակ շարժվում էին այս-այն կողմ. թվում էր՝ ուսումնասիրում թե դասավորվում են՝ քաղաքը ամեն կողմից պաշարելու։

Դիտելով նրանց սպառնական այդ շարժումը՝ կանայք ցասումով մուր էին տալիս նրանց և անիծում.

— Մահ տարաժամ դա ձեզ...

— Դժոխքի բաժին դառնաք...

Թորգոմի մայրը մի խումբ կանանց մեջ կանգնած նույնպես ձեռքերը պարզում էր դեպի երկինք և կրկնում.

— Բաբելական կրա՛կը ձեզ վրա...

Պառավի մոտ կանգնած էին հարևանուհիներ, դրանց թվում և Վարդանի ու Հովսեփի կանայք, նաև Վարդանի Հուսիկը։ Մինչ ամենքը խոսում էին հուզված, իսկ Թորգոմի մայրը անիծում էր եկողներին, եկավ Մինան հոր հետ, վախից նա դողում էր ողջ մարմնով, իսկ աչքերը, ինչպես տենդով հիվանդի աչքեր, խաղում էին կոպերի մեջ։ Միշտ ամոթխած ու զուսպ՝ այս անգամ նա մոտեցավ պառավին և հարցրեց այլայլումից շառագունելով.

— Մամո, եկել են մեզ տանելո՞ւ,— և դեռ պատասխան

չստացած՝ շարունակեց։— Ո՞ւր է Թորգոմը, ի՞նչ է ասում Թորգոմը. կտանե՞ն մեզ։

— Եկողները ցավս տանեն։ Մի՛ վախիր, զավակս։ Շահապ իշխանը չի թողնի։ Մենք հիմա թագավորի մարդիկ ենք։

— Բայց լա՞վ չէ, մամո, թողնենք-հեռանանք. քանի շուտ է,— շարունակեց Մինան ուշք չդարձնելով պառավի խոսքերին։— Գնանք մոտիկ շենները։

— Ինչո՞ւ, աղջիկս,— պարմացավ պառավը։— Թողնենք մեր նոր տուն հեռանա՞նք։

— Հեռանալ վաղաժամ է,— խոսակցությանը միջամտեց ծերունին։— Սպասենք տեսնենք. շահապ իշխանը չի թողնի, որ արքայի մարդոց տանեն պատժեն։ Չի թողնի օտար մարդիկ մտնեն թագավորի քաղաք։

— Իսկ եթե մտնե՞ն,— հուզվեց Վարդանի կինը։

— Չեն մտնի,— պնդեց ծերունին։— Սա թագավորի քաղաք է։ Չեն համարձակվի։

— Իսկ եթե համարձակվեն ու մտնե՞ն,— կրկնեց Վարդանի կինը։

— Եթե համարձակվեն,— տնքաց ծերունին,— ամենքս կկռվենք, ամենքս...

Վարդանի տղան՝ Հուսիկը, որ լսում էր այս զրույցը, միջամտեց հանկարծ.

— Եթե գան՝ ես թուր ունեմ,— ասաց ու չքացավ իսկույն։

Ու փոքր հետո, երբ մեծերը դեռ շարունակում էին խոսել վտահաս վտանգի մասին, նա վերադարձավ ոտծաթակոթ մի թուր ձեռքին։ Մայրը նկատելով այդ՝ բարկացավ.

— Այդ ինչո՞ւ բերիր։

— Ա՛յ նրանց համար,— Հուսիկը ձեռքը մեկնեց դեպի թշնամին։

Մայրն ավելի բարկացավ.

— Տար դիր յուր տեղ։

— Ինչո՞ւ, մամո։ Տի տամ պապային...

Եվ մինչ մայրը կարգելեր՝ Հուսիկը վազեց այն ուղղությամբ, ուր երևում էին երկու բարդի։ Նրան մատնացույց էին արել, որ այդտեղ՝ մի տան բակում հայրը դարան է մտել ընկերների հետ։

— Տեսա՞ր դորան,— ուզեց բարկանալ մայրը, բայց իմա-

նալով գնում է հոր մոտ, զսպեց իրեն և ասաց միայն.— Հուսիկ, տուր հորդ ու եկ շուտով։

Հուսիկը լսե՞ց մոր խոսքը, թե ոչ, վազեց առանց ետ նայելու։

Եվ փոքր անց նա արդեն հոր մոտ էր՝ քաղաքածայրի մի տան բակում, ուր հավաքված էին աղեղնավոր ու նիզակավոր մարդիկ։ Այդ բոլորի մեջ նա իսկույն ճանաչեց հորը, որ նույնպես աղեղ ուներ ուսը գցած։ Ճանաչեց ու վազեց դեպի նա։

— Պապո, թուրը բերի,— ասաց և ուրախ-ուրախ մեկնեց այն հորը։

Մարդիկ ժպտացին, ժպտաց և հայրը. նա թուրը առավ որդու ձեռքից, դրա հետ միասին նրա թիկունքը ծեծելով, որ նշան էր հավանության ու խրախուսանքի։ Բայց իսկույն էլ ավելացրեց.

— Գնա մամոյիդ, ու թուրը տար. ես ունեմ, ա՛յ, նետաղեղ...

Այս ասելով՝ նա թուրը տվեց որդուն, բայց Հուսիկն ուսը թափ տվեց միայն, որ նշանակում էր, թե գնալ չի ուզում։

— Գնա՛, գնա՛,— կրկնեց հայրը,— մամոն մենակ է։

— Ես կուզեմ մնամ քեզ մոտ...

* * *

Այս ամենի հետ միաժամանակ քաղաքի տարբեր թաղերում ու տներում տիրում էր ավելի մեծ իրարանցում. տղամարդիկ, հատկապես երիտասարդները, դեսուդեն ընկած, հանում էին երկաթե գործիքներ՝ լինկեր, բահեր, մուրճեր ու կացիններ և դնում պատրաստ, կամ՝ հապ-շտապ հագուստ էին փոխում. լավի փոխարեն հագնում էին հասարակ լաթեր՝ հարկադրաբար վատ գործի գնացողների նման... Կային մարդիկ էլ, դրանց հետ և Թորգոմը, փողոցից փողոց, տնից տուն անցնելով հորդորում էին ամենքին՝ չվախենալ և պատրաստ լինել.

— Առեք ինչ կարող եք. սուր, քար, երկաթ ու չխնայեք ոչ մեկին, եթե գան, եթե փորձեն հարձակվել...

Ինքը Թորգոմն արդեն կայազորի պետից իր թաղամասի

տղամարդկանց համար ստացել էր հարյուր նիզակ, հիսուն նետ-աղեղ և քսան դաշույն։ Բայց որովհետև դա քիչ էր, այդ իսկ պատճառով նա, խումբը թողած, շրջում-հորդորում էր, որ յուրաքանչյուր մարդ իր տնից վերցնի ինչ կարող է։

Նույնը անում էին և ուրիշները այլ թաղամասերում։

Սակայն ամեն տեղ՝ յուրաքանչյուր թաղում թե՛ թողգոմը, թե՛ մյուսները նկատում էին տարօրինակ մի երևույթ. բնակիչներից նրանք, ովքեր փախել էին իրենց տներից, հուզված էին, վախի ու տագնապի մեջ և միաժամանակ զայրացած։ Իսկ մյուսները... այն բնակիչները, որ տեղափոխված կամ եկած էին արքունի դեներից ու կալվածներից, հանգիստ էին գրեթե, և այդ չէին թաքցնում, ասելով, թե եկողներն իրենց համար չեն եկել, հետևաբար իրենց չեն վնասի, ուստի և հարկ չեն տեսնում զինվելու, թեպետև իշխանը կարգադրել է, որ ամենքը պատրաստ լինեն և զենք առնեն։

— Զենք առնելու կարիք չկա... Մենք տիրափախ չենք... նախարարները տիրափախ են ուզում...

— Իզո՞ւր խոսքեր։ Եկողները չեն հարցնի տիրափա՞խ և ոչ տիրափախ. նոքա թշնամի են մեր քաղաքին. նոքա որձակորոր կանեն ամենքին... Ուշաբերվեցեք։

Քաղաքացիների մի մասի այս կարգի խոսքերն ու տրամադրությունը հասնում էին կառավարիչ իշխանին. նա գիտեր նույնիսկ ավելին, ու միջոցներ էր խորհում, թե ինչպես ներշնչի ամենքին վտանգի մեծությունը և դրան դիմագրավելու անհրաժեշտությունը, երբ կայազորի պետը եկավ և, նժույգից իջնելով հայտնեց իշխանին, թե պահեստի զենքը բաժանել է արդեն քաղաքի բնակիչներին, թե իր զինվորները պատրաստ են արդեն, թեև մերայինները առավել քիչ են եկողներից... Ապա նա հետաքրքրվեց.

— Քո պատասխանը, տեր Գնունի, լինելու է նո՞ւյնը։

— Նույնը, նույնը, մերժո՛ւմ,— ասաց իշխանը կտրուկ։

— Եվ կարծյոք մոտեցել է արդեն պատասխանի ժամը։

— Այո. այժմ իսկ ուղարկում եմ բանագնացներ, որ հայտնեն մերժումս և արքայի անունով պահանջեն՝ հեռանալ։

Կացությունը կայազորի պետին թվում էր ավելի քան ծանր։ Ինքը թեև քաղաքի ծայրում դիրքեր էր որոշել և իր զինվորներին ու զինված քաղաքացիների խմբերին կարգադ-

րել էր բռնել այդ դիրքերը, այսուամենայնիվ կարծում էր, որ իր ուժերը սակավ են։ Ընդհարվելու դեպքում փրկվել կարող էին, եթե միայն շուտ հասնեին արքունիքի գնդերը։ Դիմագրավել կարելի էր մեկ օր, երկու օր, այնուհետև կացությունը գնալով կդառնար ավելի դժվարին։ Իսկ եթե իշխանը կարողանար բանակցությունները ձգձգելով ժամանակ շահել— այն ժամ գուցե...

Այս ամենը խորհելով՝ կայազորի պետը դիմեց իշխան Վարազին.

— Տեր Գնունի, լավագույնս չէ՞ր լինի արդյոք, եթե նորից ժամանակ խնդրեիր պատասխանիդ համար՝ մեկ-երկու օր, թեկուզ մեկ օր... իսկ այդպես՝ բացարձակ մերժումով թերևս վայրանան ու...

Վարազը գանգուր գլուխն օրորեց.

— Ո՛չ, սիրելի զորապետս, ո՛չ։ Ժամանակ խնդրելը և առհասարակ խնդրելը համարվում է և կհամարվի նշան տկարության, և հակառակորդը կդառնա ավելի հանդուգն։ Նորա հետ պետք է խոսել խստիվ... և, վերջապես, ո՞վ են, ո՞ր նոցա հետ խոսեմ խնդրանքի լեզվով. դա մինչև իսկ կլինի նվաստացում արքայի իշխանության համար, նրա պատվի համար, գահի համար... Ո՛չ, զորապետ։

Կառավարիչ իշխանը իր դպիրին նախապատրաստել էր արդեն, թե ինչ պատասխան տանի եկողներին։ Ուստի և, երբ կայազորի պետը ավարտեց ասելիքը քաղաքապահ զորքի և զինված քաղաքացիների մասին, նա կանչեց դպիր Դավիթին. և երբ սա ներս մտավ զգեստները փոխած, գոտեպնդված և, ձի նստելու համար ոտքերին երկար, մինչև սրունքները հասնող պատիչներ հագած, իշխանը հարցրեց.

— Պատրա՞ստ ես։

— Հրամանքդ, տեր։

— Ուրեմն կրկնիր ի՛նչ պիտի ասես։

— «Իմ տերը,— սկսեց դպիրը ձգվելով ու բառերը շեշտելով,— քաղաքիս կառավարիչ Գնունյաց իշխան Վարազը մերժում է ձեր պահանջը, ուստի չի դարձնի և ոչ մի փախստական... քանզի քաղաքիս բնակիչները արքայիս հպատակներն են և... արքան է նոցա տերը»...

Այստեղ դպիրը հապշտապեց շփոթված. և իշխանը մատը բարձրացրեց.

— «Նոցա կյանքի և մահու իրավունքը պատկանում է արքային»,— ասաց նա դժգոհ։— Կրկնի՛ր... կլինես համարձակ և չսխալվես բնավ։

— Լսում եմ, իշխան։ «Նոցա կյանքի և մահու իրավունքը պատկանում է արքային»,— կրկնեց դպիրը կարմրելով ու շարունակեց. «Միաժամանակ իմ տերը՝ քաղաքիս կառավարիչ Վարազ իշխանը պահանջում է Արշակ արքայի անունով, որ վերցնեք պաշարումը և հեռանաք իսկույն։

Մինչև վերջին բառն արտասանելը՝ դպիրը թվում էր, ծանր բեռի տակ։ Վերջացնելով՝ նա սրբեց քրտինքը և թեթևության խոր շունչ քաշեց։

— Բարի,— գոհ մնաց իշխանը։— Այժմ կարող ես դեկնել։ Հետդ առ և թիկնապահ Բենին։ Կխոսես շեշտ համարձակությամբ։

Փոքր անց, երբ դպիր Դավիթը ձի հեծնելով ճանապարհ ընկավ դեպի պաշարողները, փողոցներն ու կտուրները նորից լցվեցին կանանցով, երեխաներով, իսկ տղամարդիկ, մասնավորապես երիտասարդները, ստացած զենքերն առած, շտապեցին դեպի քաղաքածայրերը՝ նախապես նշված դիրքերը։ Կայազորի պետը նույնպես հեծնելով նժույգը, սրարշավ գնաց իր զինվորների մոտ՝ նրանց հետ լինելու և անհրաժեշտ կարգադրություններ անելու համար։ Նա բացահայտ դժգոհ էր իշխանից, որ չլսեց ժամանակ շահելու իր խորհուրդը և կտրուկ մերժումի պատասխան ուղարկեց. ինքը գտնում էր, որ դա սխալ էր և դրա հետևանքը կլիներ միայն հարձակում։

«Խիզախությունը գովելի է, երբ բխում է ուժից»,— մտածում էր նա։

Իշխանի այդ պատասխանի մասին բոլորովին այլ կարծիքներ ունեին փողոցներում ու կտուրներին հավաքված բազմությունները. նրանք իմացել էին, որ կառավարիչ իշխանը մերժողական պատասխան է տվել և այժմ խոսում էին հուզված։

Մի տեղ ասում էին.

— Ա՛յ, կլսեն ու կհեռանան։

— Այո. չեն համարձակվի գալ արքայի դեմ, նրա քաղաքի դեմ։

— Սակայն արքան այստեղ չէ, որ վախենան։

— Ճշմարիտ է, թագավորն այստեղ չէ. սակայն չէ՞ քաղաքը թագավորինն է, և շահապ իշխանը թագավորի կարգածը։

Խոսում էին և ակնդետ լարված հետևում բանագնաց դպրի շեկ ձիուն, որը գնում էր ոչ սրարշավ, ոչ վարգով, այլ հանգիստ, ասես խնդրի լրջությունը գիտակցելով ոտքերը փոխում էր դանդաղ, թերևս արժանապատվությունը պահելով։

Եկողներն իրենց ձիերով կանգնել էին քաղաքից մի նետընկեց հեռավորության վրա, այնպես որ նրանք երևում էին ոչ միայն իրենց երիվարներով, երևում էին անգամ նրանց նիզակներն ու աղեղները, և այժմ ավելի, քան առավոտը, որովհետև կեսօր էր, և արևն արդեն բավական բարձրացել էր կապույտ երկնակամարում և առատ լույսեր էր թափում ամեն կողմ. այդ ճառագայթների տակ փայլփլում ու ցոլքեր էին արձակում նրանց զենքերը, ձիերի սարքերը։ Այժմ ավելի պարզ երևում էր, որ նրանք շրջապատել էին քաղաքի մեծ մասը ու հաճախ մի խմբից մյուսն էին անցնում զինված հեծվորներ, չգիտես ինչո՞ւ և ի՞նչ նպատակով, բայց թվում էր կարևոր հանձնարարություններով, մի ինչ-որ բան նախապատրաստելու համար։

Եվ որքան մոտենում էր բանագնաց դպիրը՝ այնքան նրանց շարքերում նշմարվում էր անհանգստություն։ Նկատելի էր, որ նրանք ևս հետաքրքիր են իմանալու, թե ի՞նչ պատասխան է բերում բանագնացը քաղաքի իշխանության կողմից։

Երբ Դավիթ դպիրն ու Թիկնապահ Թենը իրենց ենթայգնեերով մոտեցան բավականաչափ— պաշարողների բազմամարդ մի խմբից երկու ձիավոր զատվեցին և եկան ընդառաջ։ Չգիտես ինչո՞ւ, իրար դեմ եկող ձիերը վրնջացին մեկեն և այդ վրնջյունը հնչեց սպասողությունից լռած քաղաքում՝ ոմանց համար բարեգուշակ, այլոց համար՝ չարագուշակ։

Ընդառաջ եկողները, դպիրին մոտենալով, ձիերով բռնե-

ցին նրա երկու կողմը և տարան առաջ, ըստ երևույթին իրենց մեծի մոտ։

Հետաքրքրությունն ու լարումը մեծացավ կտուրների վրա և փողոցներում։

— Եկա՛ն առաջ... Տարա՛ն,— լսվում էին տարբեր կողմերից։— Ի՞նչ պիտի անեն... Ի՞նչ պիտի ասեն...

Ու խոսքերին հետևում էին հառաչանքներ։

Նույնպիսի լարված, բայց զուսպ հետաքրքրություն էին ապրում նաև կայազորի այն զինվորները, որ քաղաքածայրի շենքերի պատերի տակ շարված սևեռուն հետևում էին դպիրբանագնացին, ինչպես և այն երիտասարդները, որոնք նոր ստացած նիզակները, սրերը, նետ-աղեղները ձեռքերին պահվել էին միմյանց մոտ շարված տների պատերի տակ։

Այդ պահին թերևս ամենածանր ապրումների մեջ էր Դավիթ դպիրն ինքը. նա չգիտեր ինչպե՞ս կընդունեն իրեն և իր տարած պատասխանը, և արդյոք կհարգե՞ն իր անձը, որպես բանագնացի. կթողնե՞ն արդյոք վերադառնա քաղաք և չե՞ն վնասի, ինչպես հաճախ վնասում կամ պարզապես սպանում են բանագնացներին։ Այսուամենայնիվ, պետք է արդար լինել և ասել, որ դպիրն առայժմ ջանում էր պահպանել ստոնասրտություն և արժանապատվություն։ Դեմքին պատշաճ լրջություն աված՝ նա ձին վարում էր ուղեկցողների արանքում և ավելորդ էր համարում հարցնել, թե ո՞ւր են տանում իրեն։ Պարզ էր՝ պիտի տանեին իրենց մեծի մոտ։

Եվ իսկապես, երբ նրանք անցան սպառազեն մարդկանց շարքը, դիմավորողները Դավիթին տարան դեպի մի ճերմակ վրան, որի առջև նստած էր հիսունն անց մի մռայլադեմ իշխան՝ սաղավարտով, ռազմի հագուստով, որի գոտուց կախված էին մի փոքր դաշույն և մի թուր, երկուսն էր արծաթած պատյանների մեջ։ Դավիթը դրան չէր ճանաչում, անգամ չէր տեսել առաջին գալուն, ուստի և, երբ մոտեցան, ինքը լարևնց նրան միայն գլխի շարժումով, առանց ձիուց իջնելու։

— Ո՞վ ես դու,— հարցրեց մռայլ մեծավորը։

— Իշխան Վարազ Գնունու բանագնացը։

— Պաշտո՞նդ։ Անո՞ւնդ։

— Պաշտոնս՝ դպիր, անունս՝ Դավիթ։

— Խոսի՛ր։

Եվ դպիրը ձիուց իջնելով հայտնեց իր տիրոջ պատասխանը։

— Իմ տերը՝ քաղաքի կառավարիչ իշխան Վարազ Գնունին, մերժում է ձեր պահանջը։ Նա չի վերադարձնի ոչ մի փախստական, վասնզի քաղաքս ապաստանած յուրաքանչյուր ոք արքայի ծառան է և հպատակը... Նոցա կյանքի և մահու իրավունքը պատկանում է մեր ամենքիս տեր Արշակ արքային...

Այստեղ Դավիթ դպիրը հանկարծ կանգ առավ. նա մոռացավ պատվիրած խոսքի շարունակությունը և չանաց հիշել, բայց այդ իսկ ժամանակ մեկը նկատեց.

— Բանագնաց, վեր առ գդակդ։ Դու խոսում ես իշխան Կամսարականի հետ։

Լսելով Կամսարականի անունը՝ դպիրը աչքերը չռեց մի պահ, նայեց իրեն հարցաքննողին, բայց և իսկույն հիշեց իշխանի պատվերը՝ խոսել համարձակ շեշտով, ու շարունակեց.

— Այո, իմ իշխան տերը նաև առաջարկում է՝ ամենքիս տեր և հրամայող Արշակ թագավորի անունով— վերցնել քաղաքի պաշարումը և հեռանա՛լ...

Նրան լսողը իրոք ոչ այլ ոք էր, եթե ոչ Կամսարական իշխանն ինքը՝ շրջապատված իր նման սպառազեն նախարարներով, որոնց նույնպես չէր ճանաչում դպիրը։ Դրանց մնջ էին ծռաքիթ ծեր Վահևունին, որ շուտ-շուտ խեթում էր դպիրի վրա, Բասենի Մանեճը, Կարուց Ջաքարեն, Վարձա Ապահունին և ուրիշներ։ Կամսարականը դպիրին լսում էր խոժոռած, և հազիվ նա ավարտել էր՝ մոլտաց.

— Քո տերը ոչ թե իշխան է, այլ ստրուկ հիմար։ Մենք չենք պահանջում թագավորի մարդոց, այլ մեր ծառաներին, որ փախել են գաղտագողի։ Եվ քանզի քո իշխանդ չի ըմբռնում այս՝ նա հիմար է երիցս և անճարակ ողբալի։

— Իմ տերն իշխան է և մեծն Գնունյաց տոհմից,— վիրավորվեց Դավիթը։

— Իշխա՛ն՝ սակայն հիմար,— կրկնեց Կամսարականը թունոտ։

Լռություն իջավ։ Այդ ժամանակ ծռաքիթ ծեր Վահևունին, որ կանգնած էր Կամսարականի մոտ, հարցրեց.

— Բանագնաց, կարո՞ղ ես ասել, թե ո՞րքան քնակիչ ու զորք ունի քո տիրոջ քաղաքը։

Դպիրը հասկացավ, թե ինչո՞ւ են հարցնում այդ, ուստի մեծ թիվ ասաց.

— Քսանից ավելի հազար...

Ծիծաղեցին։ Եվ ծռաքիթը նորից ասաց.

— Դու հավերին ու ոչխարներին նույնպե՞ս հաշվեցիր։ Այդպե՞ս է խրատել առաքողդ՝ իշխանը ավանակ։

Դավիթը դարձյալ վիրավորվեց, բայց լռեց, զննաբար նայելով Կամսարականին և նրան շրջապատող զինավառ իշխաններին, սեպուհներին։ Բայց ավելի սաղավարտագլուխ մոայլ Կամսարականին, որ դժգոհ աչքերը հածում էր տարածության մեջ։ Նա իսկապես համոզված էր նախօրոք, որ ոչ փախածները կհոժարեն կամոլին վերադառնալ իրենց տերերի մոտ, ոչ էլ քաղաքի իշխանությունը կցանկանա վերադարձնել նրանց։

— Եվ այլ կերպ չէի սպասում,— ասաց նա տեղից թափով ելնելով։— Քանզի չեն հանձնում կամավ, կտանենք զինու ջորությամբ։

Այս ասելով՝ նա գլուխը շրջեց աջ-ձախ, ասես ստուգում էր շրջապատողներին, ու անսպասելի գոռաց փոխված ձայնով.

— Գրոհե՛լ անհապաղ...

Բանագնաց դպիրը գունատվեց և ասաց շփոթված.

— Ես ուրեմն կարող եմ վերադառնալ,— նա ուզեց գնալ դեպի ձին, բայց Կամսարականը կտրեց.

— Ոչ, բանագնաց, դու կմնաս, որպես... որպես պատանդ,— և Կամսարականը անխոս նշան արավ, որ դպիրին և նրա հետ եկած թիկնապահին տանեն վրանների հետև։

«Կորանք-կործանվանք»,— մտածեց դպիրը, բայց ուղեկից թիկնապահին ասաց միայն.

— Գնանք սպասենք...

Թե ինչի՞ պիտի սպասեր՝ ինքն էլ չգիտեր։ Բայց երբ նրանց, անջատելով իրենց ձիերից, տարան հեռու մի վրան և ասացին «մտեք ներս»— Դավիթը տեսավ այդ վրանի շուրջը խմբված ձիեր և զինված իշխաններ ու սեպուհներ, որ խոսում էին վրդով և այնքան զայրացած, որ անգամ ուշք չդարձ-

ին իր վրա։ Մտնելով վրան՝ Դավիթը նստեց ծանր հառաչանքը զսպած, որ ուղեկից թիկնապահը իրեն վախկոտ չհամարի։ Վրանի շուրջը խոսում էին դարձյալ. Դավիթն ակամա ականջ դրեց, կռահելով, որ նրանց զրույցը վերաբերում է անշուշտ քաղաքին, իրենց ծառաներին և իրենց անելիքին։

Եվ նա չէր սխալվում. մեկն իրոք ասում էր.

— Նար իշխանը սաստիկս բարկացած է Գաբեղենից Սահակի վրա, որ չուղարկեց ո՛չ զորք և ո՛չ եկավ ինքը։

— Եվ ի՞նչ կարևոր էր նրա գալը առանց զորքի,— խայթեց մի ուրիշը։— Անշուշտ խրախճանի մեջ մոռացել է իր պարտքը։

— Ոչ, հիշել է վախը,— հեգնեց առաջին խոսողը,— և կերուխումը գերադասել է մահից։ Չէ՞ որ ինքն է ասել, թե «կյանքը տրված է վայելքի համար և ոչ կռվի»։

— Եվ այդ վայելքի համար կվայելի իր պատիժը։ Նար իշխանը չի ների նրբեք,— ասաց երկրորդ խոսողը։— Ու չպետք է ներել։ Երբե՛ք։ Ինչպես չպետք է ներել և Անգեղա իշխանիկին, որ կալվածների կառավարումը հանձնելով քրոջն ու քեռայրին, փախել է Վաղարշապատ։

— Ստորնությո՛ւն, դավաճանությո՛ւն,— բացականչեցին մի քանի ձայներ ջղագրգիռ։— Նա՛ ևս կստանա արժանի պատիժը։

Դպիրը լսում էր և զարմանում. այդ ամենը, ինչ ասում էին, նորություն էր իր համար, ուստի և նա, մոռացած իր վիճակը, նույնիսկ իր անձը և թիկնապահի ներկայությունը, հափշտակված հետևում էր նրանց զրույցին։ Իսկ խմբված իշխաններն ու սեպուհները շարունակում էին խոսել դարձյալ զայրացած ինչ-որ պարտաղանց իշխանների մասին։ Ասում էին, թե իշխան Կամսարականը եկել է հինգ որդիների և եղբայրների հետ, մեծ թիվ զորքով, իսկ նրանք (մյուս իշխանները) ուղարկել են միայն սակավաթիվ մարտիկներ...

— Իսկ Մերուժանը, որ խոստացել է Վասպուրականից օգնություն, կատարե՞լ է արդյոք իր խոստումը,— հարցրեց մեկը։

— Մասամբ նորին,— պատասխանեց մի ուրիշը։— Բայց մինչև նոր օգնությունը՝ մենք գրոհենք քաղաքի վրա և տանենք մեր փախստականներին։

— Այո, մինչև վերջին մարդը,— համաձայնեց մի սուր ձայն։

Իսկ մի ուրիշը ավելացրեց.

— Եվ դա պետք է անել անհապաղ, այլապես Արշակը կիմանա և կփութա արքունի զորքով։

— Իսկ մինչ այդ կարող են և դիմագրավ լինել։ Չէ՞ կայազոր կա քաղաքում։

— Աննշան, որին կարելի է ընկճել խսկույն և... տանել գերի։

Այստեղ դպիրը չհամբերեց և բռնեց իր թիկնապահի ձեռքը։

— Լսո՞ւմ ես, Բեն, Բենիամին,— շշնջաց նա։— Ուրեմն մեզ պիտի տանեն գերի՞... Մեր կին, մեր երեխաներ... Մի՞թե սակայն թագավորը չիհասնի օգնության,— ասաց նա քիչ լռելուց հետո դարձյալ շշուկով և ինքը սիրտ տվեց իրեն։— Ո՛չ։ Հուսով եմ արքան կհասնի և կփրկի ամենքիս... Խնայիր, տեր,— խաչակնքեց նա։— Սրանք, Բեն, ճշմարիտ է, շատվոր են, բայց Վարազ իշխանը չի թողնի և, վերջապես, միթե տիրապետներն իրենք կհամաձայնե՞ն կամավ...

Լավ իմանալով դրանցից շատերի փախուստի պատմությունը և տրամադրությունը՝ դպիրը համոզված էր, որ տիրապետները երբեք անձնատուր չեն լինի, հետևաբար և կռիվը կարող է երկարել... Եվ եթե մի կողմից դպիր Դավիթին հետաքրքրում էր, թե ի՛նչ է լինելու, մյուս կողմից՝ իրեն զգում էր անսովոր ծանր կացության մեջ։

«Եթե պարտվեն սոքա՝ կսատակեն ինձ, կսատակեն անտարակույս»,— մտածում էր նա հուսատ և զարմանում, թե ինչո՞ւ Վարազ իշխանը իրեն գցեց այս փորձանքի մեջ։ Մտածում էր և միաժամանակ հիշում կնոջը, աղջիկներին, պատկերացնելով, որ նրանք հիմա սրտի հատնումով սպասում են իր վերադարձին։ Բայց ինքը կվերադառնա՞ արդյոք։

Այս մտքից արցունքի երկու կաթիլ ընկան ծեր դպիրի աչքերից և գլորվեցին այտերն ի վայր...

«Բայց ոչ. նրանք չեն համարձակվի... Թագավորը կհասնի շուտով և կպատժի անիրավներին»,— սիրտ տվեց նա իրեն և աշխուժացավ նկատելի։

Երբ քաղաքի դիտարանների և մանավանդ կտուրների տանից, թե ինչպես դպիր Դավթին և նրա թիկնապահին տարան մի կողմի վրա՝ շատերն ինքնաբեր «ախ» քաշեցին և կռահեցին, որ Վարազ իշխանի խոսքը մերժեցին... այսինքն՝ պաշարումը չեն վերցնելու և չեն հեռանալու։

Առաջինը այդ հասկացավ, իհարկե, Վարազ իշխանն ինքը, որ այս տեսարանը դիտում էր իր երկհարկանի տան պատշգամից։ Նա հասկացավ և այն, թե ինչու բանագնացի հետ խոսող սաղավարտակրի մոտից ձիավորներ սլացան դեպի տարբեր կողմեր։ Դրանք անշուշտ իրենց պետի հրամանն էին տանում քաղաքի շուրջը ցրված հեծյալներին։ Վարազը կարծում էր, որ դա հարձակվելու հրաման է, այլապես իր բանագնացին թույլ կտային վերադառնալ։ Տարբեր ուղղությամբ սուրացող այդ հեծյալների հետ միաժամանակ Վարազը նկատեց նաև իր դեմը կանգնած զինված հեծյալների իրարանցում. լսեց խուլ ձայներ, աղաղակներ, որ նույնպես թվացին գրոհի նշան։

Շուտով դա հաստատվեց և ուզմի փողերի տևական ձայներով, որ ասես պատառոտում էին խաղաղ օդը։ Եվ այդ ձայները, որ թվացին շարագուշակ, վախ ազդեցին Վարազ իշխանին և նա մտածեց, թե ո՞րքան մեծ սխալ էր պարսպի կառուցումն ուշացնելը։

Բայց մտածելու ժամանակ չէր այլևս. պետք էր այնպես անել, որ նախաբարական այդ հեծյալ գնդերը քաղաք չմտնեն. պետք էր դիմագրավել մինչև հասներ արքունի բանակը և պատժեր ստահակներին։ Եվ այդպես էլ կարգադրեց.

— Հայտնեցեք կայազորի պետին և մյուս կողմնապահներին, որ չսասանեն բնավ և դիմագրավ լինեն. շուտով արքունի զորքը ամենայն փութով կգա մեզ օգնության,— ասաց նա իր տան առջևը կանգնած զինված երիտասարդներին՝ առերևույթ խրոխտ, բայց իրոք բեկված ձայնով։

Երբ հրամանը լսող այդ երիտասարդները ճարպիկ ոստյուններով թռան իրենց նժույգների մեջքը և սուրացին դեպի քաղաքի ծայրամասերը, Վարազն ինքը ևս, հեծնելով իր պատրաստ ձին, մի թիկնապահի հետ սլացավ այն կողմը, ուր, նրա կարծիքով, պիտի լիներ կայազորի պետը։

Նախարարական զորքերն իրենց գրոհն սկսեցին բոլոր կողմերից միաժամանակ։ Նրանք գալիս էին մեծ արագությամբ. կեսօրվա պայծառ արևի տակ փայլատակում էին ոմանց սաղավարտները, ոմանց զրահները, մյուսների՝ մերկացրած սրերը։

Քաղաքում մեծ տագնապի ու զայրույթի մեջ էին առավելապես նրանք, ովքեր փախել էին իրենց տերերից. մնացած բնակիչները, թեև հուզված, որ անսպասելի թշնամի է եկել և գրոհում է քաղաքի վրա, չէին կարծում, թե եկողները անձնապես վնասեն իրենց։ Չէ՞ որ իրենք չէին փախել նախարարական կալվածներից, այլ եկել էին արքունի շեներից, քաղաքներից, եկել էին քաղաքի կառուցման համար։ Իսկ եկողները պահանջում էին իրենց ծառաներին, միայն տիրապետ ծառաներին։

— Երբ քաղաք մտնեն՝ պիտի ջոկեն միայն ու միայն իրենց փախածներին,— ասում էր մեկը,— մեզ հետ չունեն ոչինչ։

— Այդպե՞ս է,— տարակուսում էր հարևանը։— Թվում է ինձ, որ դիմադրելու հետևանքով ամենքիս կհամարեն թշնամի և կառնեն սրի բերան։

— Եվ դիմադրելն ուրեմն իզո՞ւր է։

— Այդ պետք է խորհեր Վարազ իշխանն ինքը։

— Ուրեմն աղետը կհասնի և մե՞զ։

— Անշուշտ և անխուսափ...

Մինչ այդ նախարարական հեծյալ խմբերը առաջ էին գալիս հետզհետե աճող թափով՝ նիզակներն առաջ պարզած, աղեղները լարած և մի աղմուկ-աղաղակով, որ լցնում էր օդը՝ «ու-ո՛ւ-ո՛ւ»... Ձայներ, որ քաղաքը չէր լսել հիմնադրումից ի վեր։ Անսովոր ձայներ, որոնց վրա շներն սկսեցին հաչել բոլոր թաղերում, բոլոր ձևերով։ Թե այդ կանչերը և թե հաչոցները իրենց վայրի ալմուկով ու ահաբեր շեշտով սարսուռ էին ազդում. ահաբեկում էին առանձնապես կանանց, երեխաներին, որոնք այնուամենայնիվ դեռ բոլորովին չէին հեռանում կտուրներից ու փողոցներից։ Հետաքրքրությունը, թե ի՞նչ է լինելու, նրանց բևեռել էր իրենց տեղերում։ Շատերը կարծես անձնամոռ վիճակի մեջ էին։

Ավելի լարված էին սակայն դարան մտած մարդիկ։ Իսկ

դարանը մեկը չէր և ոչ էլ երկուսը։ Կայազորի պետը, որքան այդ հնարավոր էր եղել կարճ ժամանակում, իր զինվորներին և զենք ստացած կամ ունեցող քաղաքացիներին ցրել-դասավորել էր նախարարական զինված ուժերի դիմաց՝ քաղաքի ծայրատների բակերում, իրարից բավական հեռու, և յուրաքանչյուր պաշտպանական խմբակի մոտ կարգել էր մեկ-երկու զինվոր, որ պիտի խրախուսեին անփորձ պաշտպաններին և առաջին օրինակը տային իրենք՝ եկողներին նետահարելով։ Բացի նետ-աղեղից, նա յուրաքանչյուրին հանձնել էր և նիզակ՝ շատ մոտեցած թշնամուն նիզակահարելու Թորգոմը, օրինակ, նիզակից բացի, ուներ և նետ-աղեղ. նա չգիտես որտեղից գտել էր մի սաղավարտ և մի օղազրահ լանջապահ։ Նրա մարդիկ նույնպես հագնված էին սովորականից տարբեր. մինչև սրունքները ամրացրել էին պատիչներով, իսկ հագուստները ոմանք գոտեպնդել էին պարաններով, ոմանք կաշեփոկերով։ Մեծ մասը կրում էին սովորական զենքեր՝ նետ-աղեղ կամ նիզակ, բայց կային մարդիկ, որ զինված էին միայն կացիններով կամ ծանրագլուխ փայտերով, որոնք նման էին գուրզի։

Եվ ահա որքան նախարարական հեծյալները մոտենում էին խառնաձայն աղմուկով, դարանամուտներն այնքան ավելի անհամբեր էին դառնում. գլուխները թաքստոցներից հանելով նայում էին պրկած ծնոտներով ու շանթող հայացքներով, տեսնելու, թե ո՞ւր է հասել թշնամին։ Թորգոմն արդեն կորցրել էր սառնասրտությունն ու հանգիստը. նա իր դարանից շուտ-շուտ քարե սանդուղով բարձրանում էր վեր, և գլուխը տան կտուրից փոքր-ինչ վեր բռնած, դիտում եկողներին և նորից իջնում, երբ նկատում էր, որ իր խմբի մարդիկ— վախի՞ց, թե ինչից— թողնելով իրենց նշանակված տեղերը, մոտենում էին իրար կամ փորձում նույնպես բարձրանալ։ Այդ նկատելով՝ Թորգոմը գոռում էր.

— Ամենքը յուրյանց տեղը...

Դրանք քսան հոգի էին՝ բոլորն էլ նախարարական կալվածներից փախածներ, բոլորն էլ գրեթե երիտասարդ, բացի Թորգոմի ընկերներ Վարդանից ու Հովսեփից և մի ծերունուց, որ, ականջը դրսի ձայներին, հանդիստ սպասում էր նիզակը պատրաստ բռնած։ Լսելով Թորգոմի ձայնը՝ երիտասարդներն

սթափվում էին և կրկին գրավում իրենց՝ նախապես որոշած տեղերը։

Իսկ նախարարական հեծյալ խմբերը շարունակում էին առաջանալ՝ այժմ արդեն ձիերը չափ գցած, սրերը մերկացրած. ի տես այդ բանի՝ բոլոր դարանամուտները ցանկանում էին մի բան՝ նետահարել եկողներին, կանգնեցնել նրանց հանդուգն, սպառնալից արշավը և սպասում էին հրամանի, ղեկավարի հրամանին...

Ու չգիտես եղա՞վ այդ հրամանը, թե ոչ— քաղաքից դիտողները և ինքը Վարազ իշխանը նկատեցին, որ մեծ ճանապարհով սրարշավ եկող հեծվորների ձիերից ընկան մեկ-երկուսը, նրանց հետ և մի հեծվոր... Քաղաքում ուրախության աղաղակ բարձրացավ. «Ընկա՞վ, ընկա՞վ»... Եվ այնուհետև կամ հեծվոր էր ընկնում, կամ ձի՝ հեծվորի հետ միասին։ Պատահում էր, որ ձին, տարված իր և ընկերների թափից, ընկած հեծվորին, ոտն ասպանդակի մեջ, քարշ տալով բերում էր առաջ... լինում էր և այն, որ հեծվորը վիրավորվելով կանգնեցնում էր ձին և խանգարում ընկերների առաջացումը։

Նախարարական խմբերն սկզբում նետեր չէին արձակում. թվում էր նրանք մի նպատակ ունեն միայն՝ գրոհել արագ և հասնել քաղաք։ Սակայն հանդիպելով նետաձգության և մանավանդ տեսնելով, որ այդ նետերից ընկնում են իրենց ընկերները, իրենք ևս սկսեցին նետեր արձակել... Նժույգները կանգնեցնում էին մի պահ, աղեղները լարում, նետը արձակում և նորից առաջանում. ու որքան մոտենում էին՝ նետաձգությունը սաստկանում էր երկու կողմից. նետերը գնում էին իրար հակառակ ուղղությամբ՝ ձգված, կտրտված լարերի նման, առաջացնելով օդում ինչ-որ դզզոց, որ նման էր մեղուների, ավելի շուտ՝ շնաճանճերի բզզոցի։

Այդ նետաձգությունից ընկնում էին ավելի առաջիկները, որովհետև քաղաքի պաշտպանները պարզապես թաքնված էին և նետեր արձակում էին իրենց դարաններից. իսկ գրոհողները թե շատ էին և թե նետերից թաքնվել չէին կարող իրենց մեծաթափ վազքի պատճառով, մանավանդ որ առաջանում էին ոչ թե ցրիվ, այլ խիտ խմբերով, ուստի և պաշտպանների սլաքները քիչ էին վրիպում։ Եվ քանի մոտենում էին, այն-

քան ավելի շատ մարդ էր ընկնում եկողներից, իսկ քաղաքում ավելանում էին ուրախ և գոհունակ ձայներ.

— Նորի՛ց ընկան... ընկա՜ն...

— Կրկի՛ն, կրկի՛ն,— տարածվում էր կտուրների վրա, ապա դրան հետևում էր և խրախուսանքը— Զա՛րկ, զա՛րկ...

Բայց, պետք է ասել, եկողները այդ անկումներից, աղմուկներից ու կանչերից չէին շփոթվում. շարունակում էին առաջանալ կատաղի, ընկածների վրայից ձիերը թռցնելով, երբեմն և նրանց ոտնակոխ անելով։ Իսկ դարանածները, այդ տեսնելով, լարվում էին ավելի և նետեր արձակում անընդմեջ։

Եկողները տեսնելով այդ անսպասելի ու համառ նետաձգությունը սկսեցին աղաղակել քաղաքի տարբեր կողմերում, ինչ-որ բաներ ասել բարձրաձայն, և այդ ամենից ջոկվում էին միայն հետևյալ խոսքերը.

— Լսեցեք և իմացեք. մենք բնիկներին չե՛նք վնասելու, չե՛նք վնասելու... Մենք պահանջում ենք տիրափախներին միայն, տիրափախներին... Թող տիրափախները գան առաջ...

— Եկողը՝ կներվի, չեկողը՝ կպատժվի...

Կանչում էին և հետն էլ առաջանում պահանջատիրոջ համարձակությամբ, մերկ սրերը սպառնալից շողացնելով։

Իսկ նրանց կոչին՝ քաղաքից պատասխանում էին տղամարդիկ նետերով, կանայք անեծքով ու մուր տալով.

— Մահը գա ձեզ. անօրեն անաստվածներ...

Ու բարձրաձայն, երբեմն գոռալով, չմտածելով իրենց խոսքը նրանց կհասնի՞ թե ոչ, խրախուսում էին դիմադրող հարազատներին, քաղաքացիներին.

— Զա՛րկ հեթանոս շներին... Զա՛րկ...

Եվ երբ նկատում էին, որ եկողներից ընկնում են նետահար, նրանց թվում էր, որ այդ լինում է իրենց խրախուսանքի շնորհիվ, ուստի և բռունցքները գոհունակ զարկում էին իրենց կրծքերին և կրկնում. «Զա՛րկ, զա՛րկ»... կամ՝ կտուրից հող վերցնելով, նետում էին վեր.

— Հողս ի ձեր գլուխ, անիրավներ...

Մի ուրիշը, լսելով որ եկողները պահանջում են տիրափախներին, ձայնը բարձրացնում էր, որ խոսքը տեղ հասնի.

— Ջենք ի գա... չենք ի գա... կմեռնենք չենք ի գա... Մեկ չենք, որ առնեք տանեք... Հազա՜ր ենք, հազա՜ր...

Իսկ քաղաքի մերթ այս, մերթ այն ծայրամասում երևում և իսկույն անհետանում էին նժույգ նստած Վարազ իշխանը իր թիկնապահներով կամ կայազորի պետը՝ իր մեկ-երկու հետևորդներով։ Նրանք ջանում էին հասնել ամեն տեղ և խրախուսել քաղաքի պաշտպաններին.

— Տոկացե՛ք, տոկացե՛ք... արքունի զորքը կհասնի շուտով...

Վարազ իշխանի հանգիստ դեմքը այլագունել էր, ճակատը ծածկվել խոր կնճիռներով, գանգուրները քրտինքից սևացել էին և իջել-նստել օձիքին։ Դեմքին երևում էին միայն աչքերը, և բիբերը լարված էին այնպես, որ նա առջևը ոչինչ չէր տեսնում, այլ դիտում էր թշնամու շարժումը միայն, և, տեսնելով, թե դիմադրողներն իրենց թաքստոցներից ի՞նչպես են եկողներին տապալում նետահար՝ նրան թվում էր, թե հնարավոր կլինի նրանց պահել-կանգնեցնել մինչև արքունի զորքի գալը։ Իսկ նրանք, առանց կանգի ու դադարի, գրոհում էին քաղաքի վրա՝ գրեթե բոլոր կողմերից, թողած միայն սարի լանջը, ուր դժվար էր շարժվել, մանավանդ ձիերի համար։ Նրանք գալիս էին թափով, մոլեգնած՝ ակներև նպատակ ունենալով մեկեն քաղաքը մտնել մի քանի կետից։

Բայց դա դյուրին գործ չէր, որովհետև քաղաքի պաշտպանները, որքան էլ փոքրաթիվ, դժվարացնում էին նրանց առաջացումը՝ այժմ արդեն ոչ թե նետերով, այլև դարաններից դուրս եկածները նիզակներով, քարերով և գուրզանման փայտերով, որ նետում էին մոտեցող ձիերի ու հեծվորների գլխին։ Ոմանք քարեր նետում էին կտուրներից՝ պարսատիկներով... Այս բանում աչքի էր ընկնում հատկապես մի կին, որ կանոնավոր քարեր էր արձակում իր պարսատիկից և հետն էլ կրկնում.

— Առե՛ք, անօրեններ... Առե՛ք, քարասատակ ու քարատակ լինեք...

Սակայն այդ ամենը՝ աղմուկը, իրարանցումը, եկողների գրոհը, դիմադրողների հայհոյանքը, քաղաքացիների տագնապալի կանչերը իրենց գագաթնակետին հասան իրիկնադեմին, երբ արևը թեքվում էր դեպ իր մուտքը։ Նախարարական

հեծյալները ջանում էին, ինչպես էլ լինի, մութն ընկնելուց առաջ մտնել քաղաք, իսկ պաշտպանները ճիգ էին թափում՝ չթողնել, գործադրելով նրանց դեմ նետ, սուր, նիզակ ու քար։ Դիմագրավելու այս գործում առանձնապես աչքի էին ընկնում կայազորի զինվորները իրենց վարժ նետաձգությամբ, տեգի ու նիզակի ճկուն գործածումով, երբ քաղաքի այս-այն ծայրում դուրս էին գալիս իրենց դարանից՝ միահամուռ բացականչելով. «Ջա՛րկ, զա՛րկ»... Նրանց միանում էին քաղաքացիներ՝ քար ու փայտ նետելով։ Թշնամու թափով եկող ձիերը վրնջում էին, հեծվորներն ընկնում նիզակների, քարերի հարվածից, քաղաքի պաշտպանները նույնպես վիրավորվում էին կամ ընկնում նետից կամ տեգից, բայց ողջ մնացածները չէին ընկրկում, և նրանց օգնության էին գալիս ուրիշները. իսկ կանայք, տեսնելով մեկն ընկավ, գոգները քար լցրած, ճիչով վազում էին կռվի վայրը՝ թշնամուն հարվածելու, յուրայիններին սիրտ տալու։

Ու շարունակվեց այսպես մինչև իրիկնաժամ, իսկ երբ օրը մթնեց, կռիվը դադարեց երկու կողմից էլ, և դա եղավ ինքնաբեր, քանի որ իրար տեսնել դժվար էր և յուրայինին կարելի է շփոթել թշնամու հետ։ Առաջինը ետ քաշվեցին գրոհող զորքերը, որից հետո քաղաքի պաշտպանները նորից մտան իրենց դարանները։ Կռիվը թեև դադարեց, բայց կողմերը հանգիստ չէին։ Գիշերը մարդ չքնեց ո՛չ քաղաքում, ո՛չ թշնամու բանակում. այնտեղ երևում էին խարույկանման կրակներ, անցնում էին ստվերներ, լսվում էին ձիերի վրնջյուն ու դոփյուն։ Իսկ այստեղ՝ քաղաքում շարժում էր.— ընկածներին տանում էին դիրքերից, վիրավորվածներին տեղափոխում էին տները, իսկ կանայք խմբերով շտապում էին իրենց կռվող-հարազատների մոտ՝ տեսնելու, թե չե՞ն վնասվել արդյոք կամ ինչի՞ կարիք են զգում. շատերը նաև ուտելիք էին տանում պաշտպանների համար։ Մյուսների հետ Թորգոմի մայրը նույնպես հաց ու կերակուր տարավ որդուն և արցունքն աչքերին խնդրեց զգույշ լինել։

— Ես զգույշ եմ, մարե, դու Մինային պահիր, չվախենա։

— Դու կաց հանգիստ. Մինան մեր տուն է հոր հետ. չեմ թողնի գնա ուրիշ մի տեղ,— հանգստացնում էր որդուն պա-

դավը, թեև ինքը տագնապի մեջ էր, որ եթե Թորգոմը մինչև հիմա չի վնասվել, վաղը՝ ո՞վ գիտի...

Իսկ Վարդանի կինը, որ պառավի հետ հաց էր թերել ամուսնուն, իրեն ուտում էր. ուզում էր փախած Հուսիկին տանել տուն՝ չէր լինում։ Նա ցերեկը եկել էր հոր մոտ և չէր վերադարձել, իսկ այժմ քնել էր բակի մի անկյունում՝ չոր խոտերի վրա, թուրը թևի տակ։ Երեկոյան հայրը, նրա ընկերները որքան համոզել էին գնալ տուն՝ չէր համաձայնել։ Հիմա էլ մայրը շարունակ փորձում էր արթնացնել նրան և տանել հետը՝ չէր հաջողվում։

— Ես կուզեմ մնամ պապոյի մո՞տ,— թափահարում էր նա ոտները առանց աչքերը բացելու և նորից կծկվում խոտի վրա։

Տեսնելով ապարդյուն են անցնում իր ջանքերը՝ խեղճ մայրը խոտով ծածկեց տղային և ապա խնդրեց ամուսնուն ու ընկերներին, առանձնապես Թորգոմին (որպես այդ խմբի ղեկավարի), որ Հուսիկին «աչքաթող» չանեն։

— Գնա, քուրս, գնա հանգիստ, կպահենք,— ասաց Թորգոմը։ Ասաց, բայց ինքն էլ հանգիստ չէր։ Շարունակ մտածում էր վաղվա մասին, երբ կռիվը պիտի նորոգեր, և Մինայի մասին... Որքան էլ վստահ էր, որ մայրը սիրով կկատարի իր հանձնարարությունը, բայց և այնպես մտածում էր, թե Մինան պիտի վախենա այս բոլորից։ Միառժամ մտածելով՝ Թորգոմը հանկարծ վեր թռավ և ասաց ընկերներին.

— Քուն չլինեք, ես հիմա...

Ասաց ու արագ գնաց դեպի մութը։ Ոչ ոք չիմացավ ո՞ւր է գնում և ինչի՞։

Մի քանի րոպե անց նա իր տանն էր։ Չնայած կեսգիշեր էր արդեն, բայց տանը բոլորը արթուն էին՝ թե մայրը և թե Մինան ու նրա հայրը։ Երեքն էլ նստել էին ձեթի ճրագի շուրջը և տխրել անխոս։ Երբ Թորգոմը ներս մտավ զրահներ հագած, սաղավարտը դրած, երեքն էլ վախեցան, կարծելով եկողներից է, բայց մայրը ճանաչեց իսկույն։

— Վա՜յ, Թորգոմս,— զարմացավ նա։

— Եկա դանակս առնելու,— ասաց Թորգոմը, կարծես գալն արդարացնելու համար, և, հին հագուստների մեջ ինչոր փնտրելուց հետո, Մինային կանչեց դուրս։— Ե՛կ ասեմ...

Եվ առաջինը իջեր ելավ դուրս։ Մերունիները հասկացան, որ նա ուզում է Մինայի հետ խոսել առանձին, և խանդաղանքի պես մի բան երևաց նրանց երեսին։

Երբ Մինան դուրս եկավ մութ բակը՝ Թորգոմը բռնեց նրա ձեռքերը։

— Մինա, եկա ասեմ, որ չվախենա՛ս։ Մենք նրանց չենք թողնի քաղաք...

— Իսկ քեզ չեն... չե՞ն վնասի,— հարցրեց Մինան դժվարությամբ։

— Վնասե՞լ։ Եղիր հանգիստ։ Ա՛յ ինչ եմ հագել,— Թորգոմը ցույց տվեց հագի զրահները և սաղավարտը։— Չե՛ն վնասի, չէ՛։ Դու մարեին, պապոյին լավ նայե, ու մի վախենա։

— Չէ՛, ես կվախենամ,— ասաց Մինան բեկված ձայնով և գլխով հենվեց Թորգոմի ուսին։

— Կվախենա՞ս... Ասացի՝ վախենալու չէ։ Մենք նրանց չենք թողնի քաղաք։ Շուտով թագավորի զորքը կգա՝ ամենքը կփախչեն... ամենքը...

Եվ որովհետև Մինան գլուխը չէր բարձրացնում և լալիս էր, Թորգոմը բռնեց նրա թևերը և համբուրեց նրա ճակատը։ Աղջիկը, կարծես դրան էր սպասում, գլուխը բարձրացրեց հանկարծ ու, ձեռքերը տարածելով, գրկեց Թորգոմի պարանոցը։ Գրկեց ու համբուրեց։

— Որ կասես՝ չեմ վախենա։ Բայց, ա՛յ, նայե, քեզ չվնասեն։

— Դու կաց հանգիստ։

Ու փոքր անց Թորգոմը նորից ընկերների մոտ էր։

Բայց այդ գիշեր ավելի անհանգիստ էր Վարազ իշխանն ինքը։ Իր հոգնած նժույգի վրա, միայն մի թիկնապահի հետ, նա եղավ պաշտպանական բոլոր կետերում և հուսադրեց, խրախուսեց ամենքին.

— Եղեք միշտ արի։ Պաշտպանեցեք քաղաքս և պատիվը ձեր։ Պաշտպանեցեք... մեր տեր՝ Արշակ թագավորը չի մոռանա ձեր ծառայությունը։ Տոկանք սակավ մի և արքունի բանակը վաղը կգա մեզ օգնության։

Նրա ձայնը խզվել էր։ Չգիտես անքնությունի՞ց, թե շատ

կարգադրություններ անելուց. խոսում էր դժվարությամբ, բայց սրտանց ու կորովաշեշտ։ Իսկ պաշտպանները պատասխանում էին երդումի պես.

— Պիտի կռվենք մինչև վերջին շունչ...

Իշխանի պես այդ գիշեր պաշտպանական բոլոր կետերը հերթով այցելեց և կայազորի պետը. նա ևս, իր դոհունակությունը հայտնելով պաշտպաններին, ամեն տեղ անում էր միևնույն կարգադրությունը.

— Դերաններով պատեցեք փողոցների մուտքը, որ վաղը թշնամին անարգել չմտնի քաղաք... Ու ճակատեցեք պաշարյուն.. առանց շփոթի, մինչև արքունի զորքը կգա օգնության...

Իվ այդ հեռանկարը, որ արքունի զորքը շուտով կգա օգնության թե սիրտ էր տալիս պաշտպաններին և թե ոգևորում, ուստի և նրանք արթուն աչքով հսկում էին թշնամուն, ականջով ոպասում հեռավոր հայերի, թե չի՞ գալիս արդյոք օգնության բանակը։

Դիշերը մութն էր, բայց երկինքը լի ոսկեցոլուն աստղերով, ու դրանից այնպիսի պայծառություն կար վերևում, որ թվում էր ամենը հրաց է, և այդ պայծառությունն ստեղծված է մարդու համար... Միաժամանակ թվում էր, որ ամենքն այս գիշեր կգան, թե ո՞ւրքան քստմնելի գործ է կռիվը և այլևս չեն կրկնի այդ վայրենությունը։

Բայց առավոտյան ադջամուղջին, լույսը դեռ չբացված, կռիվը վերսկսվեց։

Վարազ իշխանը, որ ամբողջ գիշեր չէր քնել և զրահի մեջ շրջել էր բոլոր մարտական կետերը, լուսաստղը երևալուն պես հասավ կայազորի պետին՝ քաղաքի հարավային մասում և կարգադրեց.

— Սկսեք, զորապետ։ Նետահարեք, քանի քնած են անշարժ։

Նախարարական զորախմբերը թեև մութի պատճառով երևում էին զանգվածային ձևով և դյուրին չէր նշան բռնել, բայց իշխան Վարազը, անհամբեր, ցանկանում էր ժամ առաջ ջախջախել թշնամուն և վանել։ Պատասխանատվությունը թագավորի առաջ, քաղաքի բնակչության առաջ՝ նրան թելադրում էին գործադրել բոլոր միջոցները՝ քաղաքը պաշտ-

պանել թշնամու ներխուժումից և հեռացնել նրան, որ արքունական զորքը գար և տեսներ ամեն ինչ վերջացած։ Բայց որովհետև իր կովող ուժերը սակավաթիվ էին և անվարժ՝ կամենում էր հաղթել հնարագիտությամբ, հանկարծակի հարձակումով։ Նրա հրամանը թեպետև հաճելի չէր կայազորի պետին, բայց և այնպես նա չուզեց հակաճառել. անմիջապես զինվորներ ուղարկեց դարաններում ցրված զորամասերին ու խմբերին հայտնելու, որ դուրս գան և սկսեն նետաձգությունը։

— Եվ թող ոչ մի նետ չանցնի ապարդյուն...

Զինվորները նրա հրամանը տարան քաղաքի տարբեր կողմերում դարանած մարտիկներին, և շատ չանցած, առավոտյան աղջամուղջի մեջ, նետերը բնից թռած թռչունների նման օդը պատռելով սլացան դեպի պաշարողները, և դա նրանց մեջ առաջ բերեց ահագին իրարանցում ու աղմուկ, որի մեջ կար և վիրավորների հեծեծանք, և վրեժի զայրույթով լցված հայհոյանք, և գոռհելու, կոտորելու հրաման։ Օդը մեկեն թնդաց կողմերի խառնաձայն կանչերից ու աղաղակներից.

— Իժի ծնունդնե՛ր...

— Նզովից արմատնե՛ր...

— Մա՛հ անխնա... Զա՛րկ անխափան, անվրե՛պ...

Ու կռիվն սկսվեց նոր կատաղությամբ։ Խավարը դարձնում էր այն ավելի ահավոր. առաջին իսկ նետերից պաշարողները վեր թռան ու իրար անցան քաղաքացիների հանդգնության վրա կատաղած ու ահագին աղմուկով առաջ խոյացան իրենց նժույգներով։ Մութի մեջ ասես թևավոր քաջքեր էին սլանում իրար հետևից. լսվում էր միաժամանակ թե ոտնատրոփ, թե վրնջյուն ու փնչոց։ լսվում էր, որ նրանց հրամայում և խրախուսում էին ինչ-որ ձայներ։ Ավելի համարձակները, ընկերներից զատվելով, առաջ էին նետվում և ուրվականի պես սլանում դեպի պաշտպանները։ Բայց այդպիսիները իսկույն գետին էին տապալվում քաղաքին չմոտեցած՝ դարաններից արձակված նետերից, որոնք ուղարկվում էին միշտ անզուսպ բացականչություններով. «Զա՛րկ, զա՛րկ»։

Ու մութի մեջ զարկում էին իրար՝ գրեթե չտեսնելով միմյանց։ Զարկում էին կարծես ստվերների։ Եվ որովհետև հեծ-

Վորները գալիս էին դեպի քաղաք՝ պաշտպանները չանում էին կտրել քաղաքը խուժել ցանկացողների առաջը, երբեմն դուրս նետվելով թաքստոցներից, իրենց ապահով անկյուններից։

Եվ սա տևեց բավական երկար, մինչև լույսն ու մութը բաժանվեցին իրարից։ Իսկ երբ աղոտ լույս եղավ՝ հակառակորդ հեծվորներն սկսեցին գալ-մտնել պաշտպանության կետերը, տների բակերը կամ, գերանափակի վրայից թռչելով, մտնել փողոցները...

Այն, ինչ սպասում էր Վարազ իշխանը, թե թշնամին, հանկարծակի հարձակումից շփոթված, կնահանջի՝ չեղավ։ Ընդհակառակը. այդ հարձակումից ասես զայրացած, գրոհեցին ամեն կողմից։ Եվ, լույսը բացվելուն պես, մի ժամվա մեջ ամեն ինչ խառնվեց իրար. սպառնալից գոռոցների հետ սրեր էին շողում, ձիեր էին դոփում և ընկնում...

Գլխավոր փողոցի պաշտպանները մի տեղ ընկճվեցին հանկարծ և սկսեցին ետ քաշվել կռվելով. մի այլ տեղ նահանջեցին հակառակորդի գերազանց ուժից նեղված, և նախարարական հեծյալները ներս խուժեցին քաղաք։ Եվ այստեղ ահա իր գագաթնակետին հասավ քաղաքացիների բարկությունն ու ցասումը։ Երբ խուժողները սուր հանած գալիս էին առաջ՝ կտուրները բարձրացած կին, մարդ զարկում էին նրանց այդ տեղերում կուտակած քարերով, փայտի կտորներով։ Ոմանք նույնիսկ քիվերից քարեր էին պոկում և նետում նրանց վրա։ Չկար այլևս մեկը, որ մնար իր տանը, իր բակում. ամենքը նորից թափվեցին փողոցները, բարձրացան կտուրները, այնտեղից կռվողների մոտ. բայց երեկվա պես չէին գոհանում միայն դիտելով ու անիծելով։ Լինելով անզեն՝ նրանք էլ քարերը դարձրին զենք, ու ամեն մի նետված քարի հետ գոռում էին.

— Ա՛ռ, իժի՜ ծնունդ...

Թորգոմն իր խմբով դիմադրում էր երկար ժամանակ. նրանք իրենց նպաստավոր դարանից արձակած նետերով սպանեցին շատ ձիեր ու հեծվորներ, բայց եկողների բազմության առաջ, մանավանդ գերի ընկնելու երկյուղից, ետ քաշվեցին տների արանքով, այնպիսի տեղերով, որ եկողները բնավ չէին կարող հետևել նրանց։ Դրանց հետ էր և Վարդանի որդին՝ փոքրիկ Հուսիկը, փաթաթած թուրը ձեռքին։

Երբ ետ էին գնում՝ Թորգոմը հանկարծ նկատեց, որ քաղաքի մի ծայրում ծուխ բարձրացավ բոցերի հետ, և նրա գլխում կայծակեց մի տխուր կասկած, թե թշնամին արդեն մտել է Ավան և վառել է պատահած եղեգնի կիտուկները։

Կռիվն իսկապես գնում էր քաղաքի մեջ. թշնամին մի քանի կողմից արդեն խուժել էր ներս։ Շուտով լուր տարածվեց, թե Վարազ իշխանը սպանվել է նետահար։

— Անե՛ծք,— գոռաց մեկը։

Եվ դա նոր զայրույթ վառեց սրտերում, ու կռիվը տաքացավ։ Հատկապես կռվող քաղաքացիները դիմադրում էին և շուտ-շուտ նայում վերի ճանապարհին, թե չի՞ երևում արդյոք արքունի բանակը...

Իսկ նախարարական զորքերը, կռվով առաջ գալով, կանչում էին շարունակ.

— Ինիկնե՞ր քաղաքի, մենք չենք կռվում ձեր դեմ... Մենք եկել ենք տիրափախների՛ն տանելու, տիրափախների՞ն...

— Թող տիրափախները անձնատուր լինեն... Կամովին եկողը՝ կազատվի, չեկողը՝ կպատժվի... դիմադիր մի՛ լինեք... Հանձնեցեք տիրափախներին, և կռիվը կառնի դադար...

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Զարմանալի են կյանքի հակադրությունները։

Այն իսկ օրը, երբ նախարարական հեծյալները, դիմադրությունից կատաղած մտան Արշակավան, այդ նույն պահին քաղաքամայր Վաղարշապատը հանգիստ էր. նրա երեք գոտիներում էլ կյանքն ընթանում էր իր սովորական հունով։ Պարսպից դուրս ապրող այգեգործները պատրաստվում էին այգեկութի. կթոցներ էին նորոգում, հնձաններ էին մաքրում, ոմանք անխոս ստուգում էին թփերը, խշմարելով բարձրացնում պառկած կամ չափից ավելի կախ ընկած որթերը, որ ողկույզները անարև չմնան և շուտ հասնեն... Կային և մարդիկ, որ դեղձեր էին հավաքում ծղոտից շինած սալակներում, հենակներ էին դնում դեղնափայլ սերկևիլներով, կարմիր նռներով ծանրաբեռ ծառերի ճղների տակ։

Իսկ պարսպից ներս՝ արհեստավորներն ու առևտրական-

ները կատարում էին իրենց ամենօրյա աշխատանքը. բրուտները կավե ամաններ էին հղկում ու շարում արհեստանոցների առաջ. պղնձագործները խլացուցիչ աղմուկով կռում էին կաթսաներ ու պնակներ... Ճոները, կոշկակարները, պարանագործները, համեստագործները և մյուս արհեստի մարդիկ ինքնամփոփ անում էին այն, ինչ անում էին միշտ՝ տարիներ շարունակ։ Նեղլիկ փողոցներով, անցորդներին դիպչելով, անցնում էին բեռնված ավանակներ, ջորիներ և բոժոժների կարկաչով ուղտեր, որոնք իրենց երկարավիզ գլուխներով ասես իշխում էին ամեն ինչի և արհամարհում ամենքին։

Ու այս ամենից օդը լցվել էր անասելի ժխորով։

Սակայն, դրան հակառակ, միջնաբերդը խաղաղ էր, ինչպես միշտ. դրսից՝ նրա պարիսպներից չէր թափանցում ոչ մի աղմուկ. լսվում էր միայն ավազանը թափվող ջրերի ձայնը և շարքով շինված աղբյուրների խոխոջը, որ թվում էր անտեսա աղջիկներ են քրքջում հովասուն ծառերի տակ, և այդ քրքիջն ասես զովություն էր տարածում պալատական պատիզում՝ նրա ուղիների վրա, նրա ծառերի մեջ, ուր անհովություն թռչուններ ինչ-որ երգեր էին ոլորում ուրախ-զվարթ, կարծես ջրերի ձայնին արձագանք տալով։

Սաստիկ շոգի պատճառով պալատականների մեծ մասը գնացել էին իրենց զով կալվածները։ Պալատում մնացել էին միայն Հայր-Մարդպետը, Հազարապետ Գնունին և Հավնունին։

Թագավորը, նախաճաշը նոր ավարտած, պատրաստվում էր որսի գնալու։ Քսանից ավելի խայտաբղետ որսաշներ, երկու շնապահ և երկու խուճապարար (որոնց դերը որսը տեղահանելն էր և դեպի որսորդները քշելը) կանգնած էին միջնաբերդի մեծ մուտքի առաջ, որը կոչվում էր Տրդատա դուռ։ Իսկ թագավորի ուղեկիցները՝ որսընկերներն ու թիկնապահները, որսորդական լրիվ հանդերձանքով ու զենքերով, այսինքն՝ երկարավուն նիզակներով, նետ-աղեղով ու կարճ դաշույններով, պալատի աստիճանների առաջ սպասում էին թագավորի դուրս գալուն, որպեսզի ձիեր հեծնեն... Ձիեր, որոնց ձիապանները վաղուց ախոռից հանել էին, թամբել և այժմ սանձերից բռնած հեռվում պտտում էին ետ-առաջ։

— Գիշերը մնա՞ք պիտի, Մանասպ իշխան։

— Անշուշտ, հոգիս, անշուշտ,— պատասխանեց Հավնունյաց իշխանը բարեհոգի ձայնով և խոշոր ճեռմակող ու կախվող բեղերի ծայրերը շտկելով։— Շատոնց արքան չի եղել որսի. կամենում է գեթ երեք օրով հեռանալ մայրաքաղաքի տաքից...

— Եվ ո՞ւր պիտի մեկնենք, իշխան։

— Հավանաբար Վարաժնունյաց անտառները, տղաս. որսն այնտեղ առատ է ավելի։

Այդ միջոցին որսաշները հանկարծ, բոլորը գրեթե միասին բարձրացրին այնպիսի հաչ ու կլանչ, ասես մեկը մտրակով դաղեց նրանց։

Խոսակիցները տագնապով նայեցին այն կողմ և տեսան մի այլագունած հեծվոր, որ ձիավազ գալով՝ մեկեն թռավ ցած ու վազեց առաջ, այնտեղ, ուր խմբված էին զրուցողները։

— Ո՞ւր է արքան,— հևաց նա քրտնամխած։

— Ո՞վ ես դու, տղաս,— հետաքրքրվեց Հավնունին։

— Սուրհանդակ, Արշակավանից,— հազիվ շնչելով ասաց նա։

— Եվ ի՞նչ լուր ես բերել այդպես...

— Քաղաքը պաշարված է... տարե՛ք ինձ արքայի մոտ...

— Պաշարվա՞ծ,— աչքերը չռեց Հավնունի իշխանը։— Մի վայրկյան, տղաս,— և նա արտորանքով բարձրացավ աստիճանները։

Չանցավ իրոք մի վայրկյան՝ փոշեթաթավ ու քրտնողող սուրհանդակը տարվեց թագավորի մոտ։ Արշակն ընդունեց նրան որսորդական կիպ հագուստներ և երկարաճիտ մուչկեր հագած։ Երբ սուրհանդակը հևալով նամակը տվեց նրան, ապա, երեսի քրտինքը թևքով սրբելով, պատմեց, թե նախարարական գնդերը, Արշակավանը պաշարելով, պահանջում են իրենց ծառաներին— թագավորը գունատվեց, ձեռի մտրակը նետեց մի կողմ և, ներքին շուրթը դնելով ատամների տակ, կարդաց Վարազ Գնունու նամակը։

— Այդպե՞ս,— տնքաց նա նամակը ավարտելով ու հիշեց անմիջապես ամենը, ինչ լսել էր վերջին ամիսներին և կարևորություն չէր տվել. այն, որ դժգոհ նախարարները, Կամսարական Նար իշխանի գլխավորությամբ ու ներշնչումով,

պատրաստվում են իր Ավանի գեմ, նպատակ ունենալով տանել իրենց փախած ծառաներին։ Լսելով այդ, Արշակը չէր հավատում սակայն, թե նրանք կհամարձակվեն մի այդպիսի քայլի. այսուամենայնիվ, նրանց այդ կիրքը սանձելու համար մի տարի առաջ մի փոքր զորամաս էր ուղարկել նոր քաղաքը՝ թե կարգ պահպանելու և թե պաշտպանելու ի դեպս որևէ անակնկալի։ Ու դրա հետ միասին պատվիրել էր թե քաղաքի կառավարչին և թե զորամասի պետին.

— Եթե լինի փորձ այդպիսի՝ չխնայել ոչ ոքի. սատակիլ անխնա...

Ու պատկերացրել էր, որ եթե նախարարները հանդգնեն մի օր այդպիսի բան անել՝ դա կանեն հավանաբար շնչին ուժերով, ուստի և դյուրավ կարելի է ընկճել նրանց։ Այժմ սակայն զարմացած էր. որքա՞ն մարդ են բերել արդյոք, որ կարողացել են պաշարել քաղաքը և սպառնալ նրան։

— Ե՞րբ ելար քաղաքից,— հարցրեց նա սուրհանդակին մի վայրկյան խորհելուց հետո։

— Երեկ առավոտյան, արքա։

— Մեծաթի՞վ է պաշարող զորքը։

— Այո, արքա։

— Ե՞րբ երևացին դոքա։

— Երեկ լուսաբացին, արքա,— պատասխանեց երիտասարդ սուրհանդակը քնատ, շաղված աչքերով։ Մտնելով սրահ՝ նա զգում էր կարծես իր աչքերի վիճակը և կոպերը թարթում էր հաճախ։ Թվում էր՝ ամաչում է նայել թագավորին, ե այդ իսկ պատճառով նա Արշակին թվաց շփոթված ու անտեղյակ մեկը, ուստի և հարցուփորձում էր ավելի, քան պետք էր.

— Նոքա ավելի՞ են, քան կայազորը։

— Այո, արքա։ Թերևս հինգ անգամ։

— Եվ քաղաքը պաշարել են լրի՞վ։

— Բացի լեռնակողմից, արքա։

Արշակի սպիտակուցները խաղացին դեմքին. նա թողեց հարցուփորձը և, միայն քթով շնչելով ու, առանց սուրհանդակին արձակելու, դարձավ անշարժ կանգնած սենեկապետին.

— Կանչիր Զարեհ Ամատունուն,— ասաց նա խուլ, հևա-

ցող ձայնով։— Իսկ դու ազատ ես,— դարձավ սուրհանդակին։

Մի քանի վայրկյանից մտավ մի երիտասարդ՝ հռոմայեցու նման ածիլված դեմքով, թուխ, գանգրացող մազերով, գլխի շուրջ բոլորը ոսկեգույն ժապավեն կապած, որպես տոմի պատիվ. Զարեհ Ամատունին էր. լինելով սպարապետի օգնականը, փոխարինում էր Վասակին, որն այժմ գտնվում էր իր հեռու կալվածում՝ Տայքի Երախանի ոստանում։

Ներս մտնելով՝ նա գլուխն իջեցրեց և կանգնեց ձիգ։

— Հրամայեցիր գալ, արքա։

— Այո, սեպուհ։ Անմիջապես, առանց վայրկյան իսկ հապաղելու, ական թոթափել Ավան ուղարկիր Վաղարշապատի կայազորը։ Նույնպես և Արագածնոտում ամառող վաշտերը շտապեն Ավան, և ինքդ աճապարիր այնտեղ ամենայն փութով։

Եվ որովհետև երիտասարդ զորականը լսում էր ու լռում, Արշակը բարկացավ.

— Սակայն չես հարցնում ինչո՞ւ։

— Իրազեկ եմ, արքա... իմացա փոքր առաջ։

Երիտասարդը նորից գլուխ իջեցրեց, որ հեռանա, և այն է երկու քայլ էր արել, Արշակը կանչեց.

— Հետդ առ ուտեստի մեծ պաշար, նաև զենք՝ Ավանի ժողովրդյան բաժանելու համար։

— Հրամանդ, արքա։

— Հիշիր և այս, որ պետք է լինես անխնա։ Ջներել ոչ մի ստամբակի։ Սրահար ու նետահար անել ամենքին, որ հավետ մոռանան խռովությունը արքունիքի դեմ։ Հայտնիր զորքին և ժողովրդյան, որ ես նույնպես գալիս եմ օգնության։

Երիտասարդ զորականի դուրս գնալուց հետո Արշակը կարգադրեց սենեկապետ Եզնիկին՝ պատրաստել անհրաժեշտը մեկնելու համար։

— Հայտնիր նաև դրանիկ գնդի պետին՝ Խորխոռունի Վահանին, որ կազմ-պատրաստ լինի երեկոյան դեմ մեկնելու։

Հազիվ արտասանել էր այս՝ այլայլված ներս մտավ Փառանձեմ թագուհին։

— Իմացա, ողջը իմացա... Ուրեմն դու ևս մեկնո՞ւմ ես, արքա,— ասաց նա հուզված,— և ահա եկա ասելու, որ լինես աններող...

Նրա գեղեցիկ աչքերը կրակ էին ցայտում. ասես եռում էր ներսը։ Մերթ կարմրում էր, մերթ գունատվում։

— Կամենո՛ւմ են ավերել հայոց բերդը... Եղի՛ր անխնա։

— Եվ այլ կերպ չեմ լինի, միայն անխնա,— գրեթե մռընչաց Արշակը։

Այդ պահին հայտնեցին, որ եկել է Վարազ իշխանի երկրորդ սուրհանդակը, որ ետ էր մնացել ձիու ոտքը վնասվելու պատճառով։ Դրան ևս լսելով՝ Արշակը կրկնեց առավել բարկացայտ.

— Շտապե՛լ և փրկել Ավանը...

Երկու ժամ հետո մայրաքաղաքի հեծյալ կայազորը, իր հրամանատարի առաջնորդությամբ, անցավ Տափերական կամուրջը։ Նույն օրը իրիկնադեմին ճանապարհ ընկավ և թագավորը իր թիկնապահ գնդով։ Նա մռայլ էր, խոսք չէր փոխանակում և ոչ մեկի հետ. սև նժույգը վարում էր լարված, սանձը ձեռներում պրկած, և ձին գնում էր փնչոցով, երկար վիզը այս-այն կողմ թեքելով. թվում էր հեծվորի տրամադրությունը վարակել էր նրան։ Արշակը թիկնոցով էր, որը, արագ ընթացքից, երբեմն ուռչում կամ ծածանում էր ձիու վրա, երբեմն կպչում մարմնին։ Նա գնում էր դրանիկ գնդի առջևից, նույնիսկ գնդի պետ Խորխոռունուց առաջ ընկած։ Ակներև մտահոգված էր, ասես ոչ ոքի չէր ուզում տեսնել. մյուս կողմից՝ անհամբերությունը կարծես նրան մղում էր առաջ։ Եվ գնում էր այնպես արագ, որ շուտով հասավ մայրաքաղաքի հեծյալ կայազորին, որին միացել էր արդեն Սուրմարիի հետևակ գունդը։ Եվ հեծյալ ու հետևակ իրար խառնված բրոնել էին ամայի ճանապարհը, որ մի քարքարոտ զառիվեր էր. լսվում էր մերթ ձիերի համաչափ ոտնատրոփ, մերթ զենքի-զրահի շաչյուն, մերթ սմբակների պայտերի գաբկ, որ կայծեր էին հանում քարերից։

Քանի դեռ լույս էր և ճանապարհը տակավին լայն՝ գնում էին արագ։ Սակայն, երբ մութն ընկավ և սկսվեց նեղ վերելքը՝ դանդաղեց ոչ միայն հետևակի, այլև հեծյալների ընթացքը։ Վերելքը դժվարացավ հատկապես ձիերի համար. նրանք գայթում էին, ձգվում, և հեծվորները հաղիվ էին պահվում նրանց մեջքերի վրա։ Ճանապարհը գնալով դառնում էր ավելի զառիվեր և ավելի քարոտ. այժմ տեղ-տեղ գնում էին

ժայռերի միջով։ Որքան հրամանատարները շտապեցնում էին՝ վերելքն այնքան դժվարանում էր կարծես։

Այն դեպքերում, երբ թագավորն ինքը մասնակցում է երթին, մեծանում է հրամանատարների հոգսը. նրանք, բացի հրամանից, չեն համարձակվում ասել-խոսել։ Զինվորները սակայն, ինչպիսի պայմաններում էլ լինեն, առիթ և հնար են գտնում խոսելու, թեկուզ կիսաձայն, կցկտուր։ Եվ Արշակը, գնալով երբեմն նրանց միջով կամ նրանց կողքից, հաճախ լսում էր զուսպ խոսակցության բեկորներ. «Ինչո՞ւ ենք շտապում այսպես»,— հարցնում էր մի զինվոր։— «Թշնամի՞ է եկել քաղաքի վրա, պարսի՞կ է, ի՞նչ»...— «Ասել չեմ կարող,— պատասխանեց երևի առաջին զինվորը։— Տեր սեպուհը չասավ ոչինչ»... «Իսկ ես կարծում եմ՝ մեծ է վտանգը,— լսվեց մի այլ զուսպ ձայն։— Եթե մեծ չլիներ՝ թագավորը չէր միանա մեզի»...

«Տրամաբանում է ճշմարիտ»,— մտածեց Արշակը նժույգը խթանելով։ Թեև նա չէր հագել երթերի ժամանակ սովորական զգեստները (արծաթազօծ զրահներ և դրանց վրա հովազի կամ վագրի մորթի, որ նրան անմիջապես տարբերում էր մյուսներից), և հագուստով պարզ էր՝ զորավարի պես, բայց և այնպես զինվորները ճանաչեցին նրան ձիուց և թիկնապահներից, ու խոսակցության այդ պահին մեկը, ձայնը ճնշելով, սաստեց խոսողներին.

— Լո՛ւռ, լո՛ւռ, թագավորը...

Արշակը, ձին ասպանդակելով, անցավ այդ վաշտի կողքով և ոչինչ չլսեց այլևս։ Որքան էլ վերելքը դժվարին էր, ճանապարհը անհարթ՝ նա այնուամենայնիվ շտապում էր շուտ հասնել և տեսնել ի՞նչ է կատարվում իր քաղաքում, ովքե՞ր են եկել նրա վրա... Թագավորից ետ չէր մնում իհարկե և նրա թիկնապահ գունդը, որի պետ Խորխորունին շարունակ խրախուսում էր.

— Երա՛գ, երա՛գ...

Բայց որքան էլ ցանկային գնալ արագ՝ երկու օրվա ճանապարհը չէին կարող կտրել մի գիշերում, մանավանդ որ մութը դժվարացնում էր վերելքը։ Ջիմացան ինչպես երեկոն մթնեց արագ, և այժմ սակավ աստղերով երկինքը կախվել էր մռայլ, լեռնային ուղին հազիվ էր նշմարվում այդ մութի

մեջ, ավելի ճիշտ՝ ձիերը գտնում էին այն բնազդով և գնում խոր փնչոցով, սմբակների ու լկամների ձայներ հանելով, ու գիշերը թվում էր ձիերի երթով լցված, իսկ ճանապարհը անվերջ, անվախճան...

Որքան էին անցել՝ ոչ ոք ասել չէր կարող, երբ Խորխոռունին մութի մեջ առջևում նկատեց սև կերպարանքներ։ Մի ։ոքր էլ առաջ գնալով՝ նա ձին կանգնեցրեց և ասաց.

— Սակավ մի սպասենք, արքա։

— Հոգնե՞լ ես արդեն։

— Ոչ, արքա, երևում են կերպարանքներ կասկածելի։

— Ուրեմն և պետք է պարզել ովքեր են,— ասաց Արշակը, աչքերով մութը խուզարկելով։

Ու մի քանի վայրկյան հետո նրանք տեսան կանանց, մարդկանց ու երեխաների մի մեծ խումբ։

— Ովքե՞ր եք,— հարցրեց Խորխոռունին ձայնին խստություն տված։

Եկողները, որ վախից կանգ էին առել, պատասխան չտրվին. և այն ժամանակ միայն, երբ դրանիկ գնդի պետը կրկնեց իր հարցումը, առջևից լսվեց մի կերկեր ձայն.

— Փախուկներ ենք, տեր։

— Որտեղի՞ց,— հարցրեց արդեն Արշակն ինքը անհամբեր։

— Արշակավանի՞ց,— լսվեց այս անգամ ծերունական խզված մի ձայն։

Արշակի շունչն արագացավ, փոխվեց հնքի։

— Արշակավանի՞ց... Իսկ ի՞նչ է կատարվում այնտեղ։

— Կռի՛վ, թրաշոզո՛ւմ, հրդե՛հ...

— Կռիվն սկսվա՞ծ է,— բռնկեց Արշակը մի այնպիսի տիրական զայրույթով, որ կարող էր մատնել նրա ով լինելը, բայց ոչ ոք չճանաչեց նրան, և նա շարունակեց.— իսկ կայազորը, բնակիչները կռվո՞ւմ են արդյոք։

— Կռվում են, տեր, բայց... թշնամին շատավորիկ է, ամենքը զենքով, բնակիչները՝ անզեն։

— Իսկ ի՞նչ է անում կառավարիչը։

— Կառավարում է, տեր։

— Կայազորի պե՞տը։

— Նույնպես։

«Ուրեմն դեռ ամեն ինչ կորած չէ»,— մտածեց Արշակը և, չգիտես ինչու, ձիու սանձը քաշեց և աչքերը դարձրեց փախստականներից։ Ջնայած մութն էր, բայց նա պարզապես խուսափում էր նայել իր հիմնած քաղաքից փախած, այդ վախվորած մարդկանց, որոնց հասած աղետի պատճառը համարում էր իրեն, իր անհոգությունը, որ արհամարհել էր զգուշացումները նախարարների թշնամական պատրաստության մասին։ Թեև լուրերը նրան թվում էին չափազանցրած, սակայն փախստականները կասկած չէին թողնում։ Նա չկամեցավ այլևս հարցուփորձել. մտրակեց նժույգը և սուրաց առաջ... Թվում էր՝ ցանկանում է մի երկու թռիչքով տեղ հասնել և կանխել աղետը։

Բայց Արշակավան հասնելու համար տակավին պետք է գնային ամբողջ գիշեր և ավելի, երկա՜ր, երկա՜ր... Եվ կհասնեի՞ն արդյոք օգնության։ Ինչպես և լիներ պետք էր շտապե՛լ, շտապե՛լ...

— Հայտնիր ամենրին՝ հեծելազորին և հետևակին, որ աճապարեն,— ասաց Արշակը դրանիկ գնդի պետին ու ինքը սուրաց առաջ։

Գունդը հետևեց նրան՝ խորխոռոնչ առաջնորդությամբ։

Դարձյալ մութն էր. աստղերը երկնքում առկայծում էին ժլատ ցոլքերով, չկարողանալով իրենց լույսը հասցնել երկրին և նվազ չափով անգամ լուսավորել ճանապարհը. ու այս պարագան կրկնապատկում էր Արշակի անհանգստությունը, և ոչ միայն նրա, այլև զորքի։

Անցնելով ևս մի փոքր տարածություն՝ նրանք հանդիպեցին փախստականների նոր խմբերի, որոնք առաջիններին ասածներին ավելացրին առավել տագնապալի լուրեր, թե՝ կրոիվն արդեն քաղաքի մեջ է. թշնամին կոտորում է բնակիչներին, հրդեհում է տները...

— Իսկ ի՞նչ է անում կառավարիչը։

— Սպանված է, տեր։

— Կայազորի պե՞տը։

— Վիրավոր է...

«Պետք է շտապել, շտապել»...

Բայց գիշերը դարձյալ թվում էր անվերջ, անվախճան։

— Ե՞րբ է վերջապես բացվելու լույսը,— ասում էր եր-

բեմն այս, երբեմն մյուս զինվորը։ Թվում էր ամենքը մտածում էին այդ մասին, ու լույսն ասես բերելու էր հանգստություն։

Մի քանի ժամ մութի մեջ գնալուց հետո բացվեց վերջապես լեռների առավոտը. մի կողմից սարերի գագաթները լուսավորվում էին, մյուս կողմը տակավին մնում մթամած։ Իսկ ձորերը լիքն էին մուժով, մշուշով, որոնց մեջ չէին երևում անգամ գյուղերը, անտառները... Այնտեղ՝ ներքևում քնած էր ամեն ինչ, իսկ լեռների վրա բացվում էր լույսը։ Ձիերն այդ զգալով վրնջացին տարբեր կողմերից և քայլերը արագացրին, մտածելով երևի հասնում են գնալիք տեղը, ուր պիտի հանգստանան։ Չնայած ամենքը հոգնած էին անքնությունից ու ճանապարհի դժվարություններից, բայց թվաց լույսը եռանդ ու աշխույժ ներարկեց թե մարդկանց և թե ձիերին։ Հետևակն արդեն մնացել էր ետ, հեծելազորը արագացրեց ընթացքը։ Իսկ Արշակն իր թիկնապահ գնդով սլանում էր արդեն առջևից։ Նրան թվում էր, թե լոկ իր երևալը կարող է վախ ազդել թշնամիներին և քաղաքը փրկել։ Պետք է շտապե՛լ, շտապե՛լ...— մտածում էր դարձյալ Արշակը ու դարձյալ սլանում ձիու սանձը թողած։ Երբեմն միայն ետ էր նայում, ասես ստուգելու, թե որտեղ է զորքը. հետևո՞ւմ է իրեն, թե կանգ է առել սարալանջին։ Իր գնդից մի քանի հոգի միշտ ուղեկցում էին նրան, որ մենակ չմնա։ Այդ ուղեկիցներից մեկը, իհարկե, Խորխոռունին էր, որ ձին վարում էր թագավորի նժույգին գրեթե զուգահեռ, բայց չէր համարձակվում ասել մի խոսք, թե իրենք հեռանում են գնդից և թե դա այնքան էլ ցանկալի չէ այս ամայի վայրում։ Իսկ Արշակը, ձին վարելով, մտածում էր միայն, որ պետք է շտապել, շտապել...

«Չե՛մ ների ոչ մեկին։ Երբե՛ք»,— մտածում էր նա նժույգի վրա առաջ թեքված, հայացքը հեռուները, ցանկանալով կարծես, որ առաջինն ինքը տեսնի, թե ի՞նչ է կատարվում իր Ավանում։

Վերջապես այդ օրը՝ այն ժամին, երբ արևը թեքվում էր դեպի մուտքը, նրա առջև պարզվեց մի օտարոտի տեսարան. այնտեղ, ուր լեռների հարթ գոգավորության մեջ Ավանը միշտ երևում էր շարքեր կազմած տներով, ծառերով, բլուրին բաց-

մած եկեղեցիով, այդ տարածությունը հիմա ծածկված էր ծխով, որի միջից երբեմն-երբեմն բարձրանում էին բոցեր՝ հրեղեն սյուների նման։

«Հավանաբար մարտը շարունակվում է քաղաքում»,— մտածեց Արշակը և ձին կանգնեցրեց, որ ավելի լավ տեսնի։ Բայց որքան էլ լարում էր տեսողությունը՝ թե քաղաքում և թե նրանից դուրս մարդ չէր նկատում։ Անասուններ էին միայն երևում հեռու դաշտում և լեռնալանջերին... Բայց երբ, փոքր-ինչ առաջանալով, հայացքն ուղղեց քաղաքի արևմտյան կողմը՝ տեսավ մարդկային մի մեծ զանգված, որ շարժվում էր դեպի ձորահովիտը։

— Դիտիր, Վահան սեպուհ, և տես ի՞նչ է այն,— մատնացույց արավ Արշակը մոտը կանգնած թիկնապահ գնդի պետին։

— Ձինված խմբեր են, արքա,— ասաց Խորխոռունին աչքերը կկոցելով։— Հեծյալ, հետևակ գնում են խառնված... Ո՛չ, ներիր, արքա։ Հեծյալները կարծյոք տանում են անզեն մարդիկ... երևում են և կանայք։

Արշակը ամեն ինչ հասկացավ կարծես, և առաջին բանը, որ զգաց՝ ծանր վիրավորանքի զգացումն էր. մի խումբ ամբարիշտ նախարարներ եկել հրդեհել են իր հիմնած քաղաքը և ժողովրդին տանում են գերի... Քաղաքը, որ շենացրել էր արհեստներով ու առևտրով՝ մատնել են հրի ու սրի... և ինքը հիմա այդ պետք է թողնի՞ անպատիժ։

Շուրթերը կրծելով նայեց նա հեռացող բազմության, նայեց երկար, նայեց ուշադիր, ու այդժամ ինքն ևս նկատեց, որ իրոք հեծյալները շրջապատած տանում էին հետևակ մարդիկ... կանանց և տղամարդկանց. տանում էին, ինչպես ոչխարի հոտի...

Արշակը թերևս երկար նայեր այդ տեսարանին ու քաղաքին, եթե հանկարծ նրան չսթափեցներ ձիերի հախուռն մի ոտնատրոփ։ Նա վրդով ետ նայեց։ Սակայն նկատելով եկողը արքունական առաջին հեծելագունդն է՝ սպարապետի օգնական Զարեհ Ամատունու առաջնորդությամբ, հրամայեց, առանց Զարեհի ողջույնին պատասխանելու.

— Նայիր, տեր Ամատունի,— և Արշակը ձեռքը մեկնեց դեպի հեռացող մարդկային զանգվածը։— Ահա քաղաքի թըշ-

նամիները։ Բնակիչներին վարում են գերի։ Հասիր և սրատիր ամենքին... սակայն այնպես, որ գերիները մնան անվնաս... Իսկ հեծյալների մի այլ խումբ թող շտապի հրդեհը մարելու...

Հեծելազորի մեծ մասը, կարկտաձայն սմբակահարելով լեռնային քարքարոտ ճանապարհը, սուրաց դեպի ձորահովիտը։ Արշակը առաջամ, ձիու վրա անշարժ հետևեց հովիտն իջնող հեծյալների ընթացքին, և երբ նրանք ցած իջնելով, աներևութացան, նա շարժեց նժույգը և դարձավ դրանիկ գընդի պետին.

— Իսկ մենք գնանք Ավան։

Խորխորունին հետևեց նրան զինվորների մի խմբով։

Երբ թագավորը դրանց հետ մոտեցավ քաղաքին, ծուխը տակավին տարածվում էր նրա վրա. դեռ հեռվից զգացվում էր հեղձուցիչ խանձահոտ, իսկ երբ մտան առաջին պատահած փողոցը, Արշակը նկատեց դիակներ, որ ընկած էին գետնին՝ փոշիների մեջ, տների առաջ, պատերի տակ... Կային թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք. ոմանց կողքին ընկած էր նիզակ, ոմանց կողքին՝ մի երկար փայտ, իսկ մեծ մասամբ անզեն էին՝ հագուստների վրա և կողքի գետնին լերդացած արյուն. մի կին՝ ձեռքին քար սեղմած, մի ուրիշ կին՝ տղամարդու թևը գրկած... Պատահում էին այրված տներ, մխացող եղեգներ ու գերաններ... Ծխահոտն առհասարակ բռնել էր ամբողջ քաղաքը և ամեն քայլափոխին երևում էին դարձյալ դիակներ... և վախեցած կանայք, մարդիկ, որ դուրս էին գալիս ինչ-որ անկյուններից, թաքստոցներից։

Երևում էր, որ մարդիկ կռվել, պաշտպանել էին քաղաքը ինչով կարողացել էին և ընկել էին կամ վախից թաքնվել։

— Ստահակնե՛ր,— դուրս թռավ Արշակի բերանից։

Առաջ գնալով նա տեսավ դարձյալ տներ, որ այրվում էին։ Հրդեհը հավանաբար սկսվել էր եղեգնյա պահեստներից ու մառաններից, ինչ կար յուրաքանչյուր տան մոտ, և դրանցից երևի բռնկել էին ծածքի եղեգներն ու գերանները։ Այրվող տների մոտ հանդիպում էին կանայք, երեխաներ, որ ընակարաններից դուրս էին քաշում գորգեր, հագուստներ, կաթսաներ և տնային մանր իրեր։ Եվ ամեն տեղ, ամեն փողոցում դարձյալ հանդիպում էին դիակներ ու նվացող վիրա-

վորներ։ Առանձնապես ծանր ազդեց Արշակի և նրա հետևողների վրա մի տեսարան. երկու հոգի ծոնկի եկած քաշում էին մեկի թիկունքը խրված նետը, և նա ճչում էր աղի-աղերսաձայն.

— Թողե՛ք, թողե՛ք... մի շարժեք...

Վիրավորը կին էր։

Արշակն շտապեց հեռանալ այդ տեսարանից և չլսել մանավանդ վիրավորի ճիչը։ Դա նրան թվաց նախատինքի պես մի բան։

«Ոչ, բնավ չեմ ների...»,— մտածում էր նա և առաջ գնալով հիշում, թե ո՞րքան հանգիստ ու գեղեցիկ էր Ավանը իր վերջին այցին, և որքա՞ն մարդ կար, որ նայում էին ամեն կողմից՝ բակերից, կտուրներից... Ո՞ւր են այժմ. թաքնվա՞ծ են, սպանվա՞ծ, թե գերեվարված... Ինչո՞ւ այսքան սակավ է մարդը, ինչո՞ւ ամայի են փողոցները և երևում են միայն դիակներ, դիակներ՝ հագուստներով ընկած կողքի, ընկած երեսն ի վայր, ընկած մեջքի վրա... Մի տեղ, երբ Արշակը իր հեծյալ թիկնապահներով թեքվեց նոր փողոց՝ այդտեղ մարդիկ, կանայք, երեխաներ, նրան նկատելով, թողին վիրավորներին ու փախան ահարեկ։

Այս տեսնելով՝ թագավորի թիկնապահներից մեկը առաջ անցավ ձիավազ և կանչեց.

— Մի՛ վախեք, մի՛ վախեք, թագավորն է, թշնամի չէ...

Այս ձայնի վրա մաղախուլ ու հագուստը պատռված մի պառավ ելավ փողոցում ընկած դիակի մոտից և սև, մրոտ ձեռքերը բարձրացրեց վեր. նրա երեսը նույնպես սևացած էր մրից և այդ սևության մեջ նրա աչքերը փայլում էին արտակարգ փայլով։ Մի պահ նայելով թագավորին՝ նա ճչաց հանկարծ.

— Արշակ թագավոր, Արշակ թագավոր, ինչո՞ւ դարձար մեր մահվան պատճառ։ Ինչո՞ւ բերիր մեզ այստեղ և չեկար օգնության։ Ինչո՞ւ, ինչո՞ւ...

Արշակը չկարողացավ ասել գեթ մի բառ։ Պառավի խոսքերից նա ավելի մռայլվեց և ձին շրջեց հակառակ կողմը գնալու։ Եթե մեկն այդ պահին ուշադիր նայեր նրան՝ կտեսներ, որ նրա աչքերը մեղապարտի հայացք ունեն, իսկ ձեռքերը, որ պրկել էին ձիու սանձը, դողում էին նկատելի։

«Ո՛չ, չեմ ների... Յուրաքանչյուրը կստանա իր մահացու պատիժը, յուրաքանչյուրը»,— ասաց նա մտքում և հուզված խթանեց ձին այլ փողոց անցնելու։ Հազիվ մտել էր այդ նոր փողոցը՝ նկատեց, որ մի այլ պառավ եղեգներից խարույկ էր վառել և նրա բոցերի վրա բռնել էր փայտե մի խաչ։ Դա այնքան տարօրինակ էր, որ Արշակը մոտեցավ հետաքրքրված։

— Ի՞նչ ես անում, մայր,— կանգնեցրեց նա ձին։

— Թող այրվի՝ մոխիր դառնա ձեր խաչը... Ձեր նոր աստվածը սուտ է իր խաչով... Այնքան աղոթեցի կանգնած, աղոթեցի ծնրադիր՝ չօգնե՛ց, չօգնե՛ց։ Երկու որդուս սպանեցին, երեքին տարան գերի... Այրեմ, որ նորից գան հին աստվածները, հին աստվածները, որ միշտ օգնել ու փրկել են մարդոց ցավից, մահից... Եկեղեցի օծեցիք, որ մեզ պաշտպանի... Քանդեք՝ ավելորդ է, անզոր...

— Դարձյալ որդեկորույս է,— շշնջաց թիկնապահներից մեկը։— Ցնորել է։

— Ոչ, ցնորած չէ։ Հուսախաբ է թե՛ աստծուց, թե՛ ինձնից,— ասաց Արշակը՝ նորից հեռանալով։

Քաղաքից դուրս գալով՝ Արշակը երկար ժամանակ լուռ էր և մթնած։ Սպասում էր, թե ի՞նչ լուր կբերեն նախարարական զորքերին հետապնդող իր գնդից, որպեսզի որոշեր անելիքը։ Նա սպասում էր և համոզված էր, որ իր գունդը պիտի ջախջախեր նրանց, և գերիներին ազատելով բերեր քաղաք։ Կցանկար միայն, որ գերիների հետ կալանած բերեին և հանդուգն նախարարներին, այն մարդկանց, որ պատճառ էին դարձել քաղաքի այս ծանր աղետին... Ա՜խ, բերեին մի...

Արշակի սպասումը երկար չտևեց։ Շուտով իրար հետևից ձորահովտից բարձրացան մեկ-երկու հեծվոր, որ գալիս էին սակայն տարօրինակ խուճապած ընթացքով.... Թագավորի թիկնապահներից մի քանիսը, դրանց հետ և Վահան Խորխոռունին, եկողների տեսքից ու ընթացքից կռահելով ինչ-որ, գնացին ընդառաջ։ Եվ եկողները, առանց հարցումի սպասելու, հայտնեցին տխուր.

— Մերայինները պարտվում են...

— Նրանք բազում են, մեր ձիերը հոգնած...

Եկողներից մեկը Զարեհ Ամատունու օգնականն էր՝ Ան-

գեղաց իշխանիկը։ Երբ նա այլայլված, ամոթահար զեկուցեց իրենց վիճակը՝ սպիտակուցները փայլեցին Արշակի երեսին, և նա հրամայեց.

— Տար երկրորդ գունդը։ Գերիներին ազատեք, ատամբակներին կալանեք։

Այդ պահին իրոք աղմկալի ոտնատրոփով մոտենում էր հեծյալ երկրորդ գունդը։ Դա հազիվ էր հասել և փորձում էր կանգ առնել, Անգեղաց իշխանիկը հրամայեց.

— Հետևել ինձ,— ու ինքը ձին դարձրեց դեպի ձորը։

Եվ նոր եկած, հոգնած հեծելագունդը քառատրոփ հետևեց նրան։

Ճանապարհը Արշակավանից իջնում էր ձորամեջ և գնում դեպի Բագրևանդ. գնում էր կեռմաններով կամ մերթ բարձրանում բլուրները, մերթ իջնում, և միաժամանակ երևում էր, թե ինչպես մի մեծ բազմություն է գնում այդ անհարթ ճանապարհով։ Մայր մտնող արևը փայլեցնում էր նիզակներ ու տեգեր և միևնույն ժամանակ ոսկեվորում փոշու ամպերն այդ ճանապարհի վրա։ Սրատես զինվորները տեսնում էին թե՛ նիզակավոր հեծյալներ և թե՛ անզեն ու հետևակ բազմություններ։ Իսկ դրանց զուգահեռ սարերի լանջերով գնում էին ինչ-որ հետևակ խմբեր՝ նույնպես նիզակավորված... Այն հարցին, թե ովքեր էին դրանք, նոր հայտնված բնակիչներից մեկը բացատրեց, թե ձորով գնացողները նախարարական հեծյալներ են, որ գերեվարում են քաղաքի բնակիչներին, իսկ սարալանջերով գնացողները այդ գերիների ազատ հարազատներն են, որ ցանկանում են երևի տեսնել, թե ո՛ւր են տանում գերիներին կամ... մտադիր են գուցե հարձակումով ազատել նրանց...

Երբ Զարեհի օգնական Անգեղաց իշխանիկը երկրորդ գունդը առաջնորդեց դեպի իշխող բլուրը՝ Արշակը նժույգի վրայից հրամայեց խստաձայն.

— Օ՛ն, հառա՛ջ...

Եվ գունդը, որքան էլ հոգնած, սուրաց առաջ դեպի ձորահովիտը, թվում էր, թե նախարարական ուժերը, տեսնելով այդ նոր հեծվորներին, պիտի հեռանային խուճապած, բայց նրանք չսարսեցին։ Ընդհակառակը. գերի տանող խմբերը, նկատելով նոր արշավող արքունական հեծվորներին, նախ

կանգ առան, ապա ձիերի գլուխը շրջեցին ետ մի ակնհայտ նպատակով՝ եկողներին դիմադրելու... Դրա հետ միաժամանակ նկատվեց մի այլ բան. սարալանջերով գնացողները, տեսնելով արքունական այրուձին, սկսեցին իջնել արքունի զորքին միանալու։ Նրանց առաջնորդում էր սաղավարտով և զրահ հագած մեկը, որ երկարավուն մի նիզակ ուներ ձեռքին։

Արշակ թագավորը, որ թիկնապահներով շրջապատված, մի բլրի վրայից, իր սև նժույգի վրա արձանացած, ակնդետ հետևում էր այս ամենին, զարմացավ, որ հեռացող այդ զորամասը սարալանջից իջավ և միացավ իր զորքին։ Նրա թուխ դեմքը կծկվում էր շուտ-շուտ, իսկ աչքերի սպիտակուցները խաղում էին շարունակ։ Արշակն սպասում էր, թե իր հեծյալները առաջին իսկ հարձակումով կընկճեն նախարարական ուժերը, կազատեն գերիներին և կկալանեն ապստամբ նախարարներին կամ... կհալածեն նրանց մինչև իրենց կալվածները ու... այնժամ ինքը դատաստան կտեսնի նրանց հետ։

Բայց հակառակորդը անձնատուր չէր լինում. նա դիմադրում էր կատաղի և գետին տապալում արքունի զինվորներին։ Շուտով նետաձգություն սկսվեց երկու կողմից, և ձորահովիտը լցվեց խոլական աղմուկով՝ մարդկային ահավոր կանչերով, գենքերի նշկահումով և ձիերի վրնջյունով։

Բախումը կատաղի էր. հակառակորդները, մի նետընկեց տարածություն իրարից հեռու, ձիերի վրայից անընդհատ նետեր էին արձակում միմյանց դեմ և ահեղաձայն խրախուսում յուրայիններին.

— Ջա՛րկ, զա՛րկ...

Տեսնում էր այս Արշակը հեռվից, լսում էր աղմկալի ձայներ և ատամները սեղմում այնպես, որ մկանները խաղում էին երեսին։ Նա կուզեր բարձրաձայն հրամայել, որ չվախենան և առաջ գնան իր զինվորները և չխնայեն ոչ ոքի. բայց զսպում էր իրեն, սպասելով, թե ահա ուր որ է կկատարվի իր ցանկությունը...

Սակայն հակառակորդը տեղի չէր տալիս։ Ընդհակառակը, նոր ուժեր, նոր խմբեր էին վերադառնում ճանապարհից և մասնակցում դիմադրության։

Միառժամ նայեց Արշակը լարված, դեմքն ու ձեռները

պրկած, հետո նրա անհանգստությունն ասես անցավ տակի նժույգին. կենդանին սկսեց ոտքերը վեր ու վար անել, գլուխը թեքել, վիզը ոլորել այս-այն կողմ ու ձգվել առաջ։ Դա կարծես խթանեց Արշակի կամքը. նա ասպանդակները սեղմեց ձիու կողերին, և նժույգը բլուրից սուրաց ներքև. նրա հետ և թիկնապահների ձիերը։

Կողմերի բախումն ընդունում էր վտանգավոր կերպարանք. նրանք բլուրներից ու ճանապարհից տարածվում էին դեպի հովիտը։

— Ուղարկել սուրհանդակ, որ հետևակը գա օգնության, և անմիջապե՛ս— հրամայեց Արշակը հենց ընթացքի միջոցին։

Բայց կռիվը մի օրում չվերջացավ, ինչպես սպասում էր Արշակ թագավորը։ Այնքան էլ դյուրին գործ չէր ընկճել ապրստամբ նախարարներին։ Հետևյալ օրը կռիվը տեղափոխվեց Կոգովիտ և դարձավ ավելի կատաղի...

* * *

Կոգովիտ...

Մեծ չէ Հայոց Աշխարհիս այս հովիտը, որ հնուց ի վեր եղել է մեծամեծ կռիվների ու բախումների ասպարեզ հայերի և օտար նվաճողների միջև։ Ամենից ավելի հայերն այստեղ բախվում էին պարսիկների հետ, երբ նրանք, սահմանը խախտելով, խուժում էին հայոց երկիրը։ Թշնամուն դիմադրելու առաջին վայրերից մեկը միշտ լինում էր Կոգովիտը, որի հին անունն իսկապես Կոգի հովիտ էր։ Նրա միջով հոսում է համեստ Զկնգետը, որ գալիս է Զկնալճից. իսկ նրա երկու կողմը երկինք են խոյանում կապտաժեռ լեռներ՝ սևպացած կատարներով, որոնց գլխին ձյուն անգամ չի նստում—այնքան սուր են և ուղղահայաց այդ կատարները։ Դրանցից մեկը կոչվում է Եղջերք, որի գլխին ցցված ժայռերը նման են իրոք եղջյուրների։

Հովիտը թեև բարեբեր չէր, բայց ուներ շատ գյուղեր, որոնք ապրում էին սակավաբեր հողերի եկամուտով և այն բարիքով, որ տալիս էին նրանց հովտի շուրջը, լեռների փեշերին եղած լճերը. մեկը դրանցից կոչվում է Կարմիր լիճ,

Մյուսը՝ Սպիտակ լիճ, երրորդը՝ Անհատակ լիճ, իսկ չորրորդը՝ Սագաց լիճ։

Գյուղերն այստեղ իրարից հեռու չէին. նրանց միմյանցից բաժանում էր հազիվ կես փարսաղ կամ ավելի քիչ տարածություն։ Գետի աջ կողմը Մարդուցանն էր, նրանից քիչ հեռու՝ Դարակը, ապա գալիս էին Արանցը և մյուսները։ Իսկ գետի մյուս կողմը Սարակն էր՝ ուռիների մեջ կորած, ապա Թեփերվիզը, որ միայն բարդիներ ուներ և վիթխարի ընկուզենիներ։ Սրա այն կողմը երևում էր Թոնդրակը, որ իր անունն ստացել էր Թոնդրակ սարից, այն սարից, որ տասը-քսան տարին մեկ արթնանում էր քնից և ծուխ ու գոլորշի արձակում, ինչպես մոլի ծխող մի հսկա, որ ծխում է արթնանալուն պես։

Նշանավոր էր այստեղ և Դարոնք ամրոցը, որ պատկանում էր Բագրատունի իշխաններին։ Այս բերդի բարձունքից նայելիս առաջին պահ երևում էր արծաթափայլ Ձկնգետը, ապա նրա երկու եզերքին շարված, ծառերով քողարկված գյուղերը՝ իրենց արտերով ու բանջարանոցներով, որոնց վրա միշտ արև կար և խաղաղություն։ Այդ գյուղերի անդորրը վրդովվում էր միայն այն ժամանակ, երբ պարսիկները խուժում էին հովիտը։

Այժմ սակայն դրանք բոլորը տագնապի մեջ էին, առանձնապես Թիր և Արանց շեները։

Հայոց Նավասարդ ամիսն էր. տաք պայծառ օրեր էին, լով գիշերներ, ալեծածան, հասունացող արտերը օրեօր սպիտակում էին, և ինչպես ամբողջ հովտում, այնպես էլ Թիր և Արանց շեներում սպասում էին, թե արտերը կհասնեն շուտով և քաղը կսկսեն. ու աղոթում էին, որ տերը խնայի իրենց և ցանքերը զերծ պահի կարկուտից ու այլ աղետներից... Եվ որովհետև կոգեցիների ապրուստը հացահատիկն էր ու բանջարեղենը, ուստի և նրանք իրենց ցանքերը մշակում էին մեծ խնամքով. դաշտերում երևում էին տղամարդիկ միշտ թաց բահերով և կանայք ու աղջիկներ՝ գույնզգույն հագուստներով, և ամեն կողմից լսվում էր երգ, ծիծաղ։

Այժմ սակայն մի շաբաթ էր ամեն աշխատանք դադարել էր հովտում։

Մի շաբաթ էր հայերը կռվում էին հայերի դեմ. թագավորական գնդերը՝ նախարարական զորքերի դեմ։

Առաջին օրը մարտն ահավոր էր, արյունահեղ, երկու կողմից եղան շատ զոհեր։ Այժմ նույնպես կռվում էին կառաղի ու մոլեգին. մերթ մի կողմն էր առաջ գնում, մերթ՝ մյուս։ Թե կողմերից մեկն ընկճվում էր, նահանջում էր արտերը տրորելով, իսկ հակառակորդը քառատրոփ հետևում էր նրան, չնայելով ոչ արտի, ոչ բանջարանոցի։ Յուրաքանչյուր կողմ ցանկանում էր մի բան՝ ընկճել, վնասել հակառակորդին. արտերը մինչև իսկ տհաճություն էին պատճառում նրանց, խանգարում էին, որովհետև ձիերի ոտները խրվում էին փափուկ սեահողի մեջ։

Շինականները սարսափի մեջ էին. դա համարում էին աստծու պատիժ և ահեղ կարկուտ... Կարկուտը մի օր է խրփում, իսկ այս կռիվները՝ թվում էր վերջ չունեն։ Կար ավելի վատթարը. թե նահանջողները և թե հետապնդողները երբեմն դալիս անցնում էին գյուղի միջով և այդ ժամանակ շինականները, ձիու ոտքի տակ չընկնելու համար և, պատահաբար, նետահար չինելու երկյուղից, թաքնվում էին, ուր կարող էին, բայց և ուրախանում էին, որ հեռացան։ Թվում էր՝ գնացին ընդմիշտ և իրենք կազատվեն... Սակայն չէր անցնում մի ժամ, երկու ժամ նորից ձիերի ոտնատրոփ. հետապնդողները կրկին ետ էին դառնում հետապնդված ու կամ դիրք մտնում գյուղում, կամ ձիերը կանգնեցնում՝ եկողներին դիմագրավելու։ Ու բախումն սկսվում էր նորից՝ բարձր աղաղակներով ու կանչերով։ Կողմերը զինված էին միևնույն զենքերով՝ նետաղեղ և նիզակ։ Երբ շատ մոտենում էին իրար՝ նետի փոխարեն գործի էին գնում նիզակները, ապա, մի քանի դիակ ու վիրավոր թողնելով, կրկին հեռանում, մտնում էին արտերը՝ հարմար տեղ բռնելու։

Այսպես էր լինում ցերեկը։ Իսկ գիշերը, երբ կռիվը դադարում էր մութի պատճառով, շենի մոտ կամ շենի մեջ գտնվող զինվորները—լինեին արքունական, թե նախարարական—տնետուն ընկած պահանջում էին հաց, կերակուր, կաթ կամ անասուն։ Այս տեսնելով՝ շինականները ոչ միայն իրենք էին թաքնվում, թաքցնում էին թե հաց, թե ցորեն և թե ամեն ուտելիք։ Օ՜, եթե հնար լիներ թաքցնել և խոտը... Զինվոր-

ները, առանց տերերին հարցնելու, բարձրանում էին դեզերի գլուխը և խոտը թափում ձիերի առաջ, կամ՝ պարզապես ձիերը բերում-կանգնեցնում էին դեզերի առջև, և նրանք չորս կողմից դեզն այնպես էին կրծում, որ նա կամ փլվում էր փորը թափված, կամ նմանում էր հսկայական սունկի։

Երեք օր առաջ կռիվը Արանց գյուղի մոտ էր. երեկ սակայն արքունական զորքերը, նեղելով նախարարական ուժերին, հասել էին Թիր գյուղին, և այժմ կռիվը ծավալվում էր նրա դաշտում...

Արքունական գունդը կանգնած էր գիտեզերքից դեպի սարի ստորոտին ընկած տարածության վրա, արտերից փոքրինչ հեռու, մի բաց տեղ, որ իրոք հնձած խոտի խոզաններ էին, իսկ նախարարական զորքերը բռնել էին գյուղի առջևը, ուր արտերը վերջանում՝ սկսվում էին բանջարանոցներն ու կալատեղերը։

Թագավորի վրանը խփել էին Թոնդրակի լանջին, որտեղից հրնում էր գրեթե ամբողջ հովիտը՝ իր շենքերով, ծառաստաններով և միակ գետով, որ ոլորվում էր շենքերի մոտով, գետը թվում էր առասպելական մի օձ վիթխարի, որ արծաթյա մեջքը փայլեցնելով, սողում է առաջ, մի զոհ դտնելու։ Լուվի առաջին օրը Արշակն ինքը կիպ հագնված, առանց սովորական թիկնոցի, զորքին միացած, խրախուսում էր նրան. «Զինվեք, կոտորել տիրանենք ասիրատներին»... Այժմ սակայն, զորավարների խնդրանքով, մնում էր մարտից հեռու. երբեմն միայն, մարտին նայելու համար, կանգնում էր կամ վրանի առաջ, կամ՝ իր սև նժույգը նստած, առաջ էր գնում բավական տեղ, որ զինվորները տեսնեն իրեն և խիզախեն... Նայում էր և հաճախ նեղսրտում, որ իր վաշտերը չեն կարողանում հաղթել հակառակորդին։ Իսկ գիշերը բարկությունն ու զայրույթը չէին թողնում նրան քնելու։ Այդ պահերին հաճախ հիշում էր Փառանձեմին ու մտածում, թե ի՞նչ լուր կարող էր ուղարկել նրան։

Պատահում էր երբեմն կանչում էր Եզր դպրին, որ նամակ թելադրի Փառանձեմին, բայց ձեռքը թափ էր տալիս միշտ. «վաղը»... Եվ այդ վաղերը կրկնվում էին, քանի որ չկար տակավին ուրախարարիթ մի բան, որ հայտներ Թագուհուն... Այնինչ Արշակը կարծում էր մինչ այդ, թե ինքը մի

քանի օրում կրնկճի և գերի կառնի ապստամբ նախարարնե-
րին և կռիվները կվերջանան։ Բայց դրանք շարունակվում էին
դեռ և ոչ ոք չէր կարող ասել, թե ի՞նչ կլինի վաղը...

Ծանր հոգեկան վիճակի մեջ էին և զինվորները։ Ցերեկ-
ները կռվում էին, գիշերները օրվա հագուստով, զրահներով
մեկնվում գետնին հանգստանալու. բայց օրվա տպավորու-
թյունները երկար ժամանակ թույլ չէին տալիս ննջելու։ Վերև
աստղազարդ երկինքն էր, շուրջը մերկ լեռները, դեմը՝ հա-
կառակորդը... և յուրաքանչյուր զինվոր մտածում էր, թե ի՞նչ
կլինի արդյոք վաղը. ինքը ո՞ղջ կմնա արդյոք, թե կընկնի
վիրավոր կամ անշունչ, ինչպես շատերն էին ընկել այսօր,
երեկ, մյուս օրը... Իսկ բոլորը երազում էին, թե ե՞րբ պիտի
վերջանա այս անակնկալ, տարօրինակ կռիվը, ուր հայը
կռվում է հայի դեմ...

Մարտերը վարում էր Զարեհ Ամատունին՝ իր օգնական
Անգեղաց իշխանիկի հետ, որ ամիսներ առաջ, իշխանաժողո-
վից անմիջապես հետո փախել էր թագավորի մոտ և հայտ-
նել նրան նախարարների խորհուրդը։ Երկուսն էլ հագնում
էին զրահներ, որ ասես շինված էին ձկնաթեփերից, իսկ սա-
դավարտները միակտուր պողպատից էին։ Ամեն երեկո, դա-
դարից հետո, հարյուրապետները գալիս էին Զարեհի մոտ՝
հրահանգներ ստանալու, թե ի՞նչ պետք է անել վաղը։ Դրա-
նից հետո Զարեհը օգնականի հետ գնում էր թագավորի մոտ
վաղվա անելիքի ծրագրով։ Միասին միջոցներ ու հնարներ
էին խորհում վաղը գործադրելու, որ ընկճեն հակառակորդին։
Խորհում էին ռազմական ամեն կարգի խորամանկություն-
ներ, բայց Արշակը դարձյալ հրամայում էր միևնույնը.

— Ինչպես կամենաս, միայն սրատիր և գերիր չարա-
գործներին...

Եվ Զարեհ Ամատունին, որքան ներում էին իր երիտա-
սարդական փորձն ու խելքը, գնդի կռիվը վարում էր եռանդով, բայց հակառակորդը համառ էր. եթե երբեմն տեղի էր տալիս, մեկ-երկու էլ ինքն էր անցնում գրոհի՝ նետերի տարափ թափելով և ձիերը սրընթաց քշելով հասունացող արտերի միջով, ինչ շինականներին պատճառում էր անասելի վիշտ ու տխրություն։

— Անօրեն անաստվածներ,— մրմնջում էին նրանք։

— Կռիվ ունեն՝ կռվեն իրարու հետ, ի՞նչ կուզեն մեզնից։

— Բավական չէ տանում են հաց, խոտ, տրորում են և հասուկ արտեր։ Ցասո՞ւմ է աստվածային։

Գյուղում կային արագիլներ, որ բներ ունեին բարձր ծառերի ճղների արանքում. նետաձգության ժամանակ բնի մեջ մի ոտի կանգնած նայում էին կռվին և երբեմն կափ-կափում։ Նրանց այդ կափ-կափը թե շինականներին և թե կրովողներին թվում էին մերթ դժգոհություն, մերթ նախատինք, մանավանդ, երբ նրանք այդ կափ-կափով բնից հեռանում էին ձիավազ արշավի կամ նետաձգության ժամանակ։ Վերջերս մեկը դրանցից սպանվել էր Թիր գյուղում, և շինականները իրենց բարեկամ թռչնի այդ սպանությունը համարում էին չարագուշակ։

— Անե՜ծք է գալու և աղետ...

Դրանից հետո, երբ ամեն անգամ կռիվն սկսվում էր, այսինքն, երբ ճանապարհներին լսվում էին ձիերի դոփյուն, կռվողների աղաղակներ՝ շինականներին թվում էր, թե երկիրը շարժվում է, թվում էր Թոնդրակ վեր նորից սկսել է գործել... Այդ ձայներից գյուղի շներն սկսում էին հաչել, բարձրացնելով մի անասելի իրարանցում ու վրվրուկ։ Դա ավելի էր ազդում շինականների վրա, և նրանք չէին կարողանում հասկանալ, թե ի՞նչ պատուհաս է դա. երկնային ցասում չէ՞ արդյոք... Եթե կապույտ երկնքից կարկուտ տեղար՝ այնքան չէին զարմանա։— Հայը հայու դե՞մ... Պարսիկը հասկանալի է. բայց հայը հայու դե՞մ...

Շինականների սիրտը ճմլվում էր մանավանդ արտերի ոտնահարումը տեսնելով, և նրանք հաճախ հարցնում էին իրար.

— Ե՞րբ են հեռանալու, աստված... ե՞րբ...

Նույնը հարցնում էին երկու կողմի զինվորներին։ Զինվորները չգիտեին ի՞նչ պատասխանել. նրանք էլ ցավում էին տրորվող արտերի համար, սակայն ոչինչ անել չէին կարող։

— Անհայտ է... Սպասենք տեսնենք...

Եվ իրոք, տպավորությունն այնպես էր, թե սպասում են կարևոր մի բանի. բանակատեղից շարունակ դետեր էին գնում այս-այն կողմ՝ ձիով թե հետևակ. երկար, ուշիուշով նայում էին ու վերադառնում։ Երբեմն էլ այս կամ այն կողմից մեկ-

երկու զինվոր բարձրանում էին սարը և նույնպես դիտում հեռուները։ Ի՞նչ էին փնտրում՝ շինականները դժվարանում էին գուշակել։

Բայց հանելուկը շուտով պարզվեց։

Կողմերից յուրաքանչյուրը սպասում էր օգնության, և ո՞ր կողմը օգնություն էր ստանում՝ նեղում էր մյուսին։

Շինականների նման արքունի զինվորներն իրենք էլ տարակույսի մեջ էին, թե ինչո՞ւ է ձգձգվում կռիվը, ինչո՞ւ թագավորը միանգամից մեծ ուժեր չի բերում և խորտակում նախարարներին. չէ՞ որ նրանք մեծ բանակ չունեն, ինչպե՞ս են դիմանում... Այս մասին առանձնապես խոսում էին քաղաքի այն տղամարդ բնակիչները, որ միացել էին արքունական զորքին, և մանավանդ Թորգոմը։ Սա զարմանում էր, որ թագավորը հանդուրժում է այդ վիճակը. ինքը միշտ ամենազոր էր կարծել թագավորին, բայց ահա... ինչո՞ւ չի կարողանում հաղթել նախարարներին. ի՞նչն է խանգարում,— մտածում էր Թորգոմը տարակուսով։

Բայց այստեղ ընթերցողը կհարցնի, թե այդ Թորգոմն ինչպես հայտնվեց արքունի բանակում։

Ընթերցողը երևի կհիշի, որ երբ արքունական զորքը հասավ քաղաք՝ շատերը նկատեցին, որ ձորաճամփով հեռացող, գերիներ տանող զորքերին զուգահեռ սարի վերին լանջով գնում էր զինված մարդկանց մի մեծ խումբ, որը երբ տեսավ արքունի զորքին, իջավ իսկույն մի սաղավարտով մարդու առաջնորդությամբ։ Այդ սաղավարտով մարդը Թորգոմն էր։ Խումբը իջավ, միացավ արքունի զորքին և անմիջապես սկսեց կռվել թշնամու դեմ։ Թորգոմի հետ էին և շատ տիրապետներ, նաև իր ընկերներ Հովսեփն ու Վարդանը և սրա Հուսիկը, որ, ինչպես գիտեք, քաղաքի կռիվն սկսելու պահից հոր մոտ էր։ Այս Հուսիկը... որքա՜ն հոգս պատճառեց նա հորն ու նրա ընկերներին իր կամակորությամբ... Մոր հետ չգնաց, բայց երբ հայրը և ընկերները, զգալով մոտալուտ վտանգը, ուզեցին վերջապես ճամփել տուն, փողոցը փակվեց, այսինքն՝ նախարարական հեծվորները խուժեցին փողոց և հայրն այլևս չթողնց նրան, վստահելով, որ ձիու տակ կրնկնի կամ պարզապես նետահար կլինի մի տեղ... և Հուսիկը մնաց՝ թուրը ձեռքին... Միառժամ մնաց այդպես, հետո թուրը փաթաթեց մի լաթով, որ

ենկողները չխլեն հանկարծ։ Եվ այնուհետև էլ չկարողացավ գնալ տուն. ո՛ր կողմը նայում էր՝ կռիվ էր, աղմուկ, հայհոյանք... Ու հետևում էր միայն հորը. ուր գնում էին հայրն ու ընկերները՝ գնում էր և ինքը։

Այստեղ էլ ահա հոր մոտ էր։ Վարդանի համար նա մի ծանր, մշտական հոգս էր. ամեն անգամ կռվի գնալուց առաջ նրան հանձնարարում էր մեկին, որ նայի և չթողնի հեռանալու։ Բայց պետք է ասել, որ նրա մասին հոգում էին հոր չափ թե Հովսեփը և թե՛ մանավանդ Թորգոմը, որ հաց, ուտելիք էր բերում նրան և միշտ զգուշացնում, որ երբեք առաջ չգնա, այլ մնա վրանների մոտ և սպասի իրենց։

— Հապա թո՞ւրս,— հարցնում էր Հուսիկը մտահոգ։

Նա այդ ասում էր հորը. նրան թվում էր, որ եթե իր թուրը տանեն՝ ավելի շատ թշնամի կսպանեն և կհաղթեն։ Բայց հայրը միշտ մերժում էր. «Քո թուրն էստեղ պետք չի։ Պահիր դեռ, դրա ժամանակը գա»... Հուսիկը տխրում էր, որ թուրը պետք չի գալիս։ Հապա էլ ինչո՞ւ բերավ... Իսկ Թորգոմն ասում էր.

— Թուրդ պահիր փաթաթած։ Չբացես։ Եթե հարցնեն՝ ի՞նչ է, կասես՝ իմն է, Թորգոմինը։

Հուսիկը լսում էր և մնում նշված տեղում նստած, երբ հայրը, Թորգոմը և ընկերները գնում էին թշնամուն քշելու։

Սկզբում թե Թորգոմը և թե Հովսեփն ու Վարդանը ձի չունեին, կռվում էին հետիոտն, երբեմն սողեսող։ Բայց մի քանի օր հետո նրան և ընկերներին տվին վիրավոր և սպանված զինվորների ձիերը, և այնուհետև նրանց էլ հրաման էին տալիս և ուղարկում այս-այն կողմ, ինչպես իսկական զինվորի։

Այժմ Թորգոմն այն չէր, ինչ կռվից առաջ. նիհարել էր, մազակալել ու սևացել. շաբաթներով զրահ, սաղավարտ չէր հանում. քնում էր ինչպես պատահում էր. նա երբեք զինվոր չէր եղել, բայց վերջին տասը օրվա կռիվների մեջ ընտելացել էր նետաձգության և, ընկերների ասելով, զարկում էր անվրեպ։ Նա աղեղը լարում էր միշտ ատամները սեղմած և նետն արձակում միայն այն ժամ, երբ համոզվում էր, թե անպայման կզարկի։ Նա իր բարկությունն ու զայրույթը ար-

տահայտում էր նետ արձակելով, որի ժամանակ և հայհոյում էր, ցանկանալով զարկել գեթ մի նախարարի, մի որևէ նախարարի, որ, ինչպես ինքն էր ասում, «սիրտը հովանա», որովհետև, ինչպես ամենքը, ինքն ևս նրանց էր համարում աղետի պատճառ։ Փախուստից հետո ծանր աշխատանքով գլուխ էր բերել մի տուն և հազիվ պիտի ապրեին հանգիստ— այդ նախարարները տակնուվրա արին ամեն ինչ։ Եվ նա գրեթե ամեն ժամ հիշում էր քաղաքում սպանվածներին և ապա մորը, Մինային, սրա հորը, մտածելով, թե արդյոք ո՞ւր կլինեն նրանք այժմ—մնացի՞ն քաղաքում, փախա՞ն մի կողմի վրա, թե նախարարական զորքերը տարան գերի...

Թորգոմը հաճախ էր մտածում այդ մասին, որովհետև քաղաքից մեկ-մեկ եկողները բերում էին ամեն տեսակ լուրեր. ոմանք ասում էին, թե արքունի զինվորները արդեն, բնակիչների հետ հանգցրել են հրդեհները, ոմանք էլ թե՝ շատ ընտանիքներ հենց կռվի ընթացքում քաղաքից հեռացել են շեները, հեռանում են և հիմա։ Իսկ ոմանց, ասում էին, տարել են գերի։ Թորգոմը մի քանի անգամ հետաքրքրվեց յուրայիններով։ Եկողներից ոչ մեկը նրանց չէր տեսել, և Թորգոմը մտատանջության մեջ էր։ Պետք էր իմանալ, թե ո՞ւր են հարազատները, ի՞նչ են անում, ունե՞ն մի կտոր հաց։ Գուցեև իր նոր տունը նույնպես հրդեհել են, և նրանք մնացել են անօթևան...

Այս հարցերն այնպես էին տանջում Թորգոմին, որ մի անգամ հարցրեց Վարդանին.

— Մերոնք ինչպես կլինեն. չգնա՞նք տեսությունն...

Եվ Վարդանը պատասխանեց.

— Ինքս կուզեի, բայց վաղը իցե վերջանա...

Եվ Թորգոմը չգնաց, սպասելով, թե կռիվը կվերջանա այսօր-վաղը և բոլորը կվերադառնան միասին։

Սակայն Թորգոմը երկար չէր կարողանում մտածել այդ մասին. թվում էր՝ ինչ-որ մի բան բռնում էր կոկորդը և նա դրանից ազատվելու համար վերցնում էր նետ-աղեղը. վիշտը կարծես ցրվում էր նետաձգումով. թվում էր՝ միայն վրեժխնդրությունն է ուժ տալիս նրան և պահում։

Ընկերները թեև զինվոր չէին, բայց անում ու կատարում էին այն ամենը, ինչ անում էին արքունական վաշտերի զին-

վորները. նրանց հետ գնում էին կովի, նրանց հետ մասնակցում էին կերակուր պատրաստելուն, նրանց հետ պահակություն էին անում, ջուր էին կրում կամ ձիերը տանում ջրելու։

Եվ ահա Թորգոմը նշանակված էր գիշերապահ։ Ինչպես մյուս պահակները, այնպես էլ ինքը պետք է հսկեր քնած զինվորների շարքերը և միաժամանակ նայեր թշնամու կողմը և այնտեղ որևէ շարժում տեսնելիս՝ իմացներ իրենց գլխավորին։

Մեղմ գիշեր էր. երկինքը ծածկված էր մթին ամպերով։ Մի հիսուն-վաթսուն քայլի վրա չէր երևում ոչինչ. գալիս էր միայն գետի զով ձայնը և շների զժգոհ հաչը։ Երբեմն էլ հասած արտերն էին սվսվում ու շրշում, որ սպիտակին էին տալիս մի որոշ տարածություն, ապա գնում-ձուլվում մութին։ Երբեմն, երբ հովից չէին օրորվում, թվում էին մեծ, փռված խսիրներ։ Ցերեկները հաճախ լորերը թռչում էին դրանց միջից—ֆը՛ռռռ—ու գնում-թաքնվում, կամ լսվում էին մորեխների ձայն, իսկ գիշերը, ինչպես հիմա, ծղրիդների։ Բայց այդ բոլորի վրա կարծես իշխում էր հեռու Ձկնդետի խուլ, միապաղաղ շառաչը։

Ինչպես միշտ մենակության պահերին՝ այս գիշեր էլ հազար ու մի մտքեր էին անցնում Թորգոմի գլխով. հիշելով մորը, Մինային և նրա հորը՝ ցավում էր, որ քաղաքից հեռանալիս մի պահ, գեթ մի վայրկյան չգնաց նրանց տեսնելու, խորհուրդներ տալու. թե ի՞նչ անեն, ուր գնան կամ ուր պահվեն։ Բայց այդ մտքերի հետ միաժամանակ իսկույն էլ հիշում էր, որ տուն գնալ բնավ չէր կարող. հարձակումը կատարվեց այնպես անսպաս, որ ժամանակ չեղավ՝ մեկն իր ցանկությունը կատարի...

Մտածում էր Թորգոմը և գնում գալիս մի գծով, որի աջ կողմը արտերն էին, մյուս կողմը՝ քնած զինվորները մի տասը-քսան քայլ հեռու։ Քայլում էր Թորգոմը դա՛դաղ, հասնում էր մի կետի և վերադառնում, բայց շարունակ նայում շուրջը։ Բե՞ր պահն էր գիշերվա՝ նա չէր կարող իմանալ, բայց մի դարձի հանկարծ արտերի սպիտակության մեջ նկատեց մի ինչ-որ սև բան (կամ, ինչպես նրա մայրն էր ասում, մի սևիք), որ գյուղի կողմից, արտերի արանքով շարժվում էր իր կողմը։ Ի՞նչ էր կամ ո՞վ էր՝ դժվար էր որոշել։

Թորգոմը կանգ առավ և տեսողությունը լարեց։

Սևիքը՝ ստվերը եկավ, եկավ և, մեկեն կռանալով, անհայտացավ արտի մեջ։

«Լրտե՞ս է, թե անասուն»,— մտածեց Թորգոմը և տատանվեց՝ հայտնի՞ հարյուրապետին, թե սպասի ավելի լավ ստուգելու։

Ու սպասեց նայվածքը միշտ այն տեղը, ուր անհայտացավ ստվերը։ Միառժամ ոչինչ չէր երևում և նա անհամբեր էր. բայց քանի մի վայրկյան հետո կրկին նկատեց, որ սևիքը շարժվում է արտում, ոչ թե առաջվա պես կանգնած, այլ կռանում է, բարձրանում...

Տարօրինակ էր։ Թորգոմը մի քանի զգույշ քայլ արավ այն կողմը և նորից կանգ առավ, աչքը չհեռացնելով այն տեղից։ Զարմանալի՜ բան. ստվերը, այժմ արդեն կարճացած, կռանում-բարձրանում էր դարձյալ։ Այս անգամ Թորգոմը նրա շարժումներից հասկացավ, որ դա մարդ է... բայց թե ի՞նչ էր անում՝ պարզել դժվար էր. ուստի և հետաքրքրությունից մղվից առաջ։ Բայց մեծ զգուշությամբ։ Թավական մոտենալով՝ լսեց մի ծանոթ ձայն և հասկացավ, մարդը մանգաղով հընձում էր արտը...

Այս տեսնելով՝ Թորգոմը թեև փոքր-ինչ հանգստացավ (ուրեմն թշնամու հետախույզ չէր), բայց և այնպես առաջ գնաց, գնաց այնքան, որ համարյա մոտեցավ։

Մարդը վախից կանգնեց, բայց ձայն չհանեց։

— Ո՞վ ես, ի՞նչ ես անում,— հարցրեց Թորգոմը, չգիտես ինչու, շշուկով, այնպես, ինչպես խոսում են քնածի մոտ։

Եվ որովհետև մարդը լռեց, չգիտես անակնկալի եկած, թե չուզեց պատասխանել, ուստի Թորգոմը հարցրեց.

— Գողանո՞ւմ ես։

— Ինչո՞ւ գողանամ,— խոսեց վերջապես մարդը բեկված ձայնով։— Արտս է, եղբայր։ Հնձում եմ, որ չտրորեն երիվարները։

Թորգոմի լարվածությունն անցավ անմիջապես։ Ավելին. նա զգացվեց, զգացվեց այն աստիճան, որ անհրաժեշտ համարեց մի բան ասել շինականին.

— Հնձի՛ր, հնձիր... բայց կամաց...

Թե ինչո՞ւ «կամաց», ինքն էլ չբացատրեց, սակայն նայե-

լով, թե ինչպես է նա մանգաղը արագ, բայց զգուշությամբ տանում-բերում՝ նորից հարցրեց.

— Շատվո՞ր ես։

— Տասվերկու շունչ։

Թորգոմը լռեց. նայեց շուրջը, ապա ինքն էլ կռացավ ու սկսեց ցորենը արմատահան անել և դարսել իրար վրա։ Նա օգնում էր շինականին և հետն էլ հարցնում, թե որքա՞ն ցանք ունի, որքա՞ն անասուն։ Շինականի կարճ պատասխաններից պարզվեց, որ դա նրա միակ արտն է և, որ մի օր առաջ նրա երինջը մորթել էին արքունի զինվորները։ Պատասխանելով Թորգոմի հարցումներին՝ շինականը հետաքրքրվեց իր հերթին.

— Ե՞րբ պիտի վերջանա այս կռիվը, զինվոր եղբայր։

— Երբ որ նախարարների զորքերը ջարդվեն,— պատասխանեց Թորգոմը։

— Բայց կջարդվե՞ն որ...

— Կջարդվեն...

— Բայց չէ՞ որ նրանք էլ հայ են։

— Հայ են, բայց վատ, անիրավ։

Դա ակներև անհասկանալի թվաց շինականին, ուստի և նա լռեց ու շարունակեց քաղել՝ մանգաղը համաչափ ետ ու առաջ տանելով։

Մի առժամ նրան օգնելով՝ Թորգոմը վերադարձավ իր տեղը. և մինչև լուսաբաց նա շրջում էր ու նայում շինականի կողմը. կարծես հսկում էր, որ մեկը չխանգարի նրան։

Պետք է ասել, որ թե՛ Թորգոմը, և թե՛ զինվորներից շատերը այդ օրերին իրդեհում էին շինականներին, որ ընկել էին երկու կռվող բանակների մեջ և վնասվում էին շարունակ։ Մի քանի օր առաջ նախարարական զորքերին հետապնդելիս, Թորգոմը գյուղի եզրին տեսավ մի պառավ գեղջկուհի, որ ծնկներին զարկելով լաց էր լինում կռվի դիակի մոտ և հետն էլ անիծում սպանողին. չգիտես դիտմամբ, թե պատահաբար արձակած նետը գետին է տապալել կռվին։

— Ինչո՞ւ զինվորներին կանիծես, մամ,— ասաց Թորգոմը,— նախարար իշխաններին անիծի, որ կռիվ եկան քաղաքի վրա։

Պառավը հառաչեց։

— Օ՜, իշխա՜ն, թագավո՜ր. ամենքը մահ ու պատուհաս մեզի։ Աստծու նզովքը ամենուն գլխին...

Կոգովիտի շինականներն արդեն գիտեին, թե ինչպես նախարարական զորքերը կռիվ էին գնացել Արշակավանի վրա, ինչպես են ավերել այն և թե ինչպես հիմա թագավորը կամենում է վրեժխնդիր լինել։ Բայց քանի օր էր ո՜չ այս կողմն էր հաղթում, ո՜չ այն։ Նրանք մտածում էին, որ լավ կլիներ շուտով մի կողմը հաղթեր—այն ժամանակ պատերազմը կվերջանար և իրենք կազատվեին դրա նեղություններից, և նրանց համար միևնույն էր, թե ով կհաղթի, կարևորն այն էր, որ կռիվը վերջանար և իրենք հավաքեին բերքը, ազատվեին կռվող կողմերին հաց, պարեն տալուց, նաև շարունակական վախից։ Նրանց համար ծանր էր մանավանդ այն, որ կռվողները—քանի որ ձիերն ազատ արածել չէին կարող—պահանջում էին խոտ, վարսակ ու գարի։

— Ո՞ւր է, որտեղի՞ց... Գարի, վարսակ լինի՝ կուտենք մենք,— ասում էին շինականները։

Բայց ո՞վ էր լսում. մտնում էին տները և հաց, գարի ու վարսակ փնտրում թե մառաններում, թե բնակարաններում և թե՛ անգամ գոմերում։ Եվ գտածը տանում էին, չնայելով տիրոջ աղերսանքին։ Իսկ եթե չէին գտնում՝ պահանջում էին հայտնել, թե որտե՞ղ են հորել։

Ու շինականներն աշխատում էին թաքնվել, որպեսզի կռվողները ոչ կեր պահանջեն և ոչ հանձնարարություն անեն։

— Տե՛ր, դու փրկե՛ս, ազատե՛ս...

* * *

Կռվի վեցերորդ թե յոթերորդ օրը թագավորի վրանն եկավ Դարոնք ամրոցի տեր Բագրատունի Սահակ իշխանը՝ մի երկու թիկնապահով և ներկայացավ թագավորին։

— Ես, արքա, եկել եմ աղերսանոք խնդրելու, որ ողորմածաբար դադարեցնես սույն կռիվը եղբայրասպան և խաղաղություն շնորհես երկրիս։

Թագավորն անխոս նայեց Դարոնքի տիրոջը, որ բոլոր Բագրատունիների նման մեծամարմին էր ու բարետես, և հարցրեց.

— Եվ ինչո՞ւ այդ չես խնդրում Կամսարական չքին և մյուսներին։

— Այստեղ գալուց առաջ, արքա, խնդրել եմ նոցա։ Եվ նոքա պատասխանեցին. «Եթե թագավորը հոժարի՝ մենք ևս վար կդնենք մեր զենքերը»։

— Այդպե՞ս...— Արշակի սպիտակուցները փայլատակեցին։

Բագրատունի իշխանը ոտքի վրա, նստելու հրավերի և պատասխանի սպասելով, միաժամանակ ակնապիշ նայում էր թագավորի դեմքի վրա կատարվող փոփոխություններին։

— Իսկ դու որքա՞ն զորք ունես, իշխան,— ասաց թագավորը մի փոքր լռելուց հետո։

Հարցն անսպասելի էր։

— Իմ զո՞րքը։ Իմ զորքս կարի փոքրաքանակ է, արքա,— պատասխանեց Բագրատունի իշխանը տարակուսով։

— Որքան և լինի, իշխան։ Ժողովիր զորությունդ ողջ և եկ հարվածիր ստահակներին, ու կլինի այն, ինչ ցանկանում ես՝ խաղաղություն։

Բագրատունին նորից անակնկալի եկավ։

— Ե՞ս ևս մասնակցեմ, արքա, եղբայրասպան կռվին,— կարմրեց նա։

— Ապստամբները եղբայրներ չեն, իշխա՛ն։ Նրանք խառնակիչներ են, երկրի հանգիստը խռովողներ, ուստի և դու, մասնակցելով կօգնես ինձ, երկրին և խաղաղության։ Իսկ եթե չհոժարիս՝ այնժամ քեզ ևս կհամարեմ ապստամբ և նոցա գործակից։

Այս անգամ իշխանը գունատվեց։

— Բագրատունիները միշտ հավատարիմ են եղել գահին, արքա,— ծանր արտաբերեց նա։

— Ահա և առիթ հավատարմությունդ ապացուցելու։ Ես կսպասեմ, իշխան,— և թագավորը զրույցը վերջացրած համարելով դարձավ սենեկապահին։— Ուղեկցիր իշխանին։

Բագրատունին վրանից դուրս եկավ ոգեթնած ու շփոթված. նրա խոշոր մարմինը փոքրացել էր ասես, իսկ դեմքին կարդացվում էին տխուր մտքեր և հիասթափություն.— Ի՞նչ էր սպասում և ինչ ստացվեց։ Այժմ ինչպե՞ս կատարեր թագավորի հրամանը...

Իսկ Արշակը վրանում մտածում էր, թե ամրոցատեր իշխանը կկատարի՞ արդյոք իր կամքը՝ կուղարկի՞ արդյոք գեթ մի հարյուրյակ... Արշակն ինքը ցանկանում էր շուտ ավարտել ակամա պատերազմը. բայց քանի որ հակառակորդը տեղի չէր տալիս, պետք էր շարունակել և ընկճել նրան, որպեսզի արագորեն կառուցի իր բերդը և նորոգի քաղաքը։ Ցավում էր, որ չկա փորձառու վարազ իշխանը, որպեսզի պատվով գլուխ բերեր իր ծրագիրը։ Սակայն կռիվները գնալով ոչ թե մեղմանում, այլ դառնում էին կատաղի. Արշակն իր զորքի մարդկային կորուստները լրացնում էր նոր ապստամբած վաշտերով, իսկ ապստամբ նախարարների թիվը մնում էր կարծես միշտ միևնույնը։ Որտեղի՞ց և ինչպե՞ս էին լրացնում իրենց կորուստները՝ Արշակը դժվարանում էր հասկանալ։ Նա գիտեր, որ նախարարների զինյալ ուժերի թիվը մեծ չէր, բայց այս տասը օրվա մեջ ասես չէր պակասում բնավ, և նա ենթադրում էր, որ նրանք ևս օգնություն են ստանում, բայց թե որտեղի՞ց՝ անհայտ էր։

Սակայն նույն օրը երեկոյան այդ հանելուկը պարզեց մի երիտասարդ, որին գերել էին այսօր նախարարական զորքերի հետ ընդհարվելիս։ Այդ զորքերին հետապնդելիս Թորգոմը մի գյուղում դրան բռնեց այն ժամանակ, երբ նրա ոտքը մնացել էր ձիու տակ։ Թորգոմը հանել էր նրան և բերել հրամանատար Զարեհ Ամատունու մոտ։ Թագավորի պահանջով նրան հարցաքննեցին իր ներկայությամբ։ Դա մի թխադեմ, միջահասակ, հազիվ 20—22 տարեկան երիտասարդ էր, որ այժմ կաղում էր ոտքի ցավից։ Մինչև թագավորի մոտ բերելը համարձակ նայում էր ամեն կողմ, բայց երբ մտավ վրան ու տեսավ թագավորին, այլևս ամաչում էր գլուխը բարձրացնել. պատասխանում էր օտարոտի վախով և շարունակ աչքի պոչով շուրջը նայելով։

Զարեհ Ամատունու այն հարցին, թե ո՞ր նախարարությունից է, նա, առանց գլուխը բարձրացնելու, պատասխանեց.

— Վահևունի։

— Քանի՞ օր է զորքի մեջ ես։

— Քսան։

— Մինչ այդ ո՞ւր էիր։

— Կաշխատեի իշխանի կալվածում. հունձ, կալ, այգի...

— Եվ ինչո՞ւ եկար բանակ։

— Իշխանս հրամայեց, որ նետ-աղեղ սովրենք ու մեր մարդոց ազատենք քաղաքից։

Այստեղ Արշակը ձեռը բարձրացրեց, և Ամատունին ընդհատեց իր մանր հարցուփորձը։

— Տղաս, կարո՞ղ ես ասել, թե որքա՞ն է ձեր զորաց թիվը,— հարցրեց Արշակը խոժոռած։

Երիտասարդը, թեև գլխիկոր, զգաց, որ խոսում է թագավորը և շփոթվեց։ Նորից աչքի պոչերով նայեց շուրջը և ասաց.

— Ջրուցում են՝ երկու հազարից ավելի, արքա։

— Սակայն ինչպե՞ս։ Այսքան կորուստներից հետո մնում է նույնքա՞ն։

— Նույնքան չէ, արքա. այժմ շատ է ավելի։

— Դու ինձ ճշմարիտը խոսիր,— մատով սպառնաց թագավորը։

Գերի երիտասարդն իրեն չկորցրեց.

— Սուտ խոսել քեզ, արքա, ես չեմ համարձակվի։

— Ինչպե՞ս. ինչպե՞ս կարող է նոցա զորքը այժմ լինել ավելի, քան առաջ։

— Քանզի գալիս է օգնություն։

— Օգնությո՞ւն... և որտեղի՞ց։

— Տարոնից և Վասպուրականից, արքա։

Լռություն։

— Իսկ իշխան Մերուժանն այստե՞ղ է, ձեր վրանների տակ։

— Ո՛չ, արքա։

— Կարո՞ղ ես ասել ո՛ւր է։

— Ո՛չ, արքա։ Նա օգնություն է ուղարկում միայն, բայց իրեն չեմ տեսած։ Ջրուցում են, որ չի եկած։

— Դու ճշմարիտն ասա,— նորից սպառնաց Արշակը ցուցամատով։— Եթե թաքցնես՝ կպատժվես չարաչար։

Գերին չգիտեր։ Բայց Արշակ թագավորի կասկածները հաստատվեցին։ Ուրեմն Մերուժան Արծրունին և Վահան Մամիկոնյանը օգնում են ապստամբներին։ Չէ՞ որ նրանք նույնպես դժգոհ են իրենից... Լսելով գերու խոստովանությունը՝ Արշակն զգաց, որ սկսված կռիվը շուտ չի վերջանա, քանի որ դրան սատար են լինում ահա Վասպուրականի հարուստ տե-

ը և Տարոնի իշխանը։ Իսկ ինքը ցանկանում էր պատերազմը ավարտել արագ, պատժել անհնազանդներին և սկսել քաղաքի նորոգումը, դրա հետ և նրա բերդապարսպի կառուցումը։ Ի՞նչ պետք է անել այժմ նախարարների ապստամբությանը վերջ տալու համար. սահմաններից կանչե՞լ իր զինական ուժերը, թե...

Եվ նույն օրը, առանց հետաձգելու, խորհրդակցեց Զարեհ Ամատունու հետ։

Ու որոշեցին բերել նոր զորավաշտեր և ավարտել իզուր տևող մարտերը։

— Հույժ ցանկալի է, արքա,— ուրախացավ Ամատունին։

Հազիվ նա և սենեկապետ Եզնիկը դուրս էին եկել վրանից, թագավորը նրանց հետևից նայելով նկատեց, որ մի խումբ շինականներ իսկույն շրջապատեցին Ամատունուն և Եզնիկին և սկսեցին խոսել ձեռք ու ոտք շարժելով։

«Ովքե՞ր են և ի՞նչ են ցանկանում»,— մտածեց Արշակը այդ տարօրինակ տեսարանից զարմացած։ Եվ քիչ հետո, երբ Եզնիկը ներս մտավ, նա հետաքրքրվեց.

— Ովքե՞ր են այն մարդիկ։

— Շինականներ, արքա, Թիր և Արանց գյուղերից եկած։ Կամենում են՝ լսես իրենց խնդրանքը։

— Իսկ ի՞նչ է նոցա խնդրանքը։

Սենեկապետը պատմեց քմծիծաղ։

Արշակը խոժոռեց։

— Կոիվը տեղափոխե՞լ... Թողնել իրենց դաշտե՞րը,— կրկնեց թագավորը պնչերով փնչացնելով, որ նշան էր պարզ բարկության։— Հայտնիր նոցա, որ այս դաշտերն իրենցը չեն, այլ արքայինը նախ և առաջ... Անմիտնե՞ր։ Ես տակավին չեմ ընկճել ստահակներին... ես...

Եվ նա, խոսքը ընդհատած, հրամայեց.

— Թող բնավ չգան այդ խնդրանքով... Հեռանամ՝ սինլբորներին չպատժա՞ծ։

Սենեկապետը խոնարհում արավ և դուրս գնաց։

Եվ փոքր անց Արշակը վրանից նկատեց, թե ինչպես շինականները վերադառնում էին տրտում քայլերով։

Արշակը դառը քմծիծաղով տարուբերեց գլուխը։

— Խնդրում են՝ դադարեցնեմ պատերազմը և հեռանամ

իրենց դաշտերից... Նոքա բերում են նորանոր ուժեր, իսկ ես՝ դադարեցնե՞մ...

Արշակը նախարարներին ընկճելը համարում էր գահի հեղինակության և արժանապատվության խնդիր, և օր ու գիշեր հնարներ էր մտածում շուտով հաղթական լինելու։ Ու ներուստ որոշել էր անգամ՝ չվերադառնալ մայրաքաղաք, մինչև չխորտակի ապստամբներին։ Նա ցավում էր միայն, որ Կոգովիտի լեռնաշղթան թույլ չէր տալիս անցնել հակառակորդի թիկունքը կամ որևէ թևը, ինչ որ, թվում էր նրան, հնարավորություն կտար իրեն դյուրությամբ ընկճելու թշնամուն, կտրելով միաժամանակ նրա ստանալիք օգնության և պարենի ճանապարհները։ Այսուամենայնիվ՝ պետք էր շտապել և խորտակիչ հարվածներ հասցնել. ուստի և նույն օրը երեկոյան նա ասաց Զարեհ Ամատունուն.

— Ես ցանկանում եմ, տեր Ամատունի, որպեսզի վաշտերն ստանալուն պես խորտակիչ մի հարված հասցնես սինլքորներին։

— Պիտի ջանամ, արքա,— թեթևակի խոնարհում արավ սպարապետի օգնականը։— Դա նաև իմ փափագս է, եթե նրի մեր զորությունը։

— Մաղթում եմ կամք և կորով։

Մյուս օրը, լույսը հազիվ բացված, արքունական հեծելազորը՝ նոր եկած վաշտերով, նետ-աղեղով ու նիզակներով զինված, սուրաց դեպի հակառակորդը, որ բանակել էր Թիր և Արանց գյուղերի արանքում։

Թշնամին, ինչպես երևաց, անպատրաստ չէր. նկատելով արքունական այրուձին՝ նրանք իսկույն ձիեր հեծան և սկսեցին նետերով դիմավորել գրոհի եկողներին...

Արքունական այրուձին գնում էր թեև խմբված, բայց սրընթաց. տեսնելով սակայն դեմից եկող նետերի տարափը՝ դանդաղեցրեց ընթացքը, ցրիվ եկավ և նույնպես պատրաստվեց նետաձգության։ Հակառակորդը կանգնած էր երկու գյուղի միջև տարածվող այգիների մոտ. ուզած ժամին կարող էր թաքնվել և նետեր արձակել ծառերի հետևից։ Այդ իսկ պատճառով պետք էր նրան գրավել բաց-ազատ վայր և հարվածել... Ուստի և Զարեհ Ամատունին հրամայեց հարյուրապետ-

ներին՝ գնալ ևս մի փոքր առաջ և ապա նահանջ կեղծել դեպի գետը, ուր կար մի այդպիսի արձակ տարածություն։

Գունդն այդպես էլ արավ. առաջ գնաց նետերը պատրաստ, ոմանք նույնիսկ նետեր արձակելով։ Տեսնելով սակայն թշնամին իրեն դիմադրում էր տարերային նետաձգությամբ՝ խուճապած թեքվեց դեպի գետափը։

Խորամանկությունը հաջողվեց. նախարարական հեծյալները սլացան առաջ։ Եվ երբ նրանք բավական առաջ էին եկել ծառաստանի եզրից՝ Ջարեհ Ամատունին հրամայեց՝ կանգ առնել և հարվածել հակառակորդին։

Ու հասած արտերի եզերքին կանգնած արքունի այրուձին սկսեց գործադրել իր հրամանատարի կարգադրությունը՝ անընդմեջ նետեր թողնել դեպի նախարարական հեծյալները։

Սրանք պատասխանեցին նույն կերպ...

Եվ նորից սկսեցին ետ-առաջ գնալ և տրորել արտերը։

Եվ դա կրկնվեց մի քանի անգամ։

Ու մի պահ էլ, երբ կողմերը ձիեր հեծած նետեր էին աղեղակում իրար դեմ, Թորգոմը նկատեց մի զարմանալի պատկեր— մի մեծ խումբ շինականներ, որոնց մեջ երևում էին մարդ, կին, անգամ փոքրահասակ տղաներ՝ գերանդիներ, մանգաղներ ու փոցխեր առած դուրս եկան գյուղից մի տարօրինակ հանդարտ ու վճռական թափորով...

Այդ զարմացրեց ոչ միայն Թորգոմին, այլ գրեթե բոլորին, ովքեր տեսան այդ թափորը։

«Ո՞ւր են գնում»,— կարծես հարցնում էր յուրաքանչյուրը.— «Կովելո՞ւ... և արդյոք ո՞ւմ կողմը»...

Բայց, ինչպես երևաց, շինականները որևէ մեկին օգնելու ցանկություն չունեին. չէր երևում, որ նրանք գնում են այս կամ այն կողմը։ Նրանք գալիս էին դեպի արտերը...

Եկան նույն ընթացքով, նույն հաստատուն ու վճռական քայլերով, և երբ արդեն մոտեցել էին արտերին՝ նրանք կանգ առան ու բաժանվեցին անհավասար խմբերի։ Բաժանվեցին ու բոլորը մեկեն սկսեցին հնձել՝ գերանդավորները կանգնած, մանգաղավորները ծունկերը ծալած...

Տղամարդիկ հնձում էին, իսկ կանայք, փոքր տղաները կա՛մ փոցխում էին, կա՛մ հնձածը կեմով կապում՝ խուրձեր անում։

Կռվող կողմերը մի պահ, թերևս զարմանքից, դադարեցրին նետաձգությունը։ Բայց փոքր անց մի քանի տեղ վերսկսվեց այն նոր մոլուցքով։

Շինականները ուշք չդարձրին դրան. նրանք շարունակեցին իրենց գործը. և չնայած նետերը տհաճ սուլլերով սլանում էին նրանց գլխավերևից՝ դաշտի մի կողմից մյուսը, բայց նրանք հնձում էին, հնձում և խուրձեր կապում...

Կռվողները ետ-առաջ էին գնում, աղաղակում, հայհոյում միմյանց՝ նետեր արձակելով, բայց շինականները հնձում էին, հնձում անդադար...

Թվում էր՝ արհամարհում են թե՛ կռվողներին և թե՛ նրանց նետերը։

Փոքր անց շինականների այդ համարձակ խմբին հետևեցին և ուրիշ նոր խմբեր, և դաշտը լցվեց հնձվորներով։ Աշնանացանը հասել-թափվում էր. պետք էր հնձել...

Այժմ, ի տես այս պատկերի, կռվողները կանգ առան։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Պատերազմներ շատ էին եղել Հայոց Աշխարհում, բայց ոչ մեկը նման չէր այս պատերազմին, ուր նախարարները սուր էին բարձրացրել թագավորի դեմ, թագավորը՝ նախարարների։

Պատերա՜զմ... Ասում են՝ ամենից արագ տարածվում է արյան հոտը։ Եվ դա ճշմարիտ է։ Անգամ եզները, երբ մի տեղից անցնելիս տեսնում են իրենց նմանի արյունը, վախվորած հավաքվում են իրար գլխի ու հոտոտում այն. հոտոտում են ու փշաքաղվում հետզհետե. աչքները կլորանում են և հայացքները լարվում այնպես՝ թվում է ահա խելագարվեն պիտի և մոլեգնեն... Բայց նրանք միայն զոռում են զարհուրած և գլուխներն իջեցրած ետ-ետ գնում ու փախչում... այնպես է արյան տեսքը, գուցեև հոտը ցնցում նրանց։

Այո՜, ոչ մի բան այնպես չի տարածվում, ինչպես մարդասպանության լուրը։ Առավել ևս հավաքական մարդասպանության՝ պատերազմի լուրը։

Այդպես և Կոգովիտում ծավալվող կռիվների լուրը մեկ-

երկու օրվա մեջ տարածվեց երկրում։ Ամենուր խոսում էին, թե նախարարներն արդեն հրդեհել են Արշակավանը և Արշակ թագավորն ինքը, զորքի գլուխ անցած, կռվում էր ապստամբների դեմ։ Եվ լուրը յուրաքանչյուր վայր հասնում էր յուրատեսակ գունավորումով. մի տեղ խոսում էին, թե քաղաքի ավերումից հետո թագավորը հասել և կոտորել է բոլոր ապստամբներին, մի այլ տեղ պատմում էին, որպես ստույգ լուր, թե նախարարները ունեն մեծ զորք, ուստի և «սաստիկոս» նեղում են արքունի բանակին, և թե Արշակ թագավորն ինքը արդեն գերի է ընկել ապստամբների ձեռքը։

Այսպիսի լուրեր էին շրջում թե՛ գավառներում, թե՛ մայրաքաղաքում։ Գավառներում շատ նախարարներ ուրախ էին, որ կործանվել է «գողերի, փախստականների որջը», իսկ մայրաքաղաքում ցավում էին, որ ավերվել է նոր քաղաքը։

Այդ լուրերը հասել էին և պալատ։ Հայր-Մարդպետը շրջում էր բոլոր միջանցքներում և ականջ դնում բոլոր դռների մոտ... Նա գոհ էր, որ նախարարները հարձակվել են Ավանի վրա. թո՛ղ խրատեն Արշակին, որպեսզի հարգի նախարարների իրավունքը։ Բայց Ավան մեկնելիս Արշակին խորհուրդ տվեց՝ չխնայել մեկին... Այնուհետև չգիտեր ի՞նչ է կատարվում. լուրեր չուներ, ուստի շարունակ ուզում էր մի բան իմանալ։ Կասկածելով, որ լուրեր կան և իրեն չեն հայտնում, նա ամբողջ օրը կանգնում էր բոլոր դռների առաջ և ամենքին, անգամ ծառաներին ու նաժիշտներին հարցնում. «Ի՞նչ նոր»...

Այս լուրերը հասել էին և Փառանձեմ թագուհուն. և նա թեև չէր հավատում այդ ամենին, բայց զարմանում էր, որ յոթ-ութ օր էր ահա թագավորը չէր ուղարկում գեթ մի սուրհանդակ։ Եթե իրոք սուտ են այդ ամենը՝ ինչո՞ւ է թագավորը լռում. չէ՞ նա միշտ ուշադիր է դեպ ինքը, որևէ վայր մեկնելիս՝ լուրեր է հղում կանոնավորապես, թե ի՛նչ արեց, կամ ի՛նչ է մտադիր։ Այժմ սակայն ոչ մի լուր, և Փառանձեմը տագնապի մեջ էր. մերթ որոշում էր սուրհանդակ ուղարկել՝ պարզելու, թե ի՞նչ է կատարվում, բայց և միշտ մտածում էր, թե վաղը հավանաբար կգա թագավորի լրաբերը... և այդպես ամեն օր։ Սակայն կռիվը, որ սկզբում թվում էր նրան մեկ-երկու օրվա խնդիր, երկարում էր և քանի որ ինքը լուր չուներ, Փառանձեմն ընկնում էր կասկածների մեջ այն աստի-

ճան, որ ջանում էր նաժիշտների և մյուս սպասավորների դեմքից կռահել մի բան. գուցեև կա վատ մի լուր՝ թաքցնում են իրենից... Սակայն նա իր տագնապը, իր մտքերը պահում էր իր մեջ և միայն օրը երկու անգամ հարցնում էր Գնունի հազարապետին.

— Արքայից ի՞նչ լուր, իշխան։

— Տակավին ոչ մի, թագուհի։

— Ծանր կացության մեջ չէ՞ արդյոք։

— Հազիվ, թագուհի։ Երկրորդ գունդը գնաց օգնության։

Բայց թագուհու տարակույսներն ու կասկածները դրանով չէին փարատվում։ Եվ ահա, երբ տագնապները սաստկացան, նա մի առավոտ կանչեց ծերունի հազարապետին.

— Հայրս հեռու է, իշխան, դու եղիր ինձ հայր և խորհրդատու բարեկամ. լավագույն չէ՞ արդյոք, որ արքան վերջ տա այս կռվին։ Ճշմարիտ է, նա զայրացած է նախարարաց դեմ, բայց թագավորի։ Գիտեմ, որ նա անտարակույս ի վիճակի է ընկճելու նոցա խռովությունը, սակայն մեր երկպառակ վիճակից կփութան օգտվել մեր աշխարհի թշնամիները։ Կարելի՞ է միթե թույլ տալ, իշխան, որ շարունակվի այս ներքին արյունհեղությունը... Ես կուզեի թագավորը հաշտվեր, որպեսզի կարողանար կառուցել իր բերդը։

— Այո, թագուհի։ Այս պատերազմը կարող է միայն ուրախացնել մեր թշնամիներին, և որքան շուտ ավարտենք՝ այնքան լավ։ Մեր աշխարհը, որ ամուր չէ հզոր հարևանների հանդեպ, կտկարանա ավելի և... այն, ինչ արքայի ցանկությունն է՝ զորացնել հայրենին, կտուժի առավել. կկորցնենք օտարին դիմագրավելու ամեն ուժ ու կորով։

Փառանձեմը հիշում էր—Վասակ սպարապետը, որ այժմ հանգստանում էր իր Երախանի կալվածում, նույն կարծիքի էր մի տարի առաջ, երբ նախարարներն սպառնում էին իրենց նամակում ապստամբել, իսկ թագավորը մտածում էր պատժել նրանց։ Ինքը Փառանձեմը համամիտ չէր թագավորին. վախենում էր դրանից ծագեն անախորժ բարդություններ. բայց երբ լուր եկավ, թե նախարարները հարձակվել են Արշակավանի վրա, նա ևս ցանկացավ, որ Արշակը պատժի նրանց, և սաստկապես։ Փառանձեմը մտածում էր, որ պետության դեմ, թագավորի դեմ և նրա քաղաքի դեմ գործած ոճիրը

չէր կարելի թողնել անպատիժ, և եթե թագավորը տեղի տար, կվատթարեր երկիրի համբավ։ Դա ոչ միայն գահի, այլև անվան, պատվի և հեղինակության հարց էր։ Այժմ սակայն, երբ պատժելու գործը վերջ էր տրվել պատերազմի, և այդ պատերազմը կարող էր շարունակվել՝ դա Փառանձեմին թվում էր վտանգավոր.— հանկարծ թագավորը պարտվի՞... Շապուհը կօգտվի դրանից և կխուժի երկիր... ուստի գերադասելի չէ՞ հաշտվել։

Այս մտքերն էին, որ Փառանձեմին հարկադրեցին կանչել հազարապետին և հայտնել նրան իր երկյուղը։

— Այն ժամանակ, իշխան, թագավորն իրավացի էր. եթե չգնար՝ կհամարեին թույլ ու վախկոտ. նույնը կլիներ, եթե առաջարկեր հաշտություն։ Բայց հիմա, երբ նա զորքով դուրս է եկել խոովարարներին պատժելու, այժմ արդեն հաշտության միջնորդությունը չէր նսեմացնի արքային։ Հակառակորդները դա չեն համարի թուլություն։

— Ինքս, թագուհի, խորհում եմ նույնը։

— Սակայն, իշխան, մինչև մենք խորհենք, ժամանակը կանցնի։ Պետք է անել այդ փութով, անհապաղ։ Եվ պետք է խորհել, թե ո՞վ կարող է լինել միջնորդ հաշտության։ Ո՞վ կարող է արդյոք համոզել արքային և նախարարներին։ Ցավում եմ, որ սպարապետը բացակա է։ Նա միայն ի վիճակի կլիներ համոզել արքային։ Մինչև սակայն կանչենք նորան իր հեռու Տայքից, դա կպահանջի երկար ժամանակ։

— Իրավացի ես, թագուհի։ Իցե գտնենք մեկը,— ասաց ծերունի հազարապետը։

Միառժամ խորհելուց հետո նրանք գտան, որ այդ նպատակի համար միակ մարդը ներսես կաթողիկոսն էր, որ համարվում էր Հայոց Աշխարհի գերագույն դատավորը և որը թե՛ հեղինակություն ուներ նախարարների մոտ և թե՛ համոզելու ունակություն։

— Սակայն քահանայապետը կհամաձայնի՞ արդյոք,— տարակույս հայտնեց ծերունի հազարապետը։— Չէ՞ նա վշտացած է արքայից...

Ասաց Գնունին, բայց խոսքը դեռ չավարտած, զղջաց խոսքից. զգաց, որ այդ հիշեցումն ավելորդ էր, որովհետև ներսեսը վշտացած էր, թե ինչո՞ւ թագավորն ամուսնացել էր

Փառանձեմի հետ, Գնելի այրու հետ, անտեսելով հարազատի հանգամանքը։ Կարիք կա՞ր հիշեցնելու այդ... Բայց մինչ հազարապետը կուղղեր իր սխալը՝ Փառանձեմը հետաքրքրվեց.

— Իսկ վշտացած է ինչո՞ւ։ Վերջին այցելությունի՞ց, երբ արքան մերժեց նրա միջնորդությունը՝ մարդաժողովի հրովարտակը ետ վերցնելու...

Հազարապետը մոռացել էր Ներսեսի վերջին այցելությունը, ուստի և ուրախ եղավ, որ Փառանձեմը հիշեցրեց, որով և ինքն ազատվեց բացատրություն տալու դժվարությունից։

— Այո, թագուհիս, այո... Ես նկատի ունեի այդ իսկ հանգամանքը։

Եվ այնուհետև միաձայն նրանք խոսում էին, թե ինչպես խնդրեն կամ համոզեն կաթողիկոսին, որ նա հանձն առնի այդ առաքելությունը։ Գտնում էին, որ դա մինչև իսկ նրա պարտքն է որպես հոգևոր հովվի, որպես քրիստոնեական քահանայապետի։ Սակայն ինչպե՞ս ասել նրան և որտե՞ղ... Թագուհին ցանկություն հայտնեց, որ ինքն այցելի նրան և պարզի իր խնդրանքը. դա կշոյեր ծերունու ինքնասիրությունը, և նա կմոռանար արքայից ստացած վիրավորանքը։

— Ո՜չ, թագուհիս,— առարկեց հազարապետը,— պատշաճ չէ, որ ինքդ գնաս առ ոտս Ներսեսի։

— Մի՞թե, իշխան, չեմ կարող այցել նրան որպես հոգևոր պետի։

— Կարգ չէ, թագուհի։ Լավագույնս է Ներսեսին հրավիրել պալատ։

Փառանձեմը համաձայնեց։ Բայց հանձն կառնի՞ արդյոք արքայի վիրավորանքից հետո,— մտքում կրկնեց նա հազարապետի խոսքը։

Կոգովիտի պատերազմի լուրերը հասել էին և Ներսես կաթողիկոսին. նա ևս դա համարում էր եղբայրասպանություն. բայց միաժամանակ մտածում էր. «Թո՛ղ, թո՛ղ պատժվի Արշակը ի՛ր ձեռնարկի համար, ի՛ր փառասիրության համար... խորհրդատու՝ եղա, որ նա վերցնի իր կործանարար հրովարտակը՝ չանաց... և այժմ թող վայելի իր վարմունքի պտուղները»։

Այսօր էլ ահա, երբ նա վերադարձավ ցերեկվա ժամերգությունից՝ դպիր Փավստոսը հայտնեց.

— Ուրախ լուրեր, քահանայապետ։

— Զրուցիր։

— Արշակ թագավորը նորից պարտվում է նախարարներից։

— Եվ ինչո՞ւ դա ուրախացնում է քեզ։

— Քանզի անիրավ էր հույժ։

Ներսեսը լռեց. չուզեց հայտնել իր վերաբերումը, ապա, փոքր անց միայն, նկատեց.

— Վայել չէ մեզ՝ հոգևորներիս, ուրախանալ մարդասպանությամբ։

Փավստոսն անհարմար զգաց, բայց, դա սքողելու համար կարծես, հայտնեց, թե հեռվից եկած երեք շինական և մի քահանա շտապ խնդրում են Վեհի տեսությունը՝ հույժ կարևոր մի հայտնության համար։ Ժամը թեև հարմար չէր և նա ցանկություն ուներ ընկողմանելու երկար ոտքի կանգնելուց հետո, բայց և այնպես հոժարեց ընդունել, վասնզի արտաքո կարգի այցելությունը հետաքրքրեց նրան։

— Հրավիրի՛ր,— պատվիրեց։

Եվ փոքր հետո ներս մտան իրոք երեք շինական և մի քահանա գյուղական. շինականները ճերմակած մազերով և հնամաշ կարճ կապաներով էին, իսկ քահանան մացառանման անխնամ մորուքով և ծնկներից ներքև իջնող վերարկուով։ Ներս մտնելով՝ չորսը միասին գլուխ իջեցրին խոնարհ, ապա հերթով, ընդունված կարգով, մոտեցան կաթողիկոսի աջն առնելու։ Իսկ սենեկապետ Փավստոս դպիրը ցույց տվեց նրանց երկար բազմոցը և աթոռները։

Երբ այցելուները տեղավորվեցին, Ներսեսը խոշոր թափանցող աչքերով նայեց քահանային և շինականներին. երեքն էլ ամոթխած էին այնչափ, որ չէին համարձակվում խոսել։

— Անշուշտ բարի՞ է ձեր այցելությունը,— հետաքրքրվեց Ներսեսը նրանց խոսելու համարձակություն ներշնչելու ակնհայտ ցանկությամբ։

— Այո, քահանայապետ,— խոսեց առաջինը քահանան։— Եթե կհրամայես, կպատմենք վիշտը ժողովրդյան, որ եղավ կարկուտ անսպաս և աղետ ահավոր։

Քահանայի խոսքերը կարծես տարակույս բերին կաթողիկոսին, և նա նշան արավ խոսելու։

— Մենք, տեր քահանայապետ,— սկսեց քահանան ողբագին ձայնով,— գալիս ենք Կոգովիտ գավառից դժբախտ։ Գալիս ենք արյան և աղետի վայրից։

— Կամենում ես ասել ռազմի վայրից,— պարզեց կաթողիկոսը։

— Հրամանքդ, հայր քահանայապետ։ Գալիս ենք եղբայրասպան պատերազմի վայրից,— և քահանան համեստորեն հազաց, երևի ազատ խոսելու համար։— Շաբաթից ավելի գավառս դարձել է ձիերի սմբակների կոխան։ Ավերվում են արտեր, ցանքեր, այգիներ և մեկը չի գթում մեզ...

— Այո, տեր մեր,— խոսեց տարեց ծերունին, որի մորուքն ավելի ճերմակ էր և կնճիռներն ավելի առատ։— Այո, տրորում են մեր հացը, մորթում մեր անասունը... այդ իսկ պատճառով եկել ենք Վեհիդ։ Օգնի՛ր մեզ, հայր հոգևոր, փրկիր մեզ։

Վերջին խոսքի վրա մյուս երկու ծերունիները ձայնակցեցին նրան, ասես պայմանավորված.

— Օգնի՛ր, հայր հոգևոր...

Եվ երեքը միասին ծունկի եկան։ Նրանց օրինակին հետևեց և քահանան։

— Մենք գնացինք թագավորին՝ չընդունեց... գնացինք իշխաններին՝ չլսեցին։ Ողորմի՛ր, տեր հոգևոր. համոզիր թագավորին...

Դրանք Թիր և Արանց գյուղերի պատվիրակներն էին։

Երբ նրանք նկարագրեցին իրենց վիճակը և լռեցին աղերսալի հայացքները խոնարհած, Ներսեսը մտածումների մեջ ընկավ։ Նա լսել էր թագավորի և նախարարների ընդհարումների մասին, բայց չէր իմացել, որ դրանից վնասվում են շեները, նրանց դաշտերը, և այդ ամենը Արշակի պատճառով, նրա քաղաքի պատճառով... Այժմ սակայն, լսելով շինականների և քահանայի աղերսանքը, մտածեց, թե ահա պատեհ առիթ՝ ցույց տալու ժողովրդին, թե թագավորն ու նախարարները չեն, որ հոգում են ժողովրդի ցավը, այլ եկեղեցին. ուստի և կարելի էր մի անգամ ևս գնալ Արշակի մոտ և համոզել, որ վերջ տա եղբայրասպան պատերազմին։ Եվ եթե թագավորը չլսի իսկ, ժողովուրդը կտեսնի և կզգա իր հոգա-

ցողությունը։ Բայց արժե՞ տաժանքով ճանապարհ կտրել և գնալ լսել Արշակի բիրտ խոսքերը։

Մտածելով այս ամենը՝ նա ասաց.

— Ես, զավակներս, կխորհեմ այս մասին։ Իսկ դուք գնացեք խաղաղությամբ...

— Խաղաղություն սպասում ենք Վեհիդ միջնորդությունից։

Երբ նրանք դուրս էին գալիս տրտում՝ մեկն ասաց.

— Թագավորը չուզեց լսել, իշխանները՝ վանեցին, քահանայապետը մերժեց... Հիմա ո՞րի դիմենք...

Շինականների և քահանայի գնալուց հետո Ներսեսը դպիր Փավստոսին հրամայեց կանչել Խաղ եպիսկոպոսին, որը մի երկու շաբաթ էր ինչ եկել էր վանք և օրը մեկ անգամ տեսնվում էր իր Վեհի հետ և զրուցում։ Այսօր արդեն կաթողիկոսը կամենում էր զրուցել Կոգովիտի դեպքերի մասին և իմանալ նրա կարծիքը, մանավանդ որ Խաղը այդ գավառի եպիսկոպոսն էր միաժամանակ։

Եկավ Խաղը՝ ձիգ ու լրջադեմ և, կաթողիկոսի հրավերով, նստեց երկար պարեգոտի առաջի փեշերը ծնկների վրա հավաքելով։ Երբ Ներսեսը հայտնեց, թե ո՛վքեր էին եկել և ի՛նչ էին խնդրում՝ Խաղը ժպտաց քմծիծաղ։

— Ամենը Արշակ թագավորի չարության հետևանքը։ Տիրապախ ծառաները Արշակավանում պատժվեցին աստուծով, սակայն Արշակի գոռոզության եղջյուրները չեն ջարդված տակավին։ Նա համառում է և, բացի այն, որ կամենում է վրեժխնդիր լինել ըմբոստ նախարարաց, ցանկանում է տիրանալ նաև նոցա կալվածներին հարուստ, մանավանդ Արտագերս և այլ ամրոցներին։

— Իրազեկ եմ, հայր սրբազան, իրազեկ եմ,— ընդմիջեց Ներսեսը իր տեղապահին, որից մի քանի անգամ լսել էր այդ ամենը։— Այժմ ցանկալի է ինձ խորհուրդը քո, թե ինչպե՞ս դադարեցնենք կռիվը այս եղբայրաջինջ։

— Դադարեցնել կարելի է և հնարավոր, Վեհդ սուրբ, եթե միայն Արշակը ամբարտավան անսա մեր խոսքը բարեմիտ։

— Այո՛,— ծոր տվեց Ներսեսը դժկամ։— Գոռոզ է և կամակոր. չի կամենում լսել որևէ խորհուրդ, մանավանդ հոգևոր հայրերից։

— Չի կամենում և ահավասիկ պատժվում է չարաչար, ու պիտի պատժվի հավիտյան,— չարախնդաց Խադը։— Ավանը կործանվեց բարեբախտաբար... Եվ համարձակվում էին՝ կանչել ինձ, որ օծեմ այդ անիծյալ քաղաքի եկեղեցին, և ահավասիկ սուտ այդ եկեղեցին ևս...

— Թո՛ղ այդ, հայր սրբազան,— նորից ընդմիջեց Ներսեսը։— Թո՛ղ և տուր ինձ մի խորհուրդ բանական։

— Ինչպիսի խորհուրդ և կամենամ տալ, հայրդ Վեհ, կմնա անիրագործելի։ Իմ խորհուրդս՝ չգնալ բնավ առ ոտս թագավորի, և թող նախարարք խորտակեն նորան և նորա գահը, քանի ատում է նա մեզ՝ Քրիստոսի խոնարհ ծառաներիս. քանզի մոռացել է սուրբ պատվիրաններն աստուծո։ Նա, որ հանցապարտներով լցրեց իր պիղծ քաղաքը և խրախուսեց մոլությունը, թող պատժվի իր հանցանքի համեմատ։ Այդ աստված է պատժում նորան նախարարաց ձեռքով։

Խադը խոսում էր այնպես կրքոտ, որ Ներսեսն ստիպված եղավ չափավորել նրան։

— Հանգստացիր, հայր սրբազան, և խորհիր, որ եղբայրասպան չարաղետ կռվից այս վնասվում է մեր հոտը անմեղ, որ պարգևում է մեր հացը հանապազօրյա։

Խադն ակներև սթափվեց այդ խոսքերից։ Նա մտածեց մի փոքր և ասաց.

— Ճշմարիտ է. մեր հացը և սնունդը հանապազօրյա...

— Ահավասիկ և ինքս, Խադ սրբազան, խորհում եմ, որ մեր եկեղեցին չի կարող լինել անտարբեր իր հոտի ծանր կացության այս օրերին։

— Ի՞նչ կարող ենք անել սակայն։

— Այն, որ միջնորդ լինենք առաջի թագավորի և նախարարաց։

— Ո՛չ, տեր քահանայապետ, ես բնավ չէի կամենա գնալ Արշակ թագավորի մոտ. նա արժանի չէ, որ խոսեմ նորա հետ,— ընդմիջեց Խադը, կարծելով, թե կաթողիկոսը կամենում է ուղարկել իրեն այդ առաքելությամբ։

— Հանգիստ, տեր սրբազան,— ասաց Ներսեսը։— Այդ ծանրագին պարտքը չեմ հանձնի քեզ, վասնզի, գիտեմ, դյուրաբորբ ես։ Ուստի և կամենում եմ ինքս լինել միջնորդ հաշտության, և ահա կուզեի լսել խորհուրդդ։

— Միջամտությունդ իզուր կլինի, քահանայապետ,— գլուխը տարուբերեց Խաղը։— Արշակը չի անսա քեզ և, չանսալով հանդերձ, կվիրավորի Վեհիդ անվայել խոսքերով...

Երբ, այս կարճ զրույցից հետո, Խաղը հեռացավ՝ Ներսեսը մտածումների մեջ ընկավ. Խաղի վերջին խոսքերը հիշեցրին նրան իր վերջին տեսակցությունը Արշակի հետ։ Այո, նա վիրավորեց իր անձը և կարող է նորից վիրավորել։ Բայց ինչպե՞ս փրկել նախարարներին նրա վրեժխնդրությունից... Ներսեսը կասկածում էր և գլուխն օրորում։ Կտրել երկա՞ր ճանապարհ և ենթարկվել թագավորի արհամարհանքին, կամ լսել նրա մերժումը—հաճելի չէր բնավ։ Եվ այս տխուր հեռանկարը կասեց նրա կամքը։ Նա գերադաս համարեց չգընալ... Հեռո՛ւ Արշակ թագավորից։ Թո՛ղ Արշակը հնձի այն, ինչ ցանել է...

Այս խոհերի մեջ էր կաթողիկոսը, երբ Փավստոս դպիրը ներս մտավ շտապ և հայտնեց այլայլված.

— Քահանայապետ, սուրհանդակ Փառանձեմ թագուհուց։

— Թագուհո՞ւց,— զարմացավ Ներսեսը։— Եվ ինչո՞ւ համար։

— Թագուհին խնդրում է Վեհիդ այցը պալատ...

Ներսեսի զարմանքն ավելացավ։ Դա անսպասելի էր. վաղուց նրան չէին հրավիրած պալատ, ուստի և թվաց արտակարգ ու խորհրդավոր։ Հրավեր՝ այն էլ թագուհո՞ւց... անսպասելի էր ավելի ևս։ Այն օրից, երբ թագավորը սառն ընդունելության արժանացրեց իրեն և մերժեց իր առաքելությունը, որ կատարել էր իշխան Կամսարականի ցանկությամբ, Ներսեսը հաստատ որոշում ուներ՝ այլևս ոտք չդնել պալատ. սակայն այժմ, նկատ առնելով, որ հրավերը գալիս է թագուհուց և «հույժ կարևոր խնդրո համար», գնաց Միջնաբերդ՝ միայն չորս եպիսկոպոսի և դպիր Փավստոսի ուղեկցությամբ։

Տրդատա Դռան առաջ նրան դիմավորեց հազարապետ Գնունին մի քանի պալատականներով և առաջնորդեց թագուհու հարկաբաժինը։

Երբ կաթողիկոսը մտավ պալատի գունազարդ և գորգապատ ընդունարանը և ընդունված կարգով խաչակնքեց չորս անկյունները և դահլիճի մեջտեղում կանգնած թագուհուն, Փառանձեմը, պարզ հագնված, առանց թագի և ծիրանիի ա-

ռաջ եկավ հարգալիր, առավ նրա աջը, ներողամտություն խնդրելով, որ անհանգստացրել է նրան։

— Սակայն, տեր հոգևոր, կա հույժ կարևոր մի խնդիր, որ հարկադրեց ինձ այդպես վարվելու։

— Սիրով կլսեմ, թագուհի,— ասաց Ներսեսը հետաքրքրված։ Նա Փառանձեմին տեսել էր քսան տարի առաջ՝ Շահապիվանում, երբ նա փոթորկի պես խուժեց եկեղեցի՝ ամուսնու համար օգնություն խնդրելու... և Լիսին բլուրի վրա, երբ նա սգում էր արդեն Գնելի դիակի առաջ։ Ներսեսին թվում էր, թե Փառանձեմը քիչ է փոխվել. այժմ նրա դեմքը վշտահար չէր այն ժամանակվա պես, բայց մտահոգ էր և լուրջ։ Այնուամենայնիվ դա չէր աղարտում նրա գեղեցկությունը։ Նույնն էին բարձրաթառ հոնքերը և ցոլուն աչքերը, որոնց մեջ Ներսեսն զգաց հատուկ հարգանքի արտահայտություն։

«Լավ է, որ Արշակի նման անբարեհամբույր չէ»,— մտածեց կաթողիկոսը տեղավորվելով։

Երբ երկուսն էլ նստել էին արդեն դեմ-դիմաց, Գնունին մնաց կանգնած։ Փառանձեմը, առանց թաքցնելու և առանց ավելորդ խորհրդավորության, հայտնեց իր ցավը կատարվող արյունահեղության մասին, ասելով, թե թագավորը, հարկավ, իրավացի է ապստամբներին պատժելու իր ցանկության մեջ, բայց եղբայրասպան կռիվը անչափ վնաս կբերի երկրին։

— Ուստի և, տեր հոգևոր, խնդրում եմ՝ լինես միջնորդ հաշտության։

Փառանձեմը չասաց, թե քանի օր է ինքը տագնապի մեջ խորհրդակցում է հազարապետի հետ և գիշերները չի քնում երկյուղից, թե թագավորը կպարտվի, թե միակ ելքը թագավորի համար այդ ծանր վիճակից կարող է լինել հաշտությունը... բայց այս ամենի փոխարեն նա ավելացրեց միայն.

— Ներքին կռիվները, քահանայապետ, կարող են շահավետ լինել մեր թշնամիներին միայն։ Այնպե՞ս է։ Այժմ, որպես հոգևոր պետ, քո պարտքն է հաշտություն խոսել կողմերին և խաղաղություն վերահաստատել երկրում...— Այս խոսքերի վրա նա թռուցիկ մի հայացք գցեց Ներսեսի երեսը՝ ստուգելու իր խոսքերի տպավորությունը, և ապա շարունակեց.— Դու, քահանայապետ, չես ցանկա անշուշտ, որ եղբայրասպան կռիվը շարունակվի և թշնամին, օգտվելով դրա-

նից, խուժի մեր երկիրը, ավերի մեր քաղաքներն ու եկեղեցիները... Հարկավ, արքան վաղ-ուշ կընկճի խառնակիչներին, և խիստ, սակայն ծանր է ինձ տեսնել եղբայրասպան պատերազմը... Արա՛ հնարավորը, քահանայապետ...

Ներսեսը գոհ եղավ, նրա ինքնասիրությունը շոյվեց պարզապես, որ Թագուհին և արքունիքը զգացել են իր կարիքը, իր ուժն ու հեղինակությունը, և միայն Արշակն է, որ անտեսում է իրեն... Ու թեև ներուստ համաձայն ու գոհ, այնուամենայնիվ ասաց.

— Ես հար-հանապազ հաշտություն և խաղաղություն եմ քարոզում, Թագուհի. Տարի առաջ ես անձամբ գալով զգուշացրի արքային, որ նախարարաց թշնամության հետևանքը կլինի չարաղետ, և արքան չանսաց ինձ։ Եվ ահավասիկ...— Ներսեսը լռեց մի պահ, թվում էր խորհում է արված առաջարկի մասին։— Լինել միջնորդ հաշտությա՞ն,— արտասանեց նա մտահոգ։— Վաղուց, Թագուհի, ինքս խորհել եմ այդ մասին։ Եղբայրասպան կռիվը վայել չէ քրիստոնեից։ Պետք է անշուշտ հաշտություն շուտափույթ՝ ավելի ծանր աղետներ կանխելու համար։ Այո, թշնամիք կարող են ուրախ լինել միայն... Սակայն ունեմ տարակույս մեծ. արդյոք կհոժարի՞ արքան լսել ինձ կամ հաճո կլինի՞ առաքելությունս նորան։

— Անտարակույս, քահանայապետ...— Թագուհու ձայնի մեջ վախ կար, թե Ներսեսը հրաժարվի հանկարծ։

Նույնը զգաց հազարապետը և վրա բերավ անմիջապես,

— Հույժ ցանկալի է առաքելությունդ, քահանայապետ։

Ներսեսը խորհեց գլխահակ և ապա ասաց.

— Եթե իմանայի արքայի տրամադրությունը՝ ես սիրով կմեկնեի, Թագուհի. սակայն երկյուղս փորձ ունի... Արդյոք կընդունի՞ ինձ արքան։

— Վստահ եմ, քահանայապետ,— ասաց Փառանձեմը համոզկեր շեշտով։

Ներսեսը, որքան էլ ներուստ գոհ էր այդ առաքելության առաջարկով, այնուամենայնիվ որոշակի պատասխան չտվեց։

— Ես կխորհեմ, Թագուհի, և կջանամ անել կարելին...

Երբ նա տեսակցությունը վերջացրած դուրս էր գալիս պալատից, նրան դարձյալ զբաղեցնում էր իր տարակույսը, թե Արշակը խսկապես կընդունի՞ իր միջնորդությունը...

* * *

Ամառային արև օրեր էին Կոգովիտում. երկնի անսահման ջինջ կապույտը արևալույսով ողողված՝ թվում էր տիեզերական հավերժական անդորր և դիտողին համակում էր ապրելու բուռն տենչ, կյանքը հավիտենաբար վայելելու ցանկություն։

Բայց Կոգովիտում, այդ անդորր ու վեհ երկնքի տակ, հայոց բանակները տակավին կռվում էին իրար դեմ, կռվում մի զարմանալի մոլուցքով, և որքան շատ էին սպանում ու վիրավորում միմյանց, այնքան ավելի էին գազազում ու լցվում վրեժի զգացումներով և այնքան ավելի էին տրորում ցանքերը և նեղում շինականներին։

Ութերորդ օրն էր՝ կռիվը շարունակվում էր առաջվա պես, երբ հանկարծ, մի պայծառ կեսօրի, հովտում՝ կռվող կողմերի միջև հայտնվեց սևահանդերձ մարդկանց մի հեծյալ խումբ, որ գալիս էր դեպ արքունական բանակը։ Դրանց երևումը մի պահ կողմերին պատճառեց այնպիսի զարմանք, որ շատ զինվորներ դադարեցրին նետաձգությունը և ուզեցին իմանալ՝ ովքե՞ր են, ինչո՞ւ են գալիս կամ ո՞ւր են գնում— երևույթն այնքա՞ն անսովոր էր։

Արքունի բանակից մի զորական նժույգի վրա գնաց ընդառաջ՝ ձեռքը օդում շարժելով, որ կանգ առնեն, որ վտանգավոր է... Բայց եկողները կանգ չառան և շարունակեցին առաջանալ հանգիստ, նույնիսկ հանդիսավոր ընթացքով։ Այդ ժամանակ զորականը ձին խթանեց ու սլացավ նրանց դեմ։

— Տեր հոգևորներ, կանգ առեք,— գոռաց նա մոտենալով։— Զգուշացե՛ք։ Նետաձգությո՛ւն է։

— Նետերը չեն վնասի աստծո սպասավորներին,— ասաց առջևից եկող ճերմակմորուս հոգևորականը։— Առաջնորդիր մեզ, որդյակ, արքայի վրանը։

Այս խոսքերն ասվեցին այնպիսի շեշտով ու ներշնչող ձայնով, որ զորականը ենթարկվեց ակամա. առաջնորդեց։ Այս հանգամանքը ևս առաջ բերեց նոր զարմանք կռվող կողմերում և նետաձգությունը ինքնաբեր դադարեց շատ կետերում։ Հոգևորականները, որ թվով յոթ հոգի էին, ձիերը քշե-

ցին արագ, դադարի մեջ տեսնելով հարգանք դեպի իրենց անձը։

— Որտե՞ղ է արքան,— հարցրեց դարձյալ առջևից գնացող հոգևորականը զորականին, որ ձին հարգալիր քշում էր նրա կողքից։

Զորականը ցույց տվեց կարմիր մի վրան լեռան լանջին, ուր կային նաև ուրիշ վրաններ։ Կարմիր վրանը մյուսներից զատվում էր իր մեծությամբ և իշխող դիրք ուներ հովտի վրա։ Նայելով դրան՝ հոգևորականները արագացրին ձիերը։

Առջևից գնացողը Ներսես կաթողիկոսն էր։ Երկար տատանվելուց հետո նա եկել էր կողմերին հաշտություն խոսելու։ Երեքօրյա ճանապարհից հետո նա երեք եպիսկոպոսով և երեք վարդապետով (որոնցից մեկը իր դպիր Փավստոսն էր) հասել էր վերջապես պատերազմի[1] վայրը։ Զորականը թեև չէր ճանաչում, բայց զգալով, որ դա կարևոր անձնավորություն է, անխոս առաջնորդում էր նրան դեպի թագավորի վրանը, որ բավական հեռու էր ռազմի դաշտից. առաջնորդում էր հետաքրքրությունն ու զարմանքը դեմքին։ Երբ փոքր անց մոտեցան վրանին, նույն հետաքրքրությունն ու զարմանքը երևաց նաև պահակների դեմքին, որոնցից յուրաքանչյուրն ասես ուզում էր իմանալ, թե ո՞վ են և ինչի՞ են եկել, իսկ պահակապետը վազեց սենեկապետ Եզնիկի մոտ, սա՝ թագավորի վրանը։

Որքան էլ խադը ապարդյուն համարեց կաթողիկոսի առաքելությունը հաշտության, Ներսեսն այնուամենայնիվ վճռեց գալ ռազմի դաշտ. մտածելով, որ եթե իր՝ հաշտության միջնորդ լինելու մերժումը իմացվեր, անախորժ կլիներ ժողովրդին. մյուս կողմից, եթե կռիվը շարունակվեր, նախարարները կարող էին տուժել. պետք էր փրկել նրանց։ Ճշմարիտն ասած՝ Ներսեսը կուզեր, որ Արշակը մի քիչ պարտվեր—դա թերևս մեղմեր նրա խիստ բնույթը. բայց երկյուղ ուներ, թե նախարարները պարտվեն և Արշակն ավելի գոռոզանա... Խորհելով այս՝ նա միաժամանակ գտնում էր, որ հաշտարար միջամտությունը և երկրում խաղաղություն հաստատելը կբարձրացներ անշուշտ իր հեղինակությունը և ամենքը կտեսնեին ու կհամոզվեին, որ ինքն է միայն, որ հոգում է ժողովրդի մասին, այլ ոչ թե թագավորն ու իշխանները։

Երբ կաթողիկոսն իջավ ձիուց, Փավստոս դպիրն շտապեց հանձնել նրան արծաթյա խաչագլուխ գավազանը (որ բերել էր ինքը կարմիր լաթով փաթաթած) և ուղղել նրա պարեգոտի փեշերը, որ տրորվել էին թամբի վրա։ Սենեկապետը վրանից դուրս գալով հրավիրեց անխոս. և երբ կաթողիկոսը, իր ուղեկիցներին դուրսը թողնելով, մենակ մտավ վրան, Արշակը միայն գոտեպնդած կապայով նստած էր գահավորակին և բոլոր նշաններից երևում էր, որ հուզված է (սև աչքերը խաղում էին տենդագին), սակայն զսպում էր իրեն. կռիվը երկարում էր, և իր գնդերը չունեին սպասված հաջողությունը. գուցեև նրա համար տհաճ էր, որ կաթողիկոսն իրեն տեսնում էր այդ վիճակում։

Արշակի տրամադրությունն այնպիսին էր, որ նա գուցեև չընդուներ Ներսեսին, սակայն այդպես վարվել զորքի առաջ կլիներ շատ անհարմար։

Բայց, պետք է ասել և այս, որ կաթողիկոսի ժամանումը լսելով նա իսկույն կռահեց նրա գալու նպատակը և առաջին միտքը, որ ունեցավ, այն էր, թե նախարարների դրությունը վատ է անկասկած...

— Ողջույն և օրհնություն արքային,— ասաց Ներսեսը հազիվ ներս մտած և գավազանակիր ձեռքով խաչակնքեց թագավորին ու վրանի ներսը, ուր Արշակից բացի չկար մեկը։

Արշակը հազիվ գլուխը շարժեց ի պատասխան։

— Գալուստդ, անշուշտ, բարի է, քահանայապետ,— ասաց ծանրորեն կաթողիկոսին նայելով։

Իմանալով թագավորը ձևականություն չի սիրում, Ներսեսն սկսեց անմիջապես։

— Որպես քրիստոնեից հովվապետ, արքա, եկել եմ պարտքս կատարելու և, հուսամ, խոսքս չես համարի անխորհուրդ։

— Խոսիր, տեր հոգևոր։

— Իբրև երկրիս հոգևոր պետ, արքա, ես չեմ կարող սառը սրտով և անթաց աչոք դիտել Հայոց Աշխարհի երկպառակումը և իմ հոտի արյունահեղ ինքնահոշոտումը։

Այս անգամ Արշակը հոնքերի տակից նայեց Ներսեսի նիրշնչված դեմքին և մտածեց. «Չի փոխվել բնավ»։ Իսկ Ներ-

սեսին թվում էր, որ Արշակը փոխվել է. աչքերի տակ սև գծեր կային և անքնության բացահայտ նշաններ։

— Ուրեմն, տեր հոգևոր,— չհամբերեց Արշակը,— կամենո՞ւմ ես, որ ներեմ ստամբակների ոճիրը, այն, որ նոքա ավերեցին մի ողջ քաղաք և սրածեցին նորա բնակիչներին։

— Արքա, այդ նոցա չի ների ո՛չ տերն մեր աստված, ո՛չ ժողովուրդը հայոց։ Սակայն մի՞թե մեղավոր են մյուսները՝ շինականները և այն մարդիկ, որ կռիվ են ելած ոչ թե կամավ, այլ մտրակի հրամանավ։

Արշակը հոնքերը սեղմեց քթարմատին և ընդմիջեց.

— Քահանայապետ, դու եկել ես ինձ խրատ կարդալո՞ւ։ Մի՞թե ես կռիվ եմ վարում շինականների դեմ և ոչ ստամբակ նախարարների։ Մի՞թե անհայտ է քեզ վարմունքը նոցա,— և Արշակը գլուխն օրորեց։

Նա ոչ միայն կռահում, այլև զգում էր, որ կաթողիկոսը եկել է հաշտության առաջարկով։ Ինքը, ճշմարիտ է, որոշել էր սաստիկ պատժել նախարարներին, բայց տեսնելով կռիվը երկարում է և կարող է արատ բերել իր անվան՝ կցանկար հաշտվել, բայց ձևացավ բարկացած.

— Ես, քահանայապետ, մի՞թե միջամտում եմ քո եկեղեցու գործերին։ Ո՛չ երբեք։ Ես թույլ եմ տալիս քեզ անել և կատարել ի՛նչ ցանկանում ես։ Այդպես և ինքդ թույլ տուր ինձ՝ անել այն, ինչ ես եմ ցանկանում Հայոց Աշխարհի համար։

Ներսեսի դեմքի արտահայտությունը փոխվեց։

— Ես, արքա, ինձ իրավունք չեմ համարում արգելել քեզ այն, ինչ ցանկանում ես,— խոսեց նա փոքր-ինչ վիրավորված։— Սակայն իմ հոգին խռոված է, որ իմ հոտը՝ ժողովուրդը հայոց, երկու բանակի բաժանված, սրածում են միմյանց։

— Խաղաղությունը, հարկավ, բարիք է, քահանայապետ. դա ցանկալի է միշտ և հավիտյան։ Սակայն խաղաղությամբ ես չեմ կարող պատժել խռովարարներին,— ասաց Արշակը շարունակ նայելով կաթողիկոսին։— Եվ մի՞թե դու կներես քեզ դեմքնթաց եպիսկոպոսների կամ վարդապետների։ Չե՛ս ների բնավ։ Իսկ ինչո՞ւ կամենում ես, որ ես ներեմ և չպատժեմ։

— Բայց, արքա, մի քանի հանցավորի փոխարեն տուժում են շատերը և իզուր ճակատում միմյանց դեմ։ Ես զանցառու եպիսկոպոս պատժելու համար բանակ չեմ հանում նորա դեմ. հրամանագրում եմ ապաշխարություն, և ամեն ինչ ավարտված է սրանով, ինչ և թելադրում է եկեղեցու սուրբ գիրքը։

— Այդպես,— և քմծիծաղը ծռեց Արշակի շուրթերը։— Այո, քո եպիսկոպոսները բանակ չեն հանում քո դեմ, իսկ իմ նախարարնե՞րը... և դու եկել ես ասելու, որ ներո՞ղ լինեմ։ Երբե՛ք։ Նոցա այպանելու փոխարեն՝ եկել գթությո՞ւն ես հայցում։

— Ո՛չ, արքա, ես գթություն չեմ հայցում։ Ցանկանում եմ միայն, որ եղբայրասպանությունը դադարի։

— Եղբայրասպանությունը ես չեմ սկսել, ասա քահանայապետ։

Այստեղ եղավ մի պահ, որ Ներսեսն ուզեց հիշեցնել թագավորին, թե ժամանակին արհամարհեցիր իմ զգուշացումը և ահա եղավ ցավալին, բայց և անմիջապես զգաց, որ դա կարող է իզուր հարուցել նրա բարկությունը և ձախողել իր առաքելությունը, ուստի և բարվոք համարեց նկատել.

— Խաղաղությունն է մայր բարյաց, արքա։

Արշակը նորից՝ այս խոսքերից զգաց, որ նախարարների վիճակը ծանր է հավանաբար, ուստի և, կամենալով փրկվել պատժից, կաթողիկոսին ուղարկել են միջնորդ. և նա ուզեց պարզել այդ։

— Սակայն ինչո՞ւ, ասա հոգևոր, հաշտության քո առաջարկով չես գնում նախարարներին։

«Եթե ասի՝ եղել է նախարարաց մոտ, ուրեմն ուղարկված է նոցա կողմից»,— մտածեց Արշակը, բայց Ներսեսը վրա բերավ հանգիստ.

— Արքա, ես գերադասեցի ասանել նախ քո համաձայնությունը, քանզի երկրիս տերը դո՛ւ ես. քո ձեռքին է ներելու և պատժելու իրավունքը...

Արշակը խրեն շոյված զգաց, բայց և այնպես խիստ ձևացավ։

— Ուստի և պետք է նզովես սինյորների վարմունքը,— ասաց նա դարձյալ կաթողիկոսին փորձելու համար։

Բայց Ներսեսը նորից ելք գտավ։

— Արքա, նզովել միշտ կարելի է. դրանով հաշտության և խաղաղության չենք հասնի այժմ։

Արշակն ինքն զգում էր արդեն, որ կռիվներից օգուտ չունի ո՛չ ինքը, ո՛չ երկիրը. զգում էր որ հարևանները կուրախանան անշուշտ, որ Հայոց Աշխարհը տկարանում է, ուստի և կցանկանան, որ կռիվը երկարի ավելի և մի օր ներս խուժեն անարգել և կատարեն այն, ինչ ապատամբ նախարարներն են ցանկանում... Զգալով այս նա միաժամանակ մտածում էր, որ կռվից ոչինչ չշահելով հանդերձ, իր քաղաքը կմնա առանց վերականգնելու. ու գտնում էր, որ հաշտությունը առավել շահավետ է իրեն... Բայց միանգամից համաձայնելը՝ կհամարվեր թուլության նշան։

— Ո՛չ, տեր հոգևոր, ես պետք է պատժեմ եղեռնագործներին։ Եթե իմ զինյալ ուժերս չբավեն՝ ես զորք կբերեմ վրաց երկրից,— ավելացրեց նա՝ ձեռքը բռունցք շինելով և աչքերը փայլեցնելով։

— Սակայն, արքա, գու որ կամենում ես հզորացնել Հայոց Աշխարհը, որպեսզի նա թշնամու առաջ չլինի թույլ ու տկար, չե՞ս խորհում արդյոք, որ ներքին կռիվն այս տկարացնում է քեզ... Չէ՞ որ, արքա, այս կռվի մեջ դու չես պատժում ոճիր նյութողին, այլ քո ժողովրդյան, որ պետք է պաշտպանի քեզ և երկիրը մեր դրսի թշնամուց։

«Ճշմարիտ է ասում,— մտածեց Արշակը։— Ըմբռնում է անիրավը, խելացի է։ Ասում է այն, ինչ ես եմ մտածում։ Այո, սինլքները չեն պատժվում, տուժում են անմեղները»։

Մտածելով՝ նա կարծես սթափվեց և հարցրեց.

— Եվ ուրեմն ի՞նչ է առաքելությանդ նպատակը, քահանայապետ։

— Հաշտություն, արքա...

Արշակը լռեց մի վայրկյան՝ գլուխն իջեցնելով, ապա մեկեն բարձրացրեց այն։

— Ես վճռել էի շարաշար պատժել նոցա,— խոսեց նա խստաձայն,— և դարձնել փոշի։ Սակայն, քանզի ժամանել ես, չէի ցանկա մերժել քեզ։ Ձիջանում եմ քո աղերսին։ Թող զենքը վար դնեն և զղջումով խոստովանեն իրենց հանցանքը։ ապա և հանձնառու լինեն, որ [illegible] իրենց ավերածը։

— Արքա, այդ կլինի հաշտությունից հետո,— ասաց Ներսեսը և մտածեց։ «Փառք աստուծո, կոպիտ խոսքեր չասաց այս անգամս»...

— Եվ որպեսզի,— շարունակեց Արշակը,— չկրկնվեն վարմունքներ սույնանման՝ կցանկանայի, որ այդ հաշտությունը կատարվի հատուկ պարտավորիչ մի հանդիսով։ Թող ամենքը ժողովվեն մի վայր և երդվեն սուրբ խաչի առջև, որ այսուհետ կլինեն հնազանդ, և դու, քահանայապետ, կօրհնես այդ հաշտությունը...

Արշակը դարձյալ լռեց մի փոքր, ապա շարունակեց.

— Այս կարի անհրաժեշտ է, որ հաշտությունը լինի անքակտելի։ Այլապես վստահ չեմ նոցա խոսքին։

— Անտարակույս, արքա, այդպես և կլինի,— համաձայնեց Ներսեսը։

— Եվ ուրե՞մն...

— Այժմ թույլատրիր, արքա, սույն այս առաքելությամբ մեկնել նախարարաց մոտ։

Ներսեսի գնալուց հետո Արշակը մտածում էր, թե նախարարները կհավատա՞ն իր խոսքին և կհամաձայնե՞ն արդյոք հաշտության, քանզի պիտի զգան, որ կատարել են չարագործություն աններելի... Մյուս կողմից նրան թվում էր, որ եթե շարունակի կռիվը, նրանք կմիանան ավելի, անգամ կարող են դիմել օտարի օգնության, բայց իր մեծահոգությունը կթուլացնի նրանց։

Մինչ թագավորն ու Ներսեսը խոսում էին վրանում, արքունի զինվորները տարբեր տեղեր խմբված նայում էին վրանի կողմը. բոլորը հետաքրքիր էին, թե ինչու է եկել կաթողիկոսը, և կարծում էին, որ նրա գալը անտարակույս կապ պիտի ունենա հաշտության հետ։ Բայց հաշտություն կարո՞ղ է լինել, երբ թագավորն ու նախարարները այնքան թշնամացած են... Քաղաքացիները, հատկապես տիրափախները, որ կռվելով հասել էին այդտեղ և դադարների ժամանակ միշտ հավաքվում էին և զրուցում, այսօր մանավանդ հետաքրքրված էին կաթողիկոսի ժամանումով։ Մի խումբ զինվորներ, դրանց մեջ նաև Թորգոմը և իր ընկերներ Հովսեփ՝ ու Վարդանը, սարի ստորոտում կանգնած խոսում էին այդ մասին։

— Ինչպե՞ս կարող են հաշտվել, երբ հարձակվել են թագավորի քաղաքի վրա,— ասում էր Թորգոմը,— այնքան մարդ են սպանել, ա՛յնքան տուն են վառել... Վարազ իշխանին սպանեցին... Ո՛չ, կվախենան, չեն հաշտվի...

— Եվ, թագավորն էլ չի ների նրանց և չի հաշտվի, մինչև չպատժի,— համաձայնում էր Հովսեփը։ Իսկ զինվորներից մեկ-երկուսը գտնում էին, որ եթե չհաշտվեն, ավելի վատ կլինի. նորից մարդիկ կսպանվեն, նորից շեներ կավերվեն...

— Չհաշտվեն՝ մենք էլ կսպանվենք մի օր։ Չէ, լավ է հաշտվեն՝ գնանք ամենքս մեր տուն, մեր հարազատներին...

Թորգոմը լսում էր և, բարկությունը զսպած, նայում էր հաշտություն ցանկացողներին, իսկ երբ խոսողն ավարտեց ասելիքը, նա չհամբերեց.

— Հաշտվել առանց մեղավորներին պատժելո՞ւ... ինչպե՞ս կարելի է... թագավորը ների՞՝ իր քաղաքը ավերողներին...

— Չի՛ ների... Բայց եթե կաթողիկոսը պահանջի՝ թագավորն ի՞նչ կարող է անել։

— Էհ, կաթողիկոսը թագավորից մե՞ծ է, որ պահանջի...

— Հապա ի՞նչ,— միջամտեց մի այլ զինվոր։— Չէ՞ որ թագավորին կաթողիկոսն է օծում,— ասաց նա բանագետի լրջությամբ։

— Այդպե՞ս է,— զարմացավ Հովսեփը։ Նրա հետ զարմացան և ուրիշները։ Իսկ Թորգոմը լռեց դժգոհ։ Նրան հայտնի չէր այդ պարագան, ուստի և վշտացավ։— Ուրեմն քաղաքն ավերող նախարարները պիտի մնան անպատի՞ժ, և թագավորը պիտի ների՞ նրանց,— խորհրդածում էր նա մտահոգ։— Եթե ների, ուրեմն թագավորը վախկոտ է...

Այստեղ նրանց զրույցն ընդհատվեց, որովհետև այդ պահին կաթողիկոսը դուրս եկավ թագավորի վրանից և արքայի սենեկապետի ու պահակապետի ուղեկցությամբ գնաց դեպ իրեն սպասող հոգևորականները, որ ձիերից իջած և մի տեղ խմբված զրուցում էին հանդարտ։

Կաթողիկոսին տեսնելով՝ զինվորները ջանացին հեռվից հեռու նրա դեմքից կռահել մի բան. եթե ուրախ լիներ՝ ուրեմն հաշտություն կլիներ. եթե տխուր՝ ոչինչ, կռիվը պիտի շարու-

նակվեր... Բայց որքան էլ նայեցին, քահանայապետի դեմքից ոչինչ գուշակել չկարողացան, մանավանդ որ նա երկար չմընաց այդտեղ. անմիջապես ձի հեծնելով շտապեց դեպի նախարարների բանակը։ Նրան ուղեկցում էին դարձյալ իր շքախումբը կազմող երեք եպիսկոպոսը և երեք վարդապետը։ Ներսեսը մի երկու խոսքով միայն հայտնեց նրանց իր բանակցության արդյունքը, այն, որ առել է արքայի համաձայնությունը հաշտություն խոսելու... ուստի և սրանք գոհ էին, որ իրենց քահանայապետի առաքելությունը հաջողվում է։

— Դժվարինը արքային համոզելն էր,— ասում էր նա ճանապարհին իր եպիսկոպոսներին։— Նախարարաց համոզելը կլինի առավել դյուրին։

Ներսեսը լիովին վստահ էր, որ հաջողություն կունենա և նախարարների մոտ։ Եթե կարողացավ համոզել Արշակի նման համառ մարդուն, կհամոզի և նախարարներին։ Բավական է սպառնա «հավուր դատաստանով», նրանք տեղի կտան անտարակույս,— մտածում էր նա։— Վերջապես նրանք ևս կարիք են զգում այժմ հանգստի և խաղաղության. չի կարող պատերազմը տևել անվերջ... Տեղի կտան, եթե մանավանդ ինքը երաշխավորի նրանց անվտանգությունը հաշտությունից հետո...

Երկու հակառակորդ բանակները իրարից բաժանողը մի ժամվա ճանապարհ էր, երբեմն—որոշ տեղեր—մի նետընկեց տարածություն։ Երբ նախարարական բանակից նկատեցին դեպի իրենց գնացող հոգևորականներին, նվաղած նետաձգությունը իսպառ դադարեց։ Այդտեղ մեկի փոխարեն եկան երկու հեծյալ և հետաքրքրվեցին, թե ուր են գնում... Իմանալով եկողը կաթողիկոսն է և կամենում է տեսնել իշխան Կամսարականին՝ նրանք իջան նժույգներից և գլուխները խոնարհեցին, ապա առաջնորդեցին նրան Կամսարականի վրանը, որն իր մեծությամբ պակաս չէր թագավորի վրանից։ Դա նույնպես գտնվում էր կռվի դաշտից հեռու, Արանց գյուղի վերևը, իշխող մի սարալանջի, որտեղից, ինչպես և թագավորի վրանից, երևում էր ամբողջ հովիտը՝ իր շեներով, ցանքերով ու միակ գետով։

Իշխանի վրանը գնալու համար պետք էր անցնել Արանց

գյուղի միջով։ Երբ շինականները տեսան հոգևորականների հեծյալ խումբը, մեծ ու փոքր դուրս թափվեցին նրանց նայելու. «Ինչի՞ են եկել, ո՞ւր են գնում»,— ասես հարցնում էին նրանց հայացքները։ Իսկ առաջնորդող հեծյալներից ո՞վ կարող էր ճանապարհից սլացավ դեպի իշխանի վրանը։

Եկողներին նկատելով՝ իր վրանից դուրս եկավ ինքը Կամսարականը՝ ռազմի կիպ հագուստներով և երկար, մինչև ծնկները հասնող մուկերով, սաղավարտը գլխին։ Կաթողիկոսին ճանաչելով՝ նա սաղավարտը վերցրեց, խոնարհումով համբուրեց նրա աջը, ապա օգնեց ձիուց իջնելու։ Նույնն արին և նրա մոտ գտնվող նախարարները, որոնք դուրս էին եկել վրանից։ Իրենց ձիերից իջան նաև եպիսկոպոսներն ու վարդապետները, իսկ դպիր Փավստոսը, ինչպես թագավորի վրանի մոտ, այնպես էլ այստեղ, նախ գավազանը տվեց կաթողիկոսին, ապա շտկեց նրա փեշերը։

Ներսեսը մի հայացքով նկատեց, որ Կամսարականի տեսքն ավելի խոժոռ էր, քան անցյալ տարի՝ Գառնի եկած ժամանակ։ Նա մինչև իսկ զրահներ էր հագել վերնոցի տակ։ Այդպես զրահների մեջ էին և նրա վրանից դուրս եկողները։

— Ահա, տեր հոգևոր, ուր հասցրեց Արշակի համառությունը,— խոսեց Կամսարականը վրդով։— Ես զգուշացրի հրովարտակի հետևանքներից, վկա ես ինքդ, քահանայապետ։ Բայց նա արհամարհեց և շարունակեց հրապուրել մեր ծառաներին...

Մինչ Կամսարականը խոսելով հրավիրում էր կաթողիկոսին և հարգանքով նստեցնում նրան վրանի բազմոցին, մյուս նախարարներն ու զորականները մոտեցան-խմբվեցին վրանի մուտքի առաջ։ Նրանց հետաքրքրությունը գրգռում էր մանավանդ այն հանգամանքը, որ քահանայապետը գալիս էր թագավորի մոտից։ Ինչո՞ւ էր եկել արդյոք, ի՞նչ լուր էր բերել, ի՞նչ էր խոսել թագավորի հետ կամ ի՞նչ էր ասել թագավորը,— կարդացվում էր բոլորի դեմքին։

Այս ընդհանուր հետաքրքրությունը նկատելով՝ Կամսարականը հարցրեց.

— Հայր հոգևոր, իմ բարեկամներս կարո՞ղ են ներկա լինել մեր զրույցին։

— Կարող են ամենեքյան,— թույլատրեց Ներսեսը։— Ես գաղտնիքներ չեմ խոսելու, տեր Կամսարական։

Այսքանը բավական եղավ. անմիջապես իրար հետևից ներս մտան Վահևունյաց Վահե իշխանը՝ իր ծուռ քթով ու խուզարկու աչքերով, Համունի իշխան Դանիելը, որ եղբոր մահից հետո ինքն էր համարվում տոհմի տանուտերը, Բասենի Մանեճը, Վանանդի տերը և մյուսները։

— Ժամանումս բարենպատակ է, իշխան,— սկսեց Ներսեսը խոշոր թափանցող աչքերով հավաքվածներին զննելով և նրանց հարցասեր հայացքները տեսնելով։— Իբրև քրիստոնեից հովիվ՝ եկել եմ ձեզ հաշտություն խոսելու և, հուսով եմ, որ կանսաք ձեր քահանայապետի խոսքը։

Ներսեսն այստեղ խոսում էր ավելի ազատ, քան թագավորի մոտ. խոսում էր հեղինակավոր շեշտով, իբրև մեծ և հրամայող, որին տհաճ է այն, ինչ կատարվում է, ինչ անպատվաբեր, անվայել է քրիստոնյաներին։

— Հաշտությո՛ւն։ Ցանկալի, բայց ուշացած ցանկություն,— ասաց Կամսարականը։— Ի՞նչ պայմանով սակայն, տեր հոգևոր,— հետաքրքրվեց նա փոքր լռելուց հետո, հարգալից ուշադրությամբ նայելով կաթողիկոսի հոգնած, խորշոմած դեմքին։

— Պայմանը, իշխան սիրելի, կլինի այն, որ դու և զինակիցներդ թողություն խնդրեք արքայից՝ քաղաքը վնասելու համար և հայտնեք հնազանդություն։

Կամսարականն ուշադիր նայեց նախ կաթողիկոսին, ապա իր զինակիցներին. սրանք ամենքը լուռ էին, բայց մտահոգ։ Կամսարականն ասես հասկացավ նրանց և ասաց առվայրկյան լռելուց հետո, կարծես փորձելու համար։

— Իսկ խորքում խաբեություն չկա՞, տեր հոգևոր։

Ներսեսը գլուխ բարձրացրեց։

— Երբեք, իշխան, չեմ եղել ես խաբեության գործիք, և չեմ լինի ցմահ,— ասաց նա գրեթե վիրավորված։— Մի՞թե Կամսարականաց տերը այդպես է ճանաչում իր քահանայապետին։

— Լիովին հավատում եմ քեզ, հայրապետ,— ասես արդարանալ ուզեց Կամսարականը,— սակայն Արշակն ինքը...

Այս անգամ Ներսեսը հերթով նայեց գորգին նստած իշխաններին և ասաց հանդիսավոր շեշտով.

— Ես արքայական խոսք եմ առել, տեր Կամսարական, և երաշխավոր եմ։ Ահեղ դատաստանին պարտական կլինի, եթե...

— Իսկ ճշմարի՞տ է, քահանայապետ, որ Արշակը վրացական գնդեր է բերում մեր դեմ։ Եթե այդպես է՝ մենք վար չենք դնի մեր զենքը։

Ներսեսը քաղաքագետ էր և հոգեբան. գիտեր ո՞րտեղ ի՞նչ պիտի ասի։

— Այո, լսել եմ, որ եթե կռիվը շարունակվի, մտադիր է բերել գնդեր վրացական...

Ու շարունակեց այս ոգով։ Ինքը արքային համոզել է արդեն, որ ներքին կռիվները կվնասեն երկուստեք, ուստի պետք է մեծահոգի լինի և այլն։

Ներսեսը ոգևորված էր իր առաքելությամբ. եղբայրասպան սրերը գնել պատյան—կա՞ր դրանից ավելի մեծ, քրիստոսավայել գործ,— մտածում էր նա,— մի գործ, որ կբարձրացներ իր անունը «յաչս ժողովրդյան»։ Եվ մինչ նա խոսում էր՝ Կամսարականն ու իր համախոհները անխոս հետևում էին նրա խոսքին, իսկ երբ նա վերջացրեց, ամենքը գրեթե միաժամանակ նայեցին իրենց առաջնորդ Կամսարականին, ասես դեմքից գուշակելու նրա միտքը, իրենք ևս, մտքերի մեջ խորասույզ, թվում էր կշռադատում էին կաթողիկոսի առաջարկը, թե լավ կլինե՞ր արդյոք ընդունել այն... մանավանդ որ կաթողիկոսն ասաց և այն, թե նախարարները չպետք է մոռանան, որ թագավորն ավելի զորք ունի, քան իրենք, ավելի փորձ կռվողներ, քան իրենք. որ Արշակն ի վիճակի է անգամ զորագնդեր բերելու Վրաց աշխարհից...

Կաթողիկոսի խոսքից հետո լռություն իջավ. այժմ յուրաքանչյուրը խորհում էր մեկուսի և երբեմն նայում հարևանին։ Ինքը Կամսարականը մի քանի վայրկյան շոշափեց մորուքը մտածումների մեջ և, ասես անհարմար լռությանը վերջ տալու համար, հարցրեց.

— Իսկ այսուհետ Արշակը չի՞ պահանջի մեր բերդերը, մեր մարդերը։

Իսկ ծեր Վահևունին վրա բերավ ծուռ քիթը հեգնանքից ալեզի ծռելով.

— Ու նորից չի՞ փորձի կարճել մեր իրավունքները...

Այս հարցումները բացին մյուսների բերանը, և իրար հետևից խոսեցին բոլորը՝ իրենց իրավունքների, կալվածների, ծառաների անձեռնմխելիության մասին... Ներսեսը թեև այս հարցերի մասին չէր խոսել թագավորի հետ, բայց անհրաժեշտ համարեց ասել.— Ես անշուշտ եմ, որ արքան այսուհետև բնավ չի լինի խիստ, քանզի հաշտություն՝ նշանակում է՝ մոռանալ հինն ու հին պահանջները և խորհել արդարն ու ցանկալին։

Նորից լություն իջավ. թվում էր՝ մարդիկ ասելիք չունեին կամ չգիտեին ինչպես ասեն, և առաջինը դարձյալ Կամսարականը եղավ, որ անսպասելի ելնելով տեղից, ասաց.

— Քահանայապետ, դու հանգիստ առ սուրբ հայրերի հետ՝ մենք շուտով կբերենք քեզ մեր պատասխանը։

Նոր էր Կամսարականը դուրս փնացել, երբ վրան մտան կաթողիկոսի ուղեկից եպիսկոպոսներն ու վարդապետները։ Նրանց համար բերին ուտելիքներ՝ սկուտեղների վրա շարած։

Մինչ հոգնած եկեղեցականները անխոս ճաշակում էին բերածը, նախարարները հեռու մի վրանում քննում էին հաշտության խնդիրը. նրանց ձայները, թեև խուլ ու կցկտուր, հասնում էին երբեմն ճաշողներին, բայց թե ի՞նչ էին խոսում՝ հնարավոր չէր գոկել ոչինչ... Նախարարների խորհրդակցությունը իրոք երկար չտևեց. շուտով եկավ Կամսարականը Վահևունի իշխանի հետ և հայտնեց յուրաքանչյուր բառը շեշտելով.

— Ձեր հոգևոր, մենք պատրաստ ենք հաշտության, միայն թե թագավորի խոսքը լինի անտերեր։

— Այո՛,— ավելացրեց Վահևունին մեծաշեշտ։

Ներսեսը բարձրացրեց աչը.

— Վստահեցեք ձեր հոգևոր տիրոջը։ Եթե չունենայի երաշխիք հաստատուն, չէի միջամտի բնավ։ Պայմանների մասին՝ հետո։

— Սակայն, քահանայապետ,— խոսեց նորից Վահևունին,— նախ մի պայման։ Եթե ինքդ մասնակից լինես՝ կհո-

ժաթենք գալ և հաշտություն խոսել Արշակի հետ։ Այլապես՝ կմերժենք։ Արշակը մեզ չի լսի և...

— Երկյուղդ իզուր է, իշխան։ Ես կներկայեմ բանակցությանը և թույլ չեմ տա անարդար գործ...

Հոգևոր պետի խոսքը Հայոց Աշխարհում թե օրենք էր, թե երաշխիք, մանավանդ, երբ ասում էր, թե ինքը պատասխանատու է ռառաջի մարդկան և աստուծոյ։

Այս խոսքերից հետո Կամսարականն ու Վահևունին գլուխ իջեցրին կաթողիկոսի առաջ, և նա աջով խաչակնքեց նրանց։

Իսկ մի ժամ հետո Ներսեսը իր շքախմբով, նրանց հետ և Կամսարականի բանագնաց իշխանը՝ Կարուց նախարար Զաքարեն, հասան թագավորի վրանը և հայտնեցին, թե հակառակորդ նախարարները վար են դնում իրենց զենքը և համաձայն են հաշտության։

Արշակը խոժոռ նայեց կաթողիկոսից հետո այս խոսքն ասող բանագնաց իշխանին և ասաց.

— Բարի է։ Ընդունում եմ պարտազանցներիդ հնազանդությունը և նույնպես դադարեցնում մարտը։

Նա ցանկացավ ավելացնել, թե հաշտության նախապայմանն է, որ նախարարները գան ներում խնդրեն և հանձնառու լինեն քաղաքը վերակառուցելու։ բայց զսպեց իրեն և դարձավ թիկնապահ սեպուհներից մեկին.

— Հրամայիր՝ թող շեփորեն զինադադար...

Զինվորի համար աշխարհում չկա երևի ավելի հաճելի և ավելի երջանիկ պահ, քան զինադադարի շեփորը. ինչպիսի՜ հույզեր, հույսեր ու երազներ են զարթնում նրանց հոգում...

Երբ արքայական բանակում հնչեց առաջին շեփորը և նրան արձագանքեց նախարարների բանակից նույնպիսի մի տևական ձայն, զինվորները նետեցին իրենց աղեղներն ու նիզակները, օր ու գիշեր իրենց հոգնեցնող այդ զենքերը, ու փարվեցին իրար, փարվեցին իրենց Հիերին՝ այնպիսի գորովով, ասես հանդիպել էին երկար անջատումից հետո։ Ապա, չգիտես ինչպես, այդ երեկո, ի նշան զինադադարի, երկու հակառակորդ բանակում էլ, ինքնաբեր, առանց հրամանատարների թույլտվության, մի քանի կետերում միաժամանակ վառվեցին խարույկներ, որ ոսկեղեն բոցերով թրատում էին

մութը և լուսավորում խավար գիշերը։ Խարույկների հետ միասին երկու բանակում ևս բարձրացան երգի ու նվագի ձայներ, որ լցնում էին հովիտն ու միջոցը և կենդանացնում գիշերը։ Թվում էր հեթանոսական մի գիշերատոն է կատարվում Կոգի հովտում։

Զինադադարի լուրը շեփորի ձայնով հասավ և գյուղերը ու ամենքին համակեց ցնծություն. մոտիկ Արանց շենում կին, մարդ, երեխա բարձրանում էին կտուրները և դիտում խարույկները... Իսկ թե ի՞նչ էր կատարվում մյուս շեներում՝ չէր երևում ոչինչ. բայց շուտով դա հայտնի դարձավ նրանով, որ շինականները ոչխարներ բերին խարույկների մոտ։

— Ձեզ ընծա, եղբայրներ... Նզո՛վք պատերազմին...

Այդ գիշեր բոլորի հետ միասին, գուցե բոլորից ավելի ուրախ էր Վարդանի Հուսիկը։ Նա խանդավառ նայում էր գիշերի մեջ վառվող խարույկներին և շուտ-շուտ քաշում հոր փեշը.

— Պապո, էլ կռիվ չի՞ լինի։

— Չէ, տղաս, վերջացավ։

— Հիմա կերթա՞նք մամոյի մոտ։

— Հապա՞. պիտի գնանք մեր տուն՝ մամոյի մոտ։

Ասում էր Վարդանը, բայց ինքն էլ չգիտեր, թե հիմա ո՞ւր կլինի «մամոն»— քաղաքո՞ւմ՝ իրենց նոր տանը՞, թե... Վարդանը լսել էր, որ շատ ընտանիքներ տարվել են գերի, շատերը գերի ընկնելու վախից թողել-հեռացել էին քաղաքից, իսկ ոմանք սպանվել էին կռվի միջոցին՝ այն իսկ ժամանակ, երբ կռիվը փոխադրվել էր քաղաքի մեջ, որ կանայք նույնպես կռվում էին եկվորների դեմ՝ կտուրներից, պատերի հետևից քարեր նետելով...

Ուրախ էր և Թորգոմը, բայց միայն նրա համար, որ վաղը, մյուս օրը կերթա քաղաք և կպարզի, թե ո՞ւր են յուրայիններ։ Վարդանի պես նա ևս չգիտեր ո՛ւր կլինեն նրանք. քաղաքո՞ւմ արդյոք, հեռացե՞լ են, գուցեև տարվել գերի։ Բայց սխուր էր, որ նախարարները մնացին անպատիժ. գոնե մեկը նրանցից ընկներ նետահար։ Նա այդպես էլ ասում էր ընկերներին.

— Ափսո՛ս, թագավորը պետք է պատժեր քաղաքն ավերող չարերին։ Ափսո՛ս...

— Հազար անգամ,— ասաց Հովսեփը։— Թագավորը նրանց պիտի կախեր քաղաքի մեջտեղ, որ ամենքը տեսնեին, թե ո՛վքեր են Արշակավան ավերողները...

Բանակում, բացի Թորգոմից ու ընկերներից, կային և շատ ավանցիներ, որ կռվելով եկել-մնացել էին զորքի մեջ։ Նրանք ևս գոհ չէին, որ թագավորը հաշտվել է նախարարների հետ։ Ուրեմն ներո՞ւմ է թագավորը նրանց արածները. բացատրել չէին կարողանում, թե ինչո՛ւ։ Մի՞թե թագավորի ուժն է պակաս, թե՞...

Այս ծանր մտքերի մեջ Թորգոմին ուրախացնում էր միայն մի բան, այն, որ քաղաքի կռվի ժամանակ թե՛ ինքը, թե՛ ընկերները ողջ մնացին և գերի չընկան, այլապես ի՞նչ կլիներ իրենց ընտանիքների վիճակը... Ի՞նչ պիտի աներ մայրը առանց իրեն. ի՞նչ պիտի աներ Մինան ծեր հոր հետ... Իսկ երբ այս մտածումներից սթափվում էր՝ նա հարցնում էր ինքն իրեն. «Բայց արդյոք որտե՞ղ են հիմա»...

Զորքի ուրախ աղաղակները հասնում էին Արշակ թագավորի վրանը. վարագույրը ետ քաշած մուտքից նա տեսնում էր ոսկեցոլուն բոցերով խարույկները, որ տատանում էին մութը. լսում էր իրար ընդմիջող և գիշերը պատռող երգերն ու նվագները, բայց նրա դեմքի և ոչ մի մկանը ուրախություն չէր արտահայտում։ Ընդհակառակը. նա լարված էր, մինչև իսկ մռայլ։ Նրան զբաղեցնում էին ծանր մտքեր։ Հակառակորդները թեև ներում էին խնդրում և հնազանդություն հայտնում, բայց նրա բարկությունն ու զայրույթը չէր գոհանում դրանով։— Եթե նրանք ժամանակին չկատարեցին իր պահանջները՝ բերդեր ու զինվոր տալու—դա սովորական էր և հասկանալի, ուստի և քիչ էր վրդովում։ Սակայն այս, որ նրանք ավերել են տարիների ջանքով կառուցած քաղաքի թաղերը, գրա ցավը փոխվում էր զայրույթի։ Թվում էր նրան, թե խորտակել են իր պետության հիմքը, երկիրն ամրացնելու իր բոլոր երազները...

Ո՞վ հղացավ արդյոք իր քաղաքն ավերելու, հրդեհելու միտքը. Կամսարական Նա՞ը, թե ուրիշ մեկը... Այս հարցումը նա չէր կարող անել որևէ մեկի. այս մասին չէր կարող խոսել որևէ մեկի հետ... Բայց մտքերը տանջում էին նրան

Թե՛ վրանում և թե՛ այն ժամանակ, երբ դուրս էր գալիս վրանից։ Լավ էր, այո, որ լսեց կաթողիկոսի խորհուրդը և դադարեցրեց կռիվը. բայց Ավա՞նը, բայց ապագա բե՞ռդը... Ո՞վ պիտի հատուցի իր կորուստը... Ինքը, այո, չուզեց հանցապարտների պատճառով կոտորել զինվոր ու ժողովուրդ, բայց քաղաքն ավերողները մի՞թե պիտի մնան անպատիժ... Ճշմարիտ է, ինքը անձնապես պարտված չէ աշխարհի առաջ. ինքը մեծահոգի եղավ... Բայց քաղա՞քը, բե՞ռդը...

Ու խորհեց Արշակը երկար, խորհեց մինչև գիշեր, խորհեց մինչև լուսաբաց, իսկ առավոտյան սենեկապահ Եզնիկին հրամայեց հրավիրել կաթողիկոսին իր վրանը։ Եվ երբ նա եկավ՝ թագավորը նստեցրեց նրան իր դիմաց և ասաց.

— Տեր քահանայապետ, մենք վար դրինք մեր զենքերը և վերջ դրինք կռվին եղբայրասպան։ Սակայն, խորհում եմ, որպեսզի մեր հաշտությունը լինի կատարյալ և տևական, լավագույնս է, որ մենք՝ ես և ինձնից դժգոհ նախարարները ժողովվենք ի մի և անձամբ-անձին խոսելով գանք մի իրավախոհության, որ հաշտ լինենք ընդմիշտ և, նախնյաց օրինակով մեր հաշտությունը կնքենք երդումով, որպեսզի նորա լինեն թագավորին հնազանդ, իսկ թագավորը՝ նոցա հովանավոր հայր։

— Իրավացի ես, արքա, —համաձայնեց ներսեսը։— Ինքս այլ կերպ չեմ խորհում։ Անտարակույս, որպեսզի հաշտությունը լինի կատարյալ՝ պետք է հանդիպել, երդվել սուրբ խաչով և....

— Եվ որպեսզի, տեր հոգևոր,— ընդմիջեց Արշակը,— մեր հաշտությունը իրոք ծառայի իր նպատակին, երեկվան մեր զրույցից հետո ես խորհեցի, որ լավագույնս կլիներ, որ թե՛ կամսարական իշխանը և թե՛ մյուս նախարարները հաշտություն կնքելու գան իրենց որդիներով, տոհմակիցներով, որպեսզի նրանք ևս ընդունեն երդումը և երդմնազանց չլինեն նրանք։

— Բարի է, արքա,— կրկին համաձայնեց կաթողիկոսը։

— Այդպես,— զրույցը փակեց Արշակը։— Հաշտություն խոսելու համար կարող ենք հանդիպել տասը օր հետո։

Կաթողիկոսը համաձայնեց և նույն օրը եպիսկոպոսներով

վերադարձավ իր նստավայրը։ Եվ տեղ հասնելու գիշերն իսկ նրա դպիր Փավստոսը գրեց իր մատյանում.

«Տերն մեր Քահանայապետ Մեծն Ներսես հաշտություն խոսեց Արշակ արքային և նախարարաց մերոց, և ամենեքյան սուրը դրին ի պատյան և եղավ ցնծություն մեծ։ Աղոթենք և հուսանք, որ տևական ու մշտնջենական լինի խաղաղությունը Աշխարհիս Հայոց»...

Զինադադարից հետո ամենքն սկսեցին ցրվել. թագավորն իր մայրաքաղաքը, նախարարները՝ իրենց ոստանները։ Նրանց հետ և իրենց զորքերը։ Իսկ այն քաղաքացիները, որ միացել էին արքունի զորքին, խմբերով վերադարձան քաղաք. այնտեղ շտապեցին նաև Թորգոմն ու ընկերները։

Կռվի ժամանակ նրանց տվել էին ընկած զինվորների ձիերը։ Երբ պատրաստվում էին մեկնելու, հարյուրապետից հարցրին, թե ո՞ւմ պետք է հանձնեն ձիերը։ Հրամանատարը պատասխանեց.

— Տարեք ձեզ։ Դուք արժանի եք այդ ձիերին...

Եվ նրանք դարձան ձիու տեր։

Մեկնելիս Վարդանը Հուսիկին նստեցրեց իր ձիու գավակին և պատվիրեց, որ չընկնելու համար գրկի իր մեջքը։

— Գնանք ուտենք մամոյի եփած կերակուր,— ասաց Հուսիկը, երբ արդեն ճանապարհ էին ընկել։

«Բայց մամոն արդյոք կլինի՞ այնտեղ»,— մտածեց Վարդանը տարակուսով։

Նույնպիսի տարակույսի մեջ էին և Թորգոմն ու Հովսեփը։

* * *

Զինադադարից երեք օր հետո հեռավոր Տայքի իր ոստանից եկավ Վասակ սպարապետը և նույն օրը ներկայացավ թագավորին, որը նույնպես նոր էր վերադարձել մայրաքաղաք։

— Ինչպիսի՞ աղետ, արքա,— ասաց նա հուզված,— և ո՞վ նյութեց այս ամենը։

Արշակը շուրթերը սեղմած նայեց իր կարճահասակ, բայց ուժիկ մարմնով սպարապետին և ասաց.

— Հավանաբար բացակայությունդ, սպարապետ, ոգի տվեց ապիրատներին և նոքա կամեցան վրեժխնդիր լինել ինձնից։

Վասակը զարմացած աչքերը սևեռեց թագավորի երեսը։

— Ուրեմն, արքա, մեղավորը ե՞ս եմ իմ բացակայությամբս։

— Ամենևին, սպարապետ։ Կամիմ ասել, որ քո երկյուղից սինլքորները չէին համարձակվում անել մի ինչ, բայց հեռացար՝ հանդգնեցին և սուր բարձրացրին Ավանիս վրա։

Արշակի խոսքերը թեև շոյեցին սպարապետի ինքնասիրությունը, բայց և այնպես թագավորի բացատրությունը չգոհացրեց նրան։

— Ես միշտ խնդրում էի, արքա, որ խստությունը կունենա ծանր հետևանքներ...

Թագավորն աչքերը ոլորեց մի երկու անգամ և ապա ասաց հանգիստ.

— Եթե նոքա, սպարապետ, չհարձակվեին Ավանիս վրա՝ մի՞թե ես կցանկանայի սուր վերցնել նոցա պատժելու։ Սակայն դա անցավ և այլևս չի կրկնվի, քանզի մենք հաշտված ենք արդեն...

Արշակի շուրթերի անկյուններում խաղաց հազիվ նշմարելի մի հեգնանք։

— Գոհանանք, արքա, որ վերջացավ այդպես։ Կարող էր լինել վատթարը... Այո, արդեն խսկ լսած եմ, տակավին ճանապարհիս, որ հանցավորները պիտի գան հաշտության և հնազանդության։ Դա խելամտություն է։

— Անտարակույս,— համաձայնեց թագավորը և, ասես չկամենալով զրույցը շարունակել այդ խնդրի շուրջը, հետաքրքրվեց սպարապետի առողջությամբ, ապա ցանկացավ պարզել՝ մնալո՞ւ է նա մայրաքաղաքում, թե նորից պիտի մեկնի իր ոստանը։

— Պիտի մնամ, արքա, որպեսզի չկրկնվեն նման ընդհարումներ անցանկալի, որ վնաս բերելով երկրիս, բարոյալքում են նաև զորքը,— ասաց սպարապետը վշտաշեշտ։

—Հուսամ՝ չի կրկնվի, սպարապետ։ Եղիր վստահ. ուստի կարող ես կրկին մեկնել հանգստի։ Առողջությունդ թանկ է ինձ...

Սպարապետին տարօրինակ թվաց, որ արքան չուզեց ոչ մանր պատմել կուվից, ոչ էլ հարցնել իր կարծիքը հաշտության պայմանների մասին, այլ միայն հոգում է իր հանգիստը։ Չէ՞ր կամենում, որ ինքը մնա և մասնակցի հաշտության, թե սխալ հասկացավ, գուցեև թվաց իրեն, ուստի և հանգիստ ասաց.

— Կուզեի մնալ հաշտության հանդիսին, արքա։

Արշակը զննաբար նայեց սպարապետին։

— Ազատ ես և գնալ, Մամիկոնեից տեր։ Պարտադիր չէ, որ ներկա լինես, զրկելով քեզ հանգստից։

Վասակը գարձյալ զարմացավ, որ թագավորը չի հրավիրում իրեն ներկա գտնվելու մի այդպիսի կարևոր հանդիսի, ինչպիսին հաշտության ծեսը պիտի լիներ իր և նախարարների միջև։ Վասակին թվում էր, որ ինքը անհրաժեշտաբար պիտի վկա լիներ այդ ծեսին, սակայն ինչո՞ւ թագավորը կարևոր չէր համարում... Դա թեև տարօրինակ թվաց Վասակին, բայց չասաց ոչինչ... ու միայն աչքը բարձրացրեց զինվորականին հատուկ ձևով և՝

— Ողջ լեր, արքա,— ասելով՝ վիրավորված դուրս եկավ գահասրահից, մտքում որոշելով այնուամենայնիվ գնալ ներկայանալ հաշտության ծեսին և շնորհավորել։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Այս զրույցից յոթ օր հետո Երասխաձորի հին ճանապարհով խումբ-խումբ հեծյալներ, աշնան փոշոտ գետինը դոփելով, գնում էին դեպի հայոց հնագույն մայրաքաղաքը՝ Արմավիր, հատկապես դեպի նրա լքված պալատը, որ գտնվում էր սոսիների հին անտառում և շրջապատված էր հնաձև, տեղտեղ քարերն ու աղյուսները թափած պարսպով։ Հեծվորների մեջ կային թե տարեց, թե երիտասարդ մարդիկ՝ իշխաններ, սեպուհներ ու թիկնապահներ։ Բոլորը ուժակորով նժույգների վրա, բոլորը շքեղ հագնված, բայց լրջադեմ... Հագուստները տոնական էր, իրենք՝ մտահոգ։

Սոսիների այդ հին անտառում, համատարած կանաչության մեջ կային արդեն վաղ աշնան գույներ՝ դեղին, նարինջ

ու բաց կարմիր տերևներ։ Կային այդտեղ և շատ թռչուններ, որ խմբերով ու մենակ երգում էին անտես, տերևների մեջ թաքնված, բայց գրանք այլևս չունեին դարձան երգերի գոհունակ ու տևական գեղգեղանքը. դրանք կարճ, տենդային ձայնարկումներ էին, գուցեև մոտալուտ հրաժեշտի հնչյուններ, որոնց մեջ և՛ տխրություն կար, և՛ թախիծ, ինչպես ծառերի դեղնած տերևների մեջ։

Հին պալատը, որի պատերն անձրևներից ծեփաթափ էին ու խիմած, պատուհանները սարդոստայն կապած և միշտ անբնակ ու ամայի, սովորաբար պահպանվում էր մեկ-երկու պահակով, այսօր սակայն արտակարգ կենդանություն կար նրա առաջ, նրա շուրջը։ Կային ծառայության պատրաստ սպասավորներ, որ եկողներին ընդունում էին հարգանքով։ Այս բանում ավելի հոգածու էր նրանց ավագը, կամ, ինչպես իրենք էին ասում, արարոզապետը, ծազկած մորուքով մի հսկա, որ անձայն, միայն աչքով-հոնքով կարգադրություններ էր անում շարունակ։ Այն ժամանակ, երբ սպասավորները հյուրերի թիկնապահների օգնությամբ նրանց ձիերը առնում-տանում էին պալատից հեռու գտնվող արքունի ախոռը, արարոզապետը հյուրերին առաջնորդում էր պալատ, որի ընդարձակ սրահներում պատերի երկարությամբ դրված էին գորգածածկ բազմոցներ, իսկ հատակին փռված գորգերի վրա՝ պես-պես գույնի խոշոր բարձեր, որոնք փոխարինում էին նստարանների։ Սրահներում կային և փայտե նստարաններ ու սեղաններ, բայց ավելի աչքի էին ընկնում գորգերն ու բարձերը։

Ներս մտնելով՝ հյուրերը հանում էին ճանապարհին փոշոտված վերնոցները և տեղավորվում բազմոցների ու բարձերի վրա՝ հոգնությունից հանգիստ առնելու. կային և այնպիսիներ, որ միառժամ քայլում էին սրահի երկարությամբ՝ ձիու վրա անշարժ պահած ոտքները բացելու և իրենց կարգի բերելու։

Հեծվորները գալիս էին հեռվից, և բոլորն էլ թվում էին հոգնած ու ինչ-որ սևեռուն մտքերով տարված։ Սպասավորները թեև շատերին նոր էին տեսնում, բայց արդեն գիտեին, թե ովքե՛ր են և ինչի՛ են գալիս։ Նրանց ասել էին, թե դրանք այն ապստամբ նախարարներն են, որ հարձակվել էին Ար-

շուկավանի վրա և կռվել թագավորի դեմ. այժմ թագավորի և Ներսես կաթողիկոսի հրավերով գալիս էին հաշտության, ավելի շուտ՝ փոխադարձ երդման ծիսակարգ կատարելու։

Գալիս էին ոմանք որդիների հետ, ոմանք՝ թիկնապահներով, բայց ամենքը միատեսակ լուրջ ու հետաքրքիր նայվածքներով։

Եկողներից առաջինը Կամսարական Նար իշխանն էր՝ իր հինգ եղբոր և չորս որդիների հետ։ Նա արդեն ներսը դիտում էր պալատի հին կահերն ու խունացած որմնանկարները, որոնք ներկայացնում էին բացառապես որսի տեսարաններ և ինչ-որ ծառեր. դիտում էր մաշված քանդակները, որոնք հիշեցնում էին խաղող, նուռ և սերկևիլ... Նար իշխանը թեև հանգիստ էր առերևույթ և լայնաբաց աչքերով նայում էր պատերին, բայց ներքուստ թվում էր լարված. նրան զբաղեցնում էր առաջիկա հաշտության խնդիրը.— Ինչպե՞ս պիտի լիներ դա. ի՞նչ պայմաններ կառաջարկի թագավորը, և արդյոք ընդունելի՞ կլինեն դրանք, թե ոչ... Նա դժվարանում էր պատկերացնել հաշտության պայմաններն իր բոլոր մանրամասներով, ուստի և մտահոգ էր. սակայն այն հանգամանքը, որ հաշտության միջնորդը կաթողիկոսն էր, Նար իշխանը կարծում էր, թե Ներսեսն իր միջամտությամբ կգտներ եզր հաշտության... Նար իշխանն ինքը թերևս չհավատար թագավորի հաշտության առաջարկին, բայց քանի որ այդ առաջարկը եկավ Ներսեսից, նա չէր կարող մերժել։ Ճշմարիտն ասած՝ Նար իշխանին երկյուղ ազդեց Ներսեսի այն խոսքը, թե արքան կամենում է անգամ վրաց զորք կանչել և կռիվն ավարտել կարճ միջոցում... Այս հեռանկարը Նար իշխանին թելադրեց այն միտքը, թե այդ պարագային ինքն ու իր կողմնակիցները չեն կարող դիմագրավել, և ամեն ինչ կարող է կորչել, ուստի և լավագույնը կլինի հաշտվել առանց մեծ կորուստների։ Այս հարցում նրան համամիտ եղան համախոհ նախարարները։

Հաշտության այս առաջարկի մասին Կամսարականը կարևոր չհամարեց հայտնել Մերուժանին, լավ իմանալով, որ նա պիտի պահանջեր շարունակել կռիվը, այնինչ ինքն իր զինակիցներով այլևս ի վիճակի չէր շարունակելու, քանզի

ունեցել էին շատ կորուստներ թե՛ ինքը և թե՛ բարեկամ նախարարները՝ Վահևունին, Բասենի տերը, Վանանդի իշխանը և մյուսները։

Այս ամենից հետո լավ էր իհարկե պատվավոր մի հաշտություն, ինչ երաշխավորում էր քահանայապետը։ Բայց այժմ դրան համաձայն կլինե՞ր արդյոք Արշակ թագավորը... Այդ հարցում, իշխանին թվում էր, վճռական դեր պիտի կատարեր դարձյալ կաթողիկոսը, որպես հաշտարար և դատավոր, որի խոսքը պարտավորիչ պիտի լիներ կողմերի համար, մանավանդ նա ինքը պիտի կատարեր հաշտության ծեսը... Այո, ամեն ինչ լինելու էր նրա ներկայությամբ ու մասնակցությամբ։ Իսկ եթե թագավորն առաջադրի ծանր, աննպաստ պայմաններ,— շարունակում էր մտածել Նար իշխանը,— այդ դեպքում ինքը կարող է հրաժարվել, պարզապես չընդունել անպատվաբեր հաշտություն և նորից զինակիցների հետ վերադառնալ իր ոստանը և անգամ, եթե հարկը պահանջի, շարունակել կռիվը և նոր օգնություն խնդրել Մերուժանից։

Երկրորդ նկողը եղավ Բասենի տեր Մանեճը՝ իր միակ որդու հետ. իսկ երրորդը՝ Վահևունյաց իշխան Վահեն՝ իր երկու որդու և մի քանի թիկնապահի հետ։ Ներս մտնելով և, ծուռ քիթը մի կողմի վրա բռնած, նա անմիջապես մոտեցավ Կամսարականին և սկսեց, առանց ողջույնի, ասես ընդհատված մի զրույց.

— Ի՞նչ ես խորհում, իշխան, Արշակի հաշտությունը կլինի տևակա՞ն, թե առժամյա։

Բարձրահասակ Նար իշխանը վերևից նայեց իր կարճ բարեկամին.

— Գուշակել դժվար է, տեր Վահևունի,— խոսեց նա մտախոհ։— Այդ կպարզեն մեզ արքայի պայմանները։

— Անշուշտ,— վրա բերավ Վահևունին։— Բայց և այնպես,— շարունակեց նա անհանգիստ,— եթե Արշակը պահանջի, որպեսզի վերականգնենք իր քաղաքի ավերածը՝ համաձայնե՞նք պիտի։

— Երբե՛ք,— կտրեց Կամսարականը։

— Ես ևս, իշխան, չեմ համաձայնի երբեք։ Նմանապես և մյուս նախարարները։ Երբե՛ք։

Նա շունչ առավ մի վայրկյան և նորից դիմեց Կամսարականին.

— Իսկ եթե պահանջի վերադարձնել գերիներին՝ մեր ծառաներին, համաձայնե՞նք պիտի։

— Երբե՛ք,— նորից կտրեց Կամսարականը։— Մենք զենքով գնացինք այդ ավանի դեմ՝ մեր ծառաներին վերադարձնելու և ոչ թե նորեն թագավորին հանձնելու համար։ Երբե՛ք...

Բայց Կամսարական իշխանին թվում էր, որ Արշակ թագավորը չի առաջադրի այդօրինակ խիստ պահանջներ, և եթե չառաջադրի՝ կհաշտվեն անշուշտ և ամեն ինչ կլինի հինը, նախկինը. առաջվա պես կվճարեն վաղուց ի վեր սահմանված հարկը արքունի, տասանորդը, կտան հեծյալներ արքունի զորքի համար և... վերջ։

Մտածում էր Կամսարականը թե գրուցելու պահին, թե որմնանկարներին նայելիս. մտածում էր և անհամբեր սպասում ետ մնացած, ուշացող գինակիցներին, թագավորին ու կաթողիկոսին։

Վերջին եկողները եղան Վանանդի Զաքարեն և մյուս նախարարները իրենց որդիների և դարձյալ սակավաթիվ թիկնապահների հետ։

Պալատի հյուրընկալ սպասավորներն անընդհատ ելումուտ էին անում և օգնում եկողներին, ցույց տալով, թե ո՛ւր կարելի է նստել-հանգստանալ, կամ՝ բացատրելով թե պալատի ո՛ր սրահը ինչ է եղել։ Այդ բանում առավել հոդածու էր դարձյալ արարողապետը, որ պատրաստակամ կատարում էր հյուրերի մեն մի ցանկություն։ Հյուրերի այն հարցին, թե ե՞րբ կժամանեն արքան ու կաթողիկոսը՝ նա պատասխանում էր խոնարհումով.

— Շուտով, տեր... Հավանաբար շուտով։

— Կժամանի թագուհի՞ն ևս։

—Հավանաբար,— նորից գլուխ էր խոնարհում արարողապետ հսկան, խնդրելով առայժմ հանգիստ առնել ճանապարհի հոգնությունից, ավելացնելով, թե բացի թագավորից ու կաթողիկոսից, կժամանեն նաև պալատականներ, ավագներ. զուցե հազարապետ Գնունին, թագադիր ասպետ Սմբատ Բագրատունին և ուրիշները։

Եվ, իրոք, հեծյալներ գալիս էին ոչ միայն Երասխաձորի

կեղմից, այլև՝ Վաղարշապատից։ Գալիս էին թե՛ խմբերով, թե՛ միայնակ։ Բայց դրանց մեջ առայժմ չէին երևում ոչ պալատականներ և ոչ ավագներ։

— Հաշտության խոսք պիտի ասի թագավո՞ր, թե որևէ պալատական,— հարցրեց նախարարների հետ եկած սեպուհներից մեկը։

— Ստույգ ասել չեմ կարող,— պատասխանեց արարողապետը։— Գուցե հազարապետը կամ քահանայապետը։

Լսելով այս՝ նախարար և սեպուհ հյուրերը նայեցին իրար, ապա, միմյանց մոտենալով, սկսեցին զրուցել շշուկով. ավելի լավ է հաշտության բանակցությունը վարեր մի պալատական, քան թագավորն ինքը... ծանր կլիներ բանակցել նրա հետ... Բոլորին հետաքրքրում էին հաշտության պայմանները. ինչպիսի՞ն կլինեն... ու դրա համար հաճախ դիմում էին Նար իշխանին, և նա ոմանց պատասխանում էր նույնը, ինչ ասել էր Վահևունուն, իսկ ընդհանրապես ուսերը շարժում էր հանդիստ.

— Սպասենք... Պայմանը հաշտության կլինի ընդունելի՝ կընդունենք, կլինի մերժելի՝ կմերժենք...

Վերջապես հասավ այն ժամը, երբ թագավորը պիտի գար. նրան սպասողները հեռվում տեսան հեծյալ մի զորամաս՝ նետերով, նիզակներով և սրերով զինված։

— Դրանիկ գունդն է, դրանիկ գունդը,— լսվեցին մի քանի ձայներ։

Հյուրերը նույնպես եկողներին ընդունեցին որպես թագավորի թիկնապահ գունդ, որի մի մասը սովորաբար գնում էր առջևից։ Բայց այդ զորամասը, պարիսպներից ներս մտնելով, չկանգնեց մի տեղ, այլ ցրվեց և շրջապատեց պալատի մեծ շենքը, իսկ հեծյալների մի մեծ խումբ ձիերից իջնելով եկավ կանգնեց պալատի մուտքի առաջ։ Ինչպես բոլորը, դրանք ևս զինված էին։ Թվում էր, որ սրանք նույնպես սպասում էին թագավորին և նրա շքախմբին։

Բայց նրանք տակավին չէին երևում, իսկ մուտքը պահող զինվորները միառժամ մնացին անշարժ, ապա, երբ հազարամարմին մեկը, ըստ երևույթին նրանց հրամանատարը, մոտեցավ և շշնջաց ինչ-որ, նրանք երկ-երկու հանգիստ մտան պալատ և ապա սրերը հանեցին մեկեն։

Հյուրերից ոմանց թվաց, թե դա արվում է ի պատիվ թագավորի գալստյան, բայց երիտասարդ սեպուհներից մեկը գոռաց հանկարծ.

— Դա՛վ, դա՛վ...— ու վազեց դեպի իշխան Կամսարականը, որն այդ պահին ներսի սրահներից մեկում նստած էր բարձի։— Պաշտպանվիր, հայր։ Դավ է նյութված...

Հյուրերից միայն Կամսարականը սուր ուներ։ Ջնայած տարիքին ու լեցուն մարմնին՝ նա իսկույն վեր թռավ տեղից և թափով գնաց դեպի մուտքից առաջացող սրավոր զինվորները։

— Ջմոտենա՛լ,— գոռաց նա ահարկու ձայնով։

Եվ խրոխտ ու ահագին, սուրը հարվածի պատրաստ՝ կանգնեց սուսերամերկ զինվորների առաջ։ Նրա դեմքն այլափոխվել էր, աչքերում խաղում էին դաժանափայլ կայծեր։

Եվ պարզվեց անսպասելի մի տեսարան։

Հարձակման պատրաստվող զինվորները կանգ առան այդ հուժկու, բարկացայտ աչքերով, ահագին կուրծքը ելևէջող տղամարդու առջև, չհամարձակվելով մոտենալ և սուր բարձրացնել նրա վրա։ Բայց դա տևեց միայն մի պահ, մի վայրկյան։ Շուտով սակայն, երբ զինվորների հետևից լսվեց՝ «մահ տիրադավներին, զարկ տիրադավներին»— կատարվեց օտարոտի մի բան. սրերի փոխարեն, սուսերամերկ զինվորների արանքով դեպի Կամսարականը մեկնվեցին տասից ավելի նիզակներ և ամեն կողմից շամփրեցին իշխանին... Երբ նա ընկավ՝ սրահում բարձրացավ անասելի աղմուկ, որի մեջ հազիվ ջոկվում էին հատ-հատ բառեր.

— Դա՛վ, դա՛վ... Օգնեցե՛ք... Ո՞ւր են թիկնապահները...

Հյուր եկած Կամսարականները, առաջինը, անզեն նետվեցին հարձակվողների վրա. փորձեցին խլել նրանց սրերը։ Նրանցից մեկը վերցրեց ընկած իշխանի տապալված թուրը և սկսեց ճոճել այն իր առջև, չթողնելով մեկը մոտենա իրեն։ Իսկ մյուսները՝ իշխաններ, սեպուհներ պաշտպանվում էին ինչով կարող էին. մեկը փայտե աթոռ էր բարձրացնում հարձակվողի դեմ, մյուսը՝ բարձ, երրորդը՝ կանգնում կամ թաքնվում էր սեղանի հետև, որ սուրը չհասնի իրեն... Մյուսները փախչում էին կից սրահները և դուռը գնում... մի երկուսը կամենում էին բարձրանալ պատուհանները՝ դուրս նետվելու և

թիկնապահներին օգնության կանչելու։ Բայց լուսամուտները փակ էին... Սրավորները հասնում էին ամենքի հետևից և հարվածում անխնա... Միայն հոր սուրն առած Կամսարական երիտասարդն էր, որ չէր ընկճվում տակավին. նա, գրեթե պայթող աչքերով, երկար սուրը տարուբերում էր իր առջև ու հարվածում յուրաքանչյուր մոտեցողի... Եվ իրարանցման աղմուկը, հարձակվողների գոռոցը և անզեն պաշտպանվողների ճիչն ու աղաղակը, որ լցրել էին սրահները, լսվում էին և դրսում... Թե որքա՜ն տևեց այս ամենը՝ պարզել դժվար էր, բայց մի պահի հանկարծ մուտքից լսվեց մի ահեղ ձայն.

— Դադարեցնե՛լ...

Ձայնը որոտագին էր և ահարկու իր ելևէջներով։

Զինվորները կանգ առան ու ետ նայեցին մի մարդու պես, և ճանաչեցին Վասակ սպարապետին, որը մերկ սուրը բարձր բռնած՝ կանգնել էր պալատի շեմքին որպես զայրագնած մի աստված։

Ոչ ոք չիմացավ, թե որտեղի՞ց հայտնվեց նա. ոչ ոք նրան չէր սպասում, Բայց, ինչպես հետո պարզվեց, նա եկել էր ինքնաբեր, հետաքրքրությունից մղված։ Իմանալով, որ այդ օրը Արմավիրի պալատն են հրավիրված ապստամբ նախարարները՝ հաշտության գործով, Վասակը նախ զարմացավ, որ թագավորն իրեն չհրավիրեց այդ ծեսին, ապա որոշեց գնալ ներկա լինել, քանի որ դա և՛ հետաքրքրում էր, և՛ իրեն պարտավոր էր զգում տեղյակ լինել, թե ի՞նչ է կատարվել և հիմա ինչպե՞ս են հաշտվելու։ Երկու թիկնապահով հասնելով Արմավիրի պալատը՝ նա աղեկտուր ձայներ լսեց ու, իրեն նժույգից ցած նետելով, վազեց առաջ... և այն, ինչ տեսավ, կարկամեց նրան. մի վայրկյանում նա գունատվեց, շառագունեց, մթնեց, և ապա, սուրը հանելով, գոռաց...

Երբ նրա ձայնի վրա ամեն ինչ դադարեց՝ նա մտավ ներս և առաջին իսկ սրահում տեսավ տղամարդկանց դիակներ՝ ընկած երեսն ի վայր կամ մեջքի, իրենց արյան մեջ... Սպարապետը ճանաչեց միայն Կամսարական Նար իշխանի դին, որ փռված էր սրահի մեջտեղը՝ ձեռքերը տարածած, ոտքերը չռած, իշխանական իր ամբողջ հանդերձանքով. բաց էր միայն ալեխառն մազերով գլուխը, իսկ գլխարկն ընկած էր երեք կանգուն հեռու։

Տեսնելով այդ դիակները՝ սպարապետը նորից գոռաց.

— Ո՞վ է համարձակվել... Ո՞ւր է արքան...

Կանգ առած զինվորները ետ-հետ գնացին դեպի պատերը, սրերը ետևները թաքցնելով, իսկ մեկը, որ նրանց պետն էր, նետվեց դուրս այնպես, որ սպարապետն իրեն չնկատի։ Եվ սպարապետն իրոք չնկատեց, որովհետև նայում էր ընկածներին մի խռովքով, որին քիչ է անվանել զայրույթ։ Անցնելով սրահից սրահ, մեռածների ու մահամերձների կողքով՝ Վասակը վերջին սրահում մի սեղանի հետև տեսավ աչքերը լայն բացած և ատամները սեղմած մի երիտասարդի, որ մերկ սուրը բռնել էր գլխից վեր՝ հարվածելու պատրաստ։ Սպարապետին տեսնելով՝ նա պոռաց.

— Ամո՛թ, սպարապետ. ամո՛թ այս ստոր դավի համար։

Սպարապետը գունատվեց, բայց չվիրավորվեց. ընդհակառակը, երիտասարդի համարձակությունը զարմացրեց նրան և ասես գրավեց։

— Մի վախեցիր, երիտասարդ,— առաջ գնաց Վասակը սուրն իջեցրած։— Ոչ ոք չի համարձակվի մոտենալ քեզ։

— Եվ թող մոտենա՝ դավն ու ոճիրը լրացնելու։ Եվ թող նզոված լինիք դուք...

— Հանգստացի՛ր, երիտասարդ, հանգստացի՛ր,— ձայնին ավելի մեղմություն տալով մոտեցավ Վասակը։— Շնորհիր ինձ անունդ։

— Անո՞ւնս... Ի՞նչ կարևոր է քեզ անունս,— ջղաձգվեց երիտասարդի դեմքը։

— Եղիր ապահով, որդիս. դու փրկված ես...

— Քո փրկությունը, սպարապետ, պետք չէ ինձ՝ ծնողիս, հարազատներիս սպանելուց հետո։ Հրամայիր՝ սպանեն և ինձ, կամ ինքդ սպանիր ոճիրդ կատարյալ դարձնելու համար։

Նրան պատասխանելու փոխարեն՝ Վասակը կարգադրեց թիկնապահներին.

— Երիտասարդ սեպուհին տարեք իմ տունս...

Կարգադրեց ու ինքն շտապեց դուրս՝ Թագավորի մոտ գնալու։

Վաղարշապատի պալատը խաղաղ էր։ Թագավորը, որ այդ պահին զրուցում էր Բագրատունի Սմբատ ասպետի և Հայր-

Մարդպետի հետ, սպարապետի անակնկալ մուտքն քնդունեց զարմացած։ Իսկ Վասակը դեռ շեմքից պոռաց ամեն պատշաճավորություն մոռացած.

— Ի՜նչ արիր, արքա՜։ Այս ի՜նչ արիր... Հավիտենական արատ բերիր քե՛զ և մե՛զ։

Արշակը, որ սովոր չէր այդպիսի խոսքերի և այդ ձևով առված, այլագունած նայեց սպարապետի հուզված դեմքին և ակամա ուղղվեց կանգնած տեղում.

— Ես, սպարապետ, այլ կերպ չէի կարող,— ասաց նա սառը ձայնով։— Այս էր պահանջում Հայոց Աշխարհի հանդրստությունը։ Այդպես։

Վասակի հուզված դեմքին գծագրվեց բացահայտ տարակուսանք։

— Մի զարմանար, սպարապետ սիրելի։ Դու իրազեկ չես նոցա եղեռնագործությանց։ Լսած ես, որ Ավանս ավերելուց հետո ես կամեցա իստիվ պատժել նոցա՝ զենքով ելան դեմս. և մենք ճակատեցինք օրերով... ապա քահանայապետի միջնորդությամբ ցանկացան հաշտվել. ես հոժարեցի, իմանալով, որ կստիպեմ նոցա՝ նորոգել իրենց ավերած Ավանը... Սակայն նոքա եղան ուխտադրուժ ու նենգ. ծածուկ կոտորեցին գերի վարած հարյուրավոր մարդիկ, դրանց մեջ նաև Ավանիս շահապ Վարազ իշխանի որդոց, և այդ տակավին ավագներից չգիտի ոչ ոք... Ես կամեցա մեր առաջին տեսությանը այս ամենը պատմել քեզ և հարցնել խորհուրդ, սակայն կամեցա միաժամանակ, որ ինքդ հեռու լինես այս տեղերից... Ու ես իմ զայրույթը պահեցի ցայսօր...

Հազիվ թագավորն ասել էր այս խոսքերը՝ գահասրահի դուռը նորից բացվեց աղմուկով և հևասպառ ներս մտավ... ոչ թե մտավ, այլ ներս խուժեց Ներսես կաթողիկոսը՝ խաչագլուխ գավազանը ձեռքին։

— Նզո՛վք, արքա... Եթե պիսի կատարեիր ոճիրը այս զարհուրելի, ինչո՞ւ ինձ ես դարձրիր հանցապարտ առաջի մարդուց և աստծու... Եվ մի՞թե, որպես միջնորդ ու հաշտարար, այս էի ցանկանում ես... մի՞թե...

Ներսեսը հևում էր. նրա ելևէջող կրծքի հետ դողում էր թե ձեռքի գավազանը և թե աղեբեկ մորուսը. կանոնավոր դեմքը

շառագունել էր, իսկ խոշոր աչքերը բորբոքվել, ասես հուր էին ցայտում թավ հոնքերի տակից։

— Նզո՛վք,— շարունակեց նա թեթև շունչ առնելուց հետո— Ինչո՞ւ դարձա մեղսակից ակամա։ Ոճիրն այս, արքա, պիտի ծանրանա ոչ միայն քո, այլև իմ գլխին։ Նզո՛վք... Կամսարականաց արյո՞ւնը...

Բագրատունին գլուխն իջեցրած չէր նայում ոչ կաթողիկոսին, ոչ Թագավորին. Վասակ սպարապետը նայում էր մռայլած, իսկ Հայր-Մարդպետը, հետաքրքրությունը զսպած, անմազ կոպերով աչքերը դարձնելով, ուզում էր հասկանալ կատարվածը։

Արշակը լարված և զուսպ լսեց Ներսեսին, և երբ սա կանգ առավ մի վայրկյան, ասաց.

— Հանգստացի՛ր, քահանայապետ, հանգստացի՛ր,— և Արշակը մի քայլ արավ դեպի կաթողիկոսը։— Եվ մի՞թե դու, տեր հոգևոր, հակառակ ես մեր երկրի ապահովության ու խաղաղության։ Անտարակույս ոչ։ Թող ուրեմն մեռանի մի տոհմ, երկու տոհմ, երեք տոհմ դավաճանների, որպեսզի երկիրը չմեռանի, որպեսզի երկիրը հայրենի մնա ողջ... Խառնակիչների ոչնչացումը, անիշխանության խորտակումը Հայոց Աշխարհին կբերի խաղաղություն, հետևաբար՝ ապահովություն և հզորություն...

Կաթողիկոսը չգիտես լսում էր, թե ոչ, բայց տակավին հնում էր զայրույթից։ Նա գիտեր, որ այսօր Կամսարականը և հմամախոհ իշխանները եկել են հաշտության, ուստի և, որոշած կարգի համաձայն, ինքն ևս, որպես միջնորդ, որպես հաշտարար, իր եպիսկոպոսների և վարդապետների ուղեկցությամբ շտապել էր Արմավիր՝ խաչով, երդումով և օրհնությամբ հաշտությունը կնքելու և հանդիպել էր...

Ու այժմ զայրույթից խոսք չէր գտնում ասելու. նրա ձեռքերն ու մորուքը շարունակում էին դողալ։ Թագավորի խոսքից հետո նա իր հրաբորբ աչքերով մի րոպե նայեց Արշակին, ապա ծանր գավազանը հանկարծ ղարկեց հատակին և գոռաց ձայնի ամբողջ թափով.

— Նզո՛վք...

Թվաց, որ նա իր ծայր վրդովմունքը, դժգոհությունն ու

ցասումը դրեց այդ մի հատիկ բառի մեջ և դուրս նետվեց գահասրահից, ինչպես հալածանքից փախչող ոգի։

Լռություն իջավ, ծանր, ճնշող մի լռություն, որի մեջ իրենց անհարմար էին զգում Թագրատունին, Հայր-Մարդպետն ու Վասակը. չգիտեին պարզապես ի՞նչ անել և ի՞նչ խոսել։ Իսկ Արշակն սկսեց երթևեկել՝ մեծ քայլեր անելով, առանց մեկին նայելու. նույնիսկ թվում էր՝ նայում է, բայց չի տեսնում։

Պալատականները փորձով գիտեին, որ երբ թագավորը լռում է և չի նայում մարդկանց երեսին՝ նրան պետք է թողնել մենակ... Առաջինը հեռացավ Հայր-Մարդպետը, հետո սպարապետն ու Թագրատունին դուրս եկան անձայն քայլերով։

Նրանք տակավին Ներսես կաթողիկոսի նզովքի տպավորության տակ էին և դժվարանում էին խոսել։ Երևույթն այնքան արտակարգ էր, որ նրանք չէին կարող թափանցել նրա շարժառիթների խորքը և չգիտեին կարծես ո՞ւմ դատապարտեն, ո՞ւմ արդարացնեն... Վասակը միայն, հիշելով պատմությունը, ասաց.

— Այսպես վարվեց նաև Խոսրով թագավորը Սկունիների հետ։

Ու ոչինչ չխոսեցին այլևս։

Այդ իսկ պահին, երբ երեք նշանավոր պալատականները հեռացան անխոս, Արշակը մենակ մնալով դանդաղ անցավ իր առանձնարանը և մեկեն ծունկի եկավ հատակին։

Փոքր անց, երբ Փառանձեմ թագուհին, կաթողիկոսի անակնկալ գալով ու գնալով հետաքրքրված մտավ ամուսնու առանձնարանը, տեսավ Արշակը ծնկաչոք, ձեռքերն իրար միացրած, աղոթում է պատից կախված խաչի առաջ։

— Արքա, ի՞նչ է այս... Դու աղոթո՞ւմ ես և... արտասվում....

— Այո, Փառանձեմ,— խոսեց Արշակը մի խուլ օտարացած ձայնով։— Աղոթիր և դու, Փառանձեմ, աղոթիր ի՛նձ համար... Քահանայապետը նզովեց ինձ խաչով... Բայց ես ոճրապարտ չեմ, Փառանձեմ... Ես, այո, գործեցի մեծ մեղք, բայց... ոչ ինձ համար, այլ Հայոց Աշխարհի ապահովության համար... Ոճրապարտ է նա՛, ով պառակտում է երկիրը, ո՛վ քանդում է մեր ապահովության բերդը...

— Իմացա, արքա, իմացա,— խոսեց Փառանձեմը նույնպես բեկված։— Սուր վերցնողները՝ սրով էլ ընկան։ Դա աստծու պատիժն էր անշուշտ, որ կատարվեց... Սակայն ինչո՞ւ սրտաբեկվել այդպես... Չէ՞ պետք է դու նորից կառուցես քո բերդը...

— Այո, իմ բերդը... Հայոց բերդը...

Մինչ պալատում այս խոսակցությունն էր տեղի ունենում ամուսինների միջև, այդ նույն ժամին կաթողիկոսի առաջին դպիր Փավստոս վարդապետն իր խցում, ձիթաճրագի լույսով գրում էր իր մագաղաթյա մատյանում.

«Արքայն Արշակ գործեց ոճիր մեծ. ազգատեց-կոտորեց տոհմը Կամսարականաց և այլ խոհակից նախարարների, և տեր քահանայապետն մեր՝ մեծն Ներսես նզովեց նորան»...

* * *

Իսկ ի՞նչ եղավ քաղաքը. ի՞նչ եղան նրա բնակիչները, հատկապես տիրափախները...

Չկա կյանքում թերևս ավելի ծանր բան, քան հարազատի կորուստը, մանավանդ անստույգ կորուստը։ Երբ հարազատը գերեզման է իջնում՝ մարդ կսկիծի հետ միասին զգում է և այն, որ նա ունի հավիտենական մի օթևան։ Իսկ երբ հարազատը կորչում է անհետ և չգիտես ո՞ւր է հանգչում կամ ո՞ւր է դեգերում՝ դա ծանր է տասնապատիկ։

Այս ծանր վիճակի մեջ էին Թորգոմն ու ընկերները։

Արևատաք կեսօր էր Կոգովիտի այն մասում, ուր կռիվներ չէին եղել։ Երեք ընկերները ձիերը հեծած գնում էին գյուղամիջյան մի փոշոտ ճանապարհով։ Երեքն էլ նիհարած, մազակալած և տխուր։ Նրանց ձիերը գնում էին մեկը մյուսի հետևից՝ քրտինքը վրաները սառած և փնչացնում հաճախ, որ նշան էր ծայր հոգնածության։ Իրենք՝ ընկերները նույնպես հոգնած էին այնքան, որ չէին խոսում, գուցեն սպառել էին խոսելու ամեն նյութ։ Բայց գնում էին՝ շարունակ նայելով ճանապարհի հեռուն և շրջապատի լեռներին։ Մյուսներից ավելի մռայլված էր թվում Թորգոմը, չգիտես նրա՞ համար, որ ավելի զգայուն էր, թե նրա համար, որ անհամբեր էր։

Երբ այդպես անխոս գնացին բավական՝ մեկեն կանգ

տան. հասել էին մի տեղ, որ ճանապարհը, ճյուղավորվելով, գնում էր երեք ուղղությամբ։

— Հիմա ո՞ր կողմը գնանք,— հարցրեց Թորգոմը վարանած։

Ընկերներն իսկույն չկարողացան պատասխանել։

— Սպասենք մեկը պատահի՝ իմանանք ո՞ւր են տանում էս ճամփաները,— ասաց Հովսեփը ձիուց իջնելով։

— Սպասենք,— համաձայնեցին ընկերները և նույնպես իջան ձիերից, որ հանգիստ տան թե՛ իրենց, թե՛ կենդանիներին։ Վայրը մանավանդ տրամադրում էր հանգստի—գիտափ, ուռիներ, ուռիների տակ սուզերներ և կանաչ սիզախոտ։

Բայց հազիվ նստել էին, երանց բախտից երևաց մի շինական՝ մաղախոտի մի մարդ, ուսերից կապած հորթի մի փոստ, որի մեջ լցրել էր ինչ-որ բան։ Կանգ առած ձիավորներին տեսնելով՝ նա ևս կանգ առավ ու բարևեց։

— Ո՞ր շենից ես, եղբայր,— հարցրեց Թորգոմը բարևախոսքից հետո։

— Էն վերի շենից,— եղավ պատասխանը և, շինականը մատնացույց արավ մոտիկ չեռը, ուր աբահետանման ճանապարհը փեռմանների բարձրանում էր քարաժայռերի միջով։

— Ձեր շենում կա՞ն քաղաքից փախուկներ,— հետաքրքրվեց Թորգոմը։

— Ամե՛ն տուն,— ծոր տվեց շինականը։— Սպասում են խաղաղի, որ դառնան քաղաք։

— Տղամա՞րդ են, կինմարդ։

— Երկուսից էլ... բայց ավելի կինմարդ, երեխաներ։

Ընկերները կուզեին հարցնել իրենց ընտանիքների մասին, իմանալ նրանց վիճակը... բայց խեղճ շինականը որտեղի՞ց պիտի ճանաչեր։ Դրա փոխարեն երանք հարցրին մյուս ճանապարհների մասին, թե ո՛րը ո՞ւր է տանում... Պարզվեց, որ դրանք նույնպես տանում էին լեռնային շենները, բայց թե այն տեղերում կայի՞ն արդյոք փախածներ՝ շինականը չգիտեր։ Սակայն ենթադրում էր, որ կլինեն անշուշտ։

— Իսկ դուք քաղաքի՞ց կուգաք,— իր հերթին հետաքրքրվեց շինականը։— Կռիվը վերջացա՞վ։

— Վերջացավ։

— Փառք աստծո,— խաչակնքեց շինականը։— Իսկ դուք

շենքերն ինչի՞ կերթաք։ Կերևի կփնտրեք ձեր ընտանիքներ։

Դրական պատասխան ստանալով՝ նա ավելացրեց.

— Գնացեք, գնացեք, իցե մեր շենքեն են։ Մեր շեն փախուկներ շատ կան։

Շինականի գնալուց հետո ընկերները նորից ձիերը հեծան և բռնեցին գյուղի ճանապարհը, որը մերթ երևում էր շիկավուն շերտի պես, մերթ թաքնվում լեռնաբլուրների կամ ժայռերի ետև... Ընկերները թեև հոգնած, բայց շտապում էին, որպեսզի մութը չկոխած հասնեն գյուղ։

Քանի օր էր նրանք այդպես որոնում էին իրենց ընտանիքները. որոնում էին քաղաքում, գյուղերում, ամենուր, ամեն օր... Կարծես մի ճակատագիր նրանց ստիպում էր լինել միշտ ճանապարհներին։ Մենք դեռ այս պատմության սկզբում նրանց հանդիպեցինք անտառում, մի դժվար ճանապարհի, երբ, ընտանիքներն առած, փախչում էին տերերից՝ ազատ ապրելու հույսով... Նրանք նորից ճանապարհ ընկած գնում էին տխուր-մտահոգ՝ այժմ արդեն կորած հարազատներին գտնելու հույսով։ Եվ հիմա, ընտանիքների փոխարեն նրանց հետ էր միայն Վարդանի Հուսիկը, որ նստել էր հոր ետևը՝ ձիու գավակին և զույգ ձեռքերով պինդ գրկել էր նրա մեջքը։ Ճշմարիտ է, նրանք հիմա ձիեր ունեին և իրենց որոնումները կատարում էին ձիեր հեծած, բայց դա բնավ չէր մեղմում ընկերների վիշտը, նրանց անստույգ կորստի գիտակցությունը, մանավանդ երբ Հուսիկը շարունակ կրկնում էր.

— Պապո, հիմա ո՞ւր կլինի մամոն...

Չինադարից հետո քաղաք գնալով՝ նրանք հույս ունեին, թե իրենց ընտանիքները կռվի միջոցին թաքնված կլինեն հարևանների մոտ, ինչպես խորհուրդ էին տվել իրենք։ Բայց երբ Թորգոմն ու ընկերները հասան քաղաք, ձիերը կանդնեցրին զարմացած. դեռ հեռվից երևում էին այրված տներ, մրոտ պատեր, փլած տանիքներ։ Իսկ երբ մտան փողոցները՝ նկատեցին, որ տների մեծ մասի եղեղները, փայտե մասերը այրվել էին իսպառ և կանգուն մնացել էին քարե պատերը, սյուները... Այրվել էին կարասիներ՝ թախտեր, նստարաններ, փոված քներ։ Տեղ-տեղ փլված պատերի միջից և կրնկի վրա բաց դռներից ներսը երևում էին պղնձե և փայտե ամաններ դարակներին շարված... Բայց տեր չկար։ Ամեն ինչ թվում էր հոշոտված ու

լքված... Առհասարակ բնակիչներ քիչ էին երևում. երևացողներն էլ վախվորած էին. թվում էին ծեծված, քաղցած—այնքան նիհարած էին ու սրտաբեկ, ինչպես լինում են մեծ աղետից փրկվածները։ Թորգոմն ու ընկերները—ոչ մեկը—չէին կարողանում ասել մի բառ... Հասկանում էին ի՞նչ է կատարվել, ու խոսքը թվում էր ավելորդ։ Բայց Հուսիկը դարձյալ չհամբերեց և հարցրեց մի քանի անգամ.

— Պապո, էս ինչո՞ւ էսպես...

— Գնանք, —ասաց հայրը առանց բացատրության։

Առաջանալով՝ յուրաքանչյուրը մտածում էր իր տան մասին։ Հասնելով վերջապես իրենց տներին՝ նրանք նորից կանգ առան։ Տանիքները տեղ-տեղ այրված էին, պատերը թեև կանգուն, բայց վնասված։ Առաջինը, Թորգոմը թռավ ձիուց և վազեց իր բակը. տան դուռը փակ էր և... մայրը չկար։ Իրերն իրենց տեղն էին, բայց մա՞յրը... Նա արագ անցավ Հովսեփի տունը. մի վայրկյան կարծեց, թե մայրն անցել է այնտեղ... Հովսեփը ինքը շվար կանգնել էր սենյակի մեջտեղը... Այստեղ էլ իրերը տեղն էին... կինը չկար... Քիչ հետո երկուսով անցան Վարդանի տունը։ Բակը լմտած՝ լսեցին Հուսիկի ձայնը, որ հարցնում էր.

— Պապո, հապա մամոն ո՞ւր է...

Հայրը չգիտեր ի՞նչ պատասխաներ... այստեղ էլ իրերն իրենց տեղն էին, բայց մարդ չկար ո՛չ դուրսը, ո՛չ ներսը։ Եվ ընկերները բավական ժամանակ մնացին անխոս, մինչև երևաց հարևաններից մեկը և պատմեց, թե ի՞նչ էր անցել-դարձել, թե ի՞նչպես եկողները կռվից հետո մտել էին քաղաք և տիրապետներ ջոկել ու տարել։

— Ո՞ւր,— կտրեց Թորգոմը անհամբեր։

— Ո՛ւր պիտի. գերի,— վրա բերավ հարևանը։

Պարզ էր. ուրեմն տարվող գերիների մեջ են եղել նաև իրենց հարազատները, և իրենք այդ չեն իմացել։

— Դու քո աչքով տեսա՞ր, որ տարան մերայնոց,— հնչեց Թորգոմի ընկճված ձայնը։

— Ո՛չ. էդ ասել չեմ կարող։ Իմ աչքով չեմ տեսած։ Բայց տարան շատերին։ Տարան մեծ խմբերով... այնպես էր՝ մարդու աչքեր մթնել էին. ծանոթ-անծանոթ չէիր ջոկի...

Այնուհետև ծանր սրտով քաղաքում շրջելով՝ տեսան շատ

տներ քանդված, այրված. եղեգները կտուրներից կիսավառ կախված, գոները կոտրտված, փողոցները տակնուվրա... Ծա՜նր էր... Բայց ավելի ծանր էր, երբ նրանք յուրայիններին չգտան և ոչ մի տեղ... Որևէ բան իմանալու համար ընկերները եղան քաղաքի բոլոր թաղերում, բայց մարդիկ դժվարանում էին ասել, թե ով ո՛ւր է գնացել կամ ում ի՞նչ է պատահել։ Ոմանք ասում էին, թե շատերը կարողացել են փախչել-ապաստանել գյուղերում, բայց եղել են և այնպիսիները, որ ընկել են թշնամու ձեռքը և տարվել գերի... Այնպես որ քաղաքում Թորգոմն ու ընկերները չկարողացան պարզել, թե ո՛ւր կլինեն իրենց հարազատները... Սարով անցել էին Սուրմարի՝ մայրաքաղաք գնալո՞ւ, թե գերի տարվածների մեջ էին։ Կային մարդիկ էլ, որ պնդում էին, թե շատերը գնացել էին Դարոնք ամրոցը՝ Բագրատունի իշխանին ապավինելու, և մատնացույց էին անում, թե փախչողները ո՛ր կողմով էին գնում... Ընկերները, լինելով կռվի մեջ, իրենք գյուղերը փախչողների չէին տեսել, բայց հեռվից նկատել էին գերի տարվողներին, նկատել էին, թե ինչպես կին, մարդ, երեխա իրար խառնած և նիզակավորներով շրջապատած, փոշեմած ճանապարհներով քշում էին նախարարների կալվածների կողմը։

Ընկերները մի երկու օր մնացին քաղաքում, հարցուփորձ արին շատերին, բայց երբ ոչինչ պարզել չկարողացան, գերապես համարեցին մեկնել մոտիկ շենները, մտածելով, թե գուցե այդ շեներում լինեն... Ջնայած գինադադար էր, բայց նախարարների կալվածները գնալ վտանգավոր էր. իրենց ևս, որպես տիրապետների, կարող էին կալանել և պահել... Ուստի որոշեցին յուրայիններին փնտրել առայժմ մոտիկ շենեբում։ Երբ ճանապարհ ընկան՝ Հուսիկը հարցրեց.

— Ո՞ւր կերթանք, պապո։

— Մամոն գնացել է շեն. գնանք բերելու,— եղավ Վարդանի պատասխանը։

Եվ ահա տասը օր էր նրանք փնտրում էին իրենց ընտանիքները։ Եղել էին հինգ-վեց գյուղում, և ամեն տեղ հանդիպել էին տիրապետ ընտանիքների. ամենքն սպասում էին վերջնական խաղաղության, որ վերադառնան քաղաք։ Հարցուփորձը այս շենեբում նույնպես քիչ բան էր պարզել կամ գրե-

թե ոչինչ չէր պարզել։ Մի տեղ հանդիպեցին մոտիկ մի հարևանի՝ պատշար Պետրոսին և ուրախացան, որ նրանից կիմանան մի բան։ Բայց նա ևս ոչինչ չգիտեր ստույգ։

— Սկիզբը՝ ամենքին տեսանք, ամենքը և ձերայիները իրենց տների առաջ էին,— սկսեց նա։— Բայց երբ շարը մըտավ քաղաք՝ էլ չիմացա, ով ի՞նչ եղավ։ Մենք ելանք-եկանք էս շեն ու մնացինք։

Մի այլ շենում փախածները հայտնեցին.

— Մենք քաղաքից ելանք՝ Թշնամին փակեց ճանապարհը։

— Ո՞ր ճանապարհը՝ Մասյա՞ց, թե Դարոնքի։

— Դարոնքի։ Մասյացը վաղուց փակուկ էր, որ մեկը լուր չտանի թագավորին։

Ընկերներն այս հարցուփորձն անում էին Հուսիկին թողնելով ձիերի մոտ, կամ՝ այլ մի տեղ, որ երեխան չլսի ամեն ինչ և չտխրի։ Բայց որովհետև նա գիտեր, թե հարևանները որոնում են իրենց տնեցիներին, իսկ հայրը՝ իր մորն ու քրոջը, այդ զրույցներից հետո հարցնում էր միշտ.

— Մամոն էստեղ է՞լ չի եկել։

— Չէ, մամոն գնացել է ուրիշ շեն, ավելի լավ շեն,— մխիթարում էր Վարդանը նրան։

Բայց Հուսիկը շարունակում էր հետաքրքրվել.

— Հապա որ մեր տուն վառուկ է, պապո, մենք մամոյին ո՞ւր տանենք պիտի...

Հայրը չգիտեր ինչ պատասխանել և միայն ասում էր.

— Գնանք մամոյի մոտ՝ կխոսենք։

Մի ուրիշ շենում, որ գտնվում էր Դարոնք ամրոցի մոտ, ընկերները դարձյալ հանդիպեցին ծանոթների, դրանց հետ և դարբին Դավթին, որ այդտեղ էլ երկաթե գործիքներ էր շինում բացօթյա քուրայի վրա...

Զրույցից պարզվեց, որ նա, որպես տիրափախ, քաղաքում կռվել է երկար ժամանակ, բայց երբ Թշնամին մտել է ներս և սկսել տիրափախներ փնտրել, ինքը թողել է փախել՝ նրանցից մեկի ձին հեծնելով։

— Չկամեցա տանեն գերի։ Պիտի ծեծեին և պատժելու համար լծեին եզան հետ։ Երբ տեսա չոկում էին տիրափախներին՝ ես հո՛ւ... թռա ձիու մեջքը։

— Ինչպե՞ս էին իմանում ո՞վ է տիրափախ, ո՞վ տեղացի,— ընդմիջեց Թորգոմը։

— Կար որ ճանաչում էին, կար որ ուրիշն էր ասում,— տխրությամբ գլուխը շարժեց դարբինը։— Բայց կային էլ, որ երբ հարցնում էին «որտեղացի՞ ես»— վախից չէին կարողանում սուտ խոսել...

Երբ եկողների հարցումները վերջացան, փախածների բազմությունը ավելի շրջապատեց նրանց.

— Իսկ դուք կովից հետո եղա՞ք քաղաքում։

Երբ լսեցին «այո»՝ հարցումները տեղացին տարափի պես.

— Շա՞տ տուն է այրվել... Որքա՞ն մարդ է տարվել գերի...

— Մեր տունն ինչպե՞ս է... Երբ հաշտություն կլինի՝ կարո՞ղ ենք վերադառնալ... Հիմա էլ կարելի՞ է...

— Այո, հարկավ։

— Բայց եթե նախարարները նորից տիրապետ պահանջե՞ն։

— Չենք թ գնա... Թագավորը չի տա...

— Իսկ եթե համաձայնի և տա՞...

— Չենք գնա... Չենք գնա... Կմնանք էստեղ՝ շեներում...

Չկար մեկը, որ ցանկանար գնալ նախկին տիրոջ մոտ, որովհետև դա ամենքին թվում էր մահվան հավասար... Բոլորն էլ թե՛ այս, թե՛ մյուս շեներում սպասողական վիճակի մեջ էին, երազում էին, որ շուտ հաշտություն լինի և ամենքը վերադառնան իրենց տները, բայց և ամենքը միաժամանակ այն երկյուղն ունեին, թե հանկարծ նախարարները հաշտության պայման դնեն թագավորի առաջ, որպեսզի նա վերադարձնի բոլոր տիրապետներին։

Այդ երկյուղն ունեին նաև Թորգոմն ու ընկերները. բայց առաջ ու առաջ նրանց հետաքրքրում էր, թե ո՞ւր են իրենց ընտանիքները՝ թաքնվա՞ծ են որևէ տեղ, թե հանդիպել են ծանր մի աղետի։ Նրանք գերադաս կհամարեին գտնել նրանց, թեկուզ ուշ, միայն թե ողջ լինեին և ոչ գերի տարված։ Գերի՞... այս հեռանկարը սարսափ էր բերում նրանց։ Գերի—դա նշանակում էր, որ չարաչար, դաժանաբար կտանջեին նրանց...

Այս ծանր կասկածները առավել տագնապում էին Թորգոմին. նա մտածում էր, որ գերի տարվելու դեպքում մորը, Մինային և նրա հորը կտանջեն ավելի, մանավանդ, եթե իմանան, որ Համունի իշխանը սպանվել է իր ձեռքով... Թորգոմը,

Մի քանի գյուղերում լինելուց հետո, տեսնելով չի պարզվում յուրայինների ո՛ւր լինելը, ծանր ապրումների մեջ էր. երբեք նրա մտքով չէր անցել, թե մի օր կստեղծվի այնպիսի վիճակ, որ ինքը կորցնի հարազատներին, իր նշանածին, որին այնքան դժվարությամբ բերել-հասցրել էր քաղաք և երկու օրից պիտի պսակվեր հետը... Որքան էլ սակայն ծանր էր այդ ամենը, բայց, չգիտես ինչու, հույսը չէր կորցնում։

Նույն դրության մեջ էին ընկերները։ Այդ վիճակում նրանք, ճիշտ է, իրար մխիթարել չէին կարող, բայց ջանում էին սիրտ տալ թե՛ յուրաքանչյուրն իրեն և թե՛ միմյանց.

— Էհ, էս շենում չեղան, իցե լինեն մյուսում։ Սրանք, որ փախել են այստեղ՝ մերոնք չէին մնա... Նրանք էլ կերևի գնացել են ապահով մի տեղ...

Այսպես, երբ մի շենում հուսահատվում էին, հույսները դնում էին մյուս շենի վրա ու ճանապարհ էին ընկնում տխուր խորհրդածելով.

— Նախարարներից փախանք, թագավորն էլ չպաշտպանեց...

— Մեզ չէ, պաշտպաներ գեթ իր քաղաքը...

Երբեմն էլ, տխուր մտքերից կարծես ծանձրացած, փորձում էին զվարթ երևալ կամ կատակել։ Զարմանալի է, թե ինչպես է լինում, որ մարդը նեղ, տխուր վիճակում էլ իր մեջ ուժ է գտնում կատակելու, հեգնելու... Ինչպես գիտենք, Թորգոմի հարսանիքը պետք է լիներ երկու օրից, եթե կռիվը չսկսվեր։ Կնքահայրը լինելու էր Վարդանը, ծախսարարը՝ Հովսեփը։ Այս մասին նրանք խոսում էին ավելի այն ժամանակ երբ նկատում էին Թորգոմի տխրությունը։

— Է՛, Թորգոմ, Թորգոմ. քանի կամեցար պսակվել՝ փորձանք եկավ։ Հիմա Մինային գտնենք՝ պսակենք իսկույն, որ էլ փորձանք չպատահի... Համաձա՞յն ես։

— Համաձայն եմ,— սթափվում էր Թորգոմը։— Միայն թե շուտ գտնենք։

Այժմ էլ, շինականին հանդիպելուց հետո, տխրակատակ վեր կացան և ձիեր հեծնելով բռնեցին լեռնային գյուղի ճանապարհը. ի՞նչ իմանաս, գուցե հենց այդտեղ են իրենց հարազատները... Բայց հաղիվ անցել էին մի փոքր տարածություն՝ նկատեցին մի ձիավոր, որ սրընթաց գալիս էր դեպ

իրենց։ Նա գալիս էր ոչ թե գյուղից, այլ քաղաքի կողմից և նրա ճերմակ ձին փայլփլում էր արևի տակ, ասես խաղում էր հաճույքից... Ո՞վ էր, ո՞ւր էր գնում այդպես արարշավ... Դա այնքան հետաքրքրեց, որ ընկերները ձիերը կանգնեցրին իմանալու ո՞վ է և ո՞ւր է գնում։ Եվ շատ սպասելու հարկ չեղավ։ Շուտով մոտեցավ երեսունն անց մի առոգի շինական։ Երբ պարզվեց, որ նա մոտիկ գյուղի բնակիչ է, Թորգոմը հարցրեց, թե քաղաքից փախածներ կա՞ն իրենց շենում։ Երիտասարդը պատասխանելու փոխարեն հարցրեց.

— Իսկ դուք կարո՞ղ եք ասել, թե ինչպե՛ս եղավ նախարարների սպանությունը։

Վայրկենապես Թորգոմի գլխով մի միտք անցավ, թե դիմացինը երևի ճանաչում է իրեն և նրա խոսքը վերաբերում է իր ձեռքով սպանված Համունի նախարարին, ուստի և հարցրեց տարակուսով.

— Ի՞նչ սպանություն, ի՞նչ նախարարներ...

— Էն, որ Թագավորը որձակոտոր է արել։

— Որձակոտո՞ր... Ո՞ւմ, ինչպե՞ս, որտե՞ղ...— հետաքրքրված ընկերները հարցեր տեղացին գրեթե միասին։

— Որտե՞ղ՝ Արմավիրում։ Ջդիտե՞ք...

Թորգոմն ու ընկերները իրար նայեցին զարմացած։ Դա նորություն էր... զարմանալի, անսպասելի նորություն։

— Պատմիր, մարդ աստուծո, պատմիր,— խնդրեցին նրանք, ձիերից իջնելով։

Եվ ձիավորը պատմեց Արմավիրում կատարվածը, պատմեց կցկտուր, բայց գոհունակ շեշտով, ինչ վկայում էր նրա համակրանքը։ Նրա ասելով՝ Թագավորը կանչել է նախարարներին ճաշի և այդտեղ իսկ՝ ճաշի սեղանի մոտ կոտրել բոլորին։ «Դուք,— ասել է Թագավորը,— փչացրիք իմ նոր քաղաքը։ Դե փչացեք դուք ևս»...

Հեծվորը պատմում էր այնպես, ասես ինքն ականատես կամ մասնակից էր եղել դեպքին, խոսքերն ասում էր հուզված, ձևացնելով, ինչ և առիթ տվեց Թորգոմին հարցնելու։

— Դու ինքդ տեսա՞ր։

— Ո՜չ, պատմեցին մայր քաղաքից եկողները։

Պատմողը ներկա՞ էր եղել, թե ոչ՝ դա էական չէր։ Կարևորը նրա բերած նորությունն էր, այնքան զարմանալի նորու-

թյունը, որին նրանք չհավատացին սկզբում և խոսել իսկ չուզեցին, բայց հետո նրանց համակեց մի անզուսպ ուրախություն, այն աստիճան, որ առժամ մոռացան իրենց հարազատներին։

— Արժանի՛ են, արժանի՛,— առաջինը խոսեց Հովսեփը, որ սակավախոս մարդ էր ընկերների մեջ։— Մեզ որ հասցրին էստեղ, թող ամենքը կոտորվեն էդպես։

— Հիմա էլ կռիվ չեն անի,— հեգնեց Վարդանը ակներև բավականությամբ։

Թորգոմը լուռ էր. նա ներքուստ ուրախ էր լսածից, բայց միաժամանակ ափսոսանքի պես մի բան էր զգում, որ ինքն այնտեղ չի եղել և իր աչքով չի տեսել այդ... Վերջապես նա ևս չկարողացավ զսպել իր ուրախությունը և բացականչեց.— Ա՜խ, էնտեղ լինեինք...— Ասաց գլուխը տարուբերելով, ապա, փոքր լռելով, ավելացրեց։ —Չգնա՞նք մի տեսնելու...

— Չէ, Թորգոմ, գտնենք մերայիններին՝ հետո,— ասաց Վարդանը։— Իցե հիվանդ, քաղցած սպասում են մեզ։

— Հա, մամոյիս գտնենք՝ հետո,— խոսեց Հասիկը հանկարծ, որ մինչ այդ լսում էր մեծերի արտակարգ զրույցը։— Մամոյիս գտնենք...

Դա սթափեցրեց ընկերներին։

— Իրավ, իրավ,— համաձայնեց Թորգոմը։— Նախ գտնենք մերայնց, ապա հանգիստ երթանք իմանալու։

Եվ նրանք, երիտասարդ ձիավորին հրաժեշտ տալով, շարունակեցին իրենց ճանապարհը դեպի լեռնային գյուղը։ Որքան էլ հոգնած՝ գնում էին աշխույժ, իսկ նրանց դեմքի տրխրությունը, զարմանալի բան, չքացել էր աննկատելի. լսած լուրը, թվում էր, ուժ էր տվել նրանց և վստահություն, թե կգտնեն յուրայիններին՝ գուցեև մոտիկ շեներում... Իսկ եթե շեներում չգտնեն՝ կերթան սպանված նախարարների կալվածները... Այնտեղերում հիմա վտանգավոր չի լինի...

Մտածելով յուրայինների մասին, Թորգոմը երբեմն զզջում էր, որ վերջին անգամ մորն ու Մինային պատվիրել էր ուրիշ տեղ չգնալ, այլ թաքնվել քաղաքում՝ հարևանների մոտ, հուսալի մի տեղ։ Եթե այդ չասեր, գուցե նրանք ևս փախած լինեին մյուսների հետ, և հիմա կարող էր գտնել գյուղերում... Բայց մյուս կողմից էլ մտածում էր, թե ինչպե՞ս պառավ մո-

ը, Մինայի հորը խորհուրդ տար փախչել, երբ նրանք այդ անել չէին կարող... Գոնե ինքն այդպես էր կարծում։ Սակայն ահը կարող էր ուժ տալ, ստիպել նրանց և նրանք գնային մյուսների հետ։

— Հիմա որ Մինային գտանք, Թորգոմ, էլ չենք սպասելու։ Պսակելու ենք իսկույն, որ նոր փորձանք չգա,— Թորգոմի մտքի թելը կտրեց Վարդանը, ձին նրա կողքից քշելով։

— Թող կամքդ լինի, միայն թե գտնենք,— համաձայնեց Թորգոմը։

— Է՛, որ գտնենք՝ ո՞ւր գնանք պիտի,— հետաքրքրվեց սակավախոս Հովսեփը։

— Ո՞ւր... Պիտի գնանք, իհարկե, քաղաք, էլ ինչ խոսք,— ասաց Վարդանը։

— Բայց չէ՞ մեր տներ այրուկ են,— հնչեց նորից Հովսեփի ընկճված ձայնը։

— Նորեն կշինենք,— վրա բերավ Թորգոմը։

— Իսկ քաղա՞քը...

Դա լուրջ, ծանր խնդիր էր, և ընկերները մտածումների մեջ ընկան։ Ի՞նչ իմանաս, քաղաքը կշինվի՞ նորից, թե կմնա այդպես։ Շատերը մեռան, կորան կամ ցրվեցին ամեն կողմ, արդյոք նորից կվերադառնա՞ն քաղաքը նորոգելու, շինելու։

— Եթե թագավորը որձակոտոր է արել թշնամիներին, ուրեմն իր քաղաքը չի թողնի ավեր,— խոսեց Վարդանը։— Նորեն կշինի, էլ խանգարիչներ չեն լինի...

Թորգոմն էլ այդպես էր կարծում, բայց չէր խոսում։ Միայն քիչ հետո, երբ ընկերները լռել էին, նա նկատեց.

— Մերայնոց գտնենք, հետո՝ տուն, քաղաք...

Ընկերները լռեցին. ճշմարիտ էր՝ նախ պետք էր գտնել կորած հարազատներին...

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Այդ օրերին քաղաքի վերաշինության մասին էր մտածում նաև Արշակ թագավորը։

Արմավիրի դեպքից հաղիվ մի ամիս անց նա իր առանձնարանում՝ մի խոշոր բազկաթոռի մեջ նստած, լսում էր

Հայր-Մարդպետին, որ երկար հորդածալ թիկնոցն ուսերին, ծաղկատար անմազ դեմքին բացառիկ լրջություն տված, ասում էր կանգնած.

— Ես, արքա, խորամուխ եղա, որ վարքը նոցա կարի վտանգավոր էր, ուստի և արժանի արդար պատժիդ։

Թագավորը լսում էր և երբեմն հոնքերի տակից նայում նրան, սպասելով կարծես, թե ի՛նչ կարևոր մի բան կասի այնուհետև։ Իսկ Հայր-Մարդպետը, գրեթե գողունի, կկոցած աչքերի միջից նայում էր թագավորին և շարունակում.

— Հոգ չէ, արքա, որ սպարապետը դժգոհեց, Բագրատունի ասպետը վշտացավ։ Կանցնի ամենը և կմոռացվի։ Կգա օրը, իրենք ևս կդատապարտեն ստամբակ վարմունքը նոցա։ Հոգ չէ նաև, որ քահանայապետը սրտնեղեց։ Այլ կերպ չէր կարող, վասնզի երաշխավոր էր եղած նոցա... Քահանայապետը, ցավոք, չի թափանցում մեր վիճակի խորքը։ Նա հոգում է միայն իր եկեղեցու շահը... Սակայն, դու եղար իրավացի, արքա, և այսուհետ կլինես առավել իրավացի, եթե բարեկամ մնաս պարսից...

Մինչ այս Արշակը լսում էր հանգիստ, առանց որևէ շարժում անելու, բայց վերջին պարսից բառը լսելով՝ նա դեմքը խոժոռեց և աչքերը հառեց ներքինու ծաղկատար հրեսը։

— Թող այդ պարսից բարեկամությունը, տեր Մարդպետ։ Առավել օգտակար կլիներ ասեիր, թե ինչպե՞ս վերականգնեմ իմ Ավանս։ Կարո՞ղ ես օգնել ինձ... քո խորհրդով հարկավ։

Հայր-Մարդպետը շուրթերը ծամծմեց։ Ավանը երբեք նրա սրտովը չէր եղել և այժմ էլ խորհուրդ տալ դժվարանում էր, ուստի ասաց.

— Քո իմաստությունդ, արքա, այդ կիմանա առավել...

«Աղվես,— մտածեց Արշակը,— միշտ խուսափում է խոսք ասել Ավանիս մասին. վախենում է մարդեր պահանջեմ իր կալվածներից և ցանկանում է ամեն գնով բարեկամ մնանք պարսից, որպեսզի իր մեծ կալվածները մնան անվնաս»...

Նախարարների դեպքից հետո Արշակին շարունակ զբաղեցնում էր մի սևեռուն միտք՝ վերականգնել Ավանը, ամենից առաջ շինելով նրա պարիսպները։ Եթե Ավանը հենց սկզբից ունենար պարիսպ, երբեք չէր վնասվի... Նախարարները մո-

տենալ չէին համարձակվի... Այժմ պետք է սկսել պարիսպներից։ Եվ այդ անելու համար անհրաժեշտ պիտի լիներ նորից հավաքել մեծ թվով գործավորներ ու մշակներ երկրի բոլոր կողմերից, նաև Կամսարականի և մյուսների ծառաներին։ Ու շինել արագ... Այո, վերականգնել ի հեճուկս թշնամիների... Իսկ Հայր-Մարդպետը խուսափում է խոսել... Արշակը նրան կանչել էր խոսելու նաև Մերուժանի մասին, թե ի՞նչ պատիժ տալ «այդ չարամիտ ստամբակին», սակայն քանի որ Մարդպետը խուսափեց Ավանի մասին խոսել, դա տհաճ եղավ Արշակին, և նա չուզեց շարունակել։

Պետք է ասել նաև, որ ապստամբ նախարարների կոտորածից հետո Արշակը մտածում էր, թե այսուհետ հանգստություն կտիրի իր երկրում, մյուս նախարարները այլևս չեն համարձակվի խոսել ու գործել իր դեմ, իր գահի դեմ, և ինքը կվերականգնի Ավանը՝ այժմ արդեն ներհակ նախարարների մարդկանցով... միայն թե կարողանա կալանել և պատժել Մերուժանին և Տարոնի տեր Վահան Մամիկոնյանին, որ շարունակ չարիք են խորհում իր դեմ... Արշակին թվում էր, թե նրանց, մանավանդ Մերուժանին պատժելուց հետո միայն կլինի խաղաղություն և ներքին ապահովություն, ինչ և անհրաժեշտ է Ավանը վերականգնելու, և բերդն ավարտելու համար։

— Բերդը, այո, ավարտել բերդը...

Այդ օրերին էր ահա, այսինքն՝ դեպքից հազիվ մի ամիս անցած, երբ հատուկ սուրհանդակներ Բյուզանդիայից միջնաբերդ բերին երկու նամակ. մեկը Անդոք իշխանից էր՝ ուղղված Արշակին, մյուսը Պապից՝ մորը։

Անդոք իշխանը իր երկար նամակում գոհունակություն էր հայտնում, որ Արշակը պատժել է խռովարարներին, այլապես «նոքա պիտի խանգարեին երկրի կարգն ու կառավարումը, հարուցանելով շարունակական խոչ ու արգելք»։ Ցավելով էր գրում Ավանի վնասների մասին և հույս էր հայտնում, որ այսուհետ, իսառնակիչների վերացումով, երկիրը խաղաղելով, հնարավոր է և պետք է վերականգնել այդ «կարի կարևոր» քաղաքը պարսից ճանապարհին՝ իր բերդով։ Իշխանն իր նամակում խորհուրդ էր տալիս թագավոր-փեսային՝ զորացնել բանակը, միաբանել «մնացյալ նախարարաց, վասնզի ունես հարևաններ, իսկ հարևանը երբեք բարեկամ չի լինում»...

«Զորացրու բանակդ, որ զորացնես երկիրը հայրենի»,— կրկնել էր իշխանը նամակի վերջում։

Նամակը հաճելի եղավ Արշակին. դա նրան ուրախացրեց նաև, որ իշխան-աներոջ ասելով՝ բյուզանդական արքունիքը նույնպես գոհ էր, որ Արշակը վերացրել է «պարսկամետ նախարարաց», և դա գնահատում էին որպես բյուզանդական բարեկամության ապացույց... Գոհ է մնացել անգամ Վաղես կայսրը...

Իսկ երիտասարդ Պապը գրում էր թագուհի-մորը, թե ինքը Անդոք իշխանի՝ պապիկի հոգացողությամբ շարունակում է ուսանել գիտություններ հույն իմաստասիրներից, որոնց ճեմարանները հաճախում է կանոնավորապես և սիրով, վասնզի գրավիչ են նոցա ուված գիտանքը՝ երկրի և տիեզերքի մասին... Պապը գրում էր, որ այդ ճեմարանները հաճախում են նաև տարբեր երկրներից եկած արքայազուն և իշխանազուն պատանիներ, որոնց շատերի հետ բարեկամացել է արդեն, նույնիսկ այն աստիճան, որ միասին մակույկով գնում են ծովի հեռուներում զբոսնելու... Այնուհետև գրում էր, թե կարոտ է ամենքին ու երկրին, ապա ավելացրել էր, որ կազդույր է... և մորը թվում էր, թե այդ մի հատիկ բառով Պապը կամեցել է ասել, թե իր առողջական վիճակը կատարյալ է։

Դա հարկավ ուրախացնում էր Փառանձեմին, սակայն նամակի մեջ նրան անհանգստացրեց մի հանգամանք, ոչ միայն անհանգստացրեց, այլև համակեց մեծ երկյուղով. Պապը մակույկով գնում է զբոսնելո՞ւ... ծովի հեռուներո՞ւմ... Որպիսի՜ վտանգավոր ձեռնարկություն... Ո՞վ է նրան թույլատրել այդ անելու. և ինչո՞ւ պապիկը՝ իշխան Անդոքը, չի արգելում այդ,— մտածում էր Փառանձեմը տագնապած։— Ծովը հանդարտ, անշարժ ցամաք չէ. ծովը անկայուն է և դավաճան... Ինչպե՞ս Պապը չի հասկանում այդ...

Մտածելով՝ Փառանձեմի տագնապը հասավ այն աստիճանին, որ նա խորհեց նամակ գրել հորը, որպեսզի խստիվ արգելի Պապին «ծովային զբոսանքներ» կատարելու, մանավանդ փոքր չէ, այլ խելահաս, այժմ արդեն անգամ կնոջ, երեխայի տեր... Եվ անհանգստությունից Փառանձեմը գնաց իսկույն ամուսնու մոտ և նամակը տվեց նրան կարդալու։

— Ահավասիկ, տես։ Պապը գրում է, թե ծովում զբոսանքներ է կատարում։ Կարելի՞ է միթե... Որքա՜ն զգուշացրել եմ... Մինչև այժմ չէր գրում այսօրինակ բաներ...

— Չէր գրում հավանաբար, քանի դեռ վարժ չէր թիավարության,— նկատեց Արշակը։

— Այդ ինձ չի մխիթարում, արքա։ Պետք է գրենք, որ հեռու մնա վտանգից...

Փառանձեմի ձայնի մեջ տագնապից բացի, կար աղերսագին մի բան։

Ամուսինները նորից ու նորից կարդացին նամակները։ Փառանձեմը, բացի «ծովային զբոսանք»-ի երկյուղից, ուրախ էր նախ, որ հարազատները երկար ընդմիջումից հետո, նամակ էին գրել, և երկրորդ՝ առողջ էին։ Արշակը, սակայն, որքան էլ նամակներից գոհ, այսուամենայնիվ առանձին ուրախություն չէր արտահայտում և, եթե երբեմնակի նրա աչքերում շողում էր այդ ուրախությունը, դրա տակ միշտ նկատվում էր մի ներքին ծանր մտահոգություն։ Այդ մռայլությունը Փառանձեմը նկատում էր վաղուց, ապստամբ նախարարների սպանությունից հետո, և չէր կարողանում պարզել, թե ի՞նչ մտքեր են զբաղեցնում նրան կամ որտեղի՞ց է այդ թախիծը։

— Արքա, դու խորհում ես անվերջ և ինձ առաջվա պես մասնակից չես անում խոհերիդ,— ասաց Փառանձեմը, երբ ավարտեցին իրենց զրույցը նամակների շուրջը։— Ի՞նչն է արդյոք տխրությանդ պատճառը։ Ինչո՞ւ չես վստահում հայտնել ինձ... Մի՞թե ես անկարող եմ որևէ կերպ օգնել քեզ, արքա... թշնամիներդ չկան այլևս. դու նորից կարող ես կառուցել քո Ավանը, քո բերդը... Ուրե՞մն...

— Այո, Փառանձեմ, ես նորից կկառուցեմ իմ Ավանը, իմ բերդը,— ծանր սկսեց Արշակը։— Սակայն խորհում եմ, թե ինչո՞ւ ավագներից ոմանք հեռացան մայրաքաղաքից։ Մի՞թե նոքա ևս դատապարտում են ինձ Ներսեսի նման։ Մի՞թե կարծում են, թե այդ ամենը ես կատարեցի անձիս համար...

Ի դեպ. Ներսես կաթողիկոսը, որ նզովելով հեռացավ պալատից, մի քանի օր հետո մեկնեց Բյուզանդիա՝ եկեղեցական կարևոր մի ժողովի մասնակցելու։ Կատարվածից բարկացած էր այնքան, որ անգամ հարկ չէր համարել արքունիքին

Հայտնել իր մեկնումը։ Արշակը վշտացավ այդ անտեսումից, բայց... ահա Անդոք իշխանը գրում էր, թե կայսրը հույն եպիսկոպոսների հետ նրան ևս աքսորել է ինչ-որ կղզի...

— Նրանք անշուշտ սխալվում են, արքա,— ասաց Փառանձեմը շեշտով,— թե՛ Սմբատ սպեռը և թե՛ մյուսները։ Իսկ Վասակ սպարապետը, ճշմարիտ է, թեպետև հավան չէ Կամսարականների կոտորածին, բայց երբեք չի լքի քեզ... և այդպես մյուսները։ Նոքա մնում են պալատում և կատարում են իրենց պարտքը։ Հայր-Մարդպետն անգամ, թեև պարսկասեր, լսել եմ, դժգոհ չէ բնավ... Իսկ Գնունի եղբայրները՝ Դավիթը և Զենոնը նվիրված են քեզ. լիովին ըմբռնել են, որ դու կատարեցիր ոչ քեզ համար, այլ երկրի ապահովության։ Հետևաբար պատճառ չունես, արքա, սրտաբեկության։

— Ունեմ, Փառանձեմ, ունեմ և լուրջ առավել, քան կարող ես կարծել,— խոսեց Արշակը այս անգամ ձայնը փոխելով և ծայր մտահոգ եղանակով։— Տասը օր առաջ լուր առա, որ Մերուժանը և Վահան Մամիկոնյանը, լսելով ապստամբների պատիժը, դիմել են փախուստի... Այն մարդը, որ հրահրում ու բորբոքում էր նախարարների թշնամանքը իմ դեմ, ապաստանել է Տիզբոն։

— Առավել լավ,— աշխուժացավ Թագուհին։— Թշնամիդ հեռացել է երկրից և այսուհետ չի խառնակի ուրիշներին, չի վնասի երկրին ու քեզ։

Արշակի շուրթերին երևաց մի կոտրված ժպիտ։

— Ո՛չ, թագուհիս, նա այնտեղից կխառնակի ավելի։ Կուզեի, որ մնար իր ոստանում և ես նրան պատժեի այնպես, որ հավետ մոռանար իր տոհմը և իր բանսարկու բնույթը։ Ճշմարիտ է, Փառանձեմ, ես ընկճեցի նախարարաց սպառակտող ոգին, և հուսով եմ, այժմ երկիրը կամրանա անարգել։ Բնավ երկյուղ չունեմ, որ Սպանդարատ Կամսարականը ընտանյոք անցել է Բյուզանդիա. նա վտանգավոր չէ այնքան, որքան Մերուժանը դավաստ։ Սա, որ միշտ օգնող զորք է տվել ապստամբներին և շար մտքեր թելադրել նոցա, նույնը կարող է անել այժմ՝ հեռվից։ Իմացիր, Փառանձեմ, քանի ապրում է այդ դիվածին հոգին, նա հանգիստ չի թողնի մեզ...

— Նա փախել է անշուշտ վախից, արքա, —ասաց Փա-

ռանձեմը,— ուստի հազիվ թե ի վիճակի լինի նոր դավեր լարելու։ Թվում է ինձ՝ դա ծանր խոհերի առիթ չպետք է դառնա քեզ համար։ Մերուժանն այլևս անվնաս է, և լավագույն է մենք զբաղվենք մեր այլ հոգսերով...

Փառանձեմը ցանկանում էր ամեն կերպ ցրել ամուսնու տխրությունը, ուստի և հիշեցրեց, որ պետք է գրեր Բյուզանդիոնից ստացված նամակների պատասխանը, ու ինքը շտապով դուրս եկավ որդուն զգուշացնելու նամակ գրելու։

Իսկ Արշակը դարձյալ մնաց իր մտքերի հետ։ Հակառակորդ նախարարների փախուստը լսելու օրից՝ նա շատանակ մտածում էր նրանց կալանելու մասին։ Սակայն ինչպե՞ս գլուխ բերել այդ և ի՞նչ հնարավ— այս էր կաքավորը։ Արշակին զգում էր, որ Մերուժանը պարսից արքունիքում անշուշտ դավեր է նյութելու իր դեմ, ուստի և պետք էր կանխել...

Ապստամբ նախարարների կոտորածից անցել էր գրեթե մի ամիս և երկիրը ոչ թե այդ օրվանից, այլ զինադադարից սկսած խաղաղ էր արդեն։ Ամենքը, ինչպես թե շինական, արհեստավոր թե քաղաքացի, գոհ էին, որ պատերազմը վերջացավ։ Նրանք բնավ սրտի մտա չընդունեցին, որ թագավորը պատժեց նախարարներին։ Նրանց համար կարևորը խաղաղությունն էր, ավելի շուտ այն, որ այժմ անխափան կարող էին զբաղվել իրենց գործերով։ Շինականները՝ վարել, ցանել և հնձել հանգիստ։ Թող բերքի մի մասը տանեն նախարարները, եկեղեցին, արքունիքը, միայն թե պատերազմ չլինի... Ահա ինչու գոհ էին, որ պատերազմ չկա։ Շինականները մինչ այդ գիտեին, որ թշնամի լինում էր օտարը, պատերազմ սկսում է օտարը, բայց ներսի թշնամությունը, ներքին պատերազմը նոր էր ամենքի համար և... ծանր ու անհասկանալի։ Արշակին պատմել էին, թե ժողովրդի մեջ նախարարների ապանության մասին ասում էին. «Թող տատակեն... Իրենք եղան պատճառ, որ արյուն թափվեց»։ Ուստի և դատապարտում էին։

— Նզո՛վք պատերազմին... Աստված հեռա՛ պահի մեր որդոց ու թոռներաց,— ասում էին շատերը խաչակնքելով։

Ոչ միայն շինականները, ամենքը կարծում էին, թե պատերազմը վերջացավ և այսուհետև կլինի խաղաղություն, իսկ Արշակը գտնում էր, թե Հայոց Աշխարհի խաղաղությունը տևական կարող է համարել այն օրից, երբ արժանի պատիժը

կտա Մերուժանին և նրա բարեկամ Ծամիկոնեից իշխան Վահանին, որ նույնպես զորք էր տվել Արշակավանի դեմ և նույնպես փախել-ապաստանել է Իրան։ Արշակը փորձով համոզվեց, որ երկրին այնքան չի վնասում օտարի հարձակումը, որքան ներքին կռիվը, ուստի ցանկանալով ցանկանում էր արմատախիլ անել այդ աղետի հնարավորությունը։ Մտածելով, որ ներհակ նախարարները, լինեն երկրում թե երկրից դուրս, միշտ վնասելու են իրեն և երկրին, գտնում էր, թե ի՛նչ գնով էլ լինի, պետք է վերացնել «մեքենայող չարին», Մերուժանին։

Արշակը Անգեղաց իշխանիկի պատմածներից գիտեր արդեն, որ դժգոհ նախարարներին զորավիգ էր լինում Մերուժանը և որ սրա հրամաններն են ոգևորում նրանց։ Տակավին Կոգովիտի կռիվների օրերին, երբ իմացավ, որ Մերուժանը զինական ուժ է ուղարկում ապստամբներին օգնության,— մտածեց, որ իր գլխավոր թշնամին նա է՝ Մերուժանը. պետք է ուրեմն կալանել նրան և պատժել ավելի խիստ, քան պատժեց մյուսներին։ Ու Արշակին այնպես էր թվում, թե մինչև չպատժի Մերուժանին, չի կարող հանգիստ ձեռնամուխ լինել Ավանի և բերդի կառուցման։ Պետք էր նախ պատժել չարին, ապա սկսել Ավանի վերականգնումը...

Այո, նա կշինի նորից իր Ավանը՝ ավելի շքեղ, ավելի ամուր, որ նա դառնա իրոք անխորտակ բերդ, որպեսզի պաշտպանի Հայոց Աշխարհը ամեն արհավիրքից, որպեսզի ոչ մի պարսիկ չհամարձակվի ոտ դնել երկիրը հայոց։

Արշակին այժմ զբաղեցնում էին երկու խնդիր. պատժել Մերուժանին և նորոգել քաղաքը, որից հետո, նրան թվում էր, խաղաղությունը կթագավորի իր երկրում։

Բայց եզան նոր և ավելի ծանր դեպքեր...

* * *

Այս խոհերի մեջ էր Արշակ թագավորը, երբ մի օր սահմանից լուր եկավ, թե Իրանից՝ արքայից արքա Շապուհի կողմից մի պատգամավորություն է գալիս Վաղարշապատ։

Լուրն անակնկալ էր, հետևաբար առաջ բերեց մեծ հետաքրքրություն. թե՛ թագավորը և թե՛ ամեն ոք, ով լսեց, տարակուսում էին, թե ի՞նչ նպատակով կամ ի՞նչ առաքելությամբ

է գալիս այդ դեսպանությունը. նոր պատերազմ է պատրաստում Շապուհը և դաշնակից է փնտրում, թե կա այլ մի բան... Համենայն դեպս, մինչև կպարզվեր այդ ամենը, պետք էր կատարել ընդունված կարգը. և Արշակը Հայր-Մարդպետին կարգադրեց, որ երկու հոգի առնելով գնա եկողներին ընդառաջ և ընդունի պատվով։

Եվ երկու օր հետո, իրոք, այդ դեսպանությունը եկավ և տեղավորվեց միջնաբերդի հյուրատանը։ Եկողներից մեկը Շապուհի պալատականներից էր, մյուսները ազնվականներ էին։ Բոլորը երկար սրածայր գդակներ ունեին՝ գառան գանգրամազ մորթուց կարած և բրդյա լայն, հորդածալ թիկնոցներ։ Մորուքները միատեսակ սև էին և ձիգ սեպաձև։ Դրանց ուղեկցում էր մի ամբողջ թիկնապահ գունդ՝ զինված նետ-աղեղով ու տեգերով։ Զինվորներն ունեին թաղիքե կավագույն բղուղաձև գլխարկներ։

Դեսպանությունը, արքունի հյուրատանը հանգիստ առնելուց հետո, երկրորդ օրը ներկայացավ պալատ։ Ընդունելությանը նախապես հավաքվել էր հայոց ավագանին. այդտեղ էր սրահայաց Վասակ սպարապետը, լուրջ ու ծանրախոհ հազարապետ Դավիթ Գնունին, նրա եղբորորդի Զենոն Գնունին, երիտասարդ, բայց ճերմակահեր Ադամ Գնթունին, Ռշտունյաց երկարահասակ Մեհենդակ իշխանը, որ մի գլխով բարձր էր բոլորից, վերջապես ծաղկավեր դեմքով ներքինի Հայր-Մարդպետը և ուրիշներ։

Արշակը նստել էր գահին. նրա կողքին՝ մի աստիճան ցածր տեղ էր բռնել թագուհին, ապա ավագները կարգով՝ իրենց դիրքի և աստիճանի համեմատ։ Չնայած Արշակը հունական լեզվի չափ գիտեր և պարսկերեն, բայց և այնպես հրավիրել էին երկու թարգման հայ իշխաններից, որ հարկ եղած դեպքում օգնեն հասկանալու պարսից պատգամավորների ասածները, որովհետև պարսից պաշտոնական անձինք երբեմն սիրում էին խոսել հին ու խրթին ոճերով։

Երբ ամենքն արդեն հավաքվել և տեղ էին բռնել գահասբրահում՝ պալատի արարողապետը ներս գալով հայտարարեց.

— Պարսից Շապուհ արքայից արքայի բանագնացներ՝

իշխան Դեն-Միր, իշխան Միր-Մուշկ, իշխան Վեր-Շաբան, արքայից արքայի դպիր Սուր-Սուրի, զորավար Զահարի։

— Հրավիրիր,— կարգադրեց Արշակը բնազդաբար ուղղվելով գահի վրա և արքայական գավազանը բռնելով այնպես, որ նրա ոսկեգունդ գլուխը վրայի արծվաքանդակով սեսնվի պարզորոշ։

Պարսիկները ներս մտան հանդարտ, դանդաղաքայլ, որ նշան էր հարգանքի, իրարից մեկ-երկու քայլ հեռավորությամբ, ինչ նրանք համարում էին կիրթ պատշաճավորություն։ Ներս եկան, իրենց սովորության համաձայն, երկար գդակները դրած, ուսներին երկարաքղանց մետաքս թիկնոցներ առած, մորուքները անուշահոտ փայլուն յուղով օծած։ Այս ամենը նրանց նմանեցնում էր միմյանց, եթե չլիներ տարիքի և հասակների տարբերությունը։

Ներս մտնելով, նրանց գլխավորը, որ գալիս էր առջևից և որն ամենից երկարն էր ու տարիքովը, գլուխ իջեցրեց կուրծքն առաջ թեքելով. նրան հետևեցին մյուսները՝ նույն խոնարհումները կատարելով։ Ապա առաջնորդը, խոնարհած գլուխը հանդարտ բարձրացնելով, ասաց հանգիստ, բայց շեշտով.

— Ողջո՛ւյն և արևշատությո՛ւն հայոց արքային մեծ։

Այս ասելով՝ նա նորից գլուխ իջեցրեց և, կրկին դանդաղորեն բարձրացնելով, շարունակեց հանդարտ.

— Իմ արեգնափայլ տերը՝ արյաց արքայից արքա, վսեմաշուք և աստվածընտիր Շապուհը մեծ՝ ողջունում է քեզ, արքա հայոց, և ցանկանում է բարեբաստիկ ու խաղաղ կյանք քեզ և քո երկրին։ Նույնը ցանկանում է նաև քո բարեազնիվ թագուհուն, թագաժառանգին և արքունիքին...

Այս խոսքերի հետ նա շրջվեց աջ ու ձախ գլխի խոնարհումով, որ նշանակում էր, թե ողջունում է բոլորին և նորից կանգնեց ձգված։

— Միաժամանակ իմ մեծափառ տերը պատվիրել է ինձ՝ խնդրել նաև, որ ընդունես իր եղբայրական ու հայրական բարեկամության հավաստին և բարեմաղթություններ բարոյ կյանքի և երջանկության համար...

Վերջացնելով իր խոսքը՝ նա նորից մի վարժ խոնարհում արավ, որից հետո Արշակ-գավազանը ամուր բռնած, ոտի

կանգնեց։ Նրա հետ ոտքի կանգնեցին և բոլոր ավագները։ Նստած մնաց միայն Փառանձեմ թագուհին։

— Արքայից արքայի ողջույնների և բարեմաղթության համար մեր շնորհակալությունը եղբայրական,— խոսեց Արշակը պարսկերեն, հարգանքի համար բառերը ձգելով։ Ծոր տալով, ինչպես ընդունված էր պարսիկների մոտ։— Նույն օարիքները ասոմածային ցանկանալով Օրանի և Անեբանի հզոր արքային, կխնդրեի, տեր դեսպան, եղբայրական ողջույնս և բարեկամության հավատին մատուցանեա քո ասոմածային տիրոջը։

Արշակի համառոտ խոսքերից հետո պարսից դեսպանները—հինգն էլ—խոնարհում արին միասին։ Ապա, երբ ուղղվել էին, նրանց առաջնորդը ետ նայեց. նրա այդ ակնարկից՝ ծայրում կանգնած, տարիքով բոլորից փոքր դեսպանը դուրս գնաց և, մի բոպե անց, հետը բերավ երկու նոր պարսիկ՝ ոտից գլուխ կապույտ հագած։ Գրանք բռնել էին մի-մի արծաթ սկուտեղ՝ վրաներր ինչ-որ բաներ դարսած և ամենը մետաքս քողերով ծածկած։

— Թույլատրիր, արքա բարի,— խոսեց գլխավոր դեսպանը, ձեռքը դեպ սկուտեղները մեկնելով,— մատուցանել քեզ արքայից արքայի եղբայրական սիրո նվերները...

Ու, բանալով առաջին սկուտեղի քողը, մատնացույց արավ ոսկեզօծ գինու մի գավ՝ թռչնի պարանոցով, որի կողքին շարված էին նույնպիսի ոսկեզօծ դավաթներ։ Ապա արծաթ դաշույն՝ ոսկե կոթով, և ոսկե գոտի՝ թանկարժեք քարերով հյուսված։

Ապա դեսպանը երկրորդ սկուտեղը իր ձեռքն առնելով, հարգալիր քայլերով մոտեցավ թագուհուն և, նուրբ խոնարհումով, դրեց նրա առջև ու քողը վերցրեց.— սկուտեղի մեջ փայլում էին ոսկի և արծաթ զարդեր՝ պես-պես գույնի քարերով, որ շողում էին ակնախտիդ, շլացուցիչ ցոլքերով։ Կային այդտեղ գոհարապարդ բազպաններ, ադամանդակուռ, զմրուխտաքար մատանիներ, կարմիր, դեղին ու սև սաթի շարեր և մանյակներ, ականջի ու գլխի զարդեր...

Նվերները մատուցելուց հետո դեսպանության գլխավորն անցավ այնուհետև իր առաքելության բուն նպատակին։

— Այժմ, Հայոց Աշխարհի մեծ արքա, թույլատրիր ծառայիդ՝ կատարել իրեն հանձնարարված պարտքը։

— Խոսիր, դեսպան արքայից արքայի,— ասաց Արշակը, լարված սպասելով այն կարևորին ու էականին, ինչ հետաքրքրում էր իրեն դեսպանության եկած օրից։

Եվ դեսպանը, կրկին ակնածալից խոնարհում անելով, սկսեց.

— Իմ ողորմած տերը՝ արքայից արքա և աստվածորդի Շապուհը մեծ, հղելով քեզ, արքա Հայոց, իր ողջույնները հայրական, միաժամանակ խնդրում է քեզ՝ շնորհ բերել իր մայրաքաղաքը՝ Տիզբոն, երկու հարևան երկրների հասարակաց օգուտի մասին բարեկամաբար խոսելու, և ուղարկել է ահավասիկ... իր կնքած հրավերը...

Այստեղ դեսպանը, խոսքն ընդհատելով, թագավորին մատուցեց մի նամակ և արծաթյա մի տուփ, որի մեջ աղ էր՝ կնքած առյուծաքանդակ մատանիով։

«Ի՞նչ է նշանակում այս»,— մտածեց Արշակը և, ձեռքը երկարելով, ընդունեց կնքած աղի տուփը։

Կնքած աղը զրադաշտականի համար համարվում էր երդման ամենաբարձր ու նվիրական ձևը։ Արշակը, որ միշտ կասկածով էր վերաբերվում Շապուհին, համարելով նրան խորամանկ ու խարդախ, կնքած աղը տեսնելով՝ զգաց, որ հրավերն իրոք անկեղծ է և կարևոր դործի համար։

— Սիրով ընդունում եմ արքայից արքայի նվերները, հարգո դեսպան, և հայտնում եմ շնորհակալություն,— ասաց Արշակը։— Ինչ կվերաբերի արքայից արքայի հրավերին՝ ես պիտի խորհեմ տակավին, թե ե՞րբ կներեն երբ՝ իրիս գործերը և ե՞րբ ի վիճակի կլինեմ ընդունելու մեծ արքայի հաճելի հրավերը... և իմ պատասխանը դու կստանաս երկու օրից,— ասաց նա դարձյալ պարսկերեն։— Իսկ առայժմ կցանկայի, որ հանգիստ առնեք երկար ճանապարհի խոնջենքից, իբրև հյուրեր թանկագին։

Դեսպանները գլուխ իջեցրին և նույն կարգով ու նույն քայլերով պատշաճավորության դուրս եկան գահասրահից։

Արշակը ելավ գահից։

Ընդունելությունը վերջացավ։ Հայոց ավագները նույնպես հերթով դուրս եկան գահասրահից, կարծես խորհելով, թե

ի՞նչ է նշանակում այդ հրավերը և ի՞նչ պիտի լինի նամակում։

Նույն մտքերն էին զբաղեցնում նաև Արշակին։ Երբ գահաթարահում այլևս ոչ ոք չմնաց՝ նա բացեց Շապուհի նամակը և կարդաց.

«Ես արքայից արքա, արանց և անարանց երկրների տեր, աստղերի ընկեր, արեգակի և լուսնի եղբայր Շապուհս՝ հղում եմ հայոց արքա Արշակին, իմ որդուն, ողջույն։

Ուրախ եմ և հավան միանգամայն, որ պատժել ես անհնազանդ ծառաներիդ, որոնք նկրտում էին խախտել իրավունքներդ և հանգիստդ արքայական։ Այո, պատժել պետք է թյուրագույնս, երբ մի ծառա, թեկուզև իշխան, հանդգնում է ելանել իր տիրոջ՝ իր թագավորի դեմ»...

Ապա Շապուհը ցանկություն էր հայտնում, թե կուզեր շուտափույթ հանդիպել և խոսել երկու հարևան երկրների բախտի ու ապագայի մասին, որից հետո շարունակում էր.

«Այնուհետև թող լինի մեր մեջ սեր, խաղաղություն ու բարեկամություն։ Իսկ մենք լինենք հայր և որդի»։

Սրան հետևում էին հրավերի խոսքերը, գրեթե այն ամենը, ինչ ասաց դեսպանության գլխավորը։

Կարդաց Արշակը և ուրախացավ։ Այն, ինչ ցավ ու վերք էր նրա սրտում մինչ այդ՝ այժմ դարձավ իրագործելի հույս։ Առաջին միտքը, որ ունեցավ Արշակը նամակն ընթերցելիս, այն էր, թե ահա լավ առիթ Մերուժանին և Վահան Մամիկոնյանին ձեռք գցելու և պատժելու։ Հնարը գտնվեց վերջապե՞ս... Հիմա նրանք այլևս չեն կարող խուսափել իրենից։ Բավական է ինքը համաձայնի գնալ և պահանջել նրանց— Շապուհը չի մերժի երբեք։ Հանուն բարեկամության նա հանցագործին անմիջապես կհանձնի իրեն, մանավանդ որ Շապուհն ինքն ևս զայրույթով է խոսում ապստամբների մասին։

Ճշմարիտն ասած, Արշակը Իրան գնալու ցանկություն չուներ բնավ, ոչ էլ նպատակ կամ հույս Շապուհի հետ բարեկամանալու, բայց երբ նա կնքած աղ է ուղարկել—կռահեց, որ Շապուհն իրոք բարեկամանալու կարիք է զգում, մանավանդ նախարարների պարտությունից հետո։ Այո, աշխարհում հարգում են ուժը,— մտածում էր Արշակը,— և Շապուհն այժմ, նախարարների պատժից հետո, անշուշտ զգացել է իր ուժը։

ուստի և հրավիրում է բարեկամանալու... Եվ ինքը, ինչու չէ, կերթա, որպես ապստամբ նախարարներին հաղթող. կերթա, հատկապես Մերուժանի համար. նրան առնելու և բերելու համար... Բերի, որ այստեղ պատժի ամենքի առաջ... ի խրատ և ի ցույց ամբարտավան նախարարների։

Եվ Արշակը դարձյալ վստահ էր, որ Շապուհը սիրով կհանձնի նրան, որպեսզի Հայոց Աշխարհի բարեկամությունն իր հետ լինի ամուր։

Այո, Մերուժանը, միայն Մերուժանը...

* * *

Շապուհի դեսպանությունը մեծ հետաքրքրություն առաջ բերեց թե՛ պալատում և թե՛ մայրաքաղաքում. ամենքը խոսում էին նրանց բերած մեծագին նվերների և մանավանդ անակնկալ հրավերի մասին։ Ինչո՞ւ է արդյոք հրավիրում Շապուհը, ի՞նչ կարևոր տեսակցություն է դա, որ հրավիրելու համար ուղարկել է մի այդպիսի մեծ դեսպանություն։ Ի՞նչ է նշանակում այդ. մի՞թե Իրանը պատերազմի վտանգ է զգում, և արդյոք բյուզանդացիների՞, թե քուշանների կողմից... Երկար խորհելով՝ ամենքը գալիս էին մի եզրակացության, որ, այո, միայն պատերազմի վտանգը կարող էր Շապուհին ստիպել կնքած աղ ուղարկել հրավերի համար, այլապես նա հազիվ թե դիմեր այդ միջոցին։

— Պետք է խորամուտ լինել,— ասում էր Հայր-Մարդպետը։— Արքայից արքան կամենում է բարեկամություն հաստատել մեզ հետ, և դա օգտակար է հույժ։

Ոչ միայն պալատականները, ինքն Արշակը ևս մտածում էր այդպես. միայն պատերազմի մոտալուտ վտանգի դեպքում Շապուհը կարող էր ուղարկել այդքան առատ նվերներ և... կնքած աղ՝ լիակատար անկեղծության ապացույց։ Անշուշտ, դարձյալ պատերազմի վտանգն է, որ հարկադրել է նրան՝ սպարապետ Վասակին նույնպես հրավիրել Տիզբոն...

Եվ այդ հրավերը Արշակին հպարտություն էր պատճառում. ուրեմն Շապուհն զգում է հայոց օգնության կարիքը և ցանկանում է բարեկամանալ իրեն, և այդ խոկ պատճառով հրավի-

ռում է հատուկ բարձր պալատականի միջոցով, այսինքն մեծ հարգանքով։

Երեկոյան Արշակը ավագներին հրավիրեց խորհրդի, ուր անհրաժեշտ էր համարում կարդալ Շապուհի նամակը և իմանալ նրանց կարծիքը։ Եկան Վասակ սպարապետը, Հայր-Մարդպետը, Գնունիները, Մեհենդակ իշխանը, մինչև իսկ դրանիկ գնդի պետ Վահան Խորխոռունին։ Երբ ամենքը հավաքվել էին գահասրահում և նստել իրենց բարձերին՝ Արշակը եկավ գլխաբաց, վրան միայն թիկնոց, որ ճարմանդել էր անրակի վրա։ Ավագները ոտքի կանգնեցին և գլուխ իջեցրին։ Երբ Արշակը նստեց գահին՝ նրանք նույնպես գրավեցին իրենց տեղերը։

Խորհրդակցությունն սկսվեց Շապուհի նամակի ընթերցումով, որից հետո Արշակը հետաքրքրվեց, թե ի՞նչ են մտածում ավագները Շապուհի այդ հրավերի մասին։

Առաջինը խոսեց Հայր-Մարդպետը։

— Արքայից արքայի հրավերը պատեհ և երջանիկ առիթ է, արքա, մեր և պարսից բարեկամությունը ամրապնդելու։ Հրավերը հույժ բարեկամական է, արքա։ Ապացույց՝ կնքած ալը։ Պետք է խորամուտ լինել...

«Հայր-Մարդպետը դարձյալ խորհում է իր կալվածների ապահովության մասին»,— մտածեց Արշակը, նայելով նրա բազմածալ պարսկական թիկնոցին, որի փեշերը ծածկույթի պես բռնել էին նրա բարձի շուրջը։

— Հրավերը, անտարակույս, հաճալի է,— խոսեց հազարապետ Գնունին։— Սակայն հրավերի առիթը և նպատակը պարզ չէ, արքա։ Որքան և խորհում եմ՝ հասու չեմ լինում, թե ի՞նչը կարող էր ստիպել Շապուհին հապճեպ հրավիրել քաղաքական հանդիպում։ Արդյոք պատերազմ է սպասում Բյուզանդիայից, թե այլ մի երկրի կողմից, ուստի և կամենում է ապահովել իրեն հայոց բարեկամությամբ, թե... Որքան իրազեկ եմ սակայն՝ Բյուզանդիան առայժմ չունի նպատակ պարսից դեմ ելանելու։ Թերևս այդօրինակ մի վտանգ սպառնում է Քուշանաց աշխարհից... Համենայն դեպս, արքա, խորհում եմ, որ լավագույնս՝ Հայոց Աշխարհը մնա չեզոք... Ի դեպս, իհարկե, պատերազմի,— շեշտեց նա վերջին բառերը։

— Առավել ցանկալի չէ՞ արդյոք, տեր հազարապետ, դառ-

նալ բարեկամ և ընդմիշտ ապահովել մեզ պարսից վտանգից,— ընդհատեց Հայր-Մարդպետը։

— Իսկ պարսից բարեկամ չէ՞ր նշանակի՝ Բյուզանդքայի թշնամի,— լսվեց սպարապետի հեգնական հարցումը։

Հայր-Մարդպետը շշփոթվեց.

— Հարկավ։ Սակայն առավել ցանկալի պիտի համարենք բարեկամանալ պարսից, քան հոռոմաց, վասնզի...

Արշակին հաճույք էր պատճառում Հայր-Մարդպետի ճիգը, որի նպատակը պարսից սահմանի երկարությամբ ընկած իր կալվածների ապահովությունն էր, և դա այնքան թափանցիկ էր, որ հասկանում էին ամենքը։ Ասենք պալատում ոչ միայն թագավորը, այլև շատերը գիտեին, որ երբ Հայր-Մարդպետը լսում էր, թե հայ և պարսից հարաբերությունները կարող էին վատանալ, մտածում էր առաջին հերթին, թե պարսիկը կմտնի իր կալվածները, պետք է ուրեմն կանխել հարաբերությունների վատթարացումը։

— Քո ցանկությունը հայտնի է ինձ, Հայր-Մարգպետ,— նորից խոսեց ծեր հազարապետը։— Բարեկամություն հարևանների հետ ցանկալի է հանապազ։ Սակայն խորհում եմ, որ մեր աշխարհի համար գերադասելի է մնալ չեզոք ըստ ամենայնի։

Լսելով ավագների վեճը՝ Արշակը մտածում էր. «Եթե Շապուհը Մերուժանին հանձնի ինձ՝ ես բարեկամություն կխոստանամ նրան։ Եթե նա իրոք բարեկամություն է ցանկանում՝ ես կասեմ.— Մեր երկուսիս բարեկամությունը խանգարում են Մերուժանի նման մարդիկ, որ հորինածո լուրերով պղտորում են մտքերը. և ահավասիկ, որպեսզի ամրանա մեր բարեկամությունը՝ հանձնիր Մերուժանին բանսարկու, և մենք կլինենք բարեկամ»...

Մինչ ավագները վիճում էին վայելչության սահմաններում՝ Արշակը թե՛ լսում էր և թե՛ միաժամանակ խորհում իր մտքերը. բայց երբ խոսել սկսեց Վասակ սպարապետը՝ նա լարվեց և սևեռուն նայեց իր զորավարի պիրկ կազմին ու մանր, բայց սրահայաց աչքերին։

Սպարապետն ասում էր.

— Ճշմարիտ է, Շապուհը նենգ է, նրա ամեն խոսքին դժվար է հավատալ, բայց երբ նա հավաստիացում է տալիս

զրադաշտականի համար նվիրական կնքած աղով՝ մենք այդ հրավերը մերժել չենք կարող հարկավ... Բարեկամությունը, տիարը, լինում է տարբեր. կարելի է լինել և չեզոք բարեկամ և մտերիմ բարեկամ... Մենք կարող ենք լինել չեզոք բարեկամ և չենք պարտավորվի զինակցության...

Խոսեցին ավագները երկար. հիշեցին անցյալի շատ փաստեր պարսից պատմությունից, դավերից, և այնուամենայնիվ դտան, որ հրավերը, մանավանդ կնքած աղով հրավերը, մերժել չի կարելի։ Վերջապես, բարեկամությունն ստեղծվում է հանդիպումներով, բանակցությունների և տեսակցությունների միջոցով։ Հարևանները հավիտյան թշնամի չպետք է մնան... Ակնարկ եղավ և այն մասին, թե կարելի է անգամ բարեկամ ձևանալ առերես ու հանձն չառնել և ոչ մի պարտավորություն... Արշակն այդ ամբողջ խորհրդաժողովից իմացավ մի հաստատ ցանկություն, թե պետք է զգույշ լինել, շռայլ խոստումներ չանել և գերադասել Հայոց Աշխարհի չեզոքությունը... Իսկ ընդհանրապես, ավագների մեծ մասը կողմնակից էր գնալուն։ Լավ առիթ է հարևանի հետ բարեկամանալու։ Ապահով է այն երկիրը, որ բարեկամ է հարևանի հետ։

Նույն կարծիքի էր և ինքը Արշակը, բայց առաջ ու առաջ նրան հետաքրքրում էր Մերուժանը. գնալ և «կապանոք բերել ստամբակին»։

Բայց այդ ամենից հետո Թագուհին բացարձակ դեմ եղավ Տիրոն մեկնելուն։ Լսելով ավագների կարծիքը՝ Փառանձեմը հուզվեց.

— Ո՛չ, արքա։ Մի՛ գնար։ Շապուհը խարդախ է։ Կարող է կաշկանդել քեզ ծանր պարտավորություններով։ Երևի չի մոռացել և քո փոքրիկ օգնությունը բյուզանդացիներին։ Հիշի՛ր, ինչպիսի՛ չարությամբ կործանեց Տիգրանակերտը՝ իշխան-հորս չեզոքության համար... Ո՛չ, արքա...

Արշակը ջանաց բացատրել գնալու կարևորությունը.

— Ճշմարիտ է, Փառանձեմ, Շապուհը նենգ է, խարդախ, բայց պատերազմի վտանգի հանդեպ՝ պիտի ձգտի բարեկամանալ. մանավանդ ապիրատ նախարարների պատժից հետո՝ այլապես չէր ուղարկի մեզ մեծ դեսպանություն, կնքած աղ և այնքան նվերներ. ինչ ապացույց են նրա անկեղծության։

— Արքա, չեմ կարող ասել ինչո՞ւ, սակայն սիրտս վկայում է, որ չպետք է մեկնել։

— Ո՛չ, Փառանձեմ։ Թվում է՝ Շապուհն այժմ Հայոց Աշխարհի բարեկամության կարիքը ունի. և ես կամիմ օգտվել այդ առիթից բարեպատեհ և ստանալ Մերուժանին անիծյալ, որ այնքան աղետ բերեց մերայնոց և Աշխարհիս Հայոց։ Դարձնելով նրան անվնաս՝ գոռոզամիտ նախարարները ինքնակամ կդպչեն իրենց, և ես կարող կլինեմ հասնել նպատակիս. քանի՞ տարի է Մերուժանը խռովում է մեր երկրի խաղաղությունը և խուսափում պատժից։ Այժմ, վերջապես, գտնված է նրան կալանելու և պատժելու հնարը։ Չպետք է թողնել առիթը...

— Իսկ քաղա՞քը, արքա,— հանկարծ հիշեց Փառանձեմը, մտածելով, որ միայն դա կարող է սթափեցնել Արշակին, որպեսզի նա ետ կանգնի իր մտադրությունից։— Ո՞վ պիտի վերակառուցի քո վնասված քաղաքը։ Կարելի՞ է միթե թողնել ավերակ և... վերջապես, ո՞վ պիտի սկսի հայոց բերդը։

— Մի կարծիր, Փառանձեմ, թե մոռացել եմ քաղաքը։ Ես մինչև իսկ խորհում էի, թե անհրաժեշտ չէ՞ արդյոք նոր կառավարիչ կարգել նահատակ Վարազ Գնունու փոխարեն, որպեսզի նա սկսեր աշխատանքը մինչև վերադարձս։ Սակայն խորհեցի, որ անփորձ կառավարիչը չի կարող գործել առանց ցուցումների, ուստի և ամենը կսկսեմ վերադարձիս... Դա պիտի լինի իմ միակ հոգսը՝ կառուցել և ավարտել։ Բայց նախ անվնաս դարձնենք Մերուժանին...

Փառանձեմը լռում էր և գլուխն օրորում, հետո չհամբերեց և ընդհատեց ամուսնու խոսքը.

— Վախենամ, արքա, Մերուժանի պատճառով վնաս բերես քեզ. ճանապարհը երկար է, վտանգալի... գուցեև ցուրտ։

— Ձմեռը տակավին հեռո՛ւ է։

— Այսուամենայնիվ, արքա, ցանկալի է հետաձգեիր մեկնումդ գեթ առժամանակ, մինչև կպարզես, թե ի՞նչ նպատակով է կանչում Շապուհը։ Եթե մեկնես, առանց հրավերի նպատակը պարզելու, ես տագնապի մեջ պիտի լինեմ շարունակ։

— Ես կուղարկեմ քեզ սուրհանդակներ, Փառանձեմ,— խոստացավ Արշակը քնքշաձայն, ավելացնելով, որ կանայք

միշտ երկնչում են ամեն բանից, լինելով հոգով անարի և վախկոտ։— Արիացի՛ր... Մերուժա՜նը... Մերուժանը...

Երկու օր հետո Արշակը ճանապարհեց Շապուհի դեսպաններին, նախապես ընդունված կարգով պարգևներ բաշխելով նրանց և պատվիրելով հայտնել արքայից արքային, թե ինքն ես կգա շուտով։

Եվ մի շաբաթ անց իրոք թագավորը մեկնեց իր թիկնապահ գնդով, Վասակ սպարապետի ուղեկցությամբ։ Պայծառ առավոտ էր. թվում էր արևն իր ամբողջ շողերը թափել է մեկնողների հագուստների և զենքերի վրա. փայլում էին նրանց ոսկեթել բանված ները, պղնձի սաղավարտները, տեգերն ու նիզակները։ Պալատական ավագներից շատերը և նախարարներ, նաև Փառանձեմ թագուհին և Վասակի Կատրանիդե տիկինը ճանապարհեցին նրանց մինչև Արաքսը։ Բոլորը գնում էին նժույգներ հեծած։ Հասնելով Տափերական կամուրջին՝ ամենքն իջան ձիերից և սկսեցին հրաժեշտի արարողություններ։ Մնացողները մաղթում էին «բարի երթ և բարի վերադարձ». գնացողները «ցանկությունդ ի բարին» ասելով փարվում էին իրար... Թիկնապահ գնդի զինվորները միայն չունեին բարեմաղթող. նրանք տխուր նայում էին կատարվող տեսարաններին և սպասում, թե ե՞րբ պետք է ճանապարհվեն։

— Արիացե՛ք, և արի՛ կացեք...

— Անհամբեր սուրհանդակի պիտի սպասեմ,— ասաց թագուհին արցունքները սրբելով։

— Բարի է, թագուհիս։ Տիզբոն ժամանելուն պես՝ քեզ լուր կբերեն իմ քաջավազ սուրհանդակները։

Ու մեկնողները՝ ամենքը նորից նստեցին նժույգները և սմբակների բազմատրոփով անցան կամուրջը. իսկ մնացողները կանգնեցին այնքան, մինչև որ նրանք թաքնվեցին աչքից։ Նրանք գնալու էին ոչ թե Նախճվանով, այլ լեռների վրայով պիտի իջնեին Հեր գավառը՝ ճանապարհը կարճելու համար։

* * *

Վերադառնալով մայրաքաղաք՝ Փառանձեմի համար սկսվեցին նոր օրեր, ծանր սպասողության ու տագնապի օրեր։

Ի՞նչ է լինելու, ինչո՞ւ հանկարծ Շապուհը ցանկացավ բարեկամանալ հայոց թագավորի հետ... մտածում էր նա, շրջելով Արշակունիների ընդարձակ պալատում մեն-մենակ՝ իր մտքերի ու կասկածների հետ։ Չնայած հազարապետի կինը՝ պառավ Նանան, սպարապետի Կատրանիդե տիկինը և մյուս պալատական կանայք ամեն օր այցում էին նրան և զրուցում երկար, այնուամենայնիվ նա չէր հանգստանում և դրեթե ամեն օր հետաքրքրվում էր, թե ուղևորներն այժմ ո՞ւր հասած կլինեն արդյոք։ Տալիս էին ենթադրական մի տեղի անուն։

— Իսկ քանի՞ օրվա ճանապարհ է մինչև Տիզբոն։

— Տասը, գուցեև տասնուհինգ, նայած ինչ արագությամբ են գնում, թագուհի։

Երբ տասը օրն անցավ՝ Փառանձեմը մտածեց, թե այժմ երևի հասել են և Շապուհը այսօր կամ վաղը կընդունի Արշակին։ Իսկ հետո կգա սուրհանդակը... Չնայած ամեն օր նրա մոտ լինում էին և նրա սպասին էին կանգնում պալատականներն ու նրանց կանայք, բայց և այնպես Փառանձեմը, չգիտես ինչու, փափագում էր՝ «գեթ մի հարազատ լիներ մոտս՝ հայրս, մայրս կամ Պապս, իմ միակը, որ ցանկանում է գալ միայն գարնանը»... Մտածում էր անվերջ և սպասում սուրհանդակի։

Վերջապես քսան օրից եկավ առաջին սուրհանդակը։ Դա մի զինվոր էր՝ թագավորի թիկնապահ գնդից։ Ներս բերեց նրան Զենոն Գնունին։ Զինվորը խնամքով մաքրել էր վրանգլուխը, բայց արևախանձ ու քամահար դեմքը մատնում էր, որ նա երկար ճանապարհ է կտրել, և չնայած իրեն պահում է առույգ, սակայն հոգնած էր իսպառ։

Փառանձեմը սկսեց մանր հարցուփորձել. ինչպե՞ս գնացին առաջին օրը, որտե՞ղ գիշերեցին. ինչպես էր զգում արքան ճանապարհին. չունեցա՞վ հոգնածություն, գլխացավ... Սուրհանդակը նկարագրեց ճանապարհը, իրենց գիշերելու տեղերը և թագավորի ինքնազգացումը...

— Այժմ պատմիր, տղա, ինչպես մտաք Տիզբոն և ինչպե՞ս ընդունեցին թագավորին և ձեզ ամենքիդ։ Սիրո՞վ...

Սուրհանդակը ուշիմ երիտասարդ էր. կենդանի նկարագրեց, թե ինչպես պարսից մեծամեծները ձիերով եկել էին

ընդառաջ՝ քաղաքից դուրս. իսկ արքային հատկացրին մի ամբողջ պալատ, ծառաներ, ամեն ինչ...

Այնուհետև Փառանձեմը հետաքրքրվեց, թե արքան կարողացա՞վ արդյոք մաքրվել ճանապարհի փոշուց։

— Այն շենքը, թագուհի, ուր պիտի ապրի արքան, ունի և բաղանիս։

Այնքան մանրամասն էին հարցումները, որ Փառանձեմն ինքն էլ հոգնեց, սուրհանդակն էլ։

— Մնացյալի մասին, տղաս, կհարցնեմ վաղը։

— Հրամանքդ, թագուհի։

Երբ սուրհանդակը պատրաստվում էր դուրս գալ՝ թագուհին, նայելով զինվորի ոտքերին, կարգադրեց, որ նրան տան նոր հանդերձանք և մի զույգ մուչկեր։

Սուրհանդակի գալուց անցավ հազիվ մի շաբաթ՝ Տիզբոնից նորից դեսպան եկավ՝ այս անգամ թագուհու մոտ, հայտնելով, թե արքայից արքա Շապուհը սիրով իր արքունիքն է հրավիրում հայոց տիկնոջը և ավագներին՝ պարսից մեծ տոնին մասնակցելու։

Պարսից դեսպանի հետ Շապուհն ուղարկել էր և մի հայ իշխանի։ Սա պատմում էր, թե Շապուհը մեծ պատիվների է արժանացնում Արշակ թագավորին, խոստանում է նրան հողեր և պատիվներ... բայց ցանկանում է ահա, որպեսզի թագուհին, նաև նշանավոր ավագները հայոց, նույնպես ներկա լինեն պարսից աշխարհի մեծ տոնին...

Ընդունելով պարսից նոր դեսպանին և լսելով նրա հրավերը, թագուհին արեց մի քանի զուսպ հարցումներ.

— Սակայն ինչո՞ւ այդ հրավերը չեղավ իմ թագավոր ամուսնու հրավերի հետ։ Այն ժամանակ ես և իմ ավագները թերևս ի վիճակի լինեինք գալու։

— Մեր լուսաճառագ տերը այնքան ուրախ է իր և հայոց արքայի բանակցությանց արդյունքով, որ կամենում է նշանավորել այն պարսից մեծ տոնի օրը՝ երկու արքունյաց մեծերի մասնակցությամբ։

Փառանձեմը հոնքերն ու շուրթերը սեղմեց միաժամանակ և ասաց միայն.

— Բարի է։ Դուք հանգիստ առեք, մենք կխորհենք անհրաժեշտը։

Թագուհին խորհելու կարիք չուներ. նրա ժխտական կարծիքը հայտնի էր ավագներին։ Այսուամենայնիվ ինքը կանչեց նրանց պարսից հրավերի վրա խորհելու. և ավագների մեծ մասը դեմ եղավ հրավերն ընդունելուն. ի՞նչ կարիք կա տաժանելի ճանապարհորդություն կատարել։ Տիզբոն գնալու՝ մի ինչ-որ հանդեսի համար, թեկուզև դա լինի արտաքո կարգի։ Միայն Հայր-Մարդպետն էր, որ, ինչպես Թագավորի հրավերի ժամանակ, այնպես էլ հիմա պնդում էր, թե հանուն բարեկամության և ապահովության չպետք է մերժել և ոչ մի հրավեր։

Զենոն Գնունին, նկատելով Հայր-Մարդպետի եռանդուն պաշտպանությունը, առաջարկեց հեգնանքով.

— Ուղարկենք Հայր-Մարդպետին։

Ներքինին չվիրավորվեց.

— Եթե ինձ ես լիներ հրավեր՝ չէի մերժի։ Պատրաստ եմ հայրենի երկրիս բարօրության համար։

Փառանձեմը խոսեց վերջում.

— Մենք,— ասաց,— չենք կարող մեր աշխարհը թողնել անտեր։ Ես լավ ոչինչ չեմ տեսնում այդ հրավերի մեջ։ Եթե բանակցություններն ունեցել են լավ արդյունք, թող այդ տոնեն իրենք՝ արքաները, Վասակ սպարապետը և մյուսները։ Չկա հրամայական կարիք և ստիպողական անհրաժեշտություն հանձն առնել տաժանելի ուղևորություն։ Թվում է կարելի է գոհանալ միայն շնորհակալությամբ... Ես գոնե չեմ կարող հավատալ այն մարդուն, որ խաբեց իմ իշխան-հորս։

Սրանով վերջացավ հրավերի քննարկումը։

Հետևյալ օրը հազարապետ Դավիթ Գնունին, պարսից դեսպանին պալատ հրավիրելով, հայտնեց Թագուհու մերժողական պատասխանը, բայց այնպիսի խոսքերով ու եղանակով, որ անվայել չթվար. տկար է Թագուհին և այլն... Ու քանի որ Թագուհին տկար է, մյուսները նույնպես չեն կարող բացակայել պալատից...

Իսկ Փառանձեմը պարսից դեսպանին ուղեկցող հայ իշխանի հետ հղեց մի նամակ Թագավոր-ամուսնուն, զգուշորեն գրելով, որ իր գալը Տիզբոն աննպատակահարմար է և ինքը

թող շտապի վերադառնալ... Նամակը հղեց հատկապես այն նպատակով, որ Արշակը չկարծի, թե ինքն իրոք տկար է և իզուր շմտահոգվի...

* * *

Այդ օրից անցավ բավական ժամանակ և ահա մի առավոտ ծեր Գնունին եկավ Թագուհու հարկաբաժինը սովորականից ավելի դանդաղ քայլերով և, գլուխ իջեցնելով, հառաչեց.

— Դու, Թագուհիս, գուստրն ես մեր կորովի Անդոք իշխանի։ Խիզախ հայրդ ամեն աղետի ու գժբախտության տակացել է քաջաբար...

— Տեր հազարապետ, խոսքիդ եղանակը օտարոտի է ինձ։ Խոսիր պարզ և մեկին։

Իրոք, հազարապետի ձայնը բեկված էր անչափ։

— Հրամանդ, Թագուհի. կցանամ լինել ավելի պարզ,— շարունակեց Դավիթ իշխանը նույն ձայնով։— Միայն կխնդրեի, որ դու, Թագուհիս, զինվես կորովով մեծ։

Փառանձեմը լարվեց ավելի և չհամբերեց.

— Քո դեմքից և խոսքիդ եղանակից, իշխան, զգում եմ, որ դու ինձ աղետ ես գուժելու։

— Այո՛, Թագուհիս,— նոր խոնարհում արավ ծերունին։— Ինձ գժբախտ դեր է վիճակվել այսօր գուժկան լինելու։

— Խոսիր, տեր հազարապետ։ Ես կարող եմ լսել։ Պատահե՞լ է հորս մի բան։

— Ո՛չ, Թագուհիս. նա ողջ-առողջ է։

Փառանձեմի դեմքը գունափոխվեց վայրկենապես։

— Գուցե որդո՞ւս՝ Պապին։ Սովային...

— Ո՛չ, Թագուհիս։ Ո՛չ։

— Հապա այլ ի՞նչ աղետ։

— Արիացիր, Թագուհիս, և լսիր. մեր արքան և սպարապետը զոհ են դարձել մեծ խարդավանքի,— ծերունու ձայնը բեկվեց ավելի, և նա, չգիտես ինչու, հապաղեց շարունակել։

— Եվ ի՞նչ աղետ է բերել Շապուհը նոցա,— ձեռները պրկեց Թագուհին։

— Ողբանդվիր, Թագուհիս։ Մեծ խարդախը բանտարկել է նոցա։

Թագուհին նորից գունափոխվեց. նրա կուրծքն սկսեց իջնել-բարձրանալ։ Նա ձեռքը դրավ սրտին և լռեց գլխիկոր... Անցան վայրկյաններ, շատ վայրկյաններ, երբ նա, վերջապես, գլուխ բարձրացրեց ընդոստ.

— Մենք խաբվեցինք, իշխան, խաբվեցինք չարաչար։ Ինչպե՞ս մոռացանք, որ Շապուհը չարաբարո է և նենգ։ Խաբվեցինք կնքած աղին. իսկ նա ուխտադրուժ՝ ոտնահարեց իր սրբությունը նվիրական։ Խաբվեցի՞նք...

Փառանձեմը նորից լռեց միառժամ, ապա հարցրեց.

— Իսկ ո՞վ է բերել այդ գույժը, իշխան։

— Սուրհանդակը, Թագուհիս։

— Ի՞նչ սուրհանդակ է դա։

— Մեր արքայի թիկնապահ սեպուհներից մեկը։ Փախել է ծպտյալ։

— Հրամայիր, իշխան, կանչեն նորան։ Կցանկանայի լսել անձամբ։

Մի քանի վայրկյան հետո սուրհանդակը, որ իրոք արքայի թիկնապահ սեպուհներից էր, Թագուհու առջև կանգնած պատմում էր Թագավորի և սպարապետի բանտարկությունը։ Պատմեց նախ, թե ինչպե՛ս էին տեղ հասել և թե ինչպիսի՛ պատվով էին ընդունել Թագավորին ու Վասակ սպարապետին։

— Առաջին օրերը,— շարունակեց սեպուհը,— Շապուհը մեծ հարգանք ուներ Թագավորի հանդեպ, այնքան մեծ, որ մի անգամ, երբ Շապուհի ախոռապետը իր լեզվով վիրավորիչ խոսք էր ասել մեր արքայի հասցեին, և Վասակ սպարապետը կտրել էր այդ ախոռապետի գլուխը—Շապուհը գովեց սպարապետի վարմունքը։ Սակայն... Երկու օր հետո հրամայեց բանտել թե՛ սպարապետին և թե՛ Թագավորին։

— Պատճա՞ռը,— չհամբերեց Փառանձեմը։

—Պատճառը, Թագուհիս, ինչպես լսեցի, այս է. Շապուհը բարկացել է և ասել, «Բավական չէ բացահայտ ու ծածուկ օգնում ես բյուզանդացիներին, այժմ էլ բերդե՞ր ես շինում սահմանիս մոտ, որ քո բարեկամ բյուզանդացիներին մուտքնես իմ երկրին»... Բարկացել է և հրամայել. «Շղթայել դոցա, թող Թագավոր ու սպարապետ գնան միասին բերդեր շինեն Անհուշ բերդում»...

Թագուհին գլուխն իջեցրեց և նորից լռեց բավական ժամանակ։

— Իսկ ի՞նչ եղան արքայից շքախմբի անդամները և դրանիկ գունդը։

— Նույնպես կալանված են։

— Իսկ դու մնացիր ազա՞տ, և ինչպե՞ս։

— Ես, Թագուհի, պետիս կարգադրությամբ գնացել էի շուկա,— և թիկնապահ սեպուհը պատմեց, թե ինչպես շուկայից դարձին հայտնում են իրեն, որ հայոց գունդը զինաթափել են և բանտարկել։

— Թագավորի բանտարկությունից հետո՞, թե առաջ,— հետաքրքրվեց Փառանձեմը։

— Առաջ, Թագուհի։ Նույն օրը, բայց առաջ։

Այնուհետև երիտասարդ սեպուհը պատմեց, թե ինչպես ինքը անմիջապես կես ճանապարհից հեռացել է գնդի բնակած շենքից և գնացել մի հայ ընտանիք, զգեստափոխվել և պահվել այնտեղ։ Ապա երկու օր հետո իմացել է նաև Թագավորի և սպարապետի բանտարկությունը։ Դրանից հետո պարսկի կերպ մտած շտապել է հայրենիք՝ աղետը հայտնելու։

— Ամենը պարզ է,— հառաչեց Փառանձեմը մի երկու վայրկյան անխոս խորհելուց հետո։— Ազատ ես, տղաս։

Փախած սեպուհը պատմեց միայն իր լսածը։ Նա չգիտեր սակայն, թե իրոք ինչ էր անցել-դարձել պարսից արքունիքում, և չէր կարող իմանալ հարկավ։

Իսկ այնտեղ, այդ ամենից զատ, տեղի էր ունեցել հետևյալը, ինչպես պարզվեց հետո կամ, լավ է ասել, ինչպես պատմեցին ականատեսները։

Այնժամ, երբ Շապուհը հայտնում է Արշակ Թագավորին իր դատապարտության խոսքը, պարսից պալատականների հետ ներկա է լինում և Մերուժան Արծրունին, որ Շապուհից հետո դառնում է Արշակին.

— Կամենո՞ւմ էիր ոչնչացնե՞լ նախարարներին...

— Տիրադա՛վ,— ասում է Արշակը։— Կստանա՛ս պատիժդ։

— Ի՛նքդ ստացար արդեն։

— Մատնությամբդ, սողուն և վաճառված հոգի։

Մերուժանը գլուխն իջեցնում է, ապա՝

— Ոչ թե մատնությամբս, այլ ջանքերովս։

Շապուհը և պարսից մեծամեծները լսում են նրանց խոսակցությունը, նկատում են Մերուժանի այլայլումը, բայց ոչինչ չեն հասկանում, որովհետև նրանք խոսում էին հայերեն։

Դրանից հետո շղթայում են Արշակ թագավորի և Վասակ սպարապետի ձեռքերը և տանում նիզակազեն զինվորներով շրջապատված։

Նրանց տանում են Անհուշ բերդը, ուր մտնողը մնում է ընդմիշտ։

Այսպես վերջացավ Շապուհի հրավերը։

Իսկ ի՞նչ եղավ այնուհետև...

Շապուհը կարծում էր, թե հայոց թագավորին բանտարկելով՝ կընկճի երկիրը... և, կարծո՞ւմ եք, թագավորի բանտարկությամբ Հայոց Աշխարհը գլուխ իջեցրեց պարսից արքայի առաջ և նա կարողացա՞վ իրագործել իր վաղեմի նպատակը՝ Հայաստանը դարձնել իր նահանգներից մեկը։

Ոչ. Շապուհն իզուր էր կարծում, թե Հայոց Աշխարհը միայն թագավորն է և սպարապետը. կար հայ ժողովուրդը, կար հայոց զորքը, կային բազում անձնվեր մարդիկ։ Երբ թագավորի և ժողովրդի սիրելի Վասակ սպարապետի բանտարկության լուրը տարածվեց երկրում—դա առաջ բերեց տագնապ ու ցասում, և ավելի ցասում, քան տագնապ։ Պարսից արքայի ստոր խաբեությունը ամենուր և ամեն լսողի մեջ հարուցում էր զզվանք ու զայրույթ։ Միաժամանակ լսողն զգում էր վրեժի պահանջ և հայհոյում ակամա.

— Իժի ծնո՛ւնդ... Աղ ու հաց պղծող ավազա՛կ...

Եվ իրենց վիշտը արտահայտելու համար բոունցք էին թափ տալիս անտես, իր հեռու Տիզբոնում նստած Շապուհի հասցեին։

Իսկ Փառանձեմ թագուհին, լսելով երկրին հասած աղետը՝ թագավոր-ամուսնու և սպարապետի բանտարկությունը, զգաց ծանր վերահաս վտանգ, զգաց դրա հետ միաժամանակ, որ երկրի կառավարման բարդ հոգսը ծանրանում է իր ուսերին։ Զգաց ու մենակության մեջ արտասվեց մի պահ, ապա, սթափվելով, ելավ ոտքի։

— Իլուր չէր սիրտս գուշակում չարը... Ուրեմն անբարո Շապուհը արշավանք է պատրաստում մեր դեմ... Ուրեմն կամեցավ գլխատել մեզ, որ դյուրավ տիրի մեր մարմնին։

Խորհելով ու շրջելով միառժամ՝ նա կարգադրեց.

— Կանչեցեք Վասակ սպարապետի որդուն։

Ջանցավ մի քանի վայրկյան՝ եկավ Մուշեղը՝ հոր նման ձիգ ու պիրկ, կլոր, սև կորովի աչքերով և տխրության կնիքը դեմքին։

Փառանձեմը հասկացավ, որ նա տեղյակ է աղետին։

— Եվ այսպես, սիրելիդ իմ Մուշեղ,— հառաչեց Թագուհին,— ինչպես ես, այնպես էլ դու կորցրել ես քո մեծ հարազատին՝ ես իմ Թագավորին, դու՝ քաջարծիվ հորդ։ Մեծ է մեր կորուստը և անհուն մեր վիշտը, դավակս... բայց մենք ժամանակ չունենք այժմ մեր վիշտը սգալու, քանզի մեր աշխարհի գլխին կախված է մեծ արհավիրք։ Տոկա՛, որդիս, և Շապուհի այս դավը ստոր Թող սիրտդ լեցնի մեծ վրեժով, ինչպես լիքն է և իմ սիրտը։ Սակայն ես կին եմ և անկարող զենք առնելու, ինչպես և անկարող եմ զորավարելու... Իսկ դու, իբրև մարտիկ և Մամիկոնյան, եղիր անխնա մեր ոխերիմ թշնամու հանդեպ։

Մուշեղը խոնարհեց գլուխը։

— Այնուհետև, սիրելիդ իմ,— շարունակեց Թագուհին հուզված,— նշանակում եմ քեզ հայոց զորքերի սպարապետ՝ քաջակորով հորդ փոխարեն, և լիահույս եմ, որ կպաշտպանես աշխարհը մեր այնպես, ինչպես հայրդ էր պաշտպանում ցայդ ու ցերեկ։ Ես իրազեկ եմ, որ զորքը սիրում է քեզ և դու՝ զորքին։ Պահիր բանակը մեր կազմ ու պատրաստ և ամրացրու սահմանները հայրենի։ Շապուհն անտարակույս գալու է մեզ վրա...

Թագուհու ասածները նորություն չէին Մուշեղի համար. երիտասարդ զորավարը որքան տխրել էր՝ նույնքան և լցվել էր զայրույթով։ Նե՛նգ Շապուհ, նե՛նգ և ցածոգի՛... Մուշեղը չգիտեր Թագավորի՞ն մեղադրի, Թե հորը, որ միշտ զգաստ էր և չէր խաբվում մարգկանց խոսքերից... Բայց այս անգամ հղավ դյուրահավատ. «երկուսն էլ խաբվեցին կնքած ագիցս», մտածում էր նա. սակայն չէր կամենում խորանալ առանձնասլես, որովհետև իմաստ չէր տեսնում վշտով տարվելու... գի-

տեր, որ վշտով ոչինչ ուղղել չէր կարելի... Նա... այն կարծիքն էր կազմել արդեն, թե Շապուհն այժմ չի հապաղի ներխուժել Հայոց Աշխարհը, ու կշտապի, քանի դեռ ձմեռը չի եկել... Ուրեմն պետք է լինել կազմ ու պատրաստ։

— Այո, լինենք պատրաստ. պատրաստ ամեն պատահարի,— կրկնեց Թագուհին և, հաջողություն մաղթելով, արձակեց Մուշեղին։

Պատրաստ ամեն պատահարի... Թագուհու այս մտահոգությունը համակել էր թե՛ պալատի ավագներին և թե՛ զորավարներին։ Փառանձեմի ցանկությամբ նույն օրը եղավ ավագների խորհուրդ, սուրհանդակներ ուղարկվեցին գավառները՝ իմացնելու աղետը և զգուշացնելու վտանգից, իսկ զորականները մեկնեցին զորաժողով անելու։ Զինագործները կարգադրություն ստացան՝ պատրաստելու ամեն տեսակի զենքեր՝ նիզակներ, տեգեր, աշտեներ, նետ-աղեղ և զրահներ։

Անելով այս կարգադրությունները՝ Փառանձեմը մյուս օրը, մազերը հավաքած սաղավարտանման խույրի մեջ, գնաց մայրաքաղաքի զորակայանը, ստուգեց զորքի վիճակը, թիվը, խրախուսեց զինվորներին, իսկ պետերին խնդրեց «պատրաստ լինել ամեն պատահարի»... Թագուհուն ուղեկցում էին երկու պապական և Արշակ թագավորի թիկնապահ-սենեկապահ Եգնիկ իշխանը, որ միշտ երկյուղի մեջ էր, թե հանկարծ թագուհին ձիուց չընկնի, չլսի անախորժ խոսքեր կամ... ի՞նչ իմանաս։

Պալատ վերադառնալով՝ Փառանձեմը կարգադրեց, որ վաղն իսկ թագավորական և արքունի գանձերը, նաև ամեն թանկարժեք բան, տեղափոխեն Արտագերս կամ թաքցնեն ապահով տեղեր...

Նույնպիսի անհանգստություն էր համակել նաև հազարապետ Գնունուն, թեև շատ ծեր, բայց այդ օրերին առույգացել էր և, իր հերթին, եղբորորդու՝ Զենոն Գնունու օգնությամբ, կարգադրություններ էր անում, որ արքունի համբարականոցների և պահեստների պաշարները կրեն Արտագերս, իսկ շինականներին պարտավորեցնում էր, որ հոլեն հացահատիկն ու ընդեղենը, և, հարկը պահանջած դեպքում, իրենց անասուններով հեռանան լեռնաշխարհները... Ներունին այդ կարգադրություններն անում էր կորովի եռանդով, հապճեպ, մեծ

վտանգի երկյուղով, բայց և այնպես ամեն անգամ, թագուհուն ներկայանալիս, հանգստացնում էր նրան.

— Իցե և չպատահի ոչինչ, թագուհիս։ Իցե և չգան... Բայց պարտավոր ենք լինել զգույշ և ամեն բանի պատրաստ։

Փառանձեմն զգում էր, որ ծերունին այդ ասում է՝ իրեն սիրտ տալու համար, այսուամենայնիվ նկատում էր.

— Այո, իշխան. անենք ամենը, որպեսզի հետո չզղջանք։ Ես պատասխան եմ տալու երկրի և թագաժառանգ որդուս առաջ։ Ես չէի կամենա, որ Շապուհը պղծի մեր երկիրը... Լինենք պատրա՛ստ։ Շապուհի արարքը մի պարզ դիտավորություն ունի՝ հարձակում և նվաճում։ Դատելով իմ լսածներից՝ նա փորձեց տկարացնել մեզ նախարարների միջոցով՝ չհաջողվեց։ Այժմ իր մայրաքաղաքում ապաստան է տվել Մերուժանին և Վահան Մամիկոնյանին... Նրանք են, անշուշտ, հրահրել ապստամբ նախարարների հարձակումը Ավանի վրա։ ու այժմ ևս նրանք կամենում են Շապուհին բերել մեր երկիրը...

Փառանձեմը հազարապետի հետ խոսում էր այնպես, ինչպես դուստրը հոր հետ՝ պարզ և անկեղծ։

— Այո՛, Շապուհը խաբեց, տեր Գնունի։ Բայց խաբեությունը քաջություն չէ։ Եթե նա քաջ էր՝ թող ճակատեր և ոչ թե խաբեությամբ կանչեր ու բանտարկեք... Մենք խաբվեցինք՝ ազնվորեն հավատալով նրա կնքած աղին։ Բայց նա ոտքի տակ տվեց զրադաշտականի այդ սրբությունն անգամ։ Այժմ գոնե չխաբվենք... Թող գա Շապուհը. եթե մենք հաթենք՝ դա կլինի փառք և պատիվ մեզ համար, և Շապուհը հաղթված կլինի մի կնոջից։ Իսկ եթե հաղթի ինքը՝ նա հաղթած կլինի մի կնոջ. և դա չի լինի մեծ քաջություն...

Փառանձեմը լռեց ծանր խոհերի մեջ, ապա, գլուխը բարձրացնելով, շարունակեց ավելի հանգիստ.

— Տեր Գնունի, վտանգը մեծ է. պետք է կանչել բոլոր ազնիվ նախարարներին. թող գան և պաշտպանեն երկիրը հայրենի... Կանչիր և Սմբատ սպասպետին։

Այս զգուշավոր նախապատրաստության մեջ Վաղարշապատում շարունակ լուրեր էին առնում պարսից երկրից, թե Շապուհը Արշակ թագավորի դեմ զայրացած է եղել նախ, որ հայոց թագավորը չէր օգնել իրեն բյուզանդացիների դեմ,

այլ, ընդհակառակը, թույլ էր տվել, որ հոռոմներն անցնեն Հայաստանի հողով... Առավել զայրացած էր, որ Արշակը, ընկճելով դժգոհ պարսկասեր նախարարներին, ամրացնում էր Հայոց Աշխարհը, կամենում էր լինել մեծ, երկիրը դարձնել անառիկ... Պատմում էին, որ Շապուհը մտածում էր, թե այդ ամենի հետևանքը կլիներ ուժեղ Հայաստան, և դա կարող էր մեծ գլխացավանք պատճառել իրեն... այնինչ նրան ցանկալի էր, որ հայ երկիրը մնա խառնակ, անիշխանության մեջ, նախարարները լինեն թագավորից անկախ... Ուստի և ամենից վտանգավորը Արշակ թագավորն ինքն է, որ կամենում է այդ ցրված, անկախ ուժերը միաբանելով՝ ենթարկել իրեն և ստեղծել մեծ բանակ... Փախածները պատմում էին, թե Շապուհը զայրացած է, որ սահմանին մոտ քաղաք հիմնելուց զատ՝ Արշակը հիմք է դնում մի նոր բերդի... Կարելի՞ էր թույլ տալ մի այդպիսի բան պարսից սահմանին մոտիկ...

Այսպես էին բացատրում Շապուհի վարմունքը ավագներից ոմանք և հատկապես հազարապետ Գնունին։

— Խարդա՛խ, խարդախ աղվե՛ս,— կրկնում էր ծերունին սրտմտությամբ։— Եվ ինչպե՛ս մենք խաբվեցինք.— ասում էր նա երբեմն թագուհուն։— Դու, թագուհի, իրավացի էիր։ Արքան չպետք է գնար։

Իսկ թագուհին պատասխանում էր.

— Կանայք, տեր Գնունի, բազում խնդիրներ թեթև չեն ըմբռնում լիովին, բայց նախազգացումը նոցա հաճախ չի խաբում։ Այժմ պետք է ի մի բերենք մեր ուժերը և երկիրը փրկենք բորենուց։ Պետք է ամրացնենք բերդերը, հետևենք, որ դավաճանություն չլինի։ Շապուհը կարող է կաշառել նախարարներից ոմանց սուտ խոստումներով և ոսկով։

Փառանձեմն այս ամենը Գնունուն ասում էր առանձին, այնպես որ Հայր-Մարդպետը չլսի ոչինչ, այլապես նա երկյուղ ուներ, թե այդ մոլի պարսկասերը կարող է փչացնել շատ բան։ Այդ էր պատճառը, որ վերջերս թագուհին հսկողություն էր սահմանել նրա վրա, մանավանդ այն օրից հետո, երբ ներքինին թույլտվություն խնդրեց՝ մի ամսով իր կալվածները մեկնելու։ Փառանձեմը մերժեց շատ պատվավոր ձևով.

— Քո ներկայությունը, քո փորձ խելքը, Հայր-Մարդպետ,

հույժ անհրաժեշտ է այս ծաներ օրերին։ Մնա՛ և օգնի՛ր մեզ...

Հայր-Մարդպետը լռել էր և գլուխն իջեցրել, որովհետև պնդել, անգամ կրկնել ընդունված չէր։ Սակայն, հարկ եղած դեպքում, նա չէր թաքցնում իր պարսկասիրությունը և ասում էր.— Թագուհի, չպետք է գրգռել Շապուհին, այլ հարկ է լեզու գտնել։ Ու եթե պատահի դա պատերազմով, լավագույնը կլինի բանագնաց ուղարկել հաշտության խոսքով, որպեսզի կանխենք պատերազմը։

Փառանձեմը լռում էր, մտածելով, որ խորամանկ պարսկասերը կամենում է երևի առանց կռվի, առանց դիմադրության ենթարկվեն Շապուհին, որպեսզի նա իրեն զգա լիիշխան տեր... Թագուհին նրա հետ երկար խոսելու ոչ ցանկություն ուներ, ոչ ժամանակ։

Իրոք, նա շարունակ զբաղված էր, առավոտից երեկո։ Նրա և Մուշեղի կարգադրությամբ զորքի մի մասը գնաց հայ և պարսից սահմաններում ամրանալու։ Մի քանի հեծյալ գնդեր գնացին բռնելու այն ճանապարհը, որ Միջագետքից, Տիգրիսի հովտով, մտնում էր Հայաստան, իսկ մյուս հեծյալ գնդերը նոր սպարապետ Մուշեղի առաջնորդությամբ մեկնեցին Հեռ և Ջարեվանդ գավառները, որտեղից սովորաբար երկիր էին խուժում պարսիկները։

Ու մի երկու շաբաթ ամեն ինչ թվում էր հանգիստ։ Սակայն երրորդ շաբաթվա առաջին իսկ օրը Մուշեղից սուրհանդակ եկավ, թե պարսից զորքը, գլուխ ունենալով Շապուհին, գալիս է դեպի Հեր գավառը։ Նրբ այդ իմացվեց՝ տագնապը համակեց ամենքին, ոչ թե հետ և դիմադրավելու վճռականությունը։

— Ի զե՛ն, ի զե՛ն,— կանչում էին մունետիկները մայրաքաղաքի փողոցներում։— Գալիս է պարսիկը, գալիս է թշնամին ոխակալ...

Այս կարգադրել էր Թագուհին, չկամենալով մայրաքաղաքի բնակիչներից և առհասարակ ժողովրդից ծածուկ պահել ոչինչ։ Թող իմանան և իրենք ևս միջոցներ խորհեն ինքնապաշտպանության։ Նա կարգադրել էր նմանապես, որ ցանկացողները, հատկապես զենքի անընդունակ մարդիկ, կարող են քաշվել լեռնագավառները... Երկու օր էր մունետիկները

հայտարարում էին թագուհու կարգադրությունները, իսկ ինքը Փառանձեմը, նորից մի սև նժույգ հեծած, երկու պալատականի ուղեկցությամբ օրը մի անգամ գնում էր դիտելու քաղաքում և քաղաքից դուրս գտնվող զինագործարանները, քաղաքապահ զորքը, պահեստները... Այդ այցելությունների հետևանքը եղավ այն, որ մի օր էլ նա կարգադրեց, թե բոլոր զինագործները, դարբինները, արհեստավորները տեղափոխվեն Արտագերս բերդը։ Այնտեղ տանեն նաև բոլոր պահեստները։

— Տանե՛լ Արտագերս, դեպի՛ Արտագերս,— կրկնում էր նա միշտ լարված ու հուզված ձայնով։

Ոչ միայն Փառանձեմին, ամենքին նույնպես Արտագերսը թվում էր փրկարար մի վայր։ Չէ՞ որ այդ բերդը մեծ էր և ամուր, ու միշտ էլ եղել է անառիկ... Եվ այդ օրերին մայրաքաղաքի գրեթե բոլոր փողոցներում ամենից ավելի լսվում էր երկու բառ.

— Դեպի Արտագե՛րս... դեպի Արտագե՛րս...

Ու մի քանի օր շարունակ սայլեր, ձիեր, ուղտեր ու ջորիներ անվերջ շարքերով բեռներ էին կրում դեպի Արշարունիք, այնտեղից՝ Արտագերս և Կապույտ բերդերը։ Ու ամբողջ ճանապարհը՝ մայրաքաղաքից մինչև Արտագերս, Արաքսի երկարությամբ, բռնված էր այդ սայլերով ու անասուններով և այն հատուկ մարդկանցով, որ հսկում էին այդ մթերքների և թանկարժեք իրերի փոխադրության վրա։ Իսկ Արտագերսում բերդապետը այդ ամենը ստանում ու տեղավորում էր հատուկ պահոցներում, որոնց տեղը միայն ինքը գիտեր և իր բերդականները։

Այս փոխադրումները տևեցին մոտ երկու շաբաթ, և երկու շաբաթ շարունակ Փառանձեմը հետևում էր ամենին, հետաքրքրվելով, թե ի՛նչ է արված և ի՛նչ է մնում։ Պատահում էր կանչում էր որևէ պալատականի (ամենից շատ Զենոն Գնունուն) և ուղարկում ստուգելու, թե կատարվա՞ծ է այսայն կամ ուղարկում էր բերդը, տեսնելու, թե ի՛նչ պակասներ ունի այն, որպեսզի զգուշացնեն բերդապետին՝ բերդը անմիջապես կարգի բերելու... Ոչ միայն տեղափոխությունը, այլև պալատում ծագող, ստացվող բազում խնդիրներ զբաղեցնում էին Փառանձեմին, և այս բոլորի համար ամենքը դիմում էին

նրան, և նա պարտավոր էր ղգում պատասխանել, խորհուրդներ տալ կամ հրամաններ, ու միաժամանակ զարմանում էր, թե ի՞նչպես է կարողանում այդ...

Ամբողջ ցերեկը նա կարգադրություններ էր անում, գնում այս-այն կողմ, իսկ գիշերը քաշվում էր իր ննջարանը։ Այստեղ երկար ու մենակ խորհելուց հետո նա ծունկի էր գալիս և օրորվում ձեռը ճակատին։

— Որքա՞ն ծանր է մարդոց ուղարկել մահու դեմ... Տեր ամենազոր, տո՛ւր ինձ ուժ և կարողություն մինչև Պապիս վերադարձը տոկալու։ Այնուհետև երկիրն ու գահը տիրոջը հանձնելով, ես կերթամ մեղքերս քավելու...

Երկար աղոթում ու աղերսում էր վերին զորության, բայց, այնտեղից պատասխան չստանալով, կրկնում էր.

— Այո, ես կին եմ մեղապարտ և ուժով տկար, սակայն մայր եմ՝ սիրով զորավոր... և թող այս սերը զորավիգ լինի ինձ թշնամու դեմ...

Նա աղոթում էր, որ Հայոց Աշխարհը զերծ մնա աղետից և վերահաս փորձանքից ելնի անվնաս։

Երբեմն նա կանչում էր ծերունի հազարապետին և ասում.

— Օգնիր ինձ, իշխան, երկիրը փրկելու։ Եղիր ինձ հայր և տուր ինձ խորհուրդներ բարի, որ հետևորդները չնզովեն ինձ, թե ես, թագավորի բանտարկումից հետո, չարեցի ոչինչ... Ո՛չ, իշխան, ես կջանամ մինչև մահ, մինչև նահատակություն և թո՛ղ հուսահատությունը երբեք լքում չբերի հոգուս...

Զենքի, մթերքի և արքունի գանձերի փոխադրումից հետո Արտագերս տեղափոխվեցին նաև պալատական, ազնվական ու շինական շատ ընտանիքներ, ապա զորքը, միայն քաղաքապահ հետևակը, որ լրացնի բերդականների թիվը և օգնի նրանց վտանգի ժամին։ Իսկ քաղաքապահ հեծելազորը գնաց դեպի սահմանը։

Այս ամենից հետո Փառանձեմն արավ իր վերջին կարգադրությունը, որ Հայր-Մարդպետը մնա Վաղարշապատի և Դվինի պալատները պահելու, որպես արքունի կալվածների և պալատների կառավարիչ։ Բայց նրա հետ մնալ ցանկացավ և հազարապետ Դավիթ Գնունին՝ ծերությունը պատճառ բերելով։ Թագուհին որքան էլ չէր ուզում այդ, բայց ստիպված եղավ համաձայնել.

— Հուսամ, իշխան, թշնամին կխնայի ծերությունդ։ Պահիր արքայական տները՝ մինչև... (նա ուզում էր ասել «մինչև որդուս գալուստը», բայց զսպեց իրեն)։ Թաքցրու ինչ հնարավոր է, և հետևիր, որ այդ ներքինին չանի անվայել գործեր...

Այստեղ Թագուհին նորից լռեց և սևեռուն, մտածկոտ նայեց ծեր հազարապետին։

— Բայց իրոք ցանկանո՞ւմ ես մնալ, տեր Գնունի։

Եվ երբ ծերունին գլխով արավ, թե իր վճիռն անխախտ է, թե երկիրը չի կարող թողնել անտեր, Փառանձեմը, մոռանալով Թագուհու իր հանգամանքը, փարվեց նրան։

— Իշիան, դու եղել ես ինձ հայր... ինձ գժվարին է բաժանվել քեզնից... Բայց կուզեի, որ գնաս Դվին։ Եթե թշնամին գա, մինչև այնտեղ հասնելը կատաղությունը կիջնի և քեզ... չեն վնասի։ Գուցեև... հրաշք պատահի՝ չգան...

Այս կարճ խոսակցության միջոցին երկուսի աչքերն էլ լցվեցին արցունքով։ Սակայն Փառանձեմը սթափվեց շուտով.

— Այժմ դեպի Արտագերս...

Երբ նա հեծավ իր սև նժույգը և իջանեց, թիկնապահները հետևեցին նրան։ Դրանց մեջ էր և Եղնիկ իշխանը՝ Թագավորի սենեկապետը։

* * *

Այդ իսկ պահին, երբ մայրաքաղաքում տագնապալի իրարանցում էր, երբ մի կողմից բնությարձ սայլերի շարան էր դուրս գալիս քաղաքից, մյուս կողմից, ընտանիքներ էին հեռանում դեպի Արագած կամ ձի ու ջորի վարձած շտապում էին Կոտայք, Գառնի,— այդ ժամին քաղաքի մի այլ ծայրից վաղարշապատ մտան երեք ձիավոր, երեքն էլ նիհար, արևահար դեմքերով, հոգնած ու տխուր։ Տերերի նման հոգնած էին և ձիերը։ Դրանցից մեկի մեջքին նստած էին մի տղամարդ և մի փոքրիկ տղա, որ հետաքրքիր, զարմացած աչքերով նայում էր շուրջը՝ տներին, մարդկանց։ Երբ մի քիչ առաջ գնացին՝ տղան հարցրեց առջևը նստողին.

— Պապո, Թագավորն էստե՞ղ է ապրում,— ասաց նա զարմացած։

— Էստեղ, էստեղ...

— Էս աղմուկի մե՞ջ։

— Չէ, իր միջնաբերդում։ Էնտեղ ապմուկ չկա։

— Իսկ ինչո՞ւ բոլորը կշտապեն կասեղ,— շարունակեց տղան։

Այդ շարժումը ոչ միայն տղային էր հետաքրքրում, այլև իրենց՝ ձիավորներին, որ Թորգոմն ու ընկերներն էին։

Փոքր էլ առաջ գնալով՝ Թորգոմը կանգնեցրեց այծեր քշող մի ծերունու.

— Պապ, էս ի՞նչ է, մարդիկ ո՞ւր են շտապում այսպես սայլերով, թեմներով...

— Ո՞ւր,— տարակուսով կանգ առավ ծերունին։— Մի՞թե չգիտես... Գալիս է պարսիկը։

— Պարսի՞կը,— բացականչեցին երեք ընկերները միաձայն։

— Իսկ ի՞նչ է անում թագավորը,— հարցրեց Թորգոմն առանձին։

— Թագավո՞ր,— կարմացավ ծերունին իր հերթին։— Չե՞ք լսել մթթե, որ պարսից Շապուհը հյուր կանչեց մի ամիս առաջ ու... ըանտեց։

Թորգոմն ու ընկերները լսել էին թագավորի գնալը, բայց չէին իմացել, որ նա կալանված է այնտեղ...

Ընկերները տխուր նայեցին իրար և այնպես անխոս ու տնաբար, որ նշանակում էր, թե ի՞նչ պետք է անել հիմա, ո՞ւր պետք է գնալ... Նրանց պարզապես համակեց մի ծանր մտահոգություն։

Սակայն որտեղի՞ց էին գալիս նրանք և ո՞ւր էին գնում։

Դրա պատմությունը երկար չէ։ Յուրայիններին քաղաքում չգտնելով, ձիեր հեծած գնում էին շենից շեն՝ իրենց ընտանիքները փնտրելու, կարծելով, որ նրանք քաղաքի մյուս բնակիչների հետ ապաստանած կլինեն մոտիկ գյուղերում։ Ճիշտ է, այդ շեներում նրանք տեսան շատ համաքաղաքացիներ, բայց չգտան իրենց հարազատներին։ Հարցուփորձից շատ հակասական պատասխաններ էին ստանում մինչև այն օրը, երբ իմացան նախարարների կոտորածի լուրը։ Դա նրանց սփոփեց առժամ, որ պատժվել են աղետի պատճառ նախարարները. բայց և այնպես հարազատների կորստի վիշտը իրենց սրտում, շարունակեցին որոնել նրանց ամեն տեղ։ Սակայն չգտնելով՝ մտածեցին գնալ Կամսարականի կալվածնե-

ը, ուր տարված գերիները կարող էին արձակված լինել տերերի կոտորածից հետո. բայց իմանալով, որ իրենց քաղաքացիներից ոմանք գնացել են դեպի Սուրմարի, ընկերները Բարդողյան լեռներն անցնելով իջան Արաքսի ափը։ Այստեղ էլ նրանց չգտնելով՝ ուղղվեցին Վաղարշապատ, լսելով, որ շատ արշակավանցիներ ապաստանել են մայրաքաղաքում...

Եվ ահա եկել էին. բայց քաղաքի իրարանցումը և խուճապը մեծ անակնկալ եղավ, իսկ լսածները հանկարծակիի բերին նրանց.— Թագավորը բանտվա՞ծ է Պարսկաստանում, պարսիկը գալիս է կռի՞վ...

— Ահա նորից ի՞նչ արին նախարարները,— ասաց Թորգոմն ընկերներին, չիմանալով իսկապես ինչ է անցել-դարձել։ Այժմ նրա համար այն ամենը, ինչ վատ էր, թվում էր նախարարների գործ։

Մի փոքր էլ առաջ գնալով՝ ընկերները տեսան նոր սայլախմբեր, ուղտախմբեր ու ջորեխմբեր, որ պարաններով կապված իրեր ու մթերքներ էին տանում մայրաքաղաքից դուրս։ Հետո պատահեցին նոր ընտանիքներ, որ կապոցներով դուրս էին գալիս տներից և շտապեցնում իրար.

— Շո՛ւտ, շո՛ւտ, ամենքը գնացին...

Իսկ մունետիկները դարձյալ, քաղաքի տարբեր մասերում, կանչում էին շարագուշակ.

— Գալի՛ս է պարսիկը... Գալի՛ս է պարսիկը... Թագուհու հրամանն է՝ տղամարդը զենք առնի, իսկ ապրանքը և անասունը հեռացնի մայր քաղաքից...

Ընկերներին թվաց վտանգն ավելի մոտ, քան կարծում էին։

— Ո՞վ հիմա մեզ կտա զենք,— ասաց Թորգոմը։

— Իսկ մեր ընտանի՞քը...

Ու բոլորին համակեց մի ծանր տարակույս։

Մայրաքաղարի բնակիչները շարունակում էին հեռանալ հապճեպ, ու մի քանի օրից քաղաքը դատարկվեց գրեթե. մնացին միայն ծերունիները, որ տեղներից չշարժվեցին՝ ճանապարհների դժվարության պատճառով. և մնացին ծերության իրավունքով, համոզված, որ թշնամին ձեռք չի տա իրենց։ Իսկ երիտասարդությունը, ծերերի կարծիքով, պետք

է հեռանար, որովհետև պատերազմը, ամենից առաջ, երիտասարդների թշնամին է։

Տեսնելով, որ ամենքը հեռանում են քաղաքից՝ Թորգոմն ու ընկերները նույնպես ճանապարհ ընկան արդեն զորքի հետ, որ գնում էր Թագուհու կառքի առջևից ու հետևից... Իսկ Թագուհու հետ գնում էր կանանց մի մեծ խումբ, որոնց մեջ էր հազարապետ Գնունու Նանա տիկինը և Վասակ սպարապետի Կատրանիդե իշխանուհին, որ մտահոգ էր շարունակ որդու համար, Թե ինչպե՞ս պիտի կատարի սպարապետի պաշտոնը հորից հետո, որ ամոթով չմնա, այն էլ այս վըտանգալից օրերին, և արդյոք մյուս հրամանատարները կօգնե՞ն նրան, չե՞ն դավաճանի նախանձից, որ այդքան երիտասարդ հասակում դարձել է սպարապետ։ Ինքը Մուշեղն այդ պահին հեռու էր մայրաքաղաքից. նա, Թագուհու հրամանով, ամրացնում էր սահմանները, և դրանից ավելի էր մեծանում մոր տագնապը.— Ա՛խ, Մուշեղս կարողանա առնել հոր վրեժը և անվնաս մնալ այս կռվում,— մտածում էր նա։ Մյուս կանայք նույնպես տագնապած էին. նրանցից յուրաքանչյուրը նույնպես ուներ իր ծանր հոգսերն ու խոհերը, բայց ոչ մեկը չէր ասում ոչինչ, չէր տրտնջում, լավ իմանալով, որ բոլորը վիճակակից են և բոլորի ուղին մեկ է.

— Դեպի Արտագերս...

Արտագե՞րս... Արտագե՞րս... Վաղուց ի վեր Հայոց Աշխարհում Արտագերսը համարվում էր ամրակուռ և անմատչելի բերդ. և, իրոք, շատ անգամ մեծ վտանգների ժամանակ նա կատարել էր փրկարար դեր Թե որպես ամրոց, Թե որպես Թաքստոց, Թե Կամսարական իշխաններին պատկանելուց առաջ, Թե նրանց օրով։ Իսկ այժմ նա արքունի բերդ էր՝ նախարարների կոտորածից հետո։ Արտագերսը գտնվում էր Երասխաձորում, Արաքսի ձախ ափին՝ մի սարալանջի լայն գոգավորության վրա, որն ամբողջ բռնված էր շենքերով, այսինքն՝ եռաշարք ատամնավոր պարիսպներով, որոնք բոլոր կողմերի վրա ունեին աշտարակներ կլոր բուրգեր։ Բերդի երեք կողմը բնական և արհեստական ուղղահայաց լանջեր էին. ներքևը՝ Արաքսի խորաձորը, որի անդնդում ջրերը հավիտենական կռվի մեջ էին քարե պատնեշների դեմ, և որոտում էին անվերջ, Թե նեղվում են, խեղդվում, Թե կռիվը չի

վերջացած։ Բերդից վար և նրա շուրջբոլորը պղնձագույն ժայռեր էին, ժայռաբեկորներ կամ սովորական քարեր, անգամ քարասարեր և նրանց վրա ու նրանց միջև մացառներ ու փշոտ թփեր, և ամբողջ սարն ընդհանրապես ծածկված էր մացառուտներով ու թփուտներով, որոնց մոտենալ կարող էին միայն այծերը։

Իսկ բերդից վեր բարձրանում էր մի սար, որի գլխին տարին բոլոր ամպ էր նստում կամ մառախուղ։ Արտագերսը այս կողմից նույնպես անառիկ էր. բերդից կարելի էր բարձրանալ այդ լեռը, բայց այնտեղից իջնել բերդը՝ հնարավոր չէր, որովհետև բարձրացողը կարող էր գտնել մի արահետ, մի կածան, իսկ վերևից՝ երբեք... Զինվորները գիտեին, որ այդ սարի այն կողմը Վանանդն է։ Բերդականները երբեմն բարձրանում էին այդ սարը և դիտում, թե ի՞նչ է երևում հեռուներում։ Այնտեղից տեսնում էին Հայոց Աշխարհի բոլոր լեռները ձյունապատ գագաթներով։ Երևում էին նաև այդ սարերի միջև ընկած ձորերը, ձորահովիտները... Բերդն ուներ երկու գետնուղի. մեկը քարե աստիճաններով իջնում էր մինչև Արաքսը՝ գլխավորապես ջրի համար. մյուսը՝ երկարը, դուրս էր գալիս մի ծածկված տեղ, ուր ոչ ոք չէր կարող տեսնել ո՞չ բերդը մտնող և ո՞չ այնտեղից ելնող սուրհանդակին։ Ինչպես երևում է, բերդը կառուցել էին շատ հեռատես և հմուտ մարդիկ. նա ուներ երեք գոտի, ինչ նրան տալիս էր երեքհարկանի վիթխարի շենքի նմանություն։ Ամբողջ մեծ սարաբլուրը— ստորոտից մինչև վեր—ուներ երեք հարկ պարիսպներ, որոնք թվում էին գոտիներ, ըստ որում առաջին գոտին ուներ կրկնակի պարիսպ, մյուսները՝ մեկական. և յուրաքանչյուր գոտում կային բնակարաններ։ Առաջին պարսպի ներսը զինվորների օթևաններ էին թե պատերի և թե աշտարակների մեջ. երկրորդ պարսպի ներսը և հենց պարիսպների մեջ էլ բնակարաններ էին և այնքա՞ն շատ, որ տեղավորում էին մեծ թվով զորք ու ժողովուրդ։ Այդտեղ կային և ամեն տեսակ պահեստներ ու գործի տներ, ինչպես, օրինակ՝ զինագործարաններ, թոնրատներ և ալրատուն՝ բազմաթիվ երկանքներով, որպեսզի երկար պաշարումի օրերին մարդիկ ի վիճակի լինեն պատրաստել իրենց համար անհրաժեշտը և հոգան իրենց պետքերը... Երկրորդ և երրորդ գոտիներում նույնպես կային

շատ բնակարաններ. երկրորդում ապրում էին քաղաքային ընտանիքներ, իսկ երրորդում՝ ամենավերը՝ իշխանական գերդաստաններ և Փառանձեմ Թագուհին... Խոսում էին, որ բերդը տեղավորում էր տասը հազար զորք և նույնքան այլ կարգի մարդիկ։ Դրա համար թե արքունիքը, թե քաղաքացիները և թե մոտիկ գյուղերի շինականները շտապում էին ապաստանել այնտեղ, ու երկրի բոլոր կողմերից ամենից ավելի լսվում էին.

— Դեպի՛ Արտագերս... Դեպի՛ Արտագերս...

* * *

Հայոց լեռներում Նավասարդին արդեն աշնան քամիներ են փչում։ Այդ քամիներն ավելի սաստիկ են լինում Արտագերսում։ Գալիս էին դրանք չգիտես հարևան ձյունակատար լեռների՞ց, թե բարձրանում էին Արաքսի հոսանքից, որ սրընթաց իջնում էր վերից և որոտում բերդից ներքև՝ անդընդախոր կիրճում։

Այդ քամիները դադարում էին միայն առավոտյան, և այդ պահին Փառանձեմ Թագուհին, ամբողջովին սևեր հագած, առանց որևէ զարդի, դուրս էր գալիս բերդի վերին գոտու իր օթևանից և, ուղեկցությամբ պալատական երկու տիկնոջ ու Եզնիկ իշխանի, անցնելով բերդի հրապարակը, բարձրանում էր նրա ձորահայաց պարիսպը, որտեղից երևում էր Արաքսի ամբողջ հովիտը մինչև Ավագն Մասիս։ Գետը իր ժայռեղեն պատյանից դուրս գալով, օձագալար ոլորվում էր այդ հովտում, և նրա շուրջը տարածվում էին տակավին կանաչ մարգագետիններ, շեկ շամբուտներ, լքված շեներ՝ իրենց դեղնող այգիներով և մի ամայություն, որ առաջացել էր պարսիկների ներխուժման երկյուղից։

Նայում էր Փառանձեմը այդ ամենին, նայում էր լուռ ու տխուր, ապա, զուսպ հառաչելով, կարգադրում էր կանչել բերդապետին։

Այսօր էլ նա, իր սովորական դիտումները վատարելով, ասաց.

— Կանչեցեք բերդապետին։

Փոքր անց եկավ բերդապետը՝ միջին տարիքի, միջին հա-

սակի մի մարդ, որի լեռնային օդից ու քամիներից կարծրացած թուխ դեմքի վրա աչքերը ցոլում էին սրահայաց նայվածքներով։ Երեսին ուներ նաև մի նշան, որ հազարի մեջ զատում էր նրան. ինչ-որ մարտի մեջ, տարիներ առաջ, նետը քերծել էր նրա աջ այտը և, ականջի բլթակը ճեղքելով, բաժանել այն երկու մասի... և այս պարադան նրան տալիս էր խիզախ մարդու տեսք։ Բայց, չգիտես ինչո՞ւ, լեռնային այդ մարտիկը կրում էր երկար մազեր, որոնք գանգուրներով բոլորում էին նրա գլուխը սաղավարտի տակից։ Նա երկար մուչկերով էր և պիրկ գոտեպնդված։ Մոտեցավ անբաժան սուրը կողքին և գլուխ իջեցրեց թագուհու առաջ։

— Հրամանիդ, թագուհի։

— Ի՞նչ նոր, բերդապետ։ Սուրհանդակները բերե՞լ են կարևոր ինչ։

— Ուշագրավ ոչինչ, թագուհի։ Վերջին սուրհանդակը հաստատում է այն, որ պարսից գնդերը մոտեցել են մեր սահմանին և սպարապետին փոխարինող Զարեհ Ամատունին մարտեր է սկսել նրանց դեմ։

— Մեր զոհերը որքա՞ն են,— հետաքրքրվեց Փառանձեմը։

— Աննշան, թագուհի։

Բերդապետ Բաղասը հեռուները դիտող մարդու սովորությամբ աչքերը կծկում էր այնքան, որ բիբերի միջից ասես կայծեր էին երևում, բայց պատասխանելիս, ընդհակառակը, դրանք բանում էր լայնորեն և այդ ժամանակ սև հոնքերը վեր էին գնում և ճակատը փայլում էր իմացականությամբ։

Փառանձեմը նոր հարց չտվեց. նա չէր կամենում ավելորդ հարցեր տալ, գիտեր, թե որևէ կարևոր բան լսելու դեպքում՝ բերդապետը չէր թերանա հայտնելու, քանի որ պատվիրել էր, թե որքան էլ լուրը լինի ծանր, նույնիսկ աղետավոր՝ հայտնի իրեն և չթաքցնի բնավ։

— Հոգացի՞ր, բերդապետ, որ ջուրը միշտ անպակաս լինի։

— Ես հատուկ մարդեր ունեմ, թագուհի, որ զոր ու գիշեր հոգում են այդ մասին։

Այդ ճիշտ էր. բերդի ստորերկրյա այն ուղին, որ քարե աստիճաններով իջնում էր գետը, ծառայում էր ջուր մատակարարելուն, ըստ որում ջուրը բարձրացնում էին տիկերով, կժե-

ռով։ Կար և մի բարակ աղբյուր, որ գալիս էր սարից՝ կավե խողովակներով, գետնի տակով։

Հարցուփորձից հետո բերդապետը ճկուն գլուխ տվեց և հեռացավ՝ կողքից կախած թուրը բռնած։

Յոթերորդ օրն էր ինչ թագուհին ապաստանել էր Արտագերս և ամեն օր, առավոտից երեկո, լարված հետևում էր, թե ի՞նչ է կատարվում բերդից դուրս, մանավանդ անհամբեր էր ռազմի լուրերի սահմանագլխից, որ հայ և պարսից զորքերը սկսել էին ճակատել, առայժմ թեպետ ոչ մեծ չափով և ոչ մեծ տարածության վրա, բայց տագնապալի նշաններով... Յուրաքանչյուր օր բերդապետի հաղորդումները լսելուց հետո Փառանձեմը տալիս էր նոր հրահանգներ՝ կարգի և զգուշության։ Նա իրեն երբեք այնքան պատասխանատու չէր զգացել երկրի և ժողովրդի առաջ, ինչպես հիմա, այստեղ՝ բերդում, ուր, իր կարգադրությամբ հավաքվել էին տասը հազարի չափ կին, մարդ, երեխա և զորք. ուր բոլորն ապրում էին նեղված, ավելի ճիշտը՝ վտանգի երկյուղից տանում էին ամեն տեսակի զրկանքներ...

Բացի զորքից ու շինականներից, որ բռնում էին ամրոցի ստորին գոտին, բերդում ապաստանել էին շատ ազնվականներ՝ նախարարներ ու սպարապետներ իրենց ընտանիքներով։ Այստեղ էին նշանավոր Սահակ Սահառունի, Կարեն Պալունի, Խորեն Անձևացի և Մեհենդակ իշխանները, օրիորդներ, տիկիններ, ինչպես Նանա իշխանուհին, ինչպես Կատրանիդե իշխանուհին՝ իր Մուշեղի հարս Աշխենի հետ և շատ ուրիշներ։ Ու ամենքն այստեղ ավելի, քան մայրաքաղաքում, ցանկանում էին Փառանձեմին շրջապատել խնամքով, ցանկանում էին անգամ սպասարկել նրան՝ նրա վիշտը և հոգսերը մեղմելու, սակայն նա հրաժարվում էր այդ ամենից, բավարարվելով մեկ-երկու նաժիշտով, որովհետև նա վշտահար համարում էր ոչ միայն իրեն, այլև ամենքին, որոնց համար պարտավոր էր հոգալ ինքը, քանզի ամենքը ապավինել էին իրեն...

Այո, բոլորը վշտահար էին... Օրինակ, Կատրանիդե տիկինը, որ նույնպես կորցրել էր սպարապետ ամուսնուն, ինչպես և Փառանձեմը՝ իր թագավորին. բայց նրա վիշտը մեղմանում էր նրանով, որ Մուշեղը փոխարինում էր հորը, ինչ

մեծ պատիվ էր համարում որդու համար։ Սակայն նրա սիրտը տագնապում էր, թե ի՞նչ է սպասում իր Մուշեղին... Ու խոսքով, մտքով աղոթում էր շարունակ, որ տերը փրկի Հայոց Աշխարհը, հայոց բանակը և իր Մուշեղին՝ ամեն չարից ու փորձանքից...

Եվ այդպես վշտահար ու տագնապած էին ամենքը՝ թե կին, թե մարդ. և ով կարող էր անվիշտ լինել այդ օրերին։ Թերևս միայն անգիտակից մանուկները։

Բերդում Փառանձեմը դարձել էր անճանաչելի. հագնվում էր հասարակ՝ սև երկար մի պարեգոտ, ու ոչ մի զարդ՝ ոչ վզնոց, ոչ մանյակ, անգամ ոչ մատանի, ոչ ապարանջան. հանել էր անգամ ականջօղերը։ Ու այդպես սև երկար զգեստը հագին (որ պնդում էր գոտիով) ներկա էր լինում բերդապետի և զորականների խորհրդաժողովներին, մազերը հավաքած և գլխին պարզապես մի քող գցած։ Նրան օրինակելով, գուցեև իրենց վիճակը նկատ առնելով, մյուս իշխանուհիները նույնպես հագնվում էին հասարակ։ Ուրիշների հագուստը սակայն աչքի չէր զարնում այնպես, ինչպես Թագուհունը։ Երբ սա այդ հասարակ հանդերձներով դուրս էր գալիս բերդը շրջելու կամ, ըստ սովորության, բերդի պարսպից հեռուները դիտելու, ճանաչողներն ասում էին.

— Թագուհին գեղեցիկ է տակավին...

Կյանքը Արտագերսում անցնում էր միօրինակ։ Տեղափոխվելու և բերդում տեղավորվելու օրից բոլորի սևեռուն հոգսը դարձավ Թշնամին, որ արդեն ընդհարումներ էր ունենում հայոց զորքի հետ։ Լուրերն առայժմ տխուր չէին, բայց և փայլուն չէին։ Մուշեղ սպարապետը և նրա զորականները կարողանում էին դիմագրավել Թշնամուն և թույլ չտալ, որ նրանք մտնեն սահմանից ներս. թե ի՞նչ կլիներ հետո՝ ոչ ոք չէր կարող գուշակել։ Սակայն ամենքն այնպես էին կարծում, թե դրությունն այդպես չի մնա, կռիվները կբորբոքվեն, կծավալվեն անշուշտ, և պարսիկները կջանան առաջանալ... Եղած մանր կռիվները բերդում գտնվող զորականներն ու պալատականները բացատրում էին նրանով, թե Շապուհը հավանորեն իր ամբողջ զորությունը տակավին չի բերել սահմանը, այլապես մի քանի օրում կխուժեր ներս... Այդ կարծիքի էին նաև

թե՛ բերդապետը, թե՛ Փառանձեմը և թե՛ նրան շրջապատողները։

— Ճշմարիտ է, մեր զորքերն ու զորավարները կռվում են անձնվեր,— ասում էին,— սակայն Շապուհը իր ահագին զորքով կարո՞ղ է հանդուրժել այդ վիճակը։

Ոչ միայն մեծամեծները, այլև բերդականները և բերդում ապաստանած բոլոր մարդիկ այնպես էին կարծում, թե քանի որ պարսից թագավորը պատերազմ է սկսել՝ նա կանգ չի առնի սահմանի վրա և ներս կխուժի որևէ կողմից։ Նրանց հետ անհանգիստ էին նաև զինվորներն ու շինականները։ Այդպես և Թորգոմն ու ընկերները, որ բերդում ապրում էին դարձյալ իրար կողքի, նրա առաջին գոտում։

Հիշելով Թորգոմին ու ընկերներին՝ պետք է ասել և այն, թե ինչ կատարվեց նրանց հետ։

Կյանքը, ինչպես երևում է, ամեն տեղ կյանք է և լի է անակնկալներով։ Ընդհանուր այդ տխրության ու սուգի մեջ եղան և ուրախալի միջադեպեր. Թորգոմն ու ընկերները գրտան իրենց ընտանիքները։ Այո, բերդի տխուր պայմաններում նրանք արժանացան անսպասելի մեծ ուրախության։ Բերդ հասնելու երկրորդ օրն իսկ նրանք հանդիպեցին շատ ավանցիների, որոնք Արտագերս էին եկել կամ փախած վայրերից, կամ ուղղակի գերությունից։ Առաջին մարդը, որին հանդիպեցին ընկերները, Դավիթ դպիրն էր՝ նիհարած, երկար վիզը բարակած, այծի մորուքը ավելի ճերմակած։ Երբ Թորգոմը մոտեցավ նրան, ծերունին բացականչեց.

— Ա՜, դու ևս եկար։ Ուրա՜խ եմ, տղաս։

— Բայց դու ինչպե՞ս այստեղ, տեր դպիր,— զարմացած հետաքրքրվեց Թորգոմը։

Դպիրը պատմեց, թե ինչպես իրեն, որպես բանագնացի, չէին թողել վերադառնա. ինչպես էին տարել գերի Թիկնապահ Բենի հետ... Պատմելով գլխով անցածը՝ նա շատ ցավեց Վարազ իշխանի համար, ցավեց այրված քաղաքի համար, բայց և շատ ուրախ եղավ, որ Կամսարականը և մյուս նախարարները ստացել էին իրենց չարության պատիժը։

— Ես ամիս ու կես այս բերդի բնակիչ եմ,— ասաց նա, բացատրելով, թե երբ իրեն շատերի հետ բերին գերի, ամենքին էլ փակեցին այս ամրոցում, օրական մի կտոր հաց տա-

լով։—Ամեն վայրկյան մահու սպառնալյաց տակ էի և աղոթում էի հարաժամ, որ չարերը պատժվեն, մանավանդ երբ հաշտությունից հետո նոքա սրահար արին քաղաքից բերած քանի մի հարյուր գերի այս իսկ ամրոցի մոտ... Եվ գոհանամ, աստված լսեց աղոթքս. նզովից արմատները ստացան իրենց արժանին։ Սուր վերցնողը՝ սրով էլ ընկավ։

— Քեզ հետ շատե՞րը կային, տեր դպիր,— ընդհատեց նրան Թորգոմը։

— Շատե՞րը։ Ամրոցը լիքն էր գերիներով. կին, մարդ. մինչև իսկ երեխա, և ամենքը Արշակավանից։ Բայց բոլորը ազատվեցին անիծյալների սպանությունից հետո...

— Իսկ որտե՞ղ են հիմա դրանք՝ ազատվածները,— Թորգոմի սիրտը զարկում էր կրծքին։

— Ամեն տեղ, տղաս։ Ոմանք գնացին, բայց վտանգը լսելով նորից եկան...

Թորգոմն էլ չհամբերեց. վազեց տեսնելու, թե ովքե՞ր կան Արշակավանի բնակիչներից։ Գուցեև իմանա մի բան մոր, Մինայի, նրա հոր մասին, ընկերների ընտանիքների մասին... Բայց մինչ նա այս-այն կողմ վազելով ծանոթներ կորոներ, նրա ընկեր Վարդանը կանչեց. «Թորգո՜մ, Թորգո՜մ»... Վարդանի ձայնն այնքան զվարթ էր, որ Թորգոմը դրանից նախազգաց մի ուրախություն։

Եվ իրոք. նախազգացումը նրան չէր խաբել։ Հենց այդտեղ՝ բերդի առաջին գոտում Վարդանն ու Հովսեփը գտել էին իրենց կանանց, որոնց մոտ նստած էին և Թորգոմի մայրը, և Մինան... բայց սրա ծերունի հա՞յրը... չէր երևում։

Դժվարին է նկարագրել այդօրինակ հանդիպումները, երբ գրկախառնումների հետ միաժամանակ արցունք ու ժպիտ խառնվում են իրար, երբ ամբողջական խոսքերին փոխարինում են միայն ձայնարկումներ և ուրախ հառաչներ... Թորգոմի խեղճ մայրը չգիտեր ինչպես արտահայտի իր ուրախությունը. որդու ձեռքերը բռնած՝ նա արտասվում էր և միևնույն ժամանակ ծիծաղում արցունքի միջից.

— Թորգո՜մս, Թորգո՜մս... Կարծում էի՝ չեմ տեսնի երբեք... Գոհանա՜մ, գոհանամ... Լա՜վ է, լա՜վ է՝ նորից գտանք իրար,— ասում էր նա մերթ Մինային, մերթ Թորգոմին։— Մոտեցի՜ր, մոտեցի՜ր,— ասում էր Մինային, որ ուրախու-

թյունից շիկնած՝ աչքերը ամոթխած հառել էր գետնին, անելիքը չիմանալով։

Բոլորը՝ Թորգոմի մայրը, ընկերներն ու նրանց կանայք սպասում էին, թե միմյանց կորցրած նշանածներն ինչպե՞ս պիտի հանդիպեն իրար։ Ու կատարվեց տարօրինակ մի բան. Մինան, մի քանի քայլ առաջ գալով, չհամարձակվելով մյուսների նման շուրթերը մոտեցնել Թորգոմի շուրթերին՝ ծունկի եկավ և, բռնելով Թորգոմի ձեռքը, համբուրեց այն ու լաց եղավ.— պապոն մեռավ... մեռա՜վ...— Իսկ Թորգոմը անխոս, կարծես նրան մխիթարելու համար, նույնպես կռացավ և Մինային գրկելով բարձրացրեց.— Մենք նրան չենք մոռանա, Մինա...

Բայց հանդիպման ուրախությունն այնքան մեծ էր, որ բոլորը մոռացել էին վտանգը, իրենց վիշտը և այն, թե ո՞ւր են գտնվում. խոսում էին բարձր, ուրախության արցունքով, կցկտուր—նույնիսկ տղամարդիկ։

— Էլ վե՜րջ։ Հիմա որ Թորգոմին ու Մինային պսակենք պիտի,— ասաց Վարդանը երջանիկ մարդու ձայնով։— Պսակենք, որ ազատվենք աղետներից...

Մինչ Վարդանը խոսում էր, նրա Հուսիկը փարվել էր մորը և խոսք չէր գտնում կարծես ասելու, ուստի և շարունակ կրկնում էր.— «Մամո՜, մամո՜»... Նրա կողքին ընկած էր և իր բերած թուրը, որ ամբողջ ճանապարհին չէր թողել ձեռքից։ Իսկ մայրն անխոս համբուրում էր նրան և շոյում։

Մի քանի վայրկյանում ընդհանուր զրույցից պարզվեց, որ ամենքը գերվել էին քաղաքից փախչելիս, ճանապարհին։ Եվ ծերունին մեռել էր բերդը հասած օրը։ Ծանր էին անցրել գերության օրերը, իսկ նախարարների սպանությունից հետո եղել էր շվար վիճակ։ Հիմա ի՞նչ պիտի անեն՝ մնա՞ն, թե թողնեն փախչեն... Վերջապես որոշում են վերադառնալ քաղաք և քանդված տներում սպասել ամուսիններին, իսկ պառավն ու Մինան՝ իրենց Թորգոմին... Բայց կես ճանապարհին լսելով, որ վտանգ կա և, տեսնելով բոլորը գնում են Արտագերս, իրենք ևս վերադառնում են բերդ, մտածելով, որ իրենց նախկին տանջարանը այժմ կարող է բերել փրկություն։

— Էսպես,— եզրակացրեց իր պատմությունը Թորգոմի մայրը։

Երբ հանդիպման առաջին ժամն անցավ, Վարդանը նորից կրկնեց իր ցանկությունը՝ կես-կատակ, կես-լուրջ ձևով.

— Դե, եկեք պսակենք Թորգոմին, որ էլ փորձանք չպատահի։

Բայց նրա առաջարկը չընդունեցին.

— Դեռ ժամանակ ունե՛նք, տեսնենք...

Առաջին օրերը թե՛ բերդում հավաքված բոլոր մարդիկ ու կանայք և թե՛ Թորգոմն ու ընկերները մեծ հետաքրքրությամբ էին դիտում թագուհուն, պալատականներին ու իշխաններին. բայց մի քանի օրվա մեջ նրանք դարձան սովորական. նրանք էլ մարդիկ էին իրենց նման, նույնպես ուտում էին, քնում, խոսում և վախենում...

Սակայն ի՞նչ էլ անում-խոսում էին մարդիկ այդտեղ՝ մի վայրկյան չէին մոռանում պատերազմը և նրա վտանգը ահավոր։ Շատերին երբեմն այնպես էր թվում, մանավանդ մռայլ օրերին և մութ գիշերներին, թե թշնամին երևի այսօր-վաղը կպաշարի իրենց, կամ, հանկարծ, երբ առավոտը զարթնեն, թշնամուն կտեսնեն պարիսպների տակ... Սուրհանդակների բերած ամենօրյա լուրերը (թե թշնամին տակավին սահմանը չի անցել, թե Մուշեղը վանում է նրանց) քիչ էին հանգստացնում։ Ընդհակառակը, ամեն օր սպասում էին չարագույժ լուրերի, թե Շապուհն ահա անցել է սահմանը, թե հայոց զորքը նահանջում է արդեն կամ ընկել է գերի։ Քանի որ Վասակ սպարապետը չկար՝ ո՞վ պիտի բռներ նրանց առաջը, ո՞վ կարող էր վանել կամ արգելել նրանց առաջացումը... Ավելի հոռետես էին իշխաններն ու նրանց կանայք։ Ի՞նչ կարող է անել անփորձ Մուշեղը պարսից ահեղ, անքանակ զորքերի առջև. ուրիշ է, եթե օգնություն խնդրեն բյուզանդական կայսրից։ Այո, միայն դրսի օգնությունը կարող է փրկել իրենց...

Բայց այդ ամենի փոխարեն շուտով եկավ մի այնպիսի լուր, որ զարմանքի հետ միասին հպարտություն ներշնչեց ամենքին, և տխուր ժայռերեղեն սարալանջին բազմած հին ամրոցը դարձավ ցնծության տուն։

Երկու-երեք սուրհանդակ իրար հետևից բերին այդ միևնույն ուրախ լուրը, թե Մուշեղը Հեր և Ջարևանդ գավառների

սահմաններում թշնամուն ջարդ տալով վանել է հեռու և ապա, առաջ գնալով, թիկնանց շարժումով գերի է վերցրել Շապուհի կանանոցը։

Շապուհի կանանո՞ցը... Լուրն այնքան արտակարգ էր, որ սկզբում դժվարանում էին հավատալ. սակայն երբ նոր եկող սուրհանդակները կրկնեցին նույնը, ամենքին համակեց անխառն ուրախություն։

— Ապրի՛ Մուշեղը... ապրի՛,— բացականչում էին մարդիկ ինքնաբեր։

Իսկ ծերունիներն ասում էին գոհունակ.

— Իր հոր զավակն է... Թո՛ղ վրեժխնդիր լինի խարդախից. բազուկը դալա՛ր...

— Շապուհն այժմ կզղջա արածը։

— Նա չի տեսել երևի այդպիսի անպատվություն...

Ցնծությունն ու օրհնանքն ընդհանուր էր։

Շուտով սուրհանդակները բերին այդ հաղթության նոր մանրամասնությունները։ Հաստատելով Մուշեղի կատարած քաջագործությունը՝ նրանք միաժամանակ պատմեցին, թե Մուշեղն իրոք գերելով Շապուհի կանանոցը՝ նույն օրն ևեթ արձակել է, ասելով, թե՝ «Ինքը չի կռվում կանանց դեմ»... Այս պարագան փոքր-ինչ խախտեց ուրախությունը։ Ի՞նչ ավելորդ մեծահոգություն, անիմաստ գոռոզություն,— ասում էին մեծերից շատերը։ Անգամ Մուշեղի մայրը՝ Կատրանիդե տիկինը, իմանալով այդ և՛ ուրախացավ, և՛ տխրեց։ Ուրախացավ, որ որդին հաղթանակ է տարել և վրեժխնդիր է լինում հոր համար, բայց տխրեց, որ որդու վեհանձնությունը առիթ պիտի տա մարդկանց՝ վատաբանելու իր Մուշեղին, համարելով նրան գուցե թուլասիրտ կամ ետին մտքերով առաջնորդվող, որ արձակել է թշնամու գերի ընկած կանանց... Եվ ո՞ւմ են պետք պարսից արքայի կանայք, որ Մուշեղը գերի պահեր նրանց, կերակրեր և մարդիկ զբաղեցներ նրանց խնամելու համար,— մտածում էր Մամիկոնյան իշխանուհին, ցանկանալով արդարացնել որդու վարմունքը։ Բավական է և այդ անպատվությունը, որ հասցրել է Շապուհին... Եվ չնայած Մուշեղն ասել էր, թե ինքը «չի կռվում կանանց դեմ, այլ Շապուհի», այնուամենայնիվ բերդում իրոք կային մարդիկ—շատ ազնվականներ և անգամ շինա-

կաններ, որ դատապարտում էին Մուշեղի քայլը, եթե ոչ հրապարակով, գոնե մասնավոր զրույցի մեջ, իրենց մտքում։

— Ինչո՞ւ է արձակել, երբ կարող էր գերի պահել և Շապուհին ստիպել հաշտության,— ասում էր Սահառունի Սահակ իշխանը։

— Սակայն այդ վեհանձնությունը նույնպես կարող է մեղմել Շապուհի սիրտը,— առարկում էր Պալունի իշխանը, և նրան համամիտ էր Անձևաց Խորենը։

— Ոչ, նա պետք է պատանդ պահեր այդ կանանց, որպեսզի Շապուհը գազանային գործեր չկատարեր մեր երկրում,— շարունակում էր Սահառունին, և նրան համամիտ էր Մեհենդակ իշխանը։— Անխոհեմություն է։

Կային մարդիկ էլ, որ պնդում էին, թե Մուշեղը գազանաբարո Շապուհին տվել է զորավարի մարդկայնության, վեհանձնության բարձր օրինակ, և թող դաժան Շապուհն ամաչի՛...

— Բայց տեսնվա՞ծ է, որ գազանն ամաչի,— դարձյալ առարկում էին մյուսները, ավելորդ, նույնիսկ վնասակար մեծահոգություն, անհեռատեսություն համարելով Մուշեղի վարմունքը։

Ու մի քանի օր շարունակ բերդի բնակիչները այս-այն տեղ խմբված վիճում էին դրա մասին։ Ու ամենքն էլ հանգում էին այն մտքին, թե թշնամուն չպետք է խնայել...

Այդ կարծիքի էր և Փառանձեմ թագուհին. սակայն հաղթությունը այնքան մեծ էր թվում նրան, որ չէր կամենում առանձնապես խորհել գերի ընկած և վերադարձրած կանանոցի մասին։ Նա մտածում էր, որ Մուշեղը հավանաբար ունեցել է դրա համար լուրջ նկատառումներ, այլապես չէր զիջի... Հաղթության լուրն առնելու առաջին իսկ օրը Փառանձեմը կարգադրեց՝ բերդը զարդարել դրոշներով և գինի բաժանել զորքին, ապա կարգադրեց, որ բերդի եկեղեցում գոհաբանական մաղթանք կատարեն վարդապետներն ու քահանաները։ Թագուհին այդ մեծ հաղթության մեջ առանձին նշանակություն էր տալիս գերի կանանց ազատելուն...

Բայց որքան էլ Փառանձեմը գոհ էր այդ հաղթությունից, այնուհանդերձ նրան զբաղեցնում էին կարևոր մտքեր. ամենից առաջ նա կարծում էր, որ երկրին տեր է հարկավոր, իսկ

հայոց բանակին լուրջ օգնություն՝ որևէ կողմից, որովհետև հայոց զորությունը նրան թվում էր պակաս Շապուհին դիմագրավելու համար։ Ուստի և խորհում էր, որ լավ կլիներ, եթե Պապը լիներ այստեղ, որպես գահաժառանգ կամ որպես թագավոր...

Այս մտքերը Փառանձեմին զբաղեցնում էին աղետի առաջին օրերին, բայց դեպքերը, արագորեն իրար հաջորդող դեպքերը, հնարավորություն չտվին ավելի երկար մտածելու, դրա առավելությունները կշռադատելու... Այժմ սակայն բերդի առանձնության մեջ, երկար անքուն գիշերները նա հանգել էր այն մտքին, թե զորքին, ժողովրդին ոգի և վստահություն ներշնչելու համար, մանավանդ օրինական իշխանություն ունենալու համար, անհրաժեշտ էր Պապին բերել Բյուզանդիայից։ Թող Շապուհը չկարծի, թե Հայոց Աշխարհը մնացել է անտեր, և ցանկացածը կարող է անել՝ երկիրը նվաճել մի գրոհով,— մտածում էր Փառանձեմը։— Բանտելով Արշակ թագավորին՝ Շապուհը կամեցել էր երկիրը թողնել անգլուխ, որպեսզի դյուրանա նրա նվաճումը... Իսկ եթե գահաժառանգը լինի երկրում, պարսից արքան չի հասնի իր նպատակին։ «Պապը, հարկավ, սուրը ձեռքին չի ելնի կռվի,— խոսում էր ինքն իր հետ Փառանձեմը,— սակայն լոկ թագաժառանգ անունը կունենա իր ազդեցությունը թե՛ երկրի ներսում և թե՛ դրսում»։

Վերջապես, Փառանձեմը խորհում էր, որ Պապի հետ կգա և իր հայրը՝ Անդոք իշխանը, և իր փորձ խորհուրդներով կօգնի Պապին և կիմանա ինչպե՛ս վարվել Շապուհի հետ... Կգա և Բարիկ եղբայրը, որ քաջածանոթ է ռազմի գործին... Եվ նրանք կարող են իրենց հետ բերել բյուզանդական զորք և բյուզանդական հայ նախարարների ուժերը... Այս ամենի մասին Փառանձեմը խորհում էր մենակ, տակավին ոչ մեկին չվստահելով իր մտքերը։ Բայց երբ երեք օր առաջ առավ Մուշեղի հաղթության լուրը, նա ուրախությունից իր մտքերը հայտնեց հազարապետի եղբորորդուն՝ Զենոն Գնունուն և հարցրեց նրա կարծիքը։

— Անշուշտ, թագուհի,— ասաց հանդարտ Զենոնը,— գահաժառանգի ներկայությունը ոգի կտա զորքին և թերևս զսպի պարսից ախորժակը. նոքա կտեսնեն, որ երկիրն անգլուխ չէ

իրոք։ Պետք է, այո, բերել գահաժառանգին՝ Պապին, և որքան շուտ՝ այնքան լավ։ Նույնպես և բյուզանդական օգնությունը...

Նույն խորհուրդը տվեցին Թագուհուն նաև Սահառունի Սահակ, Պալունի Կարեն և Անձևաց Խորեն ու Մեհենդակ իշխանները։

— Սակայն ո՞վ կարող է գնալ և բերել, Թագուհի,— հարցրեց Զենոնը։

— Ես խորհել եմ այդ մասին,— հայտնեց Փառանձեմը՝ նկատելի ոգևորվելով, որ իր միտքը հավանություն է գտնում։— Լավագույն թեկնածուն Մուշեղն է անշուշտ։

Զենոնը զարմացավ.— Մուշե՞ղը...

— Այո, իշխան. ինչո՞ւ զարմացար։ Ես Պապին չեմ կարող վստահել ամեն մարդու։ Միայն Մուշեղին. և վերջապես Բյուզանդիոնում ճանաչում են նորան որպես Վասակ սպարապետի որդի։

— Բայց մեր սահմանների ապահովությո՞ւնը, Թագուհի։ Ինչպե՞ս կլինի։

— Նրան կփոխարինի Մուշեղի օգնական Զաքեհ Ամատունին։ Մինչև Շապուհը կուշաբերվի վերջին պարտությունից և նոր զորք կբերի՝ Մուշեղը կվերադառնա Պապի հետ, բերելով նաև բյուզանդական օգնական գնդեր...

— Թերևս,— ասաց Զենոնը տարակուսով։

Որդուն բերելը տիրական միտք էր դարձել Փառանձեմի մեջ, այնքան տիրական, որ ստիպեց նրան անմիջապես Մուշեղին կանչել Արտագերս։ Եվ երբ մի քանի օր հետո երիտասարդ սպարապետը ներկայացավ, Թագուհին գրեթե փարվեց նրան և անխոս համբուրեց հերոսի ճակատը։

— Ես գոհ եմ քեզնից, Մուշեղ սիրելի։ Գոհ եմ քո հաղթանակից, քո հերոսական գործից։ Շնորհակալություն քեզ զորքի և ժողովրդի կողմից։

Մուշեղը խոնարհեց գոռոզ մազերով գլուխը։

— Այժմ նստիր, զավակս։ Ես կամենում եմ զրուցել քեզ հետ։ Ասեմ ավելի պարզ. կամենում եմ անել քեզ հույժ կարևոր մի հանձնարարություն։

Մուշեղը նստեց զինվորական հագուստներով և երկար թուրը մի կողմ պահելով, կարծես այն կարող էր խանգարել խո-

սակցությանը։ Եվ Փառանձեմը հայտնեց նրան շաբաթների իր մտածմունքը և վերջին օրերի իր վճիռը՝ թող Մուշեղը մի քանի հոգու գլուխ անցած գնա Բյուզանդիոն՝ Պապին բերելու, որպեսզի թե՛ պարսիկները, թե՛ բոլոր ազգերը և ժողովուրդը հայոց իմանան, որ գահը թափուր չէ...

— Պապի ներկայությունը հույժ կարևոր է... Ես, Մուշեղ, ուրիշ մեկին չեմ կարող վստահել, թե իմ որդոսս-գահաժառանգին ապահով կհասցնի ինձ և հոռոմ զորք կբերի պարսից դեմ։ Այդ կարող ես անել միայն դու, Մուշեղ, որպես Վասակի որդի, որպես սպարապետ։

Թագուհու առաջարկը հաճո եղավ Մուշեղին, մանավանդ նրա վստահությունը։ Սակայն նա ևս մտածեց՝ ինչպե՞ս թողնել հայոց սահմանների պաշտպանությունը և մեկնել... Բայց թագուհու այն միտքը, թե պետք է նաև օգնություն խնդրել բյուզանդական իշխանությունից և բերել Բյուզանդիայի սահմաններում ապրող հայ նախարարների ուժերը, դա Մուշեղին թվաց խելացի. նա ինքն ևս պատերազմի առաջին օրից խորհել էր Բյուզանդիայից օգնություն խնդրելու և գահաժառանգին երկիր բերելու մասին, ուստի և հանձն առավ. նա որոշեց՝ գնալ շուտով և արագորեն գլուխ բերել թե՛ մեկը, թե՛ մյուսը...

Այդ ամենը համարելով հույժ կարևոր և անհետաձգելի՝ Մուշեղը հետևյալ օրն իսկ ճանապարհ ընկավ թիկնապահների մի փոքրիկ խմբով, որոշելով՝ ծովով գնալ, ցամաքով վերադառնալ։

— Մեր փրկությունը, Մուշեղ, բերելու ես դու,— շեշտեց Փառանձեմը հրաժեշտին։

— Եվ չուշացնես, որդիս, այդ փրկությունը,— ասաց Կատրանիդե իշխանուհին գրեթե աղերսաձայն։

Եվ դա բերդի ողջ բնակչության ցանկությունն էր։

Մուշեղի դեսպանության մեջ էր և Զենոն Գնունին։ Թագուհին նրան ուղարկում էր Մուշեղին օգնելու, եթե հարկ լիներ։ Բայց Զենոնն այնպիսի տեսք ուներ, կարծես աքսոր էր գնում...

Այս ամենի հետ պետք է հիշել և այն դեպքը, որ նորություն եղավ բերդում բնակվողների համար և այնքան հետաքրքրեց ամենքին։

Մի օր, երբ Թագուհին, բերդապետի հետ անցնում էր պարիսպի մոտով, լսեց նվագի ձայն, որ գալիս էր բերդի առաջին մասից։ Լսեց և կանգ առավ։ Բերդում նվա՞գ...

— Ի՞նչ է նշանակում այս, բերդապետ,— հարցրեց նա զարմացած։

— Այստեղ մի երիտասարդ է պսակվում, Թագուհի։

— Պսակվո՞ւմ...

— Այո։

— Դա արդյոք բարի նշան չէ՞, բերդապետ։

— Անտարակույս, Թագուհի։

Բերդապետն ուզեց մխիթարել Փառանձեմին։

Դա իրոք հարսանիք էր։ Քանի օր էր բերդի ընդհանուր ուրախությանն անմասն չէին Թորգոմն ու ընկերները. նրանք էլ ցնծում էին հաղթանակի համար, գուշակում, որ պատերազմը շուտով կվերջանա... և այնքան բարձրացավ ընկերների ու նրանց ընտանիքների տրամադրությունը, որ Վարդանը նորից կրկնեց իր հին ցանկությունը.

— Դե Թորգոմին ամուսնացնենք, որ էլ աղետ չտեսնենք...

Լինում են պահեր, երբ խոսքը, հասարակ խոսքը ունենում է մեծ, համակող ուժ։ Այդպես եղավ և այս անգամ։ Հաղթանակի ուրախությունն այնպես էր տոգորել ամենքին, որ բոլորը համամիտ եղան և Թորգոմին պսակեցին։

Բայց դա սովորական պսակ չէր, այլ արտակարգ մի ծես, որ մնացել էր գուցե հեթանոսական ժամանակներից՝ կրակապաշտությունի՞ց, թե արևապաշտությունից... Երբ քահանային հայտնեցին, թե կամենում են պսակել մի զույգ—ինքը կհոժարի՞ կատարել այդ ծեսը, նա՝ վաղարշապատցի երեցը— համաձայնեց և առաջարկեց, որ տղային ու հարսին բերեն բերդի եկեղեցին։

— Ո՛չ, տեր հայր,— ասաց Վարդանը,— ոչ եկեղեցի...

Քահանան զարմացավ.

— Հապա ինչպե՞ս։

— Մենք կուզենք պսակել նրանց ակութի վրա։

— Եվ ինչո՞ւ,— հետաքրքրվեց քահանան։

— Որպեսզի պսակը լինի ամուր նախնյաց ձևով, որպեսզի նորապսակները բնավ աղետներ չտեսնեն և վտանգի չհանդիպեն...

Քահանան, որ տարեց մեկն էր, ճերմակ մորուքով, գատարեց նրանց կամքը. նորապսակներին կանգնեցրեց տաք թոնրի շուրջը և, արծաթ խաչը բարձր բռնած, կատարեց պսակի կարգը։ Թոնրատանը հալչաքվածները՝ հարազատները, բարեկամները և անծանոթները, հիշելով իրենց վիճակը, լալիս էին ուրախությունից, իսկ Վարդանը կատակում էր հարբածի պես.

— Շուտ արա, հայր, որ էլ աղետ չտեսնենք.. եթե սրանք շուտ պսակվեին, այս փորձանքները չէին լինի...

Երբ քահանան ավարտեց խորհրդավոր արարողությունը, ընկերներն իրենց ընտանիքներով շնորհավորեցին նորապսակներին, իսկ Թորգոմի մայրը համբուրեց նրանց և խաչակնքեց.

— Ամենից առաջ՝ տերը պահի Աշխարհը Հայոց ու ձեզ, ղավակներս...— ու լաց եղավ խեղճ պառավը, որ իր աչքով տեսավ, վերջապես, որդու վաղուց փափագած պսակը։

Շուտով հայտնվեցին և նվագածուներ, որ Մուշեղի հաղթության ուրախությունը մեծացրին նորապսակների հարսանիքին։

Պսակի լուրը զարմանքի հետ միասին ուրախացրեց բերդում ապաստանածներին. ամենքը ներուստ զգացին, որ եթե մարդիկ պսակվում են և ուրախանում, ուրեմն վտանգը մեծ չէ...

Իսկ Փառանձեմ Թաղուհին մտածեց. ուրեմն՝ ժողովուրդն ընկճված չէ, նա հավատում է հաղթության...

* * *

Մուշեղին Բյուզանդիա ճանապարհելուց հետո Փառանձեմը հատուկ հրամանով Մեհենդակ իշխանին և Խորեն Անձևացուն ուղարկեց պարսից սահմանը՝ Զարեհ Ամատունուն հայտնելու, որ նա նշանակված է սպարապետ մինչև Մուշեղի վերադարձը և որ իրենք նրան օգնելու են որպես խորհրդատուներ։ Իսկ ինքը Փառանձեմը բերդակալին կարգադրեց, որ ջանա շրջապատից նոր պաշարներ բերել բերդը. կարգադրեց

նաև, որ զորքից բացի, մյուսները—բերդ եկած տղամարդիկ՝ իրենց ընտանիքներով,— եթե ցանկանում են ու հնարավորություն ունեն և քանի թշնամին չի խուժել երկիրը՝ կարող են գնալ համեմատաբար ապահով վայրեր՝ Վանանդ, Տաշիրք և Տայք։

Փառանձեմն ինքը որոշել էր մնալ բերդում՝ զորքի հետ, նրան ոգևորելու և երկրի կենտրոնում լինելու համար։ Անելով իր կարգադրությունը՝ նա մտահոգված էր երկու հարցով. նախ, որ բերդականները և նոր եկած զորքը ազատ լինեն կռվելիս. այսինքն՝ բնակչության ահը, երկյուղը, մի խոսքով՝ տխուր տրամադրությունը չազդի մարտիկների վրա. երկրորդ, մտածելով, թե պաշարումը (եթե լինի և երկարի) բերդում կարող է առաջացնել պարենի նեղություն, ուստի և ցանկալի էր թեթևացնել բերդը։ Բայց միևնույն ժամանակ չէր կամենում խիստ լինել և հարկադրել մարդկանց հեռանալու։ Այդ իսկ պատճառով նա կարգադրությանն ավելացնում էր, թե ամեն ոք ազատ է մնալու և գնալու ընտրություն կատարելու... Ու եղան ընտանիքներ, շատերը՝ հարյուրավորներ, որոնք լեռնագավառներում ապրելու ազատությունը գերադասեցին բերդի վտանգներից և հեռացան հետզհետե, քանի դեռ պարսիկը չէր մտել երկիր, քանի դեռ ձմեռը չէր եկել և ճանապարհներն ազատ էին։ Սակայն եղան և այնպիսիները, որ չուզեցին թագուհուն թողնել մենակ, ու մնացին։ Դրանք մի խումբ պալատականներ էին իրենց ընտանիքներով և նախարարներ, որոնց մեջ էին Սահառունի Սահակ մեծ իշխանը, Պալունի Կարենը, և Հավնունի Մանասպը։ Սրանք անհարմար էին համարում հեռանալ, գուցեև մտածում էին, թե բերդն անառիկ էր և ավելի ապահով, քան որևէ լեռնագավառ, ուր թշնամին չէր գնում սովորաբար, բայց այս անգամ կարող էր հասնել։ Հետևաբար՝ մնալով կարելի էր փրկվել...

Մնացողների մեջ էին նաև հազարապետի ընտանիքը՝ Նանա իշխանուհու գլխավորությամբ, Վասակ սպարապետի Կատրանիդե տիկինը՝ հարսի և թոռների հետ, Գնթունի Ադամը իր ընտանիքով և այլ ազնվական ծերունիներ, տիկիններ ու օրիորդներ, որ ապրում էին բերդի վերին գոտում, այնտեղ, ուր ապաստանել էր թագուհին։ Մնացողների մեծագույն մասը շինականներ էին, որ հույս չունեին, թե հեռունե-

ռում ապահով ապաստան գտնեն, կամ՝ այնպիսիները, որ չէին կամենում հեռանալ իրենց նվիրական բնակավայրերից, որոնք գտնվում էին բերդին մոտ շենքերում. և այս շինականները բերդի ներսում, մայրաքաղաքից եկած արհեստավորների հետ, ջանադիր կատարում էին այն բոլոր աշխատանքները, ինչ հրամայում էր բերդապետը։ Բերդում մնաց նաև նորապսակ Թորգոմը՝ Վարդանի և Հովսեփի հետ։ Նրանք ապրում էին բերդի առաջին գոտում. այսինքն՝ առաջին պարսպի ներսը՝ մի-մի փոքրիկ խցում։ Հարևան խցերում նույնպես ապրում էին նրանց նման շինականներ, քաղաքացիներ, արհեստավորներ։ Նույնպիսի մարդիկ էին ապրում և երկրորդ գոտում. ու այդ բոլորը առավոտից երեկո աշխատում էին պարիսպների վրա. կարգի էին բերում պատերի քանդված տեղերը, բուրգերը, ատամները. ոմանք նորոգում էին բերդի արհեստանոցները, հատկապես դարբնոցները՝ զենք պատրաստելու և վնասվածները նորոգելու։ Ոմանք կարգի էին բերում երկանքները և թռներտները, որ պարբերաբար ու անխափան հաց թխեն զորքի ու բնակչության համար։ Հարյուրավոր անասուններ էին բերում մորթում բերդից դուրս և նրանց միսը կրում աղ դնում բերդի մառաններում. մոտիկ անտառներից փայտ էին կտրում և ջորիներին ու ձիերին բարձած բերում... Շատ աղ էին կրում նաև մոտիկ կողքա հանքերից։ Քանի թշնամին երկիրը չէր մտել՝ ջանում էին որքան կարելի է բերել շատ անհրաժեշտ բաներ, իբրև պաշար, առնվազն մի քանի ամսվա համար։

Ականջը ճեղքված բերդապետը ամբողջ օրը կարգադրություններ էր անում, հետևում կատարվող աշխատանքներին, մասնավորապես ուշադիր էր պարիսպների նորոգմանը և այն բանին, որ դրսից քար կրին պարիսպների գլուխը, աշտարակները, բուրգերը և կիտուկներ անեն այնտեղ։ Այս աշխատանքները դիտելուց հետո՝ բերդապետը օրը մեկ-երկու անգամ բարձրանում էր բերդի վերին գոտին՝ թագուհուն զեկուցելու օրվա մեջ անցած-դարձածը կամ իմանալու նրա ցանկությունները։ Ասենք, Փառանձեմն ինքը օրումեջ կամ օրը մի անգամ իջնում էր կատարվող աշխատանքները տեսնելու՝ բերդապետի կամ նրա մի օգնականի ուղեկցությամբ։ Թագուհուն հետևում էր և նզնիկ իշխանը՝ միշտ կողքից կա-

խած թուրը բռնած այնպես, որն ասես վտանգի դեպքում պիտի մերկացներ իսկույն։ Թագուհուն մենակ չթողնելու համար երբեմն նրան ուղեկցում էին մեկ-երկու իշխանուհի։

Դիտելով աշխատանքները՝ Փառանձեմն անում էր հարցումներ, դիտողություններ կամ խրախուսանքի խոսք էր ասում միշտ մտահոգ, միշտ մի ծանր թախիծ դեմքին։ Մի անգամ էլ Փառանձեմը վարի պարսպի աշխատանքները դիտելիս նկատեց թուրը ձեռքին մի պատանի։ Թագուհին կանգ առավ և նայեց ուշադիր։

— Ո՞վ է այս պատանյակը,— հարցրեց նա հետը քայլող բերդապետին։

Եվ որովհետև ոչ բերդապետը, ոչ էլ ուղեկիցները պատասխանել չկարողացան, ուստի մի երկու քայլ առաջ եկավ Վարդանը։

— Իմ որդիս է, թագուհի,— ասաց նա շառագունելով, որ համարձակվում է խոսել հայոց տիկնոջ հետ։ Վարդանը նրան տեսել էր միշտ հեռվից և այժմ շփոթված էր. նայում էր սևազգեստ բարեկազմ թագուհուն և չգիտեր, թե ինչ պետք է ասել։

Իսկ Փառանձեմը, նրա Հուսիկին տեսնելով, հիշեց Պապին, որին գրեթե այդ հասակում ճամփել էր Բյուզանդիոն և վաղուց չէր տեսել, ուստի կարոտ ու մայրական գորով զգաց։

— Իսկ դու որտեղացի՞ ես,— շարունակեց հետաքրքրվել Փառանձեմը, նայելով Վարդանի մազմաղոտ դեմքին ու քըշտած բազուկներին։

— Ես և իմ ընկերները Արշակավանից ենք, թագուհի,— և Վարդանը ցույց տվեց բախտակից ընկերներին՝ Հովսեփին ու Թորգոմին, որ նույնպես աշխատում էին այդտեղ և այժմ հետաքրքիր նայում էին թագուհուն։

— Ուրեմն Արշակավանից փրկվածներ կա՞ն...

— Հրամայել ես, թագուհի,— պատասխանեց Վարդանը. — Մենք կռվելով դուրս եկանք,— նա նորից մատնացույց արավ ընկերներին։

— Իսկ ձեր ընտանիքնե՞րը։

— Տարվեցին գերի...

— Գերի՞... Նզովք նախարարներին... Գերի՜...

— Բայց հետո այստեղ գտանք իրար, թագուհի...

— Իսկ երիտասարդը պսակվեց այստեղ,— խոսեց բերդապահը իր հերթին մատնացույց անելով Թորգոմին, որի պսակին ներկա էր եղել պատահաբար։ Թվաց, թե նա այդ չասաց թագուհուն հաճույք պատճառելու համար, իմանալով, որ այդ փաստը կուրախացնի թագուհուն։

— Պսակվողը դո՞ւ ես,— և թագուհին ուշադիր նայեց Թորգոմին։— Ի՞նչը ստիպեց, որ պսակվես բերդում և... թոնրի վրա,— հետաքրքրվեց Փառանձեմը։

Թորգոմը կարմրեց և գլուխն իջեցրեց. նա չիմացավ ի՛նչ պատասխանել և միայն ասաց.

— Մենք կորցրել էինք իրար, թագուհի։ Այստեղ գտանք։ Եվ վախեցանք նորից կորցնենք...

Փառանձեմի դեմքին ժպիտի պես մի բան երևաց և նա, չգիտես ինչ մտածելով, կրծքից մի ոսկե քորոց հանելով՝ մեկնեց Թորգոմին։

— Քո հարսին, տղաս... գովում եմ...

Փառանձեմը թվում էր խանդաղատած. նա արցունքները թաքցնելու համար քայլեց առաջ։ Բերդապետը և մյուս ուղեկիցները հարգալիր հետևեցին նրան։ Իսկ Թորգոմն ու ընկերները և մանավանդ պատանի Հուսիկը երկար նայեցին թագուհու հետևից, ապա իրար գալով գնեցին նվերը, հիշելով թագուհու խոսքերը.

— Ասաց «նզովք նախարարներին»... Այո, նզովք, նզո՞վք... Նրանք ավերեցին մեր տները,— խոսեց սակավախոս Հովսեփը, որ ծանր էր ապրում իր տան ավերումը։

— Եվ ստացան իրենց արժանի պատիժը,— սիրտը հովացրեց Վարդանը։

Խոսեցին ընկերները, հիշելով իրենց փախուստը, իրենց կրած զրկանքները և բոլորը միասին հառաչեցին.

— Այո, նզո՞վք նախարարներին...

— Հիմա էլ հայ նախարարները, Շապուհին միացած, գալիս են թագուհու վրա։

— Նզո՞վք նախարարներին... Նզո՞վք Շապուհին...

Նրանք հառաչեցին ու լռեցին, և փոքր անց, Վարդանը խզեց լռությունը։

— Ի՞նչ ճակատագիր. երեք տարի առաջ փախանք այստեղից, նորից ահա ընկանք այստեղ։ Ճշմարիտ է, Կամսա-

բական իշխանները չկան, բայց հիմա էլ պարսիկն է սպառնում մեզ։

Իրոք, վերջին օրերը գալիս էին սպառնալից լուրեր, թե պարսիկները, վերջին պարտությունից հետո, ամսի չափ պատրաստվելով և նոր ուժեր հավաքելով, կրկին շարժվում են դեպի Հայոց սահմանը։ Զարեհ Ամատունին ամեն օր սուրհանդակներ էր ուղարկում՝ հայտնելով պարսիկների առաջացումը, միաժամանակ և այն, թե ի՛նչ պատրաստություն է տեսնում ինքը՝ դրա առաջն առնելու։ Այս Մուշեղ սպարապետի Բյուզանդիա գնալուց ամիս ու կես հետո էր։ Առնելով այդ լուրերը՝ Թշնամուն սպասում էին Հեր և Զարևանդ գավառների կողմից. սպասում էին, թե Թավրիզում կուտակվող նրանց բանակը կհարձակվի նախ այդ գավառների վրա և ապա կխուժի Հայոց Աշխարհը... Բայց անսպառելի աղետ... Լուր եկավ հարավից, թե Շապուհը մեծ ուժերի գլուխ անցած Տիգրիսի հոսանքն ի վեր բարձրանալով, հասել է արդեն Տարոն։ Խոսում էին, որ նրա հետ է և Մերուժան Արծրունին։ Ասում էին, որ նա՛ է առաջնորդում պարսից արքային ու նրա զորքը. ավելացնում էին նաև, թե Մերուժանը ցանկություն ունի դառնալ թագավոր հայոց և վերականգնել տուժած նախարարների իրավունքները։

— Նզո՛վք Մերուժանին, նզո՛վք,— բացականչեց Փառանձեմը, լսելով նրա անունը։— Դարձյալ այդ չարահոգին... Սակայն զինվենք կամքով և կորովով։ Բերդապետ, ամրացրու բոլոր մուտքերն ու պարիսպները և գետնուղիով կամ այլ ուղիներով մարդեր ուղարկիր մեզ ավելի ստույգ լուրեր բերելու։ Աղոթենք, որ մինչև նոցա հասնելը իմ սպարապետն ու Պապը կգան մեզ օգնության։ Աննենք այնպես, բերդապետ, որ թշնամին, եթե անգամ պաշարի բերդը՝ վերցնել չկարողանա... մինչև կգան Պապն ու Մուշեղը բյուզանդական զորքով։

Այդ բանում համոզված էին ոչ միայն բերդապետն ու թագուհին, այլև ամենքը։

— Մինչև նոքա հասնեն բերդին՝ Պապն ու Մուշեղը կգան հոռոմ բանակներով,— կրկնում էին թագուհու խոսքերը բերդի բնակիչներից շատերը։

Թեպետև բերդն ամրացրել էին ինչպես պետք էր, բայց բերդապետ Բագասը կրկին ու կրկին շրջում-դիտում էր պա-

րիսպներն ու բուրգերը, երկաթե դռներն ու փակերը և հրամայում լինել արթուն և զգույշ։ Ամենքին ներշնչում էր՝ ինչպես դիմադրել պարսիկներին. նույնը սովորեցնում էր երիտասարդ շինականներին ու արհեստավորներին։ Անցնելով մի պահակախմբից մյուսը՝ նա կարգադրում էր.— եթե նկատեք բերդին մոտեցող մի կասկածելի՝ նետահարեք անհապաղ։ Զգուշացեք լրտեսներից... Կուտակեցեք նոր քարեր... Պահպանեցեք բերդը և մեր դրոշը աչքի լույսի պես...

Թորգոմը, որ ընկերների հետ մասնակցում էր այդ աշխատանքներին, բերդապետի խոսքերի վրա զարմացած նայեց նրան։ Դրո՞շը... Թորգոմը հասկանում էր, քարերը նրա համար են, որ պարսատիկով ու ձեռքով նետեն թշնամու վրա. հասկանում էր, որ պետք էր պաշտպանել բերդը, բայց դրո՞շը... Դա թշնամու ինչի՞ն է պետք...

Եվ ահա մի անգամ էլ, երբ Թորգոմը նորից լսեց բերդապետի այս կարգադրությունը, հարցրեց կողքի զինվորին.

— Բերդը հասկանալի է, իսկ դրոշն ինչո՞ւ...

— Դրոշը բերդից կարևոր է,— բացատրեց նրան բերդական զինվորներից մեկը՝ զարմացած, որ դիմացինները չգիտեն այդ հասարակ բանը։— Եթե երկիրը կորցնի իր դրոշը՝ մեծ անպատվություն է. եթե թշնամին առնի դրոշը՝ երկիրը կորավ։

— Էդպե՞ս,— ասաց Թորգոմը մտածումների մեջ։

Չնայած պարիսպների վրա և բուրգերի գլխին կիտել էին շատ բռնաքարեր, բայց նորից կրում էին և կույտեր կազմում։ Քարերը կրում էին թե՛ զինվորները և թե՛ շինականները։ Այդ աշխատանքներին մասնակցում էին նաև շինական կանայք. նրանք պարապ չէին մնում առհասարակ. երկանքով ցորեն էին աղում, հաց էին թխում, կերակուր էին եփում զորքի համար...

Աշխատում էին մարդիկ և դարձյալ սպասում նոր լուրերի։

Եվ մի օր էլ ահա սուրհանդակները լուր բերին, թե պարսիկները Բասենից շարժվում են Արշարունիք, նպատակ ունենալով վերցնել բերդը, քանի դեռ ձմեռը չի եկել։ Այդ մտադրությունն իրագործելու համար Շապուհն իր բանակը բերում էր բերդի դեմ, տակավին երկիրը չգրաված։

Սովորաբար արքունի սուրհանդակները միշտ բերում էին

ստուգված լուրեր, սակայն այս վերջին լուրին ամենքը չհավատացին. ո՞վ կարող էր իմանալ Շապուհի մտադրությունը. մի՞թե նա հայտնի կդարձներ իր գաղտնի խորհուրդը...

Բայց դա ճշմարիտ էր. լուրը գալուց մի շաբաթ անց՝ պարսից զորքերը երևացին նախ Կամրջաձորում, ապա բերդի տակ... Բերդականներն ու բերդի բնակիչներն այնքան էին լսել նրանց մասին, որ արդեն ընտելացել էին այդ վախին— վերևից դիտում էին թշնամու շարժումը, թե ո՞ւր է գնալու և ի՞նչ է անելու. հարձակվելո՞ւ են անմիջապես, թե բանակցություն են սկսելու։

Բայց այդ շարժումը տևեց մեկ-երկու օր. նրանք եկան ու կուտակվեցին կամուրջի մոտ, ապա, անցնելով, տարածվեցին սարի ստորոտում ու լանջերում։ Մեծ մասը սակայն մնաց Արաքսի այն կողմը։

— Պատրաստվում են հարձակման,— ասում էին ոմանք։

— Կարծյոք։ Բայց հուսանք, որ բերդի ամրությունը չի թողնի ներս խուժելու։

— Տա՛ աստված,— խաչակնքում էին մյուսները։

Եվ չնայած այն հաստատ երկյուղին, թե կհարձակվեն անպայման, պարսիկները սակայն երեք կողմից շրջապատեցին բերդը ու մնացին անշարժ։ Տպավորությունն այն էր, թե հանգստանում են հավանաբար, որ հարձակումն սկսեն թարմացած ուժերով՝ բերդը մեկեն գրոհելու և վերցնելու համար։ Ու, զարմանալի բան,— պարսիկների անշարժությունն այժմ ավելի էր անհանգստացնում բերդի բնակիչներին, քան շարժումը։ Պարիսպների գլխից տեսնում էին, թե ի՞նչ էին անում պարսիկները. առավոտները վրաններից դուրս էին գալիս հանգիստ լվացվում, կերակուր էին եփում, ղենք էին մաքրում, պահակություն էին անում։ Իսկ նրանց ձիերը շարքով կանգնած կեր էին ուտում։ Երբեմն էլ ինչ-որ խաղեր էին խաղում այդ զինվորները կամ երեսները դարձնելով դեպի բերդը, բռունցք էին թափ տալիս։ Ի՞նչ էին ուզում, ի՞նչ էին մտադիր—դժվար էր իմանալ։

— Պաշարում են թերևս, որ մեր զորությունը չիջնի բերդից,— կարծիք հայտնեց Սահառունի Սահակ իշխանը,— և օգնության չգնա Զարեհին։

— Կամ ցանկանում են պաշարումով ստիպել անձնատուր լինելու,— տարակույս հայտնեց Գնթունի իշխանը։

Այսպիսի ենթադրություններ անում էին շատերը, գրեթե բոլոր բերդեցիները և սպասում։ Իսկ բերդապետն այժմ ծանր հոգսերի մեջ, բերդի ամենօրյա պաշտպանական աշխատանքներից զատ, ջանում էր կապ ունենալ դրսի աշխարհի հետ, իմանալու ի՞նչ է կատարվում երկրում, որտե՞ղ է գտնվում Զարեհ Ամատունին իր զորքով, ո՛ւր մնաց Մուշեղ սպարապետը՝ գալի՞ս է արդյոք և օգնություն բերո՞ւմ է, թե ոչ։ Եվ որովհետև այժմ բերդից դուրս գալ հնարավոր չէր առաջվա պես, նա բերդի ստորերկրյա ճանապարհով մեկ-երկու ճարպիկ, փորձված երիտասարդներ ուղարկեց Թշնամու զորքի թիվը, նրա շարժվելու ուղղություններն ու նպատակները պարզելու և առհասարակ եկեղի մասին ստույգ լուրեր բերելու... Ու մի քանի օր հետո եկան դրանք և հայտնեցին, թե պարսիկները գրաված են ամբողջ Աղձնիքը, Տարոնը, Տուրուբերանը մինչև Արշարունիք։ Պարզվեց նաև, որ սպարապետի օգնական Զարեհ Ամատունին կռվելով նահանջել է սահմանից և այժմ Թշնամուն դիմադրում է Արաքսի ափերին։ Սուրհանդակները պատմում էին նաև, թե նա մտադիր է, պարտվելու դեպքում, բարձրանալ Գառնի և ամրանալ նրա բերդում։

— Ահա ինչո՛ւ պաշարող պարսիկները չեն դիմում գրոհի,— բացատրեց բերդապետը Թագուհուն՝ ամենը պատմելուց հետո։— Այժմ, Թագուհի, կխնդրեի Թույլատրես ինձ՝ հարձակվել նոցա վրա, որպեսզի Թեթևացնեմ Զարեհի վիճակը։

— Արա, բերդապետ, թե՞չ անհրաժեշտ է և հնարավոր,— ասաց Թագուհին։— Սակայն ջանացիր, որ չլինեն անտեղի կորուստներ։ Ցուրաքանչյուր զինվոր ապահովություն է մեզ համար, հետևաբար թանկ...

Փառանձեմը նույնպես մտածում էր, թե ինչպես կարելի է թեթևացնել Զարեհի նահանջը, և, միաժամ մտածելով, ասաց.

— Արա նաև հետևյալը, բերդապետ. ստորերկրյա ճանապարհով, սուրհանդակի միջոցով ուղարկիր հրաման Զարեհին, որ նահանջելով գնա ոչ թե Գառնի, այլ Տայք՝ Պապին և Մուշեղին ընդառաջ և միանա նոցա։ Սա առավել ցանկալի է,

քան ամրանալ Գառնիում, ուր հազիվ թե պաշար լինի առատ...

— Հրամայել ես, թագուհի,— խոնարհում արավ բերդապետը և, ետ-ետ գնալով, ելավ դուրս։

Բերդապետը մտածում էր ստորերկրյա անցքով վարժ զինվորներ ուղարկել թշնամու թիկունքը, երբ նրանք կգրոհեն բերդի վրա. բայց վախենալով մատնել անցքը, թողեց այդ միտքը և կարգադրեց այլ բան։

Ու այդ օրվանից բերդականները, տարբեր կողմի դռներից դուրս գալով կամ պարզապես փայտե սանդուղներով պարիսպներից իջնելով, սկսեցին նետեր արձակել պաշարողների վրա այնպիսի տեղերից, որ իրենք չէին երևում, բայց նետերը հասցնում էին թշնամուն։ Պարսիկները հանկարծակի գալով՝ իրենք ևս նետեր էին արձակում, բայց... չգիտեին՝ ո՞ւր, ո՞ր կողմը, ո՞ւմ վրա։ Ասենք գիտեին, նետեր արձակողը բերդականներն են, ժայռերի մեջ կամ քարերի ու թփուտների հետև թաքնված,— ուստի և հայհոյում էին և փորձում խմբերով սարը բարձրանալ... Այդ ժամանակ արդեն հաճախանում էին քարերի ու ժայռերի հետևից եկող նետերը. և պարսիկները ետ էին դառնում՝ ճանապարհին վիրավորներ ու մեռածներ թողնելով... Վերևից բերդականները տեսնում էին, թե ինչպես են վիրավորները սողում փախչողների հետևից, բայց հաճախ մնում էին կես-ճանապարհին և անշարժանում։

Այսպես բերդի պաշտպանները ցերեկները ծածուկ հարձակվում, անհանգստացնում էին թշնամուն, գիշերները հրսկում, որ նա մութով չբարձրանա վեր։

Սա կրկնվեց մի քանի օր. սակայն պարսիկները դեռ չէի՞ն ցանկանում, թե սիրտ չէին անում բարձրանալ վեր, բերդականները տարակույսի մեջ էին։

Բայց մի առավոտ նկատեցին, որ պարսիկները արտակարգ շարժման մեջ են Արաքսի այն կողմը. վաշտեր էին կազմում և ուղարկում դեպի կամուրջը, դեպի բերդը։ Ակնհայտ էր, որ պատրաստվում են գրոհի։ Այդ տեսնելով՝ բերդապետն շտապեց թագուհուն հայտնելու, թե ի՛նչ է կատարվում։

Փառանձեմը, որ այդ ձայները առաջինն էր լսել, այժմ իր թիկնապահներով և երկու պալատական տիկնոջ հետ գտնվում էր հարավային պարսպի վրա։ Երբ սաղավարտով, զրահա-

վորված բերդապետը մոտեցավ ու գլուխ իջեցրեց՝ նա ասաց, առանց զեկույցի սպասելու։

— Տեսնում եմ, բերդապետ։ Այժմ ի՞նչ ես մտադիր։

— Ես սպասում եմ, թագուհի, որ նոքա մոտենան հոծ բազմությամբ, որպեսզի նոր միայն սկսեմ նետաձգությունը։

— Իսկ եթե մոտենան ավելի՞։

— Այնժամ... ես պարիսպների գլխին ունեմ քարակույտեր։ Իսկ ծայրահեղ դեպքում՝ իմ բերդականները կբախվեն նրանց հետ նիզակներով, եթե փորձեն մոտենալ դռներին։

— Բարի, բերդապետ,— ասաց թագուհին։— Սակայն բարի ցանկությունները միշտ էլ չեն պսակվում հաջողությամբ։ Իմացիր, բերդապետ, որ զորքի և ժողովրդի կյանքը քո ձեռքին է։ Քո թագուհին խնդրում է քեզ՝ գործ դիր հնարներդ զգուշաբար և փրկիր քեզ ապավինողներին։ Իսկ այժմ ժողովիր զորքդ, որ օրհնեմ նոցա։

Կես ժամ անց՝ բերդի հրապարակը լիքն էր արդեն հին ու նոր բնակիչներով։ Բերդապահ սաղավարտակիր ու վահանակիր զինվորները բռնել էին հրապարակի կենտրոնը. բոլորն իրար նման երիտասարդներ. նրանց շրջապատել էին քաղաքացիները, շինական տղամարդիկ ու կանայք։ Լռություն էր. դրսից լսվում էին դարձյալ թշնամու վայրենի, խժական աղաղակները և թմբուկների դոփնը։ Վայրկյանը ծանր էր։ Բոլոր հայացքները լարված էին ու բորբոք. ամենքը ձիգ էին և զգաստ, բայց միաժամանակ լուռ ու շնչազուսպ։ Սպասում էին թագուհուն։ Եվ նա եկավ, ինչպես միշտ, սևեր հագած։

Նրա երևումով լռությունն ավելի խորացավ, իսկ երբ կանգնեց աստիճանների գլխին՝ նրա կուրծքը նկատելի բարձրանում-իջնում էր, բայց հայացքի մեջ կար վճռական մի բան։ Նրա հետ աստիճանների գլուխն եկան Մուշեղ սպարապետի մայրը՝ Կատրանիդե տիկինը, Նանա իշխանուհին և իշխաններ Սահառունի Սահակը, Հավնունի Մանասսյը և Գնթունին։ Սրանք կանգնել էին թագուհուց փոքր-ինչ ետ՝ մի հարգալիր հեռավորությամբ։

Փառանձեմը, ընդհանուր մի հայացք գցելով հավաքված խայտաբղետ բազմության վրա, ճերմակ ձեռքը բարձրացրեց, և խոր լռության մեջ հնչեց նրա հուզված ձայնը.

— Բերդականներ և ժողովուրդ հայոց, ձեզ հետ խոսում է

ձեր դժբախտ թագուհին։ Դուք գիտեք, որ իշարդախն Շապուհ մտել է մեր երկիրը։ Նա կամենում է ամենքիս դարձնել իր ստրուկը, խլել մեր ազատությունը, մեր հավատը, մեր կյանքը։ Նա գալիս է մեր բերդի վրա, քաջ իմանալով, որ քանի կանգուն է Արտագերսը՝ ինքը չի կարող լինել հաղթական...

Փառանձեմը շունչ առավ մի պահ, նրա կուրծքը նորից բարձրանում-իջնում էր։

— Օ՛ն ուրեմն՝ պաշտպանեցեք ձեր բերդը, մեր բերդը, մեր տունը. խորտակեցեք Շապուհի հրոսակներին և վաստակեցեք հավիտենական փառք։ Ու եղեք անվախ։ Հարվածեցեք որքան կարող եք, և շուտով մեզ օգնության կգան Մուշեղ սպարապետը և գահաժառանգ Պապը։ Օ՛ն ուրեմն... Ձեր թագուհին օրհնում է ձեզ...

Այս խոսքերի հետ Փառանձեմը խաչակնքեց զորքին ու ժողովրդին։

— Եվ իմացեք, զավակներս, որ ձեր թագուհին միշտ ձեզ հետ է. յուրաքանչյուրիդ դիպած նետը դիպչելու է իմ սրտին, որ ամեն վայրկյան աղոթելու է ձեզ համար... Պաշտպանեցեք Արտագերսը, և դուք պաշտպանած կլինեք երկիրը հայրենի...

Փառանձեմը նորից խաչակնքեց բազմությանը և... արտասվեց։

Դա չգիտես թուլությունի՞ց էր, թե հուզումից, բայց դրանից մի շարժում, ո՛չ, ալեկոծություն անցավ զորքի և ժողովրդի մեջ։ Հուզումն ընդհանուր էր։ Եղան և՛ կանայք, և՛ տղամարդիկ, որ արտասվեցին չգիտես Փառանձեմի խոսքի ազդեցությունի՞ց, թե իրենց ծանր վիճակի գիտակցությունից։ Գուցեն արդյունքը վարակիչ է, ինչպես և ծիծաղը։

Թագուհուց հետո խոսեց բերդապետը, որ միայն հրամայեց.

— Օ՛ն, առա՛ջ... Դեպի՛ պարիսպներն ու բուրգերը...

Եվ մի քանի վայրկյան հետո բերդի ստորին—առաջին գոտու—պարիսպներն ու բուրգերը լցվեցին մարտիկներով, որոնք զինված էին նետաղեղներով, վահաններով ու պարսատիկներով։

Առաջին բանը, որ լսեցին բերդականները խժական աղմուկի հորձանք էր, որ գալիս էր սարի երեք կողմից. մարդ-

կային ահարկու գոռոցները և թմբուկի դոնչյունը լցրել էին օդն ու միջոցը անասելի ժխորով... Բերդի երեք կողմից՝ սարի ստորոտից, պարսիկները բարձրանում էին ցրիվ խմբերով, բարձրանում էին բարձրագոչ աղաղակներով և թմբուկների խլացուցիչ զարկերով։ Երևում էին զինվորներ՝ սաղավարտ դրած, վահան բռնած, ոմանք աշտեներով, ոմանք նիզակներով ու տեգերով զինված։

Բերդում պարիսպ բարձրացողներից առաջինը եղավ բերդապետը. նա ձեռքը ճակատին նայեց երեք կողմից սարը մագլցող պարսից զորքին և, արագ իջնելով, հրամայեց հարյուրապետներին.

— Պատրա՛ստ... Սակայն մինչև հրամանս՝ չարձակել և ոչ մի նետ...

Պարսիկները շարունակում էին բարձրանալ նույն աղմուկով։ Նրանք տակավին հեռու էին նետընկեց տարածությունից ավելի, և նրանք, ովքեր գալիս էին ճանապարհով, աղմկում էին ահարկու, իսկ նրանք, այսինքն՝ այն խմբերը, ովքեր բարձրանում էին սարի քարքարոտ լանջերով՝ քարերից, մացառներից, երբեմն ժայռերից բռնելով, նրանց ձայնը նվազել էր։ Իսկ բերդապահները պարիսպների ու բուրգերի գլխին լարված սպասում էին նրանց մոտենալուն. սպասում էին անձայն, նետերն աղեղների լարին դրած, շատերը մի աչքը խուփ, մեջքով բերդի աշտամների պատերին հենած։ Այնինչ զրահավորված բերդապետը շրջում էր պարսպի վրա և խրախուսում շարքով դարանած զինվորներին ու նրանց հարյուրապետներին.

— Վանեցիք ամեն երկյուղ և, թշնամու մոտենալու պահին, հրամանս լսելուն պես՝ նետահարեք անխնա...

Պարսիկների զրոհող վաշտերից առաջին մոտեցողները եղան ուղիղ ճանապարհով եկողները, և բերդապահների առաջին նետերը, սուլելով ու միմյանց առաջելով դնացին նրանց դեմ։

Ընկավ մեկ... երկու... երեք պարսիկ...

Դա ոգևորեց բերդականներին, և նրանք սաստկացրին նետաձգությունը, որը շուտով դարձավ փոխադարձ՝ հայերը վերևից, ուղիղ նշանով արձակում էին դեպի ներքև, պարսիկները՝ դեպի վեր... Բայց երկուստեք արձակվող նետերը միշտ

չէին հասնում իրենց նպատակին, մանավանդ պարսից նետերը, որ արձակում էին առանց նշանառումի։ Հայերի դիրքը նպաստավոր էր, նրանց ոչինչ չէր խանգարում եկողներին տեսնելու, ուստի և քիչ էին վիրավորվում։ Բայց ամեն նետից մարդ չէր ընկնում հարկավ, որովհետև պարսիկները զրահավոր էին, սաղավարտներ ունեին և վահաններ։ Ու թեև ընկնում էին ոմանք, բայց մյուսները շարունակում էին բարձրանալ՝ դարձյալ ադմուկով ու հայհոյանքներով, այժմ արդեն անընդհատ նետեր արձակելով։

Նույնը կատարվում էր բերդի երեք կողմում։ Եկողները գոռում էին (երևի խրախուսում էին իրար) և արձակում իրենց նետերը դեպի պարիսպները, իսկ բերդապահները նետահարում էին նրանց անձայն, միևնույն դիրքը պահած։

Աշնան նորածագ արևը առատ ճառագայթներով փայլեցնում էր թե՛ գրոհողների և թե՛ պարիսպների վրա գտնվողների զենքերն ու զրահները. հղկած պղինձն ու երկաթը կուրացուցիչ շողքեր ու ցոլքեր էին արձակում ամեն կողմից և ստեղծում ահարկու, ցասումնալի մթնոլորտ, ինչ թվում էր իրկնային պատիժ։

Երբ սկսվեց ընդհանուր նետաձգությունը, Փառանձեմը բարձրացավ վերին գետու պարսպի գլուխը՝ մի այնպիսի կետ, որ զինվորներն ամեն կողմից տեսնեն իրեն և ինքը զինվորներին։ Նրան թվում էր, թե այդ պահին ինքն իրավունք չունի ներսը մնալու և պարտավոր է լինել կռվողների հետ և խրախուսել նրանց. ուստի սնազդիստ, սև արձանի նման կանգնել էր նա անխոս և լարված նայում էր երեք կողմից եկող թշնամու զորքին։ Այդ կետից երևում էին թե՛ շրջակաները և թե՛ սարալանջերով վեր բարձրացող պարսիկները։ Բայց Փառանձեմը հեռուն չէր նայում, այլ միայն վեր բարձրացող զինավառ պարսիկներին, որ հասնելով մի գծի՝ կանգ էին առնում և նետեր արձակում դեպի պարիսպները, դեպի բերդի պաշտպանները։ Եվ երբ նկատում էր, որ բերդապահների նետերից ընկավ նրանցից մեկը-մյուսը՝ գոհունակությամբ պես մի բան էր փայլում նրա դեմքին։

— Զգո՛ւյշ, թագուհի, թշնամու նետը կարող է հասնել քեզ,— ասում էր Եղնիկ իշխանը՝ Փառանձեմի թիկունքին կանգնած։

Բայց Փառանձեմը, նրա խոսքին անուշադիր, տսես անձնամոռ վիճակում, նայում էր մերթ այս, մերթ մյուս, մերթ երրորդ կողմը և հազիվ էր զսպում իրեն, որ չխրախուսի զինվորներին, իր գոհունակությունը չհայտնի նրանց՝ հաջողակ նետաձգության համար։ Բայց դրա փոխարեն աղոթում էր մտքում։

«Տե՛ր, օգնի՛ր Աշխարհիս Հայոց... Օգնի՛ր մեր զորության և փրկի՛ր մեզ ի չարե»...

Նետաձգությունը երկուստեք շարունակվեց մինչև կեսօր, ապա, մի փոքր դադարից հետո՝ մինչև արևամուտը. հայ զինվորները պարիսպների վրա փոխարինում էին հոգնածներին, իսկ պարսիկները, անելով նույնը, համառորեն շարունակում էին նետաձգությունը մեծ բազմությամբ։ Բայց երբ արևը խոնարհվեց, նրանք ետ քաշվեցին ամեն կողմից, իրենց հետ տանելով և իրենց վիրավորներին ու սպանվածներին։ Նետաձգությունը դադարեց, բայց վտանգը մնաց նույնը։ Ամբողջ գիշեր հայ մարտիկները հսկում էին դռների առաջ և պարիսպների գլխին։ Ջքնեցին, իհարկե, և բերդի բնակիչները, բացի երեխաներից։ Ի՞նչ էր լինելու. պարսիկն այնքան շա՜տ, իրենք սակավ... Բերդապետը հանգստացնում էր բոլորին, մանավանդ թագուհուն և իշխաններին, որ ամեն ինչ կարգին է, թե տեղիք չկա երկյուղի, անհանգստության և, վերջապես, պետք է իմանան, որ իրենք գտնվում են անառիկ Արտագերսում, որ հռոմայեցին անդամ չի կարողացել առնել...

Բերդապետը թեպետև հանգստացնում էր սմենքին, բայց ինքն անհանգիստ էր ներուստ. այդ օրը ստորերկրյա անցքով եկած բանբերները հայտնել էին, թե դուրսը լսել են, որ Շապուհը հրամայել է բերդը վերցնել մինչև ձմեռ... Եվ ահա բերդապետը մտածում էր այդ մասին. եթե դա ճիշտ լիներ՝ պարսիկները ինչո՞վ կարող են վերցնել—աղմուկո՞վ, սպառնալիքո՞վ ու ահաբեկումով—չի հաջողվի։ Գուցե զինվորների գերազանց թվով՝ նույնպես չի հաջողվի։ Նրանց դիրքն անսնպաստ է, իսկ Արտագերսը անառիկ... Նրան անհանգստացնում էր այն ենթադրությունը միայն, որ պաշարումը կարող է երկարել և օգնությունը ուշանալ։

«Շապուհը կարող է կարգադրել,— մտածում էր բերդա-

պետը,— նա կարող է այդպես ցանկալ, բայց... մենք այդ կստուգենք վաղը»...

Եվ մյուս օրը, լույսը բացվելուն պես, բերդում լուր տարածվեց, ոչ միայն լուր, այլ բուրգերի վրա գտնվող պահակները հայտնեցին, թե պարսից զորքն այս անգամ մոտենում է անձայն, սողեսող, դարձյալ երեք կողմից։

Նորից բերդի բնակիչները դուրս թափվեցին խուցերից և պարիսպների գլխից սկսեցին դիտել նրանց առաջացումը։ Իրոք, միառժամ նրանք գալիս էին կուզեկուզ, երբեմն փորսող ու անձայն, որպեսզի մի փոքր աննկատելի մնալով՝ Հանկարծակիի բերեն բերդականներին. բայց երբ զգացին, որ նկատվել են, մեկեն սկսեցին հայհոյել աղմկաձայն և առաջ խոյանալ անվախ։

Այս անգամ էլ, ինչպես երեկ, կռիվն սկսվեց նետաձգությամբ։ Պարսիկները, մահն արհամարհելով, ամեն կերպ ձգտում էին մոտենալ բերդի դռներին, բայց հանդիպելով նետերի անձրևի և պարսատիկներից արձակվող քարերի կարկուտին, հետ էին դառնում կես ճանապարհից՝ ջարկված, վիրավոր, հաճախ հայհոյելով։ Բայց և այնպես չէին դադարեցնում իրենց նետերը։ Առաջ էին գալիս զրահված, սաղավարտադրած ու սպառնալից կանչերով.

— Է՛. արմենիներ, եթե կուզեք ողջ մնալ, բացե՛ք դռները, անձնատուր եղեք...

Այդ օրը կռվին մասնակցում էին դարձյալ թե բերդապահները, թե զինվորները և թե բերդը ապաստանած շատ տղամարդիկ, դրանց հետ նաև Թորգոմն ու ընկերները։ Ինչպես Արշակավանի կռվի ժամանակ, այնպես էլ այստեղ Թորգոմը, չգիտես ինչպես, ձեռք էր բերել զրահներ և սաղավարտ։ Նա ընկերների հետ գտնվում էր հարավային պարսպի վրա և անընդմեջ նետեր էր թողնում դեպի առաջացող պարսիկները. ու գոհ էր, որ իր նետերն ապարդյուն չեն անցնում. և որքան հաջողակ էր լինում արձակած նետը՝ ոգևորվում էր այնքան ավելի։ Բայց նա այդ օրը առավել ոգևորվեց, երբ բերդապետը անցնելիս ասաց.

— Տեսցե՛ս, տղա՛ս։ Պսակդ վայելես։ Զա՛րկ անվրեպ։ Պաշտպանի՛ր բերդը և նորահարսիդ...

Եվ դա խանդավառեց Թորգոմին։

Ինչպես երեկ, այնպես էլ այսօր Փառանձեմ թագուհին, վերին պարսպի նույն կետում կանգնած, դիտում էր և մտածվի կրկնում իր սովորական աղոթքը.

— Տ՛ուր, տեր, զորություն մարտիկներիս և փրկիր Աշխարհս Հայոց։

Աղոթում էր և գրեթե անշարժ, անթարթ նայում մոլեգնող նետաձգության։

Այդ օրն ևս կռիվը դադարեց երեկոն վրա հասնելուն պես։

Հետևյալ օրը առավոտից եղանակն ամպամած էր և ցուրտ. բայց և այնպես, լույսը հազիվ բացված՝ պարսիկները երևացին մեծամեծ խմբերով, և այս անգամ ոչ թե երեկվա պես անձայն, այլ նախորդ օրվա նման խժալուր աղմուկով, թմբուկների խլացուցիչ դոնչոցով, ինչ արդեն վկայում էր նրանց վճռականությունը՝ մի գրոհով վերցնել բերդը և... ավարտել պատերազմը։ Սակայն այդ օրը նույնպես նման եղավ առաջին օրվան. որքան էլ թշնամին գրոհում էր առաջ անցնելու—բերդականների նետերը, պարսատիկներից ձրգված քարերի տարափը կասեցնում էին նրանց, վիրավորելով կամ դիտապաստ գետին փռելով։ Ընկածներին, նահանջողներին փոխարինելու էին գալիս պարսիկների նոր խմբեր՝ նույն գոչյուններով և թմբուկների նույն դոնչով։ Իսկ հայերը իրենց նպաստավոր դիրքերում լարում էին իրենց և սաստկացնում թե՛ նետաձգությունը, թե՛ քարաձգությունը։

Բայց կեսօրին կռիվը դադարեց անսպասելի, կռվողների կամքից անկախ։ Ծանր գորշ ամպերով ծածկված երկնքից սկսեց մեկեն ձյուն տեղալ՝ այնպես խիտ ու մեծափաթիլ, թվում էր երկնքից ճերմակ քող է իջնում և սքողում պարսիկներին։ Ձյունը կամաց-կամաց լռեցրեց բոլոր ձայները և ընդհատեց նետաձգությունը։

Պարսիկներն իջան բերդասարի լանջերից և այլևս չկրկնեցին իրենց գրոհը։

— Ձյունը փրկեց մեզ,— ասաց Փառանձեմը շրջապատողներին, դրանց թվում և բերդապետին, որ եկել էր նրա կարգադրությունը խնդրելու, թե ի՞նչ կհրամայի անել այսուհետև։

— Ես վստահ եմ, բերդապետ, որ պարսիկը հիմա չի բարձրանա մեր բերդը։ Ասում են՝ նա ցրտից ու ձյունից վախենում է այնպես, ինչպես կրակից։ Այսուամենայնիվ,

եղիր միշտ աչալուրջ և կրկին մարդ ուղարկիր ներքնուղիով՝ լուր առնելու, թե ի՞նչ է անում պարսիկը և ի՞նչ են խոսում Պապի և Մուշեղի գալստյան մասին...

Այո, այժմ ավելի քան երբևէ Փառանձեմին անհանգստացնում էր որդու և սպարապետի ուշացումը. գիտեր արդեն, որ Մուշեղը հասել է Բյուզանդիա, բայց ուշանում էր, քանի որ բյուզանդացիների գլուխը խառն էր պատերազմով։ Ընդունել էին հարգանքով, սակայն խորհուրդ էին տվել սպասել մի փոքր. ավարտվում է պատերազմը հյուսիսային ցեղերի դեմ, որից հետո կարող են օգնել Արմենիային. և ահա երկու-երեք ամիս էր Մուշեղն սպասում էր։ Գուցեև դուրս էր եկել Բյուզանդիայից, բայց Փառանձեմը լուր չուներ ամսից ավելի, և այս հանգամանքը մտատանջում էր նրան, և նա օր ու գիշեր մի միտք էր փայփայում, տիրական մի միտք՝ կարողանա պահել բերդն ու երկիրը մինչև որդու վերադարձը։ Այժմ Փառանձեմի կյանքի միակ նպատակն այդ էր. թող գա Պապը, ինքը Հայոց Աշխարհն ու գահը հանձնի նրան, այնուհետև ինչ կուզի լինի իր հետ, միայն որդին մնա անվնաս Հայոց Աշխարհի հետ միասին... Ուրեմն պետք էր տոկալ... մինչև գան, որպեսզի, պարսիկներին վանելուց հետո, Պապը կառուցի հոր բերդը՝ հայոց բերդը... Ինչպես Արշակին, այնպես էլ Փառանձեմին թվում էր, թե մինչև չկառուցվի այդ բերդը, և իր ձեռքը չառնի մյուս բերդերը՝ Հայոց Աշխարհը չի կարող դիմագրավել աղետները և պահպանել իր գոյությունը։

Եվ ահա թեև ձմեռ էր և ճանապարհները փակ, նա օրեցօր սրտի աճող տագնապով սպասում էր լուրերի, թե ե՞րբ վերջապես կգան Պապն ու Մուշեղը։ Բոնե՞լ են արդյոք վերադարձի ճանապարհը, և որտե՞ղ կլինեն այժմ, եթե գալիս են... և բերո՞ւմ են արդյոք օգնություն... Փառանձեմը բացատրել չէր կարողանում նրանց ուշացումը, ուստի և տանջվում էր կասկածների մեջ։ Նրա պես տանջվում էր և Կատրանիդե տիկինը՝ հարսի հետ։

— Բախտ էր, թագուհիս, ձյուն տեղաց և պարսիկը հեռացավ բերդից, —ասում էր նա Փառանձեմին— Ձմեռը ժամանակ կտա, որ գահաժառանգն ու Մուշեղն գան և հոռոմ զորքի օգնությամբ փրկեն մեզ։

— Այո, իշխանուհի,— համաձայնում էր Փառանձեմը.— նրանք կգան և կփրկեն մեզ։ Մեծ է իմ հույսը։

— Հավատանք և հուսանք...

Ու երկու մայրեր սպասում էին իրենց որդիներին, սպասում էին ինչպես փրկության, նրանց հետ և բերդի ողջ զորքն ու բնակչությունը։

* * *

Զմեռն իրոք փրկեց բերդում ապաստանածներին, բայց թե որքա՞ն ժամանակով՝ ոչ ոք չէր կարող ասել։ Ոմանք կարծում էին, թե մինչև գարուն, իսկ գարնանը կարող էր լիներ նոր հարձակում... Սակայն բերդի բնակչության մեծ մասը այն կարծիքի էր, թե մինչև պարսիկները կձեռնարկեին նոր գրոհի՝ Պապն ու Մուշեղը կգային մեծ բանակով և կվանեին նրանց Հայոց Աշխարհից։ Բայց և այնպես ամենքն ուրախ էին, որ ձմեռն սկսվեց. և ուրախանում էին ամեն անգամ, երբ նորից ձյուն էր տեղում, որովհետև որքան ձյուն շատ էր գալիս և ձմեռը սաստկանում էր, պարսիկն այնքան ցած էր իջնում. այժմ վրաններում բնակվել չէին կարող, իսկ սարի ստորոտում այնքան գյուղեր ու տներ չկային, որ տեղավորեին իրենց զորքը և, ստիպված քաշվում էին հեռու շենները և այնտեղից հսկում, որ բերդականները չիջնեն-փախչեն, կամ՝ պաշար առնեն գյուղերից։

Բայց պարսիկները չգիտեին երևի, որ բերդը պաշարներ ունի և բերդականները կապ էին պահում դրսի աշխարհի հետ ստորերկրյա ճանապարհով։ Թեև մեծ դժվարությամբ, բայց և այնպես Փառանձեմն այդ ճանապարհով ապահով տեղ պահելու ուղարկեց արքունական գանձի մի մասը. այդ ճանապարհով ելումուտ էին անում նրա սուրհանդակները և լուրեր բերում դրսի աշխարհից...

Սակայն որքան էլ բերդում ապաստանողները մտածում էին, որ ձմեռը փրկեց իրենց, բայց և այնպես նեղվում էին միօրինակ փակ կյանքից և իրենց անստույգ վիճակից։ Երբ ձյունը գալիս էր բերդի գլխին և սքողում շրջապատը, բերդի նոր բնակիչներին (ոչ բերդալահներին) թվում էր, թե ճերմակ ամայության մեջ կանգնած է միայն իրենց բերդը, թե իրենք հավիտյան կտրված են աշխարհից, և աշխարհը մոռացել է

իրենց։ Այդ զգացումը խորանում էր մանավանդ այն ժամանակ, երբ մառախուղը, լեռնային թանձր մառախուղը շաբաթներով պարուրում էր բերդը, ծածկելով անգամ պարիսպներն ու բուրգերը։ Իսկ երբ երկինքը պարզվում էր, ճերմակ շրջապատն առաջացնում էր ամայության մի այնպիսի զգացում, որ թվում էր, թե աշխարհում ամեն ինչ սառել-մոռել ու մնացել է միայն բերդը։ Իսկ երբ պարզկա օրերին ծուխ էր բարձրանում մի տեղից՝ ուրախությունը համակում էր բոլորին.

— Չէ՛, շեներում դեռ մարդիկ կա՞ն. պարսիկը բոլորին չի վնասել...

Բայց այդ ուրախության հետ միասին նրանց սիրտը սողոսկում էր մի կասկած, թե դրանք գուցե հայ շինականների օջախի ծխերը չեն, այլ երկիրը խուժած պարսից զինվորներն են տեղավորվել հայ շեներում... հավանաբար, բնակիչներին կոտորելուց կամ վտարելուց հետո գրավել են նրանց տները, ուտում են նրանց պաշարը և վառում նրանց այգիների ծառերը։ Ու այս մտքերից բերդը ապաստանողներին պաշարում էր երբեմն մի այնպիսի հուսահատիչ տխրություն, որ նրանք հառաչում էին ակամա. մի՞թե այլևս չկան շեն ու շինական. մի՞թե ամեն ինչ կորավ... Ու կարոտով սպասում էին գարնան, որ կարողանան պարզել, թե իրոք ի՛նչ է մնացել Հայոց Աշխարհում...

Բերդի միօրինակ փակ կյանքը, միօրինակ հացն ու կերակուրները, միօրինակ հանդիպումները, խոսքերը, հույսերը մարդկանց հոգիները համակում էին թախիծով ու ձանձրույթով։ Կռիվը, որքան էլ ծանր ու տհաճ, այսուամենայնիվ կյանք էր, իսկ պարապությունը ամայության մեջ՝ նման էր մեռելության։

Որքան էլ երիտասարդները երբեմն դահուկներով, կամ ինչպես շինականներն էին ասում, սահուկներով դուրս էին գալիս բերդից, իհարկե բերդապետի թույլտվությամբ, և զբոսանքի իջնում մինչև սարի փեշերը, ապա վերադառնում սահուկներն առած. որքան էլ գնում էին բերդից դուրս եղած թփերը և թփանման կարճ ծառերը հանում էին արմատներով և, որպես վառելիք, տանում բերդը և անում ուրիշ այսօրինակ բաներ, այնուամենայնիվ թվում էր, թե պարապ են, և այդ

պարապությունը նրանց հոգիները լցնում էր ատելության ու վրեժի զգացմունքներով, մի զգացմունք, որը երբ համակում է մարդուն, դարձնում է նրան անհամբեր։ Նրանք հուզվում, անհամբեր էին դառնում մանավանդ, երբ բերդի պարիսպներից հաճախ նկատում էին, թե ինչպես պարսից զինվորները անասուններ էին բերում իրենց բանակատեղը և, մորթելով, ձողերից կախում խորովելու... Այդ նրա համար, որ վիշտ պատճառեն պաշարվածներին, թե ահա դուք մնացել եք քաղցած, իսկ մենք վայելում ենք ձեր ունեցածը... Խելք ունեք՝ անձնատուր եղեք... Երբեմն ձեռքով էին անում շարախիղ, թե՝ եկեք կերեք։ Իսկ հաճախ սպառնում էին՝ գետի այն կողմից բռունցք թափ տալով, կամ, պաշարվածներին ավելի տանջելու համար, կտրում էին այգիների պտղատու ծառերը, և խարույկ վառում բերդի հանդիպակաց դաշտում, Արաքսի մյուս ափին և իրենք պարում կրակի շուրջը...

Այս ամենը տեսնելով բերդում գտնվողներից մեկը կամ մյուսը բացականչում էր.

— Ախ, ե՞րբ պիտի գարունը գա։

Գարնանն սպասում էին ամենքը, և այդ սպասումը նման չէր այն սովորական սպասումին, երբ մարդ ցանկանում է աղատվել ձմռան կաշկանդումներից, տևական ցրտից, կարոտում է կանաչի, զբոսանքի և տաք օրերի։ Այստեղ բերդում գարնանն սպասում էին իբրև փրկության ու ազատության... Սպասում էին, որ գարնան հետ սպարապետն ու թագաժառանգը կգան ուժեղ մի բանակով, կվանեն պարսիկներին և կազատեն իրենց ու Աշխարհը Հայոց։

Բայց օրերն ու ամիսները գլորվում էին դանդաղ, գիշերները դեռ երկար էին, ցերեկները կարճ, հաճախ մառախլապատ։

— Ահ, երբ պիտի գարուն գա, որ Մուշեղը հասնի մեզ,— հառաչում էին հաճախ բերդի բնակիչները։

Վերջապես, օրերն սկսեցին տաքանալ, փչեցին ջերմաշունչ քամիներ, և ձյուներն սկսեցին հալվել. նախ ներքևի դաշտերում և արեգունի լանջերում հողն սկսեց սևանալ տեղ-տեղ, հետզհետե երևացին շեներ, մարդիկ, անասուններ... Բացվեցին ճանապարհները, և այդ ճանապարհների վրա երե-

վացին պարսիկները, որ խմբերով, նիզակներն արևի տակ փայլեցնելով, մի գյուղից գնում էին մյուսը։

Սակայն Մուշեղից լուր չկար տակավին։ Եղած լուրերն այն էին, թե պարսիկները բռնել են Բյուզանդիայից եկող բոլոր ճանապարհները՝ Եփրատի ափերից սկսած, որպեսզի բյուզանդացիք չգան հայերին օգնության։

Փառանձեմը ծանր ապրումների մեջ էր. այն, ինչ սպասում էր մեծ հույսերով, չիրականացավ։ Պապն ու Մուշեղը ուշացան իրենց բանակներով, և պարսիկները նորից վերսկսեցին զրոհները։ Նախ երևացին փոքրիկ խմբեր, կարծես ստուգելու համար, թե արդյոք բերդում մարդ կա՞, թե ոչ. կամ՝ որքա՞ն... Այս ստուգումը կատարվեց մի քանի անգամ, որից հետո երևացին պարսից զինված, զրահված զորքերը բերդի ստորոտներում, ու նորից սկսվեցին հին ձևի կռիվները...

Ինչպես աշնանը, այնպես էլ հիմա երկու կողմից համարյա ամբողջ օրը նետեր էին արձակում միմյանց դեմ և հայհոյում իրար, իսկ արևը մտնելիս՝ դադարում էր ամեն ինչ— պարսիկներն իջնում էին ցած՝ իրենց վրանները, բերդցիք մնում էին բերդում և պատրաստություն տեսնում վաղվա համար։

Սակայն օրերը տաքանալու հետ տաքացան և կռիվները. պարսիկները նորից աղմուկով, թմբուկով անվախ գալիս էին պարիսպների վրա, բայց հանդիպելով բերդականների միահամուռ նետաձգության ու պարսաքարերին՝ ետ էին դառնում դիակներ ու վիրավորներ թողնելով։

Շուտով սակայն պարսիկները համոզվելով, որ կռվի այդ ձևը արդյունք չի տալիս, բացի կորուստներից, փոխեցին նրա եղանակները։ Մի քանի օրվա դադարից հետո՝ նրանք հայ շինականներին քշում էին դեպի բերդը, իրենք թաքնվում նրանց հետև, որպեսզի հայերը կոտորեն հայերին։ Կամ՝ հայ շինականներին հագցնում էին պարսից զինվորների հագուստներ և նորից քշում դեպի բերդը...

Բայց մեկ-երկու օրից, բարերախտաբար, բերդականների համար պարզվեց և այդ խորամանկությունը. նրանք հասկացան իրոք, որ անզեն եկողները հայերն են՝ պարսից շորեր հագած, ու այնուհետև նետեր արձակում էին դարձյալ նրանց

ետևից եկող պարսիկների վրա, որոնք սովորաբար զինված էին լինում նետ-աղեղով, տեգերով ու սրերով։

Եվ այս միատեսակ, միօրինակ բախումները տևեցին շաբաթներ, ամիսներ՝ մի կամ մի քանի օրվա ընդմիջումներով։ Հայերը գիտեին, որ լույսը բացվելուն պես պարսիկները պիտի բարձրանան սարը, ուստի և թեթևակի զինված խմբերով դուրս էին գալիս բերդի երկու դռնից և գործադրում Հայաստանի կռվի հնագույն զենքերից մեկը. վերևից քարեր էին գլորում ներքև։ Այդ անում էին նաև այն պատճառով, որովհետև պարսիկները բարձրանում էին մեծ մասամբ կուզեկուզ կամ փորսող, իսկ պառկած մարդուն նետը չէր դիպչում, այն էլ վերևից ներքև, կամ դիպչում էր հազվադեպ։ Երկրորդ. կար ավելի լուրջ հանգամանք. բերդականներն աշխատում էին խնայել, տնտեսել նետերը, քանի որ պաշարը շատ չէր և դրսից բերել չէին կարող, ուստի և, եթե թշնամուն կարելի էր վնասել քարով, ավելորդ էր նետեր վատնել։ Ու, պետք է ասել, գլորած քարերով քիչ մարդ չէր սպանվում պարսիկներից։ Իսկ Արտագերսի դարալանջերը միայն քարեր ունեին, և հայ մարտիկները դժգոհ չէին այդ քարերից։

Պարսիկները տեսնելով իրենց ապարդյուն զոհերը՝ երբեմն, հայերին խաբելու համար, դիմում էին նոր խորամանկություններ. երկու-երեք օրով, երբեմն մի շաբաթով դադարեցնում էին գրոհները. նույնիսկ վերցնում էին պաշարումը. ստեղծելով այն երևույթը, թե հեռացան հուսահատված, որպեսզի հայերը խաբվելով՝ իջնեն բերդից, և իրենք գերեն նրանց և հանկարծակի հարձակումով խուժեն բերդը։ Բայց բերդապետը հասկանում էր խորամանկությունը, բերդի բնակիչները նույնպես դյուրությամբ չէին հավատում դրան. ստուգում էին և զգուշանում ավելի։

Ու ինչպես կյանքը բերդում, այնպես էլ կռիվները թշնամու դեմ անցնում էին միատեսակ, միօրինակ։ Ինչպես բերդապահներն իրենց գործն էին անում, այնպես էլ Փառանձեմը, կռվի պահերին, կանգնում էր բերդի վերին պարսպի գլխին՝ իր սովորական տեղը կամ բարձրանում նրա բուրգերից մեկը և դիտում մարտը։ Եվ ամեն անգամ նրա երևումը շքախմբի կանանց հետ ոգևորում էր մարտիկներին. նրանք կռվում էին ավելի կատաղի։ Երիտասարդ ռազմիկներն ասես

կամենում էին մխիթարել այդ սգավոր կնոջը և հուսադրել, թե քանի իրենք կան՝ թույլ չեն տա պարսիկը որևէ կերպ անարգի նրա՛ն, նրան, որ չէր կամեցել, ազատվելու համար, հեռանալ երկրից, այլ ապավինել էր իրենց և բերդին՝ երկիրը փրկելու հույսով։ Չինովորները նրան նայում էին ոչ իբրև թագուհու, այլ մի խիզախ կնոջ, որ իրենց հետ միասին տանջվում էր հայրենի երկիրը թշնամուց ազատելու համար։

Վերջին ամիսներին Փառանձեմը տանջված տեսք ուներ. նիհարել էր, գունատվել, բայց պահպանել էր խաժ աչքերի հուրը և խրոխտ կեցվածքը։ Ոչ ոք, անգամ մոտիկները, չգիտեին, թե ի՞նչ ծանր մտքեր ու ապրումներ է ունենում նա։ Բայց այն հանգամանքը, որ նրա սպասած օգնության հույսերը չարդարացան՝ հասկանալի էր դարձնում նրա վիշտը։

Եվ, իրոք, Փառանձեմն այժմ ծանր մտատանջության և ծանր վշտի մեջ էր. ի՞նչ եղավ, ո՞ւր մնաց Մուշեղը։ Ի՞նչ եղավ Պապը... Մի՞թե ճանապարհներն այնքան փակ են, որ երկուսով չեն կարողանում գեթ մի լուր ուղարկել իրեն։ Վատ նախազգացումները թույլ չէին տալիս նրան քնելու, և նա երբեմն զղջում էր, որ Մուշեղին ուղարկեց Բյուզանդիա... Փառանձեմը սակայն ջանում էր իր վշտերը և իր խոհերը թաքցնել ամենքից և մարդկանց երևալ հույսերով ու հավատով լի, նույնիսկ խրոխտ։ Սակայն որքան էլ ջանում էր դուրսը երևալ զվարթ ու պայծառ, այսուամենայնիվ մարդիկ նրա աչքերում նկատում էին նրա ներսը կատարված փոփոխությունները, նկատում էին, որ նա տանջվում է... Բայց չգիտեին որոշ նրա վշտի խորությունը, ինչպես չգիտեին նաև, որ ամեն անգամ ուրախ և խրոխտ երևալուց հետո, երբ քաշվում է իր օթևանը՝ նա աղոթում էր, որ երկինքը գթա և աղետները հեռացնի Հայոց Աշխարհից, որ որդին ու սպարապետը անվնաս հասնեն երկիր, որպեսզի վանեն թշնամուն և փրկություն բերեն իրենց և ժողովրդին հայոց։

— Տե՛ր, որ կաս երկնքում, տուր զորություն և լեր օգնական վանելու աղետը,— աղոթում էր նա ծնկաչոք ու բազկատարած։— Գուցե ես մի կին եմ մեղավոր ու անարժան, գթա գեթ անմեղներին ու արդարներին, որ տանջվում են այստեղ...

Եվ ահա մի օր, հոգեկան տանջանքների մի այդպիսի

պահի, բերդապետը մտավ նրա օթևանը և ուրախ դեմքով հայտնեց, թե Մուշեղն ու Պապը երկու ամիս առաջ դուրս են եկել Բյուզանդիայից, և Մուշեղն այժմ զորք է հավաքում բյուզանդական հայ նախարարներից։ Հայտնեց նաև, թե Մուշեղի և Պապի զորքին միացել են Կամսարական Սպանդարատը, Սմբատ Բագրատունին և այլ նախարարներ։

Բերդապետին այդ լուրը բերել էին նրա հեռագնաց սուրհանդակները ստորերկրյա ճանապարհով, սուրհանդակներ, որոնց նա համարում էր կորած, որովհետև գնացել էին մի երկու ամիս առաջ։

Այս լուրերն այնպիսի ուրախություն պատճառեցին Փառանձեմին, որ նա իսկույն կանչեց Կատրանիդե տիկնոջը, փարվեց նրան և լաց եղավ.

— Նրանք գալիս են, իշխանուհի։ Մուշեղն ու Պապը... Այժմ վստահ եմ, կփրկվենք... Ապրենք այնքան, որ երկիրը հանձնեմ Պապիս... որպեսզի գոնե նա՛ շինի հոր բերդը... հայոց բերդը... Տոկա՛նք, իշխանուհի, տոկա՛նք, մինչև նոցա գալը...

— Այո, թագուհիս, այո...— և վշտահար իշխանուհին նույնպես լաց եղավ ուրախությունից։

— Բայց լացի ժամանակ չէ, բերդապետ սիրելի. ուրախության օր է այսօր,— փոքր անց սթափվեց Փառանձեմը արցունքը սրբելով։— Հայտնիր անմիջապես զորքին և ժողովրդյան, որ Պապն ու Մուշեղը գալիս են մեզ օգնության։ Հայտնիր, որ սուրհանդակները բերին մեզ ուրախ լուրեր... և պարգևատրիր լրաբերներին...

Փառանձեմը գիտեր, որ այդ լուրը նույնքան պիտի ուրախացնի զորքին ու ժողովրդին, որքան և իրեն։ Նույնը հասկանում էր հարկավ և բերդապետը. ուստի և, չնայած այդ իսկ պահին բերդականները կռվում էին պարսից դեմ, բերդապետն ինքը բարձրացավ երկրորդ գոտու պարսպի գլուխը և հայտարարեց, բառերը հատ-հատ շեշտելով.

— Զինվորներ իմ քաջարծիվ. զարկեցե՛ք համարձակ։ Զարկեցե՛ք համարձակ։ Մեզ օգնության են գալիս Մուշեղ սպարապետը նոր զորքով և թագաժառանգ Պապը՝ բյուզանդական բանակով... օգնության...

Երբ լուրը հասավ կռվողներին՝ ամեն կողմից լսվեցին

ուրախության աղաղակներ. «Ապրի՛... Ապրի՛...»։ Եվ զարմանալի բան. այդ ուրախ կանչերը լսելով՝ պարսիկները կարծես շփոթվեցին. նրանք մի պահ դադարեցրին նետաձգությունը, չիմանալով ինչ պատահեց... Իսկ հայ բերդապահները նոր, եռապատկված աշխուժով վերսկսեցին նետաձգությունը շփոթված պարսիկների դեմ։

Այդ օրվանից Փառանձեմի դեմքի լարումն ու գունատությունը անցավ. նա նորից զվարթացավ, նույնիսկ պայծառացավ։ Այժմ պարսպի կամ բուրգի գլխին կանգնում էր ավելի խրոխտ և ոչ թե անխոս, ինչպես առաջ, այլ կրկնում էր երբեմն լայն պարսպի վրա շրջելով.

— Տոկացե՛ք, զավակներս, տոկացեք... Շուտով Մուշեղն ու Պապը կգան մեզ օգնության։

Բերդապետը, որ այդպիսի դեպքում հարգանքով հետևվում էր Թագուհուն, զգուշացնում էր շարունակ.

— Պարսից նետերը, Թագուհի, հասնում են պարիսպներին։ Աղաչում եմ։

Նույնը կրկնում էր Եղնիկ իշխանը՝ պատանու պես կարմրելով։

Բայց Թագուհին ամեն օր գրեթե անում էր նույնը.

— Տոկա՛նք, զավակներս, տոկա՛նք ևս մի քանի օր...

Գարնանից արդեն հազորդակցությունը կանոնավորվել էր դրսի հետ, գեսնուղիով ելումուտ անող սուրհանդակներն այժմ հնարավորություն էին ունենում ավելի շատ տեղեր լինելու և ավելի շատ լուրեր բերելու։ Եվ ահա մի օր նրանք լուր բերին, թե բերդը պաշարող պարսից զորքը այժմ ղեկավարում է Զիկ զորավարը՝ Մերուժան Արծրունու հետ միասին։

Դա, պետք է ասած, առանձին տպավորություն չթողեց բերդականների վրա, բայց երբ շաբաթներ անց, քաղի ժամանակը արդեն լսեցին, թե պարսից արքա Շապուհն ինքը գտնվում է Արտազերսի մոտ՝ դա ամենքին թվաց չարագուշակ։ Ուրեմն պարսիկները մեծ կարևորություն են տալիս բերդին, բանբերները հայտնում են, որ արքայից արքա Շապուհը զայրացել է, որ տասներեք ամիս իր զորքը չի կարողանում վերցնել բերդը, ուստի մտադիր է ինքը անձամբ ղեկավարել գրոհները բերդի դեմ։

— Անպատվություն և ամոթ,— ասել է Շապուհը իր զորավարներին,— որ չեք կարողանում հաղթել մի կնոջ...

Փառանձեմը լսելով, որ Շապուհն ինքն է ղեկավարելու կռիվը բերդի դեմ, բերդապետին և իշխաններին հրավիրեց իր մոտ։ Պարզելով դրությունը՝ թագուհին կամեցավ իմանալ, թե ի՞նչ խորհուրդ կտան այսուհետև բերդը պաշտպանելու համար։ Բերդապետը, Սահառունի և Գնթունի իշխանները կողմնակից էին շարունակելու ինքնապաշտպանությունը՝ մինչև Մուշեղը կգար օգնության, իսկ մյուս երկու իշխանը՝ Պալունի Կարենը և Հավնունին, առաջարկեցին «հաշտություն խոսել Շապուհի հետ՝ քանի շուտ է, այլապես հետևանքները կլինեն ծանր, քանզի բերդի պաշարներն սպառվում են, մարդիկ ապրում են արդեն կիսաքաղց վիճակ»...

— Լավագույնս է հաշտություն, թագուհի,— կրկնեցին նրանք։

Փառանձեմը մերժեց.

— Բնավ,— ասաց։— Ես Շապուհի երեսն անգամ չեմ ցանկանա տեսնել։ Շուտով կգա որդիս, կգա իմ սպարապետը, կգա հայրս, և մենք կհաղթենք։ Հայոց Աշխարհը պարտք է դնում վրաս՝ կռվել մինչև վերջը...

Օրեր անց նույն առաջարկով եկավ Հայր-Մարդպետը։ Եկավ նա նժույգ նստած, երկարաքղանց պարսկական թիկնոցով, երկու հայ թիկնապահի ուղեկցությամբ։ Որպեսզի բերդապահները տեսնեն եկողի ո՛վ լինելը և նետեր չարձակեն իր վրա՝ նրա թիկնապահներից մեկը բարձր բռնած բերում էր հայոց արքայական դրոշը... Եղավ մի պահ, որ մարդիկ մտածեցին, թե հայոց դրոշը կարող է լինել նոր խորամանկություն, բայց շուտով սրատես բերդապետը ճանաչեց նրան և թույլատրեց առաջ գալ։

Հայոց դրոշը հուզեց ամենքին։ Ուրեմն պարսիկները և Շապուհն ինքը չեն արհամարհում հայոց դրոշը և, հավանաբար, կարևոր մի առաջարկով է, որ նշանավոր պալատական Հայր-Մարդպետին ուղարկում են բերդ։

Հայր-Մարդպետի գալը տեսնելով՝ բերդի բնակիչները՝ կին, մարդ, երեխա, խմբվել էին պարիսպների վրա, նրա գալը համարելով բարեգուշակ մի ինչ...

Հայր-Մարդպետը, բերդը մտնելուն պես, իջավ նժույգից և անմիջապես բարձրացավ բերդի վերին գոտին՝ Թագուհուն ներկայանալու։ Փառանձեմն ընդունեց նրան իր փոքրիկ սենյակում։ Հայր-Մարդպետը ներս մտավ ծանրագին խոնարհումներով, ծաղկավեր անմազ դեմքը շուրջը դարձնելով, ասես ստուգելու համար, թե չկա՞ մեկը, որ վկա լինի իրենց զրույցին։

— Ընդունիր դեռնամած ողջույններս, Թագուհի։

— Ձգում եմ, տեր Մարդպետ, որ դու առաքված ես մեր ոխերիմ Շապուհի կողմից,— խոսեց Փառանձեմը առանց ձևականության, որևէ գոհունակություն չհայտնելով նրա գալու առթիվ։— Խոսի՛ր։ Ի՞նչ լուր, ի՞նչ առաջարկ ես բերել ինձ։

— Ես, Թագուհիս, եկել եմ խնդրելու, որ վերջ տանք արյունահեղության և հաշտության ձեռք մեկնենք իրարու։ Այս նաև Շապուհի ցանկությունն է։

— Վե՛րջ տա՞նք։ Մե՞նք, թե նոքա։

— Եվ մենք, և նոքա, Թագուհի։ Առավել շուտ՝ մենք, քանզի հաղթել չենք կարող։ Թիվ կա ավազին, թիվ չկա Շապուհի զորքին։ Եթե դու, Թագուհի, դադարեցնես կռիվը՝ Շապուհը կլինի ողորմած. այլապես՝ քարը չի թողնի քարի վրա։ Եթե մանավանդ,— շարունակեց Հայր-Մարդպետը մի աչքով, ասես գողունի նայելով Փառանձեմին,— եթե մանավանդ լինենք խոհեմ և թողնենք մեր բյուզանդասիրությունը, կազատվենք բազում չարիքներից ու աղետներից։ Այո՛, Շապուհը պատվիրել է ինձ ասել, որ եթե Թագուհին անձնատուր կլինի կամավ՝ կլինեմ կարի բարեհաճ. բանտից կարձակեմ Արշակ Թագավորին և Վասակ սպարապետին։ Խորհի՛ր, Թագուհիս. քո խոսքից է կախված Հայոց Աշխարհի փրկությունը և մեր արքայի ազատությունը։

Փառանձեմը լսում է շուրթերը սեղմած, հրացայտ աչքերը մի կետի հառած, և երբ Հայր-Մարդպետն ավարտեց՝ նա ուղիղ նայեց պալատի կառավարչի ծաղկատար դեմքին և, պատասխանի փոխարեն, հարցրեց բարկությունը զսպած.

— Իսկ ի՞նչ լուր ունես զահաժառանգից և Մուշեղ սպարապետից, տեր Մարդպետ։

— Եվ ոչ մի լուր, Թագուհիս։ Ես ոչի՞նչ չեմ լսած։

Փառանձեմը այս անգամ սևեռուն և անթարթ նայեց Հայր-Մարդպետի ոչ թե դեմքին, այլ նրա դեղնափայլ աչքերին։

— Ոչի՞նչ,— Փառանձեմը գլուխը տարուբերեց հանդիմանանքով։— Եվ դու ինչպե՞ս ես համարձակվում ինձ՝ արյունարբու Շապուհին անձնատուր լինելու առաջարկ անել։ Չգիտե՞ս միթե, որ Պապն ու Մուշեղը գալիս են բանակով և շուտով կհասնեն մեզ օգնության։

— Արդյո՞ք,— ուսերը վեր քաշեց Հայր-Մարդպետը թերահավատ։

— Կասկածո՞ւմ ես։

— Առայժմ... վստահ չեմ, թագուհի։

— Ո՞չ։ Իմացիր ուրեմն։ Շուտով որդիս, հայրս և իմ սպարապետը կգան ինձ օգնության։ Ես հավաստի և ստույգ լուր ունեմ, որ նոքա մոտենում են արդեն Կարին քաղաքին։

Հայր-Մարդպետը գլուխը թեքեց թերահավատ շարժումով։ Մարդպետի գլխի թեքումը նշանակում էր, թե նա կասկածում է Պապի գալուն, և այդ վրդովեց թագուհուն։

— Ինչպե՞ս։ Դու չե՞ս հավատում։

— Կուզեի հավատալ, թագուհի, սակայն...

—Սակայն կամենում ես ստել, տիրադավ։ Վասնզի հոգիդ ծախել ես Շապուհին։ Հիշո՞ւմ ես՝ ինձ ես խորհուրդ էիր տալիս, որ ընդունեմ Շապուհի հրավերը և գնամ բանտվեմ թագավորի հետ, այո՞։ Պնդում էիր, թե հանուն բարեկամության չպետք է մերժել Շապուհի հրավերը։ Ի՞նչ եղավ ապա, ստոր տիրադավ.. Այժմ էլ կամենում ես մատնել ինձ ոճրարար Շապուհի ձեռքը...

— Վիրավորանքը ինձ ցավ է, թագուհի. բայց ինչ լինելու է՝ պիտի լինի։ Անխուսափելին պիտի կատարվի։ Համաձայնիր հաշտության...

— Փակիր պիղծ բերանդ, անկոչ մարգարե։ Ջա՛ր է քո սիրտը և միտքդ թունոտ, կոտած հոգի։ Հեռու այստեղից և ոչ ոք թող չլսի քեզ։ Քո կերպարանքդ իսկ կարող է թունավորել իմ մարտիկների միտքը։ Գնա՛, գնա՛ հայտնիր Շապուհիդ, որ ես նորան համարում եմ խարդախ, խաբեբա և մերժում եմ բոլոր առաջարկները նորա։

Արդյոք հոր՝ Անդոք իշխանի, անզիջող ոգի՞ն էր նրա մեջ, որ չէր ուզում տեսնել պարսկասեր մեկը և յուրաքանչյուր

պարսկասերի համարում էր դավաճան ու թշնամի, ու հաճախ կրկնում էր հոր նման. «Հայրենիքին դավաճանողը արժանի չէ գթության, իսկ պարսիկին ծառայողը՝ առավել»... Թերևս այդ էր պատճառը, որ նա՝ Փառանձեմը, նախատինքներով դուրս արավ պալատի կառավարչին.

— Հեռացի՛ր իսկույն, չարի ծնունդ...

Եվ Հայր-Մարդպետը ելավ քրթմնջալով.

— Կզղջա՛ս, դուստրդ գոռոզ Անդոքի... Կզղջա՛ս, բայց արդեն կլինի ուշ։

Հայր-Մարդպետի գնալուց հետո Փառանձեմը սպասում էր, թե իր մերժումից Շապուհն անշուշտ պիտի սաստկացնի գրոհը, ուստի և հրամայեց, որ բերդապետը զորքը հավաքի ամրոցի հրապարակում։ Նա ցանկանում էր խոսել զորքի հետ. թո՛ղ ամենքն իմանան իրենց վիճակը... Ու, փոքր անց, երբ բերդապահ զորքը, նրա հետ և բերդում ապաստանած ժողովուրդը հավաքվել էր ներքին գոտու լայն հրապարակում, վերևից իջավ Փառանձեմը սովորականի պես սևահագնդերձ. ինչպես միշտ՝ նրան ուղեկցում էին մի քանի իշխաններ ու տիկիններ։ Հասնելով քարե սանդուղի վերջին աստիճաններին՝ նա կանգ առավ այդ բարձրության վրա և նայեց խռնված բազմության։ Նրա հետև կանգ առան և նրա ուղեկիցները։ Ամենքն սպասում էին, թե ի՞նչ է ասելու թագուհին։ Բայց նա իսկույն չսկսեց. մի առվայրկյան տխուր նայեց հավաքվածներին, ասես ստուգելու, թե բոլորը ներկա՞ են արդյոք, ապա ասաց հանդարտ.

— Սիրելիներ, պարսից արքան, խարդախն Շապուհ, Հայր-Մարդպետի բերանով առաջարկում է մեզ՝ հաշտություն. դա նշանակում է, որ մենք անձնատուր լինենք գայլի ողորմածությանը։ Ես որոշել եմ անձնատուր չլինել...

— Երբե՛ք, երբե՛ք,— լսվեցին բազմաթիվ ձայներ։— Դա խարեություն է, մի նոր դավ...

— Ճշմարիտ է, մեր պաշարները պակաս են. դուք ստանում եք ավելի քիչ հաց և սնունդ, այսուհետ՝ թերևս դոքա պակասեն ավելի. այսուամենայնիվ դիմագրավենք թշնամուն այնքան, մինչև սպարապետն ու թագաժառանգը հասնեն մեզ օգնության։

— Առավել լավ է՝ մնալ քաղցած, քան լինել անձնատուր,— բացականչեց մեկը՝ սուր հուզումնալի ձայնով։

Իսկ մի քանի այլ ձայներ տարբեր կողմերից.

— Դիմագրավե՛լ... կռվե՛լ մինչև վերջ...

Ձայները շատացան ու խառնվեցին իրար։ Բոլորի միջից գարձյալ ջոկվում էին երկու բառ.

«Կռվե՛լ... Դիմագրավե՛լ...»։

Երկու օր հետո իրոք սկսվեց պարսից նոր գրոհը։ Երկու կողմն էլ կռվում էին կատաղի... Պարսից կողմից գալիս էին նորանոր ուժեր, ընկածներին փոխարինում էին ուրիշները, իսկ բերդապահներին օգնում էին բերդում ապաստանած շինականները, ընկածների և վիրավորների զրահները հագած, սաղավարտներ դրած... Բայց չկար այլևս այնքան նետ, որ գործադրեն առատորեն, և ոչ իսկ պարսատիկի այնքան քար... Հավաքված բոլոր քարերը համարյա ծառայել էին իրենց նպատակին. ասենք լինեին էլ՝ այժմ մարդիկ չունեին այնքա՛ն ուժ, որ դրանք պարսատիկներով նետեին թշնամու վրա։ Թե՛ մարտիկները և թե՛ բերդում ապաստանածները՝ ամենքը սնվում էին շատ սակավ։ Պակասել էր պարենի պաշարը, որ նախապատրաստված էր միայն հինգ-վեց, ամենաշատը յոթ ամսվա համար, իսկ այժմ արդեն տասներեքերորդ ամիսն էր, և պաշարը, որքան էլ բաժանում էին փոքրիկ չափերով, սպառվելու մոտ էր։

Ամենքը գիտեին իրենց ծանր կացությունը, բայց հույսը, կյանքի այդ հզոր նեցուկը պահում էր նրանց։ Ամենքը հավատում էին, թե շուտով կգա Մուշեղը և կփրկի իրենց թշնամուց ու սովից... Եվ քանի ամիս էր ահա սպասում էին նրան, բայց նա, չգիտես ինչո՞ւ, ուշանում էր, և պաշարները պակասում էին հետզհետե։ Այժմ բերդապահներին տալիս էին օրական մի քանի բուռ բոված ցորեն կամ փոխինձ կտավատի ձեթով շաղախած։ Ավելի պակաս ստանում էին բնակիչները։

Այո, սովի ուրվականը կանգնած էր բոլորի առաջ։ Փառանձեմը և բերդապետն ու իշխանները մտածում էին, թե կռվեն որքան հնարավոր է, ապա, եթե մինչ այդ օգնություն չհասնի, այն ժամանակ կամաց-կամաց, թեթև խմբերով, կհեռա-

նան ստորերկրյա ճանապարհով, որը ամենքին թվում էր «Փրկության դուռ», ինչպես ասում էր Սահառունի Սահակ իշխանը։ Բայց... պատմենք ինչպես պետք է։

Վերջերս, Հայր-Մարդպետի գնալուց հետո, Փառանձեմը գիշերները հաճախ պառկում էր առանց հանվելու և ժամանակ առ ժամանակ դուրս էր գալիս քարե պատշգամը՝ դիտելու, թե ի՞նչ է կատարվում բերդում, նրա շուրջը, կամ երբեմն, վրան մի ծածկոց առած, իջնում էր բերդի առաջին գոտին՝ բերդապահներին ստուգելու, և երբ տեսնում էր, որ նրանք նստում են պատերի վրա, իսկ պահակները արթուն հսկում են բուրգերի գլխին, նրա սիրտը ջերմանում էր երախտագիտության զգացմունքներից. որքա՞ն պարտաճանաչ են այդ հասարակ, ռամիկ մարդիկ...

Այդ շրջագայության միջոցին բերդապահները նկատո՞ւմ էին նրան, թե ոչ, մեկը սակայն չէր մոտենում հարցնելու, թե ո՞վ է կամ ո՞ւմ է փնտրում արդյոք... Գուցեև ճանաչում էին և լռում։ Բայց ահա մի գիշեր նա հանդիպեց բերդապետին, որ նույնպես մենակ, զրահներ հագած գնում էր դեպի պարիսպները։ Հանդիպեցին քարե աստիճանների վրա, երբ թագուհին բարձրանում էր վեր, բերդապետն իջնում էր ցած։

— Թագուհի՞,— կանգ առավ բերդապետը զարմացած։

— Ես եմ, բերդապետ։ Քնել չկարողացա, [illegible] շրջելու։ Իսկ ո՞ւր ես շտապում ինքդ։

— Դիտելու և հսկելու...

Բերդապետի ձայնը բեկված էր։ Փառանձեմն այդ նկատելով հարցրեց.

— Դու անհանգիստ ես, բերդապետ։ Ի՞նչ է պատահել...

Բերդապետը հառաչեց.

— Տխուր լուր, թագուհի։

— Պատմիր,— և Փառանձեմը լարվեց լսելու։

Ու բերդապետը պատմեց մի իրոք շատ տխուր լուր. մի ժամ առաջ նրա սուրհանդակները վերադարձել էին և հայտնել, թե պարսիկները գտել են բերդի ստորերկրյա ուղին և պահակներ դրել մուտքի առաջ։

Փառանձեմի ծնկները դողացին, բայց նա չուզեց զգացնել տալ իր վախը, այլ միայն մտածեց, թե ո՞վ կարող էր

արդյոք մատնել անցքի տեղը և նրա կասկածները կանգ առան Հայր-Մարդպետի վրա։

— Վրեժխնդիր եղավ կռտածը...

Փառանձեմը միշտ մտածել էր, թե վերջին ժամին, երբ այլևս օգնություն չհասներ և դիմադրելը դառնար անկարելի, կարող էր բերդականներին ճանապարհել այդտեղից և ինքն էլ բերդապետի հետ դուրս գալ այդ անցքով և գնալ Վանանդ, ապա անցնել ապահով Տայք։ Մինչ այժմ նա այդ անել չէր ուզում, չկամենալով հեռանալ երկրի կենտրոնից, ցանկանալով որդուն և Մուշեղին սպասել բերդում, լինել զորքի հետ, որպեսզի նրանք չթերանան պաշտպանության գործում... Սակայն այժմ լսածը տակնիվեր էր անում նրա ծրագիրը. թշնամին հայտաբերե՞լ է ներքին անցքը...

— Եվ դա լիովին ստո՞ւյգ է, բերդապետ,— հարցրեց Փառանձեմը։

— Լիովին, թագուհի։

— Մենք ուրեմն կտրվեցինք դրսի աշխարհից,— գլուխը կախեց Փառանձեմը։ —Այլևս լուր չենք առնի Մուշեղից, Պապից... Բայց և անձնատուր չենք լինի,— գլուխը բարձրացրեց նա։— Պաշտպանվենք և սպասենք։ Չէ՞ նոքա հասել են արդեն Կարին... Կուզեի միայն, բերդապետ, որ անցքը փակվելու մասին չիմանա ոչ ոք։ Թող բերդում լինի հուսահատություն ու լքում։ Ազատ ես։

Սակայն բերդապետը մնաց կանգնած։ Փառանձեմը դրանից կռահեց ասես մի բան և հարցրեց.

— Ունե՞ս ինչ ասելու, բերդապետ։

— Այո, թագուհի. եթե թույլատրես. ունեմ խոնարհ մի խնդիր առ քեզ։

— Խոսի՛ր։

— Համարձակվում եմ խնդրել, թագուհի, որ հեռանաս բերդից... քանզի վտանգը վերահասս է, և մենք երկար դիմադրավել չենք կարող...— Նա լռեց մի վայրկյան և ապա շարունակեց եռանդով։— Ես վստահելի և քաջակորով մարդոց հետ քեզ կբարձրացնեմ լեռը, որտեղից նոքա քեզ կտանեն Վանանդ, ապա Տայք։

Փառանձեմը լսում էր շուրթերը սեղմած և, երբ բերդապետը վերջացրեց, ասաց.

— Ա՛յ, բերդապետ, ես կմնամ, ես ձեզ հետ կլինեմ մինչև վերջը, ես այստեղ պիտի սպասեմ իմ Պապին... ես չեմ լքի իմ զինվորներին... Եվ վերջապես, Շապուհը չի կարող տանել ինձ գերի...

Բերդապետը ոչնչամենայնիվ կամենում էր նորից ասել ինչ-որ բան, բայց Փառանձեմը քարձրացրեց իր փոքրիկ ձեռքը, որ նշանակում էր. «Այլևս ոչ մի խոսք...

Բերդապետը խոնարհում արավ և, թույլտվություն խնդրելով, հեռացավ։

Գնալով հաճախանում և սաստկանում էին պարսիկների գրոհները. նրանք շարունակ բերում էին նոր զորքեր, որոնց պետերը անվերջ հրամայում էին. «Առա՛ջ, անվախ առաջ... Այժմ նրանք հասնում էին արդեն բերդի պարիսպներին։ Բայց որքան էլ սովոր նեղում էր ու սնունդը գնալով նվազում, զինվորները և շինականները չէին դադարում կռվելուց... Անում էին, որքան ներում էին իրենց ուժերը, անում էին հանգստանալով... Պատահում էր, որ նրանք, առանց վիրավորվելու, ընկնում էին և գոլորի ընկերը ուժ չէր ունենում նրան բարձրացնելու։ Պատահում էր նեռ-աղեղ առած ելնում էին պարիսպը կամ բուրգ՝ թշնամուն նետահարելու ցանկությամբ, սակայն ընկնում էին կես-ճանապարհին... Վերցնում էին քարեր, որ հանեն պարսպի գլուխը, բայց, սանդուղք բարձրանալ չկարողանալով, ընկնում էին սատիճանների վրա... Նրանց էր հարմարում այն հին խոսքը, թե հոգին հոժար էր, մարմինը տկար... Քաղցը հյուծել էր ամենքին... Շատերը մեռնում էին անխոս, անտրտունջ...

Զրահված բերդապետը երբեմն պարիսպների վրա կարգադրություն անելիս նկատում էր զինվորների վիճակը, բայց անզոր էր օգնել մեկին կամ մյուսին։ Նա կա, թագուհու նրման, կարծել էր, թե երեք-չորս ամսում պաշարումը կվերջանա և պարսիկները ետ կքաշվեն կա՛մ պաշարումը ապարդյուն համարելով, կա՛մ դրսից եկող օգնության հետևանքով։ Բայց տասներեք ամիս էր արդեն պաշարումն ու գրոհները շարունակում էին հետզհետե սաստկացող մոլեգնությամբ, իսկ սպասված օգնությունը չկար ու չկար— Ինչո՞ւ էին ուշանում սպարապետն ու Պապը։ Մի՞թե չգիտե-

ին, որ պարսից ուժերը շատ են և նրանց գրոհները անվերջ ետ մղել հնարավոր չէր, թեկուզև բերդից։ Եթե նրանք հասել են Կարին՝ ինչո՞ւ են հապաղում... Զո՞րք են հավաքում արդյոք, թե առաջանում են պարսից հետ ճակատելով... Գուցեև կան ա՞յլ պատճառներ... Բերդապետը դժվարանում էր գուշակել և տանջվում էր տարակույսների մեջ։

Փառանձեմը նույնպես Մուշեղի և Պապի ուշացումը բացատրում էր նրանով, որ նրանք առաջանում են երևի պարսիկների հետ ծանր մարտեր մղելով, այլապես ինչո՞ւ պետք է ուշանային... «Տո՛ւր, տեր, նոցա զորություն, որ հաղթեն և հասնեն մեզ»,— աղոթում էր նա հաճախ։ Իսկ վերջին մի քանի օրը, երբ ամեն ու հիվանդությունը այնքա՛ն զոհեր էին տանում, նա ավելի էր մտածում որդու և Մուշեղի մասին. արդյոք կարողացե՞լ են կազմել զինական մեծ ուժ, որ ճակատեն պարսից զորության դեմ. արդյոք բյուզանդացիք տվե՞լ են նրանց բավականաչափ օգնական զորք, թե ստիպված են պարսից դեմ կռվել սակավ մարդկանցով... Փառանձեմը մտածում էր երկար և այնպես, որ հետո վախենում էր իր մտքերից։ Չլինի՞ Պապը հանկարծ այդ կռիվների մեջ անզգուշաբար առաջ ընկնի և փորձանք բերի իրեն. վիրավորվի կամ աստված ազատի, գերի ընկնի...

«Դա սարսափելի կլիներ,— մտածում էր Փառանձեմը։— Թո՛ղ ինձ օգնության չհասնի, միայն թե մնա անփորձ... իսկ եթե պատահի մի բան՝ դա կլինի հայ գահի, հայ պետության խորտակումը, այն, ինչ ցանկանում է Շապուհը։ Դա կլինի Հայոց Աշխարհի ամենածանր օրը»... Երբ Փառանձեմը մտածում էր իրեն մայր՝ մոռանում էր ամեն ինչ՝ թե՛ բերդը, թե՛ պարսից պաշարումը և թե՛ իրենց ինքնապաշտպանությունը։ Բայց երբ սթափվում էր և կամ լսում էր պարսից գրոհող զորքերի աղաղակները և բերդականների հայերեն խրախուսական կանչերը՝ նա իրեն համարում էր եսամոլ, թուլամորթ և անմիջապես դուրս էր վազում առանձնարանից, գնում բերդի սակավաթիվ պաշտպաններին խրախուսելու.

— Տոկացե՛ք, զավակներս, տոկացե՛ք ևս մի փոքր...

Բերդապահ զինվորները, որոնց թիվը օրեցօր նվազում էր սովից, որոնք նիհարել և հյուծվել էին սաստիկ, այնքան էլ վստահ չէին, թե օգնությունն իրոք կհասնի, և կռվում էին

մի աղոտ հույսով, թե գուցե հրաշք պատահի, գուցե պարսիկները վերցնեն պաշարումը և հեռանան մի այլ պատերազմի պատճառով...

Սակայն պարսիկները, ինչպես երևում էր, հեռանալու միտք չունեին. թվում էր՝ նրանք տեղյակ էին (կարող էին և պարզ նկատել), որ բերդի պաշտպանների թիվը նվազել է, որ բերդեցիների պաշարը սպառվում էր և բերդի ներսում սով է, ուստի և օրեցօր սաստկացնում էին իրենց հարձակումները, իսկ վերջին երկու օրը նրանք պարզապես վխտում էին բերդի պարիսպների տակ։ Բերդապետը և բերդապահները ենթադրում էին, թե նրանք անցք են որոնում պատերի մեջ կամ մի ճեղք, որ քանդեն լայնացնեն՝ ներս թափանցելու համար։ Բայց բերդականները, որքան էլ թվով քիչ, ջանադիր հետևում էին նրանց և թույլ չէին տալիս որևէ գործ անելու՝ պատ քանդելու կամ վեր մագլցելու, որի համար և նրանք բերում էին փայտե ելարաններ։ Այդպիսի փորձ փորձողներին բերդապահները զարկում էին քարերով, ոչ թե այն բռնաքարերով, որ նետում էին պարսատիկներով, այլ խոշոր քարերով, որ մեկի գլխին ընկնելիս, տապալում էր գետին, ոստ որում քար գլորողը ինքն էլ ընկնում էր ուժաթափ կամ պարսից մի նետից։

Բերդապահների դիրքը թեև հնարավորություն էր տալիս նրանց այդ անելու, բայց այնքան սակավ էին նրանք և այնպես թուլացած որ չէին կարող հասնել ամեն տեղ, ուստի և պարսիկ զինվորները հանկարծ այս-այն կողմից, վահանները գլուխների վրա բռնած, վազեվազ գալիս թաքնվում էին պատերի տակ և սկսում ինչ-որ... Սկզբում նրանք գրոհի գալիս էին միայն ցերեկը, հետո սկսեցին գալ և գիշերները, և մի առավոտ պահակները տեսան, ավելի շուտ լսեցին, որ պարսիկները ելարաններ ու ինչ-որ գործիքներ բերած, փորձում էին քանդել պարսիպները և խորտակել երկաթե դռները... Դա բերդականների մեջ հարուցեց մեծ տագնապ։ Բերդապետ Բաղասը դրահները հագին, սաղավարտը գլխին բարձրացավ պարիսպը և կարգադրեց զինվորներին՝ քարահար անել պարիսպների տակ և դարպասների մոտ գործողներին... Բայց պարսիկները հիմա այնքան շատ էին, որ նրանց ոչնչացնել կամ վանել հնարավոր չէր ոչ նետերով և

ոչ մանավանդ քարերով։ Ասենք, երբեմն վանում էին մի տեղից, սրանք գրոհում էին մի այլ տեղի վրա. մի կողմում արգելում էին քանդել պարիսպը, գնում քանդում էին մի ուրիշ կողմում...

Բաղաս բերդապետը, տեսնելով այլևս հնար չկա պաշտպանվելու, հայտնեց այդ մասին թագուհուն։

— Ես այդ նկատում եմ,— ասաց Փառանձեմը։— Դադարեցրեք դիմադրությունը, և ինչ լինելու է՝ թող լինի։ Միայն կխնդրեի, բերդապետ, որ փրկես մարդոց, եթե կարող ես, որքա՜ն կարող ես։ Փախցրու նոցա որևէ կողմի վրա։ Զրուցում էիր, որ գիշերը հնարավոր է սարը բարձրանալ և փրկվել, իջնել գետնուղիով Արաքսի ափը... Արա՝ ինչ հնարավոր է...

Ասաց Փառանձեմը և, ինչպես միշտ, սևազգեստ ու խրոխտ ելավ դուրս, բերդապետին թվաց, թե գալու է սովորական տեղում կանգնելու, բայց այս անգամ նա իջավ և կանգնեց առաջին պարսպի գլխին, այնտեղ, ուր դարպասներն էին, այն դարպասը, որ պարսիկները կամենում էին խորտակել։ Սահառունի Սահակը և մյուս իշխանները փորձեցին ետ պահել թագուհուն, լթողնել, որ գնա վտանգի առաջ, բայց Փառանձեմը չլսեց... Գնաց, և ակամա նրան հետևեցին նույն Սահառունի Սահակ իշխանը և սենեկապետ Եզնիկը։

Երբ պարսիկները նկատեցին այդ սևազգեստ կնոջն այդքան մոտ ու անզեն՝ ամենքը կանգ առան, ասես ապշած թե հմայված և ուզեցին իմանալ կարծես, թե ի՞նչ է ասելու նա։ Սակայն Փառանձեմը չխոսեց անմիջապես. միառժամ մնաց ուղիղ կանգնած, ապա անխոս նայելով պարսպի տակ և դարպասի առաջ խռնված պարսիկ զրահավորված զինվորներին, որ վայրագ նայվածքներ ունեին և մազմազոտ արևախանձ դեմքեր, նա աջը բարձրացրեց հանդարտ։

Լռություն իջավ, և այդ լռության մեջ հնչեց Փառանձեմի ձայնը.

— Պարսիկ զինվորներ, ասացեք ինձ՝ ո՞վ է ձեր մեծը։

— Պետության պաշտպան զորավար Զիկը,— պատասխանեց մի ձայն։

— Թող առաջ գա, եթե այստեղ է։

Անցավ մի փոքր ժամանակ և կարմիր նժույգի վրա, երկու հեծյալ թիկնապահներով, առաջ եկավ դեղին պղնձաձույլ սա-

զավարտով ու ամբողջովին զրահների մեջ կորած մի զորական և կանգնեց ձիգ։

Փառանձեմը վերևից նայեց նրան և, առանց դեմքի մկանը շարժելու, ասաց.

— Քեզ հետ, զորավար, խոսում է հայոց տիկինը։ Ի՞նչ ես կամենում։

— Անձնատվություն, հայոց տիկին, և բերդի հանձնում։

— Անձնատվություն... Ես անձնատուր կլինեմ, զորավար, և իմ բերդը կհանձնեմ այնժամ, եթե չեա վնասի իմ զինվորներին և եթե բերդը ապատանած մարդոց կթողնեա ազատ։ Մահը սարսափելի չէ ոչ ինձ և ոչ իմ քաջերի համար, և մենք կշարունակենք կռվել մինչև վերջին մարդը։ Բայց եթե խոստանում ես՝ ազատ արձակել ամենքին, ես անձնատուր կլինեմ միայն այս պայմանով։ Եվ դրա համար պետք է տաս ինձ երկու օր ժամանակ։

— Ես, տիկին հայոց, որքայից որքայի անունից խոստանում եմ քեզ այդ ազատությունը,— ասաց Ջիկ զորավարը, ջանալով ասպետի լեզվով խոսել հայոց թագուհու հետ։

— Եվ դադարեցնում կռիվը,— վրա բերավ թագուհին։

— Միանգամայն, հայոց տիկին...

Ջիկ զորավարի խոսքերից և խոսելու եղանակից զգացվում էր նրա տրախությունը, որ բերդի գոռոզ տիրուհուն ստիպեց վերջապես անձնատուր լինելու։ Նա մինչև իսկ ցնծություն մեջ էր թվում։ Իսկ Փառանձեմը ներուստ գոհ էր, որ երկու օր զինադադար է շահել, իսկ երկու օրում ինչե՞ր ասես չի կարող անել...

Եվ արավ. առաջին գործը եղավ այն, որ անմիջապես կանչեց բերդապետին և կարգադրեց, որ թաքցնի ու փախցնի ինչ կարող է... Ու բերդապետը իր հավատարիմներով թաքցրեց ամենից առաջ արքունական գանձից հետո մնացած այլ թանկարժեք իրեր այնպիսի տեղեր, որ միայն ինքը գիտեր; ապա ստորերկրյա ճանապարհով Արաքսի ափը ճամփեց շատ երիտասարդների, սրանք գետի խորաձորի ժայռերին քսվելով կամ պարզապես առափնյա ժայռերը բռնած, նկատվելու երկյուղը միշտ սրտերում, պիտի հեռանային պարսից պաշարող զորքի շրջանից և թաքնվեին հեռու շենքերում։ Ուրիշ երիտասարդներ և բերդականներ, մուրը կոխելուն պես, բարձրացան

Վանանդի սարը՝ պարսպի մի գազտնի անցքով, որի կողմը պաշարող պարսիկներ չկային։ Այս անցքով բերդից դուրս եկան և սարը բարձրացան նաև Թորգոմն ու իր ընկերները...

Բարձրացա՞ն... Բայց ինչպե՞ս։

Երբ տարածվեց, թե թագուհին երկու օր ժամանակ է պահանջել բերդը հանձնելու համար՝ ոչ ոք չհավատաց, թե պարսիկը հավատարիմ կմնա իր խոսքին և ազատ կթողնի բերդում ապաստանած մարդկանց... Ուստի և բերդապետից մինչև վերջին զինվորը մտածում էին, թե ինչպես անեն, որ պարսիկների ձեռքը չընկնի ո՛չ մարդ, ո՛չ թանկարժեք մի իր...

Այդ մասին էին մտածում և Թորգոմն ու իր ընկերները։ Երբ բերդապետից իմացան, թե ցանկացողը կարող է դուրս դալ Արաքսի անցքով կամ բարձրանալ սարը,— նրանք որոշեցին՝ բարձրանալ սարը այն տեղերով, որ արդեն պարզել էին ցերեկով։ Ճիշտ է, դա շատ դժվար էր, բայց ուներ այն առավելությունը, որ բարձրացողը կլիներ ապահով։

«Սակայն պետք էր բարձրանալ անձայն»,— զգուշացրել էին նրանց։ «Եթե պարսիկը ձայն լսի, մութի մեջ էլ նետեր կարձակի»...

Եվ երբ նրանք այս խոսքերից հետո խցերից դուրս եկան և նկատեցին մթնած երկինքը, ուր չէր երևում ոչ աստղ և լուսնի ոչ մի ցոլք, դա նրանք թվաց բարեգուշակ. պարսիկը բարձրացողին չէր նկատի... Սակայն բարձրանալու համար անհրաժեշտ էր գեթ մի շող... Չկա՛յին և մարդկային ձայներ. լսվում էր միայն Արաքսի միօրինակ շառաչը իր անդնդից... Բայց երբ երկու բայլ արին ճանապարհ ընկնելու՝ Թորգոմը չքացավ հանկարծ։

— Թորգո՛մը... ո՞ւր մնաց Թորգոմը,— հարցրեց Վարդանը Մինային։

— Չկա՞ միթե,— զարմացած կանգ առավ Մինան։

Սկսեցին փնտրել, կանչե՛լ... Չկար։ Հովսեփը գնաց խուցը— գուցե բա՞ն է մոռացել, ետ է դարձել վերցնելո՞ւ։ Չկար։ Ձայն տվին՝ պատասխան չեղավ... Զարմանքը համակեց ամենքին։ Մինան սկսեց լալ. այսքան դժվար ճանապարհ են գնալու... հանկարծ չկա։ Զարմանքը փոխվում էր անհանգստության, երբ ինչպես գնացել էր, այնպես էլ անսպասելի երևաց Թորգոմը։

— Բերի՛,— ասաց նա հևալով։

— Բա՞ն էիր մոռացել։

— Այո, բերի՛...

— Ի՞նչը։

— Դրոշը...

Այդ ժամանակ միայն նկատեցին, որ նրա թևի տակ մի երկար ձող կար և ձողի վրա ինչ-որ բան։

— Բերդապե՞տը տվեց։

— Ոչ. ինքս վերցրի։

— Ինչո՞ւ։

— Որ չրնկնի պարսիկի ձեռք...

Հասկացան. ու, առանց ժամանակ կորցնելու, բերդի վերին գաղտուկ անցքից ելնելով, բարձրացան սարը... Կարի՞ք կա ասելու, որ վերելքը ծանր էր, դժվար, մանավանդ կանանց համար։ Բարձրանում էին խարխափելով, գետինը շոշափելով, քարեր բռնելով, համարյա չորեքթաթ։ Հևում էին, ջանալով ձայն չհանել, շտապալ անգամ... Մի տեղ միայն Թորգոմը Մինայի ձեռքից քաշելով ասաց ձայնը խեղդված.— «Չվախնաս, հասնենք սարի գլուխը՝ փրկված ենք»... Իսկ մի այլ տեղ, երբ կանգ առան շունչ առնելու, նա ձեռքը դրեց Հուսիկի ուսին և բերանը մոտեցրեց նրա ականջին.— «Չվախնաս, եթե մինչև իսկ պարսիկ պատահի և մենք կռվենք, դու կառնես այս դրոշը և կթաքնվես մի տեղ ու... ոչ մեկին չհանձնես՝ մինչև չգա մեր զորքը հայոց...»։

— Հապա թո՞ւրս,— ասաց Հուսիկը և ցույց տվեց փաթաթած թուրը։

— Թրիդ հետ կպահես և այս դրոշը...

Ամենը կարգադրելուց հետո բերդապետը բարձրացավ Թագուհու մոտ։

Հայտնելով ինչ է արված՝ նա ասաց.

— Հերթը հիմա քոնն է, Թագուհի։ Այս գիշեր ես քեզ պետք է տանեմ Վանանդ, ապահով մի վայր։

— Ոչ, բերդապետ. դու փրկիր ում կարող ես, իսկ մենք կհեռանանք վերջինը՝ եկող գիշեր...

— Հրամայել ես, Թագուհի,— խոնարհում արավ բերդապետը։— Ուրեմն պատրաստ եղեք երկրորդ գիշերվա համար։

Եվ նա հեռացավ։ Փառանձեմը չքնեց մինչև լույս, մինչև առավոտ։

Իսկ առավոտը հազիվ բացված՝ պարսից զորավարը մի խումբ թիկնապահներով մտավ Փառանձեմի սենյակը և հայտնեց նրան, որ նա գերված է։

Փառանձեմը անխոս նայեց Զիկ զորավարին և ապա ասաց.

— Դու, զորավար, տվեցիր ինձ երկու օր ժամանակ։ Ինչո՞ւ խախտեցիր մեր պայմանը։

— Հարկադրված, հայոց տիկին։ Երկու օրը շռայլություն է։

Փառանձեմը նորից զննեց Զիկ զորավարին.

— Ես, հարկավ, քեզնից ազնվություն չէի կարող սպասել, Շապուհի զորավար։

— Այդ թողնենք, հայոց տիկին։ Ես եկել եմ հայտնելու, որ արքայից արքան սպասում է քեզ իր վրանում։ Հագիր ղեկտներդ արքայական և գնանք ներկայանալու։ Ես կսպասեմ դուրսը։

— Մնա, զորավար, և ասա ինձ. ինչո՞ւ ես կամենում, որ ես հագնվեմ իբրև թագուհի. չէ՞ որ ինձ համարում ես գերի,— և Փառանձեմը հպարտ նայեց նրան։— Ես նոր ոչինչ չեմ հագնի։ Գամ այնպես, ինչպես կամ։

— Սակայն հարմար չէ այդպես սևահանդերձ ներկայանալ արքային,— շփոթվեց զորավարը։— Նա չի հավատա, որ դու... թագուհին ես հայոց։

Փառանձեմը դառը քմծիծաղով.

— Իսկ ինչո՞ւ ես կարծում, թե ես կամենում եմ ներկայանալ քո արքային... ու զարդարվեմ դրա համար։

— Բայց դա անկարելի է, թագուհի։ Դու պետք է ներկայանաս արքայից արքային։ Նա հրամայել է, որ քեզ տանեմ մոտը։

Փառանձեմը սևեռուն նայեց պարսից զորավարին և մեկեն ոտքի ելավ։

— Կարո՞ղ ես տանել... Ես կուզեի գեթ մի անգամ հանդիպել քո արքային։

Եվ դուրս եկավ արագ։ Նրան կամեցան միանալ տիկիններ և տղամարդիկ, որոնց մեջ էին Կատրանիդե և Նանա իշ-

խանուհիները, Սահառունի, Հավնունի և Գնթունի իշխանները, բայց պարսից զորավարը ձեռքի հրամայող մի շարժումով կանգնեցրեց նրանց.

— Դուք, իբրև գերի, պիտի մնաք այստեղ ցնոր կարգադրություն...

Ու բոլորը կանգ առան, բացի Արշակ թագավորի սենեկապետ Եղնիկից, որ զատվեց իշխանների խմբից և հեռվից հետևեց թագուհուն։

Փառանձեմը բերդից իջավ Զիկ զորավարի հետ, պարսից սպաներով շրջապատված։ Նրան տանում էին դեպի դաշտը, ուր երևում էին պարսից զորքեր ու վրաններ և դրանցից առանձնացած մի մեծ վրան՝ գլխին առյուծանիշ պարսից դրոշը։ Այդ վրանի շուրջը, մանավանդ առջևը, կանգնած էին տեգավոր զինվորներ ու սրավոր սպաներ։ Ճանապարհին ոչ ոք չէր խոսում, սակայն, երբ մոտենում էին այդ մեծ վրանին, զորավարն ասաց.

— Ահա և արքայից արքայի վրանը։

Փառանձեմի շնչառությունը արագացավ և նա աչքերը փակեց ակամա. ուրեմն ինքը պիտի տեսնի ատելի Շապուհին, այն մարդուն, որ այնքան աղետ ու ավեր բերեց հայոց...

Մինչ Փառանձեմին խնամքով շրջապատած, կմոտեցնեին Շապուհի վրանին—պարսից արքան ինքը դուրս եկավ՝ ոսկի և արծաթ թելերով բանված թիկնոցը վրան, գույնզգույն քարերով զարդարուն թագը գլխին և ոսկեգլուխ ու երկար մի գավազան ձեռքին։ Նրա դեմքի մաշկը նման էր հարած և ապա արևի տակ չորացած կաշվի, ուր ֆնճիռներն ակոսներ էին գծել ամեն ուղղությամբ և խորացել ու անշարժացել։ Երբ հայոց սեպուհ թագուհուն մոտեցրին ու կանգնեցրին նրա առաջ, Շապուհը չարախինդ ու ինքնագոհ նայեց հայոց թագուհուն, ապա զայրացած՝ Արտագերսին, որից վեր, շատ վեր այդ պահին, հայոց բարձր լեռներն ի վեր բարձրանում էին գիշերը բերդից դուրս եկած հայ զինվորների ու շինականների խմբերը։

Նրանք տանում էին հայոց դրոշը...

Շապուհի հետ այն կողմը նայեցին նրա շքախմբի մարդիկ ու զորականները։ Բարձրացող արևի ճառագայթներից

հեռացող զինվորների զենքերը հուրհրատում էին, իսկ դրոշը փողփողում էր լեռնային հովից։

Շապուհի կնճռապատ, կուչ եկած աչքերը կայծեցին չարախնդությամբ։

— Անգգամ կին,— լսվեց կռինչի նման մի ձայն, Շապուհի ձայնը։— Ազատե՛լ ես... Ես նրանց ևս կտանեմ գերի...

Այս սպառնալիքով նա առաջ եկավ մռայլված.

— Չկամեցար գալ Տիգրոն պատվով, ահա եկար որպես գերի՛ և ստրո՛ւկ։

— Գերի՛ և ստրո՛ւկ,— Փառանձեմը գլուխը բարձրացրեց թափով։— Հայոց թագուհին երբեք չի լինի ստրուկ, մանավանդ Անդոք իշխանի դուստրը։

Անդոք իշխանի անունը ծամածռեց Շապուհի անշարժ դեմքը։

— Անդո՛ք,— արտասանեց Շապուհն այնպես, թվաց, թե մոնչաց։— Քո և այդ պիղծ հորդ արարքների համար այժմ կհատուցես ինքդ. անառա՛կ...

Այս խոսքերի վրա կատարվեց անսպասելի մի բան. շքեղապատողները չիմացան ինչպես հայոց ընկճված թագուհին ցատկեց հանկարծ, ինչպես վիրավոր հովազն է ցատկում, և Շապուհի դեմքին շառաչեց մի ապտակ.

— Ա՛ռ, լիրբդ զքեզ և խաբեբա,— լսվեց Փառանձեմի ձայնը։— Կոչվում ես արքա և չես կարող վայելուչ խոսել մի կնոջ հետ։ Իմացի՛ր, որ քեզ ապտակում է քո ատելի Անդոք իշխանի դուստրը...

Եվ այս խոսքերի հետ նա թքեց Շապուհի երեսին։

Այդ հանդգնությունը անակնկալ էր այնքան, որ Շապուհն առաջին ակնթարթին շփոթվեց, ձեռն ակամա տարավ երեսը և ապա գոռաց կատարվածից հանկարծակի եկած զորավարներին.

— Ցի՛ց հանել անառակին... Ցի՛ց հանել...

Նրա զրահավոր, սուսերակիր թիկնապահները վրա թափվեցին ամեն կողմից և բռնեցին հայոց թագուհու ձեռքերը։ Ու այդպես բռնած-կաշկանդած հեռացրին նրան իրենց արքայից ու տարան...

Մի փոքր տարածություն գնալով՝ Փառանձեմը սթափվեց և ասաց իրեն բռնողներին.

— Թողեք ինձ։ Ես կարող եմ քայլել առանց ձեր օգնությյան։

Նրա ձայնը դեռ հուզումնալի էր և խրոխտ, և դա կարծես ազդեց։ Շապուհի թիկնապահ սպաները թողին նրան, և նա դրանց հսկողությամբ քայլեց քարքարոտ ճանապարհով։ Այդ ժամանակ Եզնիկ իշխանը, որ հեռվանց ակնդետ նայում էր, թե ո՞ւր են տանում թագուհուն, զգուշորեն հետևեց սարալանջով։

Ոլոր կեռմաններով լեռնային ուղին իջնում էր դեպի Արաքսը։ Պարսիկները հայոց թագուհուն անարգելու համար տանում էին նրան ոտքով և դիտմամբ արագ, որ տանջեն։ Փոքր անց՝ նրանց ճանապարհն արդեն գնում էր անդնդահուն գետի եզերքով։ Փառանձեմը հևում էր և շուտ-շուտ կանգ առնում՝ շունչ առնելու։ Եվ մի տեղ էլ, երբ նա կանգ առավ, շունչ քաշեց ու ասաց.

— Պարսից սպաներ, իմ զորավարը գերեց ձեր արքայի կանանց և ազատ վերադարձրեց Տիզբոն։ Ես ձեզանից այդպիսի բան չեմ խնդրում. բայց թույլ տվեք մահից առաջ աղոթել այստեղ։

— Աղոթի՛ր,— համաձայնեց սպաներից մեկը, որ ինքն ևս հոգնած լինելով ուզում էր հանգստանալ։

Եվ Փառանձեմն անմիջապես ծունկի եկավ՝ երեսը դեպի անդունդը։

Պարսից սպաները մնացին նրա երկու կողմը, բայց երեսները դարձրին, որ չխանգարեն։ Փառանձեմն աղոթում էր ինչոր խոսքեր մրմնջալով, բայց մեկեն նա ելավ, թափ առավ և... պարսիկները միայն լսեցին.

— Հայոց թագուհին ձեզ չի լինի գերի...

Սպաները զարմացած ետ նայեցին նույն ակնթարթին և տեսան, թե ինչպես գերի թագուհին թևերը պարզած՝ մի վիթխարի սև թռչունի նման գահավիժեց անդունդը։

* * *

Իսկ ո՞ւր մնացին սպարապետն ու թագաժառանգը...

Բերդի անկումից և Փառանձեմի նահատակությունից երեք օր հետո Արշարունիք մտան հայոց զորքերը, որոնց առաջնոր-

դում էին Մուշեղ սպարապետը և թագաժառանգ Պապը։ Թեթև ընդհարումից հետո պարսից բանակը խուճապահար հեռացավ Արտագերսից, առանց կռվի բռնվելու։

Իսկ ի՞նչ եղավ հայոց բերդը։

Պարսիկները նահանջի ճանապարհին իրենց ողջ կատաղությունը թափեցին Արշակավանի վրա և ավերեցին այն հիմնահատակ։

Եվ այդ օրվանից հայոց բերդը մնաց անավարտ...

ՎԵՐՋ

Ստ. Զորյանի երկերի տասներկուհատորյակի յոթերորդ հատորում զետեղված է հեղինակի պատմական եռապատումի առաջին գիրքը՝ «Հայոց բերդը» վեպը։

ՀԱՅՈՑ ԲԵՐԴԸ

Գրել է 1949—1954 թթ.։ Հեղինակը ինքը չի նշել այս վեպի գրության թվականը. սակայն ըստ հավաստի տվյալների վեպը գրվել է նշված տարիներին։ Սակայն մինչև հրատարակության հանձնելը (1959 թ.) գրողը շարունակել է աշխատանքը երկի վրա։

Վեպը առաջին ձեռագրերում կոչվել է «Փառանձեմ»։ Թե երբ է գրողը մտահղացել այդ վեպը, սուույգ ասել դժվար է։ Աշխատանքի ընթացքում գրողը այդ վեպի սկզբնական կառուցվածքի մեջ մի քանի փոփոխություններ է կատարում, և վեպը վերանվանում է՝ «Հայոց բերդը»։

Առաջին անգամ վեպը հրատարակվել է. Երևան, Հայպետհրատ, 1959 թ.։ Այնուհետև՝ գրողի տասհատորյակ, հատոր VI, 1962 թ.։ Վեպը արտատպվել է սփյուռքահայ մի քանի պարբերականներում։

«Հայոց բերդի» վերջին հրատարակության մեջ (տասհատորյակ հ. VI) Ստ. Զորյանը արել է մի շարք շտկումներ։ Ներկա հրատարակությունը լույս է տեսնում այդ ուղղումներով։

Պատմական թեմատիկան Ստ. Զորյանին հետաքրքրել է 20-ական թվերի սկզբներից, և այդ ժամանակ նա գրել է իր «Հռոմեական» շարքը[1]։

Ստ. Զորյանը, «Ինքնակենսագրական նոթերում» խոսելով հայոց պատմության թեմաներով իր երկերի մասին, գրում է. «Իմ հետաքրքրությունը և իմ սերը դեպի մեր պատմությունը ինձ մղեց դեպի պատմական

---

[1] *Տե՛ս սույն հրկ. ժող., հ III, էջ 5, 570։*

թեմատիկան... Ինձ միշտ դարմացրել և հիացրել են այն հերոսական ջանքերը, որ գործադրել են մեր պապերը՝ երկիրն ու ժողովուրդը օտար նվաճումից ազատ պահելու»[1]։

Հայ ժողովրդի պատմության նկատմամբ գրողի հետաքրքրության մասին են ասում նաև նրա մի քանի հոդվածները՝ «Մատենադարանը», «Հոհեր մեր էպոսի մասին» և այլն։

Ստ. Զորյանը իր նոթերում գրում է. «Պատմության մեջ ես գտում, լսում եմ ժողովրդի ուրախության և տխրության արձագանքը. և հաճախ հոգիս համակվում է այդ տրամադրություններով, ու ես կարծես փոխադրվում եմ պատմական այս-այն միջավայրը։ Եվ ամեն ինչ ասես կենդանանում է իմ առաջ»[2]։

Գրողի հայոց պատմության նյութով առաջին երկը «Սմբատ Բագրատունի»[3] ծավալուն պատմվածքն է, որի առաջին տարբերակը լույս տեսավ 1940 թ.։

Այնուհետև, 1944 թ. հրատարակվում է Ստ. Զորյանի «Պապ Թաղավորը»[4], որը գրողի առաջին պատմական վեպն է։

1949 թ. Ստ. Զորյանը սկսում է գրել «Հայոց բնքդը», նյութ վերցնելով «Պապ Թագավոր» վեպում պատկերված ժամանակաշրջանին նախորդող տասնամյակների պատմական անցքերից։

1952 թ. դրողը նախանշումներ է անում իր երրորդ պատմավեպի՝ «Վարազդատի»[5] համար, այս անգամ նյութ առնելով Պապ Թագավորի ժամանակաշրջանին հաջորդող պատմական իրադարձություններից։ Վեպը ավարտվեց 1965 թ. և լույս տեսավ 1967 թ.։

Այսպիսով Ստ. Զորյանի երեք պատմավեպերը՝ «Հայոց բնքդը», «Պապ Թագավորը», «Վարազդատը» ժամանակագրորեն շարունակում են իրար և կազմում են եռապատում, որի նյութը Հայաստանի IV դարի երկրորդ կեսի իրադարձություններն են։ Հեղինակը մտադիր է եղել եռապատումին ևս տալ «Հայոց բնքդը» խորագիրը։

«Վարազդատ» վեպը ավարտելուց հետո Ստ. Զորյանը 1965 թ. մի դրույցի ժամանակ ասել է, որ իրեն այժմ զբաղեցնում է «Վարազդատ» վեպում նկարագրված ժամանակների հաջորդ տարիների իրադարձությունները, Մեսրոպ Մաշտոցի գործը՝ հայոց գրերի գյուտը ու նրա նշանակությունը, և հավանաբար իր հաջորդ երկը լինի այդ թեմայով։

Ի տարբերություն Ստ. Զորյանի երկերի սույն տասներկուհատորյակի մյուս երկերի ծանոթագրությունների, ներկա հատորում զետեղված «Հայոց բնքդի» ծանոթագրությունները կազմված են «Պապ Թագավորի» հեղինակային ծանոթագրությունների սկզբունքով, եռապատումի ծանոթագրություններում միօրինակություն պահելու նպատակով։ Բացատրությունները

---

[1] Սույն երկ. ժող. հ. I, էջ 23։
[2] » » » հ. X։
[3] » » » հ. հ. IX։
[4] » » » հ. VIII։
[5] » » » հ. IX։

տրվում են ոչ թե ըստ էջերի, այլ այբբենական կարգով, առանց էջերը նշելու։

Ծանոթագրվող այն անունները, երևույթներն ու դեպքերը, որոնք ընդհանուր են «Պապ թագավորի» և «Հայոց բերդի» համար, վերցված են «Պապ թագավորի» հեղինակային ծանոթագրություններից։ Դրանք նշվում են աստղանիշով։

«Հայոց բերդի» սույն ծանոթագրությունները (ինչպես «Պապ թագավորի» նախորդ հրատարակությունների ծանոթագրությունները) խմբագրել է Հայկ. ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի ակադեմիկոս Սուրեն Երեմյանը։

Ազատ (Գառնի) — գետ այժմյան Աբովյանի և Արտաշատի շրջաններում, Արաքսի ձախ վտակը։ Կազմավորվում է Գողթ և Ոսկեչուր գետերի միախառնումից։

Աղթամար — կղզի Վանա լճի հարավ-արևելյան մասում։ Բարձրությունը՝ 1662—1912 մմ։ Տարածությունը՝ մոտ 0,7 կմ2, հեռավորությունը ամենամոտ ցամաքից 3—3,5 կմ։

Ալիովիտ — գավառ Մեծ Հայքի Տուրուբերան նահանգում, Վանա լճի հյուսիսային ափին։ Գավառի անունով լիճը կոչվել է նաև «Աղի լիճ»։ Այստեղ էին բնակվում Արշակունի սեպուհները. այս պատճառով գավառը կոչվել է «Սեպուրական» կամ «Վասպուրական» (Վասպուրական անունը ավելի ուշ տարածվել է ամբողջ նահանգի վրա)։ Արշակունի սեպուհներին էր հատկացված նաև Հաշտյանք և Առբերանի գավառները։

* Աղձնիք — պատմական Հայաստանի 15 նահանգներից մեկը, որ կառավարվում էր բդեշխի միջոցով։ Կոչվում էր նաև Արձն, իսկ օտարազգի մատենագիրներից՝ Արզանեն, երբեմն էլ հայերը կոչել են «կողմն Ասորեստանի», Ասորեստանին սահմանակից լինելու համար։ Ուներ տասը գավառ, որոնք համապատասխանում են այժմյան Սասուն, Սղերդ, Բաղեշ և այլ վիճակներին։ Բդեշխանիստն էր Արզան (այժմ Խարզան քաղաք)։

* Այրարատ — Հին Հայաստանի կենտրոնական նահանգներից մեծագույնը։ Արշակունիների ժամանակ Այրարատ հասկացվում էր Երասխի հովիտը (Այրարատյան դաշտ), Ախուրյան գետախառնուրդից սկսած մինչև Արփա գետը և Արագածից մինչև Մասիսները և Հայկական պարը։ Հայկական թագավորության կենտրոնավայրը։ Այստեղ են եղել հայոց իրար փոխարինող մայրաքաղաքները՝ Արմավիր, Արտաշատ, Վաղարշապատ, Դվին և այժմ Երևան։

Անգեղ տուն — գավառ և նախարարություն Մեծ Հայքի Աղձնիք նահանգում, այժմ Դիարբեքիր վիլայեթի Ակլ կամ էգիլ գավառի տեղում։ Կենտրոնն էր Անգղ բերդաքաղաքը, որի ավերակները գտնվում են Դիարբեքիրից հյուսիս, Տիգրիսի վերին հոսանքի աջ ափին։

Աշտիշատի ժողով — Աշտիշատ՝ ավան Մեծ Հայքի Տարոն նահանգում, Արածանի գետի աջ ափին։ Այստեղ 356 թ. կայացել է կանոնադիր ժողով. Ներսես Ա կաթողիկոսի նախաձեռնությամբ, եպիսկոպոսների և ավագ իշխանների մասնակցությամբ։ Ժողովը ընդունել է կանոնական որոշումներ։ Երկրում տարբեր խավերի միջև լարված հարաբերությունները մեղմելու նպատակով ժողովը իշխողներից պահանջում էր չափավորել աշխատավոր խավերի վրա դրվող հարկը, իսկ ծառաներին պատվիրում էր հնազանդ լինել տերերին։ Ժողովը արգելում է հեթանոսական որոշ սովորույթներ՝ ազգականների ամուսնությունը, բազմակնությունը և այլն։

Ապահունի — հայ նախարարական տոհմ Ապահունիք գավառում, որը գտնվում էր Մեծ Հայքի Տուրուբերան նահանգում։ Տարածվում էր Բագրեվանդ գավառից հարավ, Արածանի գետի վերին ավազանում, Մանազկերտ քաղաքից արևելք։

Առբերանի — գավառ Մեծ Հայքի Վասպուրական նահանգում, Վանա լճի հյուսիս-արևելյան կողմում։ Առբերանի գավառը Աղիովիտ և Հաշտյանք գավառների հետ հատկացվել են Արշակունի տոհմի սեպուհներին, բացի թագաժառանգից, որ մնում էր արքունի ոստանում։

* **Արագածոտն** — գավառ Այրարատ նահանգում. տարածվում էր Արագած լեռան հարավային և արևելյան փեշերին։ Դրա մեջ էին մտնում Թալին, Աշնակ, Օշական, Բյուրական, Աշտարակ և այլ բնակավայրերը։

* **Արաքս** կամ **Երասխ** — Հայաստանի մեծ գետերից մեկը, որ սկիզբ է առնում Կարինից հարավ-արևելք գտնվող Բյուրակնյան (Բին-գյոլ) լեռներից։

* **Արծրունի** — հնագույն նախարարական նշանավոր տոհմերից մեկը Հայաստանում։ Վասպուրականի մեծ մասը պատկանում էր այդ տոհմին, որ օտար նվաճողների ձեռնտվությամբ միշտ ձգտում էր թագավորության, որին և հասավ մասամբ։ 908 թվականին իշխան Գագիկ Արծրունին ճարպկությամբ և քաղաքական ոչ պատվաբեր խաղով հիմք դրեց Վասպուրականի հայկական թագավորության՝ Վան քաղաքում։ Արաբները, ապա Բյուզանդիան, հայոց ուժերը չլատելու համար աջակցում էին նրան։ Բայց այդ թագավորությունը երկար չտևեց։ 1021 թ. Սենեքերիմ Արծրունի թագավորն ստիպված եղավ թողնել իր երկիրը Բյուզանդիային և տեղափոխվել Փոքր Հայք, Սեբաստիան դարձնելով իր մայրաքաղաքը։

* **Արծրունի Մերուժան** — Արծրունի տոհմի նախարարը։ Ապստամբեց Արշակ Բ. թագավորի դեմ, չդանկանալով ենթարկվել նրան, որ ձգտում էր թուլացնել նախարարների իշխանությունը և դրանց բոլորին ենթարկել կենտրոնական իշխանության։ Նախարարական մի քանի մեծ տներ դեմ կանգնեցին թագավորին, կռվեցին, ընկան, բայց Մերուժանը փախավ-գնաց պարսից արքունիք և ուրացավ անգամ քրիստոնեությունը ու, պարսից

բանակի գլուխ անցած, եկավ իր երկրի վրա. ավերեց շատ քաղաքներ ու աշխատեց քրիստոնեությունը վերացնել Հայաստանից՝ հայ հոգևորականներին աքսորելով, եկեղեցիներում ատրուշաններ կանգնելով և քրիստոնեական գրքերը վառելով։ Զգում էր Շապուհի ձեռնտվությամբ դառնալ թագավոր։ Սպանվեց Զիրավի ճակատամարտում՝ Սմբատ Բագրատունու ձեռքով։

Արմավիր — Մեծ Հայքի թագավորության հնագույն մայրաքաղաքն։ Ուրարտական ժամանակաշրջանում կոչվել է Արգիշտիխինիլի։ Այժմ գյուղ նույն անունով, Հեկտեմբերյանի շրջանում։

* **Արմենիա** — Թե՛ հնում, թե՛ այժմ տարբեր ազգերը այս անունն են տալիս Հայաստանին։

* **Արշակ Բ.** — հայոց թագավոր (345—367 թթ.)։ Արշակունի դինաստիայից. ձգտել է ստեղծել կենտրոնական ուժեղ իշխանություն և նախարարներին ենթարկել իրեն։ Այդ նպատակով էլ հիմնում է Արշակավան ազատ քաղաքը, որտեղ կարող էին ապրել անգամ հանցագործները, նախարարների մոտից փախչողները։ Դժգոհ նախարարները փախան Պարսկաստան, լավ համարելով ենթարկվել Շապուհին, քան իրենց արքային, որ ձգտում է թուլացնել նրանց իշխանությունը։ Նախարարների ամբաստանությամբ՝ Շապուհը խաբեությամբ կանչեց Արշակին և բանտարկեց Անհուշ բերդում, որ և նա անձնասպան եղավ։

* **Արշակավան** — ազատ քաղաք Այրարատ նահանգի Կոգովիտ գավառում. հիմնեց Արշակ Բ. նախարարների իշխանությունը թուլացնելու համար, արտոնություններ տալով այստեղ ապրողներին. նախարարներից փախչող հպատակներին։ Ազատ քաղաքը փախչողների թիվն ըստ երևույթին շատ մեծ էր և դա վնասում էր նախարարներին, այդ պատճառով և արյունահեղ կռիվներ ծագեցին թագավորի և նախարարների միջև, որոնք իրենց զորքերով հարձակվեցին քաղաքի վրա՝ կոտորեցին մոտ 20 հազար բնակիչ և քաղաքը կործանեցին հիմնահատակ։

* **Արշակունի** — թագավորական դինաստիա Հայաստանում, Պարթև Արշակունիների մի ճյուղը։ Մեր թվ. 64 թ. հաստատվեցին Հայաստանում, հանձին Տրդատ I-ի։

Արշակունիների, ինչպես և Արտաշեսյան դինաստիայի հայկական պետությունը պաշտոնապես կոչվել է Մեծ Հայք։ Այն ընդգրկել է Հայկական լեռնաշխարհի ամբողջ տարածքը։ Մեծ Հայքի թագավորության սկիզբը դրեց Արտաշես Ա-ը (189—160 թթ. մ.թ.ա.)։ Թագավորությունը միջազգային ճանաչում ունեցավ 65 թ. մ.թ.ա.։ Մեծ Հայքի թագավորությունը 385 թ. բաժանվեց Սասանյան Իրանի և Բյուզանդիայի միջև։

Արշակունիների իշխանությունը վերացավ 428 թ., այդ տան վերջին՝ Արտաշիր (Արտաշես) թագավորի, որից հետո Հայաստանն ընկավ Պարսկաստանի, Բյուզանդիայի և ապա՝ արաբների իշխանության տակ։

Արտաշեսյան և Արշակունի դինաստիաների թագավորները կոչվում էին Մեծ թագավոր Մեծ Հայքի կամ Մեծ արքա Մեծ Հայքի։

• **Արշարունիք** — Այրարատ նահանգի գավառներից մեկը, որ բռնում էր Երասխաձորի ձախ մասը (այժմյան Կաղզվանից հյուսիս) և պատկանում էր Կամսարական նախարարներին։ Այս գավառի մեջ էր գտնվում նրանց ոստանը՝ Երվանդաշատ քաղաքը։ Այս գավառում հայտնի էին նաև Երվանդակերտ, Արտագերս ու Կապույտ բերդերը։

• **Արտագերս** — նշանավոր ամրագույն բերդ։ Պատկանում էր Կամսարական նախարարներին։ Մեր թվարկ. 3 թվին հռոմայեցիք պաշարեցին այս բերդը և չկարողացան վերցնել։ Պաշարման ժամանակ վիրավորվեց օգոստոս կայսեր թոռ Գայոս Կեսարը և մեռավ։ IV դարում, Շապուհի արշավանքի միջոցին, Փառանձեմ թագուհին արքայական գանձը և 17 հազար այր ու կին վերցրած ամրացավ այս բերդում և 13 ամիս կռվեց պարսից դեմ։ Բայց սովը և հիվանդությունները ընկճեցին բերդականներին, և բերդն ընկավ պարսից ձեռքը։

Արտաշատ — Մեծ Հայքի թագավորության մայրաքաղաք։ Գտնվել է Մեծ Հայքի Այրարատ նահանգի Ոստան Հայոց գավառում (այժմյան Արտաշատ շրջկենտրոնից 10 կմ հարավ-արևմուտք)։ Քաղաքի արվարձաններում է եղել Խոր-Վիրապ վանքը։

• **Բագրատունիք** — հնագույն նախարարական տոհմերից մեկը, որ Արշակունի թագավորների օրով (64—428 թթ.) խոշոր դեր էին խաղում արքունիքում։ Նրանք շնորհված էր թագավորների գլխին (դահ բարձրանալիս) թագ դնելու իրավունք, և այդ պատճառով նրանք կոչվում էին «թագադիր ասպետներ»։ Բագրատունիները եղել են և թագավորի առաջին խորհրդականները։ Գահնամակում նախարարական տոհմերի մեջ նրանք բռնում են երկրորդ տեղը։ Արշակունիների իշխանության անկումից հետո (428 թ.), երբ Հայաստանն ընկավ նախ պարսից, ապա՝ արաբների իշխանության ներքո, Բագրատունիները շորս դարից ավելի, անընդհատ, մեծ գոհեր տալով, ձգտում էին վերականգնել Հայաստանի ինքնուրույնությունը, ձգտում էին թագավորական իշխանության, որը և, վերջապես, ձեռք բերին IX դարի կեսին։ Մի փոքր ուշ նրանց մի ճյուղը թագավորեց և Վրաստանում։

• **Բագրևանդ** — Այրարատ նահանգի հարավային գավառներից մեկը, ամենից ընդարձակը, որին համապատասխանում է այժմյան Ալաշկերտի հովիտը։ Բաժանված է երկու դաշտագետիններից— արևելյանը՝ Ձիրավի դաշտ, որի միջով հոսում է Արածանին։ Բագրևանդը հաճախ է հիշվում հայոց պատմության մեջ, որովհետև եղել է քաղաքական և պատմական շատ դեպքերի թատերաբեմ։

Բարգոդյան լեռներ (Բարգազի լեռներ) — Հայկական պաթ լեռնաշղթայի ճյուղ։ Սկսվում է Հայկական պաթի Սինահ գագաթից, ձգվում է

հյուսիս-արևելք և վերջանում Սուրմալուի գավառում (հնում՝ Ծակատք գավառ), Կողբ ավանի մոտ Բարդող (Թաքյալթու) կոնաձև գագաթով։

• Բասեն — Այրարատյան նահանգի ընդարձակ գավառներից մեկը, որ բաժանված էր երկու գավառների՝ Վերին և Ստորին Բասեն։ Վերջինս կոչվում էր նաև Անփայտ Բասեն կամ Վանանդ։

• Բդեշխ — այսպես էին կոչվում Հին Հայաստանի այն նախարարները, որ Հայաստանի չորս սահմանամերձ նահանգները (Գուգարք, Աղձնիք, Մոկք, Նոշիրական) կառավարում էին մյուս նախարարներից ավելի մեծ իրավունքներով և միաժամանակ համարվում էին փոխարքաներ։

Բորբորիտների և Մծղնե աղանդները — Հայաստանում, IV դարում, առաջ են գալիս քրիստոնեական եկեղեցու պաշտոնապես ընդունված կանոնները քննադատող նոր ուղղություններ և՝ հոսանքներ, որոնց պաշտոնական եկեղեցին համարում էր «աղանդներ»։ Աղանդավորները պահանջում էին վերադառնալ քրիստոնեական վաղ ժամանակաշրջանի համայնքներին։ Այսպիսով, բողոքում էին երկրում եղած խավերի անհավասարության դեմ։

IV դարում Փոքր Հայքում ծագած մծղնե և բորբորիտ աղանդները մխտում էին եկեղեցին, որն իբրև թե հետամուտ է մարդկանց «ուղիղ ճանապարհի» բերելու, բայց փաստորեն նպաստում է հավերժացնելու գյուղացիների կախյալ վիճակը հողատերերից։ Մծղնեականները պնդում էին, թե մարդը ինքը, առանց եկեղեցու, պետք է ուղիղ ճանապարհով գնա։ Նրանք քարոզում էին, թե բոլոր մարդիկ բնությամբ հավասար են և հավասար են Աստված, իսկ տնտեսական անհավասարությունը և շահագործումը ծագել է մարդկանց չարությունից, որ հատուկ է հարուստներին և իշխանավորներին։

Չարությանը և կեղեքմանը վերջ տալու համար նրանք առաջարկում էին ստեղծել իրավահավասար համայնքներ։ Ուստի քարոզում էին ծառաներին փախչել իրենց տերերից և համախմբվել համայնքների մեջ։ Նրանց ստեղծած համայնքներում մասնավոր սեփականությունը համարվում էր աննելի մեղք։ Հարուստները կարող էին այդ համայնքների անդամ դառնալ՝ իրենց ունեցվածքը համայնքին բաժանելուց հետո միայն։

Մծղնեականների և բորբորիտների շարժումը Փոքր Հայքից, IV—V դարերում, տարածվեց նաև Մեծ Հայքում։

Մեսաղյան աղանդը, որ տարածված էր Հռոմեական կայսրության մեջ, Հայաստանում տարածվել է մծղնե անունով։ Դա Մեսաղյան անվանման տառադարձված ձևն է։

• Գաբեղյանք (Գաբեղյաններ) — Նախարարական տոհմերից մեկը, որի ոստանն էր Այրարատ նահանգի Գաբեղյանք գավառը (այժմ Կաղզվանի շրջան)։ Ըստ բանասեր Ղուկաս Ինճիճյանի, Գաբեղյան տոհմը գոյություն

է ունեցել մինչև XII դարը, ապա գաղթել է Լեհաստան և իբր լեհական Սապեգա իշխանները դրա շառավիղներն են։

Գանձամակ— Հայոց արքունիքում իշխանների կամ նախարարների տեղերի, գահերի կամ պատվաստիճանների հաստատված ցուցակ, կարգ, որ եղել է հնագույն ժամանակներից։ Նախարարի կամ իշխանի գահը որոշվել է նրա ռազմական, տնտեսական հզորությամբ, ինչպես և ավանդական սովորությամբ։ Նախարարների գահերը եղել են կայուն և ժառանգական։

• **Գառնի**— Կոտայք գավառի հնագույն բերդերից մեկը, ներկայիս նույնանուն գյուղի մոտ, Երևանից 24 կիլոմետր արևելք։ Մեր թվ. I դարում բերդը վերակառուցեց և բարեկարգեց Տրդատ Ա-ը։ Այստեղ կար և դղյակ։ Շառայում էր իբրև թագավորական ամառանոց։ Այստեղ է գտնվում հռչակավոր տաճարը՝ «Սարավոյի Տրդատա»։

Գնել — Արշակունի սեպուհ, Արշակ Բ-ի եղբոր՝ Տրդատի որդին։ Պատանդ է ուղարկվել Բյուզանդիա։ Արշակ Բ-ի ժամանակ ազատվելով, վերադարձել է Հայաստան, հյուպատոսական պատվով, 351 թ.։ Ամուսնացել է Անդոկ Սյունու դստեր՝ Փառանձեմի հետ։ Եղել է հմուտ ռազմագետ և այդ պատճառով՝ շատ նախարարներ իրենց որդիներին տվել են նրան՝ զինավարժությանը տիրապետելու համար։ Զարախոսությամբ Տիրիթի, որ սիրահարվելով Փառանձեմին, ուզում էր տիրանալ նրան, սպանվել է։

• **Գնունի** — Նախարարական տուն, տվել է մի շարք պետական գործիչներ և զորավարներ։ Կալվածներ ունեին Տուրուբերան նահանգի Աղիովիտ գավառում, Վանա լճից հյուսիս։

• **Դարույնք** կամ **Դարոնք** — Նշանավոր բերդ Այրարատ նահանգի Կոգովիտ գավառում։ Պատմության մեջ հիշվում է իբրև հզոր ամրոց և արքայական գանձատեղի, ապա՝ իբրև Բագրատունյաց պայազատների ոստան։ Վերջին անգամ այդ բերդը հիշվում է Թոմա Մեծոփեցու պատմության մեջ։ 15-րդ դարից կրում է Բայազիդ անունը։

• **Եփրատ**— Հայաստանի և Առաջավոր Ասիայի դյուխավոր գետերից մեկը։ Եփրատը միջին հոսանքներից սկսած ամենահին ժամանակներից եղել է նավարկելի, ինչպես հիշում են Հերոդոտ, Պլինիուս և Ստրաբոն։

• **Զարեվանդ** (**Զարավանդ**) — քաղաք և գավառ Մեծ Հայքի Պարսկահայոց նահանգում. այժմ՝ Զեյրավանդա գյուղ Խոյից հյուսիս։

Թոնդրակ — լեռնազանգված Հայկական լեռնաշխարհում, Աբաղայի դաշտի և Կոգովիտի միջև, Ծաղկանց (Ալադաղ) լեռներից հյուսիս-արևելք։ Գագաթային մասը սարավանդ է (բարձրությունը՝ 2900—3200 մ.) Խորի (3548 մ) և Թոնդրակ (3913 մ) կոնաձև գագաթներով։

• **Կամսարական** — Նախարարական մեծ տոհմ. սրանց էին պատկանում Արշարունիք և Շիրակ գավառները իրենց քաղաքներով ու բերդերով։

Հատկապես կարևոր է հիշատակել Երվանդաշատ քաղաքը։ Այս տոհմը ավել է նշանավոր հայրենասեր գործիչներ։

Կամսարական Ներսեհ — Կամսարական տոհմի նախարար։ Մասնակցել է Արշակ Բ-ի դեմ հայ նախարարների խռովությանը և Արշակավան քաղաքի կործանմանը, որի համար Ներսեհը և բազմաթիվ Կամսարականներ սպանվեցին Արշակ Բ-ի հրամանով։ Իսկ նրանց կալվածքները միացվում են արքունի տիրույթներին։

• Կամրջաձոր — հռչակավոր մենաստան Արշարունիք գավառի մեջ՝ այժմյան Կաղզվանի մոտերքը։

Կանգուն — երկարության չափ, որ կիրառվել է անցյալում։ Տարբեր վայրերում ունեցել է տարբեր չափեր։ Հին Հայաստանում եղել է կանգունի երեք չափ՝ 47,4 սմ, 51,8 սմ և 52,5 սմ։

Կապույտ բերդ — բերդ Արտագերսից հարավ-արևելք, IV դ. պատկանել է Կամսարական նախարարական տոհմին։

Կավաշ (Կուաշ) — բնակավայր Այրարատ նահանգի Արագածոտն գավառում, այժմ Կոշ գյուղը Աշտարակի շրջանում։

Կոգովիտ — գավառ Մեծ Հայքի Այրարատ նահանգում։ Կենտրոնն է եղել Դարույնք կամ Դարոյնք ամրոցը։ Այժմ՝ Հին Բայազետ։

Հաղամակերտ — Արծրունի նախարարական տոհմի ոստան։ Այժմ Բաշկալե գյուղ Աղբակ Մեծ գավառում։

Հաչունեից գավառ (Հաչոյանք) — գավառ Մեծ Հայքի Տոփք նահանգում։ Այժմ Ճապաղջուր։ Ընդգրկել է արևմտյան Տիգրիսի հյուսիս-արևելյան ակունքների շրջանը և Արածանի գետի միջին հոսանքի հովիտները։ Ինչպես Ադիովիտ և Առբերանի գավառները, սա ևս հատկացված է եղել Արշակունի տոհմի սեպուհներին։

• Հավնունիք — նախարարական տոհմ, որի ներկայացուցիչները հսկում էին Բագրևանդից դեպի արևմուտք Հավնունիք և Բասեն գավառները տանող լեռնային անցուղիները։

• Հեր — գավառ Մեծ Հայքի Պարսկահայք նահանգում։ Կապուտան (Ուրմիա) լճից հյուսիս։ Հետագայում նոյ գավառ։ Կենտրոնն է եղել Հեր քաղաքը։ IV դարում Խորխոռունիների Մաղխազունիք տոհմի՝ Մաղխազների կենտրոնը։

Հուսիկ կաթողիկոս — Հուսիկ Ա Պարթև (295—347), Հայոց կաթողիկոս 341 թվականից։ Տիրան թագավորին հանգիստանալու համար, վերջինիս հրամանով, մահակով ծեծել են (քարծեծ է արվել) և սպանել։

Ակնգետ (Ակնագետ) — գետ Հայկական լեռնաշխարհում. սկիզբ է առնում Գայլատու լճից։ Բայազետից հյուսիս մտնում է Փոքր լճակների և ճահիճների համակարգի մեջ (պատմ. Կոգովիտի Շամբ), ապա միանում է Տղմուտին և թափվում Արաքսը։ Պատմական անվանումը՝ Առուն. այժմ՝ Ջուխուր գետ։

• **Մամիկոնյան** — նախարարական մեծ, ազդեցիկ տոհմ։ Մամիկոնյանների ժառանգական պատիվն էր «սպարապետ հայոց» գործակալությունը։ Տոհմը տվել է նշանավոր ռազմիկներ և սպարապետներ, ինչպես՝ Վաչե, Արտավազդ, Վասակ, Մուշեղ, Մանուել, Մեծն Վարդան, Մեծն Վահան և այլն։ Արշակունի թագավորների օրով և հետագայում կատարում էին առաջնակարգ դեր, որպես սպարապետներ, մարզպաններ, հայոց իշխաններ։ Նրանց ժառանգական կալվածն էր Տայք նահանգը՝ իր էրախանի ոստանով և իշխանաց գյուղով։ Հարավային Հայաստանում նրանց էր պատկանում Տարոն գավառը՝ իշխանանիստ Ողական ամրոցով։

• **Մամիկոնյան Մուշեղ** — նշանավոր և ազդեցիկ սպարապետ Պապ թագավորի օրով։

• **Մարդպետ** — Վասպուրական նահանգում ապրող Մարդ ցեղի պետի տոհմական տիտղոսը։ Արշակունյաց արքունիքում խաղում էին մեծ դեր, ունենալով «մարդպետության» պատիվը, որպես արքունի կալվածների և թագավորի կանանոցի կառավարիչներ։ Սրանց ոստանը գտնվում էր Մարդաստան գավառում (Վանից դեպի հյուսիս-արևելք)։

Մեսազյաններ և բորբորիտներ — տե՛ս բորբորիտների և մծղնե աղանդներ։

Մծղնե աղանդ — տե՛ս բորբորիտների և մծղնե աղանդներ։

• **Նախարար** — հնում և միջին դարերում այսպես էին կոչվում Հայաստանի խոշոր ֆեոդալները, թագավորի վասալները։ Ժառանգաբար տիրում էին ընդարձակ կալվածների։ Մասնակցում էին թագավորի խորհրդին և, ըստ ավագության աստիճանի, նստում էին նրա կողքին։ Պարտավոր էին թագավորին տալ զորք, գլխավորապես հեծելազոր։ Խոշորագույնները սրանցից՝ «ավագ նախարարները» ինքնիշխան էին և հաճախ չէին ուզում ենթարկվել կենտրոնական, այսինքն՝ թագավորի իշխանության, նույնիսկ պատերազմների ժամանակ, և այսպիսով թուլանում էր երկրի ինքնապաշտպանությունը։ Պատահում էր նաև, երբ փորձ էր լինում նրանց կենտրոնական իշխանության ենթարկելու, ինչպես այդ արին Տիրան և Արշակ Բ. թագավորները, նրանք ապստամբում էին կամ անցնում հարևան պետությունների Պարսկաստանի կամ Բյուզանդիայի կողմը և այդտեղից թշնամության հրահրում իրենց թագավորի ու երկրի դեմ։

• **Նռնապետ կամ տանուտեր** — այսպես էր կոչվում նախարարական տան ավագը։ Սեպուհները տոհմի կրտսեր անդամներն էին։

Նավասարդ ամիս — Հայկական հին տոմարի առաջին ամիսը։ Անշարժ տոմարով համընկնում է հուլյան տոմարի հուլիս ամսին։

Նավասարդյան տոներ — Նոր տարվա տոնախմբություններ։ Տոնախմբություններին լինում էին նավասարդյան խաղեր կամ օլիմպիական խաղեր։

• **Ներսես Ա. Մեծ** — կաթողիկոս (351—373 թթ.)։ Նշանավոր հոգևոր և քաղաքական գործիչ. ոչ բոլոր դեպքերում համամիտ էր Արշակ Բ.-ի կենտրոնացման քաղաքականության։

Շահապիվան — Այրարատ նահանգի Ծաղկոտն գավառի կենտրոն, Եփրատ-Արածանի գետի ակունքների մոտ։ Հեթանոսական Հայաստանի սրբավայրերից մեկը։ Արշակունիներն այստեղ հրավիրում էին աշխարհաժողովներ։ Այստեղ էր կատարվում Նավասարդյան տոնը։

• **Շապուհ II** — Իրանի արքայից արքա, որ կոչվում է «երկարակյաց», երկար ժամանակ (309—380 թթ.) թագավորելու համար։ Մի շարք անգամներ կռվել է Բյուզանդիայի դեմ և հաղթել է Հուլիանոս Ուրացող կայսրը։ Կատաղի կռիվներ է վարել Հայաստանի դեմ։ Նրան նվաճելու և իրեն ենթարկելու։ Դավերով և շատ նախարարների խոստումներ անելով՝ կամենում էր քանդել հայ երկրի միաբանությունը, և որոշ չափով հասավ իր նպատակին Արշակ Բ. թագավորի օրով, նախարարներից ոմանց հանելով նրա դեմ, ապա ինքը դրանց օգնության գալով։ Ցանկանում էր ամեն գնով Հայաստանը հանել Բյուզանդիայի ազդեցությունից և քաղաքականապես ու կրոնապես ենթարկել իրեն։

• **Շիրակ** — Հին Հայաստանի Այրարատ նահանգի գավառներից մեկը։ Սկզբում պատկանում էր Մամիկոնյան նախարարներին, հետագայում՝ VIII դարի վերջում ֆենեքին Բագրատունիները, որ թագավորելով՝ իրենց իշխանության կենտրոնը դարձրին նախ Բագարան և Երազգավորք (Շիրակավան) բերդերը. ապա Անի քաղաքը։

• **Ողական**— Մամիկոնյան նախարարների տոհմական ոստանը Տարոնում։ Այժմ՝ Ագլան՝ Արածանիի ձախ ափին։

• **Ոստան**— այսպես էին կոչվում Արշակունի թագավորներին պատկանող հողերն ու քաղաքները. թագավորության անկումից հետո այդպես կոչվեցին առանձին նախարարների նստավայրերը։

• **Պապ**— նշանավոր հայոց թագավոր (369—374 թթ.) Արշակունյաց դինաստիայից։ Դահ բարձրացավ 22—23 տարեկան հասակում։ Վարում էր հայ պետականության ուժեղացման և կենտրոնացման քաղաքականություն, ու այդ նպատակով ավելացրեց զորքի, հատկապես հեծելազորի թիվը, գրավեց եկեղեցական հողերի մեծ մասը, արգելեց եկեղեցուն տրվող տուրքերը, փակեց շատ վանքեր ու անապատներ, և կարգադրեց, որ աշխատանքի կրոնավորները աշխատեն։ Արգելեց եկեղեցականներին

մասնակցել պետական գործերին։ Միաժամանակ հայ եկեղեցին ազատեց բյուզանդական եկեղեցու կախումից և դարձրեց ինքնուրույն։ Այս բարեկարգումները Պապը կատարում էր այն նպատակով, որ ուժեղացնի պետական իշխանությունը Հայաստանում, որ սա ի վիճակի լինի իր անկախությունը պահելու։

* Ռշտունի — նախարարական տոհմ Վասպուրական նահանգի Ռշտունիք գավառում։ Ռշտունիքը եղել է Վանա լճի հարավ-արևելյան ափին։

* Սահառունի — նախարարական տուն Հին Հայաստանում։ Այս տոհմից առավել հայտնի է Դավիթ Սահառունին, որ կառուցել է Մրենի տաճարը VII դարում։

* Սպարապետ — այսպես էին կոչվում նախարարական տոհմի ոչ ավագ անդամները, իշխանների որդիները։ Սպարապետների հողաբաժինները կոչվում էին «սեպհական»։

* Սյունիք կամ Սիսական — Հին Հայաստանի նահանգներից մեկը, որի մեջ էին մտնում այժմյան Լեռնային Ղարաբաղի մասերը, Զանգեզուրը և Սևանա լճի ավազանը։ Սյունյաց ոստանն էր անմատչելի Բաղարերդ ամրոցը (այժմ Բաղաբուրդ)։ Սյունյաց նախարարական տուներ Քե՛ հնում, Քե՛ միջնադարում մեծ դեր է խաղացել Հայաստանի քաղաքական կյանքում, հաճախ ձգտելով նաև արքայական գահի։ 963—1170 թթ. կազմում էր առանձին թագավորություն, որ կոչվում էր Բաղաց կամ Կապանի թագավորություն։ Մայրաքաղաքն էր Կապանը, այժմյան Ղափանը։

* Սպարապետ — այսպես էր կոչվում հնում հայոց զորքերի գլխավոր հրամանատարը։ Վաղուց ի չէր այդ պաշտոնը ժառանգաբար պատկանում էր Մամիկոնյան տոհմին, որ տվեց շատ նշանավոր սպարապետներ։ Սպարապետներ տվել են երբեմն նաև Բագրատունի, Գնունի, Սահառունի, Ռշտունի և այլ նախարարական տները։

Սուրմարի կամ սուրբ Մարի — ամրոց Արաքս գետի աջ ափին, այժմ Սուրմալու գյուղը։

Վահևունի — նախարարական տոհմ Տուրուբերան նահանգի Տարոն գավառում. այժմյան Մանազկերտի մոտ։

* Վաղարշապատ կամ Վաղարշավան — Հայաստանի հին մայրաքաղաքներից մեկը։ Հայոց Վաղարշ I թագավորը (117—140 թթ.) Արտաշատից այստեղ փոխադրեց իր արքունիքը։ 301 թ., երբ քրիստոնեությունը Մեծ Հայքի թագավորության պաշտոնական կրոն հռչակվեց, Վաղարշապատը դարձավ հայոց կաթողիկոսների գահանիստ։ Այժմ Էջմիածին քաղաքը։

Վանանդ — գավառ Այրարատ նահանգում. Ախուրյան գետի հովտում։ Միջին դարերում կենտրոնը եղել է Կարս քաղաքը։ Սկսած XI դ. գավառը կոչվել է Կարս։

* **Վասպուրական** — պատմական Հայաստանի հարավային նահանգը Վան քաղաքով։ Եղել է Արծրունի և Մարդպետական նախարարական տոհմերի սեփականությունը։ X դարում դարձավ Արծրունյաց թագավորության հիմնական տերիտորիան։

Վարաժնունիք — գավառ Այրարատ նահանգում. գրավում էր այժմյան Հրազդանի, Սևանի, Դիլիջանի և Կարմիրի շրջանների մասերը ընդգրկող տարածքը։ Արշակունիների ժամանակ այս գավառը եղել է արքունի որսատեղի. ժամանակի ընթացքում դարձել է Վարաժնունի նախարարության ժառանգական սեփականությունը։

Վարդավառի տոն — հեթանոսության ժամանակ՝ ծաղկի տոն։ Հետագայում՝ Քրիստոսի պայծառակերպության կամ այլակերպության տոն։ Տոնի ժամանակ ջուր են ցանում միմյանց վրա։

* **Տայք** — Հին Հայաստանի հյուսիս-արևմտյան նահանգներից մեկը։ Մամիկոնյան տան ժառանգական կալվածքն էր, որի կենտրոնն էր Իշխանաց գյուղը։ VIII դարից Բագրատունյաց տան սեփականությունը։ Վտանգների ժամանակ հայ թագավորները հաճախ ապաստանել են այդտեղ և, լեռնոտ, անմատչելի վայրի շնորհիվ, թույլ չեն տվել թշնամուն առաջ գնալու։ Տայքը բռնում էր Ճորոխ գետի միջին հոսանքի ավազանը։

Տայքի Եռախանի բերդ (էրախանի բերդ) — Մամիկոնյանների ոստանը Տայքում. այժմ Իրխան գյուղ Տայքում, Ճորոխ գետի ափին։

Տաշիր — գավառ Գուգարաց բդեշխության մեջ։ Տաշիր գավառը համապատասխանում է այժմյան Ստեփանավանի, Կալինինոյի շրջաններին և Ալավերդու շրջանի հարավային մասին։

* **Տարոն** — նշանավոր գավառ Տուրուբերան նահանգում՝ Վանա լճից արևմուտք։ Այժմյան Մշո դաշտը՝ Մեղրագետի հովիտը։ Հայկական հին ավանդությանց համաձայն՝ եղել է հայ ժողովրդի օրրանը։ Հայկի առաջին բնակավայրը։

Տափերական կամուրջ — Այս կամուրջը եղել է Արաքս գետի վրա, Խոր-Վիրապի մոտ։ Հնագույն ժամանակներից «Արքայական ուղղուտ» սկսվել է Արտաշատից, անցել է Տափերական կամուրջով և հասել մինչև Տիգրանակերտ։

Տիգրան Մեծ — Արքայից արքա (93-56 թթ.) Մեծ Հայքի թագավորության։

• Տիգրանակերտ — Հին հայկական քաղաք, որ հիմնել է Տիգրան Մեծը մ. թ. ա. 77 թ.։ Գտնվում էր Տիգրիս գետի հյուսիսակողմը, այժմյան Ֆարկին քաղաքի տեղում։ Եղել է հարուստ, բարեկարգ քաղաք։ Բազմիցս ենթարկվել է պարսիկների և հռոմայեցիների հարձակումներին ու ավերածությանը։ Միջին դարերում կոչվում էր նաև Նփրկերտ կամ Մարտիրոպոլիս — Մարտիրոսաց քաղաք. արաբները կոչում էին Միափարիկին։

• Տիզբոն — Պարթևական և Սասանյան Իրանի մայրաքաղաքը. գտնվում էր Տիգրիսի ձախ ափին, Բաղդադից ոչ հեռու։

• Տիրան — հայոց թագավոր (338—345 թթ.)։ Սկզբում ուներ սասանյան օրիենտացիա, հետագայում փոխում է իր քաղաքական գիծը և որդեգրում է բյուզանդական օրիենտացիա, որի համար և Շապուհը, խաբեությամբ հյուր կանչելով, կուրացրեց նրան։

Տիրիթ— Արշակունի սեպուհ, Արշակ Բ-ի ավագ հղբոր՝ Արտաշեսի որդին։ Պատանդ է ուղարկվել Բյուզանդիա։ Վերադարձել է Հայաստան 351 թ.։ Սիրահարվել է հորեղբոր որդու՝ Գնելի կնոջը՝ Փառանձեմին, և նրան տիրանալու համար չարախոսությամբ սպանել է տվել Գնելին։ Ըմբոստացել է Արշակ թագավորի դեմ և նրա հրամանով սպանվել։

• Տրդատ Գ Մեծ — հայոց թագավոր (274—330 թթ.). սրա օրով Հայաստանն ընդունեց քրիստոնեություն, և այդ առթիվ նա մեծամեծ կալվածներ ու արտոնություններ տվեց եկեղեցուն ու վանքերին։

Տարոնբերան (Տարոնբերան) — Մեծ Հայքի նահանգներից մեկը, որ այդ նահանգի հիմնական գավառի՝ Տարոնի անունով կոչվում էր նաև «Հողմքն Տարաւնոյ։ Այժմ՝ Մուշ, Բուլանրխ, ենուս երկրամասերը։

Փառանձեմ — հայոց թագուհի, Անդոկ Սյունու դուստրը։ Գնել Արշակունու կինը։ Գնելի սպանությունից հետո Արշակ Բ-ը ամուսնանում է Փառանձեմի հետ։ Արշակ թագավորի գերությունից հետո Փառանձեմ թագուհին Արտաշատում ամրոցում 13 ամիս դիմադրում է պարսկական զորքերին, բայց ստիպված անձնատուր է լինում և տարվելով Պարսկաստան սպանվում է։

Փարսաղ — երկարության չափ, որ կիրառվել է անցյալում. հավասար է՝ 5004,3 մետրի կամ 3 մղոնի։

Քուշանաց աշխարհ— Միջին Ասիայում, այժմյան Տաջիկստանի տեղում եղել է քուշանների հզոր թագավորությունը, որտեղ իշխել է Արշակունիների քուշանական ճյուղը։ Երբեմն քուշանների պետությունը Մեծ Հայքի հետ միացած պայքարում են Սասանյան Իրանի դեմ։

• Ցիմպիա — հայոց թագուհի։ Արշակ Բ-ի կինը։ 360 թ. Արշակ Բ-ի և Կոստանդինոս II կայսեր միջև դիվանագիտական բանակցություններից հե-

տո վերականգնվում են հայ-հռոմեական հարաբերությունները։ Եվ կայսրը, բացի տարբեր ընծաներից և շնորհներից, Արշակ թագավորին կին է տալիս իր մահացած եղբոր՝ Կոստասի նախկին նշանածին՝ Օլիմպիային, որը դառնում է հայոց թագուհի, տիկնանց տիկին։

Ստ. Զորյանի «Հայոց բերդը» վեպի մասին հրատարակվել են մի շարք հոդվածներ.— Վ. Մկրտչյան, Ստ. Զորյանի նոր պատմավեպը («Սովետական Հայաստան», 1960, № 45, 24)։— Լ. Հայվերդյան, «Հայոց բերդը», (Երևան, 1960, № 56,6)։— Մ. Մկրյան, «Հայոց բերդը», («Գրական թերթ», 1960, № 13, 25.)։ — Խ. Աբեղյան, «Հայոց բերդը» («Կոմունիստ», Երևան, № 137, 10. ռուսերեն)։— Խ. Սարգսյան, Ստեփան Զորյան (Պատմա-բանասիրական հանդես, 1960, № 3, էջ 78—84)։ Նույնը, տես նաև ռուսերեն — Х. Саркисян, «Тропами жизни и литературы», Ереван, «Айастан». 1974)։— Էդ. Թովմչյան. Ստեփան Զորյանի նոր վեպը (Էդ. Թովմչյան, «Ժողովրդայնություն և ռեալիզմ», Երևան, 1980, էջ 327—331)։— Վ. Երիցյան, «Հայոց բերդը» («Նոր կյանք», Բուխարեստ, 1960, 3)։— Գ. Բաղդասարյան. Ստ. Զորյանի պատմավեպերի գեղարվեստական առանձնահատկություններ («Գրական Ադրբեջան», 1967, էջ 102—105)։— Նույնը, Բյուզանդիայի զավթողական քաղաքականության քննադատությունը Ստ. Զորյանի պատմական վեպերում (Խ. Աբովյանի անվ. հայկ. պետ. մանկավարժական ինստիտուտի գիտական աշխատություններ, հայ գրականության բաժին. № 1, Երևան, 1968)։ Վ. Նալբանդյան, Գրողը և պատմությունը։ Պատմական վեպի մի քանի հարցեր և Ստ. Զորյանի պատմա-գեղարվեստական կոնցեպցիան («Սովետական գրականություն», 1968, № 6)։— Նույնը, Չորրորդ դարի հայ իրականությունը և Ստ. Զորյանի պատմավեպերը (Պատմա-բանասիրական հանդես, 1968, № 2, էջ 57—80)։— Նույնը, Զորյան-պատմավիպասանի գեղարվեստական վարպետության մի քանի հարցեր («Լրաբեր», ԳԱ հասարակական գիտությունների, 1968, № 7, էջ 15—32)։— Ս. Աղաբաբյան, Ստ. Զորյանի պատմավեպերը (Պատմա-բանասիրական հանդես, 1973, № 2, էջ 77—80) և այլն։

Հայ արդի գրականության և Ստ. Զորյանի ստեղծագործության վերաբերյալ գրքերում խոսվում է «Հայոց բերդը» վեպի մասին, հատկացված են նրան առանձին բաժիններ. կան ուսումնասիրություններ, որոնց նյութը գրողի պատմական վեպերն են — Սովետահայ գրականության պատմություն, երկու հատորով, Երևան, 1961, 1965։— Ս. Արզումանյան, Սովետահայ վեպը, Երևան, 1967։— Հր. Թամրազյան, Սովետահայ գրականության պատմություն, Երևան, 1980։— Ս. Աղաբաբյան, Ստեփան Զորյան,

Երևան, 1976։— Հ. Մկրտչյան, Ստեփան Զորյան, Երևան, 1977։— Վ. Նալբանդյան, Գրողը և պատմությունը, Երևան, 1970։— Վ. Նալբանդյան, Չորրորդ դարի Հայաստանը հայ հին պատմագրության մեջ և Ստեփան Զորյանի պատմական վեպերը (դոկտորական դիսերտացիայի ավտոռեֆերատ, Երևան, 1968 թ., ռուսերեն)։ Գ. Բաղդասարյան, Ստ. Զորյանի պատմական եռապատումը (թեկնածուական դիսերտացիայի ավտոռեֆերատ, Երևան, 1969, ռուսերեն) և այլն։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՑ ԲԵՐԸ

Մասն առաջին

Գլուխ առաջին 7
» երկրորդ 21
» երրորդ 36
» չորրորդ 53
» հինգերորդ 61
» վեցերորդ 73
» յոթերորդ 88

Մասն երկրորդ

Գլուխ առաջին 91
» երկրորդ 113
» երրորդ 131
» չորրորդ 158
» հինգերորդ 174
» վեցերորդ 203

Մասն երրորդ

Գլուխ առաջին 258
» երկրորդ 291
» երրորդ 320
» չորրորդ 356
» հինգերորդ 391
» վեցերորդ 422
» յոթերորդ 444

Վերջաբան 470

Ծանոթագրություններ 542

ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆ

Երկերի ժողովածու 12 հատորով

VII հատոր

СТЕФАН ЗОРЬЯН

Собрание сочинений

в 12 томах

Том VII

(на армянском языке)

Издательство «Советакан грох»

Ереван—1982

Խմբագիր՝ Ռ. Մ. Մուրադյան

Նկարիչներ՝ Հ. Ա. Մամյան, Ռ. Ս. Զուլհակյան

Գեղ. խմբագիր՝ Գ. Խ. Գյուլամիրյան

Տեխ. խմբագիր՝ Մ. Է. Ճանճապանյան

Վերստուգող սրբագրիչ՝ Մ. Գ. Ստեփանյան

ИБ 3557

Հանձնված է շարվածքի 31. 03. 82։ Ստորագրված է տպագրության 13. 07. 82։ Ֆորմատ 84×108¹/₃₂։ Թուղթ՝ տպագր. № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր, 29,4 ստանդ. տպ. մամ., 25,8 հրատ. մամ.+1 ներդիր։ Տպաքանակ՝ 20000։ Պատվեր 439։ Գինը՝ 2 ռ. 60 կոպ.

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան 65։

Типография № 1 Госкомитета Арм. ССР по делам издательств. полиграфии и книжной торговли, Ереван, ул. Алавердяна, 65.